

**ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
(1919-2019)**



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
(1919-2019)**

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

ՀՏԴ 378(091)
ԳՄԴ 74.58
Տ 261

Հրատարակության է երաշխավորել
Երևանի պետական համալսարանի
գիտական խորհուրդը:

Կազմեց և հրատարակության պատրաստեց
պ. գ. թ., դոց. Ժ. Ս. Մանուկյանը

Խմբագիրներ՝
պ. գ. դ., պրոֆ. Վ. Ա. Բալբուրդյան
բ. գ. թ., դոց. Լ. Վ. Ավետիսյան

Տ 261 Տարեգրություն Երևանի պետական համալսարանի (1919-
2019): -Եր., ԵՊՀ հրատ., 2019, 696 էջ:

Տարեգրությունում ներկայացված է Երևանի պետական համալսարանի
100-ամյա պատմությունը դեպքերի և իրադարձությունների ժամանակագրական
հաջորդականությամբ:

Գրքում զետեղված են ԵՊՀ մեկդարյա պատմության ընթացքում տեղի
ունեցած կարևոր իրադարձությունները լուսաբանող նյութեր, որոնց մի մասը
հրատարակվում է առաջին անգամ:

ՀՏԴ 378(091)
ԳՄԴ 74.58

ISBN 978-5-8084-2387-9

© ԵՊՀ հրատ., 2019
© Կազմողի համար, 2019



100

*Քանզի ոչ է պատմութիւնն ճշմարիտ առանց
ժամանակագրութեան...*

Մովսիսի Խորենացւոյ

Պատմութիւն Հայոց, գիրք երկրորդ, գլուխ 2Բ

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայաստանում համալսարանական կրթության պատմությունը սկսվում է միջնադարից: Մակայն պետականությունից զուրկ երկրում բարձրագույն ուսումնական հաստատությունները երկար գոյատևել չէին կարող: Ռազմաքաղաքական վայրիվերումները, օտար նվաճողների ավերածությունները ծանր հետևանքներ են ունենում հայ ժողովրդի կրթական-մշակութային ձեռնարկումների վրա:

Միայն 1918 թ. Հայաստանի Հանրապետության սկզբնավորումով համեմատաբար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին համալսարանական հիմնելու համար: Նորաստեղծ հանրապետության պետական կառույցների ձևավորումից ամիսներ անց՝ 1918 թ. աշնանից, քննարկվում է երկրում համալսարան բացելու հարցը:

Ամիսներ տևած տքնաջան աշխատանքից հետո՝ 1919 թ. մայիսի 16-ին, Հայաստանի Հանրապետության Նախարարների (Մինիստրների) խորհուրդը օրենք է ընդունում Հայաստանում համալսարան բացելու մասին:

1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում հանդիսավոր պայմաններում բացվեց Հայաստանի համալսարանը:

Հետագա տասնամյակների ընթացքում Երևանի պետական համալսարանը դարձավ հանրապետության խոշորագույն գիտակրթական հաստատությունը:

Այսօր առանց չափազանցության կարող ենք նշել, որ իր գոյության 100 տարիների ընթացքում Երևանի պետական համալսարանը դարձել է հայոց նորագույն պատմության կարևոր և անբաժան մասը:

Երևանի պետական համալսարանի տարեգրությունը առաջին անգամ հրատարակել ենք 2009 թ. Մայր բուռի 90-ամյակի կապակցությամբ*: Վերջին տասնամյակում մենք այն վերամշակել, ճշտումներ կատարել և համալրել ենք՝

* Տե՛ս Երևանի պետական համալսարան. Տարեգրություն, կազմ. և հրատ. պատր.՝ Մանուկյան Ժ., Երևան, 2009, 440 էջ:

-
- արխիվային նոր փաստաթղթերով,
 - վիճակագրական տվյալներով,
 - ԵՊՀ պաշտոնական կայքի ռեսուրսներով,
 - ծանոթագրություններով,
 - անձնանունների ցանկով:

Սույն տարեգրությունը ներառում է Երևանի պետական համալսարանի 1919-2019 թթ. պատմությունը ժամանակագրական հաջորդականությամբ:

Տարեգրությունում ուսանողների և շրջանավարտների թվաքանակը ներկայացված է կա՛ն ըստ մասնագիտությունների, կա՛ն ըստ ֆակուլտետների. այս իրողությունը պայմանավորված է նրանով, որ հաշվետվությունները տարբեր ժամանակներում տարբեր սկզբունքներով են ներկայացվել:

Մայր բուհի 100-ամյա տարեգրությունում փաստերը շարադրելիս վորձել ենք նաև հնարավորինս պահպանել տվյալ ժամանակաշրջանին բնորոշ անվանումներն ու եզրաբառերը:

1919

19 հունվարի – Հայաստանի Հանրապետության հանրային կրթության նախարար Գ. Մելիք-Ղարազյոզյանը ուղիղ հեռագրագծով խոսակցություն է ունեցել Թիֆլիսում աշխատող իր ներկայացուցիչ պրոֆեսոր Դ. Չավրյանի հետ Հայաստանում բարձրագույն դպրոց ունենալու խնդրի շուրջ¹:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Սիրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 15)

25 հունվարի – Հայաստանի Հանրապետության հանրային կրթության նախարարությունում կայացել է խորհրդակցություն, որտեղ քննարկվել է Անդրկովկասյան մասնավոր համալսարանը Երևան տեղափոխելու հարցը: Խորհրդակցության մասնակիցները միաձայն ընդունում են Հայաստանում համալսարան ունենալու անհրաժեշտությունը և ձայների մեծամասնությամբ որոշում նվազագույնը 200 ուսանող ունենալու դեպքում բացել համալսարանը: Միաձայն որոշվեց հարցը՝ առաջին հնարավորության դեպքում բացելու համալսարան, թողնել Հանրային կրթության նախարարությանը:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Սիրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 17-25)

7 մայիսի – Հայաստանի Հանրապետության հանրային կրթության նախարար Գ. Մելիք-Ղարազյոզյանը Հայաստանում համալսարան բացելու և Անդրկովկասյան մասնավոր համալսարանին նպաստ տալու մասին գրությամբ դիմում է Նախարարների

խորհրդին: Գ. Մելիք-Ղարազյոզյանը մասնավորապես հիմնավորում էր. «...ես գալիս եմ այն եզրակացության, որ առաջիկա ուսումնական տարում սեփական համալսարան բանալու միտքը պետք է թողնել և այն պատճառով, որ մինչ այդ լավ համալսարան ստեղծել չենք կարող, այլ միայն կքանդենք և կթուլացնենք Անդրկովկասյան մասնավոր համալսարանի պրոֆեսորական և դասախոսների խումբը, որոնցից հարկ կլինի հրավիրել դասախոսներ: Այդպիսով, առաջիկա ուսումնական տարում սեփական համալսարան բանալու հարցի վերացումով, Թիֆլիսի հիշյալ հիմնարկության նպաստվածության հարցը ստանում է առանձին արժեք:

Այդ արժեքավորությունը որոշվում է ամենից առաջ այն պատճառով, որ Անդրկովկասյան մասնավոր համալսարանում սովորում են (ուսանողների ընդհանուր՝ 1715 թվից) 700 հայ ուսանողներ: Մինչդեռ այդ բարձր ուսումնական հիմնարկությունը չի կարող գոյություն ունենալ առանց դրսի պատկառելի նպաստի, և, իմ տեղեկությունների համաձայն, եթե դրան բավականաչափ նյութական օգնություն ցույց չտրվի, դա ստիպված կլինի փակվել կամ տեղափոխվել մի ուրիշ վայր: Երկու տեղից՝ Ադրբեջանի և Կուրանի կառավարություններից, համալսարանին եղել են առաջարկություններ՝ տեղափոխել Բաքու կամ Եկատերինոդար»:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 45-46)

16 մայիսի – Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը օրենք ընդունեց Հայաստանում համալսարան բացելու մասին: Սույն օրենքով նախատեսվում էր.

1. Հիմնել Երևանում համալսարան հետևյալ 4 բաժիններով՝ պատմալեզվաբանական, տնտեսա-իրավաբանական, բժշկական, ֆիզիկա-մաթեմատիկական՝ տեխնիկական ստորաբաժանումով:

2. Համալսարանը բացել 1919-20 ուստարում:

3. Առաջին հերթին բացել պատմալեզվաբանական բաժինը:

4. Մնացած բաժինները բացելու ժամանակը և հերթը սահմանում է Նախարարների խորհուրդը՝ հանրային կրթության նախարարի առաջարկությամբ:

5. Համալսարանը բացելու և նախնական ծախսերը հոգալու համար հատկացնել 300.000 ռուբլի՝ հանձնարարելով Ֆինանսների նախարարությանը բացել համապատասխան վարկ Հանրային կրթության նախարարությանը:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 58)

4 հունիսի – Դավիթ Չավրյանի խնդրանքով հանրային կրթության նախարար Գ. Մելիք-Ղարազյոզյանը մեկնում է Թիֆլիս՝ համալսարանի բացմանը առնչվող գործերը կարգավորելու համար:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 67, 294)

10 հունիսի – Հանրային կրթության և արվեստի նախարարը նամակով տեղեկացնում է Երևանի համալսարանի նախաձեռնողներ Յուրի Դամբարյանին և Դավիթ Չավրյանին համալսարանի կազմակերպիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին և նրանց տալիս է հրահանգներ. նախարարի հրամանով կազմակերպիչ հանձնաժողովի անդամներ են նշանակվում (հաստատվում) պրոֆեսոր Մ. Բունիաթյանը, պրիվատ-դոցենտ, տնտեսագետ Գ. Խարազյանը (Խարազով), բանասերներ Ս. Մալխասյանը, Ռ. Աբրահամյանը, Մ. Աբեղյանը, պրիվատ-դոցենտ, հնագետ Լուռու Մելիք-Քալանթարը, Ե. Տեր-Մինասյանը, Ս. Տիգրանյանը, Մեսրոպ և Գարեգին եպիսկոպոսները, բժիշկներ Գ. Տեր-Ներսեսովը և Մ. Մզարեուկովը, իսկ պրոֆեսոր Յու. Դամբարյանը և դոցենտ Դ. Չավրյանը նշանակվում են հանձ-

նաժողովի համանախագահներ (կազմակերպիչներ)՝ հավասար իրավունքներով:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Սիրգոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 67-68)

18 հունիսի – Հանրային կրթության և արվեստի նախարարի հրամանով Գ. Տեր-Հակոբյանը 1919 թ. հունիսի 15-ից նշանակվում է բացվելիք համալսարանի կոմիսարի պաշտոնակատար, որին հանձնարարվում է ապահովել համալսարանին հատկացված նախկին սեմինարիայի շենքի և նրա գույքի պահպանումը: Նրա հսկողությամբ է անցնում նաև սեմինարիային կից այգին:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Սիրգոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 72)

20 հունիսի – Համալսարանի կազմակերպիչ Յու. Ղամբարյանը լիազորագիր է տալիս Երևանի համալսարանի դոցենտ Ե. Տեր-Սինասյանին՝ Թիֆլիսից ժամանելու Ալեքսանդրապոլ՝ քաղաքային ինքնակառավարման մարմինների և այլ պետական ու հասարակական հաստատությունների հետ բննարկելու համալսարանին շենք և դասախոսական կազմին բնակարաններ հատկացնելու հարցը: Միաժամանակ Յու. Ղամբարյանը նույն լիազորագրով այդ հարցում աջակցություն է խնդրում Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնակառավարման մարմիններից և այլ հաստատություններից:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 13, գ. 6, թ. 12)

20 հունիսի – Համալսարանի կազմակերպիչ հանձնաժողովի հատուկ խորհրդակցությունը ընտրեց համալսարանական բժշկական հանձնաժողովը հետևյալ կազմով՝ Հարությունով Ալեքսանդր Արտեմի, Մզարեուով Սիքայել Գևորգի, Պոնոյն Գաբրիել Սարգիսի, Խոսրոս Գարեգին Պողոսի, Տեր-Ներսեսով Գաբրիել

Ներսեսի, Տեր-Ակոպով Փայլակ Սմբատի, Արեշև Գրիգոր Հակոբի, Օհանյան Առաքել Կարապետի, Չաչիկյան Գրիգոր Մովսեսի, Զարգարյանց Արիստակես Հայրապետի, Սունդուկյանց Նիկիտա Գաբրիելի, Միլերով Միքայել Լևոնի:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 65, 294)

21 հունիսի – Հանրային կրթության և արվեստի նախարար Գ. Մելիք-Ղարապետյանը նամակով դիմում է Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեին՝ համալսարանին հատկացրած սեմինարիայի շենքը ազատելու խնդրանքով: Նամակում մասնավորապես նշվում է, որ, համաձայն ՀՀ Կառավարության՝ 1919 թ. մայիսի 30-ին կայացրած որոշման, գանազան հիմնարկությունների այս կամ այն պետքերի համար գրավված դպրոցական շենքերը պետք է ազատվեն մինչև 1919 թ. հունիսի 15-ը և հանձնվեն Հանրային կրթության և արվեստի նախարարությանը, որպեսզի վերջինս ի վիճակի լինե՛ր մինչև ուսումնական տարվա սկիզբը ավարտելու անհրաժեշտ նախապատրաստությունները: Այդպիսի շինություններից էր նախկին սեմինարիայի շենքը, որը ժամանակավորապես տրամադրված էր կոմիտեին: Նախարարը խնդրում էր միջոցներ ձեռք առնել այդ շենքը արագ ազատելու և հայկական համալսարանի կոմիսար Գ. Տեր-Հակոբյանին հանձնելու համար, որպեսզի հնարավոր լինի այն կարգի բերել մինչև ուսումնական տարվա սկիզբը (սակայն 1919 թ. այդ շենքը այդպես էլ չազատվեց):

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 73)

27 հունիսի – Զևավորվեց համալսարանական գրադարանային հանձնաժողովը, որում ընդգրկվեցին Հայաստանի Հանրապետության պետական հանրային գրադարանի վերատեսուչ Ա. Կա-

նայանք, Ե. Տեր-Սինասյանը՝ որպես լեզվաբանական բաժանմունքի ներկայացուցիչ, Մ. Մզարեուովը՝ որպես բժշկական բաժանմունքի ներկայացուցիչ, Գ. Խարազյանը՝ որպես իրավաբանական բաժանմունքի ներկայացուցիչ, և Դ. Չավրյանը՝ որպես ֆիզիկամաթեմատիկական բաժանմունքի ներկայացուցիչ:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 65, 294)

1 հուլիսի – Համալսարանի կազմակերպիչ հանձնաժողովի N 8 նիստում քննարկվեցին և անցան փոփոխություններից հետո հաստատվեցին Հասարակագիտության բաժնի ուսումնական ծրագիրը և բացատրագիրը:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 79 և 297)

9 հուլիսի – Երևան քաղաքում տեղի ունեցավ նիստ հանրային կրթության և արվեստի նախարար Ս. Տիգրանյանի նախագահությամբ, որին մասնակցում էին Թիֆլիսի համալսարանական հանձնաժողովի անդամներ Դ. Չավրյանը, Մ. Աբեղյանը, Ե. Տեր-Սինասյանը, նախարարի օգնական Պ. Սոտնիկյանը, Ա. Տեր-Պողոսյանը, Գ. Էդիլյանը, Երևանի փոխքենսակալ Տ. Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանը: Նիստում լսվեցին անդամներ Դ. Չավրյանի և Ե. Տեր-Սինասյանի զեկուցումները՝ հանձնաժողովի կատարած աշխատանքների մասին: Նույն նիստում մասնակցություն ունեցան համալսարանում դասավանդելու մպատակով հրավիրված պրոֆեսորների, դոցենտների և պրիվատ դոցենտների աշխատավարձի չափերը:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 13, գ. 6, ք. 6 և հակ. կողմ)

17 հուլիսի – Հայաստանի Հանրապետության Նախարարների խոր-

հուրդը լրացուցիչ օրենք ընդունեց Երևանի համալսարանի մասին, որով նախատեսվում էր.

1. 1919 թ. աշմանից բացել Երևանի համալսարանի պատմալեզվաբանական և իրավաբանական ֆակուլտետները:

2. Հաստատել պրոֆեսոր Յու. Ղամբարյանին համալսարանի տեսուչ:

3. Աշխատավարձերի համար ընդունել հետևյալ չափը. պրոֆեսորներին՝ նախարարական, դոցենտներին՝ նախարարի օգնականի, պրիվատ դոցենտներին՝ բաժանմունքի կառավարչի աշխատավարձ:

Ծանոթություն - Արտասահմանի համալսարաններից հայտնի գիտնականներ հրավիրելու դեպքում կարելի է վճարել ավելի բարձր աշխատավարձ՝ ամեն անգամ ստանալով Նախարարների խորհրդից հավելյալ վարկ:

4. Հանձնարարել համալսարանի տեսուչին և հանրային կրթության և արվեստի նախարարին մշակել ուսանողների կողմից համալսարանում վճարվելիք ուսման վարձի քանակը և ձևը:

5. Հաստիքացուցակը ու նախահաշիվը հաստատել և բացել Հանրային կրթության և արվեստի նախարարությանը երկու միլիոն երկու հարյուր հիսունինը հազար երկու հարյուր (2259200) ռուբլու վարկ՝ առաջիկա՝ 1919-20 ճեմարանական տարվա համար:

6. Համալսարանի կառավարության ժամանակավոր կանոնների և մշտական կանոնադրության մշակումը հանձնարարել համալսարանի տեսուչին:

7. Հաստատել Երևանի համալսարանի ժամանակավոր կանոնները:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միդզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 88)

21 հուլիսի – Հանրային կրթության և արվեստի նախարար Ս. Տիգրանյանը նամակով տեղեկացնում է Թիֆլիսում գտնվող Յու. Ղամբարյանին, որ նա ՀՀ Նախարարների խորհրդի հուլիսի 17-ի

նիստում հաստատվել է համալսարանի տեսուչի պաշտոնում²:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Սիրգոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 89)

26 հուլիսի – Տեղի ունեցավ համալսարանական կազմակերպիչ հանձնաժողովի նիստը Յու. Ղամբարյանի նախագահությամբ: Նիստում քննարկվեց Երևանից վերադարձած պատվիրակության (Դ. Զավրյան, Ե. Տեր-Սիմասյան) գործունեությունը:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 13, գ. 6, ք. 7 և հակ. կողմ, ք. 7a, հակ. կողմ)

30 հուլիսի – Յուրի Ղամբարյանը նամակով հայտնում է ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարարին, որ ներկայումս ինքը Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտորի պաշտոնակատարն է և այդ ինստիտուտի հանձնարարությամբ շուտով մեկնելու է Ռուսաստան: Միաժամանակ Յու. Ղամբարյանը հայտնում է, որ ինքն անելու է ամեն հնարավորը՝ Երևանի համալսարանի պրոֆեսորների կազմը համալրելու համար: Նամակում նա նշում է նաև, որ գործուղումից վերադառնալուց հետո եթե համալսարանում հնարավոր լինի բացել Իրավաբանական ֆակուլտետ, ապա ինքը կարող է ստանձնել համալսարանի ռեկտորի պարտականությունները:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Սիրգոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 97, 301)

21 օգոստոսի – Արտաքին գործերի նախարարությունը N 3330 գրությամբ Հանրային կրթության և արվեստի նախարարությանն է հասցեագրում Պոլսում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական հավատարմատար Ֆ. Թախտաջյանի և Զավեն պատրիարքի նամակները, որոնցում նրանք ցանկություն էին հայտնել ստանալու լրացուցիչ տեղեկություններ համալսարա-

նի մասին:

(Տե՛ս Երևանի համալսարան, 1918-1920 թթ. Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 106-107, 303)

28 օգոստոսի – Հանրային կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանը գիմնազիայի շենքի մի մասը համալսարանին հատկացնելու և այդտեղ վերանորոգման աշխատանքներ սկսելու մասին գրությամբ դիմում է Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդին: Գրության մեջ նշված է. «Ըստ սույն թվականի ապրիլի 9-ի օրագրի Խորհուրդը որոշել է ավարտել գիմնազիայի նորակառույց շենքը և հատկացնել պառլամենտին և մինիստրությանց: Հուլիսի 3-ի օրագրական որոշումով կազմված է մի մասնախումբ շենքի նորոգությունը ձեռնարկելու համար, ուր, ի զարմանս իմ, մինիստրությանս կողմից ոչ ոք չի հրավիրված, թեև շենքը դպրոցական է, իրավատերն իսկապես պետք է լիներ մինիստրությունս, և ավարտման մասին խոսք եղած ժամանակ սովորաբար այդ շենքը նկատվել է իբր պառլամենտին և համալսարանին հատկացված մի շինություն: Մինիստրների խորհուրդը հավանություն է տվել համալսարան բանալու առաջարկին, այդ մասին որոշում ունի և վարկ է բացել, առանց սակայն որոշ շենք մատնանշելու այդ հաստատության համար: Արդեն վարձված են մոտ տասը դասախոս[ներ], և երիտասարդությունը մեր երկրում թե այլուր սրտատրոփ սպասում է համալսարանի բացմանը:

Մինչդեռ գիմնազիայի շենքի նորոգության գործը մինչև այսօր չէ իսկ սկսված, և ամռան նպաստավոր օրերը անցնելու վրա են: Քանի դեռ մոտ երկու ամիս ունենք մեր տրամադրության տակ, խնդրում եմ խորհուրդիդ այդ շենքի մի թևը հատկացնել համալսարանին և որոշել անմիջապես ձեռնամուխ լինելու նրա ավարտման գործին՝ աշխատանքների փութացման հոգսը թողնելով մինիստրությանս վրա:

Գիտակ մարդկանց ասելով ամենաշատը երկու ամսում շենքի մի թևը (10 սենյակ) կարելի է հարմարեցնել պարապմունք-

ների համար:

Շինարար մասնաժողովն արդեն ընտրված է, վարկը բացված է, մնում է, որ մի հիմնարկություն հետապնդե աշխատանքների արագացմանը: Իսկ այդ հնարավոր է, եթե շենքի մի թևը հատկացվի համալսարանին, և աշխատանքների արագացման հոգսը հանձնվի մինիստրության:

Հուսով եմ, որ խորհուրդդ այս խնդրին արագ և դրական լուծում կտա»³:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 105)

22 սեպտեմբերի – Նախարարների խորհրդի նիստում լսվեց հանրային կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանի զեկուցումը՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանը Աստվածաբանական ֆակուլտետի վերածելու մասին: Սակայն Նախարարների խորհուրդը որոշեց հարցը հետաձգել:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 109)

6 հոկտեմբերի – Հանրային կրթության և արվեստի նախարարը դիմում է Կ. Պոլսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատարին՝ Թուրքիայում հայ գիտական ուժերի մասին տեղեկություններ հաղորդելու խնդրանքով:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 111)

10 հոկտեմբերի – Մանրեաբան Վ. Հապեշյանը Եմայից (Գերմանիա) դիմում է հանրային կրթության և արվեստի նախարարին՝ Երևանի համալսարանում բուսաբանություն դասախոսելու համար:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 113)

10 հոկտեմբերի – Հանրային կրթության և արվեստի նախարարի օգնականի պաշտոնակատար Պ. Սոտնիկյանը գրությամբ դիմում է Արտաքին գործերի նախարարությանը՝ հայտնելով, որ բացվելիք համալսարանը գրադարան չունենալու պատճառով կանգնած է մեծ դժվարության առջև: Վրաստանից գրադարան դուրս հանելը, նույնիսկ մասնավոր անձանց գրադարանները, կապված է չափազանց մեծ ձևականությունների հետ, որոնք երկարատև ժամանակ են պահանջում: Ուստի Պ. Սոտնիկյանը խնդրում է, որ Վրաստանում գտնվող ՀՀ դիվանագիտական առաքելությունը գործում աջակցություն ցույց տա Երևանի համալսարանի ուսուցչապետերին նրանց մասնավոր գրադարանները Հայաստան տեղափոխելու գործում:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 113)

28 հոկտեմբերի – Հանրային կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանի հրամանով 1919 թ. օգոստոսի 1-ից Երևանի համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետի պրիվատ-դոցենտներ նշանակվեցին դասախոսներ՝ փիլիսոփայության դոկտոր, Անդրկովկասյան համալսարանի պրիվատ-դոցենտ Մ. Աբեղյանը, Արևելքի պատմության մագիստրոս, Անդրկովկասյան համալսարանի դոցենտ Աշխարհբեկ Մելիք-Քալանթարը, հայոց գրականության մագիստրոս Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, փիլիսոփայության դոկտոր Գարեգին Եպիսկոպոս Հովսեփյանը, փիլիսոփայության դոկտոր, աստվածաբանության լիցենդիատ Երվանդ Տեր-Սիմապյանը, Անդրկովկասի համալսարանի դոցենտի պաշտոնակատար Ռուբեն Աբրահամյանը և արևելյան լեզուների թեկնածու Ստեփան Մալխասյանը:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 121)

1 ղեկտենքերի – Երևանի համալսարանի տեսուչ Յուրի Դամբարյանը նամակով տեղեկացնում է Հռոմի համալսարանի փիլիսոփայության դոկտոր Պ. Մանուշյանին վերջինիս Զրեական օրենքի ամբիոնի պրոֆեսորի թեկնածու հաստատելու մասին: Նամակում նշված է. «Համաձայն Երևանի համալսարանի կազմակերպիչ հանձնաժողովի 1919 թ. նոյեմբերի 24-ի նիստի որոշման՝ Դուք նշանակվում եք Իրավաբանական ֆակուլտետի քրեական օրենքի ամբիոնի պրոֆեսորական թեկնածու: Ձեր վրա պարտավորություն է դրվում տարին երկու անգամ ներկայացնել համալսարանի վարչությանը Ձեր գիտական զբաղմունքների մասին հաշիվ և Ձեր աշխատությունները: Վերջիններս բավարար գտնելը համապատասխան ֆակուլտետի կողմից պայման կհամարվի Ձեզ պատշաճ պաշտոն տալու հիշյալ ամբիոնում»:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 130)

3 ղեկտենքերի – Թիֆլիսից Ալեքսանդրապոլ ժամանած Երվանդ Տեր-Սիմոնյանը, տեղում ծանոթանալով քաղաքի հարմարություններին, զեկուցագրով տեղեկացնում է հանրային կրթության և արվեստի նախարարին համալսարանը Ալեքսանդրապոլ տեղափոխելու հնարավորությունների մասին: Ձեկուցագրում մասնավորապես նշված է. «...Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարությունը բուռն ցանկություն ունի տեղափոխելու համալսարանը իր խնամքին հանձնված քաղաքում և այդ պատճառով էլ ընդառաջ գնաց համարյա բոլոր ցանկություններին, որ արտահայտվեցին իմ կողմից: Այսպես, քաղաքային ինքնավարությունը համալսարանի վարչության տրամադրությանն է հանձնում 4 մեծ սենյակ առևտրական դպրոցի շենքում, որոնցից համալսարանը յուր պետքերի համար կարող է օգտվել ամբողջ օրը: Դասախոսությունները կարող են տեղի ունենալ թե՛ այդ սենյակներից երկուսի մեջ ամբողջ օրվա ընթացքում և թե՛ ճաշից հետո դպրոցի բոլոր դասարաններում, որոնց թիվն

է 12: Հետագայի համար խոստացվում են ավելի մեծ հարմարություններ: Այս տարի առևտրական դպրոցի վերին հարկում տեղավորված է քաղաքային տարրական դպրոցներից մեկը, որ ուսումնական տարվա վերջից կտեղափոխվի այլ շենք, և համալսարանի համար կհատկացվի մշտական գործածության համար դպրոցի վերին հարկում 6 մեծ սենյակ:

Բացի այս, ուսանողական հանրակացարան հիմնելու համար հատկացվում է մի մեծ, նոր, ըստ ամենայնի հարմար և շատ քիչ նորոգություններ պահանջող շենք, որ կարող է տեղավորել ավելի քան 100 ուսանող: Ինչ վերաբերում է պրոֆեսորների, դոցենտների և այլ պաշտոնյաների բնակարանների հարցին, քաղաքային վարչությունը առանց դժվարության տալիս է բոլոր պահանջվող բնակարաններն ու սենյակները....»:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 130-131)

4 դեկտեմբերի – Հանրային կրթության և արվեստի նախարարի պաշտոնակատար Պ. Սոտնիկյանը զեկուցագրով դիմում է Նախարարների խորհրդին՝ համալսարանի ուսանողներին զինվորական պարտականությունից ազատելու օրինագծի առաջարկով:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 133)

5 դեկտեմբերի – Հանրային կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանը զեկուցագրով դիմում է Նախարարների խորհրդին՝ համալսարանը ժամանակավորապես Ալեքսանդրապոլ տեղափոխելու համար: Նույն օրը Նախարարների խորհուրդը, լսելով Ն. Աղբալյանի զեկուցումը համալսարանը ժամանակավորապես Ալեքսանդրապոլում բացելու և մինչև 1919-20 ուսումնական տարվա վերջը պարապմունքները այնտեղ շարունակելու մասին, որոշեց ընդունել նախարարի առաջարկը (ներքին գոր-

ծերի նախարար Ա. Գյուլխանդանյանը մնում է հակառակ կարծիքի):

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 134-135)

24 դեկտեմբերի – Համալսարանի տեսուչ Յուրի Ղամբարյանը գրությամբ դիմում է Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Մովսիսյանին՝ համալսարանի հանդիսավոր բացմանը դասախոսություն կարդալու առաջարկով: Գրության մեջ Յու. Ղամբարյանը հայտնում է, որ համալսարանի բացումը տեղի կունենա 1920 թ. մոտավորապես հունվարի 25-ին Ալեքսանդրապոլում, ուստի խնդրում է Մեսրոպ Եպիսկոպոսին պատրաստել զեկուցում՝ «Վանքերի ազդեցությունը Հայաստանում կրթվածության վրա» թեմայով, որն առաջարկել է Համալսարանի կազմակերպիչ հանձնաժողովը⁴:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 136)

1920

27 հունվարի – Համալսարանի կազմակերպիչ հանձնաժողովը Ալեքսանդրապոլից հեռագրով դիմում է հանրային կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանին՝ համալսարանի բացման հանդեսի առաջին ճառը արտասանելու առաջարկով:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Սիրգոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 138)

31 հունվարի – Լույս է տեսնում «Հայաստանի համալսարան» միօրյա թերթը («Գիտությունը ուժ է» նշանաբանով)՝ նվիրված Հայաստանի համալսարանին:

(«Հայաստանի Համալսարան», 31 յունուարի 1920)

31 հունվարի – Ալեքսանդրապոլում տեղի ունեցավ Հայաստանի համալսարանի պաշտոնական բացումը, որին ներկա գտնված Հայաստանի առաջին հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանը հետագայում հիշում է. «Ալեքսանդրապոլում՝ «Հայաստանի երկրորդ մայրաքաղաքում», տեղի ունեցավ Հայաստանի համալսարանի հանդիսավոր բացումը: Երևանից ու Թիֆլիսից հատուկ գնացքներով եկել էին բազմաթիվ հյուրեր՝ Խորհրդարանի նախագահ Ավ. Սահակյանը, վարչապետ Ալ. Խատիսյանը, բրիտանական ներկայացուցիչ Օ. Ուորդոփոլը, Հայաստանի գերագույն կոմիսար գնդ. Հասկելը իր կնոջ ու շքախմբի հետ, ֆրանսիական ներկայացուցիչ կապ. Պուադեբարը, Կամավորական բանակի ներկայացուցիչ գնդ. Ջենկևիչը, պարսից-հյուպատոս Ասադուլլա խանը, Ադրբեջանի դիվ. ներկ. Հախվերդովը, հանրային կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանը, արդար. նախ. Ա. Չիլինգարյանը, ելևմտ.

նախ. Ս. Ասատրյանը, խնամ. նախ. օգն. բժ. Տեր-Միքայելյանը, Խորհրդարանի անդամներ բժիշկ Հ. Տեր-Դավթյանը, Ս. Հարությունյանը, Ռ. Տեր-Մինասյանը, Վ. Մինախոբյանը, Ս. Վրացյանը, Ա. Խոնդկարյանը, Ա. Սաֆրաստյանը, Տ. Ծամհուրը, Ա. Ղազարյանը, գոր. Նազարբեգյանը, գոր. Հախվերդյանը, համալսարանի ուսուցչապետերը՝ պրոֆ. Ղամբարյանի գլխավորությամբ, բանաստեղծ Հ. Հովհաննիսյանը, պրոֆ. Ա. Խաչատրյանը և շատ ուրիշ պետական ու հասարակական, գրական ու գիտական դեմքեր: Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությունը կազմակերպել էր փայլուն ընդունելություն: Կայարանում պատրաստված էր թեյասեղան: Համալսարանի դահլիճը զարդարված էր կանաչով ու դրոշակներով: Նվագում էր զինվորական խումբը: Հանդեսը բաց արավ համալսարանի տեսուչ, վաստակավոր գիտնական Յու. Ղամբարյանը, որից հետո նախարար Ն. Աղբալյանը մի ընդարձակ ու կոտ ճառով վեր հանեց համալսարանի դերը հայ պետականության և մշակույթի զարգացման գործում: «Այն ջահը,- ասաց նա,- որ մենք վառում ենք այսօր Հայաստանի բարձրավանդակի վրա, չի հանգչի երբեք և կլուսավորե Առաջավոր Ասիան»: Եվ մաղթեց, որ Հայաստանի համալսարանը լինի մատչելի ամենքի համար, մտնելը լինի հեշտ, ելնելը՝ դժվար, որ ուսումը լինի ձրի, գիտությունը վարվի գործնական եղանակով, որ հիմք դրվի համայնական գիտական աշխատանքին Հայաստանում: Հանրային կրթության նախարարից հետո պրոֆ. Ղամբարյանը արավ համալսարանի կազմակերպության պատմությունը, որից հետո խոսեցին Ավ. Սահակյանը, Ուորդրոպը, գնդ. Հասկելը, Պուադերարը, գնդ. Ջենկևիչը, Ասատուլա խանը, Հախվերդովը, գոր. Նազարբեգյանը:Ողջույնի ճառերից հետո Ս. Տիգրանյանը կարդաց արտասահմանից և Հայաստանի զանազան կողմերից ստացված հարյուրավոր հեռագրերից մի քանիսը: Ծնորհավորում են Վրաստանի դիվ. ներկ. Գ. Մախարաձեն, Վրաստանի հանր. կրթ. նախարարի պաշտոնակատար Յինցաձեն, գորավար Կարալովը և ուրիշներ: Ապա համալսարանի ուսուցչապետ Մեսրոպ Եպիսկոպոսը ակադեմիական ճառ արտասանեց «Հայ վանքե-

րի նշանակությունը Հայաստանի կուլտուրական գործում» նյութի մասին, որից հետո՝ բանաստեղծ Հ. Հովհաննիսյանը, Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Հ. Մելքոնյանը, Երևան քաղաքի ներկայացուցիչ Ա. Շարաֆյանը, Կարսի քաղաքագլուխ Հ. Նոնրատյանը, Նոր Բայազետի քաղաքագլուխ Վ. Աֆրիկյանը, Ա. Խոնդկարյանը սոց.-հեղ. և Ա. Ղազարյանը՝ Հ. Հ. Դ. կուսակցությունների կողմից և մի շարք ուրիշ հիմնարկությունների ու միությունների ներկայացուցիչներ: Հայտարարվեց ցանկը համալսարանին արված նվիրատվությունների. մեկ միլիոն ռուբլի Մայիլյան եղբայրներից, 100.000 ռ. «Շիրակ կոոպերատիվից»:

.... Հանդեսի ամբողջ տևողության ընթացքում դուրսը խոնաված էր մեծ բազմություն. շատերը եկել էին շրջակա գյուղերից: Հասարակությունը խանդավառ ցույցերով ընդունեց հանդեսից հետո դուրս եկող հյուրերին: Այստեղ ևս խոսեցին օտար պետության ներկայացուցիչները, վարչապետ Խատիսյանը և ուրիշներ: Հավաքված բազմությունը հանեց մի բանաձև, որով պահանջում էր դաշնակիցներից Թուրքահայաստանի հարցի լուծումը: Հանդեսից հետո Քաղաքային ակումբի դահլիճում տեղի ունեցավ ճոխ հացկերույթ քաղաքագլուխ Հ. Մելքոնյանի նախագահությամբ, ուր նույնպես եղան բազմաթիվ ճառախոսություններ հայ և օտար ներկայացուցիչների կողմից: Երեկոյան առևտրական դպրոցի սրահում կայացավ գրական-երաժշտական երեկույթ և պարահանդես, որը մեծ աշխույժով անցավ և տևեց մինչև ուշ գիշեր: Պարահանդեսից հետո հյուրերը արտակարգ զնացքով վերադարձան Երևան»:

(Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 383-386, տե՛ս նաև «Յառաջ», 5 փետրվարի, 6 փետրվարի 1920)

12 փետրվարի – Կովկասի ֆրանսիական զինվորական առաքելության ղեկավար Պուադեբարը Թիֆլիսից նամակով դիմում է ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանին՝ Փարիզի և Հայաստանի համալսարանների միջև կապեր հաստատելու համար: Ստորև ներկայացնում ենք այդ գրությունը. «Չերդ գերազանցություն, պատիվ ունեն Ձեզ տեղեկացնելու, որ Փարիզի Արտաքին գործերի նա-

խարարությանը տեղյակ եմ պահում Խորեն Մագիստրոսի ճանապարհորդության մասին, որպեսզի հնարավորին չափ հետազոտվի նրա աշխատանքը Փարիզում: Հարցերից մեկը, որ Խորեն Մագիստրոսը կարող է շոշափել ֆրանսիական կառավարության հետ, Ալեքսանդրապոլի և Փարիզի համալսարանների միջև հարաբերությունների հաստատումն է: Այդ մասին տեղեկացնում եմ նաև ֆրանսիական կառավարությանը, համոզված լինելով, որ նա մեծ հետաքրքրություն կցուցաբերի Հայկական շատ հիմնավոր գիտությանը և նրա ամենահարգարժան ներկայացուցիչներին ֆրանսիական գիտության ու գիտնականների հետ ուղղակի հարաբերությունների մեջ դնելու գործում:

Հուսով եմք, որ Չերդ գերագանցությունը կարագացնի Ժողովրդական կրթության նախարարության զեկույցը՝ Ալեքսանդրապոլի համալսարանի ծրագրի և դասախոսական կազմի վերաբերյալ, դրան կցելով այն կետերի համառոտ շարադրանքը, որոնց հիման վրա Փարիզի համալսարանը կկարողանար գործնական ծառայություններ մատուցել Հայկական համալսարանին»:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Սիրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 172-173, 313)

30 մարտի – Հանրային կրթության և արվեստի նախարարի պաշտոնակատար Պողոս Սոտնիկյանը ծանուցում է համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետի դեկանին Հայաստանի սահմաններից դուրս ծնված ուսանողների զինակոչի մասին ՀՀ Նախարարների խորհրդի որոշումը: Ծանուցագրում նշված էր, որ նախարարությունը օրինագիծ էր ներկայացրել համալսարանի ուսանող այն հայազգի երիտասարդներին տարկետման իրավունք տալու մասին, որոնք զինակոչի տարիքի են և ծնվել են Հայաստանի սահմաններից դուրս: Նախարարների խորհուրդը որոշեց, որ այդ խնդիրը կարող է լուծվել ադմինիստրատիվ կարգով, այսինքն՝ «Предоставлять отсрочку периодически студентам армянского Университета,

родившимся вне пределов Армении, по представлению ректора университета»:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Սիրգոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 179-180)

31 մարտի – Ուսանողական միության ընդհանուր ժողովը Հովսեփ Պարսամյանին ընտրում է իր ներկայացուցիչ համալսարանի վարչության կազմում:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Սիրգոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 189, 315)

1 ապրիլի – Համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետի դեկանը գրությամբ դիմում է համալսարանի տեսուչ Յուրի Դամբարյանին՝ առաջարկելով Հակոբ Մանանդյանին դոցենտ և գրադարանի ժամանակավոր կառավարիչ նշանակել⁵:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Սիրգոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 180-181)

3 ապրիլի – Հայաստանի Հանրապետության հանրային կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանը զեկուցագրով դիմում է Նախարարների խորհրդին՝ Հայաստան եկող Թիֆլիսի հայ ուսանողներին բանակ չտանելու առաջարկով: Չեկուցագրում մասնավորապես նշված էր. «Թիֆլիսի պոլիտեխնիկումի մի խումբ ուսանողների կողմից բանավոր դիմում է եղած միմիստությունս՝ խնդրելով հայտնել, թե նրանց զինվոր կտանե՞ն, եթե այս ամառ գործնական աշխատանքների համար գալու լինեն Հայաստան:

Նկատելով, որ այդ ուսանողները գտնվում են Վրաստանում և չեն գա Հայաստան, եթե ապահով չլինեն, որ պիտի զինվոր չտարվեն, նկատելով, որ սկսնակ հայ ուժերին պետք է հնար տալ վարժվելու մեր երկրին և նրա պայմաններին, նկատե-

լով, որ մեր երկաթուղիները և այլ գործանոցները կարիք ունեն մտավորական աշխատավորների, որ մման դեպքերում օտար պետությունները անգամ ընդառաջ են գնում այլազգի երիտասարդության, կարծում են, որ պետք է վստահեցնել այդ ուսանողներին, որ նրանց զինվոր չեն տանի, եթե գործնական աշխատանքների վարժվելու նպատակով անցնեն Հայաստան և առ այդ ունենան պատշաճ վկայական պոլիտեխնիկումի վարչության կողմից»⁶:

(տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 181)

27 ապրիլի – Հանրային կրթության և արվեստի նախարարի N 116 հրամանով Աշխարհբեկ Լոռու Մելիք-Քալանթարը նշանակվեց Երևանի համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետի արևելքի պատմության դոցենտի պաշտոնակատար:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 178, 314)

31 մայիսի – Հանրային կրթության և արվեստի նախարար Գևորգ Ղազարյանը զեկուցագրով դիմում է Նախարարների խորհրդին՝ խնդրելով համալսարանը տեղափոխել Երևան և հարմար շենք հատկացնել: Ջեկուցագրում նշված է. «1919 թ. 17 հուլիսի օրենքով որոշվեց բանալ հայկական համալսարան մայրաքաղաքում: Սակայն այն պատճառով, որ բոլոր ազատ շենքերը գրավված էին ամերիկյան որբանոցներով ու պետական հաստատություններով, և գիմնազի նոր շենքը որոշված էր հատկացնել համալսարանին, դեռ չի ավարտված, խորհուրդը որոշեց համալսարանը ժամանակավորապես տեղափոխել Ալեքսանդրապոլում: Այժմ ամերիկյան որբանոցները մասամբ տեղափոխվել են Կարս, մասամբ էլ պիտի տեղափոխվեն Ալեքսանդրապոլի վերանորոգվող պոլիգոնը, իսկ գիմնազի նոր շենքը ենթադրվում է երկու ամսից հետո ավարտել և տեղափոխել այնտեղ մինիստրությունները:

Ուստի մինիստրությունս անհրաժեշտ է գտնում համալսարանը Ալեքսանդրապոլից վերադարձնել մայրաքաղաք, ուր պետք է այժմվանից արդեն հատկացնել հարմար շենք, որտեղ աշնանից հնարավոր լինի սկսել համալսարանի պարապմունքները:

Խնդրում եմ ընդունել հետևյալ որոշումը՝

Համալսարանը տեղափոխել Երևան:

Հատկացնել համալսարանի համար հարմար շենք»:

(Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 194-195)

3 հունիսի – Համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետի ղեկանի պաշտոնակատար Գարեգին եպիսկոպոսը հեռագրով դիմում է Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ խնդրելով մեղմացնել մայիսյան ապստամբությանը մասնակցած համալսարանի ուսանող Ղարիբջանյանի դատավճիռը: Հեռագրում մասնավորապես նշվում է. «Տեղեկանալով, որ Ալեքսանդրապոլի բոլշևիկյան շարժման մասնակիցների թվում դատապարտված է նաև համալսարանի ուսանող Ղարիբջանյանը, և հնարավորության դեպքում շնորհել նրան կյանքը՝ մեղմացնելով դատավճիռը»:

(Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 195)

8 հունիսի – Երևանի ուսանողների ընդհանուր ժողովը ընդունում է բանաձև համալսարանը Երևան տեղափոխելու և ուսանողական միություն ստեղծելու անհրաժեշտության մասին:

(Տես Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 198)

11 հունիսի – Երևանի համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետի ղեկանի պաշտոնակատար Գարեգին եպիսկոպո-

սը խնդրում է համալսարանի պրոֆեսոր Ե. Տեր-Սինապանին ԹԻՖլիսից մեկնել Երևան՝ իբրև ֆակուլտետի ներկայացուցիչ մասնակցելու համալսարանի տեղափոխման հարցով կայանալիք խորհրդակցությանը և օգնելու համալսարանի ռեկտոր պրոֆ. Յու. Ղամբարյանին այդ գործում:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 13, գ. 6, ք. 9)

11 հունիսի – Պատմալեզվաբանական ֆակուլտետի ժողովը Հակոբ Մանանդյանին ընտրում է դեկանի պաշտոնակատար:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Սիրգոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 203)

15 հունիսի – Գուրգեն Էդիլյանը Ալեքսանդրապոլից գրությամբ դիմում է Պատմալեզվաբանական ֆակուլտետի ղեկավարությանը՝ խնդրելով համալսարանում կազմակերպել մանկավարժության և գեղագիտություն դասընթացներ:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Սիրգոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 205)

21 հունիսի – Նախարարների խորհրդի նիստում որոշվեց.

«1. ա) Համալսարանը իր բոլոր ֆակուլտետներով տեղափոխել Երևան:

բ) Մեմիմարիայի շենքը տրամադրել համալսարանին:

գ) Պրոֆեսորների համար գտնել մասնավոր շենքեր:

դ) Հրահանգել ռեկվիզիցիոն կոմիսիային բռնագրավելու պրոֆեսորների համար, առաջին հերթին, դատարկված բոլոր տները:

ե) Բանալ իրավաբանական ֆակուլտետ, իսկ բնագիտական ֆակուլտետի համար տեսնել նախապատրաստական աշխատանքներ:

զ) Հանձնարարել կրթական նախարարին, որ ներկայացնե

համալսարանի կանոնադրությունը»:

(Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի
 ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս.,
 Երևան, 1995, էջ 214)

22 հունիսի – Հանրային կրթության և արվեստի նախարար Գ. Ղազարյանի ստորագրությամբ Ալեքսանդր Շելկովնիկովին տրվում է վկայական, որով նրան հանձնարարվում է Երևանի համալսարանի համար բուսաբանական և կենդանաբանական հավաքածուներ ժողովել:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի
 ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս.,
 Երևան, 1995, էջ 215)

25 հունիսի – ՀՀ Նախարարների խորհուրդն ընդունում է օրենք, որի համաձայն՝ պրոֆեսոր Յու. Ղամբարյանը պետք է հաստատվի Երևանի համալսարանի ռեկտորի պաշտոնում մույն թվականի ապրիլի 16-ից⁷:

(Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի
 ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս.,
 Երևան, 1995, էջ 214, 319)

13 հուլիսի – Համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Հ. Մանանդյանը դիմում է ՀՀ արտաքին գործերի նախարարին՝ Պարսկաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչի միջոցով հրավիրելու Թեհրանում գտնվող Հրաչյա Աճառյանին համալսարանում դասավանդելու:

(տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի
 ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս.,
 Երևան, 1995, էջ 231)

7 օգոստոսի – Հանրային կրթության և արվեստի նախարար Գ. Ղազարյանը գրությամբ դիմում է ՀՀ վարչապետ Համազասպ

Օհանջանյանին՝ խնդրելով համալսարանի պրոֆեսորներին ապահովել բնակարաններով: Վարչապետին ուղղված գրության մեջ նա նշում է. «Համալսարանը Երևան փոխադրելու խնդրի իրականացման նախապայմաններից մեկն է պրոֆեսորական կազմին բնակարաններ հատկացնելը: Սակայն, չնայած մեր մի շարք դիմումների, մինչև այսօր բնակարաններ պրոֆեսորների համար չդատարկվեցին, որովհետև լիկվիդացիայի ենթարկված օտարազգի պաշտոնյաները չեն թողնում Հաստատանի սահմանները: Միաժամանակ պիտի հայտնենք, որ Ամերիկյան Կոմիտեն դատարկել է Դոքտորսկայա փողոցի 26 սենյակից բաղկացած մի շենք, որ կարող էր հարմար լինել պրոֆեսորների համար իբրև բնակարան և հարմարություն է ներկայացնում նաև ուսանողության համար (ներքին հարկ):

Մեզ հասած տեղեկություններից երևում է, որ այդ շենքը քաղաքային ինքնավարությունը մտադիր է վերցնել իր պետքերի համար: Սրանով խնդրում ենք Ձեր կարգադրությունը, որ հիշված շենքը տրվի Հանրային կրթության նախարարությանը՝ Համալսարանի պետքերի համար»:

Հ. Օհանջանյանը օգոստոսի 10-ին մակագրում է այդ փաստաթուղթը. «Շտապ: Խնդրել քաղաքապետին հատկացնել այդ շենքը պրոֆեսորներին կամ անհապաղ տալ նրանց համար այլ շենքեր»:

(Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 241)

4 սեպտեմբերի – Հանրային կրթության և արվեստի նախարարի օգնականը տեղեկացնում է նախարարին. «Պ. Ալեքսանդր Շելկովնիկեանին յանձնարարած էր Հայաստանի Համալսարանի համար պատրաստել բուսաբանական եւ կենդանաբանական ժողովածուներ: Ժողովածուները պատրաստ են սակայն դասաւորման եւ դեզինֆեկցիայի ենթարկելու համար պիտի ուղարկւին Թիֆլիս, երբ մենք ստանանք Վրաց կառավարութեան երաշխիք այդ ժողովածուների վերադարձման մասին: Ուստի

խնդրում ենք հաճից կարգադրել, որ պ. Ալեքսադր Շելկովնիկեանին սեպտեմբերի վերջերին տրամադրուի մի վագոն Կալագերան կայարանից մինչև Թիֆլիս յիշած տեղափոխելու համար»:

(ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 337, բ. 292)

դեկտեմբեր – Համալսարանում ստեղծվում է դասախոսների արհմիութենական կազմակերպություն:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 72)

17 դեկտեմբերի – ՀԽՍՀ լուսժողկոմ Ա. Հովհաննիսյանի հրամանով.

«1. Երևանի համալսարանը վերակազմվում և վերակոչվում է Երևանի ժողովրդական համալսարան:

2. Նախկին համալսարանի ֆակուլտետները փակվում են, և հիմնվում է երկու բաժանմունք՝ բնագիտական և հասարակագիտական:

3. Նախկին համալսարանի բոլոր պրոֆեսորները, դոցենտները, պրիվատ-դոցենտները, դասատուները և ասիստենտները համարվում են արձակված:

4. Նախկին համալսարանի գույքի պահպանության ամբողջ պատասխանատվությունը ընկնում է հին վարչության վրա:

5. Լուսավորության ժողովրդական կոմիսարիատին կից կազմակերպվում է համալսարանի վերակազմության հանձնաժողով, որի վրա պարտականություն է դրվում սույն հրամանը հրատարակելու օրից մի շաբաթվա ընթացքում ներկայացնել կոմիսարիատիս հաստատության մոտ համալսարանի կազմակերպության հիմունքները, ծրագիրը, դասախոսների կազմն ու շտատները:

6. Հանձնաժողովի նախագահ է նշանակվում ընկ. Կողբեյլյանը, անդամներ՝ ընկ. Զուբարյանը, Պիճիկյանը և ուսանողության երկու ներկայացուցիչներ»:

(Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 280)

28 դեկտեմբերի – ՀՍԽՀ լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանը ստորագրում է «Երևանի ժողովրդական համալսարանի ժամանակավոր կանոնադրության մասին» և «Երևանի ժողովրդական համալսարանի կազմակերպության մասին» հրամանները:

(Տե՛ս ՀՍԽՀ դեկրետների եւ հրամանների ժողովածու, պրակ 1, Էջմիածին, 1921, էջ 35-39, տե՛ս նաև Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 283)

28 դեկտեմբերի – Երևանի ուսուցչական սեմինարիայի գրադարանի գրքային ֆոնդի (10.000 միավոր) հիման վրա ՀՍԽՀ լուսժողկոմատի կարգադրությամբ ստեղծվում է Ժողովրդական համալսարանի գրադարանը:

(Տե՛ս Ասլանյան Վ., Հայրապետյան Հ., Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանը, Երևան, 2001, էջ 3)

1921

Բնագիտական ֆակուլտետը վերակառուցվում է, կազմակերպվում է Գյուլատնտեսական ֆակուլտետ՝ կենսաբանության և քիմիայի ճյուղերով:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 14, գ. 12, ք. 1)

Երևանի ժողովրդական համալսարանում գործում էր 1 ահեստանոց:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

Գյուլատնտեսական ֆակուլտետի դեկան Պ. Քալանթարյանի և դասախոս Երվ. Տեր-Պողոսյանի միջնորդությամբ Լուսժողկոմատը համալսարանի բիոլոգիական կաբինետի համար գնում է Մալյուժենկոյի միջատաբանական հարուստ հավաքածուն:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը.

1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի

գիտական տեղեկագիր», N 2-3,

Յերևան, 1927, էջ XVIII)

Համալսարանում Տ. Մուշեղյանի ջանքերով ստեղծվում է մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի առարկայական հանձնաժողովը (ամբիոնը), որի դասախոսները սկզբում զբաղվում էին միայն մանկավարժական աշխատանքով⁸:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 14, գ. 14, ք. 8)

Համալսարան է հրավիրվում Գևորգ Ասատուրը (Աստվածատրյան), որը Պատմագրական ֆակուլտետում կարդում է վրաց և պարսից լեզուների, ինչպես նաև Մերձավոր Արևելքի ու Անդրկովկա-

սի գրականությունների դասընթացներ:

(Տե՛ս Մեր անվանի դասախոսները, մաս I, խմբ.՝ Ներսիսյան Մ.,
Թադևոսյան Թ., Պիվագյան Էմ., Երևան, 1970, էջ 28)

Թադևոս Ավդալբեկյանը հրավիրվում է համալսարան՝ դասախոսելու «Հայ հասարակական մտքի պատմություն» և «Տնտեսական զարգացման պատմություն» առարկաները: Նա եղել է նաև Հասարակագիտական ֆակուլտետի ղեկան:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը.
1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 178)

ՀԽՍՀ լուսժողկոմ Պողոս Մակինցյանի նախաձեռնությամբ Մոսկվայի Լազարյան ճեմարանից Ժողովրդական համալսարանի գրադարան է բերվում 163 արկղ արժեքավոր գրականություն:

(Տե՛ս Ասլանյան Վ., Հայրապետյան Հ., Երևանի պետական համալսարանի
Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանը,
Երևան, 2001, էջ 3-4)

հունվար – ՀԽՍՀ լուսժողովուհատի կարգադրությամբ համալսարանին են հանձնվում նախկին թեմական դպրոցի, Արտաքին գործերի նախարարության, Էջմիածնի Գևորգյան ճեմարանի և մի շարք հիմնարկությունների գրադարաններն ու գիտական գրականությունը, ինչի շնորհիվ համալրվում է համալսարանի գիտական գրադարանը:

(Տե՛ս Ասլանյան Վ., Հայրապետյան Հ., Երևանի պետական
համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան
գիտական գրադարանը, Երևան, 2001, էջ 3,
տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 62, ք. 9)

հունվար – Ժողովրդական համալսարանն ուներ 2 ֆակուլտետ՝ Սոցիոլոգիական և Բնագիտական ֆակուլտետները, 40 դասախոս և 800 ուսանող: Ուսանողների թիվը բացատրվում էր այն լայն իրավունքներով, որոնք արտոնել էր ունկնդիրներին Ժողովրդական համալսարանը: Այդ շրջանում ուսանող կարող էր

գրանցվել յուրաքանչյուր քաղաքացի, դասախոսությունների մեծ մասը հանրամատչելի էր: Բոլոր դասերը սկսվում էին կեսօրից հետո, այնպես որ ծառայողներին մեծ հնարավորություն էր տրվում օգտվելու այդ ժամերից: Դրան նպաստում էր նաև գործնական աշխատանքների բացակայությունը:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 28, ք. 1, տե՛ս նաև Հովհաննիսյան Հակ.,

Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926,

տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր»,

N 2-3, Յերևան, 1927, էջ VII)

հունվար – ՀԽՍՀ լուսժողովոմատը հրավիրում է համալսարանի խորհրդի առաջին նիստը, որտեղ քննարկվում է համալսարանի վարիչի (ռեկտորի) ընտրության հարցը: Փակ (գաղտնի) քվեարկությամբ ռեկտոր է ընտրվում պատմաբան Հակոբ Համազասպի Մանանդյանը, ով պաշտոնավարել է մինչև 1921 թ. հոկտեմբերը:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926,

տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3,

Յերևան, 1927, էջ VIII, տե՛ս նաև Ղարիբջանյան Լ. Պ.,

Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 50)

հունվար – Երևանի ժողովրդական համալսարան է հրավիրվում Կարապետ Մելիք-Օհանջանյանը՝ դասավանդելու գերմաներեն, հայոց հին գրականության պատմություն և բանահյուսություն առարկաները:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը.

1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 204)

1 հունվարի – Դռնի Ռոստովից համալսարանի բնագիտական ֆակուլտետ որպես ֆիզիկայի դասախոս է հրավիրվում Հարություն Անժուրը (Չերոտարյան), որը հենց սկզբից մեծ ջանքեր է գործադրում նախ ֆիզիկայի աշխատանոց, իսկ ապա նաև էլեկտրա-ռադիո-ակուստիկ լաբորատորիա կազմակերպելու համար:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը.

1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 94)

23 հունվարի – Ստեփան Շահումյանի անվան բանվորական ակումբի դահլիճում (Հայաստանի առաջին հանրապետության պառլամենտի շենքում) պաշտոնական-հանդիսավոր արարողությամբ վերաբացվում է Երևանի ժողովրդական համալսարանը⁹: Բացման ճառով հանդես է գալիս ռեկտոր Հակոբ Մանանդյանը: Այնուհետև ելույթ է ունենում ՀԽՍՀ լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանը, որը, կարևորելով բարձրագույն կրթության և գիտության դերը, մասնավորապես նշում է. «....Ժողովրդական համալսարանը պետք է հանդիսանա մտքի գիտական աշխատանոց բանվորության և գյուղացիության համար: Դասախոսական զբաղմունքներից ավելի մեծ տեղ պետք է բռնեն այստեղ լաբորատորական և սեմինարական աշխատանքները, այն է՝ ուսանողական ինքնաշխատությունը դասատուների ղեկավարությամբ: Ուսանողները պետք է աշխատեն յուրացնել գիտական հետազոտման մեթոդը և այդ ուղղությամբ վարժվեն և հմտանան»:

Այնուհետև ՀԿ(Բ)Կ Կենտկոմի անունից ողջույնի խոսք է ասում Վահան Երեմյանը, Արիեստակցական միությունների բյուրոյի կողմից՝ Հայկ Ազատյանը, կարմիր բանակի կողմից՝ քաղբաժնի պետ Անահիտ Լալայանը: Վերջում ուսանողության և հանդեսի մասնակիցների համար ընթերցվում է առաջին դասախոսությունը՝ «Խորհրդային իրավունքը և Հայաստանի ժողովրդական համալսարանը» թեմայով: Հանդես է գալիս Հասարակագիտական ֆակուլտետի դասախոս, իրավաբան Գրիգոր Չուբարյանը (համալսարան է հրավիրվել 1920 թ. դեկտեմբերին):

(Տե՛ս Գարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 50-52, 209)

25 հունվարի – Երևանի ժողովրդական համալսարանին հատկացված նախկին Ուսուցչական սեմինարիայի շենքում սկսվում են պարապմունքները:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ VII)

14 փետրվարի – Ստեղծվում է Երևանի ժողովրդական համալսարանի կուսբջիջը (դասախոսներից միայն Պապա Բալանթարյանն էր կոմունիստ, ով նաև հողժողկոմատի կազմակերպության անդամ էր): Այդ օրը կայացած ընդհանուր ժողովում որոշվում են կուսբջիջի անդամների անելիքներն ու կազմակերպության խնդիրները:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 72)

16 փետրվարի – Փետրվարյան ապստամբության հետևանքով Երևանի ժողովրդական համալսարանի գործունեությունը ընդհատվում է: Չնայած ապրիլի 2-ին Երևանում կրկին խորհրդային իշխանություն է հաստատվում, բայց համալսարանի պարապմունքներն անմիջապես վերսկսել հնարավոր չի լինում:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 54)

ապրիլ – Համալսարանում աշխատանքի են անցնում Աշոտ Հովհաննիսյանը (ՀԽՍՀ լուսավորության ժողկոմ) և Հայկ Ազատյանը (ՀԽՍՀ արհեստակցական միությունների բյուրոյի նախագահ):

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 94)

հոկտեմբեր – Երևանի ժողովրդական համալսարանի ռեկտոր է նշանակվում Դավիթ Ջավրյանը (Ջավրիկ): Կարճ ժամանակ անց նա գործուղման է մեկնում Մոսկվա ու Պետերբուրգ և այլևս չի վերադառնում Երևան: Դ. Ջավրյանի բացակայության ժամանակ նրան փոխարինել է ուսումնական գծով տեղակալ Պապա Բալանթարյանը, ով պաշտոնավարել է մինչև 1922 թ. փետրվարի 14-ը՝ մինչև Հակոբ Հովհաննիսյանի՝ ռեկտոր նշանակվելը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարանի ռեկտորները (1919-1999), կազմ.՝ Ղարիբջանյան Լ. Պ., Երևան, 1999, էջ 25-26)

հոկտեմբեր – Վերակազմված Ժողովրդական համալսարանում ուսու-

ցումը կազմակերպվեց ավելի լայն ընդգրկումով: Առաջին տարում ընդունելության դիմումների թիվը հասնում է 532-ի, որոնց կրթական ցենզը քննության չի ենթարկվում: Դիմորդներից միայն 254 հոգու է հաջողվում հաճախել համալսարան և դառնալ իսկական ուսանող: Նույն ճեմարանական տարվա առաջին կիսամյակում համալսարանն ուներ հինգ ֆակուլտետ՝ Արևելագիտական, Գյուղատնտեսական, Տեխնոլոգիական, Խորհրդային շինարարական, Մանկավարժական:

1921-1922 ակադեմիական տարում համալսարանում դասավանդվող առարկաների թիվը հասնում է 27-ի:

(Տե՛ս «Նոր ուսանող», որգան Հայաստանի Պետական համալսարանի ուսանողական խորհրդի, N 1, Յերևան, 1924, էջ 36- 37, տե՛ս մահ Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XXXIX)

1 հոկտեմբերի – Երևանի ժողովրդական համալսարանում աշխատանքի է անցնում Արշավիր Շավարշյանը: Նա դասավանդել է հոգեբանություն, մանկավարժություն, մաթեմատիկայի մեթոդիկա, մանկավարժության պատմություն, հայ մանկավարժության պատմություն: 1935 թ. սեպտեմբերի 1-ից տեղափոխվում է նոր հիմնված Մանկավարժական ինստիտուտ:

(Տե՛ս Գարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 207)

9 նոյեմբերի – ՀԽՍՀ Ժողովմխորիի որոշմամբ Երևանում հիմնադրվում է բժշկական դպրոց: Համալսարանը թույլ է տալիս իր բակում գտնվող նախկին ուսուցչական սեմինարիայի լվացքատան և ախոռի միհարկանի շենքը վերակառուցել և հատկացնել անատոմիայի, հիստալոգիայի և ֆիզիոլոգիայի պարապմունքների համար:

(Տե՛ս Գարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 63)

դեկտեմբեր – Երևանի ժողովրդական համալսարանում մանկավարժություն և հոգեբանություն դասավանդելու համար հրավիրվում է Գերմանիայում մանկավարժական գիտության մեջ հմտացած պրոֆեսոր Գ. Էդիլյանը: Գ. Էդիլյանի և Ա. Շավարշյանի ջանքերով էլ հիմնադրվում է մանկավարժության և հոգեբանության ամբիոնը:

(Տե՛ս Գիտությունը Հայաստանում 50 տարում, գլխ. խմբ.՝ Պետրոսյան Գ. Բ., Երևան, 1973, էջ 188)

1922

Երևանի ժողովրդական համալսարանում գործում էին 2 լաբորատորիա, 4 կարխնետ և 1 արհեստանոց:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

1921-1922 ակադեմիական տարում համալսարանի ուսանողների հաշվառումը՝ ըստ տարիքի, տոկոսային հարաբերակցությամբ ներկայացնում էր հետևյալ պատկերը. մինչև 20 տարեկան՝ 16.5 տոկոս, 20-25 տարեկան՝ 58 տոկոս, 25-ից բարձր՝ 25.5 տոկոս:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XXVIII)

1921-1922 ակադեմիական տարում համալսարանի 255 ուսանողներից 88-ը տարրական դպրոցավարտներ կամ միջնակարգ թերավարտներ էին, 167-ը՝ միջնակարգ կամ աշխատանքային 2-րդ աստիճանի դպրոցավարտներ:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XXIX)

1921-1922 ակադեմիական տարում համալսարանի 15 դասախոսներ և 2 գիտական աշխատակիցներ իրենց կրթությունը ստացել են Ռուսաստանում, 11 դասախոսներ՝ Գերմանիայում, 2 դասախոսներ՝ Ֆրանսիայում, 2 դասախոսներ՝ Շվեյցարիայում:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XXIII)

1921-1922 ակադեմիական տարում համալսարանում սովորող ուսանողների հաշվառումը՝ ըստ իրենց ծննդավայրերի, հետևյալ պատկերն էր ներկայացնում. Խորհրդային Հայաստանից՝ 165 ուսանող, Խորհրդային Վրաստանից՝ 5 ուսանող, Խորհրդային Ադրբեջանից՝ 5 ուսանող, Խորհրդային Աբխազիայից՝ 23 ուսանող, Տաճկաստանից՝ 2 ուսանող, Հունաստանից՝ 54¹⁰:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XXX)

1921-1922 ակադեմիական տարում համալսարանում սովորող բնիկ ուսանողների հաշվառումը՝ ըստ գավառների, հետևյալ պատկերն էր ներկայացնում. Երևանի գավառից՝ 103 ուսանող, Լենինականի գավառից՝ 9 ուսանող, Էջմիածնի գավառից՝ 43 ուսանող, Դիլիջանի գավառից՝ 2 ուսանող, Նոր Բայազետի գավառից՝ 6 ուսանող, Չանգեզուրի գավառից՝ 3 ուսանող¹¹:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XXXI)

Համալսարանում հիմնադրվեց ուսանողական գիտական առաջին խմբակը, որի ղեկավարն էր Աշխարիբեկ Լոռու Մելիք-Քալանթարյանը:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 39, ք. 71)

Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմավորվելուց հետո Անդրժողկոմխորիը համալսարանի համար սարքավորում ձեռք բերելու նպատակով հատկացնում է 25.000 ռուբլի:

(Տե՛ս Պետրոսյան Գ., Երևանի պետական համալսարանը, Երևան, 1941, էջ 5)

Համալսարանին կից կազմակերպվում է լիտոգրաֆիա, որտեղ ձեռնարկվում է ինչպես թարգմանական, այնպես էլ հայրենական դասագրքերի և ձեռնարկների հրատարակություն:

(Տե՛ս Պետրոսյան Գ., Երևանի պետական համալսարանը, Երևան, 1941, էջ 5)

Թիֆլիսից հրավիրվում է բուսաբան պրոֆեսոր Ալեքսանդր Գրոս-հայմը (հետագայում՝ ԽՍՀՄ ԳԱ իսկական անդամ), որը հավաքում և համակարգում է Երևանի գավառի բույսերի նմուշները:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XVIII)

Երևանի ժողովրդական համալսարան է հրավիրվում Գևորգ Գրծեկյանը՝ որպես Գյուղատնտեսական ֆակուլտետի ֆիտոպաթոլոգիայի դասախոս:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 184)

Լույս է տեսնում Հ. Ա. Նավակատիկյանի՝ համալսարանում կար-դացած (1921 թ.) դասախոսությունների առաջին խմբատիպ գրքույկը (56 էջ): Այս հրատարակության վրա կա «Երևանի ժողովրդական համալսարան, սերիա N 1» ուշագրավ նշումը, որը և իրավունք է տալիս այն համարելու համալսարանում տպագրված առաջին գիրքը: Նույն թվականին համալսարանը մայրենի լեզվով հրատարակում է Վ. Մ. Արծրունու «Մարդակազմություն» (դասախոսություններ) (Պրակ 1, Ոսկրաբանություն, 123 էջ; Պրակ 2, Հողաբանություն, 48 էջ), Ա. Ա. Գրոսհայմի «Բույսերի կարգաբանություն» (թարգմ. ռուս., 124 էջ), Ա. Ա. Հակոբյանի «Ֆիզիկա» (դասախոսություններ) (288 էջ), Հ. Հ. Մանանդյանի «Հայաստանի պատմությունը բուրբ-թաթարական արշավանքների շրջանում» (դասախոսություն) (111 էջ), Վ. Մրոչեկի «Ուղղագիծ եռանկյունաչափություն և անկյունաչափական ֆունկցիաների տեսության տարրերը», (ռուս. թարգմ.՝ Ա. Տոնյան, 247 էջ), Հ. Ա. Նավակատիկյանի «Դետերմինանտներ» (դասախոսություններ), (56 էջ), Ա. Հ. Տերտերյանի «Հայոց նոր գրականություն» (համառոտ դասընթաց), (Պրակ 1, 45 էջ) աշխատանքները:

(Տե՛ս Երևանի համալսարանի հրատարակչություն. Մատենագիտություն, կազմ.՝ Հ. Պետրոսյան, Երևան, 2002, էջ 4, 14)

Համալսարան է հրավիրվում Վահան Արծրունին, որը վարում է

համալսարանի (հետագայում՝ Բժշկական ինստիտուտի) անատոմիայի ամբիոնը: Նույն ժամանակ Բժշկական ֆակուլտետ է հրավիրվում Արշակ Հակոբյանը, որը ղեկավարում է մարդու ֆիզիոլոգիայի ամբիոնը:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 180, 194)

փետրվար – Համալսարանում առաջին անգամ 50 ուսանողի համար սահմանվում է պետական կրթաթոշակ:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-192), տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XXXIII, տե՛ս նաև Պետրոսյան Գ., Երևանի պետական համալսարանը, Երևան, 1941, էջ 6)

14 փետրվարի – Երևանի ժողովրդական համալսարանի ռեկտոր է նշանակվում մանրէաբան, կենսաքիմիկոս-կենսաֆիզիկոս Հակոբ Հովհաննիսյանը (պաշտոնավարել է մինչև 1930 թ. հուլիսի 9-ը):

(Տե՛ս Երևանի պետական համալսարանի ռեկտորները (1919-1999), կազմ.՝ Ղարիբջանյան Լ. Պ., Երևան, 1999, էջ 27)

15 մարտի – ՀԽՍՀ Ժողկոմխորիի որոշմամբ առողջապահության ժողկոմի նորաբաց դպրոցը միացվում է համալսարանին, և կազմավորվում է Բժշկական ֆակուլտետը, որի ղեկան է նշանակվում բժիշկ Սպանդարատ Կամսարականը: Այս ուսումնական կիսամյակից Երևանի ժողովրդական համալսարանն ունենում է հինգ ֆակուլտետ՝ Արևելագիտական, Գյուղատնտեսական, Տեխնոլոգիական (Տեխնիկական), Բժշկական, Խորհրդային շինարարական (Մանկավարժական ֆակուլտետը միացվում է Խորհրդային շինարարական ֆակուլտետին՝ որպես վերջինիս կից մանկավարժական կուրսեր, որը, սակայն, տարեվերջին փակվում է, քանի որ ուներ ընդամենը 15 ուսանող): Ուսանողների քիվը, ըստ ֆակուլտետների, հետևյալ պատկերն էր ներկայացնում. Արևելագիտական՝ 68 ուսանող (8 իգ., 60 ար.),

Գյուղատնտեսական՝ 49 ուսանող (7 իգ., 42 ար.), Տեխնոլոգիական՝ 39 ուսանող (4 իգ., 35 ար.), Բժշկական՝ 50 ուսանող (16 իգ., 34 ար.), Խորհրդային շինարարական՝ 38 ուսանող (3 իգ., 35 ար.): Ուսանողների ընդհանուր թիվը 254 էր: Դասախոսների (Բժշկական ֆակուլտետի ու մանկավարժական կուրսերի դասախոսները ներառյալ) թիվը հասնում էր 40-ի, որոնցից մեկը ռուս էր և դասախոսում էր ռուսերենով (բյուրեղաբանություն):

(Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ VIII, տե՛ս նաև «Նոր ուսանող», որգան Հայաստանի պետական համալսարանի ուսանողական խորհրդի, N 1, Յերևան, 1924, էջ 37, տե՛ս նաև Դարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 63)

4 հունիսի – Համալսարանի խորհուրդը որոշում է Բժշկական ֆակուլտետում կատարել լրացուցիչ ընդունելություն, որի շնորհիվ ուսանողների թիվը ավելանում է ևս 68-ով:

(Տե՛ս Դարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 64)

14 հունիսի – Համալսարանի վարչությունը, նկատի ունենալով ծանրաբեռնվածությունը, Լուսժողկոմատում հարց է բարձրացնում Մանկավարժական ֆակուլտետը համալսարանից անջատելու մասին:

(Տե՛ս Դարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 59)

սեպտեմբեր – Խորհրդային շինարարության ֆակուլտետը վերակազմավորվում է Հասարակագիտական ֆակուլտետի: Այսպիսով՝ 1922-23 ուստարում Երևանի ժողովրդական համալսարանը կազմված էր 5 ֆակուլտետից և ուներ 463 ուսանող, որոնք, ըստ ֆակուլտետների և բաժինների, բաշխված էին հետևյալ կերպ. Տեխնիկական ֆակուլտետում՝ 56 ուսանող, Պատմագրական ֆակուլտետում՝ 90, Գյուղատնտեսական ֆակուլտետում՝

80, Բժշկական ֆակուլտետում՝ 122, Հասարակագիտական ֆակուլտետում՝ 115:

(Տե՛ս Խորհրդային Հայաստան. 1920-1925, ՀՍԽՀ Կենտրոնական լեզվ ժողովոմխորհի հրատ., Յերևան, 1926, էջ 305, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 28, ք. 1)

1 սեպտեմբերի – Համալսարանի վարչությունը որոշում է Թավրիզից հրավիրել ճանաչված լեզվաբան Հրաչյա Աճառյանին՝ հայոց լեզվի ընդհանուր տեսության և ֆարսերենի դասընթացները վարելու, և Ալեքսանդր Թամանյանին՝ «Արևելքի գեղարվեստ» առարկան կարդալու համար:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 97)

24 սեպտեմբերի – Համալսարանում բացվում է բնապատմական թանգարանը:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XVIII)

նոյեմբեր – Ստեփան Ղամբարյանի նախաձեռնությամբ ու ջանքերով համալսարանում ստեղծվեց վերլուծական քիմիայի լաբորատորիա:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 132)

նոյեմբեր – Երևանի ժողովրդական համալսարանում Արշակ Հակոբյանը հիմնում է ֆիզիոլոգիայի աշխատանոցը:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XX, տե՛ս նաև Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 194)

նույնքեր – Համալսարանում սկսում է գործել հյուսվածքաբանական աշխատանոցը: Սկզբում այստեղ աշխատանքները ցուցադրական էին, սակայն արդեն 1924-1925 թթ. ուստարվանից, դասախոսություններին զուգահեռ, միկրոսկոպիկ աշխատանքներն ինքնուրույն պատրաստված պրեպարատներով էին կատարվում:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XX)

7 նույնքերի – Համալսարանի մանկավարժական ֆակուլտետի հիմքի վրա Երևանում ստեղծվում է Մանկավարժական ինստիտուտ՝ եռամյա դասընթացով: Այդ տարում ինստիտուտն ուներ 48 ուսանող: Այնտեղ դասավանդվում էին հասարակագիտություն, մանկավարժություն, կենսաբանության, ֆիզմաթեմատիկական առարկաներ:

(Տե՛ս Խորիքոյային Հայաստան. 1920-1925, Հ.Ս.Խ.Հ. Կենտգործկոմի յեվ ժողկոմխորիի հրատ., Յերևան, 1926, էջ 297-298)

8 նույնքերի – Հանդիսավոր պայմաններում համալսարանում բացվում են մի քանի ուսումնաօժանդակ հաստատություններ՝ գրադարանը (50.000 գիրք), վերլուծական քիմիայի և հյուսվածքաբանական լաբորատորիաները, բնապատմական և հնագիտական թանգարանը՝ երկրաբանական-հանքաբանական, բուսաբանական ու կենդանաբանական բաժիններով: Թանգարանը նպաստելու էր ուսանողների՝ բնագիտական առարկաների գործնական աշխատանքները կազմակերպելու և Հայաստանի բնական միջավայրի ուսումնասիրությունը գիտական հիմքերի վրա դնելու գործին:

Բացմանը ներկա էին ՀԽՍՀ Կենտգործկոմի նախագահ Ս. Համբարձումյանը, հողժողկոմ Ար. Երզնկյանը, առողջապահության ժողկոմ Ա. Լազարյանը:

(Տե՛ս «Խորիքոյային Հայաստան», 14 նույնքերի 1922, տե՛ս նաև Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XVIII-XIX)

8 նոյեմբերի – Համալսարանում ստեղծվեց որակական լաբորատորիա:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XIX)

9 նոյեմբերի – Տեղի ունեցավ Երևանի ժողովրդական համալսարանի ուսանողական խորհրդի բացումը, որի պարտականությունների մասին խոսեց ռեկտոր Հ. Հովհաննիսյանը, ապա կայացավ ուսանողական վարչության ընտրություն: Միաձայն անցան կոմունիստական ֆրակցիայի առաջադրած ներկայացուցիչներ Բացախյանը, Սիրունիկ Իշխանյանը, Հովսեփյանը, Մամբրեկը, քեկնաձուներ Ահարոնյանը և Գևորգյանը: Միաձայն որոշվում է ողջունի հեռագիր ուղարկել Հայկենտգործկոմի նախագահ Համբարձումյանին, Ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինին, լուսժողկոմ Ս. Աբովյանին, ռեկտոր Հ. Հովհաննիսյանին:

(Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 14 նոյեմբերի 1922)

22 նոյեմբերի – Համալսարանում սկսում է գործել ֆիզիկայի աշխատանոցը, որն ուներ մեխանիկայի, լույսի և էլեկտրականության բաժիններ: Այստեղ հիմնականում աշխատում էին Տեխնիկական ֆակուլտետի ուսանողները:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XX)

22 նոյեմբերի – Համալսարանում սկսում է գործել նկարագրական անատոմիայի աշխատանոցը: Այստեղ պարապմունքներն ամենօրյա էին:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XX)

դեկտեմբեր – Համալսարանի վարչությունն իր ներկայացուցչին ուղարկում է Թիֆլիս և Բաքու՝ ծանոթանալու տեղի համալսարանների բանվորական ֆակուլտետների կառուցվածքին: Այնուհետև այդ մասին զեկուցվում է համալսարանի վարչությունում, որից հետո Լուսժողկոմատի և արհմիությունների առջև հարց է բարձրացվում ստեղծելու Բանվորական ֆակուլտետ:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XI)

1923

ՀՍԽՀ պետական համալսարանում դասավանդում էր 65 դասա-
խոս, գործում էին 5 լաբորատորիա, 3 կաբինետ և 1 արհեստանոց:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

1922-1923 ակադեմիական տարում համալսարանի 463 ուսանող-
ներից 74-ը տարրական դպրոցավարտներ կամ միջնակարգ թերա-
վարտներ էին, 389-ը՝ միջնակարգ կամ աշխատանքային 2-րդ աստի-
ճանի դպրոցավարտներ:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926,
տե՛ս «Հ.Ս.Խ.Հ պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N2-3,
Յերևան, 1927, էջ XXIX)

1922-1923 ակադեմիական տարում համալսարանի 18 դասա-
խոսներ և 4 գիտական աշխատակիցներ իրենց կրթությունը ստացել
են Ռուսաստանում, 13 դասախոսներ՝ Գերմանիայում, 4 դասախոս-
ներ՝ Ֆրանսիայում, 2 դասախոսներ՝ Շվեյցարիայում, 1 դասախոս՝
Ամերիկայում:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926,
տե՛ս «Հ.Ս.Խ.Հ պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3,
Յերևան, 1927, էջ XXIII)

Համալսարանի մի խումբ ուսանողների նախաձեռնությամբ
ստեղծվում է գրական խմբակ, որի ղեկավարությունը ստանձնում է
դասախոս Ցոլակ Խանգաղյանը:

(Տե՛ս «Նոր ուսանող», որգան Հայաստանի պետական համալսարանի
ուսանողական խորհրդի, N 1, Յերևան, 1924, էջ 65)

Համալսարանի ակադեմիական մակարդակը բարձրացնելու հա-
մար մի քանի ֆակուլտետներում նոր ընդունվողներից, բացի ավար-

տական վկայականներից, պահանջվում են մաս լրացուցիչ քննություններ:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XI)

Համալսարանի գյուղֆակի ջանքերով բնապատմական քանդա-
րանը մասնակցում է Մոսկվայի գյուղատնտեսական ցուցահանդե-
սին: Այնտեղ ցուցանմուշներ ուղարկելու համար կազմակերպվում է մի
արշավախումբ, որը պետք է բնապատմական նյութեր հավաքեր: Այդ
արշավախմբին մասնակցում էին Բաքվից և Թիֆլիսից հրավիրված մի
շարք մասնագետներ: Թանգարանի վարիչ Շելկովնիկովի հետ նրանք
Սևանա լճի շրջակայքում հավաքում են բուսական և կենդանական
հարուստ հավաքածուներ, որոնք հետո դառնում են համալսարանի
սեփականությունը:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XVIII)

Գ. Արեշյանն ընտրվում է մանկաբարձության և գինեկոլոգիայի
առարկայական հանձնաժողովի նախագահ (ամբիոնի վարիչ)՝ մնա-
լով այդ պաշտոնում մինչև կենսաթոշակի անցնելը:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 178)

Համալսարանի դասախոսական կազմը, 1922 թ. համեմատու-
թյամբ, ավելանում է 28.2 տոկոսով: Դասախոսների մեծ մասը տի-
րապետում էր գերմաներենին, 32 տոկոսը՝ ֆրանսերենին, 7 տոկոսը՝
մաս անգլերենին: Նրանք մոտ 130 գիտական աշխատությունների
հեղինակ էին:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 99)

Տ. Մուշեղյանի նախաձեռնությամբ համալսարանում հիմնվում
է բուսաբանական առաջին կաբինետը: Այդ ժամանակ բուսաբանու-

թյան գծով դասավանդվել է երեք առարկա՝ նկարագրական բուսաբանություն (սիստեմատիկա, մորֆոլոգիա, բուսաբանական աշխարհագրություն), բույսերի կյանքը և բույսերի օգտագործումը գյուղատնտեսության մեջ: Այդ դասախոսությունները կարդում էր նշանավոր բուսաբան Ա. Գրոսհայնը, իսկ 1927 թ.՝ Ն. Տրոցկին:

(Տե՛ս Գիտությունը Հայաստանում 50 տարում, գլխ. խմբ.՝ Պետրոսյան Գ. Բ., Երևան. 1973, էջ 613)

Պատմագրական ֆակուլտետում աշխատանքի է անցնում Թավրիզից հրավիրված Հր. Աճառյանը:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 97)

Գյուղատնտեսական ֆակուլտետում աշխատանքի է անցնում Սարգիս Աբովյանը՝ նախ որպես դասախոս և ամբիոնի վարիչ, ապա դեկան: 1930 թ. համալսարանի վերակառուցումից հետո նա դարձել է Գյուղատնտեսական ինստիտուտի տնօրեն:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 174-175)

Հ. Բեդեյանի նախաձեռնությամբ համալսարանի բուսաբանության ամբիոնում սկսվում են բույսերի անատոմիային նվիրված գիտահետազոտական ուսումնասիրությունները, որոնք սակայն մասնավոր բնույթի ունեին, և հրապարակվել են միայն մի քանի աշխատանքներ՝ նվիրված քսերոֆիտ բույսերի տերևների հերձանցքների կառուցվածքային առանձնահատկություններին:

(Տե՛ս Գիտությունը Հայաստանում 50 տարում, գլխ. խմբ.՝ Պետրոսյան Գ. Բ., Երևան. 1973, էջ 624)

Համալսարանը որպես Բժշկական ֆակուլտետի ներքին հիվանդությունների ամբիոնի վարիչ է հրավիրում Լևոն Հովհաննիսյանին:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 197)

1 հունվարի – Երևանի ժողովրդական համալսարան են հրավիրվում Լևոն Ռոտինյանցը՝ որպես անօրգանական և անալիտիկ քիմիայի դասախոս, և Խորեն Երիցյանը՝ որպես անասնապահության ամբիոնի վարիչ:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 187, 210)

23 հունվարի – Երևանի ժողովրդական համալսարանին կից ստեղծվում է Բանվորական ֆակուլտետը, որն առաջին տարում ուներ 256 ուսանող: Այստեղ առաջին դասախոսներից էին Հայրապետ Հովհաննիսյանը, Բահաթուր Բահաթրյանը: Վերջինս այնուհետև դասավանդում է Տեխնիկական ֆակուլտետում, իսկ հետագայում Մանկավարժական ֆակուլտետի ֆիզիկամաթեմատիկական բաժնում կարդում է «Բարձրագույն հանրահաշիվ», «Թվերի տեսություն և մաթեմատիկական անալիզ» առարկաները:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XI, տե՛ս նաև Մեր անվանի դասախոսները, մաս I, խմբ.՝ Ներսիսյան Մ., Թադևոսյան Թ., Պիվազյան Էմ., Երևան, 1970, էջ 46, 144)

29 հունվարի – Պետական թատրոնի շենքում հանդիսավորությամբ տեղի է ունենում համալսարանին կից Բանվորական ֆակուլտետի բացման արարողությունը:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 74)

29 մարտի – Համալսարանի վարչության կողմից Թադևոս Ավդալբեկյանին տրվում է վկայական առ այն, որ նա Ժողովրդական համալսարանի դասախոս է:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 16, գ. 14, ք. 1)

23 հոկտեմբերի – ՀԽՍՀ Ժողկոմխորիի որոշմամբ Երևանի ժողովրդական համալսարանը վերանվանվեց «ՀՍԽՀ Պետական

համալսարան»:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ X)

25 հոկտեմբերի – Համալսարանի վարչությունը քննության է առնում գիտական հանդեսի հարցը և որոշում լույս ընծայել «ՀԽՍՀ պետական համալսարանի գիտական տեղեկագիր»։ Հաստատվում է խմբագրական խորհուրդ հետևյալ կազմով՝ Հակոբ Հովհաննիսյան, Մանուկ Աբեղյան և Պապա Քալանթարյան:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մաղոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 201, տե՛ս նաև Դարիքջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 161-162)

1924

ՀՄԽՀ պետական համալսարանում գործում էին 8 լաբորատորիա, 3 կաբինետ և 1 արհեստանոց:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ.20, ց.9, գ.46, ք.3)

1923-1924 ակադեմիական տարում համալսարանի 938 ուսանողներից 60-ը տարրական դպրոցավարտներ կամ միջնակարգ թերավարտներ էին, 878-ը՝ միջնակարգ կամ աշխատանքային 2-րդ աստիճանի դպրոցավարտներ:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N2-3, Յերևան, 1927, էջ XXIX)

1923-1924 ակադեմիական տարում համալսարանի 35 դասախոսներ և 7 գիտական աշխատակիցներ իրենց կրթությունը ստացել են Ռուսաստանում, 16 դասախոսներ՝ Գերմանիայում, 5 դասախոսներ՝ Ֆրանսիայում, 3 դասախոսներ՝ Շվեյցարիայում, 1 դասախոս՝ Բելգիայում, 1 դասախոս՝ Տաճկաստանում, 1 դասախոս՝ Ամերիկայում:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XXIII)

1923-24 ուստարում համալսարանում սովորում էր 938 ուսանող: Ըստ ֆակուլտետների և բաժինների՝ նրանք բախշված էին հետևյալ կերպ. Տեխնիկական ֆակուլտետում՝ 100 ուսանող, Պատմագրական ֆակուլտետում՝ 189, Գյուղատնտեսական ֆակուլտետում՝ 252, Բժշկական ֆակուլտետում՝ 177, Հասարակագիտական ֆակուլտետում՝ 220: Համալսարանն ուներ նաև 84 ազատ ունկնդիր:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 28, ք. 1)

ՀՍԽՀ պետական համալսարանում առաջին անգամ կատարվում է ակադեմիական գտում, որից հետո շարունակում են սովորել միայն ուսման մեջ առաջադիմող ուսանողները:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XI)

Համալսարանի գրադարանի գրքերը ցուցակագրվում են տասնորդական կարգով:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», դ 2-3, Յերևան, 1927, էջ XV)

Համբարձում Քեչեկը (համալսարան է հրավիրվել 1923 թ.) ընտրվում է Բժշկական ֆակուլտետի դեկան:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 217-218)

ՀՍԽՀ պետական համալսարանում սկսվում են գեներտիկային առնչվող բուսաբանական հետազոտություններ: Այդ ուսումնասիրությունների ընդհանուր ղեկավարությունը ստանձնում է աշխարհահռչակ գիտնական Ն. Ի. Վավիլովը (Մոսկվա), իսկ Հայաստանում այդ հետազոտությունները ղեկավարում էր համալսարանի պրոֆ. Մ. Գ. Թումանյանը:

(Տե՛ս Գիտությունը Հայաստանում 50 տարում, գլխ. խմբ.՝ Պետրոսյան Գ. Բ., Երևան. 1973, էջ 704)

Շարտարապետ Ալ. Թամանյանը պատրաստում է ՀՍԽՀ պետական համալսարանի շենքի ընդհանուր նախագիծը, որը մտնում է Երևանի գլխավոր հատակագծի մեջ և հաստատվում Ժողկոմխորհի կողմից: Այն նախատեսված էր 2000 ուսանողի համար: Ընդգրկում էր Աբովյան (Աստաֆյան) փողոցում գտնվող հիմնական շենքի շրջակա մոտ 25 հա տարածքը՝ Աբովյան, Տերյան և Մունդուկյան (այժմ՝ Մաշտոցի պողոտա) փողոցների՝ Շրջանային (հետագայում՝ Կի-

րովի, այժմ՝ Կորյունի) փողոցից հյուսիս ընկած ամբողջ հատվածը: Սակայն 1929 թ. այդ նախագիծը փոխվեց, և սկսվեց համալսարանի աստղադիտարանի կառուցումը:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XLII-XLV, տե՛ս նաև Դարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994., էջ 137-138)

Համալսարանում աշխատանքի է հրավիրվում ականավոր պատմաբան և հրապարակախոս Լեոն (Առաքել Բաբախանյան), որն իր գործունեությունը նվիրեց հայոց պատմության ուսումնասիրությանը:

(Տե՛ս Դարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 99)

Նիկողայոս Բունիաթյանը հրավիրվում է համալսարանի տեխնիկական ֆակուլտետ՝ որպես ճարտարապետության նախագծման ու պատմության դասախոս, ապա՝ նաև ղեկան: Նույն ժամանակամիջոցում Հայկանդուխտ Չախմախչյանը հրավեր է ստանում պաշտոնավարելու Բժշկական ֆակուլտետում՝ որպես հյուսվածքաբանության և սաղմնաբանության ամբիոնի վարիչ (մինչև 1930 թ.):

(Տե՛ս Դարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 182, 208)

Համալսարանի վարչության միջնորդությամբ ՀԽՍՀ Ժողկոմխորհը հատկացնում է 2000 ռուբլի՝ կազմակերպելու գիտական արշավախումբ դեպի Արագած: Համալսարանի բնապատմական քանդարանի աշխատակիցներից բացի՝ ընդգրկվում են նաև այլ մասնագետներ: Այս արշավախումբը աշխատում է նաև Սևանա լիճի շրջակայքում՝ հավաքելով թռչունների տարբեր նմուշներ:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XVIII)

23 փետրվարի – ՀԽՍՀ Ժողովրդական կոմիսարների խորհուրդը հաստատում է ՀԽՍՀ պետական համալսարանի նոր կանոնադրությունը, որով բարձրագույն մարմինը համարվում է համալսարանի խորհուրդը:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր» N 2-3, Յերևան, 1927, էջ X, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 268, քք. 20-22)

մարտ – Համալսարանում լույս է տեսնում Ռուսանդական խորհրդի օրգան «Նոր ուսանող» ամսագրի 80 էջանոց առաջին ու միակ համարը:

(Տե՛ս «Նոր ուսանող», որգան Հայաստանի պետական համալսարանի ուսանողական խորհրդի, N 1, Յերևան, 1924, 80 էջ)

ապրիլ – Համալսարանում Էյնշտեյնի տեսության մասին հրապարակային դասախոսություն է կարդում 15-ամյա Վիկտոր Համբարձումյանը:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 քք., Երևան, 1994, էջ 102)

17 մայիսի – Համալսարանի կուսակցական բջիջի ընդհանուր ժողովը վարչության առաջ հարց է բարձրացնում լենինիզմի ամբիոն ստեղծելու մասին: Դրա հիման վրա մայիսի 29-ին որոշում է ընդունվում լենինիզմ, պատմական մատերիալիզմ և ՌԿ(բ)Կ պատմություն դասավանդելու վերաբերյալ:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 քք., Երևան, 1994, էջ 124)

7 օգոստոսի – Համալսարան է այցելում ԽՍՀՄ լուսավորության ժողովրդական կոմիսար Անատոլի Վասիլևիչ Լունաչարսկին:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 34, ք. 12)

24 սեպտեմբերի – Համալսարանում սկսում է գործել ավտաբանական (պաթոլոգիական) անատոմիայի աշխատանոցը, որն ուներ իր թանգարանը: Մինչև 1927 թ. սկիզբը այստեղ պատրաստվել են 96 միկրոսկոպիկ պրեպարատներ:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XX)

հոկտեմբեր – Մանկավարժական ինստիտուտը կրկին միացվում է համալսարանին՝ դառնալով Հասարակական ֆակուլտետի մի բաժինը՝ ֆիզիկա-մաթեմատիկական, պատմագրական և կենսաբանական ենթաբաժիններով:

(Տե՛ս Խորհրդային Հայաստան. 1920-1925, ՀՍԽՀ Կենտգործկոմի յեվ Ժողկոմխորհի հրատ., Յերևան, 1926, էջ 298, տե՛ս նաև Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 59)

դեկտեմբեր – Որոշվում է համալսարանի գիտական հանդեսի խմբագրական կոլեգիայի մեջ ընդգրկել Ալեքսանդր Հակոբյանին, Զարմայր Աշրաֆյանին, Համբարձում Քեչեկին, Ստեփան Ղամբարյանին, և հանձնարարվում է ուսումնական գծով պրոֆեսոր Հայկ Գյուլիքևիսյանին ղեկավարել ու արագացնել «Տեղեկագրի» հրատարակության գործը:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 162)

30 դեկտեմբերի – ՀՍԽՀ Ժողկոմխորհին հասցեագրած իր նամակում Հայ բարեգործական ընդհանուր միության նախագահ Պողոս Նուբարը հայտնում է. «....ես որոշել եմ մեր Բարեգործական Միությանը նվիրաբերել 12500 ոսկի ռուբլի, հանձնարարելով դրա տարեկան եկամուտը հատկացնել Երևանի համալսարանին բացարձակապես որպես թոշակ [հատկացնելու] առավել արժանի ուսանողներին՝ ուսման առաջադիմությունը խրախուսելու նպատակով»: Պողոս Նուբարը հայտնում էր նաև, որ

ամեն տարի իր մրցանակակիրներից մեկը պետք է մեկ տարով ուղարկվի Եվրոպա՝ կատարելագործելու իր գիտելիքները որևէ համալսարանում: Նամակին կցված էր «Պօղոս Նուպարի համալսարանական մրցանակների կանոնադրությունը», որտեղ հատուկ բժախնդրությամբ պարզաբանվում էին հատկապես Եվրոպա մեկնելու հետ կապված ֆինանսական հարցերը: Պօղոս Նուբարի այս հիմնադրամի առաջին եկամուտը՝ 120 անգլ. ոսկի, տրվեց 1926 թ.:

(Տե՛ս Մելքոնյան Էդ. Լ., Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը
Խորհրդային Հայաստանում 1923-1937 թթ., Երևան, 1999, էջ 52,
տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 1745, թ. 15 և հակ. կողմ - 16 և հակ. կողմ
(ռուսերեն կրկնօրինակ))

1925

1924-1925 ակադեմիական տարում համալսարանի 41 դասախոսներ և 11 գիտական աշխատակիցներ իրենց կրթությունը ստացել են Ռուսաստանում, 17 դասախոսներ և 1 գիտական աշխատակից՝ Գերմանիայում, 6 դասախոսներ՝ Ֆրանսիայում, 3 դասախոսներ՝ Շվեյցարիայում, 1 դասախոս՝ Բելգիայում, 2 դասախոսներ՝ Տաճկաստանում, 3 դասախոսներ՝ Ամերիկայում:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XXIII)

1924-1925 ուստարում Երևանի պետական համալսարանում սովորում էր 895 ուսանող: Նրանք բաշխված էին հետևյալ համամասնությամբ. Տեխնիկական ֆակուլտետում՝ 115, Գյուղատնտեսական ֆակուլտետում՝ 248, Բժշկական ֆակուլտետում՝ 170, Հասարակագիտական ֆակուլտետի իրավատնտեսագիտական բաժնում՝ 184, պատմագրական բաժնում՝ 110, մանակավարժական բաժնի պատմագրական ենթաբաժնում՝ 31, կենսաբանական ենթաբաժնում՝ 33, ֆիզիկա-մաթեմատիկական ենթաբաժնում՝ 4:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 28, ք. 1)

1924-1925 ակադեմիական տարում համալսարանի 895 ուսանողներից 32-ը տարրական դպրոցավարտներ կամ միջնակարգ թերավարտներ էին , 863-ը՝ միջնակարգ կամ աշխատանքային 2-րդ աստիճանի դպրոցավարտներ:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XXIX)

ՀՍԽՀ պետական համալսարանում դասավանդում էր 115 դասախոս, գործում էին 10 լաբորատորիա, 4 կաբինետ և 1 արհեստանոց:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

Ակադեմիկոս Ալ. Թամանյանի նախագծով սկսվում է Բժշկական ֆակուլտետի ուսումնաօժանդակ մասնաշենքի՝ անատոմիկումի կառուցումը:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 133)

Կրասնոդարից համալսարան է հրավիրվում պրոֆ. Նովապակ-րովսկին, որն ուսումնասիրում է Դարալագյազի բուսականությունը:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XVIII)

Բաքվի մի խումբ քաղաքացիներ համալսարանի գիտական աշխատակից Մեսրոբյանի նախաձեռնությամբ ուղարկում են արդյունաբերական ոլորտի բավականին մեծ հավաքածուներ, որոնք հիմք են դառնում համալսարանին կից արդյունաբերական քանգարանի հիմնադրման համար: Այստեղ ցուցադրվում էին նաև Բաքվի և Ապշերոնյան թերակղզու արդյունաբերական մմուշները: Այս քանգարանում գործում էր նաև Խորհրդային Հայաստանի արդյունաբերության բաժինը: Թանգարանը ծառայում էր նաև որպես ուսումնաօժանդակ կառույց համալսարանի տնտեսական աշխարհագրության և տեխնիկական առարկաների ամբիոնների համար: Այն բաց էր նաև տարբեր այցելուների առջև:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական Համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XIX)

Համալսարանի վարչությունը Հ. Անժուրին գործուղում է արտասահման (Փարիզ)՝ ֆիզիկայի լաբորատորիայի համար անհրաժեշտ սարքավորումներ ձեռք բերելու: Նա այդ հանձնարարությունը կա-

տարում է բացառիկ բարեխղճությամբ:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը.
1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 132)

Համալսարանում աշխատանքի է անցնում Բոգդան Գալստյանը՝ որպես հողագիտության դասախոս և ամբիոնի վարիչ: Նույն ժամանակամիջոցում Բժշկական ֆակուլտետում աշխատանքի է անցնում և համալսարանում առաջին անգամ ակնաբուժություն դասախոսում Հայկ Կանայանը:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը.
1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 183,193)

Մի շարք վերակազմակերպումներից հետո համալսարանում ստեղծվեցին հետևյալ ֆակուլտետները՝ Տեխնիկական (տեխնոլոգիական), Գյուղատնտեսական, Բժշկական, Սոցիալ-տնտեսագիտական-իրավաբանական և Մանկավարժական: Վերջինս ուներ հետևյալ երեք բաժինները՝ պատմագրական, ֆիզիկա-մաթեմատիկական, բիոլոգիական:

(Տե՛ս Պետրոսյան Գ., Երևանի պետական համալսարանը,
Երևան, 1941, էջ 8)

Համալսարանում աշխատանքի են անցնում պատմաբան Վահան Ռշտունին և իրավաբան Հրանտ Գալիկյանը, իսկ նկարիչ Հակոբ Կոչոյանն ու քանդակագործ Արա Սարգսյանը դառնում են Տեխնիկական ֆակուլտետի դասախոսներ:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը.
1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 100)

Համալսարանի գրադարանը սկսում է կանոնավոր կերպով ստանալ 67 օրինակ մասնագիտական պարբերականներ, որոնցից հայերեն՝ 2, ռուսերեն՝ 13, եվրոպական լեզուներով՝ 52 օրինակ: Դրանցից 19-ը բժշկագիտական էին, որոնք ստացվում էին Ռոքֆելլերի ֆոնդից:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XVI)

Համալսարանում լույս է տեսնում «ՀՄԽՀ պետական համալսարանի գիտական տեղեկագրի» առաջին համարը: Այստեղ տպագրված են Հ. Մանանդյանի («Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին մարգալանության շրջանում»), Ա. Խաչատրյանի («Հույն պատմիչների տեղեկությունները հին Հայաստանի ոսկեհանքերի և դրանց տեղի մասին /տեղագրական ուսումնասիրություն/»), Հ. Քեչեկի («Արմունկի անուղղելի հողախախտման մասին»), Բժիշկ Գր. Արեշյանի (Հայ կնոջ կոնքը և ծննդի տևողությունը), Հ. Աճառյանի («Գոյարների և Թումարիների կրոնը»), Բժիշկ Ա. Հակոբյանի («Հիստերիկ մուտիզմի և պարալիզների յերկու դեպքեր»), Պ. Քալանթարյանի («Բամբակենու երկու նոր բակտերիոզներ Հայաստանում»), Բժիշկ Լ. Հովհաննիսյանի («Գրիգոր Մագիստրոսը որպես XI դարու հայ բժշկության ներկայացուցիչ»), Ա. Թումանյանի («Շաքարի ճակնդեղի մշակության հեռանկարները Հայաստանում»), Լ. Ռոտինյանի («Կախումներ բինար միացությունների կրիտիկական բարեխառնության և միացությունը կազմող էլեմենտների կրիտիկական բարեխառնության միջև»), Բժիշկ Քալանթարյանի («Հայաստանի ազգաբնակչության հելմինտոֆաունայի ուսումնասիրությունը»), Հ. Աճառյանի («Բուզանդի սիւս բառը»), Ստ. Ղամբարյանի («Բենզոլիլ-պերոքսիդ և սեկունդներ ամինները»), Ս. Թամաշյանի («*Lathyrus Aphaca* L. ցեղերի մասին») հոդվածները:

(Տե՛ս «ՀՄԽՀ պետական համալսարանի գիտական տեղեկագիր»,
N 1, Յերևան, 1925, 182 էջ)

Համալսարանում ստեղծվում է դեղագործության լաբորատորիա (հիմնադրել է Գրիգոր Մեղնիկյանը):

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը.
1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 133)

հունվար – Ռ-Գ(բ)Կ Կենտկոմը, քննարկելով բուհերում կուսակցական աշխատանքի դրվածքը, բարձրագույն դպրոցների կուսակցական կազմակերպություններից պահանջում է վճռականապես բարելավել ուսանողության քաղաքական դաստիարակություն-

նը և ավելի ուժեղացնել կապը անկուսակցական ուսանողների հետ:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 126)

հունիս – ՀՍԽՀ պետական համալսարանը տալիս է 58 շրջանավարտ՝ 29 բանասեր, 29 գյուղատնտես*:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ ֆ. 2, գ. 6, ք. 28)

19 հունիսի – ՀՍԽՀ պետական համալսարան է այցելում նորվեգացի բևեռախույզ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենը, որը հետագայում իր հուշերում գրում է. «Նույն օրը ճաշից առաջ այցելեցինք նաև համալսարան: Այն մի գեղեցիկ շենք էր կենտրոնական փողոցի վերջում՝ հրաշալի այգով շրջապատված: Հանդիպում ունեցանք ռեկտորի և պրոֆեսորների հետ, որ մեզ ուղեկցեցին տարբեր ինստիտուտներ: Համալսարանը նոր էր հիմնադրվել և նոր պետք է զարգանար, բայց նյութական քիչ միջոցներ ուներ: Սակայն զարմանալի էր, որ հակառակ մեծ դժվարություններին՝ շատ բան էր արված: Ինձ համար մեծ անակնկալ էր, որ պրոֆեսորներից մեկը նորվեգերեն գիտեր, նա լավ ծանոթ էր նաև Նորվեգիային: Նա բուսաբան, դոկտոր, պրոֆեսոր Հ. Բեդելյանն էր, որ բուսաբանությունը ուսումնասիրել էր Կոպենհագենում և բազմիցս ճանապարհորդելով Նորվեգիայով՝ երկու անգամ հասել էր Հյուսիսային հրվանդան: Չափազանց համակրելի մի անձնավորություն էր նա:

Շենքը դիտելուց հետո շրջեցինք պարտեզում, ուր գյուղատնտեսական տարբեր փորձեր էին դրված: Համալսարանին կից էր նաև գյուղատնտեսական մի բարձրագույն դպրոց: Այստեղ կառուցվում էր նոր շենք լաբորատորիաների համար: Սովերախիտ ծառերի տակ սեղան էր գցված հրաշալի ծիրանով ու կեռասով, նաև գինի կար այնտեղ, որն ամռան այս շոգին առանձնապես հաճելի էր: Պրոֆեսորներից շատերը գերմանե-

* Երևանի պետական համալսարանի 1925-1945 թթ. շրջանավարտների թվաքանակի մասին տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3, նույն տեղում՝ ց. 15, գ. 28, ք. 1, գ. 70, ք. 1:

րեն ու անգլերեն լեզուներով ճառեր արտասանեցին, իսկ ռեկտորը ողջույնի խոսք ասելով, հրապարակեց ինձ համալսարանի պատվավոր դոկտորի աստիճան շնորհելու որոշումը»:

(Ֆրիտյոֆ Նանսեն, Խաբված ժողովուրդ, Ազգերի
Ընկերակցության գլխավոր հանձնակատարի հետազոտական
ճանապարհորդությունը Վրաստան և Հայաստան,
Երևան, 2000, էջ 127)

1 սեպտեմբերի – 1925-1926 ակադեմիական տարում ՀԽՍՀ պետական համալսարան ընդունվելու համար դիմած 668 դիմորդներից ընդունվում են 486-ը:

(Տե՛ս «Խորհրդային Հայաստան. 1920-1925, ՀՍԽՀ Կենտգործկոմի լեվ
Ժողկոմխորհի հրատ., Յերևան, 1926, էջ 306)

հոկտեմբեր – Որպես հայոց պատմության դասախոս հրավիրվում է Հակոբ Զորյանը: Համալսարանում աշխատելու տարիներին նա եղել է ամբիոնի վարիչ և Պատմության ֆակուլտետի ղեկավար:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը.
1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 188)

հոկտեմբեր – Համալսարանում հիմնադրվում են ֆարմակալոգիական և ֆարմացևտական լաբորատորիաները:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը.
1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի
գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XX)

25 հոկտեմբերի – Համալսարանում սկսում է գործել ֆիզիոլոգիական քիմիայի աշխատանոցը, որտեղ աշխատում էին Բուժֆակի երկրորդ և երրորդ կուրսի ուսանողները:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը.
1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական
տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XX)

նույնքեր – Համալսարանում ստեղծվում է քանակական բաժանմունքը:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XIX)

12 դեկտեմբերի – Համալսարանի վարչության որոշմամբ 10 դասախոսների՝ Հակոբ Մանանդյանին, Ստեփան Ղամբարյանին, Հրաչյա Աճառյանին, Մանուկ Աբեղյանին, Համբարձում Բեչեկին, Հակոբ Հովհաննիսյանին, Վահան Արծրունուն, Լևոն Ռոտինյանցին, Հովակիմ Բեդեկյանին և Բոգդան Գալստյանին ՀԽՍՀ լուսժողկոմատը պրոֆեսորի կոչում է շնորհում՝ նկատի ունենալով նրանց գիտական ու մանկավարժական մեծ վաստակը:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 103)

1926

ՀՍԽՀ պետական համալսարանում սովորում էր 1161 ուսանող, դասավանդում էր 104 դասախոս, գործում էին 11 լաբորատորիա, 6 կաբինետ և 1 արհեստանոց:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

1925-26 ակադեմիական տարվա վիճակագրությունից պարզվում է, որ ՀՍԽՀ պետական համալսարանի ուսանողներից ռուսերենին տիրապետում էին 902 հոգի, վրացերենին՝ 81, թուրքերենին՝ 65, ֆրանսերենին՝ 29, գերմաներենին՝ 21, անգլերենին՝ 14, թուրքմեներենին՝ 17, քրդերենին՝ 2, լատվերենին՝ 1, էսպերանտոյին՝ 1: Վիճակագրական այս տվյալները վկայում են, թե ինչ գրականությունից կարող էին օգտվել համալսարանի ուսանողները:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XXXI-XXXII)

1925-1926 ակադեմիական տարում ըստ տարիքի համալսարանի ուսանողների հաշվառումը տոկոսային հարաբերակցությամբ հետևյալ պատկերն էր ներկայացնում. մինչև 20 տարեկան՝ 34.4 տոկոս, 20-25 տարեկան՝ 39.1 տոկոս, 25-ից բարձր՝ 26.5 տոկոս:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N2-3, Յերևան, 1927, էջ XXVIII)

1925-1926 ակադեմիական տարում համալսարանի 1161 ուսանողներից 29-ը տարրական դպրոցավարտներ կամ միջնակարգ թերա-

վարտներ էին, 1132-ը՝ միջնակարգ կամ աշխատանքային 2-րդ աստիճանի դպրոցավարտներ:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N2-3, Յերևան, 1927, էջ XXIX)

1925-1926 ակադեմիական տարում համալսարանում դասավանդվող առարկաների թիվը հասնում է 216-ի, որոնք խմբավորված էին 30 առարկայական հանձնաժողովներում:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XXXIX)

1925-1926 ակադեմիական տարում համալսարանի 59 դասախոսներ և 12 գիտական աշխատակիցներ իրենց կրթությունը ստացել են Ռուսաստանում, 19 դասախոսներ և 1 գիտական աշխատակից՝ Գերմանիայում, 5 դասախոսներ՝ Ֆրանսիայում, 3 դասախոսներ՝ Շվեյցարիայում, 2 դասախոսներ՝ Բելգիայում, 2 դասախոսներ՝ Տաճկաստանում, 1 դասախոս՝ Ամերիկայում:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XXIII)

1925-1926 ակադեմիական տարում համալսարանում սովորող ուսանողների հաշվառումը՝ ըստ իրենց բնակավայրերի, հետևյալ պատկերն էր ներկայացնում՝ Խորհրդային Հայաստանից՝ 799 ուսանող, Խորհրդային Վրաստանից՝ 218 ուսանող, Խորհրդային Ադրբեջանից՝ 51 ուսանող, Խորհրդային Աբխազիայից՝ 65 ուսանող, Խորհրդային Թուրքեստանից՝ 5 ուսանող, Պարսկաստանից՝ 3 ուսանող, Տաճկաստանից՝ 8 ուսանող, Հունաստանից՝ 5 ուսանող, Բուխարայից՝ 1 ուսա-

նող, 6 ուսանողների բնակավայրերը նշված չեն¹²:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XXX)

1925-1926 ակադեմիական տարում ՀՍԽՀ պետական համալսարանում սովորում էին տարբեր ազգությունների 1161 ուսանողներ, որոնցից 1156-ը հայեր էին, 3-ը՝ ռուս, 2-ը՝ այլազգի, որոնք բաշխված էին ըստ ֆակուլտետների հետևյալ կերպ. Տեխնիկական ֆակուլտետում՝ 162 ուսանող, Գյուղատնտեսական ֆակուլտետում՝ 290, Բժշկական ֆակուլտետում՝ 201, Սոցիալ-տնտեսագիտական ֆակուլտետում՝ 267 ուսանող, Մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժնում՝ 149, կենսաբանական բաժնում՝ 55 և ֆիզիկամաթեմատիկական բաժնում՝ 37: Համալսարանում տեխնիկական աշխատողների թիվը 24 էր, գրասենյակային և վարչական աշխատողներինը՝ 28: Համալսարանում դասավանդում էին 94 դասախոս և 10 պրոֆեսոր:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 28, ք. 1, տե՛ս նաև Խորիդրային Հայաստան 1920-1925, ՀՍԽՀ Կենտգործկոմի յեվ Ժողկոմխորիի հրատ., Յերևան, 1926, էջ 306-307)

ՀՍԽՀ պետական համալսարան է հրավիրվում Հովհան Գաբրիելյանը, որը հիմնադրում է մանկական հիվանդությունների ամբիոնը և դասավանդում է «Մանկաբուժություն» առարկան: Նույն ժամանակամիջոցում համալսարան է ընդունվում նաև Արամ Եսայանը, որն ավելի քան քսան տարի վարում է համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչի պաշտոնը և կարդում է տնտեսական իրավունքի, քաղաքացիական իրավունքի, հողային իրավունքի, կոլտնտեսային իրավունքի, ամուսնա-ընտանեկան իրավունքի դասընթացներ:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 183,186)

Համալսարանը իր գրադարանի համար գրքեր է ձեռք բերել նաև սեփական բյուջեի միջոցներով: Գրքերի թիվը այդ տարիներին հասնում է 52.000-ի՝ չհաշված Լազարյան ճեմարանից ստացված 163

արկղ գրականությունը, որոնց ցուցակագրումը դեռ ավարտված չէր: (Համալսարանը ստացել էր նաև պրոֆեսորներ Կոստանյանի և Ներսիսյանի, Հակոբյանի, բանաստեղծներ Վ. Տերյանի, Ալ. Ծատուրյանի, բժիշկներ Արամյանի, Աբաբեկյանի, Հակոբյանի, հասարակական գործիչներ Սինաս Բերբերյանի, Զոհրապի, Եվանգուլյանի գրադարանները: Գրքեր էին նվիրել նաև Փարիզի Բարեգործական ընկերությունը, Ամերկոմը, իրավաբաններ Գ. Չուբարը և Տիգրանյանը):

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XV- XVI)

Համալսարանի դասախոսներից և ուսանողներից կազմված արշավախումբ է մեկնում Դիլիջանի շրջան՝ երկրաբանական նմուշների հավաքման և ուսումնասիրության համար: Արշավախմբի հայթայթած նյութերը տրամադրվում է համալսարանի բնապատմական թանգարանին: Վերջինս ստանում է նաև Մոսկվայի նախկին Լազարյան ճեմարանի հանքաբանական և Հողժողկոմի նվիրած Վասիլիևի թիթեռների հարուստ հավաքածուները: Սրանք Մալյուժենկոյի հավաքածուների հետ կազմում են թանգարանի ամենաարժեքավոր ցուցանմուշները:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XVIII-XIX)

Կոպենհագենում գտնվելու ժամանակ համալսարանի լաբորատորիաների համար սարքավորումներ է ձեռք բերել և ուղարկել անվանի ֆիզիոլոգ, Լենինգրադի բժշկական ինստիտուտի պրոֆեսոր Լևոն Օրբելին:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 133)

27 մարտի – Նորվեգացի հայտնի բևեռախույզ, հայ ժողովրդի մենբարեկամ Ֆրիտյոֆ Նանսենը համալսարանի խորհրդի պատվո անդամի դիպլոմ ստանալու կապակցությամբ շնորհակա-

լական նամակ է ուղարկում ՀՍԽՀ պետական համալսարանի (խորհրդի նախագահ) ռեկտոր Հակոբ Հովհաննիսյանին:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 1, գ. 59, ք. 88)

հունիս – ՀՍԽՀ պետական համալսարանը տալիս է 150 շրջանավարտ՝ 95 տնտեսագետ, 13 իրավաբան, 12 բանասեր, 30 գյուղատնտես:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

23 նոյեմբերի – Համալսարանում հիմք դրվեց ապակետիպ տպագրությանը:

(Տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XVII)

դեկտեմբեր – Համալսարանի կուսակցական ժողովը, լսելով Երևանի կուսբաղկոմի քարտուղար Արամ Շահգեղյանի՝ ՀամԿ(բ)Կ 15-րդ կոնֆերանսի արդյունքների մասին զեկուցումը, կրկին հավանություն է տալիս կոնֆերանսի որոշումներին և խիստ դատապարտում «օպոզիցիոն բլոկի» ֆրակցիոն գործունեությունը: Այսպես համալսարանը արձագանքում էր կուսակցության և կառավարության բոլոր միջոցառումներին՝ պաշտպանելով նրա քաղաքական գլխավոր գիծը:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 127)

1927

1926-1927 ուստարում ՀՍԽՀ պետական համալսարանում սովորում էր 1287 ուսանող: Ըստ ֆակուլտետների և բաժինների՝ նրանք բախշված էին հետևյալ կերպ. Տեխնիկական ֆակուլտետում՝ 224 ուսանող, Գյուղատնտեսական ֆակուլտետում՝ 296, Բժշկական ֆակուլտետում՝ 252, Սոցիալ-տնտեսագիտական ֆակուլտետում՝ 221, Մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժնում՝ 161, կենսաբանական բաժնում՝ 83, ֆիզիկա-մաթեմատիկական բաժնում՝ 50:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 28, ք. 1)

ՀՍԽՀ պետական համալսարանում դասավանդում էր 108 դասախոս, գործում էին 14 լաբորատորիա, 7 կաբինետ և 1 արհեստանոց:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

Սկսվում է հրատարակվել «Պրոլետարական ուսանող» պատի թերթը:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 39, ք. 75)

Համալսարանում ստեղծվում է ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոնը: Տասը տարի այն ղեկավարել է Լևոն Ռոտինյանցը: Նա, ամբիոնում դասավանդվող առարկաների մեթոդական և լաբորատոր հիմքի ստեղծմանը զուգահեռ, գիտահետազոտական աշխատանքների առարկա է դարձնում հանրապետությունում զարգացող ու հեռանկարային՝ ցեմենտի, ապակու, կարբիդի և կալցիումի ցիանամիդի արտադրությունների տեսական հիմունքների մշակումը:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 14, գ. 12, ք. 4,

տե՛ս նաև Երևանի պետական համալսարան, պատ. խմբ.՝ Ղարիբյան Գ., Երևան, 1981, էջ 96)

Ուսանողների ընդգրկվածությունը համալսարանում գործող շուրջ 20 ուսանողական խմբակներում հասնում է 100 տոկոսի:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 39, ք. 71)

ՀՍԽՀ պետական համալսարանում աշխատանքի է անցնում Բարդուղիմեոս Ֆանարջյանը՝ իբրև Բժշկական ֆակուլտետի ռենտգենոլոգիայի դասախոս և ամբիոնի վարիչ: 1930 թ. նա շարունակել է նույն պաշտոնը վարել Բժշկական ինստիտուտում:

(Տե՛ս Գարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 218)

Քրիստափոր Արարատյանը (Հայաստանի առաջին հանրապետության պաշտպանության նախարար) նշանակվում է ՀՍԽՀ պետական համալսարանի զինդեկ, ապա՝ ՀՍԽՀ ռազմական ամբիոնի վարիչ, որտեղ աշխատում է մինչև 1933 թ.: Քր. Արարատյանը համալսարանի ուսանողների ռազմական պատրաստության առաջին կազմակերպիչներից է:

(Տե՛ս Սեր անվանի դասախոսները, մաս I, խմբ.՝ Ներսիսյան Մ., Թադևոսյան Թ., Պիվազյան Էմ., Երևան, 1970, էջ 32-33)

16 փետրվարի – ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհուրդը հաստատում է պետական համալսարանի կանոնադրությունը:

(Տե՛ս Գարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 290)

31 մարտի – Համալսարանի վարչությունը հաստատում է տպագրական-տեխնիկական աշխատանքները վարող և հրատարակությունների տարածման գործը կազմակերպող խորհուրդ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Ադամյան Հ., Բարսեղյան Հ., Մադոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 201)

հունիս – ՀՍԽՀ պետական համալսարանը տալիս է 90 շրջանավարտ՝ 11 իրավաբան, 10 բանասեր, 34 գյուղատնտես, 35 բժիշկ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

13 հոկտեմբերի – Համալսարանի վարչությունը որոշում է կառուցել ֆիզիկաքիմիական մի ընդհանուր մասնաշենք և խնդրում է ակադեմիկոս Ալ. Թամանյանին նախագծել այն: Մի քանի տարում համալսարանական թաղամասում (Տերյան փողոցում) վեր է խոյանում Պոլիտեխնիկական ինստիտուտի հին մասնաշենքը, որտեղ և տեղավորվում են լաբորատորիաները:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը.
1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 138)

1928

1927-1928 ուստարում ՀՍԽՀ պետական համալսարանում սովորում էր 1227 ուսանող: Ըստ ֆակուլտետների և բաժինների՝ նրանք բախշված էին հետևյալ կերպ. Տեխնիկական ֆակուլտետում՝ 208 ուսանող, Գյուղատնտեսական ֆակուլտետում՝ 249, Բժշկական ֆակուլտետում՝ 241, Սոցիալ-տնտեսագիտական ֆակուլտետում՝ 252, Մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժնում՝ 141, կենսաբանական բաժնում՝ 84, ֆիզիկա-մաթեմատիկական բաժնում՝ 52:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 28, ք. 1)

ՀՍԽՀ պետական համալսարանում դասավանդում էր 118 դասախոս, գործում էին 15 լաբորատորիա, 8 կաթինետ և 1 արհեստանոց:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

1927-1928 ուստարում համալսարանի բյուջեն կազմում է 684.729 ռուբլի:

(Տե՛ս «Նոր կադրեր», 29 նոյեմբերի 1929, էջ 7)

27 ապրիլի – Համալսարանի վարչությունը քննարկում և Լուսավորության ժողովումին միջնորդում է պրոֆեսորի կոչում շնորհել Պապա Քալանթարյանին, Գրիգոր Արեշյանին, Լևոն Հովհաննիսյանին և Արտաշես Մելիք-Աղամյանին:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 104)

հունիս – ՀՍԽՀ պետական համալսարանը տալիս է 161 շրջանավարտ (որից 116-ը՝ ցերեկային)՝ 19 կենսաբան, 10 պատմաբան, 24 տնտեսագետ, 15 իրավաբան, 13 բանասեր, 38 գյու-

դատնետես, 35 բժիշկ, 7 ճարտարապետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

սեպտեմբեր – Արտավազդ Եղիազարյանը նշանակվում է համալսարանի ուսումնական մասի փոխտեկտոր:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 186)

սեպտեմբեր – Համալսարանում ստեղծվում է ասպիրանտուրա: Առաջին տարում հատկացվում է ասպիրանտական 8 տեղ, որոնք բախշվում են հետևյալ կերպ. Մանկավարժական ֆակուլտետին տրվում է 5 (պատմական մատերիալիզմի, լեզվի պատմության, հայոց պատմության, օրգանական քիմիայի և ընդհանուր պատմության գծով), Գյուղատնտեսական ֆակուլտետին՝ 2 (բակտերիոլոգիայի և մասնավոր երկրագործության գծով), Բժշկական ֆակուլտետին՝ 1 տեղ (ընդհանուր պաթոլոգիայի գծով):

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 105)

հոկտեմբեր – Համալսարանի վարչությունը հաստատում է ֆակուլտետների կողմից ասպիրանտուրայի համար ներկայացված առաջին թեկնածուներին: Ասպիրանտներ են հաստատվում Արգար Հովհաննիսյանը, Արարատ Ղարիբյանը, Հենրի Գաբրիելյանը, Նորայր Դաբաղյանը, Հովհաննես Չաթիկյանը, Վարդան Գուլքանյանը, Հարություն Փանոսյանը:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 105-106)

1929

1928-1929 ուստարում ՀՍԽՀ պետական համալսարանն ուներ 1318 ուսանող: Ըստ ֆակուլտետների և բաժինների՝ նրանք բաշխված էին հետևյալ կերպ. Տեխնիկական ֆակուլտետում՝ 247 ուսանող, Գյուղատնտեսական ֆակուլտետում՝ 306, Բժշկական ֆակուլտետում՝ 259, Սոցիալտնտեսագիտական ֆակուլտետում՝ 168, Մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժնում՝ 177, կենսաբանական բաժնում՝ 91, ֆիզիկա-մաթեմատիկական բաժնում՝ 70:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 28, ք. 1)

ՀՍԽՀ պետական համալսարանում սովորում էր 7 ասպիրանտ, դասավանդում էր 133 դասախոս, գործում էին 17 լաբորատորիա, 8 կաբինետ և 1 արհեստանոց:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

Համալսարանում ստեղծվում է ընդհանուր աշխարհագրության ամբիոն (ամբիոնի վարիչ՝ Հ. Հովհաննիսյան): Այդ իրադարձությունը վճռական նշանակություն ունեցավ հանրապետությունում զուտ աշխարհագրական գիտահետազոտական աշխատանքների ծավալման և տեղական կադրերի պատրաստման առումով:

(Տե՛ս Գիտությունը Հայաստանում 50 տարում, գլխ. խմբ.՝ Պետրոսյան Գ. Բ., Երևան. 1973, էջ 594)

Տեխնոլոգիական (Տեխնիկական) ֆակուլտետին կից ստեղծվում է քիմիական բաժին:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 29, ք. 12, տե՛ս նաև «Նոր կադրեր», 29 նոյեմբերի 1929, էջ 7)

հունիս – Համալսարանը տալիս է 239 շրջանավարտ՝ 12 ֆիզիկոս և

մեխանիկոս-մաթեմատիկոս, 15 կենսաբան, 10 պատմաբան, 36 տնտեսագետ, 18 իրավաբան, 17 բանասեր, 89 գյուղատնտես, 29 բժիշկ, 13 ճարտարապետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

1 հոկտեմբերի – Արսեն Տերտերյանին, Ավետիք Տեր-Պողոսյանին, Աշխարհբեկ Քալանթարյանին, Ալեքսանդր Հակոբյանին, Արշակ Տոնյանին, Սիմոն Հակոբյանին, Խորեն Երիցյանին և Միքայել Թումանյանին շնորհվում է պրոֆեսորի կոչում:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 104)

նոյեմբեր – ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ բուհերում վերացվում են առարկայական հանձնաժողովները, և ստեղծվում են ամբիոններ: Մինչև 1930 թ. հունիս ամիսը համալսարանում գործում էր 65 ամբիոն:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 6, գ. 1, ք. 19, տե՛ս նաև Պետրոսյան Գ., Երևանի պետական համալսարանը, Երևան, 1941, էջ 7)

29 նոյեմբերի – Ապակետիպ տպագրությամբ հրատարակվում է «Նոր կադրեր» երկշաբաթաթերթի անդրանիկ համարը 200 տպաքանակով: Դրա 100 օրինակը խմբագիր Արսեն Սարգսյանը անձամբ բաժանում է մշակույթի տանը Հայաստանի խորհրդայնացման 9-րդ տարեդարձի առթիվ կայացած հանդիսավոր նիստի մասնակիցներին: Լույս է տեսել «Նոր կադրեր»-ի միայն երեք համար. առաջինը հրատարակվել է առանձին, 2-րդը և 3-րդը՝ միասին: «Նոր կադրեր»-ի հրատարակումը դադարում է համալսարանի՝ տարբեր ինստիտուտների վերածվելու պատճառով:

(Տե՛ս «Նոր կադրեր», 29 նոյեմբերի 1929, տե՛ս նաև Սարգսյան Ա., Ինչպես և երբ է լույս տեսել համալսարանի թերթը, տե՛ս «Երևանի համալսարան», 10 հոկտեմբերի 1970)

1930

1929-1930 ուստարում ՀՍԽՀ պետական համալսարանում սովորում էր 1316 ուսանող: Ըստ ֆակուլտետների և բաժինների՝ նրանք բաշխված էին հետևյալ կերպ. Տեխնիկական ֆակուլտետում՝ 286 ուսանող, Գյուղատնտեսական ֆակուլտետում՝ 244, Բժշկական ֆակուլտետում՝ 270, Սոցիալ-տնտեսագիտական ֆակուլտետում՝ 92, Մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժնում՝ 167, կենսաբանական բաժնում՝ 117, ֆիզիկա-մաթեմատիկական բաժնում՝ 68, քիմիական (պոլիտեխնիկ) բաժնում՝ 72:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 28, ք. 1)

ՀՍԽՀ պետական համալսարանում սովորում էր 13 ասպիրանտ, դասավանդում էր 138 դասախոս, գործում էին 19 լաբորատորիա, 10 կաբինետ և 1 արհեստանոց:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

1929-1930 ուստարում համալսարանի կուսակցական կազմակերպությունը ուներ 152 անդամ-թեկանծու:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 126)

Համալսարանում ստեղծվում են հայ ժողովրդի պատմության ու հնագիտության և ազգագրության ամբիոններ:

(Տե՛ս ԵՊՀ արխիվ, ց. 1, գ. 1 (կող 9), ք. 24)

31 մայիսի – ՀՍԽՀ լուսժողկոմատի դահլիճում կայանում է խորհրդակցություն, որին մասնակցում են Ս. Մուշեղյանը, Հ. Նավակատիկյանը, Հ. Անժուրը, Ա. Հովսեփյանը, Կ. Մելիք-Օհանջանյանը, Ա. Մարգարյանը, Կ. Չարախչյանը, Հ. Ջորյանը, Կ. Ղազարյանը, Մ. Սանթրոսյանը, Հ. Մանանդյանը, Գ. Էդի-

լյանը, Ա. Տոնյանը և ուրիշներ: Օրակարգում դրված էր Մանկավարժական ֆակուլտետը վերակազմավորելու և Մանկավարժական ինստիտուտ դարձնելու խնդիրը: Խորհրդակցության մասնակիցները, լսելով Կ. Մելիք-Օհանջանյանի զեկուցումը՝ մանկավարժական կադրերի պատրաստման հնգամյա պլանի մասին, և Մ. Սանթրոսյանի զեկուցումը՝ Մանկավարժական ֆակուլտետը ինստիտուտի վերածելու մասին, որոշեցին հավանություն տալ այդ նախագծերին: Մանկավարժական ինստիտուտի ֆակուլտետների վերջնական լուծման խնդիրը թողնվում էր Լուսժողովմատի կողեցիային: Խորհրդակցության մասնակիցները միաժամանակ անհրաժեշտ համարեցին շտապ հրապարակել ընդունելության պայմանները, բրիգադների միջոցով Մանկավարժական ինստիտուտը հանրաճանաչելի դարձնել բանվորության շրջանում, 15 օրվա ընթացքում մշակել ուսալանները և դասատուների վերստուգում կատարել, առաջադեմ ուսանողներին առաջ քաշելով պատրաստել կրտսեր ասիստենտներ:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 28, ք. 4)

հունիս – Համալսարանը տալիս է 230 շրջանավարտ՝ 9 ֆիզիկոս և մեխանիկոս-մաթեմատիկոս, 19 կենսաբան, 15 պատմաբան, 38 տնտեսագետ, 10 իրավաբան, 15 բանասեր, 59 գյուղատնտես, 38 բժիշկ, 27 ճարտարապետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

14 հունիսի – ԱԽՖՍՀ Ժողովրդի ղեկավարի որոշման համաձայն՝ վերակառուցվեց Երևանի պետական համալսարանը: Ստորև բերվում է Անդրկովկասյան Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունում բարձրագույն և միջնակարգ կրթության վերակառուցման մասին որոշման համապատասխան հատվածը. «Անդրկովկասի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության ժողովրդական կոմիսարների խորհուրդը որոշում է ԱԽՖՍՀ-ում անցկացնել բարձրագույն և միջնակարգ կրթության հետևյալ վերակառուցումը.

2. Հայաստանում

5. Հայաստանի ԽՍՀ գյուղատնտեսական ինստիտուտը հանձնել Հայկական ԽՍՀ հողագործության մինիստրության իրավատեսությամբ՝ վերջինիս հանձնարարելով որոշել ինստիտուտի ֆակուլտետների թիվը, նախատեսելով նրանում անասնապահության ֆակուլտետ:

6. Հայկական ԽՍՀ պետական համալսարանը վերակառուցել հետևյալ ինքնուրույն-մասնագիտական ինստիտուտների.

ա) Տեխնիկական ֆակուլտետը՝ ինժեներա-տեխնիկական (շինարարական) ինստիտուտի՝ հանձնելով այն Հայաստանի ԽՍՀ ժողովրդական տնտեսության բարձրագույն խորհրդի իրավասությամբ:

բ) Տնտեսագիտական ֆակուլտետը՝ առևտրա-կոոպերատիվ ինստիտուտի՝ ապահովելով ֆինանսական աշխատողների պատրաստումը, հանձնելով այն կոոպերացիայի իրավասությամբ:

գ) Մանկավարժական ֆակուլտետը՝ մանկավարժական ինստիտուտի, թողնելով այն Հայաստանի ԽՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսարիատի իրավասության տակ:

դ) Բժշկական ֆակուլտետը՝ բժշկական ինստիտուտի, հանձնելով այն Հայաստանի ԽՍՀ առողջապահության ժողովրդական կոմիսարիատի իրավասությամբ:

Հայաստանի ԽՍՀ բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդման լեզուն սահմանել հայերենը:

ԱԽՖՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Շ. ԷԼԻԱՎԱՆ»

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը, 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 300)

հուլիս – Մանկավարժական ինստիտուտի տնօրեն է նշանակվում Մուշեղ Հայրապետի Սանթրոսյանը (պաշտոնավարել է մինչև 1931 թ. օգոստոս):

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 10, գ. 615, թ. 31)

30 սեպտեմբերի – ՀԿ(Բ)Կ քարտուղարությունում տեղի է ունենում խորհրդակցություն Հայաստանի բուհերի վերակազմության և Անդրկովկասի բուհերի դրության մասին: Արձանագրվում է, որ բուհերի վերակազմության ու միավորման քաղաքական հսկայական նշանակության ունեցող իրադարձությունը ընթացել է կաբինետային ձևով, և կուսակցական, պրոֆեսիոնալ ու կոմերիտական կազմակերպությունները բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք չեն առել բուհերի վերակազմության խնդրի շուրջ հասարակական կարծիք ստեղծելու համար:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց 10, գ. 18, ք. 113)

սեպտեմբեր – Համալսարանի սոցիալ-տնտեսագիտական ֆակուլտետի հիմքի վրա կազմավորվում է Առևտրա-կոոպերատիվ ինստիտուտը, որի խնդիրն էր պատրաստել կադրեր երեք մասնագիտությունների գծով՝ պլանավիկներ և ապրանքագետներ՝ Հայաստանի սպառողական կոոպերացիայի ու մատակարարման ժողկոմատի համար, և ֆինանսիստներ՝ ՀԽՍՀ ֆինանսների ժողկոմատի համար:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 14, գ. 11, ք. 40)

1931

Մանկավարժական ինստիտուտում սովորում էին 647 ուսանող և 19 ասպիրանտ, դասավանդում էր 101 դասախոս, գործում էին 12 լաբորատորիա, 3 կաբինետ և 1 արհեստանոց:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

Մանկավարժական ինստիտուտը տալիս է 129 շրջանավարտ:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

Մանկավարժական ինստիտուտի տնօրեն է նշանակվում Սահակ Սիմոնի Հայրապետյանը (պաշտոնավարել է մինչև 1933 թ.)

(Տե՛ս Մեր անվանի դասախոսները, մաս I, խմբ.՝ Ներսիսյան Մ., Թաղևոսյան Թ., Պիվազյան Էմ., Երևան 1970, էջ 132)

Կենսաբանական ենթաբաժնի հիման վրա (Մանկավարժական ինստիտուտում) ստեղծվում է Կենսաբանական ֆակուլտետը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մադոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 67)

1932

Մանկավարժական ինստիտուտում սովորում էր 689 ուսանող, 9
ասպիրանտ, դասավանդում էր 89 դասախոս, գործում էին 8 լաբորա-
տորիա, 4 կաբինետ և 1 արհեստանոց:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

Մանկավարժական ինստիտուտը տալիս է 116 շրջանավարտ:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

Հիմնադրվում է փիլիսոփայության ամբիոնը, որի առաջին վարի-
չը Հ. Գյուլիքևյանն էր: Ամբիոնը հատուկ ուշադրություն է դարձնում
մարքսիստական աշխարհայեցողության արտալսարանային պրո-
պագանդային:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Ադամյան Հ.,
Բարսեղյան Հ., Մադոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ.,
Երևան, 1970, էջ 110)

Հիմնադրվում է ռուս գրականության ամբիոնը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Ադամյան Հ.,
Բարսեղյան Հ., Մադոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ.,
Երևան, 1970, էջ 123)

1933

Մանկավարժական ինստիտուտը տալիս է 272 շրջանավարտ:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

Երևանի պետական համալսարանում սովորում էր 10 ասպիրանտ, դասավանդում էր 107 դասախոս, գործում էին 8 լաբորատորիա, 6 կաբինետ և 1 արհեստանոց:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

Համալսարանում լույս տեսնող «Նոր կադրեր» պարբերականը վերանվանվում է «Հարվածային ուսանող»¹³: Այն լույս է տեսնում մինչև 1937 թ.:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 39, ք. 75)

Բնապատմական ֆակուլտետում ստեղծվում է անօրգանական քիմիայի ամբիոնը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան,
պատ. խմբ.՝ Ղարիբյան Գ., Երևան, 1981, էջ 99)

Ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետի ֆիզիկայի բաժնում սկսում է գործել ընդհանուր ֆիզիկայի ամբիոնը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան,
պատ. խմբ.՝ Ղարիբյան Գ., Երևան, 1981, էջ 64)

20 մայիսի – ՀՍԽՀ պետալանում տեղի է ունենում խորհրդակցություն, որին մասնակցում էին Վլուգոն, Լ. Միրզոյանը, Ա. Ալեքսանյանը, Ա. Դանիելբեկը (պետալանից), Ս. Դավթյանը, Մ. Սանթրոսյանը (Լուսժողկոմատից) և այլք: Օրակարգում Երևա-

նի պետական համալսարանի կազմակերպման խնդիրն էր: Որոշվեց, որ բուհերի ԲՏՈՒ-ների և տեխնիկումների հանձնումը ժողկոմատներին նպաստեց կադրերի պատրաստման գործին, սակայն մի շարք գերատեսչությունների կադրերի պատրաստման գործում եղան թերություններ:

Ստեղծվեցին մի շարք մանր ինստիտուտներ, որոնք անհրաժեշտ գույք և գիտա-դասատուական համապատասխան կադրեր չունենալու պատճառով չապահովեցին որակյալ մասնագետների պատրաստման գործը: Այդ ինստիտուտները համեմատաբար քիչ ուսանողներ ունենալու պատճառով նյութական որոշ դժվարությունների առաջ էին կանգնել, որոնց պատճառով գերատեսչությունները ստիպված էին գերծախս կատարել: «Յելնելով վերոհիշյալ դրությունից, հիմք ունենալով Համ. կոմկուսի Կենտկոմի վորոշումը համալսարանի կազմակերպման մասին և ԽՍՀՄ Կենտգործկոմի վորոշումը՝ այն մասին, վոր ԲՈՒՀ-երի, ԲՏՈՒ-ների հետագա ծավալման ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել ավելորդ պարալելիզմ չթույլատրելու թգուկային ԲՈՒՀ-եր ԲՏՈՒ-ներ չստեղծելու վրա և այլն: Խորհրդակցությունը գտնում է անհրաժեշտ.

1. Յերեվանում կազմակերպել պետական համալսարան՝ բազա ունենալով Լուսժողկոմատի մանկավարժական ինստիտուտը:

2. Գտնել, վոր Պետհամալսարանը պատրաստելու յե.

ա) Մանկավարժական կադրեր՝ 7-ամյակների, կոմյերիտների, ֆաբգործուների, տասնամյակների, ինչպես և տեխնիկումների տարբեր դիսցիպլինների և առարկաների դասատուներ:

բ) Տնտեսական կադրեր խոր. շինարարության, պլանային-ֆինանսական, կոոպ. և խոր. առեվտրի ու սոց. հաշվառման ասպարեզներում աշխատող բարձր վորակի կադրեր:

գ) Համալսարանին կից ասպիրանտուրայի միջոցով պատրաստում յե գիտական հետախուզական կադրեր ժող. տնտ. վորոշ ճյուղերի գիտահետախուզական աշխատանքների համար և գիտա-դասատուական կադրեր բարձրագույն դպրոցական հաստատությունների համար:

3. Պետ. համալսարանը ամբողջովին հանձնվում յե ՀՍԽՀ լուսժողկոմատի ղեկավարության ներքո:

4. Համալսարանի կազմակերպման կապակցությամբ գտնել ավելորդ Լենինականի Առեվտրա-կոոպերատիվ ինստիտուտի հետագա գոյությունը. միացնել այն Պետ. համալսարանի հետ համապատասխան դասավորելով յեղած կոնտինգենտը կազմակերպվող համապատասխան ֆակուլտետներում և բաժիններում:

5. Պետ. համալսարանի շենքը մինչեվ նոր շենք կառուցելը համարել ներկա մանկավարժական ինստիտուտի շենքը, խնդիր հարուցել արագացնելու շենքի 3-րդ հարկի կառուցումը, վորը ապահոված յե անհրաժեշտ ֆինանսական միջոցներով:

6. Պետական համալսարանի 1932 թ.¹⁴ ընդունելության կոնտինգենտ ընդունել 505 հոգի՝ յեկնելով պետականի կողմից առաջադրված և Ժողկոմխորիի կողմից հաստատված պետհամալսարանին միացվող գերատեսչությունների, բուհերի և ֆակուլտետների ընդունելությունների կոնտինգենտից:

7. Պետ. համալսարանի վերջնական պրոֆիլը մշակելու համար առանձնացնել հատուկ հանձնաժողով հետեվյալ ընկերներից.

1. Վյուգո (նախ.)
2. Հ. Ստեփանյան (Մարքս-լենինիզմի ինստիտուտ)
3. Լուսժողկոմատի պատ. ներկայացուցիչ
4. Ֆին-ժողկոմատի ներկայացուցիչ
5. Ս. Հայրապետյան (Մանկ. ինստիտուտ)»:

(ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 18, թ. 2-3)

20 մայիսի – Տեղի է ունենում համալսարանի կազմակերպման (կառուցման) հանձնաժողովի նիստը, որին ներկա էին Մ. Սանթրոսյանը, Հ. Նավակատիկյանը, Ստ. Ղաճարյանը, Վ. Ռշտունին, Հովսեփյանը, Դ. Գզգզյանը, Գ. Ղափանցյանը և Ս. Հայրապետյանը: Օրակարգի հարցն էր համալսարանի կառուցումը: Հանձնաժողովականները քննարկեցին համալսարանում ուսման տևողության, ֆակուլտետների քանակի, դասավանդվող

առարկաների խնդիրները: Որոշեցին.

«1. Համալսարանը պետք չէ պատրաստի դասատուներ բուրձր գերատեսչությունների գծով, ապահովելու չէ կադրերով գիտահետազոտական հիմնարկները և բուհերը:

Առեվտրա-կոոպ. ինստիտուտը միացնել Համալսարանին:

Ունենալ Ֆիզիկա-մաթեմատիկական, Բնագիտական ֆակուլտետ՝ յուր բաժիններով, Տնտեսագիտ. Լեզվագրական, պատմական յեվ Մանկավարժական ֆակուլտետները:

Ուսման տևողության գործում ունենալ դիֆերենցիալ մոտեցում. 4 կամ 5 տարվա դասընթացքով:

Ասպիրանտուրա ունենալ.

Հայաստանի պատմության, հայոց լեզվի, հայ գրականության, Անդրկովկասի յեվ Հայաստանի պատմության բիոլոգիայի, քիմիայի յեվ ֆիզ-մաթի վորոշ ամբիոնների գծով»:

(ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 18, ք. 6-8)

հունիս – Առևտրա-կոոպերատիվ ինստիտուտը տալիս է առաջին շրջանավարտները, որոնցից 16-ը ֆինանսիստ էին, 30-ը՝ պլանավիկ, 18-ը՝ ապրանքագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 14, գ. 11, ք. 4)

10 հունիսի – ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոն Երևանի պետական համալսարանը կազմակերպելու վերաբերյալ կայացնում է հետևյալ որոշումը.

1. Ելնելով երկրի ժողովրդական տնտեսության մասնագետ կադրեր պատրաստելու պահանջից, որոնք զինված են տվյալ մարզում գիտության վերջին նվաճումներով, ունեն մաթքա-լեռնիյան պատրաստվածություն և ամբողջովին կողմնորոշված են սոցիալիստական շինարարության խնդիրներում, 1933 թվականի աշնանից կազմակերպել Հայաստանի ԽՍՀ պետական համալսարանը Մանկավարժական ինստիտուտի հիմքի վրա:

2. Պետական համալսարանն ավարտած կադրերը պետք է բավարարեն ժողովրդական տնտեսության և մշակույթի առանձին ճյուղերի պահանջները (գիտա-հետազոտական հիմնարկ-

ներ, քաղաքական և մասնագիտական կրթություն):

3. Հաստատել Համալսարանի հետևյալ ֆակուլտետները.

ա) Բնա-պատմական՝ կեսաբանության և քիմիայի բաժիններով.

բ) Ֆիզիկա-մաթեմատիկական՝ ֆիզիկայի և մաթեմատիկայի բաժիններով.

գ) Պատմա-գրական՝ պատմության, գրականության և լեզվի բաժիններով.

դ) Տնտեսագիտական՝ ֆինանսային, պլանային, հաշվային և խորհրդային շինարարության բաժիններով՝ ապահովելով ուսումնական պլաններում լայն պատրաստվածություն տեսական տնտեսության գծով:

ե) Մանկավարժական՝ ժողովրդական լուսավորության կազմակերպիչների և մանկավարժության բաժիններով:

4. Առաջարկել Լուսժողկոմատին տասնօրյա ժամկետում հստակեցնել ֆակուլտետների և բաժինների ուղղվածությունները, ուսման ժամանակամիջոցը և հիմնական առարկաները. մինչև հունիսի 25-ը մշակել ուսումնական նոր պլանները և միաժամանակ մինչև հուլիսի 10-ը պատրաստել հիմնական առարկաների ծրագրերը՝ ըստ ֆակուլտետների:

Ֆակուլտետների ուսումնական պլանները և ծրագրերը կազմելիս հիմք ընդունել ԽՍՀՄ Կենտգործկոմի 1932 թ. նոյեմբերի 19-ի որոշումը:

5. Համալսարանի ուսումնական պլանների հիման վրա վերանայել Մանկավարժական ինստիտուտի վերակազմվող ամբիոնների կազմը նրանց հաստիքացուցակներով և աշխատողներով:

6. Առաջարկել բոլոր ինստիտուտներին մինչև հունիսի 15-ը ավարտել գիտամանկավարժական կազմի որակավորման հանձնաժողովների աշխատանքը, որպեսզի համալսարանի պրոֆեսորների և մանկավարժական մյուս կազմի ընտրությունը կատարվի Հանրապետական որակավորման հանձնաժողովի աշխատանքի հիման վրա:

7. Լուսժողկոմատը Քարտուղարության առաջիկա նիս-

տին պետք է ներկայացնի Երևանի պետական համալսարանի ղեկավարության կազմը:

8. Պետպլանը Լուսժողկոմատի հետ համատեղ նախատեսել է 1933 թ. աշնան ընդունելության թվաքանակը (կոնտինգենտը):

9. Համալսարանը անհրաժեշտ շենքով ապահովելու համար առաջարկել Ժողկոմխորհի Կառուցման հանձնաժողովին երկամսյա ժամկետում կառուցել Մանկավարժական ինստիտուտի երրորդ հարկը: Միաժամանակ առաջարկել Լուսժողկոմատին պատրաստել համալսարանի մյուս շենքի նախագիծ:

10. Առաջարկել Լուսժողկոմատին մշակել և իրականացնել բոլոր անհրաժեշտ կազմակերպչական-տնտեսական միջոցառումները՝ սեպտեմբերի սկզբին կանոնավոր պարապմունքներ սկսելու համար:

11. Հանձնարարել Աշրաֆյանին Քարտուղարության կողմից կանոնավոր կերպով հետևել համալսարանի բացման նախապատրաստական աշխատանքներին:

12. Հանձնարարել Աշրաֆյանին ավարտել և Կետկոմի քարտուղարության հաստատմանը ներակայացնել Կոոպերատիվառևտրական ինստիտուտը Լենինականում թողնելու հարցը:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 13, գ. 4, ք. 121)

հուլիս – Երևանի պետական համալսարանի ռեկտոր է նշանակվում Տիգրան Մուշեղյանը (պաշտոնավարել է մինչև 1935 թ. ապրիլ):

(Տե՛ս Երևանի պետական համալսարանի ռեկտորները (1919-1999), կազմ.՝ Ղարիբջանյան Լ. Պ., Երևան, 1999, էջ 39-42)

սեպտեմբեր – 1933-34 ուստարում Երևանի պետական համալսարանում սովորում էր 712 ուսանող: Ըստ ֆակուլտետների և բաժինների՝ նրանք բաշխված էին հետևյալ կերպ. Տնտեսագիտական ֆակուլտետում՝ 181 ուսանող, Բնագիտ-պատմալեզվագրական ֆակուլտետի պատմական բաժնում՝ 56, լեզվագրական բաժնում՝ 78, քիմիական բաժնում՝ 108, կենսաբանական բաժնում՝ 52, աշխարհագրական բաժնում՝ 18, Ֆիզիկա-մաթեմա-

տիկական ֆակուլտետում՝ 99, խորհրդային շինարարության բաժնում՝ 32, Մանկավարժական ֆակուլտետում՝ 56, Կոլ-խոգում՝ 32:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 70, ք. 1)

10 սեպտեմբերի – Երևանի պետական համալսարանի դահլիճում երեկոյան կայանում է նրա հանդիսավոր վերաբացումը: Ներկա էին Ա. Խանջյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Աշրաֆյանը, Ավագյանը, Արիսյանը և ուրիշներ:

Հանդիսավոր նիստը բացում է համալսարանի ռեկտոր Ս. Մուշեղյանը, որից հետո ՀԿ(Բ)Կ Կենտկոմի և Ժողկոմխորհի կողմից ողջույնի խոսքով հանդես է գալիս ՀԿ(Բ)Կ Կենտկոմի քարտուղար և լուսժողկոմ Աշրաֆյանը:

Ողջունելով Երևանի պետական համալսարանի բացումը և պրոֆեսորական կազմին ու ողջ ուսանողությանը՝ Աշրաֆյանը ՀԿ(Բ)Կ Կենտկոմի կողմից վեց էական խնդիրներ է առաջադրում, որոնց լուծման համար պետք է պայքարեին համալսարանի դասախոսական կազմը և ուսանողությունը: Արշաֆյանից հետո համառոտ զեկուցումով հանդես է գալիս Ս. Մուշեղյանը: ՀԼԿԵՄ Կենտկոմի կողմից ողջույն է հղում Մ. Գևորգյանը՝ համալսարանի կոմերիտիությանը կոչ անելով պայքարել ուսման բարձր որակի համար:

Երևանի պետական համալսարանի բացումը ողջունում են նաև պրոֆ. Հ. Նավակատիկյանը, Զ. Եսայանը և ուրիշներ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 6, գ. 1, ք. 15-16)

1934

Երևանի պետական համալսարանում սովորում էին 712 ուսանող
և 23 ասպիրանտ, դասավանդում էր 128 դասախոս, գործում էին 9 լա-
բորատորիա, 11 կաբինետ և 2 արհեստանոց:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

Երևանի պետական համալսարանի մանկավարժական ֆակուլ-
տետն անջատվում և դառնում է ինքնուրույն՝ Մանկավարժական
ինստիտուտ (այժմ՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան): Այս ինստիտուտի մանկավար-
ժության ամբիոնը Արշ. Շավարշյանի ղեկավարությամբ մեծ աշխա-
տանք է ծավալում մանկավարժական գիտության զարգացման ուղ-
ղությամբ:

(Տե՛ս Գիտությունը Հայաստանում 50 տարում,
գլխ. խմբ.՝ Պետրոսյան Գ. Բ., Երևան. 1973, էջ 188)

Երևանի պետական համալսարանի ֆակուլտետներում գործում
էին հետևյալ լաբորատորիաները և գիտական կաբինետները՝ Ֆիզ-
մաթ ֆակուլտետում՝ ընդհանուր ֆիզիկայի, օպտիկայի, էլեկտրակա-
նության, ռադիո-տեխնիկական լաբորատորիաները, Բիոլոգիական
ֆակուլտետում՝ կենսաբանության, բույսերի սիստեմատիկ. և մորֆ.,
բույսերի ֆիզիոլոգիայի, կենդանիների ֆիզիոլոգիայի լաբորատորի-
աները, Աշխարհաերկրաբանական ֆակուլտետում՝ աշխարհագրա-
կան կաբինետը, կրիստալոգրաֆիայի և միներալոգիայի կաբինետ-
լաբորատորիաները, Զիմիական ֆակուլտետում՝ օրգանական, անօր-
գանական, անալիտիկ, ֆիզիկական քիմիայի լաբորատորիաները:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 53, ք. 5)

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի որոշմամբ Արևելքի երկրների պատմության դասավանդումը պաշտոնապես մտավ բուհական ուսումնական ծրագրի մեջ (որպես գաղութային և կախյալ երկրների պատմության):

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մաղոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 133)

10-11 հուլիսի – ՀԿ(բ)Կ Կենտկոմի խիստ գաղտնի որոշումով հաստատվում է Երևանի պետական համալսարանի ֆակուլտետների հետևյալ կառուցվածքը՝ Պատմալեզվագրական (ուսման տևողությունը՝ 5 տարի), Տնտեսագիտական (ուսման տևողությունը՝ 4 տարի), Քիմիական (ուսման տևողությունը՝ 5 տարի), Ֆիզիկա-մաթեմատիկական (ուսման տևողությունը՝ 5 տարի), Երկրաբանական-աշխարհագրական (ուսման տևողությունը՝ 5 տարի), Կենսաբանական (ուսման տևողությունը՝ 5 տարի), Շինարարական (Խորհրդային շինարարական) (ուսման տևողությունը՝ 4 տարի)՝ հայերեն և թուրքերեն բաժիններով, խորհրդային իրավունքի դասընթացներ (ուսման տևողությունը՝ 3 տարի):

Նույն որոշումով Երևանի պետական համալսարանին կից հաստատվեցին գիտահետազոտական հետևյալ հաստատությունները՝ 1) Ֆիզիկայի և քիմիայի ինստիտուտ, 2) Աստղագիտության աստղադիտարան, 3) Երկրաբանության և ֆիզիկական աշխարհագրության ինստիտուտ, 4) Կենսաբանության ինստիտուտ, 5) Կենսաբանական թանգարան: Միաժամանակ պետհամալսարանին կից որոշվեց հաստատել գիտահրատարակչական մաս՝ ռեկտորի անմիջական ղեկավարությամբ:

1934-35 ուստարվա բոլոր ֆակուլտետների համար ընդունվողների թվաքանակ (կոնտինգենտ) հաստատվեց 400-ը:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 122, ց. 3, գ. 59, ք. 20-21 և հալ. կողմ)

1935

1934-35 ուստարում Երևանի պետական համալսարանի ուսանողների թիվը 1004 էր: Ըստ ֆակուլտետների և բաժինների՝ նրանք բաշխված էին հետևյալ կերպ. Տնտեսագիտական ֆակուլտետում՝ 269 ուսանող, Պատմալեզվագրական ֆակուլտետի պատմական բաժնում՝ 83, լեզվագրական բաժնում՝ 104, Զինիական ֆակուլտետում՝ 141, Կենսաբանական ֆակուլտետում՝ 73, Աշխարհագրական-գեոլոգիական (երկրաբանական) ֆակուլտետում՝ 109, Ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում՝ 101, Իրավաբանական ֆակուլտետում՝ 60, Կոլխտգում՝ 64:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 70, ք. 1)

Երևանի պետական համալսարանում դասավանդում էր 140 դասախոս, սովորում էր 30 ասպիրանտ, գործում էին 6 լաբորատորիա, 6 կաբինետ և 2 արհեստանոց:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

Երկրաբանական-աշխարհագրական ֆակուլտետից աշխարհագրության բաժինը առանձնացվում է և կազմակերպվում որպես ինքնուրույն՝ Աշխարհագրական ֆակուլտետ: Դեկանի պարտականությունները դրվում են պրոֆ. Հայրապետ Հովհաննիսյանի վրա:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, պատ. խմբ.՝ Ղարիբյան Գ., Երևան, 1981, էջ 189)

Խորհրդային շինարարական ֆակուլտետի հիմքի վրա ստեղծվում է Իրավաբանական ֆակուլտետը:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 62, ք. 3)

Տնտեսագիտական ֆակուլտետում ստեղծվում է տնտեսագիտա-

կան կարիներ:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 53, ք. 5)

Հակոբ Մանանդյանին շնորհվում է գիտության վաստակավոր գործչի կոչում:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը, 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 203)

Համալսարանի ֆիզիկական քիմիայի ամբիոնում և Կիրովի անվան գործարանի լաբորատորիայում Հ. Չալքիկյանը աշխատակիցների հետ հետազոտություններ է սկսում հեղուկաֆազ քիմիական ռեակցիաների կինետիկայի և կատալիզի բնագավառում երկու ուղղություներով:

(Տե՛ս Գիտությունը Հայաստանում 50 տարում, գլխ. խմբ.՝ Պետրոսյան Գ. Բ., Երևան, 1973, էջ 547)

Համալսարանում ստեղծվում է օտար լեզուների ամբիոն:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Ադամյան Հ., Բարսեղյան Հ., Մարդյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 124)

հունիս – Համալսարանը տալիս է 74 շրջանավարտ՝ 18 պատմաբան, 27 տնտեսագետ, 29 իրավաբան:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

16 հուլիսի – ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի որոշմամբ Երևանի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնում է հաստատվում Վռամ Կոստանյանը (պաշտոնավարել է մինչև 1937 թ. հունվար ամիսը):

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 123, գ. 5605, ք. 11, տե՛ս նաև Երևանի պետական համալսարանի ռեկտորները (1919-1999), կազմ.՝ Ղարիբջանյան Լ. Պ., Երևան, 1999, էջ 44-46)

20 նոյեմբերի – ՀՍԽՀ լուսժողկոմատի կենտրոնական որակավորող հանձնաժողովը, որի աշխատանքներին մասնակցում էին

Ա. Եղիազարյանը, Ս. Դավթյանը, Հ. Գյուլիքսիսյանը, Վ. Կոստանյանը, Մ. Աբեղյանը, Ա. Տերտերյանը, Ս. Դամբարյանը, Ա. Տոնյանը, Ա. Տեր-Պողոսյանը: Լսեցին Պատմության և գրականության ինստիտուտի գիտական աշխատողներին գիտական կոչումներ և աստիճաններ շնորհելու մասին հարցը (զեկուցող՝ Հ. Գյուլիքսիսյան) և որոշեցին.

1. Մանուկ Խաչատուրի Աբեղյանին տալ Պատմության և Գրականության ինստիտուտի իսկական անդամի կոչում և հասարակական գիտությունների դոկտորի գիտական աստիճան՝ առանց ատենախոսության պաշտպանության (հիմք՝ ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934 թ. 13/1-ի որոշման հոդվ. 6, ծանոթություն 2):

2. Կարապետ Աղաբեկի Մելիք-Օհանջյանին տալ Պատմության և Գրականության ինստիտուտի իսկական անդամի կոչում՝ հայ հին գրականության և ֆոլկլորի գծով (հիմք՝ ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934 թ. 13/1-ի որոշման հոդվ. 9, ծանոթություն 2):

3. Սուրեն Սիսակի Մարկոսյանին տալ Պատմության և Գրականության ինստիտուտի իսկական անդամի կոչում՝ պատմության գծով (հիմք՝ ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934 թ. 13/1-ի որոշման հոդվ. 9, ծանոթություն 2):

4. Գուրգեն Արշակի Վանանդեցուն տալ Պատմության և Գրականության ինստիտուտի գիտական աշխատակցի կոչում՝ հայոց գրականության գծով, և գրական գիտությունների թեկնածուի աստիճան՝ առանց ատենախոսության պաշտպանության (հիմք՝ ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934 թ. 13/1-ի որոշման հոդվ. 5-ի ծանոթություն և հոդվ. 9, ծանոթություն 2):

5. Խորեն Սարգսի Սարգսյանին տալ Պատմության և Գրականության ինստիտուտի ավագ գիտական աշխատակցի կոչում՝ գրականության գծով (հիմք՝ ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934 թ. 13/1-ի որոշման հոդվ. 9-ի ծանոթություն):

6. Վարդան Արամի Պարսամյանին տալ Պատմության և Գրականության ինստիտուտի ավագ գիտական աշխատակցի կոչում՝ պատմության գծով (հիմք՝ ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934 թ. 13/1-ի որոշման հոդվ. 9-ի ծանոթություն):

7. Սեդրակ Գևորգի Բարխուդարյանին տալ Պատմության և

Գրականության ինստիտուտի ավագ գիտական աշխատակցի կոչում՝ պատմության գծով (հիմք՝ ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934 թ. 13/1-ի որոշման հոդվ. 9-ի ծանոթություն):

Նույն նիստում լսեցին նաև պետական համալսարանի դասախոսներին գիտական կոչումներ և աստիճաններ շնորհելու մասին (զեկուցող՝ Վ. Կոստանյան): Որոշեցին.

1. Հրանտ Ավետիսի Գալիկյանին տալ պրոֆեսորի գիտական կոչում՝ Հայաստանի պետհամալսարանի տնտեսական իրավունքի ամբիոնի գծով (հիմք՝ ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934 թ. 13/1-ի որոշման հոդվ. 9-ի ծանոթություն):

2. Անժուր Գևորգի Հարությունյանին տալ պրոֆեսորի գիտական կոչում՝ Հայաստանի պետհամալսարանի ֆիզիկայի ամբիոնի գծով (հիմք՝ ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934 թ. 13/1-ի որոշման հոդվ. 9-ի ծանոթություն):

3. Ներսես Միքայելի Ստեփանյանին տալ պրոֆեսորի գիտական կոչում՝ Հայաստանի պետհամալսարանի քաղաքատնտեսության ամբիոնի գծով:

Առաջարկել Հայաստանի պետհամալսարանին գիտական աստիճանի հարցը լուծել ԽՍՀՄ ԿԳԿ-ին կից բարձր տեխ. կրթ. կոմիտեի 14-րդ պարագրաֆի 5-րդ կետի կարգով:

4. Վռամ Խրիստաֆորի Կոստանյանին տալ պրոֆեսորի գիտական կոչում՝ Հայաստանի պետհամալսարանի տնտեսական քաղաքականության և պլանավորման միացյալ ամբիոնի գծով:

Առաջարկել Պետհամալսարանին գիտական աստիճանի հարցը լուծել ԽՍՀՄ ԿԳԿ-ին կից բարձր տեխ. կրթ. կոմիտեի § 14, 5-րդ կետի կարգով:

5. Արամ Միքայելի Եսայանին տալ դոցենտի գիտական կոչում Հայաստանի պետական համալսարանի տնտեսական իրավունքի ամբիոնի գծով (հիմք՝ ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934 թ. 13/1-ի որոշման հոդվ. 9-ի ծանոթություն):

6. Բենիամին Աղաջանի Խոջանեքյանին տալ դոցենտի գիտական կոչում՝ Հայաստանի պետհամալսարանի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի գծով (հիմք՝ ԽՍՀՄ ԺԿԽ-ի

1934 թ. 13/1-ի որոշման հոդվ. 9-ի ծանոթություն):

7. Գարեգին Բախշիի Պետրոսյանին տալ դոցենտի գիտական կոչում՝ Հայաստանի պետհամալսարանի ֆիզիկայի ամբիոնի գծով, և ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ առանց ատենախոսության պաշտպանության (հիմք՝ ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934թ. 13/1-ի որոշման հոդվ. 9-ի լրացուցիչ ծանոթությունը և հոդվ. 9-ի ծանոթությունը):

8. Անդրանիկ Կոնստանդինի Գարանյանին տալ դոցենտի գիտական կոչում՝ Հայաստանի պետհամալսարանի սոցիալիստական հաշվառման ամբիոնի գծով (հիմք՝ ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934 թ. 13/1-ի որոշման հոդվ. 9-ի ծանոթություն):

9. Արա Հովհաննեսի Մարգարյանին տալ դոցենտի գիտական կոչում՝ Հայաստանի պետհամալսարանի պլանավորման ամբիոնի գծով:

Առաջարկել Հայաստանի պետհամալսարանին գիտական աստիճանի հարցը կարգավորել համաձայն ԽՍՀՄ ԳԿ-ին կից բարձր տեխ. կրթ. կոմիտեի հրահանգի (հիմք՝ ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934 թ. 13/1-ի որոշման հոդվ. 9-ի ծանոթություն):

10. Սարգիս Շարբաթի Ջոհրաբյանին տալ դոցենտի գիտական կոչում՝ Հայաստանի պետհամալսարանի քաղաքատնտեսության ամբիոնի գծով (հիմք՝ ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934 թ. 13/1-ի որոշման հոդվ. 9-ի ծանոթություն):

11. Սուրեն Հովսեփի Մեսրոբյանին տալ դոցենտի գիտական կոչում Հայաստանի պետհամալսարանի ապրանքագիտական ամբիոնի գծով (հիմք՝ ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934 թ. 13/1-ի որոշման հոդվ. 9-ի ծանոթություն):

12. Լևոն Գեղամի Բերբերյանին տալ դոցենտի գիտական կոչում՝ Հայաստանի պետհամալսարանի մեխանիկայի ամբիոնի գծով (հիմք՝ ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934 թ. 13/1-ի որոշման հոդվ. 9-ի ծանոթություն):

13. Եվգենյա Գրիգորևնա Մուխոմային տալ դոցենտի գիտական կոչում, Հայաստանի պետհամալսարանի բիոլոգիական ինստիտուտի ավագ գիտական աշխատակցի կոչում՝ բու-

սաքսանության գծով (հիմք՝ ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934 թ. 13/1-ի որոշման հոդվ. 9-ի ծանոթություն):

14. Կենսաբեր Սիրականի Բոխյանին առաջարկել պետհամալսարանի տնտեսագիտական գիտությունների թեկնածուի աստիճան տալու հարցը կարգավորել ըստ ԽՍՀՄ ԿԳԿ-ին կից բարձր տեխ. կրթ. կոմիտեի հրահանգի N 14, 5-րդ կետի:

15. Դոխիկ Ալեքսանդրի Չատրջյանին հաստատել դոցենտի պաշտոնակատար՝ պարտավորեցնելով մինչև 1938 թ. հունվարի մեկը պաշտպանել ատենախոսություն՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար (հիմք՝ ԽՍՀՄ ԿԳԿ-ին կից բարձր տեխ. կրթ. կոմիտեի հրահանգի պար. 20):

16. Նորայր Մարգարի Քոչարյանին հաստատել դոցենտի պաշտոնակատար՝ պարտավորեցնելով մինչև 1938 թ. հունվարի մեկը պաշտպանել ատենախոսություն՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար (հիմք՝ ԽՍՀՄ ԿԳԿ-ին կից բարձր տեխ. կրթ. կոմիտեի հրահանգի պար. 20):

17. Արմենակ Հովակիմի Մուրադյանին հաստատել դոցենտի պաշտոնակատար՝ Հայաստանի պետհամալսարանի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի գծով՝ առաջարկելով մինչև 1938 թ. հունվարի մեկը պաշտպանել ատենախոսություն՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար (հիմք՝ ԽՍՀՄ ԿԳԿ-ին կից բարձր տեխ. կրթ. կոմիտեի հրահանգի պար. 20):

18. Հակոբ Հովակիմի Շամխոբյանին հաստատել դոցենտի պաշտոնակատար՝ Հայաստանի պետհամալսարանի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի գծով՝ պարտավորեցնելով մինչև 1938 թ. հունվարի մեկը պաշտպանել ատենախոսություն՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար (հիմք՝ ԽՍՀՄ ԿԳԿ-ին կից բարձր տեխ. կրթ. կոմիտեի հրահանգի պար. 20):

19. Արմեն Խաչատուրի Կարապետյանին հաստատել դոցենտի պաշտոնակատար՝ Հայաստանի պետհամալսարանի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի գծով՝ պարտավորեցնելով մինչև 1938 թ. հունվարի մեկը պաշտպանել

ատենախոսություն՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար (հիմք՝ ԽՍՀՄ ԿԳԿ-ին կից բարձր տեխ. կրթ. կոմիտեի հրահանգի պար. 20):

20. Հմայակ Գրիգորի Տեր-Ավագյանին հաստատել դոցենտի պաշտոնակատար՝ Հայաստանի պետհամալսարանի ֆիզիկայի ամբիոնի գծով՝ պարտավորեցնելով մինչև 1938 թ. հունվարի մեկը պաշտպանել ատենախոսություն՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար (հիմք՝ ԽՍՀՄ ԿԳԿ-ին կից բարձր տեխ. կրթ. կոմիտեի հրահանգի պար. 20):

21. Գրիգոր Հակոբի Հակոբյանին հաստատել դոցենտի պաշտոնակատար՝ Հայաստանի պետհամալսարանի տնտեսագիտական ամբիոնի գծով՝ պարտավորեցնելով մինչև 1938 թ. հունվարի մեկը պաշտպանել ատենախոսություն՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար (հիմք՝ ԽՍՀՄ ԿԳԿ-ին կից բարձր տեխ. կրթ. կոմիտեի հրահանգի պար. 20):

22. Ալեքսանդր Ֆադեյիչ Տեր-Հովհաննիսյանին հաստատել դոցենտի պաշտոնակատար՝ Հայաստանի պետհամալսարանի սոց. հաշվառման ամբիոնի գծով՝ պարտավորեցնելով մինչև 1938 թ. հունվարի մեկը պաշտպանել ատենախոսություն՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար (հիմք՝ ԽՍՀՄ ԿԳԿ-ին կից բարձր տեխ. կրթ. կոմիտեի հրահանգի պար. 20):

23. Մամիկոն Կարապետի Հովակիմյանին հաստատել դոցենտի պաշտոնակատար՝ պարտավորեցնելով մինչև 1938 թ. հունվարի մեկը պաշտպանել ատենախոսություն՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար (հիմք՝ ԽՍՀՄ ԿԳԿ-ին կից բարձր տեխ. կրթ. կոմիտեի հրահանգի պար. 20):

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 44, թ. 2-5)

1936

1935-36 ուստարում Երևանի պետական համալսարանի ուսանողների թիվը 1148 էր: Ըստ ֆակուլտետների և բաժինների՝ նրանք բաշխված էին հետևյալ կերպ. Տնտեսագիտական ֆակուլտետում՝ 298 ուսանող, Պատմագրական ֆակուլտետի պատմական բաժնում՝ 95, լեզվագրական բաժնում՝ 139, Քիմիական ֆակուլտետում՝ 175, Կենսաբանական ֆակուլտետում՝ 88, Աշխարհագրական ֆակուլտետում՝ 77, Գեոլոգիական (երկրաբանական) ֆակուլտետում՝ 89, Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում՝ 109, Իրավաբանական ֆակուլտետում՝ 78:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 70, ք. 1)

Երևանի պետական համալսարանում դասավանդում էր 117 դասախոս, սովորում էր 43 ասպիրանտ, գործում էին 11 լաբորատորիա, 7 կաբինետ և 2 արհեստանոց:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

Երևանի պետական համալսարանի ֆակուլտետներում գործում էին հետևյալ լաբորատորիաները և գիտական կաբինետները՝ Ֆիզմաթ ֆակուլտետում՝ էլեկտրաակուստիկական լաբորատորիան և ֆիզիկա-մաթեմատիկական կաբինետը, Բիոլոգիական ֆակուլտետում՝ բիոքիմիական լաբորատորիան և բիոլոգիական կաբինետը, Իրավաբանական ֆակուլտետում՝ իրավաբանական կաբինետը, Պատմական ֆակուլտետում՝ Ն. Մառի անվան կաբինետը, Լեզվի և գրականության ֆակուլտետում՝ Շ. Ռուսթավելու անվան կաբինետը:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 53, ք. 5)

23 հունվարի – Երևանի պետական համալսարանի կուսակցական կոմիտեի նիստում որոշվեց, որ անհրաժեշտ և նպատակահար-

մար է շարունակել «Հարվածային ուսանող» քերթի հրատարակությունը, որը խոշոր դեր է կատարում ուսանողների շրջանում ծավալված կուսակցական աշխատանքներում և օգնում է համալսարանի կուսակցական կազմակերպությանը: Որոշվեց նաև ՀԿ(բ)Կ Երևանի կոմիտեի միջոցով խնդրել ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի բաժնին՝ միջնորդելու ՀամԿ(բ)Կ Կենտկոմի բաժնի առաջ թույլ տալ շարունակելու քերթի հրատարակությունը:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 166, ց. 1, գ. 45, ք. 9)

9 փետրվարի – Երևանի պետական համալսարանի կուսակցական կոմիտեն, քննարկելով Կարմիր բանակ-համալսարան կապը ակտիվացնելու խնդիրը, որոշեց կապ հաստատել Հ.Հ. դիվիզիայի քաղ. բաժնի և Կարմիր բանակի տան պետի հետ՝ համատեղ կազմելու դասախոսությունների ծրագիր, կազմակերպելու դասախոսություններ, ինչպես նաև փոխադարձ այցելություններ՝ զինվորներին համալսարանի լաբորատորիաներին և նվաճումների ծանոթացնելու համար:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 166, ց. 1, գ. 45, ք. 13)

19 փետրվարի – Երևանի պետական համալսարանի կուսակցական կոմիտեն քննարկեց պատմության հարցերի վերաբերյալ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի որոշումները, ինչպես նաև Ի. Ստալինի, Կիրովի և Ժդանովի կողմից պատմության դասագրքերի կոնսպեկտների առիթով արված դիտողությունների կապակցությամբ համալսարանում հրավիրված պատմության ամբիոնների խորհրդակցությունների արդյունքները, ինչպես նաև Պատմագրական ֆակուլտետի և ամբիոնների ուղղությամբ առաջիկայում կատարվելիք աշխատանքների հարցը: Կուսկոմիտեի նիստը որոշում կայացրեց.

1. Արագացնել Պատմագրական ֆակուլտետի բաժանումը երկու ինքնուրույն ֆակուլտետների՝ Պատմական և Գրական-լեզվական:

2. Քանի որ արդեն կազմակերպչորեն լուծված էր Պատ-

մագրական ֆակուլտետի պատմական բաժնում Հայաստանի և ընդհանուր պատմության ցիկլերի ստեղծման հարցը, խնդրել ղեկավարությանը նոր դասախոսներ հրավիրել ինչպես դրսից, այնպես էլ Հայաստանից: Այս կապակցությամբ մասնավորապես Հայաստանի պատմության ցիկլի համար անհրաժեշտ համարել Հայաստանի մշակույթի և հին գրականության պատմության դասավանդումը 1936-37 ուստարում:

Կուսկոմիտեի նիստում ընդունված մի շարք որոշումների հետ հավանության տրվեց Հայաստանի պատմության ամբիոնի առաջարկին՝ հին շրջանից մինչև նորագույն շրջանը Հայաստանի պատմությունը միևնույն ամբիոնում կենտրոնացնելու մասին: Որոշվեց նաև խնդրել ղեկավարությանը նախապատրաստել հարցի կոնկրետ լուծումն այն հաշվով, որ ընթացիկ տարվա մարտ ամսից այդ ամբիոնները միացվեն:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 166, ց. 1, գ. 45, ք. 28-29)

4 ապրիլի – Երևանի պետական համալսարանի կուսակցական կոմիտեի նիստում քննարկելով գերազանցիկ ուսանողների շրջանում աշխատանք ծավալելու հարցը՝ որոշվեց.

1. Հանձնարարել Արհկոմի նախագահին, տնտեսական և ուսումնական մասերին մշակել հստակ միջոցառումներ՝ համալսարանի գերազանցիկներին օգնելու ուսումնամեթոդական, տնտեսական և կուլտուրական սպասարկման ուղղությամբ (գրականություն, ամբիոնների կողմից հատուկ օգնություն, լրիվ ընդգրկում գիտական խմբակներում, հնարավորության սահմաններում մասնագիտական գրականության օգնություն ղեկավարության միջոցներից), կազմակերպել հանրակացարանում բնակվողների լույսի, գույքի և այլ միջոցների ապահովումը, կուլտսպասարկման գծով օգնություն՝ կլինո, թատրոն, օպերա և այլն:

2. Հանձնարարել «Հարվածային ուսանող» թերթի խմբագրին հրավիրել պատի թերթերի խմբագրական կոլեգիաների նախագահների հատուկ խորհրդակցություն, որտեղ պետք է քննության առնեն գերազանցիկների շարժման ծավալման,

նրանց օգնության, աշխատանքների փորձի փոխանակման խնդիրները և մամուլի անելիքները այդ ուղղությամբ: Միաժամանակ անհրաժեշտ համարել «Հարվածային ուսանող»-ում և բոլոր պատի թերթերում ունենալ գերազանցիկների հատուկ բաժին: Բացի այդ՝ որոշվում է ստեղծել գերազանցիկների անկյուն, լավագույն հարվածայինների հաշվին համալրել գերազանցիկների շարքերը, մայիսի կեսերին հրավիրել գերազանցիկների խորհրդակցություն, ինչպես նաև հանձնարարել ղեկավարությանը և Արհկոմին առաջին հերթին կարիքավոր գերազանցիկներին ուղարկել առողջարաններ և հանգստյան տներ:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 166, ց. 1, գ. 45, ք. 63)

20 մայիսի – Տեղի ունեցավ համալսարանի կուսակցական կազմակերպության դռնփակ ժողով, որտեղ լսեցին համալսարանի աշխատանքների մասին ՀԿ(բ)Կ Կենտկոմի ապրիլի 16-ի որոշումը (զեկուցող՝ Վ. Կոստանյան): Միաժամանակ քննարկվեցին այդ որոշումից բխող ու համալսարանի ղեկավարության ձեռնարկած միջոցառումների և ուսումնական գործընթացում առկա թերությունների վերացման հարցերը:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 166, ց. 1, գ. 43, ք. 9-12)

հունիս – Համալսարանը տալիս է 128 շրջանավարտ՝ 18 ֆիզիկոս և մեխանիկոս-մաթեմատիկոս, 31 քիմիկոս, 27 կենսաբան, 29 տնտեսագետ, 12 իրավաբան, 11 բանասեր:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

15 հուլիսի – Երևանի պետական համալսարանի մեծ դահլիճում երեկոյան ժամը 8-ին հրավիրվեց Պետական համալսարանի, Պոլիտեխնիկական, Գյուղատնտեսական, Բժշկական ինստիտուտների և Գյուղատնտեսական բարձրագույն դպրոցի կուսակցական կազմակերպությունների միացյալ դռնփակ ժողով՝ հիմնականում քննարկելու Աղասի Խանջյանի ինքնասպանության

հարցը: Ժողովին մասնակցում էին նաև ՀԿ(Բ)Կ Կիրովի շրջկոմի քարտուղարը և Երկոմի ազիտ. պրոպ. բաժնի վարիչը: Ժողովին ներկա էր 141 հոգի: Նրանք լսեցին Կիրովի շրջկոմի քարտուղարի զեկուցումը՝ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախկին քարտուղար Ա. Խանջյանի ինքնասպանության հանգամանքների մասին: Ելույթ ունեցողները Ա. Խանջյանին (անհիմն - **Ժ. Մ.**) մեղադրեցին մի շարք հանցագործությունների մեջ: Ա. Խանջյանին մեղադրեցին նաև Ա. Բակունցին, Ե. Չարենցին, Վ. Ալազանին, Վ. Թոթովենցին և ազգային դիմագիծ ունեցող այլ հայրենասեր մտավորականների հովանավորելու համար: Ժողովում հնչած ելույթներում մեղադրում էին համալսարանի կուսակցական կազմակերպությանը համալսարանում, այսպես կոչված, հակահեղափոխական տարրերի դեմ վատ պայքարելու համար: Ի վերջո առաջարկություն արվեց խնդրել ԽՍՀՄ Կենտգործկոմին հետ վերցնել ժամանակին Ադասի Խանջյանին շնորհված Լենինի և Աշխատանքային դրոշի շքանշանները: Միաժամանակ ժողովն անհանդուրժելի համարեց, որ այդուհետև որևէ հիմնարկություն, ձեռնարկություն, կազմակերպություն և բնակավայր չարունակեն կրել Ա. Խանջյանի անունը, ուստի որոշվեց խնդրել Կենտգործկոմին վերանայել այդ հարցը¹⁵:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 166, ց. 1, գ. 43, ք. 33-32)

1937

1936-37 ուստարում Երևանի պետական համալսարանի ուսանողների թիվը 1232 էր: Ըստ ֆակուլտետների և բաժինների՝ նրանք բաշխված էին հետևյալ կերպ. Տնտեսագիտական ֆակուլտետում՝ 268 ուսանող, Պատմական ֆակուլտետում՝ 122, Լեզվագրական ֆակուլտետում՝ 153, Քիմիական ֆակուլտետում՝ 177, Կենսաբանական ֆակուլտետում՝ 96, Աշխարհագրական-գեոլոգիական (երկրաբանական) ֆակուլտետում՝ 186, Ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում՝ 127, Իրավաբանական ֆակուլտետում՝ 103:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 70, ք. 1)

Երևանի պետական համալսարանում դասավանդում էր 124 դասախոս, սովորում էր 37 ասպիրանտ, գործում էին 11 լաբորատորիա, 7 կաբինետ և 2 արհեստանոց:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

Երևանի պետական համալսարանի ֆակուլտետներում գործում էին հետևյալ լաբորատորիաները և գիտական կաբինետները՝ Աշխարհա-երկրաբանական ֆակուլտետում՝ գեոլոգիայի կաբինետը, Քիմիական ֆակուլտետում՝ քիմիայի, կաուչուկի կաբինետները, Պատմության ֆակուլտետում՝ Մարքս-Լենինիզմի կաբինետը, Լեզվի և գրականության ֆակուլտետում՝ հայ գրականության կաբինետը, Տնտեսագիտության ֆակուլտետում՝ հաշվային կաբինետը:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 53, ք. 5)

Համալսարանի գիտական գրադարանում կատարվում են կառուցվածքային փոփոխություններ. ձևավորվում է գրականության մշակման ու համալրման միացյալ բաժինը, բացվում է 4 ընթերցասրահ (բանասիրական գիտությունների, պատմության, ֆիզիկայի

և քիմիայի, էկոնոմիկայի և իրավունքի), գիտական աշխատողների կաթինետ: Ստեղծվում է գրադարանային խորհուրդ:

(Տե՛ս Ասլանյան Վ., Հայրապետյան Հ., Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանը, Երևան, 2001, էջ 4)

Նկատի ունենալով քիմիական գիտության բնագավառում Ստեփան Պողոսի Ղամբարյանի ծառայությունները՝ նրան առանց ատենախոսության պաշտպանության շնորհիվ քիմիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

(Տե՛ս Մեր անվանի դասախոսները, մաս I, խմբ.՝ Ներսիսյան Մ., Թադևոսյան Թ., Պիվազյան Էմ., Երևան, 1970, էջ 153)

17 հունվարի – ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն Միքայել Ենգիբարյանին հաստատում է Երևանի պետական համալսարանի ռեկտոր (պաշտոնավարել է մինչև 1937 թ. ապրիլի 30-ը):

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4, ց. 2, գ. 2549, ք. 14, տե՛ս նաև Երևանի պետական համալսարանի ռեկտորները (1919-1999), կազմ.՝ Ղարիբջանյան Լ. Պ., Երևան, 1999, էջ 48-51)

26 փետրվարի – Երևանի պետական համալսարանի ամբիոնների միացյալ խորհրդակցության ժամանակ քննարկվում են ամբիոնային բազմաթիվ խնդիրներ, որոնք խոչընդոտում էին համալսարանում ուսումնական գործընթացի կազմակերպումը:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 4, գ. 16, ք. 12)

15 մարտի – Հայ բարեգործական ընդհանուր միության վարիչ-պատվիրակ Վ. Մալեզյանը նամակով դիմում է ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ա. Գուլոյանին: Նամակում մասնավորապես նշված է. «...1924-ին մեր ողբացեալ Հիմնադիր-Նախագահը Պօղոս Նուպար Փաշա մասնաւոր հիմնադրամ մը յանձնած է մեր Միութեան, տարեկան եկամուտը որպէս Նուպարեան մրցանակ յատկացուելու համար Երեւանի Համալսարանի յաջողագոյն

շրջանաւարտներուն, այն պայմանաւ որ այդ գումարը գործածուի ուղեւորութեան ծախսերուն եւ այն առաւելութեամբ նաեւ որ առաջին մրցանակի պսակաւորը Պրիսէլի Նուպարեան Սաներու Հիմնարկութունէն ստանա պուրս (կրթաթոշակ) մը, Եւրոպայի մէջ իր մասնագիտութիւնը կատարելագործելու համար: Յաւալի է արդարեւ որ ցարդ հմար չեղաւ գործադրել Հիմնադրին կամքը եւ առաջին երկու տարիները որկուած գումարը (անգլ. ոսկի 217.16-) լրիւ չի գործածուեցաւ իր բուն նպատակին, իսկ յաջորդ տարիներու եկամուտները դիգում մնացին մեր մօտ: ...Այդ համգամանքներուն մէջ, Կեդր. Վարչական ժողովը հարկադրուած է այդ հիմնադրամին կանոնադրութեան մէջ մտցնել հետեւեալ յաւելումը, որպէսզի կարող ըլլայ ժամանակին այդ հիմնադրամը ծառայեցնել համապատասխան նպատակին իսկ առանց յետաձգումի.-»:

Առաջարկվող հավելվածը հետևյալն էր. «Ամէն տարուան ընթացքին, երբ Երեսնի Պետ. Համալսարանի կամ անոր կողմէ նշանակուած Հաստատութիւնը մինչեւ 31 Յուլիսի չի հաղորդէ համալսարանական մրցանակներուն պսակաւորները կամ առաջարկէ Հիմնադրին կամքին համապատասխան յատկացում մը, տրամադրելի տարեկան գումար եկամուտը, որ պէտք էր յատկացուէր այդ տարեշրջանին, պիտի յանձնուի Նուպարեան Սաներու Հիմնարկութեան, յատկացուելու համար իբրեւ ուսանողական պուրս Հ. Բ. Ը. Սիւրբեան կողմէ յանձնարարուած թեկնածուներուն, երբ այդ Հիմնարկութեան Կանոնագրին պայմանները կը լրացնեն»:

(ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 1745, ք. 11 և հակ. կողմ, տե՛ս նաև Մելքոնյան Էդ. Լ., Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւնը Խորհրդային Հայաստանում 1923-1937 թթ., Երևան, 1999, էջ 52-53)

23 մարտի – Երևանի քաղաքային խորհուրդը (հարցման կարգով) լսեց «Կոզեր» կոչվող հին գերեզմանատան տարածքում Երևանի պետական համալսարանի շէնքի կառուցման հարցը. որոշեցին շինարարության համար հատկացնել այդ տարածքը՝ մոտ 12 հեկտար, որը հյուսիս-արևելքից սահմանակից էր Նոր Արաբկիւրի հին ճանապարհին, հարավից՝ «Տրետիայա Կրուգովայա»,

արևմուտքից՝ «Սադովայա դորոգա»-ին՝

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. Ե-1, ց. 2, գ. 26, ք. 159)

ապրիլ – Երևանի պետական համալսարանի ռեկտոր է նշանակվում Հենրի Գաբրիելյանը (պաշտոնավարել է մինչև 1937 թ. օգոստոս):

(Տե՛ս Երևանի պետական համալսարանի ռեկտորները (1919-1999), կազմ.՝ Ղարիբջանյան Լ. Պ., Երևան, 1999, էջ 53-56)

հունիս – Համալսարանը տալիս է 178 շրջանավարտ՝ 16 ֆիզիկոս և մեխանիկոս-մաթեմատիկոս, 32 քիմիկոս, 16 աշխարհագրագետ, 16 պատմաբան, 55 տնտեսագետ, 25 իրավաբան, 18 բանասեր:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

2 հունիսի – Տեղի ունեցավ Երևանի պետական համալսարանի կուսակցական կոմիտեի նիստը, որտեղ լսեցին համալսարանի ռազմական ամբիոնի՝ 1937-38¹⁶ ուսումնական տարվա ընթացքում կատարած աշխատանքների, ինչպես նաև կոմերիտական կազմակերպության քաղուսուցման աշխատանքների մասին: Զննարկելով վերջին հարցը՝ որոշվեց.

1. Հանձնարարել ԼԿԵՄ կոմիտեին լուրջ աշխատանք ծավալել պրոպագանդիստական աշխատանքներն ուժեղացնելու համար:

2. Վերանայել պրոպագանդիստների կազմը՝ այն լրացնելով ստուգված ու պատրաստված կուսակցական-կոմերիտականներով:

3. Միանգամայն անհրաժեշտ համարել 1937-38 ուսումնական տարվա սկզբից կուսակցական կաբինետում կուս. և ԼԿԵՄ պրոպագանդիստների համար սեմինարների կազմակերպումը:

4. Հանձնարարել ԼԿԵՄ կոմիտեի բոլոր քաղխմբակներն ապահովել քարտեզներով, համապատասխան դիագրամներով և նյութերի ձևավորման (իլյուստրացիայի) համար անհրաժեշտ պարագաներով:

Բացի վերը նշվածներից՝ որոշվեց նաև 1936-37 ուսումնական տարվա աշխատանքները ավարտել Երևանում «Անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը» կազմակերպված ցուցահանդեսը դիտելու էքսկուրսիաներով:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 166, ց. 1, գ. 52, ք. 63-64, 75)

8 օգոստոսի – Պետական համալսարանի ռեկտոր է նշանակվում Անուշավան Արզումանյանը (պաշտոնավարել է մինչև 1937 թ. հոկտեմբերի 5-ը):

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 10, գ. 82, ք. 1, 7,
տե՛ս նաև Երևանի պետական համալսարանի ռեկտորները
(1919-1999), կազմ.՝ Ղարիբջանյան Լ. Պ., Երևան, 1999, էջ 58-60)

5 հոկտեմբերի – ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի որոշմամբ ՀԽՍՀ պետական համալսարանի ռեկտոր է նշանակվում Նորայր Դաբադյանը (պաշտոնավարել է մինչև 1937 թ. նոյեմբեր ամիսը):

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 1, գ. 10, ք. 19,
տե՛ս նաև Երևանի պետական համալսարանի ռեկտորները
(1919-1999), Ղարիբջանյան Լ. Պ., Երևան, 1999, էջ 62-63)

16 նոյեմբերի – ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի որոշմամբ Երևանի պետական համալսարանի ռեկտոր է նշանակվում Կամսար Առաքելյանը (պաշտոնավարել է մինչև 1938 թ. հունվար ամիսը):

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 123, գ. 2193, ք. 10,
նույն տեղում ց. 61, գ. 3091, ք. 14,
տե՛ս նաև Երևանի պետական համալսարանի ռեկտորները
(1919-1999), Ղարիբջանյան Լ. Պ., Երևան, 1999, էջ 65-66)

1938

1937-38 ուստարում Երևանի պետական համալսարանի ուսանողների թիվը 1344 էր: Ըստ ֆակուլտետների և բաժինների՝ նրանք բաշխված էին հետևյալ կերպ. Տնտեսագիտական ֆակուլտետում՝ 230 ուսանող, Պատմության ֆակուլտետում՝ 140, Ֆիլոլոգիական ֆակուլտետում՝ 185, Բիմիական ֆակուլտետում՝ 202, Կենսաբանական ֆակուլտետում՝ 127, Աշխարհագրական-գեոլոգիական (երկրաբանական) ֆակուլտետում՝ 212, Ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում՝ 156, Իրավաբանական ֆակուլտետում՝ 92:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 70, ք. 1)

Երևանի պետական համալսարանում դասավանդում էր 133 դասախոս, սովորում էր 44 ասպիրանտ, գործում էին 14 լաբորատորիա, 10 կաբինետ և 2 արհեստանոց:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

Երևանի պետական համալսարանում պաշտպանվեց առաջին թեկնածուական ատենախոսությունը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 19 հոկտեմբերի 1960)

Ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում սկսում է գործել մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոնը (մինչև 1978 թ. այն ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, պրոֆեսոր Ա. Շահինյանը): Այս ամբիոնում են սկսվել ֆունկցիաների տեսության գծով առաջին արդյունավետ հետազոտությունները, որոնք հետագայում շարունակվել են ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի ինստիտուտի հետ համագործակցելով:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, պատ. խմբ.՝ Ղարիբյան Գ., Երևան, 1981, էջ 43)

Հակոբ Մանանդյանին շնորհվում է պատմական գիտությունների դոկտորի աստիճան:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 203)

Քիմիական ֆակուլտետում ստեղծվում է անալիտիկ քիմիայի ամբիոն:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 14, գ. 12, ք. 8)

Համալսարանին կից կազմակերպվում է լեկտորիում, որի խնդիրն էր գիտելիքների հանրայնացում աշխատավորների մեջ հանրային դասախոսություններ կազմակերպելու միջոցով:

(Տե՛ս Պետրոսյան Գ., Երևանի պետական համալսարանը, Երևան, 1941, էջ 34)

Աշխարհագրական և Երկրաբանական ֆակուլտետները կրկին միացվում են, և միացյալ՝ Աշխարհագրական-երկրաբանական ֆակուլտետի ղեկան է նշանակվում դոցենտ, հետազայում պրոֆեսոր Հ. Ստեփանյանը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, պատ. խմբ.՝ Ղարիբյան Գ., Երևան, 1981, էջ 189)

Համալսարանում կազմակերպվում է ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ամբիոնը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մաղոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 50)

Համալսարանում ստեղծվում է ռուսաց լեզվի և գրականության բաժին: Այդ հանգամանքը հնարավորություն տվեց զգալիորեն բարելավելու ռուսաց լեզվի դրվածքը ինչպես միջնակարգ դպրոցներում, այնպես էլ բուհերում:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մաղոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 122)

հունիսի – Երևանի պետական համալսարանի ռեկտոր է նշանակվում Գարեգին Պետրոսյանը (պաշտոնավարել է մինչև 1941 թ. սեպտեմբեր ամիսը, որից հետո կամավոր մեկնել է ռազմաճակատ):

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 1, գ. 12, թ. 3, տե՛ս նաև Երևանի պետական համալսարանի ռեկտորները (1919-1999), կազմ.՝ Ղարիբջանյան Լ. Պ., Երևան, 1999, էջ 68-73)

հունիս – Համալսարանը տալիս է 201 շրջանավարտ՝ 10 ֆիզիկոս և մեխանիկոս-մաթեմատիկոս, 28 քիմիկոս, 19 երկրաբան, 17 կենսաբան, 15 պատմաբան, 66 տնտեսագետ, 23 իրավաբան, 23 բանասեր:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, թ. 28)

14 նոյեմբերի – ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշման հիման վրա Երևանի պետական համալսարանի լենինիզմի և կուսակցության պատմության ամբիոնը վերանվանվում է մարքսիզմ-լենինիզմի հիմունքների ամբիոն, որի վարիչ է նշանակվում դոց. Ղ. Վարդապետյանը (1956 թ. ամբիոնը վերանվանվում է ԽՄԿԿ պատմության ամբիոն):

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մադոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 108)

1939

1938-39 ուստարում Երևանի պետական համալսարանի ուսանողների թիվը 1580 էր: Ըստ ֆակուլտետների և բաժինների՝ նրանք բաշխված էին հետևյալ կերպ. Տնտեսագիտական ֆակուլտետում՝ 247 ուսանող, Պատմության ֆակուլտետում՝ 175, Ֆիլոլոգիական ֆակուլտետում՝ 283, Զինիական ֆակուլտետում՝ 216, Կենսաբանական ֆակուլտետում՝ 145, Աշխարհագրական ֆակուլտետում՝ 113, Գեղարվեստական (երկրաբանական) ֆակուլտետում՝ 132, Ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում՝ 171, Իրավաբանական ֆակուլտետում՝ 98:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 70, ք. 1)

Երևանի պետական համալսարանում դասավանդում էր 136 դասախոս, սովորում էր 41 ասպիրանտ, գործում էին 7 լաբորատորիա, 16 կաբինետ և 2 արհեստանոց:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

Ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում ստեղծվում է ընդհանուր ֆիզիկայի ամբիոն, որի վարիչ է նշանակվում դոց. Ռ. Հովհաննիսյանը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մադոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 53)

Հ. Մանանդյանը ընտրվում է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ:

(Տե՛ս Մեր անվանի դասախոսները, մաս I, խմբ.՝ Ներսիսյան Մ., Թադևոսյան Թ., Պիվազյան Էմ., Երևան, 1970, էջ 160)

Հաստատվեց Երևանի պետական համալսարանի նոր կանոնադրությունը:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 66, ք. 1-32)

16-22 մայիսի – Երևանի պետական համալսարանում ռեկտորատը կազմակերպում է ուսանողական առաջին գիտական կոնֆերանսը, որին մասնակցում էր 23 ուսանող:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 117, ք. 1)

հունիս – Երևանի պետական համալսարանը ցերեկային ուսուցման գծով տալիս է 267 շրջանավարտ՝ 14 ֆիզիկոս և մեխանիկոս-մաթեմատիկոս, 38 քիմիկոս, 29 երկրաբան, 25 աշխարհագրագետ, 15 կենսաբան, 33 պատմաբան, 57 տնտեսագետ, 31 իրավաբան, 25 բանասեր:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

1940

1939-40 ուստարում Երևանի պետական համալսարանի ուսանողների թիվը 1718 էր: Ըստ ֆակուլտետների և բաժինների՝ նրանք բաշխված էին հետևյալ կերպ. Տնտեսագիտական ֆակուլտետում՝ 236 ուսանող, Պատմության ֆակուլտետում՝ 211, Ֆիլոլոգիական ֆակուլտետում՝ 363, Զինիական ֆակուլտետում՝ 228, Կենսաբանական ֆակուլտետում՝ 170, Աշխարհագրական-գեոլոգիական՝ (երկրաբանական) ֆակուլտետի աշխարհագրական բաժնում՝ 115, և գեոլոգիական բաժնում՝ 116, Ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում՝ 183, Իրավաբանական ֆակուլտետում՝ 96:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 70, ք. 1)

Երևանի պետական համալսարանում դասավանդում էր 147 դասախոս, սովորում էր 42 ասպիրանտ, գործում էին 11 լաբորատորիա, 13 կաբինետ և 2 արհեստանոց:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

Համալսարանի գիտական գրադարանի գրքային ֆոնդը կազմում էր 135.000 տպագրական միավոր, որից գույքագրման ենթարկված էր մոտ 80.000-ը, մոտ 50.000-ի համար կազմված էր այբբենական գրացուցակ, իսկ 20.000-ի համար՝ համակարգված գրացուցակ, այսինքն՝ հիմնադրման պահից մինչև 1940 թ. ամբողջովին մշակված էր ընդամենը 20.000-ը:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 68, ք. 1)

Երևանի պետական համալսարանում գործում էր 41 ամբիոն:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 39, ք. 5-6)

1 փետրվարի – Համալսարանի ռեկտորատի նիստի օրակարգում դրված էր նոր կազմավորվող ամբիոնների հաստիքացուցակների (գեկուցող՝ Ալ. Մելիքյան) և շրջանավարտների բաշխման հարցերը (գեկուցող՝ Գ. Պետրոսյան): Նոր բացվող ամբիոնների ցուցակի՝ Ալ. Մելիքյանի կողմից ներկայացվելուց հետո որոշվեց Լուսժողկոմատի միջոցով բարձրագույն կրթության կոմիտեի առաջ հարց բարձրացնել համալսարանում կազմավորելու նոր ամբիոններ՝ որոշ դեպքերում կատարելով արդեն իսկ եղած ամբիոնների բաժանում:

1) Պատմության ֆակուլտետում հիմնել հնագիտության (արխեոլոգիայի) ամբիոն:

2) Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում գոյություն ունեցող գեոլոգիայի ամբիոնից առանձնացնել և ստեղծել՝ ա) օգտակար հանածոների և գեոքիմիայի ամբիոն, բ) պատմական գեոլոգիայի և պալեոնտոլոգիայի ամբիոն:

3) Ֆիլոլոգիական ֆակուլտետի ընդհանուր լեզվաբանության և հայոց լեզվի ամբիոնի փոխարեն ստեղծել՝ ա) հայոց լեզվի ամբիոն, բ) ընդհանուր լեզվաբանության ամբիոն:

4) Ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետի անալիզի ամբիոնից առանձնացնել և ստեղծել նոր՝ դիֆերենցիալ հավասարումների ամբիոն:

5) Տնտեսագիտական ֆակուլտետում հիմնել խորհրդային առևտրի էկոնոմիկայի և պլանավորման ամբիոն:

6) Բիոլոգիական ֆակուլտետի գոլոգիայի ամբիոնը բաժանել երկու ամբիոնի՝ ա) ողնաշարավորների ամբիոն, բ) անողնաշարավորների ամբիոն:

Բացի վերը նշվածից՝ նիստում որոշվեց, որ դեկանները նոր բացվող ամբիոնների մանրամասն գործառույթները պետք է ներկայացնեն ուսումնական մաս: Ինչ վերաբերում է շրջանավարտների բաշխման հարցին, ապա որոշվեց. 1) նախօրոք՝ վեց ամիս առաջ, բոլոր շրջանավարտներին անխտիր նշանակել աշխատանքի, 2) պետական քննություններն ավարտելուց հետո որոշել, թե ում պետք է թույլատրել ասպիրանտական քննություններին: Մի քանի տեխնիկական հարցերից բացի՝ որոշվեց

մաս խնդրել Լուսժողկոմատին ուսանողների նշանակման աշխատանքներն ավարտել ոչ ուշ, քան մինչև 1940 թ. մարտի 5-ը:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 4, գ. 18, ք. 11-12)

13 մարտի – Բարձրագույն դպրոցի գործերի համամիութենական կոմիտեի որոշման մեջ արձանագրված է. «Երևանի պետական համալսարանը դառնում է Հայաստանի գիտահետազոտական աշխատանքի և գիտական ու մանկավարժական կադրերի պատրաստման խոշոր կենտրոն և իր աշխատանքի մեջ ձեռք է բերել մի շարք նվաճումներ»:

(Պետրոսյան Գ., Երևանի պետական համալսարանը, Երևան, 1941, էջ 19-20)

28 մարտի – Բարձրագույն դպրոցի գործերի համամիութենական կոմիտեի նախագահ Ս. Կաֆտանովի հրամանով Խորհրդային Հայաստանի լուսժողկոմի բարձրագույն ուսումնական հաստատությունների, ֆակուլտետների 1940-41 ուստարվա ընդունելության համար հաստատվում է արտադրությունից կտրված 1560 տեղ, որից 600-ը համալսարանին էր հատկացվում:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 24, ք. 7)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է ցերեկային ուսուցման 248 շրջանավարտ՝ 14 ֆիզիկոս և մեխանիկոս-մաթեմատիկոս, 28 քիմիկոս, 23 երկրաբան, 31 աշխարհագրագետ, 17 կենսաբան, 38 պատմաբան, 37 տնտեսագետ, 32 իրավաբան, 28 բանասեր:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

11 հուլիսի – Ռեկտորի աշխատասենյակում տեղի է ունենում խորհրդակցություն դեկանների, կուսակցական, կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Օրակարգում ասպիրանտների 1939-40 թթ. աշխատանքների ամփոփումը և 1940 թ. ընդունելության նախապատրաստման հարցերն էին: Լսելով 1940 թ.

շրջանավարտներից ասպիրանտական քննություններին մասնակցելու հարցը՝ որոշվում է թույլատրել միայն գերազանցիկներից: Առաջադրվում են հետևյալ շրջանավարտները՝

1. Մոլոտովյան Մելիք (Պատմության ֆակ.),
2. Բաղմանյան Անդրանիկ (Պատմության ֆակ.),
3. Սարգսյան Սուրեն (Պատմության ֆակ.),
4. Ոսկանյան Արմենակ (Աշխարհագրական ֆակ.),
5. Թադևոսյան Գևորգ (Իրավաբանական ֆակ.),
6. Պարտիզունի Վաչե (Ֆիլոլոգիական ֆակ.),
7. Բաղդասարյան Արտո (Ֆիլոլոգիական ֆակ.),
8. Սամվելյան Կարապետ (Տնտեսագիտական ֆակ.),
9. Բուդաղյան Գևորգ (Իրավաբանական ֆակ.),
10. Ավետիսյան Արևհատ (Կենսաբանական ֆակ.):

Այնուհետև լսելով 1940-41 ուստարվա ուսանողների ընդունելության հանձնաժողովների հարցը՝ հաստատում են հետևյալ հանձնաժողովները՝ հայոց լեզվի և գրականության 2 հանձնաժողով, ռուսաց լեզվի և գրականության 2 հանձնաժողով, օտար լեզուների հանձնաժողով, պատմության հանձնաժողով, աշխարհագրության հանձնաժողով, ֆիզիկայի հանձնաժողով, մաթեմատիկայի հանձնաժողով, քիմիայի հանձնաժողով:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ, 20, ց. 4, գ. 18, ք. 117-121)

1 սեպտեմբերի – Հր. Աճառյանի ղեկավարությամբ ստեղծվեց արևելյան բանասիրության ամբիոն, Բանասիրական ֆակուլտետի կազմում բացվեց արևելյան լեզուների և գրականության բաժին՝ երկու ճյուղերով՝ իրանական և արաբական:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մաղոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 134)

1941

1940-41 ուստարում Երևանի պետական համալսարանի ուսանողների թիվը 1461 էր: Ըստ ֆակուլտետների և բաժինների՝ նրանք բաշխված էին հետևյալ կերպ. Տնտեսագիտական ֆակուլտետում՝ 170 ուսանող, Պատմության ֆակուլտետում՝ 174, Ֆիլոլոգիական ֆակուլտետում՝ 355, Զինիական ֆակուլտետում՝ 191, Կենսաբանական ֆակուլտետում՝ 157, Աշխարհագրական-գեոլոգիական ֆակուլտետի (երկրաբանական) աշխարհագրական բաժնում 76, գեոլոգիական բաժնում՝ 94, Ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում՝ 157, Իրավաբանական ֆակուլտետում՝ 87:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 70, ք. 2)

Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանում դասավանդում էր 158 դասախոս, սովորում էր 54 ասպիրանտ, գործում էին 12 լաբորատորիա, 13 կաբինետ և 2 արհեստանոց:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

5 փետրվարի – Բավարարելով Հայկական ԽՍՀ խորհրդային և կուսակցական ղեկավար մարմինների միջնորդությունը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշմամբ, Երևանի պետական համալսարանը կոչվեց Վ. Մ. Մոլոտովի անունով:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 3, ք. 21,
տե՛ս նաև ԵՊՀ արխիվ, ց. 1, գ. 1 (կող 9), ք. 2)

հունիս – Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանը տալիս է ցերեկային ուսուցման 294 շրջանավարտ՝ 18 ֆիզիկոս և մեխանիկոս-մաթեմատիկոս, 37 քիմիկոս, 14 երկրաբան, 18 աշխարհագրագետ, 44 կենսաբան, 33 պատմաբան, 36 տնտեսագետ, 34 իրավաբան, 60 բանասեր:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

22 հունիսի – Սկսվում է Հայրենական մեծ պատերազմը:

(Տե՛ս Ենգոյան Փ., Երևանի համալսարանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Երևան, 1975, էջ 9)

25 հունիսի – Համալսարանի մի խումբ ուսանողներ, այդ թվում՝ աղ-ջիկներ, զինվորական կոմիսարիատում հարցում են անում, թե երբ կարող են մեկնել Կարմիր բանակ կամ կարո՞ղ են ցուցակագրվել կամավորական ջոկատներում: Համալսարանի 850 ուսանողներ ու դասախոսներ մեկնեցին բանակ՝ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին:

(Տե՛ս Ենգոյան Փ., Երևանի համալսարանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Երևան, 1975, էջ 11,
Բունիաթյան Հ., Գիտության օջախը, տե՛ս
«Սովետական Հայաստան» հասարակական-քաղաքական և գրական գեղարվեստական պատկերազարդ ամսագիր, N 1, Երևան, 1945, էջ 28)

12 հուլիսի – Համալսարանում հրավիրվում է ուսանողական հավաք, որտեղ քննարկվում է բերքահավաքի ժամանակ գյուղի աշխատավորությանն օգնելու հարցը: Հավաքում որոշում ընդունվեց մեկնելու գյուղական շրջաններ և փոխարինելու ռազմաճակատ մեկնած կոլտնտեսականներին:

(Տե՛ս Ենգոյան Փ., Երևանի համալսարանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Երևան, 1975, էջ 12)

30 օգոստոսի – Համալսարանում տեղի է ունենում ուսանողության և դասախոսական կազմի ժողով: Զեկուցումով հանդես է գալիս համալսարանի ռեկտոր Գարեգին Պետրոսյանը: Նա ներկայացնում է նոր ուսումնական տարում ռեկտորատի, կուսակցական ու հասարակական կազմակերպությունների և դասախոսական կազմի անելիքները, ուսումնադաստիարակչական աշխատանքի առանձնահատկությունները և կադրերի պատրաստման գործում պատերազմական ժամանակաշրջանում առաջադրվող նոր խնդիրները:

(Տե՛ս Ենգոյան Փ., Երևանի համալսարանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Երևան, 1975, էջ 14)

16 սեպտեմբերի – Համալսարանում հրավիրվում է կուսակցական և կոմերիտական ակտիվի միացյալ նիստ: Հրապարակվում է ՀԿԿ Կենտկոմի որոշումը՝ բոլոր հիմնարկություններում աշխատող կազմակերպելու մասին: Այդ որոշման մեջ ասված էր, որ պատերազմի պայմաններում հանրապետության կուսակցական ու հասարակական կազմակերպությունների կարևորագույն խնդիրներից մեկն էլ այն է, որ նրանց ջանքերով քաղաքներում, գյուղերում, կոլտնտեսություններում, սովխոզներում, ձեռնարկություններում ու բարձրագույն ուսումնական հաստատություններում ստեղծվեն ժողովրդական աշխատողներ և զարկ տրվի աշխատավորության ռազմական պատրաստությանը:

(Տե՛ս Ենգոյան Փ., Երևանի համալսարանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Երևան, 1975, էջ 15-16)

17 սեպտեմբերի – Համալսարանի բակում կազմակերպվում է հավաք բոլոր դասախոսների, վարչական ապարատի աշխատողների և ուսանողների մասնակցությամբ: Տեղում, ըստ ֆակուլտետների, նշանակվում են դասակների հրամանատարներ ու քաղ. գծով տեղակալներ:

(Տե՛ս Ենգոյան Փ., Երևանի համալսարանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Երևան, 1975, էջ 16)

հոկտեմբեր - Աշխատողների պարապմունքները հաջող կազմակերպելու և մայրաքաղաքի ռազմապաշտպանական կառույցների գործունեությանն ակտիվորեն մասնակցելու համար համալսարանի կոլեկտիվը շնորհակալագիր է ստանում Երևանի կայազորի հրամանատարից:

(Տե՛ս Ենգոյան Փ., Երևանի համալսարանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Երևան, 1975, էջ 17)

1942

Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանում սովորում էին 1044 ուսանող և 32 ասպիրանտ, դասավանդում էր 132 դասախոս, գործում էին 12 լաբորատորիա, 14 կաբինետ և 2 արհեստանոց:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

Համալսարանի գիտական նստաշրջանում պրոֆ. Ա. Տեր-Պողոսյանը առաջին անգամ խոսում է Հայաստանի դեռևս չուսումնասիրված նենասողողֆաունայի մասին:

(Տե՛ս «Սովետական Հայաստան», 21 ապրիլի 1953)

Գրականագիտական վաստակի և գիտամանկավարժական արգասավոր գործունեության համար Արսեն Տերտերյանին շնորհվում է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան:

(Տե՛ս Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 212)

Գրիգոր Այվազի Ղափանցյանին առանց ատենախոսության պաշտպանության շնորհվում են գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում և դոկտորի գիտական աստիճան:

(Տե՛ս Մեր անվանի դասախոսները, մաս I, խմբ.՝ Ներսիսյան Մ., Թադևոսյան Թ., Պիվազյան Էմ., Երևան, 1970, էջ 157)

Աբրահամ և Արտեմ Ալիխանյանները Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանում հիմնում են տիեզերական ճառագայթների ուսումնասիրման լաբորատորիա:

(Տե՛ս Մեր անվանի դասախոսները, մաս II, կազմ.՝ Ղարիբջանյան Լ. Պ., Գասպարյան Հ. Ք., Երևան, 2006, էջ 16)

21 մարտի – Համալսարանի ԼԿԵՄ կոմիտեի հաշվետվության մեջ նշվում է, որ կոմերիտականների ուժերով 6 ամսում հավաքվել ու պետությանն են հանձնվել 235 տոննա գումապոր մետաղ, 5820 ռ. վոխառության պարտատոմս, կիրակնօրյակների միջոցով՝ 5373 ռուբլի: Պաշտպանության ֆոնդի համար հանձնել են 3670 ռ. չերվոնեց, բանակայինների ընտանիքներին օգնելու համար՝ 1780 ռուբլի:

(Տե՛ս Ենգոյան Փ., Երևանի համալսարանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Երևան, 1975, էջ 34)

հունիս – Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանը ցերեկային ուսուցման գծով տալիս է 185 շրջանավարտ՝ 12 ֆիզիկոս և մեխանիկոս-մաթեմատիկոս, 17 քիմիկոս, 9 երկրաբան, 14 աշխարհագրագետ, 16 կենսաբան, 13 պատմաբան, 34 տնտեսագետ, 7 իրավաբան, 63 բանասեր:

(Տե՛ս ԵՊՀ պատմության բանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

10 օգոստոսի – ՀԽՍՀ լուսժողկոմատի հրամանով Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանի ռեկտոր է նշանակվում Հրաչյա Բունիաթյանը (պաշտոնավարել է մինչև 1947 թ. հունվար ամիսը):

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 10, գ. 138, ք. 4, 24, տե՛ս նաև ԵՊՀ պատմության բանգարանի արխիվ, ֆ. 1, գ. 13, ք. 47)

1943

Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանում սովորում էին 820 ուսանող և 22 ասպիրանտ, դասավանդում էր 101 դասախոս, գործում էր 12 լաբորատորիա, 15 կաբինետ և 2 արհեստանոց:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանում առաջին անգամ պաշտպանվեց դոկտորական ատենախոսություն:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 19 հոկտեմբերի 1960)

Երվանդ Գալուստի Տեր-Սիմասյանին առանց ատենախոսության պաշտպանության շնորհվում է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, երկու տարի անց՝ նաև պրոֆեսորի կոչում:

(Տե՛ս Մեր անվանի դասախոսները, մաս I, խմբ.՝ Ներսիսյան Մ., Թաղևոսյան Թ., Պիվազյան Էմ., Երևան, 1970, էջ 235)

22 փետրվարի – ԽՍՀՄ Ժողկոմխորհը գնդապետ Անդրանիկ Ղազարյանին շնորհում է գեներալ-մայորի զինվորական կոչում (նա նախքան Հայրենական պատերազմի սկսվելը եղել էր համալսարանի ռազմական ամբիոնի վարիչ):

(Տե՛ս Մալխասյան Ա., Սովետական բանակի հայ գործիչները, Երևան, 1965, էջ 374)

հունիս – Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանը տալիս է ցերեկային ուսուցման 44 շրջանավարտ՝ 2 քիմիկոս, 6 երկրաբան, 1 աշխարհագրագետ, 4 կենսաբան, 14 տնտեսագետ, 12 իրավաբան, 5 բանասեր:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանդաքանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

17 սեպտեմբերի – ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը համալսարանական Անդրանիկ Ղազարյանին պարգևատրում է Սովորովի 1-ին աստիճանի շքանշանով:

(Տե՛ս Մալխասյան Ա., Սովետական քանակի հայ գործիչները, Երևան, 1965, էջ 376)

16 հոկտեմբերի – Համալսարանական Անդրանիկ Ղազարյանին շնորհվում է Խորհրդային Միության հերոսի կոչում:

(Տե՛ս Մալխասյան Ա., Սովետական քանակի հայ գործիչները, Երևան, 1965, էջ 376)

1944

Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանում սովորում էին 1009 ուսանող և 38 ասպիրանտ, դասավանդում էր 131 դասախոս, գործում էին 13 լաբորատորիա, 16 կաբինետ և 2 արհեստանոց:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 46, ք. 3)

Ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում ստեղծվում է երկրաչափության և հանրահաշվի ամբիոն:

(Տե՛ս ԵՊՀ արխիվ, ց. 1, գ. 1 (կող 9), ք. 19)

Համալսարանի գրադարանին տրվում է գիտական գրադարանի 3-րդ կարգ:

(Տե՛ս Ասլանյան Վ., Հայրապետյան Հ., Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանը, Երևան, 2001, էջ 4)

հունիս – Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանը տալիս է ցերեկային ուսուցման 98 շրջանավարտ՝ 2 ֆիզիկոս և մեխանիկոս-մաթեմատիկոս, 10 քիմիկոս, 7 երկրաբան, 7 աշխարհագրագետ, 9 կենսաբան, 18 պատմաբան, 8 տնտեսագետ, 4 իրավաբան, 33 բանասեր:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

19 հուլիսի – ՀԽՍՀ արտաքին գործերի ժողկոմ Ս. Կարապետյանը դիմում է ԽՍՀՄ Ժողկոմխորհին կից Բարձրագույն դպրոցի գործերի համամիութենական կոմիտեի նախագահ Ս. Վ. Կաֆտանովին՝ նշելով, որ ՀԽՍՀ արտգործժողկոմի և արտասահմանում Համամիութենական մշակութային կապերի կազմա-

կերպության հայկական մասնաճյուղի ստեղծման նպատակով իր ամբողջ սրությամբ դրվում է բարձրագույն դիվանագիտական կրթությամբ կադրերի պատրաստման անհրաժեշտությունը Հայաստանում: Ուստի անհրաժեշտ էր համարվում 1944-45 ուստարվանից համալսարանում հիմնադրել Սիջազգային հարաբերությունների ֆակուլտետ՝ 1-ին կուրսի համար նախատեսելով 35-40 ուսանողի ընդունելություն:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 13, ք. 3-4)

1945

Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանի գիտական գրադարանն ուներ 200.000-ից ավելի գիրք: Այն երկրորդ մեծ գրադարանն էր Խորհրդային Հայաստանում:

(Տե՛ս Բունիաթյան Հ., Գիտության օջախը, տե՛ս «Սովետական Հայաստան» հասարակական-քաղաքական և գրական գեղարվեստական պատկերազարդ ամսագիր, N 1, Երևան, 1945, էջ 27)

Մ. Զրբաշյանը պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ «Անալիտիկ ֆունկցաների ներկայացնելիության տեսության մի քանի հարցեր» թեմայով: Սա Երևանի համալսարանում մաթեմատիկայի գծով առաջին թեկնածուական ատենախոսության պաշտպանությունն էր:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, պատ. խմբ.՝ Ղարիբյան Գ., Երևան, 1981, էջ 38)

Ստեփան Դանիելի Լիսիցյանին շնորհվում է Հայկական ԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

(Տե՛ս Մեր անվանի դասախոսները, մաս I, խմբ.՝ Ներսիսյան Մ., Թադևոսյան Թ., Պիվազյան Էմ., Երևան, 1970, էջ 107)

1 հունվարի – ԽՍՀՄ Ժողկոմխորհին կից Բարձրագույն դպրոցի գործերի համամիութենական կոմիտեի նախագահ Ս. Վ. Կաֆտանովի հրամանով Երկրաբանական-աշխարհագրական ֆակուլտետը բաժանվեց 2՝ Երկրաբանական-հողագիտական և Աշխարհագրական ֆակուլտետների, իսկ Ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում ստեղծվեցին 2 նոր ամբիոններ՝ աստղաֆիզիկայի և ատոմային միջուկի: Այսպիսով՝ համալ-

սարանում գործում էին ինը ֆակուլտետներ՝ մասնագիտացված բաժիններով. Ֆիլոլոգիական (հայկական, արևելյան, եվրոպական և ռուսական բաժիններով), Պատմության, Իրավաբանական, Տնտեսագիտական, Քիմիական, Ֆիզիկա-մաթեմատիկական, Բիոլոգիական, Երկրաբանական-հողագիտական, Աշխարհագրական:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 9, գ. 43, ք. 1, տե՛ս նաև

Բունիաթյան Հ., Գիտության օջախը, տե՛ս

«Սովետական Հայաստան» հասարակական-քաղաքական և գրական գեղարվեստական պատկերազարդ ամսագիր, N 1, Երևան, 1945, էջ 27)

հունիս – Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանը տալիս է ցերեկային ուսուցման 140 շրջանավարտ՝ 2 ֆիզիկոս և մեխանիկոս-մաթեմատիկոս, 11 քիմիկոս, 3 երկրաբան, 12 աշխարհագրագետ, 10 կենսաբան, 9 պատմաբան, 8 տնտեսագետ, 16 իրավաբան, 69 բանասեր:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի

արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

1 սեպտեմբերի – Համալսարանում ստեղծվեց Սիջազգային հարաբերությունների ֆակուլտետը, որը գործել է մինչև 1954 թ.:

(Տե՛ս ԵՊՀ արխիվ, ց. 1, գ. 1 (կող 9), ք. 5)

1946

23 ապրիլի – Տեղի ունեցավ Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանի հոբելյանական նստաշրջանի երկրորդ լիագումար նիստը: Ձեկուցումներով հանդես եկան Գ. Արեշյանը («Ամուսնությունը և ընտանիքը սովետական պետության մեջ»), Ա. Հակոբյանը («Թերմոդինամիկայի երկրորդ սկզբունքի նոր հիմնավորման մասին»), Մ. Թումանյանը («Գարու զարգացման հիմնական էտապները Հայաստանում»): Գիտական նիստեր տեղի ունեցան նաև պատմական, ֆիլոլոգիական, փիլիսոփայական, ֆիզիկա-մաթեմատիկական, քիմիական և բիոլոգիական գիտությունների բաժանմունքներում:

(Տե՛ս «Սովետական Հայաստան», 25 ապրիլի 1946)

25 ապրիլի – Համալսարանի հիմնադրման 25-ամյակի առթիվ, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով, բազմամյա բեղմնավոր գիտական գործունեության և մասնագետներ պատրաստելու գործում ցուցաբերած ծառայությունների համար Ալեքսանդր Նիկոլայի Մելիքյանին (ուսումնագիտական մասի պրոռեկտոր), Ստեփան Սերգեյի Ներսիսյանին (հին պատմության ամբիոնի վարիչ), Վահան Հարությունի Ռշտունուն (ԽՍՀՄ ժողովուրդների պատմության ամբիոնի վարիչ), Մուշեղ Հայրապետի Սանթրոսյանին (մանկավարժության ամբիոնի վարիչ) շնորհվեց ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության մեկ այլ հրամանագրով համալսարանի աչքի ընկած 76 պրոֆեսորներ, դասախոսներ և աշխատողներ պարգևատրվեցին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով:

(Տե՛ս «Սովետական Հայաստան», 26 ապրիլի 1946)

27 ապրիլի – Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված համալսարանի 25-ամյակին:

Նախագահության կազմում էին ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Ա. Սարգսյանը, ՀԿ(Բ)Կ Կենտկոմի պրոպագանդայի գծով քարտուղար Զ. Գրիգորյանը, ՀԽՍՀ լուսավորության նախարար Գ. Աղբալյանը, ռեկտոր Հ. Բունիաթյանը, ՀԽՍՀ ԳԱ փոխնախագահ Վ. Համբարձումյանը, ակադեմիկոսներ Ա. Տերտերյանը, Հ. Աճառյանը, Գ. Ղափանցյանը և ուրիշներ: Նիստը բացվում է ՀԽՍՀ պետական հիմնի հնչյունների ներքո: Ռեկտոր Հ. Բունիաթյանը հանդես է գալիս «Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանը 25 տարում» զեկուցումով: Այդ տարիների ընթացքում համալսարանը տվել է 3.377 մասնագետ-շրջանավարտներ:

(Տե՛ս «Սովետական Հայաստան», 28 ապրիլի 1946)

հունիս – Երևանի համալսարանը տալիս է 152 շրջանավարտ (ցերեկային ուսուցման)՝ 4 ֆիզիկոս և մեխանիկոս-մաթեմատիկոս, 6 քիմիկոս, 8 երկրաբան, 7 աշխարհագրագետ, 18 կենսաբան, 15 պատմաբան, 7 տնտեսագետ, 23 իրավաբան, 64 բանասեր:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

դեկտեմբեր – Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանում սովորում է 1990 ուսանող, որից 809-ը՝ արական սեռի, 781-ը՝ իգական սեռի:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 15, գ. 78, ք. 1)

1947

Համալսարանի ամբիոններին կից գործող ուսանողական գիտական խմբակները միավորվեցին Ուսանողական գիտական ընկերության մեջ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 39, ք. 71)

Ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում ստեղծվում է աստղաֆիզիկայի ամբիոն, որը ղեկավարում էր ակադեմիկոս Վ. Համբարձումյանը:

(Տե՛ս ԵՊՀ արխիվ, ց. 1, գ. 1 (կող 9), ք. 20, տե՛ս նաև Երևանի պետական համալսարան, պատ. խմբ.՝ Ղարիբյան Գ., Երևան, 1981, էջ 66)

17 հունվարի – Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանի ռեկտոր է նշանակվում Հովհաննես Պողոսյանը (պաշտոնավարել է մինչև 1948 թ. դեկտեմբերի 3-ը):

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 10, գ. 138, ք. 24, տե՛ս նաև Երևանի պետական համալսարանի ռեկտորները (1919-1999), կազմ.՝ Ղարիբջանյան Լ. Պ., Երևան, 1999, էջ 83-85)

հունիս – Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանը տալիս է 67 (ցերեկային) շրջանավարտ՝ 5 ֆիզիկոս և մեխանիկոս-մաթեմատիկոս, 4 քիմիկոս, 7 երկրաբան, 7 կենսաբան, 24 պատմաբան, 8 տնտեսագետ, 12 բանասեր:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

1948

ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի գիտական խորհուրդը առանց ատենախոսության պաշտպանության Լևոն Ալեքսանդրի Ռոտինյանին շնորհում է քիմիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

(Տե՛ս Մեր անվանի դասախոսները, մաս I, խմբ.՝ Ներսիսյան Մ., Թաղևոսյան Թ., Պիվազյան Էմ., Երևան, 1970, էջ 211)

հունիս – Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանը տալիս է 235 (ցերեկային) շրջանավարտ՝ 15 ֆիզիկոս և մեխանիկոս-մաթեմատիկոս, 5 քիմիկոս, 13 երկրաբան, 7 աշխարհագրագետ, 11 կենսաբան, 25 պատմաբան, 37 տնտեսագետ, 38 իրավաբան, 84 բանասեր:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, թ. 28)

1949

Ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում ստեղծվում է բարձրագույն մաթեմատիկայի ամբիոն, որը ապահովում էր ոչ մաթեմատիկական ֆակուլտետների ուսանողների մաթեմատիկայի դասընթացները:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, պատ. խմբ.՝
Ղարիբյան Գ., Երևան, 1981, էջ 47)

Երկրաբանական ֆակուլտետում հիմնադրվում է պատմական և ռեգիոնալ երկրաբանության ամբիոնը:

(Տե՛ս ԵՊՀ արխիվ, ց. 1, գ. 1 (կող 9), ք. 23)

Կենսաբանական ֆակուլտետում ստեղծվում է գենետիկայի և բջջաբանության (մախկինում գենետիկայի և դարվինիզմի) ամբիոն, որտեղ ուսումնական աշխատանքներին զուգահեռ ծավալվել են գիտահետազոտական աշխատանքներ գենետիկայի, բջջաբանության և սաղմնաբանության ուղղությամբ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 14, գ. 14, ք. 10,
տե՛ս նաև Գիտությունը Հայաստանում 50 տարում, գլխ. խմբ.՝
Պետրոսյան Գ. Բ., Երևան. 1973, էջ 713)

Պատմության ֆակուլտետի ուսանողներ Ս. Եսայանը, Հ. Բարթիկյանը, Գ. Տիրացյանը, Ս. Բաբայանը պարբերաբար մասնակցում են Կարմիր բլուրի հնագիտական պեղումներին:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 24 սեպտեմբերի 1951)

ԽՍՀՄ ԳԱ Վ. Ստեկլովի անվան մաթեմատիկական ինստիտուտի ասպիրանտ Ս. Մերգելյանի՝ գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման համար ներկայացրած ատենախոսությունը մասնա-

գիտական խորհուրդը գնահատում է որպես դոկտորական և նրան շնորհում է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

(Տե՛ս Ս. Մերգելյան, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝
<http://www.yasu.am/persons/hy/Sergey-Mergelyan>, մուտք՝ 12.07.2019)

ՀԽՍՀ Կառավարությունը Երևանի Ե. Չարենցի և Ա. Մռավյան փողոցների միջև ընկած տարածքի 8 հեկտար հողամասը հատկացնում է համալսարանի նոր համալիրի կառուցմանը:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 32, ք. 1)

Համալսարանում սկսում է գործել (մինչև 1956 թ.) ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների պատմության ամբիոնը: Այդ տարիներին համալսարանում կարդացվել են մաթեմատիկայի, աստղաբաշխության և մեխանիկայի պատմության դասընթացներ:

(Տե՛ս Գիտությունը Հայաստանում 50 տարում, գլխ. խմբ.՝ Պետրոսյան Գ. Բ., Երևան, 1973, էջ 253)

Բանասիրական ֆակուլտետի կազմում բացվում է ժուռնալիստիկայի բաժին, որը գործում է մինչև 1957 թ.:

(Տե՛ս ԵՊՀ արխիվ, ց. 1, գ. 1 (կող 9), ք. 25, տե՛ս նաև Ժուռնալիստիկայի ֆակուլտետ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝
<http://www.yasu.am/faculties/hy/Journalism/section/about>, մուտք՝ 12.07.2019)

մայիս – Երկրորդ անգամ համալսարանի ռեկտոր նշանակվում է Գարեգին Պետրոսյանը (պաշտոնավարել է մինչև 1957 թ. փետրվար ամիսը):

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 1, գ. 12, ք. 1 հազ. կողմ, տե՛ս նաև Երևանի պետական համալսարանի ռեկտորները (1919-1999), կազմ.՝ Ղարիբջանյան Լ. Պ., Երևան, 1999, էջ 70)

հունիս – Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանը տալիս է 244 (ցերեկային) շրջանավարտ՝ 5 ֆիզիկոս և մեխա-

նիկոս-մաթեմատիկոս, 19 քիմիկոս, 21 երկրաբան, 15 աշխարհագրագետ, 23 կենսաբան, 36 պատմաբան, 25 տնտեսագետ, 25 իրավաբան, 75 բանասեր:

(Տեն ԵՊՀ պատմության քանդաբանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

1950

Երկրաբանական ֆակուլտետում ստեղծվում է հանքաբանության ու քարագիտության ամբիոն:

(Տե՛ս ԵՊՀ արխիվ, ց. 1, գ. 1 (կող 9), ք. 23,
տե՛ս նաև Երևանի պետական համալսարան, պատ. խմբ.՝
Ղարիբյան Գ., Երևան, 1981, էջ 129)

հունիս – Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանը տալիս է 354 (ցերեկային) շրջանավարտ՝ 12 ֆիզիկոս և մեխանիկոս-մաթեմատիկոս, 28 քիմիկոս, 30 երկրաբան, 18 աշխարհագրագետ, 16 կենսաբան, 34 պատմաբան, 41 տնտեսագետ, 35 իրավաբան, 92 բանասեր: Իր գոյության ընթացքում համալսարանն առաջին անգամ տալիս է 48 պատմաբան-միջազգայնագետ շրջանավարտներ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի
արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

20-23 նոյեմբերի – Համալսարանում հրավիրվում է պրոֆեսորադասախոսական կազմի գիտական նստաշրջան՝ նվիրված Հաստատանում խորհրդային իշխանության հաստատման 30-րդ տարեդարձին:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 29 նոյեմբերի 1950)

25 նոյեմբերի – Ֆիլոլոգիական ֆակուլտետի դասախոսները և ուսանողները հանդիպում են Ստալինյան մրցանակի դափնեկիր, գրող Վ. Ա. Կավերինի հետ: Համալսարանական ուսանողական գիտական ընկերության խորհրդի առաջարկով նա ընտրվում է համալսարանի ուսանողական գիտական ընկերության պատվավոր անդամ:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 29 նոյեմբերի 1950)

29 նոյեմբերի – Վերսկավում է համալսարանի թերթի հրատարակությունը «Սովետական ուսանողություն»¹⁷ անվամբ, որը 1955 թ.-ից կոչվում է «Երևանի համալսարան»¹⁸:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի
արխիվ, ֆ. 2, գ. 39, թ. 75)

6 դեկտեմբերի – Ուսանողական գիտական ընկերության նորընտիր խորհրդի առաջին նիստում խորհրդի նախագահ է ընտրվում Ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Մ. Ջրբաշյանը:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 9 դեկտեմբերի 1950)

19 դեկտեմբերի – Տեղի է ունենում համալսարանի ՈՒԳԸ արևելյան և եվրոպական բաժանմունքների միացյալ նիստ, որին մասնակցում էին նաև դասախոսներ:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 23 դեկտեմբերի 1950)

20 դեկտեմբերի – Տեղի է ունենում համալսարանի ՈՒԳԸ տնտեսագիտական և իրավաբանական բաժանմունքների համատեղ նիստը:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 23 դեկտեմբերի 1950)

1951

հունվար – Չմեռային արձակուրդների ընթացքում համալսարանի ԼԿԵՄ կոմիտեի և արհկոմիտեի ներկայացուցիչներից և մի խումբ գերազանցիկ ուսանողներից կազմված պատվիրակությունը մեկնեց Վրաստան՝ Թբիլիսիի Ի. Վ. Ստալինի անվան պետական համալսարանի հետ համագործակցություն հաստատելու և աշխատանքային փորձի փոխանակություն կատարելու նպատակով:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 10 փետրվարի 1951)

11 հունվարի – Համալսարանի մեծ դահլիճում Զաղաքական և գիտական գիտելիքների տարածման համամիութենական ընկերության իսկական անդամ, տնտեսագիտական գիտությունների թեկնածու Ե. Դանցիզը հանդես եկավ «Ժամանակակից Թուրքիայի քաղաքական դրությունը» զեկուցումով:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 20 հունվարի 1951)

18 հունվարի – Տեղի ունեցավ Բիոլոգիական ֆակուլտետի ամբիոնների միացյալ սեմինար՝ նվիրված Ի. Պ. Պավլովի ուսմունքին:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 20 հունվարի 1951)

3 փետրվարի – Համալսարանի մարզադահլիճում անցկացվեցին թեթևատլետիկայի մրցումներ՝ նվիրված Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրություններին:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 10 փետրվարի 1951)

5 ապրիլի – Համալսարանի մեծ դահլիճում տեղի ունեցավ համալսարանի 30-րդ տարեդարձին նվիրված 13-րդ ուսանողական և առաջին ասպիրանտական գիտական նստաշրջանների

լիագումար նիստը:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 9 ապրիլի 1951)

8-16 ապրիլի – Տեղի ունեցան բասկետբոլի հանրապետական մրցումներ «Նաուկա» սպորտային ընկերության առաջնության շրջանակներում: Համալսարանի բասկետբոլիստների աղջիկների թիմը գրավեց առաջին տեղը, իսկ տղաների թիմը՝ երկրորդ:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 25 ապրիլի 1951)

20 ապրիլի – Համալսարանի մեծ դահլիճում Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ պրոֆ. Գ. Դափանցյանը կարդաց զեկուցում՝ «Ժամանակակից հայերենի լեզվաշինարարության մասին» թեմայով:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 25 ապրիլի 1951)

21 ապրիլի – Ալբանական Ժողովրդական Հանրապետության գիտությունների ինստիտուտի գլխավոր քարտուղար պրոֆ. Պոլ Պապորիստոն, պատմության և տնտեսագիտության բաժանմունքի վարիչ պրոֆ. Ալեքս Բողոն և գյուղատնտեսության բաժանմունքի վարիչ, գյուղատնտես Ադամ Դելյուն այցելում են Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարան:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 25 ապրիլի 1951)

4-9 մայիսի – Տեղի է ունենում պրոֆեսորադասախոսական կազմի 35-րդ գիտական նստաշրջանը՝ նվիրված համալսարանի հիմնադրման 30-րդ տարեդարձին:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 5 մայիսի 1951)

26 մայիսի – Ալ. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանի հիմնադրման 30-րդ

տարեդարձին:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 4 հունիսի 1951)

հունիս – Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանը տալիս է 387 (ցերեկային) շրջանավարտ՝ 21 ֆիզիկոս և մեխանիկոս-մաթեմատիկոս, 29 քիմիկոս, 21 երկրաբան, 19 աշխարհագրագետ, 34 կենսաբան, 34 պատմաբան, 40 տնտեսագետ, 29 իրավաբան, 124 բանասեր, 36 պատմաբան-միջազգայնագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության բանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

31 հոկտեմբեր – Մեծ դահլիճում նոր ընդունվողների համար տեղի է ունենում հանդիպում, որի ժամանակ պարզաբանումներ են տրվում համալսարանի կառուցվածքի և ուսանողների պարտականությունների մասին:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 1 օգոստոսի 1951)

սեպտեմբեր – Պատմության ֆակուլտետի հնագիտության և հայ ժողովրդի պատմության բաժնի 5-րդ կուրսի մի խումբ ուսանողներ մասնակցում են Գառնիի հնագիտական պեղումներին:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 8 հոկտեմբերի 1951)

11 սեպտեմբերի – Տեղի է ունենում կոմերիտական կազմակերպության ակտիվի ժողովը՝ նվիրված կուրսային և ֆակուլտետային կոմերիտական հաշվետու-ընտրական ժողովների ընթացքին և ակտիվի անելիքներին հաշվետու ընտրությունների ժամանակ:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 17 սեպտեմբերի 1951)

22 սեպտեմբերի – ԼԿԵՄ կոմիտեն և արիկոմիտեն կազմակերպում են երեկո՝ նվիրված Խաղաղության պաշտպանության համաշխարհային խորհրդի դիմումի համար ստորագրությունների հավաքմանը:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 24 սեպտեմբերի 1951)

14 հոկտեմբերի – Տեղի ունեցավ համալսարանի կոմերիտական կազմակերպության 12-րդ գիտաժողովը:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 16 հոկտեմբերի 1951)

15 հոկտեմբերի – ԽՍՀՄ բարձրագույն ուսումնական հաստատությունները և գիտահետազոտական ինստիտուտներն ավարտեցին ասպիրանտների ընդունելությունը: Ավելի քան 1100 բուհեր և գիտահետազոտական հիմնարկներ են ընդունվում 7000 ասպիրանտներ:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 23 հոկտեմբերի 1951)

28 հոկտեմբերի – Տեղի է ունենում համալսարանի ուսանողական արհեստակցական միության կազմակերպության 8-րդ գիտաժողովը:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 31 հոկտեմբերի 1951)

նոյեմբեր – Համալսարանի մեծ դահլիճում տեղի է ունենում մայրաքաղաքի բարձրագույն ուսումնական հաստատությունների և տեխնիկումների ուսանողների համաքաղաքային ժողով՝ նվիրված Ուսանողների միջազգային օրվան:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 21 նոյեմբերի 1951)

3 նոյեմբերի – Համալսարանում տեղի է ունենում ուսանողության, պրոֆեսորադասախոսական կազմի և վարչատնտեսական մասի աշխատողների կոլեկտիվի հանդիսավոր նիստը՝ նվիրված Հոկտեմբերյան հեղափոխության 34-րդ տարեդարձին:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 6 նոյեմբերի 1951)

26 նոյեմբերի – Մեծ դահլիճում տեղի է ունենում դասախոսների, ուսանողության և վարչատնտեսական մասի աշխատողների հանդիսավոր նիստ՝ նվիրված Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատման 31-րդ տարեդարձին:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 28 նոյեմբերի 1951)

դեկտեմբեր – Ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնը երիտասարդ ասիստենտներին օգնելու նպատակով կազմակերպում է մեթոդական զեկուցում՝ «Ինչպե՞ս կազմակերպել գործնական պարապմունքները» թեմայով:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 25 դեկտեմբերի 1951)

1952

Երկրաբանական ֆակուլտետում հիմնադրվում է օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոն:

(Տե՛ս ԵՊՀ արխիվ, ց. 1, գ. 1 (կող 9), ք. 23)

29 հունվարի – Տեղի է ունենում համալսարանի ուսանողների և Մ. Գորկու անվան իգական միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտների հանդիպումը երիտասարդ գրողներ Վ. Դավթյանի, Ս. Խանգադյանի, Տեր-Գրիգորյանի և Կարազոյզյանի հետ:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 8 փետրվարի 1952)

4 փետրվարի – Կյանքից հեռանում է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի և Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, ականավոր հայագետ, գիտության վաստակավոր գործիչ, պատմաբան Հակոբ Համազասպի Մանանդյանը: Նույն ամսում նրա հիշատակը հավերժացնելու նպատակով Հայկական ԽՍՀ Նախարարների խորհուրդը սահմանում է ակադեմիկոս Հ. Մանանդյանի անվան երեք կրթաթոշակ, որոնցից մեկը՝ 800 ռուբլի գումարով՝ Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում, և երկուսը՝ 400-ական ռուբլու չափով՝ Պատմության ֆակուլտետում:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն»,
8 փետրվարի, 16 փետրվարի 1952)

29 փետրվարի – 1 մարտի - Համալսարանում տեղի է ունենում գիտական նստաշրջան՝ նվիրված ռուս մեծ գրող Ն. Վ. Գոգոլի մահվան 100-ամյա տարելիցին:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն» 3 մարտի 1952)

մարտ – Մեծ դալիճում գումարվում է բողոքի միտինգ ԱՄՆ-ի կողմից Կորեայում բակտերիոլոգիական զենք գործադրելու դեմ:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 21 մարտի 1952)

մարտ – ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը համալսարանի ֆունկցիաների տեսության ամբիոնի դասախոս, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր Ս.Ն. Մերգելյանին շնորհում է երկրորդ աստիճանի մրցանակ՝ ֆունկցիաների կոնստրուկտիվ տեսության ասպարեզում կատարած աշխատանքների համար, որոնք ավարտվել են «ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Վ. Ա. Ստեկլովի անվան Մաթեմատիկայի ինստիտուտի աշխատություններում» 1951 թ. հրապարակած «Ֆունկցիաների կոնստրուկտիվ տեսության մի քանի հարցեր» հոդվածում:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 21 մարտի 1952)

19 մայիսի – Մեծ դալիճում Ֆիլոլոգիական ֆակուլտետի դեկանատի և տեղկոմի նախաձեռնությամբ տեղի է ունենում համալսարանի ուսանողների և դասախոսների հանդիպումը բանաստեղծ Հ. Շիրազի հետ:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 23 մայիսի 1952)

հունիս – Երևանի Վ. Մ. Մորտովի անվան պետական համալսարանը տալիս է 415 (ցերեկային) շրջանավարտ՝ 25 ֆիզիկոս և մեխանիկ-մաթեմատիկոս, 14 քիմիկոս, 27 երկրաբան, 18 աշխարհագրագետ, 25 կենսաբան, 44 պատմաբան, 37 տնտեսագետ, 72 իրավաբան, 127 բանասեր, 26 պատմաբան-միջազգայնագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության բանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

հունիս – Համալսարանի գերազանցիկ ուսանողներից 41 հոգի ստանում են անվանական թոշակ: 10 ուսանողներ ստանում են Ստալինի անվան թոշակ, իսկ մյուսները՝ Մ. Ի. Կալինինի, Ա. Ս. Պուշկինի, Հ. Թումանյանի, Շիրվանզադեի, Մ. Նալբանդյանի

և այլ ականավոր գիտնականների ու գրողների անվան թոշակներ:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 9 հունիսի 1952)

հունիս – Համալսարանում սովորում էր 2600 ուսանող, դասավանդում էին ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի 10 իսկական անդամ, 29 դոկտոր-պրոֆեսոր, 100-ից ավելի դոցենտ և գիտության թեկնածու: Տարբեր գիտությունների գծով գործում էին 46 ամբիոն, 30-ից ավելի լաբորատորիաներ և ուսումնական կաբինետներ, որտեղ դասախոսներն ու ուսանողները կատարում էին գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքներ:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 9 հունիսի 1952)

2 հունիսի – Մեծ դահլիճում տեղի է ունենում ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի և վարչատնտեսական աշխատողների ժողով, որտեղ ներկայաներն իրենց բողոքն արտահայտեցին Կորեայում ԱՄՆ-ի կողմից իրականացվող ռազմական գործողությունների դեմ:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 3 հունիսի 1952)

15 նոյեմբերի – Մեծ դահլիճում տեղի է ունենում համալսարանի գեոլոգիական ֆակուլտետի և Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի լեռնային ֆակուլտետի ուսանողության ու պրոֆեսորադասախոսական կազմի հանդիպման երեկո՝ նվիրված Ուսանողության միջազգային օրվան:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 21 նոյեմբերի 1952)

3 դեկտեմբերի – Մեծ դահլիճում տեղի է ունենում Աշխարհագրական ֆակուլտետի և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի աշխարհագրության ֆակուլտետի ուսանողության և պրոֆեսորադասախոսական կազմի հանդիպման երեկո՝ նվիրված Սահմանադրության օրվան:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 6 դեկտեմբերի 1952)

1953

Համալսարանը «Հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրություն» մասնագիտության գծով տալիս է առաջին շրջանավարտները:

(Տե՛ս Գիտությունը Հայաստանում 50 տարում, գլխ. խմբ.՝ Պետրոսյան Գ. Բ., Երևան, 1973, էջ 316)

3 փետրվարի – Համալսարանի ԼԿԵՄ և արհկազմակերպությունների նախաձեռնությամբ կազմակերպվում է գիտարշավ դեպի Էջմիածնի շրջանի Արշալույս գյուղի Սիկոյանի անվան կոլտնտեսություն՝ նվիրված տեղական խորհուրդների ընտրություններին:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 5 փետրվարի 1953)

11-13 փետրվարի – Տեղի է ունենում միջբուհական ուսանողական գիտական կոնֆերանս, որին մասնակցում են Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանի բիոլոգիական ֆակուլտետի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի բնագիտական բաժնի, Գյուղատնտեսական և Անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտների ուսանողները:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 19 փետրվարի 1953)

մարտ – Գիտամանկավարժական աշխատանքը հանրապետությունում ավելի ամուր հիմքերի վրա դնելու, ՀԽՍՀ-ն բարձրորակ մասնագետներով ապահովելու և ժողովրդական տնտեսության պահանջները բավարարելու համար ԽՍՀՄ Կառավարության որոշմամբ սկսվում է Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանի նոր շենքի կառուցումը: Նոր համալիրի նա-

խագծի հեղինակն էր ճարտարապետ Էդմոնդ Տիգրանյանը:
(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 10 հուլիսի 1953)

3 մարտի – Տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու 125-ամյակին:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 7 մարտի 1953)

25 մարտի – Տեղի է ունենում գրական երեկո՝ նվիրված հայ մեծանուն բանաստեղծ Հ. Թումանյանի մահվան 30-ամյա տարելիցին:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 2 ապրիլի 1953)

ապրիլ – Համալսարանում գումարվում է ասպիրանտական երրորդ գիտական կոնֆերանսը, որտեղ զեկուցումներով հանդես են գալիս տարբեր մասնագիտությունների գծով 8 ասպիրանտներ: Ձեկուցումների մեծ մասը նվիրված էր ասպիրանտների դիսերտացիոն աշխատանքներին առնչվող հարցերին:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 21 ապրիլի 1953)

ապրիլ – Տարտուի համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպում է ուսանողական գիտական 7-րդ կոնֆերանսը՝ նվիրված Ի. Վ. Ստալինի հիշատակին: Տարտու են մեկնում 11 համալսարանների պատվիրակություններ՝ Լենինգրադից, Պետրոգրադից, Խարկովից, Սիմսկից, Երևանից, Թբիլիսիից, Կազանից և այլ քաղաքներից:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 15 մայիսի 1953)

4 ապրիլի – Մեծ դահլիճում տեղի է ունենում ուսանողների հանդիպումը Երևանի կինոաշխատողների հետ:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 13 ապրիլի 1953)

16 ապրիլի – Վախճանվում է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, համալսարանի արևելյան լեզուների ամբիոնի վարիչ, Չեխոսլովակիայի գիտությունների ակադեմիայի

թղթակից անդամ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, դոկտոր, պրոֆեսոր Հրաչյա Աճառյանը:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 21 ապրիլի 1953)

21-24 ապրիլ – Գումարվում է Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանի 1952 թ. գիտահետազոտական աշխատանքների հաշվետու-գիտական նստաշրջանը: Երեք օրում ֆիզիկա-մաթեմատիկական, քիմիական, գեոլոգիական, աշխարհագրական, բիոլոգիական, էկոնոմիկական, իրավաբանական, պատմության ու փիլիսոփայության և ֆիլոլոգիական գիտությունների բաժանմունքներում ընթերցվում են ավելի քան 50 զեկուցումներ:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 30 ապրիլի 1953)

15-16 մայիս – Համալսարանում տեղի է ունենում ֆիլոլոգիական ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների տեսական կոնֆերանսը՝ նվիրված Ի. Վ. Ստալինի «Սոցիալիզմի էկոնոմիկական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» աշխատությանը:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 21 մայիսի 1953)

22 մայիս – Համալսարանի մեծ դահլիճում տեղի է ունենում էկոնոմիկական ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հանդիպումը Երևանի ավտոմասերի գործարանի բանվորների հետ:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 29 մայիսի 1953)

հունիս – Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանը տալիս է 398 (ցերեկային) շրջանավարտ՝ 21 ֆիզիկոս և մեխանիկոս-մաթեմատիկոս, 18 քիմիկոս, 38 երկրաբան, 25 աշխարհագրագետ, 31 կենսաբան, 27 պատմաբան, 39 տնտեսագետ, 63 իրավաբան, 113 բանասեր, 23 պատմաբան-միջազգայնագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

3 հուլիսի – Մեծ դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր երեկո՝ նվիրված 1952-53 ուսումնական տարվա շրջանավարտներին: Ողջույնի խոսքով շրջանավարտներին է դիմում համալսարանի ռեկտոր Գ. Բ. Պետրոսյանը:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 10 հուլիսի 1953)

9 սեպտեմբերի – Մեծ դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված ռուս հանճարեղ գրող Լև Նիկոլանիչ Տոլստոյի ծննդյան 125-ամյակին:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 11 սպեմբերի 1953)

5 հոկտեմբերի – Մեծ դահլիճում տեղի է ունենում երեկո՝ նվիրված Երիտասարդության համաշխարհային երրորդ փառատոնի արդյունքներին:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 9 հոկտեմբերի 1953)

6 հոկտեմբերի – Վախճանվում է Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, հայ գրականության ամբիոնի վարիչ, դոկտոր-պրոֆեսոր Արսեն Հարությունի Տերտերյանը:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 9 հոկտեմբերի 1953)

11 հոկտեմբերի – Սկսվում են միջբուհական հանրապետական մրցումները՝ գնդակային խաղերի, քեթև ատլետիկայի, լողի և հեծանվի գծով: Միջբուհական այդ մրցումներին համալսարանից մասնակցում էր 76 մարզիկ:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 16 հոկտեմբերի 1953)

22-26 հոկտեմբերի – Մոսկվայում տեղի է ունենում ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը, որը գաղտնի քվեարկությամբ ընտրում է 51 նոր ակադեմիկոսներ և հաստատում ակադեմիայի բաժանմունքներում գաղտնի քվեարկությամբ ընտրված 148 նոր թղթակից անդամներ:

Նորընտիր ակադեմիկոսների թվում էր Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահ և աստրոֆիզիկայի ամ-

բիռնի վարիչ Վ. Հ. Համբարձումյանը:

Նոր քղթակից անդամների թվում ամենաերիտասարդը համալսարանի սան Ս. Մ. Մերգելյանն էր:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 30 հոկտեմբերի 1953)

նոյեմբեր – Համալսարանն ուներ 31 պրոֆեսոր, 92 դոցենտ: Դասախոսներից 32-ն ունեին դոկտորի, իսկ 134-ը՝ գիտության թեկնածուի աստիճան: Նրանք գիտամանկավարժական աշխատանք էին ծավալում համալսարանի 48 ամբիոններում:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 27 նոյեմբերի 1953)

21 նոյեմբերի – Տեղի է ունենում Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի և Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանի միացյալ գիտական նստաշրջանը՝ նվիրված խորհրդա-գերմանական միամսյակին:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 27 նոյեմբերի 1953)

1954

Համամիութենական հեռակա իրավաբանական ինստիտուտի երևանյան մասնաճյուղը հանձնվում է Երևանի պետական համալսարանին, ստեղծվում են երկու նոր բաժիններ՝ երեկոյան և հեռակա, վերջինս՝ հայկական և ռուսական մասնաճյուղերով:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մադոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 142)

Ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում ստեղծվում է դիֆերենցիալ հավասարումների և ֆունկցիոնալ անալիզի ամբիոն:

(Տե՛ս ԵՊՀ արխիվ, ց.1, գ. 1 (կող 9), ք.19)

Համալսարանը սկսեց պարբերաբար լույս ընծայել «Գիտական տեղեկագիր» հանդեսի՝ «Տնտեսագիտությունների սերիա» խորագրով պրակները:

(Տե՛ս Գիտությունը Հայաստանում 50 տարում, գլխ. խմբ.՝ Պետրոսյան Գ. Բ., Երևան 1973, էջ 210)

12-20 փետրվարի – Համալսարանի բոլոր ֆակուլտետներում անցկացվում են Ուսանողական գիտական ընկերության բաժանմունքների ընտրություններ:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 26 փետրվարի 1954)

9 մարտի – Համաձայն ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրի՝ ԽՍՀՄ մշակույթի նախարարությունից անջատվում են բարձրագույն կրթության հաստատությունները, և նորից ստեղծվում է ԽՍՀՄ բարձրագույն կրթության նախարարություն, որին ենթարկվում է Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետական համալսարանը:

(Տե՛ս ԵՊՀ արխիվ, ց. 1, գ. 1 (կող 9), ք. 3)

27 մարտի – Ռուսաց լեզվի ամբիոնի նախաձեռնությամբ համալսարանի ուսանողության համար կազմակերպվում է ասմունքի երեկո, որտեղ հանդես է գալիս Եկատերինա Քալանթարը:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 2 ապրիլի 1954)

17 ապրիլի – Ավարտվում է համալսարանի ուսանողական գիտական 16-րդ գիտաժողովը, որի ժամանակ ընթերցվում է 68 զեկուցում:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 23 ապրիլի 1954)

20 մայիսի – Համալսարանում սկսում է գործել ներքին սպասարկման հեռախոսային ցանցը:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 28 մայիսի 1954)

հունիս – Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանը տալիս է 493 (ցերեկային) շրջանավարտ՝ 45 ֆիզիկոս և մեխանիկոս-մաթեմատիկոս, 22 քիմիկոս, 51 երկրաբան, 31 աշխարհագրագետ, 37 կենսաբան, 33 պատմաբան, 54 տնտեսագետ, 58 իրավաբան, 162 բանասեր:

(Տե՛ս ԵՊՀ պատմության բանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

5 նոյեմբերի – Համալսարանի մեծ դահլիճում տեղի է ունենում պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության և վարչատնտեսական մասի աշխատողների հանդիսավոր նիստ՝ նվիրված Հոկտեմբերյան հեղափոխության 37-րդ տարեդարձին:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 12 նոյեմբերի 1954)

14 դեկտեմբերի – Համալսարանի փոքր դահլիճում տեղի է ունենում դասախոսների և ուսանողների հանդիպումը ակադեմիկոս Վ. Համբարձումյանի հետ:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 17 դեկտեմբերի 1954)

15-16 դեկտեմբերի – ԵՊՀ-ում անցկացվում է Միքայել Նալբանդյանի ծննդյան 125-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջանը:

(Տե՛ս «Սովետական ուսանողություն», 17 դեկտեմբերի 1954)

1955

Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանի բյուջեն կազմում էր ավելի քան 21 միլիոն ռուբլի:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 21 հունվարի 1956)

ԽՍՀՄ բուհերը տալիս են ավելի քան 250 հազար մասնագետ, որոնց մոտ կեսը աշխատանքի է ուղարկվում ծանր արդյունաբերական ձեռնարկություններ, իսկ ավելի քան 24 տոկոսը՝ գյուղատնտեսության բնագավառ:

(Տե՛ս «Երևանի համալսարան» 21 հունվարի 1956)

Իրավաբանական ֆակուլտետում կրիմինալիստիկայի գծով պալապմունքներ անցկացնելու համար անհրաժեշտ բազա ստեղծելու նպատակով քրեական իրավունքի ամբիոնին կից ստեղծվում է կրիմինալիստիկայի ուսումնական կաբինետ: Այս կաբինետը և կրիմինալիստիկայի ֆոտոլաբորատորիան հագեցած էին ժամանակի նորագույն սարքավորումներով:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մադոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 150)

Համալսարանի նյութի կառուցվածքի ամբիոնում (ամբիոնի վառիչ՝ Ն. Քոչարյան) Պ. Բեգիրզանյանի ղեկավարությամբ սկսվեցին պիմդ մարմինների ռենտգենաստրուկտուրային և ռենտգենասպեկտրային հետազոտությունները:

Նույն թվականին համալսարանում կազմակերպվեցին ռենտգենաստրուկտուրային և ռենտգենասպեկտրային լաբորատորիաներ: Դրանով իսկ սկսվեց բյուրեղների ֆիզիկական հատկությունների ուսումնասիրությունը՝ կախված նրանց տարածական ցանցի կատարելությունից:

(Տե՛ս Գիտությունը Հայաստանում 50 տարում, գլխ. խմբ.՝ Պետրոսյան Գ. Բ., Երևան 1973, էջ 394)

12 փետրվարի – Օքսֆորդի համալսարանի սլավոնական բաժինը ցանկություն է հայտնում գրքափոխանակում սկսելու Երևանի պետական համալսարանի հետ: Համալսարանի գրադարանը Օքսֆորդի համալսարան է ուղարկում գիտական աշխատությունների ֆիլոլոգիական սերիաներից 1-3-րդ պրակները, Ենիկոլոպոլի «Գրիբոյեդովը և Արևելքը» գիրքը: Դրանց փոխարեն Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանը ստանում է Օքսֆորդի համալսարանի սլավոնական բաժնի «Գիտական հոդվածների» 1-5 հատորները և «Օքսֆորդի անգլերեն լեզվի բացատրական բառարանը»:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 12 մայիսի 1956)

հունիս – Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանը տալիս է 579 շրջանավարտ (որից 43-ը՝ հեռակա բաժնում)՝ 51 ֆիզիկոս և մեխանիկոս-մաթեմատիկոս, 24 քիմիկոս, 26 երկրաբան, 36 աշխարհագրագետ, 39 կենսաբան, 39 պատմաբան, 91 տնտեսագետ, 102 իրավաբան, 171 բանասեր:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

9 հոկտեմբերի – Բիմիական ֆալուլտետի 2-րդ կուրսի ԼԿԵՄ բյուրոյի նախաձեռնությամբ կազմակերպվում է էքսկուրսիա Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 14 հոկտեմբերի 1955)

10 հոկտեմբերի – Տեղի է ունենում Պատմության ֆակուլտետի կուսակցական կազմակերպության հաշվետու-ընտրական ժողովը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 14 հոկտեմբերի 1955)

11-13 նոյեմբերի – Տեղի է ունենում համալսարանի կուսակցական կազմակերպության հաշվետու-ընտրական ժողովը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 19 նոյեմբերի 1955)

1956

Բարձրագույն կրթության նախարարության տվյալներով ԽՍՀՄ բուհերում սովորում է 1 միլիոն 865 հազար ուսանող՝ 140 հազարով ավելի, քան 1955 թ.:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 21 հունվարի 1956)

Կենսաբանական ֆակուլտետի նորակառույց մասնաշենքում սովորում է 890 ուսանող: Այդ մասնաշենքում էր տեղավորված Քիմիական, Կենսաբանական և Երկրաբանական ֆակուլտետների 13 ամբիոն: Նորակառույց մասնաշենքում գործում էին 74 լսարան, լաբորատորիա և կաբինետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 11 փետրվարի 1956)

Ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում ստեղծվում է պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոն (1966 թ. այն կոչվել է նյութի կառուցվածքի ամբիոն): Ամբիոնի վարիչն էր ֆիզմաթ գիտ. դոկտոր Պետրոս Բեգլիր-գանյանը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մարոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 49)

Համալսարանի գիտական գրադարանի մշակման բաժնից առանձնանում է համալրման բաժինը:

(Տե՛ս Ասլանյան Վ., Հայրապետյան Հ., Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանը, Երևան, 2001, էջ 4)

հունվար – Համալսարանի ուսանողների թիվը հասնում է 3.141-ի, դասախոսներիին՝ 306-ի, որից 40-ը պրոֆեսորներ էին, իսկ 114-ը՝ գիտությունների թեկնածուներ ու դոցենտներ:

Իսկ ասպիրանտների թվաքանակը 76 էր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 21 հունվարի 1956)

24 մարտի – Համալսարանի մի խումբ ուսանողներ մեկնում են Տարտու՝ Էստոնիայի պետական համալսարանի ՈՒԳԸ կոնֆերանսի աշխատանքներին մասնակցելու համար:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մարտի 1956)

հունիս – Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանը տալիս է 646 շրջանավարտ (որից 37-ը՝ հեռակա բաժնից)՝ 71 ֆիզիկոս և մեխանիկոս-մաթեմատիկոս, 44 քիմիկոս, 108 երկրաբան, 40 աշխարհագրագետ, 60 կենսաբան, 34 պատմաբան, 121 տնտեսագետ, 66 իրավաբան, 102 բանասեր:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

6 հունիսի – ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը որոշում է կայացնում երկրում ընդհանուր միջնակարգ կրթություն իրականացնելու և երիտասարդների՝ բարձրագույն կրթություն ստանալու համար առավել նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով ԽՍՀՄ միջնակարգ դպրոցների բարձր դասարաններում, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում 1956 թ. սեպտեմբերի 1-ից վերացնելու ուսման վարձը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 16 հունիսի 1956)

1957

ԽՍՀՄ ԳԱ «Вопросы советской науки» տեղեկագրում ԽՍՀՄ գիտական կենտրոնների ցանկում տեղ է գտել նաև Երևանի պետական համալսարանի ֆիզիկական քիմիայի ամբիոնը:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 14, գ. 12, թ. 5)

Կենսաբանության ֆակուլտետում ստեղծվում է հողագիտության և ագրոքիմիայի ամբիոն: Մինչ այդ գոյություն ուներ միայն հողագիտության լաբորատորիա՝ սիստեմատիկայի և մորֆոլոգիայի ամբիոնին կից:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 14, գ. 14, թ. 12)

Համալսարանի գիտական գրադարանի գրքային ֆոնդն ընդգրկում է 360.000 միավոր գրականություն, որից 31.000-ը ուսումնական գրքեր են, 20.000-ը՝ արտասահմանյան գրականություն:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 4, գ. 81, թ. 138)

Վետրվար – Երևանի պետական համալսարանի ռեկտոր է նշանակվում Գագիկ Դավթյանը (պաշտոնավարել է մինչև 1961 թ. մայիսի 11-ը):

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 1, գ. 15, թ. 242, տե՛ս նաև Երևանի պետական համալսարանի ռեկտորները (1919-1999), կազմ.՝ Ղարիբջանյան Լ. Պ., Երևան, 1999, էջ 87-93)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 765 շրջանավարտ (որից 235-ը՝ հեռակա բաժնում)՝ 70 ֆիզիկոս և մեխանիկոս-մաթեմատիկոս, 53 քիմիկոս, 76 երկրաբան, 42 աշխարհագրագետ:

հագրագետ, 37 կենսաբան, 39 պատմաբան, 269 տնտեսագետ, 81 իրավաբան, 98 բանասեր:

(Տե՛ս ԵՊՀ պատմության բանգարանի
արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

սեպտեմբեր – Համալսարանում ստեղծվում է Ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետ, որը գործում է մինչև 1962 թ.: Վ. Բրյուսովի անվան ռուսաց լեզվի և գրականության մանկավարժական ինստիտուտի ստեղծվելուց հետո համալսարանի բանասիրական ֆակուլտետի կազմում նորից մնում է ռուսաց լեզվի և գրականության բաժինը:

(Տե՛ս ԵՊՀ արխիվ, ց. 1, գ. 1 (կող 9), ք. 25)

29 նոյեմբերի – Համալսարանի կոլեկտիվը ընդունում է կոչ աստուճային և ջրածնային գեներլի փորձարկումները դադարեցնելու մասին: Այդ կոչը ուղարկվում է Սիավորված ազգերի կազմակերպություն:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 4 հունիսի 1958)

1958

Ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում հիմնադրվում է առաձգականության և սողքի տեսության ամբիոն, որը 1978 թ. վերանվանվել է հոծ միջավայրի մեխանիկայի ամբիոն:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, պատ. խմբ.՝

Ղարիբյան Գ., Երևան, 1981, էջ 48-49)

Համալսարանի գիտական գրադարանում ստեղծվում է այբբենական-ընթերցողական գրացուցակ:

(Տե՛ս Ասլանյան Վ., Հայրապետյան Հ., Երևանի պետական համալսարանի

Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանը,

Երևան, 2001, էջ 4)

Համալսարանում կազմակերպվում է ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ամբիոնը:

(Տե՛ս Գիտությունը Հայաստանում 50 տարում,

գլխ. խմբ.՝ Պետրոսյան Գ. Բ., Երևան, 1973, էջ 375)

1 հունվարի – «Երևանի համալսարան» թերթում հայտարարվում է, որ Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանը վերանվանվում է «Երևանի պետական համալսարան»:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 հունվարի 1958)

22 հունվարի – Երկարամյա անբասիր և գիտամանկավարժական բեղմնավոր գործունեության համար համալսարանի քաղաքատնտեսության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Զաքարե Գևորգի Բաշինջաղյանին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությամբ շնորհում է Հայկական ԽՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 12 փետրվարի 1958)

մարտ – Համալսարանի մեծ դահլիճում տեղի է ունենում հանդիպման երեկո՝ նվիրված քուրդ մտավորականությանը: Հանդիպմանը ներկա էին մաս մայրաքաղաքի այլ բուհերում և մանկավարժական ուսումնարանի քրդական բաժնում սովորող բազմաթիվ քուրդ ուսանողներ, գրողներ, մամուլի աշխատողներ, բանվորներ, մտավորականության ներկայացուցիչներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 19 մարտի 1958)

18-30 մարտի – Թբիլիսիի պետական համալսարան է գործուղվում Երևանի պետական համալսարանի հայ գրականության ամբիոնի դասախոս Էդ. Ջրբաշյանը, որը Բանասիրական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողների համար դասախոսություն է կարդում «Հայ քննադատական ռեալիզմը» թեմայով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 9 ապրիլի 1958)

29 մարտի – Մեծ դահլիճում տեղի է ունենում միտինգ՝ նվիրված Ալժիրի օրվան: Մասնակիցներն իրենց համերաշխությունն ու գորակցությունն են հայտնում Ալժիրի ժողովրդի հայրենասիրական պայքարին և կոչ անում ուսանողությանը իրենց ձայնը միացնելու Ասիայի և Աֆրիկայի աշխատավորությանը՝ Ալժիրում խաղաղություն հաստատելու գործում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 2 ապրիլի 1958)

մայիս – Իր աշխատանքներն է ավարտում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի 40-րդ գիտական նստաշրջանը: Այն ամփոփում է 1957 թ. ընթացքում համալսարանում կատարված գիտական հետազոտությունների արդյունքները:

Նստաշրջանի տասնմեկ բաժանմունքներում ընթերցվում են 80 գեկուցումներ, որոնց ճնշող մեծամասնությունը նվիրված էր գիտության մի շարք արդիական խնդիրների:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 7 մայիսի 1958)

9 մայիսի – Համալսարանի մեծ դահլիճում տեղի է ունենում պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հանդիպումը

Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների հետ՝ նվիրված գերմանական ֆաշիզմի դեմ ԽՍՀՄ-ի տարած հաղթանակի 13-րդ տարելարծին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 14 մայիսի 1958)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1150 շրջանավարտ (որից 116-ը՝ երեկոյան, 115-ը՝ հեռակա բաժիններից)՝ 170 ֆիզիկոս և մեխանիկոս-մաթեմատիկոս, 48 քիմիկոս, 77 երկրաբան, 65 աշխարհագրագետ, 50 կենսաբան, 55 պատմաբան, 277 տնտեսագետ, 85 իրավաբան, 323 բանասեր:

(Տե՛ս ԵՊՀ պատմության բանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

5 նոյեմբերի – Համալսարանի մեծ դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Հոկտեմբերյան հեղափոխության 41-րդ տարելարծին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 6 նոյեմբերի 1958)

12-13 նոյեմբերի – Համալսարանի մեծ դահլիճում հրավիրվում է հոբելյանական գիտական նստաշրջան՝ նվիրված հայ մեծ գրող Ալեքսանդր Շիրվանզադեի ծննդյան 100-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 19 նոյեմբերի 1958)

27 նոյեմբերի – Համալսարանում հաղիսավոր կերպով նշվում է Հաստատում խորհրդային իշխանության հաստատման 38-րդ տարելարծը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 3 դեկտեմբերի 1958)

3 դեկտեմբերի – Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողությունը, ինչպես նաև մայրաքաղաքի այլ բուհերի և մշակույթի աշխատողներ հանդիպում են Պրահայի համալսարանի չեխ հայագետ, դոկտոր, պրոֆեսոր Յ. Եղլիչկայի հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 դեկտեմբերի 1958)

4 դեկտեմբերի – Երկարատև հիվանդությունից հետո 73 տարեկան հասակում վախճանվում է գիտության վաստակավոր գործիչ, բազմավաստակ գիտնական, համալսարանի երկարամյա դասախոս, պրոֆեսոր Հարություն Գևորգի Անժուրը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 դեկտեմբերի 1958)

15 դեկտեմբերի – Համալսարանին առընթեր սկսում են գործել նախապատրաստական դասընթացներ, որտեղ ուսանում էին արտադրության մեջ աշխատող պատանիներ և աղջիկներ, ինչպես նաև խորհրդային բանակից զորացրված շատ երիտասարդներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 17 դեկտեմբերի 1958)

1959

Համալսարանում ստեղծվում է Երկրի արհեստական և կոսմիկական արբանյակների դիտումների և լուսանկարահանումների կայան (գիտական խորհրդատու՝ ակադեմիկոս Վ. Համբարձումյան, կայանի ղեկավար՝ դոց. Բ. Թումանյան): Կայանի ուսումնասիրությունների առարկան էր Երկրի թույլ լուսավորված արհեստական արբանյակների դիտման մեթոդների մշակումը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մադոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 194-195)

Ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետից բաժանվում և կազմավորվում է Ֆիզիկայի ֆակուլտետը, որի առաջին ղեկան ընտրվում է ՀԽՍՀ ԳԱ քոթակից անդամ Նորայր Քոչարյանը:

(Տե՛ս ԵՊՀ արխիվ, ց. 1, գ. 1 (կող 9), ք. 20)

Համալսարանում ստեղծվում է պոլիմերման պրոցեսների կինետիկայի և պոլիմերների ֆիզիկա-քիմիական հատկությունների ուսումնասիրության պրոբլեմային գիտահետազոտական լաբորատորիա (գիտական ղեկավար՝ պրոֆ. Հ. Չալքիկյան): Լաբորատորիայի գիտական ուղղությունն էր քիմիական պրոցեսների կատալիզի և հարուցման մեխանիզմը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մադոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 193)

Համալսարանում ստեղծվում է էլեկտրոնային հաշվիչ մեքենաների և կառավարվող մեքենաների պրոբլեմային գիտահետազոտական լաբորատորիա:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մադոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 194)

Համալսարանում ստեղծվում է հակահաղորդիչ և էլեկտրատեխնիկական նյութերի ֆիզիկայի գիտահետազոտական պրոբլեմային լաբորատորիա, որտեղ ուսումնասիրվում են որոշակի տիպի կիսահաղորդչային միացություններ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Ադամյան Հ., Բարսեղյան Հ., Մադոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 194)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 970 շրջանավարտ (որից 101-ը՝ երեկոյան, 78-ը՝ հեռակա բաժիններում)՝ 173 ֆիզիկոս և մեխանիկոս-մաթեմատիկոս, 50 քիմիկոս, 75 երկրաբան, 33 աշխարհագրագետ, 81 կենսաբան, 46 պատմաբան, 279 տնտեսագետ, 57 իրավաբան, 176 բանասեր:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

17 հունիսի – Համաձայն ԽՍՀՄ Նախարարների խորհրդի N 671 որոշման՝ միութենական հանրապետությունների ենթակայության տակ են դրվում բարձրագույն ուսումնական հաստատությունները: Երևանի պետական համալսարանն անցնում է ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության կոմիտեի ենթակայության տակ:

(Տե՛ս ԵՊՀ արխիվ, գ. 1, գ. 1 (կող 9), ք. 3)

10 դեկտեմբերի – ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը որոշում է կայացնում «Ծառայության մեջ համատեղությունների սահմանափակման մասին»: Այդ որոշման համաձայն՝ վերացվում են նաև հաստիքային համատեղությունները բարձրագույն ուսումնական հաստատություններում: Նախարարությունների և գերատեսչությունների ղեկավարներին, որոնք տնօրինում էին բարձրագույն ուսումնական հաստատությունները, իրավունք է տրվում, իբրև բացառության կարգով, մի այլ ուսումնական հաստատությունում մանկավարժական աշխատանք կատարելու՝ միայն ժամավճարի կարգով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 9 հունվարի 1960)

1960

Համալսարանի գիտական գրադարանում բացվում է տեղեկատու-մատենագիտության բաժինը:

(Տե՛ս Ասլանյան Վ., Հայրապետյան Հ., Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանը, Երևան, 2001, էջ 4)

12 հունվարի – Անգլիայի թագավորական աստղագիտական ընկերությունը ոսկե մեդալով է պարգևատրում ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահ, Բյուրականի աստրոֆիզիկական աստղադիտարանի տնօրեն Վ. Հ. Համբարձումյանին՝ տեսական աստղագիտության և աստղաբաշխության ասպարեզում կատարած աշխատանքի համար:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 16 հունվարի 1960)

փետրվար – Նյու Յորք քաղաքի բնակիչ Հարություն Հազարյանի կողմից Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանին են հանձնվում 277 արժեքավոր ձեռագրեր՝ արաբերենով, թուրքերենով և պարսկերենով:

Այդ ձեռագրերի մեծ մասը լեզվագիտական, փիլիսոփայական, օրենսգիտական, պատմական և առողջապահական բնույթ ունի:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 16 փետրվարի 1960)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 981 շրջանավարտ (որից 131-ը՝ երեկոյան, 136-ը՝ հեռակա բաժիններից)՝ 137 ֆիզիկոս և մեխանիկոս-մաթեմատիկոս, 49 քիմիկոս, 25 երկրաբան, 22 աշխարհագրագետ, 63 կենսաբան, 37 պատմաբան, 339 տոմեսագետ, 35 իրավաբան, 274 բանասեր:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

սեպտեմբեր – Համալսարանի մեծ դահլիճում տեղի է ունենում մայրաքաղաքի Բարձրագույն ուսումնական հաստատությունների հասարակագիտական ամբիոնների դասախոսների սեմինար:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 հոկտեմբերի 1960)

12-15 հոկտեմբերի – ԵՊՀ-ում հրավիրվում է անդրկովկասյան երեք հանրապետությունների համալսարանների հերթական միացյալ գիտական նստաշրջանը, որը նվիրված էր Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 40-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 19 հոկտեմբերի 1960)

29 հոկտեմբերի – Հանդիսավոր պայմաններում մեկնարկում է Չարենցի փողոցում կառուցվող համալսարանի կենտրոնական մասնաշենքի (որի երկու թևերը շահագործման էին հանձնվել 1959 թ.) շինարարությունը (այն ավարտվեց 1965 թ.):

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 32, թ. 2 տե՛ս նաև «Երևանի համալսարան», 5 նոյեմբերի 1960)

26 նոյեմբերի – Թբիլիսիի պետական համալսարանը մեծ հանդիսավորությամբ նշում է համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Լևոն Մելիքսեթ-Բեկի ծննդյան 70 և գիտամանկավարժական գործունեության 50-ամյակները:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 7 դեկտեմբերի 1960)

1961

Երկրաբանական ֆակուլտետում սկսում են կադրեր պատրաստել օգտակար հանածոների որոնման գեոֆիզիկական մեթոդների գծով:

(Տե՛ս Գիտությունը Հայաստանում 50 տարում, գլխ. խմբ.՝ Պետրոսյան Գ. Բ., Երևան, 1973, էջ 582)

Ֆիզիկայի ֆակուլտետում ստեղծվում է բարձր էներգիաների և միջուկային ֆիզիկայի ամբիոնը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Ադամյան Հ., Բարսեղյան Հ., Մաղոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 52)

24 հունվարի – Ժողովրդական տնտեսության և մշակույթի համար բարձրորակ կադրեր պատրաստելու, ինչպես նաև հանրապետությունում գիտության զարգացման ասպարեզում մեծ ծառայությունների համար Երևանի պետական համալսարանը պարգևատրվում է Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 25 հունվարի 1961)

24 մարտի – Համալսարանականների նախաձեռնությամբ տեղի է ունենում հասարակական կարգով նախապատրաստական դասընթացների բացումը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 5 ապրիլի 1961)

19-22 ապրիլի – Երևանի պետական համալսարանում տեղի է ունենում ժողովուրդների բարեկամությանը նվիրված ուսանողական գիտաժողով, որի աշխատանքներին մասնակցում էին Խորհրդային Միության բուհերի ուսանողներ:

(Տե՛ս «Սովետական Հայաստան», 16 մայիսի 1962)

11 մայիսի – ՀԽՍՀ Նախարարների խորհրդի բարձրագույն և միջնակարգ մանսագիտական կրթության կոմիտեի նախագահի հրամանով Երևանի պետական համալսարանի ռեկտոր է նշանակվում Նազուշ Հարությունյանը (պաշտոնավարել է մինչև 1963 թ. ապրիլ ամիսը):

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 1, գ. 15, թ. 242, տե՛ս նաև Երևանի պետական համալսարանի ռեկտորները (1919-1999), կազմ. Ղարիբջանյան Լ. Պ., Երևան, 1999, էջ 95-101)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 865 շրջանավարտ (որից 135-ը՝ երեկոյան, 137-ը՝ հեռակա բաժիններից)՝ 33 ֆիզիկոս, 39 մեխանիկոս-մաթեմատիկոս, 39 քիմիկոս, 56 երկրաբան, 24 աշխարհագրագետ, 45 կենսաբան, 34 պատմաբան, 313 տնտեսագետ, 53 իրավաբան, 229 բանասեր:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, թ. 28)

8-16 սեպտեմբերի – Երևանի պետական համալսարանում էր գտնվում ԽՍՀՄ ԳԱ Լենինգրադի բարձր մոլեկուլյար միացությունների գիտահետազոտական ինստիտուտի լաբորատորիայի վարիչ, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Վ. Վոլկենշտեյնը, որը համալսարանի Ֆիզիկայի, Քիմիական և Կենսաբանական ֆակուլտետների բարձր կուրսերի ուսանողների համար կարդում է դասախոսություններ պոլիմերների ֆիզիկայի և մոլեկուլյար բիոֆիզիկայի դասընթացներից:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 սեպտեմբերի 1961)

հոկտեմբեր – Համալսարանում կազմավորվում է Արտասահմանյան քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Ադամյան Հ., Բարսեղյան Հ., Մադոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 177)

դեկտեմբեր – Պատմության ֆակուլտետի ուսանողները նշում են Հաստատանի հին մայրաքաղաքներից մեկի՝ Անիի կառուցման

1000-ամյակը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 13 դեկտեմբերի 1961)

21 դեկտեմբերի – ՀԽՍՀ Նախարարների խորհրդի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության կոմիտեի հրամանով ԵՊՀ-ից անջատվում են Ռուս բանասիրության և Օտար լեզուների ֆակուլտետները, և ստեղծվում է Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 24 հունվարի 1962)

1962

10 ապրիլի – Համալսարանում իր աշխատանքներն է սկսում Գյուտարարների և ռացիոնալիզատորների հայկական ընկերությանը կից գործող համալսարանի ընդհանուր կոնստրուկտորական բյուրոն:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 11 ապրիլի 1962)

7-10 մայիսի – ԵՊՀ-ում տեղի է ունենում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հերթական՝ 42-րդ գիտական նստաշրջանը, որին մասնակցում էին Երևան քաղաքի գիտական հասարակայնության բազմաթիվ ներկայացուցիչներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 23 մայիսի 1962)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 678 շրջանավարտ (որից 160-ը՝ երեկոյան, 76-ը՝ հեռակա բաժիններից)՝ 54 ֆիզիկոս, 58 մեխանիկոս-մաթեմատիկոս, 58 քիմիկոս, 24 երկրաբան, 31 աշխարհագրագետ, 36 կենսաբան, 27 պատմաբան, 238 տնտեսագետ, 75 իրավաբան, 77 բանասեր:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

սեպտեմբեր – Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողական գիտական ընկերությունների աշխատանքները համակարգելու, գիտահետազոտական աշխատանքի փորձը տարածելու և այդ ուղղությամբ պարբերական միջբուհական գիտական նստաշրջաններ, գիտաժողովներ կազմակերպելու նպատակով ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության պետական կոմիտեին կից ստեղծվում է Ուսանողական գիտական ընկերության հանրապետական խորհուրդ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 սեպտեմբերի 1962)

24-31 հոկտեմբերի – ԵՊՀ-ում և ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի ու մեխանիկայի ինստիտուտում տեղի է ունենում թաղանթների և սալերի տեսության համամիութենական գիտաժողով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 5 նոյեմբերի 1962)

22 դեկտեմբերի – Համալսարանի մեծ դահլիճում տեղի է ունենում ուսանողների և դասախոսների հանդիպում աշխարհահռչակ երգչուհի Գոհար Գասպարյանի հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 29 դեկտեմբերի 1962)

1963

ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայում և հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում կատարվող գիտական աշխատանքները համակարգելու և ժամանակակից գիտական խնդիրները մշակելու նպատակով էլեկտրոնային-հաշվիչ մեքենաների և կառավարվող մեքենաների պրոբլեմային գիտահետազոտական լաբորատորիան և Հայաստանի ԳԱ հաշվողական կենտրոնը միացվում են, և նրանց հիմքի վրա ստեղծվում է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի միացյալ հաշվողական կենտրոնը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մաղոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 194)

Երևանի պետական համալսարանի պրոբլեմային ճառագայթային լաբորատորիայի և ՀԽՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի ու էլեկտրոնիկայի ինստիտուտի տեսական և քվանտային էլեկտրոնիկայի բաժինների հիման վրա ստեղծվում է միացյալ ճառագայթային լաբորատորիան (ՄՃԼ): ՄՃԼ ջանքերով Կիրովականի քիմիական կոմբինատի կորունդի արտադրամասում սկսվում է քվանտային օպտիկական գեներատորների հիմնական մասը հանդիսացող սուտակի միաբյուրեղների աճեցումը, իսկ Արզնիի ճշգրիտ տեխնիկական քարերի գործարանում՝ այդ միաբյուրեղների օպտիկական մշակումը, դրանց հիման վրա քվանտային օպտիկական գեներատորների արտադրությունը:

(Տե՛ս Գիտությունը Հայաստանում 50 տարում, գլխ. խր.՝ Պետրոսյան Գ. Բ., Երևան, 1973, էջ 388)

Երևանի պետական համալսարանի գիտահետազոտական բաժնի գծով բացվում է ցիտոլոգիայի գիտահետազոտական լաբորատորիան (գիտական ղեկավար՝ պրոֆ. Հ. Բատիկյան): Լաբորա-

տորիայի գիտական աշխատանքների թեման էր՝ «Իոնացնող ճառագայթների (զամմա, ռենտգեն) և քիմիական մուտագենների ազդեցության ուսումնասիրությունը բույսերի փոփոխականության վրա և այդ ազդեցության բացահայտումը քրոմոսոմային հավաքում»։ Նույն ժամանակամիջոցում համալսարանում կազմակերպվում է նաև տեխնիկական կենսաքիմիայի գիտահետազոտական լաբորատորիան (գիտական ղեկավար՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Տեր-Կարապետյան)։

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մաղոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 196)

մարտ – Երևանում հյուրընկալվում են Թեհրանի համալսարանի մի խումբ ուսանող-ծանրորդներ, որոնք ընկերական հանդիպումներ են ունենում Երևանի սպորտային ընկերությունների մարզիկների, ինչպես նաև ԵՊՀ ծանրորդների թիմի հետ։

(Տե՛ս «Երևանի համալսարան», 27 մարտի 1963)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 720 շրջանավարտ (որից 173-ը՝ երեկոյան, 144-ը՝ հեռակա բաժիններից)՝ 79 ֆիզիկոս, 45 մեխանիկոս-մաթեմատիկոս, 38 քիմիկոս, 23 երկրաբան, 22 աշխարհագրագետ, 41 կենսաբան, 27 պատմաբան, 255 տնտեսագետ, 136 իրավաբան, 54 բանասեր։

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

հունիս – Երևանի պետական համալսարանի ռեկտոր է նշանակվում Հրանտ Բատիկյանը (պաշտոնավարել է մինչև 1966 թ. ապրիլի 28-ը)։

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 1, գ. 17, ք. 2 հակ. կողմ, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 20, ց. 10, գ. 524, ք. 45)

12 հունիսի – Պատմության ֆակուլտետի ուսանողներին և դասախոսներին հյուրընկալվում է Ամերիկայի կոմունիստական կուսակցության ակադավոր գործիչներից մեկը՝ Հենրի Ուինսթոնը։

(Տե՛ս «Երևանի համալսարան», 12 հունիսի 1963)

4-7 հոկտեմբերի – Համալսարանում տեղի է ունենում գիտական
 մատաչքյան՝ նվիրված Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին:
 (Տե՛ս «Երևանի համալսարան», 9 հոկտեմբերի 1963)

30 դեկտեմբերի – Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագա-
 հության ընդունարանում Հայկական ԽՍՀ Նախարարների
 խորհրդի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթու-
 թյան կոմիտեի նախագահ Գևորգ Հայրյանը կազմակերպում է
 մեծ ընդունելություն՝ ի պատիվ Երևանի բարձրագույն ուսում-
 նական հաստատություններում սովորող արտասահմանյան
 ուսանողների:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 8 հունվարի 1964)

1964

Քիմիական ֆակուլտետում ստեղծվում է քիմիական թերմոդինամիկայի և մոլեկուլի կառույցի ամբիոն, որը հետագայում վերանվանվում է տեսական քիմիայի ամբիոն: Ամբիոնն ապահովում էր թերմոդինամիկայի, քվանտային քիմիայի, նյութի կառույցի, բյուրեղաքիմիայի դասավանդումը և հետազոտության ֆիզիկական մեթոդներից լաբորատոր պարապմունքների անցկացումը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, պատ. խմբ.՝ Ղարիբյան Գ., Երևան, 1981, էջ 102-103)

Հայկական ԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության կոմիտեի որոշմամբ համալսարանում կազմավորվում է Ապրանքագիտության և առևտրի էկոնոմիկայի ֆակուլտետ, որն ուներ ցերեկային (արտադրությունից կտրված), երեկոյան և հեռակա (արտադրությունից չկտրված) ուսուցման ձևեր և հանրապետության պետական ու կոոպերատիվ առևտրի համար մասնագետներ էր պատրաստում երեք մասնագիտությունների գծով՝ ապրանքագիտություն և արդյունաբերական ապրանքների առևտրի կազմակերպում, ապրանքագիտություն և պարենային ապրանքների առևտրի կազմակերպում, առևտրի էկոնոմիկա:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մադոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 172-173)

Ֆիզիկայի ֆակուլտետում հիմնվում է պինդ մարմնի ֆիզիկայի պրոբլեմային գիտահետազոտական լաբորատորիա (ղեկավար՝ Պ. Բեգիրզանյան): Նյութի կառուցվածքի ամբիոնում և գիտահետազոտական լաբորատորիայում այդ գծով ուսումնասիրությունները հիմնականում կատարվում էին «Պինդ մարմինների (բյուրեղների, թեթանման բյուրեղների և թաղանթների) ֆիզիկական հատկությունների

(ջերմային, մագնիսական, էլեկտրական և մեխանիկական) հետազոտությունները՝ կախված նրանց կառուցվածքային կատարելությունից» խնդրի շրջանակներում: Խնդրի հիմնական նպատակն էր ստանալ ցանկալի հատկություններով նյութեր:

(Տե՛ս Գիտությունը Հայաստանում 50 տարում, գլխ. խմբ.՝ Պետրոսյան Գ. Բ., Երևան, 1973, էջ 394)

Երևանի պետական համալսարանի բիոքիմիայի ամբիոնին կից ստեղծվում է տեխնիկական բիոքիմիայի լաբորատորիա:

(Տե՛ս Գիտությունը Հայաստանում 50 տարում, գլխ. խմբ.՝ Պետրոսյան Գ. Բ., Երևան, 1973, էջ 507)

Կազմավորվում է Հայաստանի մամուլի պետական կոմիտեն: Համալսարանի հրատարակչությունը առժամանակ՝ մինչև 1968 թ., մտնում է այդ համակարգի մեջ և վերանվանվում «Սիտք»:

(Տե՛ս Երևանի համալսարանի հրատարակչություն. Մատենագիտություն, կազմ.՝ Պետրոսյան Հ., Երևան, 2002, էջ 6)

Ֆիզիկայի ֆակուլտետում ստեղծվում է օպտիկայի ամբիոն:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, պատ. խմբ.՝ Ղարիբյան Գ., Երևան, 1981, էջ 71)

մարտ – Պատմության ֆակուլտետ են այցելում Կալկաթայի (Հնդկաստան) համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր Ն. Ս. Սինգիը և Հնդկաստանի ազգային արխիվի տնօրեն Կ. Գ. Բհարիալան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 ապրիլի 1964)

20-24 մարտի – Հայկական ԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտը և Երևանի պետական համալսարանի մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետը կազմակերպում են երիտասարդ գիտաշխատողների գիտաժողով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 25 մարտի 1964)

մայիս – Համալսարանում հիմնվում է գիտական կոմունիզմի ամբիոն (վարիչ՝ դոց. Կ. Անանիկյան):

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մադոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 109)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 607 շրջանավարտ (որից 118-ը՝ երեկոյան, 116-ը՝ հեռակա բաժիններից)՝ 60 ֆիզիկոս, 45 մեխանիկոս-մաթեմատիկոս, 36 քիմիկոս, 23 երկրաբան, 19 աշխարհագրագետ, 36 կենսաբան, 20 պատմաբան, 208 տնտեսագետ, 108 իրավաբան, 52 բանասեր:

(Տե՛ս ԵՊՀ պատմության բանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

հունիս – Համալսարանը հյուրընկալում է Փարիզի Սորբոնի համալսարանի պրոֆեսոր հայազգի Շառլ Դեդեյանին: Վերջինս Բանասիրական ֆակուլտետի ուսանողության և դասախոսների առջև հանդես է գալիս Վ. Հյուգոյի, Գ. Ֆլորերի և արևելագիտության մի շարք կարևոր հարցերի մասին դասախոսությամբ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 հունիսի 1964)

սեպտեմբեր – Համալսարանում վերաբացվում է Ժուռնալիստիկայի բաժինը:

(Տե՛ս ԵՊՀ արխիվ, ց. 1, գ. 1 (կող 9), ք. 25)

15 սեպտեմբերի – Երևանի պետական համալսարան է այցելում Հնդկաստանի նախագահ, դոկտոր Սարվապալի Ռադիակրիշնան: Հնդկաստանի նախագահի գլխավորած պատվիրակության կազմում էին նաև Արտաքին գործերի նախարարության պետական նախարար Լաքշմի Ն. Մեհոնը, Խորհրդային Միությունում Հնդկաստանի դեսպան Տրիլոկի Ն. Քաուլը, նախագահի քարտուղար Շրի Ս. Դատը, նախագահի ռազմական քարտուղար, գեներալ-մայոր Դ. Գ. Ռ. Ռաջվադեն, Հնդկաստանի արտգործնախարարության բաժնի վարիչ, դոկտոր Ս. Գոպալը: Համալսարանի ռեկտոր Հր. Բատիկյանը հնդիկ հյուրերին հա-

կիրճ խոսքով ներկայացնում է համալսարանի պատմությունը, նրա ֆակուլտետները, գիտատեսումնական հնարավորությունները: Երևանի պետական համալսարանի պորֆեսորադասախոսական կազմի անունից դոկտոր Ռադիակրիշնային ողջունում է Պատմության ֆակուլտետի ԽՍՀՄ ժողովուրդների ամբիոնի վարիչ Վ. Ռշտունին: Այնուհետև ելույթ է ունենում Հնդկաստանի նախագահը, որը խոսում է հայ ժողովրդի մշակույթի, Հնդկաստանի հայ համայնքի մասին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 16 սեպտեմբերի 1964)

13 հոկտեմբերի – Համալսարանի մեծ դահլիճում ուսանողների և դասախոսների մասնակցությամբ հանդիսավորությամբ նշվում է ռուս մեծ բանաստեղծ Մ. Յու. Լերմոնտովի ծննդյան 150-ամյակը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 21 հոկտեմբերի 1964)

1965

Ֆիզիկայի ֆակուլտետում ստեղծվում է բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկական ֆիզիկայի ամբիոն:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան,
պատ. խմբ.՝ Ղարիբյան Գ., Երևան, 1981, էջ 76)

Ֆիզիկայի ֆակուլտետում բացվում է կիսահաղորդիչների և դիէլեկտրիկների ամբիոն:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մաղոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 52)

Համալսարանի գրադարանում հիմնվում է սփյուռքահայ բարերար Գալուստ Գյուլբենկյանի մվիրատվության ֆոնդ:

(Տե՛ս Ասլանյան Վ., Հայրապետյան Հ., Երևանի պետական համալսարանի
Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական
գրադարանը, Երևան, 2001, էջ 57)

փետրվար – Համալսարանի գիտական գրադարանը հին շենքից տեղափոխվում է համալսարանի նորակառույց շենք (Մոսկվյան 1):

(Տե՛ս Ասլանյան Վ., Հայրապետյան Հ., Երևանի պետական համալսարանի
Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական
գրադարանը, Երևան, 2001, էջ 56)

27 փետրվարի – Համալսարանի մեծ դահլիճում ուսանողների և դասախոսների հյուրերն էին Մուսա լեռան ինքնապաշտպանությանը մասնակցած մուսալեռցիները:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 մարտի 1965)

25-31 մարտի – Երևանի պետական համալսարանում տեղի է ունենում համամիութենական հնագիտական ուսանողական 11-րդ կոնֆերանսը, որի աշխատանքներին մասնակցում էին ԽՍՀՄ տարբեր համալսարաններից 61 ուսանողներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 21 ապրիլի 1965)

ապրիլ – Տեղի է ունենում ԵՊՀ գլխավոր մասնաշենքի բացմանը նվիրված հանդիսավոր երեկո:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 14 ապրիլի 1965)

ապրիլ – Համալսարանում տեղի է ունենում հանդիպում Վասպուրականի 1915 թ. ինքնապաշտպանության հերոսամարտերի մասնակիցների հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 24 ապրիլի 1965)

20 ապրիլի – Համալսարանում տեղի է ունենում Մոսկվայի «Բարեկամության տանը» կից գործող «ԽՍՀՄ-ում ուսանողների մշտական Լատինաամերիկյան սեմինարի» հայկական բաժանմունքի հիմնադիր նիստը:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 39, ք. 72)

20 ապրիլի – ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան և Երևանի պետական համալսարանը համատեղ կազմակերպելում են 1915 թ. Մեծ եղեռնի 50-ամյակին նվիրված գիտական նստաշրջան: Նստաշրջանը բացում է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 24 ապրիլի 1965)

6 մայիսի – Պատմության ֆակուլտետի ուսանողների և դասախոսների հյուրն էր Հայրենական մեծ պատերազմի մասնակից Վաղարշակ Առաքելյանը՝ «Արաքս» մականունով հայտնի հետախույզը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 մայիսի 1965)

7-11 մայիսի – Տեղի է ունենում Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության հերթական՝ 28-րդ կոնֆերանսը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 մայիսի 1965)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 993 շրջանավարտ (որից 233-ը՝ երեկոյան, 250-ը՝ հեռակա բաժիններից)՝ 96 ֆիզիկոս, 95 մեխանիկոս-մաթեմատիկոս, 67 քիմիկոս, 28 երկրաբան, 26 աշխարհագրագետ, 74 կենսաբան, 82 պատմաբան, 205 տնտեսագետ, 64 իրավաբան, 119 բանասեր, 137 ապրանքագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

հունիս – ԵՊՀ-ում գործում էին 11 ֆակուլտետ, 65 ամբիոն, ավելի քան 60 լաբորատորիա և կաբինետ, 10 պրոֆեսորադոկտորական լաբորատորիա, աստղադիտարան, մի քանի կահավորված ընթերցասրահներ: Համալսարանի պրոֆեսորադոսսախոսական կազմում ընդգրկված էին 500 հոգի, որոնց թվում՝ ԽՍՀՄ ԳԱ 1 ակադեմիկոս, ՀԽՍՀ ԳԱ 16 ակադեմիկոս և թղթակից անդամ, 30 դոկտոր-պրոֆեսոր, 15 գիտության վաստակավոր գործիչ, 218 դոցենտ և գիտության թեկնածու:

Համալսարանում սովորում էր 9000 ուսանող, այդ թվում՝ արտադրությունից չկտրված (երեկոյան և հեռակա բաժիններում)՝ 3820 երիտասարդ:

Ուսման տևողությունը բնական գիտությունների ֆակուլտետներում 5.5 տարի է, իսկ հումանիտար ֆակուլտետներում՝ 5 տարի, որոշ ֆակուլտետներում և բաժիններում՝ 4 տարի:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 2 հունիսի 1965)

18 հունիսի – Հանրապետության բուհերի շատ ուսանողների հետ շուրջ 80 համալսարանականներ Երևանից «Բարեկամություն» գնացքով մեկնում են Ղազախական ԽՍՀ՝ մասնակցելու խոպանի յուրացման աշխատանքներին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 սեպտեմբերի 1965)

26 հունիսի – Աշխարհում առաջին կին տիեզերագնաց Վալենտինա Տերեշկովան և տիեզերագնաց Անդրիան Նիկոլասը այցելում են Երևանի պետական համալսարան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 26 հունիսի 1965)

6 սեպտեմբերի – Երևանի պետական համալսարանում իր աշխատանքներն է սկսում անալիտիկ ֆունկցիաների տեսությանը նվիրված միջազգային գիտաժողովը: Աշխարհի մաթեմատիկոսների այդ գիտաժողովը կազմակերպել էր ՀԽՍՀ ԳԱ-ն ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի և Միջազգային մաթեմատիկական միության հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 8 սեպտեմբերի 1965)

նոյեմբեր – ԵՊՀ հայ ժողովրդի պատմության ամբիոնի հրավերով Հայաստանում գտնվող ռումինահայ նշանավոր պատմաբան, բանասեր Հակոբ Սիրունին Պատմության ֆակուլտետի դասախոսների և ուսանողների համար մի շարք դասախոսություններ է կարդում հայ-թուրքական հարաբերությունների և Հայ դատի վերաբերյալ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 24 նոյեմբերի 1965)

20 նոյեմբերի – Մտահոգված հանրապետությունում գեներտիկայի զարգացման գործի հետ մնալու խնդրով՝ Հայկական ԽՍՀ ԳԱ նախագահությունը, Գյուլատնտեսական նախարարության կողեգիան և Երևանի պետական համալսարանի ռեկտորատը իրենց միացյալ նիստում քննարկելու են գեներտիկայի և սելեկցիայի վիճակը Հայաստանում և կազմում են կարևոր միջոցառումների ծրագիր՝ այդ գիտության զարգացման համար: Այդ որոշումները նպաստեցին Երևանի անասնաբուժական-անասնաբուժական և Հայկական անասնաբուժության և անասնաբուժության ինստիտուտներում ընտանի կենդանիների գեներտիկայի ու սելեկցիայի վերաբերյալ ուսումնասիրությունների խորացմանը:

(Տե՛ս Գիտությունը Հայաստանում 50 տարում գլխ. խմբ.՝ Պետրոսյան Գ. Բ., Երևան, 1973, էջ 929)

դեկտեմբեր – Հայտարարվում է Երևանի պետական համալսարանը
խորհրդանշող կրծքանշան-հուշանվերի էսքիզի մրցանակա-
բաշխություն:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 դեկտեմբերի 1965)

1966

փետրվար – Համալսարանն ուներ 12 ֆակուլտետ և 67 ամբիոն: Գասախոսների շարքում կային ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի մեկ ակադեմիկոս, ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի 18 ակադեմիկոսներ և թղթակից անդամներ, 46 գիտության դոկտորներ ու պրոֆեսորներ, 228 գիտության թեկնածուներ, 118 դոցենտներ: Ասպիրանտուրայում սովորում էին արտադրությունից կտրված 168, իսկ առանց արտադրությունից կտրվելու՝ 70 երիտասարդներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 19 փետրվարի 1966)

19 փետրվարի – Համալսարանի մեծ դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված համալսարանի հիմնադրման 45-ամյակին: «Երևանի համալսարանը 45 տարում» ընդարձակ զեկուցումով հանդես է գալիս ռեկտոր Հ. Բատիկյանը¹⁹:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 19 փետրվարի, 2 մարտի 1966)

20 փետրվարի – Շահագործման հանձնվեց համալսարանի ավտոմատ հեռախոսակայանը, որը նախատեսված էր 500 հեռախոսակետերի համար:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 16 մարտի 1966)

մարտ – Գիտնական կանանց թիվը համալսարանում 241 էր, որից 2-ը ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամն էին, 3-ը՝ դոկտոր, պրոֆեսոր, 28-ը՝ դոցենտ, 39-ը՝ գիտությունների թեկնածու, 125-ը՝ ավագ դասախոս, և 46-ը՝ դասախոս՝ ասիստենտ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 9 մարտի 1966)

ապրիլ – Շահագործման հանձնվեց համալսարանի նորակառույց համալիրը: Նոր համալիրի նախագծման և կառուցման աշխատանքները տեղեցին ավելի քան 17 տարի:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 32, ք. 2)

28 ապրիլ – ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարար Գ. Հայրյանի հրամանով Երևանի պետական համալսարանի ռեկտոր նշանակվեց Սկրտիչ Ներսիսյանը (պաշտոնավարել է մինչև 1977 թ. մայիս ամիսը):

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 20, ց. 10, գ. 524, ք. 46,

տե՛ս նաև Երևանի պետական համալսարանի ռեկտորները (1919-1999), կազմ.՝ Ղարիբջանյան Լ. Պ., Երևան, 1999, էջ 109-117)

25 մայիս – ԵՊՀ մեծ հանդիսասրահում համալսարանականները ընդունեցին Բուլղարիայի արվեստի և գրականության հայաստանյան տասնօրյակի բազմաթիվ մասնակիցների:

Բուլղարիայի արվեստի և գրականության տասնօրյակի մեկնարկը տրվեց ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի ճեմասրահում բացված ցուցահանդեսով, որը մվիրված էր բուլղար ժողովրդի մշակույթին, գրականությանը և կերպարվեստին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 28 մայիսի 1966)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1095 շրջանավարտ (որից 295-ը՝ երեկոյան, 254-ը՝ հեռակա բաժիններից)՝ 56 ֆիզիկոս, 87 մեխանիկոս-մաթեմատիկոս, 120 քիմիկոս, 18 երկրաբան, 19 աշխարհագրագետ, 104 կենսաբան, 35 պատմաբան, 177 տնտեսագետ, 90 իրավաբան, 284 բանասեր, 105 ապրանքագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

15 սեպտեմբերի – ԵՊՀ «Կռունկ» միջազգային կապերի ուսանողական ակումբի և «Լատինական Ամերիկայի երկրների պրոբլեմները ուսումնասիրողների մշտական սեմինար»-ի անդամների

հյուրերն էին «Արգենտինա-Սովետական Սիւրբյուն» բարեկամական կապերի արգենտինյան ընկերության քարտուղար, դոկտոր Խոսե Ֆրանսիսկո Դալմաստրոն, տիկ. Ֆարա Դալմաստրոն, արգենտինյան երիտկազմակերպության ներկայացուցիչ Լուիզ Խայանը և տիկ. Արմենուխի Դեյրմենջյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 23 սեպտեմբերի 1966)

նոյեմբեր – Երևանում անցկացվեց ոչ մետաղային և անօրգանական նյութերի ներքին շփման հարցերին նվիրված համամիութենական խորհրդակցություն, որը կազմակերպվել էր Ֆիզիկայի ֆակուլտետի և Վորոնեժի պոլիտեխնիկական ինստիտուտի ֆիզիկոսների համատեղ ջանքերով: Խորհրդակցությանը մասնակցում էին ԽՍՀՄ 15 քաղաքների 46 բուհերի ու գիտահետազոտական ինստիտուտների մոտ 80 ֆիզիկոսներ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 34, ք. 5-6)

1967

Համալսարանում սկսվեց 4 նոր պարբերականների հրատարակումը՝ «Բանքեր Երևանի համալսարանի» (հասարակական գիտություններ), «Գիտական տեղեկագիր» (բնական գիտություններ), «Երևանի պետական համալսարան» (տեղեկատու), «Երիտասարդ գիտաշխատող»:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մայիսի 1967)

Մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետում ստեղծվում է հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության ամբիոն:

(Տե՛ս ԵՊՀ արխիվ, ց. 1, գ. 1 (կող 9), ք. 19, տե՛ս նաև
Երևանի պետական համալսարան,
պատ. խմբ.՝ Ղարիբյան Գ., Երևան, 1981, էջ 46)

Ֆիզիկայի ֆակուլտետում ստեղծվում է մոլեկուլյար ֆիզիկայի և կենսաֆիզիկայի ամբիոն:

(Տե՛ս ԵՊՀ արխիվ, ց. 1, գ. 1 (կող 9), ք. 20, տե՛ս նաև
Երևանի պետական համալսարան,
պատ. խմբ.՝ Ղարիբյան Գ., Երևան, 1981, էջ 77)

Երկրի ժողովրդական տնտեսության համար տարիներ շարունակ որակյալ մասնագետներ պատրաստելու գործում ձեռք բերած հաջողությունների համար համալսարանին է հանձնվում Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության, ՀԽՍՀ Նախարարների խորհրդի և ՀԱՄԽ հորեյլանական հուշադրոշմ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 2 հունվարի 1971)

Համալսարանի գրադարանը պարզևատրվում է առաջին կարգի դիպլոմով՝ գրադարանների՝ Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 50-ամյակին նվիրված համամիութենական ստուգատեսին ակտիվորեն մասնակցելու համար:

(Տե՛ս Ասլանյան Վ., Հայրապետյան Հ., Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանը, Երևան, 2001, էջ 57)

Երևանի պետական համալսարանը ձեռնարկում է հնագիտական պեղումներ՝ Գառնի գյուղաքաղաքը և Լոռի բերդաքաղաքը ուսումնասիրելու նպատակով (արշավախմբի ղեկավար՝ Ի. Ղարիբյան):

(Տե՛ս Գիտությունը Հայաստանում 50 տարում, գլխ. խմբ.՝ Պետրոսյան Գ. Բ., Երևան, 1973, էջ 62)

հունվար – ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության կոմիտեի որոշմամբ Երևանի պետական համալսարանում ստեղծվեց գրական կապերի ուսումնասիրման գիտահետազոտական կաբինետ, որի պարտականությունների մեջ էր մտնում մաս Բանասիրական ֆակուլտետի միջբուհական կապերի ծավալումը: Կաբինետի խնդիրն էր ուսումնասիրել Խորհրդային Միության ժողովուրդների գրական կապերի պատմությունը, մասնագետներ պատրաստել հայերենից ԽՍՀՄ ժողովուրդների լեզուներով (և հակառակը) թարգմանություններ կատարելու համար:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մաթոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 127-128)

հունվար – Չմեռային արձակուրդների օրերին համալսարանի «Կռունկ» միջազգային կապերի ակումբը հյուրընկալեց Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան համալսարանում մասնագիտական որակավորում ստացող արտասահմանցի 30 երիտասարդների ու աղջիկների: Այդ խմբում կային Հունգարիայի, Կուբայի, Գերմանական Դեմոկրատական Հանրապետության, Բիրմայի, Իրաքի, Սոմալիի, Ինդոնեզիայի և այլ երկրների ներ-

կայացուցիչներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 փետրվարի 1967)

4 հունվարի – Արդարադատության մարմիններում կատարած բազմամյա անբասիր աշխատանքի և մատուցած ծառայությունների համար ՀԽՍՀ վաստակավոր իրավաբանի պատվավոր կոչման արժանացավ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, համալսարանի խորհրդային քրեական իրավունքի ամբիոնի վարիչ Արշակ Թովմասի Թովմասյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 7 հունվարի 1967)

14 հունվարի – ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական կրթության զարգացման, ժողովրդական տնտեսության համար որակյալ մասնագետների պատրաստման գործին մատուցած ծառայությունների և գիտական հետազոտությունների ասպարեզում ձեռք բերած հաջողությունների համար բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մի մեծ խումբ աշխատողներ պարգևատրվեցին ԽՍՀՄ շքանշաններով ու մեդալներով:

Երևանի պետական համալսարանից այդ պատվին արժանացան Հենրի Գաբրիելի Գաբրիելյանը (պրոֆեսոր, փիլիսոփայության ամբիոնի վարիչ) և Աստղիկ Գրիգորի Խոնդկարյանը (ընդհանուր պատմության ամբիոնի ավագ լաբորանտ):

(Տե՛ս «Երևանի համալսարան», 25 հունվարի 1967)

փետրվար – ԵՊՀ մեծ հանդիսասրահում համալսարանականները հավաքվել էին իրենց գալույթն ու բողոքն արտահայտելու Չինաստանում գտնվող խորհրդային հիմնարկների աշխատողների նկատմամբ կանխամտածված սանձարձակությունների համար:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 17 փետրվարի 1967)

փետրվար – Համալսարանում մեծ շուքով նշվեց քաղաքացիական

կռիվների լեգենդար հերոս, խորհրդային բանակի ականավոր զորավար Գայի (Հայկ Բժշկյան) ծննդյան 80-ամյակը: Հանդիսավոր նիստում ներածական խոսք ասաց ռեկտոր, ակադեմիկոս Սյրտիչ Ներսիսյանը: Ելույթ ունեցան Գ. Ժաշկինը՝ երկաթյա դիվիզիայից, Գայի զինակից Ա. Կուլիկովը, 1-ին Սիմֆիոպոլյան դիվիզիայի երաժիշտ-զինվոր Պողոսովը: Հուզիչ ելույթով հանդես եկավ Գայի դուստր Թամարան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 17 փետրվարի 1967)

17 փետրվարի – Համալսարանի կոլեկտիվի նախընտրական ժողովում ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորության համար թեկնածուներ առաջադրվեցին ակադեմիկոս Արտաշես Շահինյանը և պրոռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր Հայկարամ Ութմազյանը: Երևանի քաղաքային խորհրդի պատգամավորության համար թեկնածուներ առաջադրվեցին կուսկոմիտեի քարտուղար, համալսարանի գիտական կոմունիզմի ամբիոնի վարիչ, դոցենտ Կորյուն Անանիկյանը, Քիմիական ֆակուլտետի դասախոս Եվգենյա Հովսեփյանը, ՀԿԿ Երևանի քաղկոմի առաջին քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու Լյուդվիգ Ղարիբջանյանը և Տնտեսագիտական ֆակուլտետի գերագանցիկ ուսանողուհի Գրետա Սիմոնյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 24 փետրվարի 1967)

28 փետրվարի – Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի տարեկան հաշվետու գիտական նստաշրջանն սկսեց իր աշխատանքները: Բացման խոսքով հանդես եկավ համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Սյրտիչ Ներսիսյանը: Առավոտյան լիագումար նիստում զեկուցումներ կարդացին պրոֆեսորներ Հ. Մաղաքյանը, Գ. Սահակյանը, Մ. Տեր-Սիքալեյանը և դոցենտ Ռ. Ղազարյանը: Երեկոյան լիագումար նիստում զեկուցումով հանդես եկան պրոֆեսորներ Գ. Սևակը, Հ. Գաբրիելյանը, Մ. Ներսիսյանը, Մ. Սկրյանը: Մարտի 1-4-ը նստաշրջանի ավելի քան 15 բաժանմունքներում լավեցին մոտ 150 զեկուցումներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 3 մարտի 1967)

մարտ – Համալսարանում տեղի է ունենում Եղիշե Չարենցի ստեղծագործությունների գրական-երաժշտական երեկո: Գրողի կյանքի և ստեղծագործությունների մասին պատմեց բանաստեղծի դուստրը՝ Անահիտ Չարենցը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 մարտի 1967)

մարտ – Համալսարանի «Կռունկ» ակումբի նախաձեռնությամբ ուսանողները հյուրընկալում են ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի թղթակից անդամ Գրիգոր Խանջյանին և ժողովրդական նկարիչ Սիեր Աբեղյանին, որոնք ընտրվում են «Կռունկ» ակումբի պատվավոր անդամներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 24 մարտի 1967)

7 մարտի – ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման է արժանանում համալսարանի բույսերի բնախոսության և կազմախոսության ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆ. Նատալյա Մելիքյանը: ՀԽՍՀ վաստակավոր գրադարանավարի պատվավոր կոչում է շնորհվել համալսարանի գիտական գրադարանի մատենագրության բաժնի վարիչ Լիլիանա Ալֆրեդի Գասպարյանին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 մարտի 1967)

22 մարտի – Համալսարան հյուր էին եկել Սիջազգային ուսանողական միության գործադիր կոմիտեների անդամները և ազգային ուսանողական միությունների ներկայացուցիչներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մարտի 1967)

29 մարտի – Համալսարանի մեծ հանդիսապահում տեղի է ունենում հանդիպման երեկո Հայաստանի անվանի գիտնականների հետ: Բացման խոսքով հանդես է գալիս համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Սյրտիչ Ներսիսյանը: Իրենց գիտական գործունեության ու ծրագրերի մասին պատմեցին ակադեմիկոսներ Վիկտոր Համբարձումյանը, Անդրանիկ Իոսիֆյանը,

Արամ Նալբանդյանը, Արմենակ Մնջոյանը, Մերգեյ Մերգելյանը, Հովհաննես Մաղաքյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 7 ապրիլի 1967)

ապրիլ – Ֆիզիկայի ֆակուլտետում դասախոսություններով հանդես են գալիս Մոսկվայի համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի վարիչ, դոկտոր, պրոֆ. Գ. Ս. Ժդանովը և ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի վարիչ, դոկտոր, պրոֆ. Վ. Ի. Իվերոնովան, որոնց ռեկտորատը հրավիրել էր գիտական փորձի փոխանակման նպատակով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 6 մայիսի 1967)

1 ապրիլի – ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով երկրաբանության ասպարեզում բազմամյա անբասիր աշխատանքի համար ՀԽՍՀ վաստակավոր երկրաբանի կոչում է շնորհվում Երկրաբանական ֆակուլտետի քարագիտության և հանքագիտության ամբիոնի դոցենտ Թադևոս Շահբազի Թադևոսյանին: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգիր է ստանում Երկրաբանական ֆակուլտետի օգտակար հանածոների հանքավայրերի որոնման ու հետախուզության մեթոդների ամբիոնի դոցենտ Դավիթ Պարսիի Իսախանյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 7 ապրիլի 1967)

6 ապրիլի – Բանասիրական ֆակուլտետի նախաձեռնությամբ համալսարանականները հյուրընկալում են ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Գոհար Գասպարյանին: Ուսանողների ողջույններից հետո արտիստը պատմում է արտասահմանյան իր շրջագայությունների և նոր ծրագրերի մասին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 14 ապրիլի 1967)

10 ապրիլի – Սկսվում է համալսարանների երևանյան «Բարեկամության շաբաթը», որին մասնակցում էին Մոսկվայից, Դոնի Ռոստովից, Տարտուից, Կիևից, Տաշքենդից, Թբիլիսիից և այլ քաղաքներից ժամանած դասախոսներ և ուսանողներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 14 ապրիլի 1967)

17-22 ապրիլի – Համալսարանում իր աշխատանքներն է սկսում Ուսանողական գիտական ընկերության (ՈԻԳԸ) 30-րդ՝ հոբելյանական կոնֆերանսը, որին մասնակցում էին Խորհրդային Միության 11 բուհերից ժամանած 50 պատվիրակներ: Ողջույնի խոսքով հանդես է գալիս գիտական աշխատանքի գծով պրոռեկտոր Կարո Խաչատուրյանը: Ընթերցվում են 135 զեկուցումներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 21 ապրիլի 19670)

20 ապրիլի – Համալսարանի հյուրերն էին Ուկրաինայի Կենտկոմի քարտուղար Վ. Ի. Դրոզդենկոն, ԳԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կ. Կ. Դուբինան, Կիևի ավտոմատ հաստոցների գործարանի տնօրեն, Սոցիալիստական աշխատանքի հերոս Պ. Պ. Պարսինկևիչը: Հյուրերին ողջունում են համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Մ. Ներսիսյանը, ուսանողուհիներ Ս. Մանուկյանը և Գ. Քոչարյանը: Հայ-ուկրաինական բարեկամության, Երևանի և Կիևի համալսարանների գիտական և ուսումնական կապերի մասին խոսեց ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, ֆիզքիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Հ. Չալքիկյանը: Համալսարանականները մեծ հետաքրքրությամբ լսեցին Կ. Կ. Դուբինայի ելույթը: Հյուրերը համալսարանին նվիրեցին զրքեր, ալբոմներ: Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Ռ. Խաչատրյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 29 ապրիլի 1967)

15 մայիսի – Տեղի է ունենում Լատինական Ամերիկայի խնդիրները հետազոտող երիտասարդ մասնագետների՝ համալսարանում անցկացված անդրկովկասյան մեկշաբաթյա հանդիպում-խորհրդակցությունների եզրափակիչ նիստը՝ նվիրված լատինա-ամերիկյան երկրների առավել հրատապ հարցերին, մշակութային զարգացման լուսաբանմանն ու քննարկմանը: Մասնակցում էին Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի, Թբիլիսիի, Բաքվի բուհերի ուսանողության, պրոֆեսորադասախոսական

կազմի ներկայացուցիչներ և լատինա-ամերիկյան երկրներից՝ Մեքսիկայից, Կուբայից, Բրազիլիայից, Պերուից, Բոլիվիայից, Չիլիից ԽՍՀՄ-ում սովորող ուսանողներ, ինչպես նաև այդ երկրների բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավարներ, հասարակական գործիչներ, գրողներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 17 մայիսի 1967)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1271 շրջանավարտ (որից 280-ը՝ երեկոյան, 357-ը՝ հեռակա բաժիններից)՝ 92 ֆիզիկոս, 59 մեխանիկոս-մաթեմատիկոս, 31 քիմիկոս, 32 երկրաբան, 16 աշխարհագրագետ, 129 կենսաբան, 46 պատմաբան, 272 տնտեսագետ, 131 իրավաբան, 333 բանասեր, 130 ապրանքագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

սեպտեմբեր – Համալսարանականների հյուրն էր ԱՄՆ-ի «Մետրոպոլիտեն» օպերային թատրոնի մեծահամբավ երգչուհի Լիլի Չուքասյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 28 սեպտեմբերի 1967)

22 սեպտեմբերի – Համալսարանի հանդիսապահում տեղի է ունենում Եղիշե Չարենցի ծննդյան 70-ամյակին նվիրված հանդիսավոր երեկո: Բացման խոսքով հանդես է գալիս պրոֆ. Մ. Մ. Սկրյանը, Չարենցի ստեղծագործական ուղու մասին զեկուցում է պրոֆ. Հր. Թամրազյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 28 սեպտեմբերի 1967)

29 սեպտեմբերի – Մեծ դահլիճում տեղի է ունենում Կ. Մարքսի «Կապիտալ»-ի առաջին հրատարակության 100-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 5 հոկտեմբերի 1967)

հոկտեմբեր – Երևանի պետական համալսարանում հրավիրվում են քվանտային էլեկտրոնիկայի համամիութենական գիտատեխնիկական գիտաժողովը և 3-րդ համամիութենական սիմպոզիումը՝ ոչ գծային օպտիկայի հարցերի վերաբերյալ: Վերջինիս աշխատանքներին մասնակցում էին մոտ 50 գիտնականներ ժողովրդադեմոկրատական, և 30 գիտնականներ՝ կապիտալիստական երկրներից:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մաղոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 56)

հոկտեմբեր – Համալսարան է այցելում դանիացի գրող Յորգեն Ամդերսեն Ռոզենտալը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 5 հոկտեմբերի 1967)

4-5 հոկտեմբերի – Հրավիրվում է Անդրկովկասի երեք հանրապետությունների համալսարանների հոբելյանական միացյալ գիտական նստաշրջան: Այն բացում է ռեկտոր, ակադեմիկոս Մ. Ներսիսյանը: ՀԿԿ Կենտկոմի անունից նստաշրջանի մասնակիցներին ողջունում է ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Ռ. Խաչատրյանը: Լիագումար նիստում զեկուցումներով հանդես են գալիս ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Ծ. Աղայանը, Թբիլիսիի համալսարանի պրոֆեսոր Ա. Սուրգուլաձեն, Ադրբեջանի համալսարանի պրոֆեսոր Մ. Կազիևը և այլք:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 12 հոկտեմբերի 1967)

9 հոկտեմբերի – Բանասիրական ֆակուլտետում տեղի է ունենում Շոթա Ռուսթավելու անվան հայ-վրացական բանասիրության կարփնետի բացումը (վերաբացումը - **Ժ. Մ.**), որը նպաստելու էր վրաց ժողովրդի մշակույթի և գրականության ուսումնասիրությանը, երկու ժողովուրդների հոգևոր մերձեցմանը: Նույն օրը հանդիսասրահում նշվում է ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, ՎԽՍՀ ակադեմիկոս, հայագետ, Թբիլիսիի համալսարանի պրոֆեսոր Ակակի Շանիձեի 80-ամյակը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 12 հոկտեմբերի 1967)

5 նոյեմբերի – Տեղի է ունենում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հանդիսավոր նիստը՝ նվիրված Մեծ հոկտեմբերի 50-ամյակին: Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանը հորեյանական հուշադրոշ է հանձնում համալսարանին, որը շնորհվել էր Մայր բուհին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության, Նախարարների խորհրդի և ՀԱՄԽ-ի կողմից:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 նոյեմբերի 1967)

1968

Իրավաբանական ֆակուլտետում ստեղծվում է խորհրդային (պետական) շինարարության բաժինը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մաղոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 142)

ԵՊՀ-ում տեղի է ունենում պերօքսիդների ռեակցիաներին նվիրված համամիութենական գիտական հերթական կոնֆերանսը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մաղոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 63)

հունվար – Համալսարանում հիմնվում է Հայագիտական կենտրոնը:

(Տե՛ս «Հայրենիքի ծայն», 28 փետրվարի 1968)

հունվար – Բանասիրական ֆակուլտետում ստեղծվում է խորհրդահայ գրականության ամբիոն (վարիչ՝ պրոֆ. Հր. Թամրազյան): Ամբոնն իր ստեղծման օրվանից ձեռնամուխ եղավ ուսումնական պլանների, ծրագրերի քննարկմանն ու բարեփոխմանը. գրեթե բոլոր բաժիններում հատուկ կուրսերի ձևով մտցվեց «Ժամանակակից սփյուռքահայ գրականություն» առարկան:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մաղոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 119)

11 հունվարի – Բանասիրական ֆակուլտետի երգչախումբը ՀԱՄԽ-ից երկրորդ անգամ ստացավ ոսկե մեդալ և առաջին կարգի մրցանակ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 13 հունվարի 1968)

23 փետրվարի – Համալսարանում հանդիսավոր պայմաններում նշվում է խորհրդային բանակի և ռազմածովային նավատորմի փառապանծ 50-ամյակը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 24 փետրվարի 1968)

20 մարտի – Տնտեսագիտական ֆակուլտետի նախաձեռնությամբ համալսարանում կազմակերպվում է Կոմիտասին նվիրված երաժշտական երեկո:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 29 մարտի 1968)

ապրիլ – Ֆիզիկայի ֆակուլտետի ուսանողության համար զեկուցումով հանդես է գալիս Մոսկվայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (Դուբնա) պրոֆեսոր, Նոբելյան մրցանակի դափնեկիր Իլյա Միխայլովիչ Ֆրանկը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 19 ապրիլի 1968)

16-19 ապրիլի – Համալսարանում տեղի է ունենում համամիութենական գիտական կոնֆերանս՝ «Մ. Գորկին և ՍՍՀՄ ժողովուրդների գրականությունը» թեմայով՝ նվիրված գրողի ծննդյան 100-ամյակին: Կոնֆերանսին մասնակցում էին միության բոլոր հանրապետությունների և ինքնավար մարզերի գրողներ, գրականագետ-գործիքագետներ: Ներկա էին նաև արտասահմանյան գիտնականներ Վ. Վելչեր (Լեհաստան), Մ. Չիժկովան (Չեխոսլովակիա), Յա. Ուրբանսկայան (Բուլղարիա), Ի. Իջիկովսկայան (ԳԴՀ) և ուրիշներ: Լիագումար նիստը բացում է համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Մ. Ներսիսյանը: Ներկաներին ողջունում է ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Ռ. Խաչատրյանը: Կոնֆերանսում ներկայացվեցին 70 զեկուցումներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 19 ապրիլի, 26 ապրիլի 1968)

16 մայիսի – Բանասիրական ֆակուլտետի հրավերով ուսանողները հանդիպում են քանդակագործ Երվանդ Քոչարի հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 24 մայիսի 1968)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1430 շրջանավարտ (որից 222-ը՝ երեկոյան, 328-ը՝ հեռակա բաժիններից)՝ 104 ֆիզիկոս, 83 մեխանիկոս-մաթեմատիկոս, 109 քիմիկոս, 34 երկրաբան, 16 աշխարհագրագետ, 144 կենսաբան, 61 պատմաբան, 247 տնտեսագետ, 119 իրավաբան, 361 բանասեր, 152 ապրանքագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

հունիս – Ռեկտորատի նախաձեռնությամբ և ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության կողմից որոշմամբ (Բանասիրական ֆակուլտետի արևելյան լեզուների և գրականության բաժնի հիման վրա) վերաբացվեց Արևելագիտության ֆակուլտետը:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 29, ք. 61, տե՛ս նաև Երևանի պետական համալսարան, պատ. խմբ.՝ Ղարիբյան Գ., Երևան. 1981, էջ 152, «Երևանի համալսարան», 21 հունիսի 1968)

5 հուլիս – ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության հրամանով Երևանի պետական համալսարանին կից ստեղծվում է (հուլիսի 10-ից) Բուհերի դասախոսների որակավորման բարձրացման ֆակուլտետ: Ֆակուլտետի խնդիրներն էին բուհերի դասախոսների գիտատեսական և գիտամեթոդական որակավորման բարձրացումը, դասավանդման փորձի ընդհանրացումն ու տարածումը, ուսուցման պրոցեսում գիտական նոր մեթոդների մշակումն ու ներդրումը: Ֆակուլտետում անցկացվում էին որակավորման բարձրացման դասընթացներ 11 մասնագիտությունների գծով:

(Տե՛ս ԵՊՀ արխիվ, ց. 1, գ. 1 (կող 9), ք.28)

սեպտեմբեր – Ֆիզիկայի ֆակուլտետում տեղի է ունենում համամիութենական խորհրդակցություն բյուրեղների արատները (դեֆեկտ) դիֆերենցիալ մեթոդներով ուսումնասիրելու վերաբեր-

ըյալ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Ադամյան Հ.,
Բարսեղյան Հ., Մաղոյան Ա., Ջրբաշյան Էդ.,
Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 56)

սեպտեմբեր – Պատմության ֆակուլտետում բացվում է (վերաբացվում է) հնագիտության և աղբյուրագիտության ամբիոնը: Նորաստեղծ ամբիոնի առաջնահերթ խնդիրն էր հանրապետության գավառագիտական թանգարանների, Մատենադարանի, Հնագիտության ու ազգագրության ինստիտուտի, արխիվների և պատմագիտության այլ բնագավառների համար պատրաստել բարձրորակ մասնագետներ:

(Տե՛ս ԵՊՀ արխիվ, ց. 1, գ. 1 (կող 9), թ. 24,
տե՛ս նաև «Երևանի համալսարան», 13 սեպտեմբերի 1968,
«Սովետական Հայաստան», 17 ապրիլի 1969)

սեպտեմբեր – Համալսարանն ուներ 15 ֆակուլտետ, մոտ 12.000 ուսանող: Այն մասնագետներ էր պատրաստում 43 մասնագիտությունների և 100 մասնագիտացումների գծով: Պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված էին 766 հոգի, որոնցից 69-ը դոկտորներ, պրոֆեսորներ էին, 297-ը՝ գիտությունների թեկնածուներ և դոցենտներ, որոնք գիտամանկավարժական գործունեություն էին ծավալում համալսարանի 80 ամբիոններում:

Համալսարանում դասախոսում էին ՀԽՍՀ ԳԱ հետևյալ ակադեմիկոսները՝

Վիկտոր Համբարձումյանը (աստղաֆիզիկոս, ՀԽՍՀ ԳԱ նախագահ),

Արաքսյա Բաբայանը (քիմիկոս)

Արամ Նալբանդյանը (ֆիզիկոս)

Սերգեյ Համբարձումյանը (մեխանիկոս)

Արտաշես Շահինյանը (մաթեմատիկոս)

Մկրտիչ Ներսիսյանը (պատմաբան)

Սյուիթար Ջրբաշյանը (մաթեմատիկոս)

Նազուշ Հարությունյանը (մեխանիկոս)

Արմենակ Մնջոյանը (քիմիկոս)
 Գագիկ Դավթյանը (կենսաբան)
 Սերգեյ Սկրտչյանը (երկրաբան)
 Հովհաննես Մաղաքյանը (երկրաբան)
 Սկրտիչ Տեր-Կարապետյանը (կենսաբան)
 Արտաշես Առաքելյանը (կենսաբան)

(Տե՛ս ՀԱԱ ֆ. 1, ց. 48, գ. 19, ք. 50,
 տե՛ս նաև «Երևանի համալսարան», 29 նոյեմբերի 1968)

15 սեպտեմբերի – Համալսարանը մեծ շուքով նշում է Երևան քաղաքի հիմնադրման 2750-ամյակը: Բացման խոսք է ասում ռեկտոր Մ. Ներսիսյանը: «Հնագույն Երևանը» զեկուցումով հանդես են գալիս դոկտոր, պրոֆեսոր Թադևոս Հակոբյանը և դոկտոր, պրոֆեսոր Վարդան Պարսամյանը («Սոցիալիստական Երևանը» թեմայով):

(Տե՛ս «Երևանի համալսարան», 18 հոկտեմբերի 1968)

20 սեպտեմբերի – Տեղի է ունենում հանդիպում գերմանացի նշանավոր հրապարակախոս ու գրող, Հայ դատի պաշտպան Արմին Վեգների հետ: Ելույթ է ունենում նաև անվանի հյուրի նախկին աշխատանքային ընկեր, ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Մելիք-Օհանջանյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 27 սեպտեմբերի 1968)

հոկտեմբեր – Տեղի է ունենում պատմաբանների անդրանիկ հավաքը, որը հետագա տարիներին դառնում է ավանդույթ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 4 հոկտեմբերի 1968)

հոկտեմբեր – Համալսարանում տեղի է ունենում Արևելագիտության ֆակուլտետի՝ աշխարհում առաջին քրդագիտության բաժնի ուսանողների հանդիպումը ՀԼԿԵՄ Երևանի քաղկոմին կից քրդական ակումբի երիտասարդ անդամների ու քաղաքի քուրդ մտավորականության հետ: Երեկոն բացում է ֆակուլտետի դեկան Գ. Նալբանդյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 25 հոկտեմբերի 1968)

1 նոյեմբերի – ՀԽՍՀ Նախարարների խորհրդի 1968 թ. մարտի 11-ի N 108 որոշման հիման վրա համալսարանում սկսում է գործել Դեկավար աշխատողների և մասնագետների տնտեսագիտական գիտելիքների բարձրացման ֆակուլտետը (գործել է մինչև 1975 թ.): Ֆակուլտետը կոչված էր վերապատրաստելու հանրապետության ժողովրդական տնտեսության՝ բարձրագույն կրթություն ունեցող դեկավար աշխատողներին և արտադրությունում իրենց լավագույնս դրսևորած մասնագետներին:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան Հ., Մարոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 188)

12-19 նոյեմբերի – Համալսարանում անցկացվում է խաղերի տեսությանը նվիրված համամիութենական առաջին գիտաժողովը, որի աշխատանքներին մասնակցում էին ԽՍՀՄ տարբեր քաղաքներից եկած հարյուրից ավելի գիտնականներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 18 նոյեմբերի 1968)

26 նոյեմբերի – Երևանի պետական համալսարանում տեղի է ունենում գիտական նստաշրջան՝ նվիրված Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման 140-ամյակին: Նստաշրջանը ներածական խոսքով բացում է ռեկտոր, ակադեմիկոս Մ. Ներսիսյանը: Չեկուցումներ են կարդում պրոֆեսորներ Վ. Ռշտունին, Վ. Պարսամյանը և Ռ. Հովհաննիսյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 29 նոյեմբերի 1968)

23 դեկտեմբերի – ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի նիստում քննարկվում է Երևանի պետական համալսարանում ուսումնական, քաղաքական-դաստիարակչական, գիտական և հրատարակչական աշխատանքների հետագա բարելավման միջոցառումների մասին հարցը:

(Տե՛ս ՀԱԱ ֆ. 1, ց. 48, գ. 19, ք. 49-57)

1969

Համալսարանում բացվում է կիրառական մաթեմատիկայի բաժին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 9 հոկտեմբերի 1971)

Համալսարանում փիլիսոփայության գծով թեկնածուական ատենախոսություն է պաշտպանում շախմատի աշխարհի չեմպիոն Տիգրան Պետրոսյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 հունվարի 1969)

4 ապրիլի – Խորհրդային Միության հերոս, տիեզերագնաց-օդաչու Ալեքսեյ Լեոնովը այցելում է Երևանի պետական համալսարան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 8 ապրիլի 1969)

13-18 ապրիլի – Համալսարանի հյուրն էր Հնդկաստանի Փենջաբի համալսարանի կենդանաբանության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր Գանպատի Պարշադ Շարմանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 25 ապրիլի 1969)

15-17 մայիսի – Համալսարանում հրավիրվում է Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված համամիութենական միջհամալսարանական գիտական նստաշրջան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 19 մայիսի 1969)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1546 շրջանավարտ (որից 340-ը՝ երեկոյան, 401-ը՝ հեռակա բաժիններից)՝ 185 ֆիզիկոս, 103 մեխանիկոս-մաթեմատիկոս, 78 քիմիկոս, 35 երկրաբան, 17 աշխարհագրագետ, 178 կենսաբան, 25 պատմաբան, 267 տնտեսագետ, 97 իրավաբան, 378 բանասեր, 147

ապրանքագետ, 36 արևելագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի
արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

հունիս – Ֆիզիկայի ֆակուլտետում միջուկային ֆիզիկայի ամբիոնի
բաժանումից հետո ստեղծվում է ռադիացիոն ֆիզիկայի ամբիո-
նը (ամբիոնի վարիչ՝ պրոֆ. Մ. Տեր-Սիքայեյան):

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Աղամյան Հ., Բարսեղյան
Հ., Մաղոյան Ա., Ջրբաշյան Էդ., Ֆելեքյան Հ., Երևան, 1970, էջ 52)

20 սեպտեմբերի – Համալսարանում հյուր էր Խորհրդային Միության
մարշալ Հովհաննես Բաղրամյանը, որը եկել էր Երևան՝ մաս-
նակցելու Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակի տո-
նակատարությանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 6 հոկտեմբերի 1969)

20 նոյեմբերի – Տեղի է ունենում մեծ երգահան Կոմիտասի ծննդյան
100-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ: Այն բացեց ռեկ-
տոր, ակադեմիկոս Մ. Ներսիսյանը: Կոմիտասի կյանքի և գոր-
ծունեության մասին հետաքրքիր զեկուցում է կարդում արվես-
տի վաստակավոր գործիչ Ս. Գասպարյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 28 նոյեմբերի 1969)

դեկտեմբեր – Երևանի պետական համալսարանի 12 ֆակուլտետնե-
րում 45 մասնագիտությունների գծով սովորում էր 11.470 ուսա-
նող: Գիտամանկավարժական աշխատանք էին կատարում
890 դասախոսներ, որոնց թվում՝ 8 ակադեմիկոս, 15 թղթակից
անդամ, 73 գիտությունների դոկտոր և 528 թեկնածու:

(Տե՛ս «Սովետական Հայաստան», 18 դեկտեմբերի 1969)

1970

Համալսարանի գրադարանն ուներ շուրջ մեկ միլիոն 200 հազար հայերենական և օտարալեզու գրքեր ու պարբերական հրատարակություններ: Ամեն տարի գրադարանը ստանում էր ավելի քան 50 հազար հայերեն, ռուսերեն և օտարալեզու գիրք ու պարբերական:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 2 հունվարի 1971)

Գրադարանների՝ Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին նվիրված համամիութենական ստուգատեսում ակտիվություն ցուցաբերելու համար ԵՊՀ գրադարանին շնորհվում է հաղթողի դիպլոմ: Այդ տարում գրադարանին կից ստեղծվում է հանրապետական գիտամեթոդական կաբինետ, գրադարանը դառնում է բուհական և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների գրադարանների մեթոդական ղեկավարության կենտրոն:

(Տե՛ս Ասլանյան Վ., Հայրապետյան Հ., Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանը, Երևան, 2001, էջ 57)

Երևանի պետական համալսարանը ձեռնարկում է հնագիտական պեղումներ՝ Գլաձորի միջնադարյան համալսարանի տեղը պարզելու նպատակով:

(Տե՛ս Գիտությունը Հայաստանում 50 տարում, գլխ. խմբ.՝ Պետրոսյան Գ. Բ., Երևան, 1973, էջ 62)

Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունից եկած ուսանողների նկատմամբ ցուցաբերած ուշադրության ու հոգատարության համար Երևանի պետական համալսարանը պարգևատրվում է «Գ-ԴՀ 20-ամյակի» հուշամեդալով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 14 մարտի 1970)

23 հունվարի – Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, Երևանի պետական համալսարանի 50-ամյա հոբելյանը նախապատրաստող և անցկացնող հանրապետական հոբելյանական հանձնաժողովի նախագահ Ա. Ե. Քոչինյանի նախագահությամբ տեղի է ունենում հանձնաժողովի առաջին նիստը: Նիստում քննարկվում են կազմակերպական հարցեր, և մշակվում տոնակատարության նախապատրաստման ու անցկացման միջոցառումներ:

(Տե՛ս «Հայրենիքի ձայն», 28 հունվարի 1970)

20 մարտի – Համալսարանի մեծ դահլիճում նշվում է կոմունիստական կուսակցության ու խորհրդային պետության ստեղծող Վ. Ի. Լենինի ծննդյան մեկդարյա հոբելյանը:

Հանդիսավոր նիստը բացում է համալսարանի կուսկոմիտեի քարտուղար Հովհ. Բարսեղյանը: Ձեկուցումով հանդես է գալիս պրոռեկտոր Մ. Մելիքյանը: Ողջույնի խոսք են ասում համալսարանի փիլիսոփայության ամբիոնի վարիչ, պրոֆ. Հ. Գաբրիելյանը, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու Յուրի Վարդանյանը և լրագրության բաժնի IV կուրսի ուսանողուհի Քնարիկ Հարությունյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 28 մարտի 1970)

ապրիլ – ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Նազուշ Հարությունյանը հանդիսավոր պայմաններում համալսարանի ռեկտոր Մ. Ներսիսյանին է հանձնում ԽՍՀԿ Կենտկոմի, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի, ԽՍՀՄ Նախարարների խորհրդի և ՀԱՄԿԽ Լենինյան հոբելյանական պատվոգիրը: Այնուհետև մի խումբ դասախոսների և աշխատակիցների հանձնվում են «Քաջարի աշխատանքի համար՝ ի նշանավորումն Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի» հոբելյանական մեդալներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 մայիսի 1970)

6 մայիսի – Տեղի է ունենում գիտական նստաշրջան՝ նվիրված Հայրեն-

նական մեծ պատերազմում խորհրդային ժողովրդի հաղթանակի 25-ամյակին: Այն կազմակերպել էր համալսարանի ԽՍԿԿ պատմության ամբիոնը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 16 մայիսի 1970)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1937 շրջանավարտ (որից 421-ը՝ երեկոյան, 396-ը՝ հեռակա բաժիններ)՝ 202 ֆիզիկոս, 109 մեխանիկոս-մաթեմատիկոս, 103 քիմիկոս, 35 երկրաբան, 36 աշխարհագրագետ, 219 կենսաբան, 74 պատմաբան, 355 տնտեսագետ, 146 իրավաբան, 414 բանասեր, 205 ապրանքագետ, 39 արևելագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 6, ք. 28)

19 հունիսի – ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով գիտության վաստակավոր գործչի կոչում է շնորհվում Էդուարդ Բագրատի Աղայանին և Թադևոս Խաչատուրի Հակոբյանին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 3 հուլիսի 1970)

23-26 հունիսի – Տեղի է ունենում անդրկովկասյան հանրապետությունների հոգեբանների 5-րդ գիտական համաժողովը, որի աշխատանքներին մասնակցում էին 100-ից ավելի հայ, վրացի ու ադրբեջանցի ճանաչված հոգեբան գիտնականներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 3 հուլիսի 1970)

սեպտեմբեր – ԵՊՀ-ում գործում էր 15 ֆակուլտետ՝ Մեխանիկա-մաթեմատիկական, Ֆիզիկայի, Քիմիական, Կենսաբանական, Երկրաբանական, Աշխարհագրական, Պատմության, Բանասիրական, Արևելագիտական, Իրավաբանական, Տնտեսագիտական, Ապրանքագիտության և առևտրի էկոնոմիկայի, Նախապատրաստական ֆակուլտետ արտասահմանյանների համար, Բարձրագույն հաստատությունների դասախոսների վերապատրաստման համամիութենական, ինչպես նաև Ղե-

կավար աշխատողների ու մասնագետների տնտեսագիտական գիտելիքների բարձրացման ֆակուլտետներ: Ուսումնական գործընթացը ղեկավարում էին 80 ամբիոններ, որոնցում աշխատում էին 900 դասախոսներ և գիտնականներ, այդ թվում՝ ԽՍՀՄ և ՀԽՍՀ գիտությունների ակադեմիաների 30 ակադեմիկոս և թղթակից անդամ, 90 գիտության դոկտոր և պրոֆեսոր, 320 գիտությունների թեկնածու և դոցենտ: Համալսարանում աշխատում և սովորում էր 16.000 մարդ: Ուսանողների ընդհանուր թիվը կազմում էր շուրջ 13.000, որից 7.500-ը՝ ցերեկային, իսկ 5.500-ը՝ երեկոյան և հեռակա բաժիններում: Համալսարանը ընդունելություն էր կատարում 46 մասնագիտությունների գծով և 5 տարիների ընթացքում երիտասարդ մասնագետներ էր պատրաստում մոտ 100 մասնագիտացումներով:

(Տե՛ս Երևանի պետական համալսարանի 50-ամյակը
(1970 թ. դեկտեմբերի 23-ի հանդիսավոր նիստի տղագրական
հաշվետվությունը), խմբ.՝ Ղարիբջանյան Լ. Պ., Երևան, 1984, էջ 24-25)

հոկտեմբեր – ԵԴՀ հյուրն էր Կրակովի Յագելոնյան համալսարանի արևելագիտական ֆակուլտետի հայոց լեզվի դասախոս Անջեյ Պիսովիչը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 17 հոկտեմբերի 1970)

27 հոկտեմբերի – Տեղի է ունենում հոբելյանական գիտաժողով՝ նվիրված գիտական կոմունիզմի հիմնադիրներից մեկի՝ Ֆրիդրիխ Էնգելսի ծննդյան 150-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 հոկտեմբերի 1970)

նոյեմբեր – Խորհրդային Հայաստանի և Հայաստանի կոմունիստական կուսակցության 50-ամյակի առթիվ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության, Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդի և Հայաստանի արհեստակցական միությունների խորհրդի որոշումով, ի թիվս հանրապետության մի շարք ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների, հոբելյանական հուշա-

մեղալ է շնորհվում մաս ԵՊՀ-ին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 5 դեկտեմբերի 1970)

- 24 նոյեմբերի** – Երկարամյա բեղմնավոր գիտամանկավարժական գործունեության համար և ծննդյան 60-ամյակի առթիվ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ԵՊՀ ռեկտոր Սկրտիչ Գեղամի Ներսիսյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով պարգևատրվում է Լենինի շքանշանով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 28 նոյեմբերի 1970)

- 21 դեկտեմբերի** – ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով բարձրորակ մասնագետների պատրաստման ասպարեզում ունեցած վաստակի, գիտահետազոտական աշխատանքներում ձեռք բերած նվաճումների համար ԵՊՀ-ն պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

(Տե՛ս Երևանի պետական համալսարանի 50-ամյակը

(1970 թ. դեկտեմբերի 23-ի հանդիսավոր նիստի տղագրական

հաշվետվությունը), խմբ.՝ Ղարիբջանյան Լ. Պ., Երևան, 1984, էջ 3,

«Գրական թերթ», 25 դեկտեմբերի 1970)

- 22 դեկտեմբերի** – Երևանի և Թբիլիսիի համալսարանների գիտական և բարեկամական կապերի ամրապնդման գործում կատարած նշանակալից աշխատանքի և ԵՊՀ 50-ամյակի առթիվ համալսարանի ռեկտոր Սկրտիչ Գեղամի Ներսիսյանը պարգևատրվում է Թբիլիսիի համալսարանի հիմնադիր Իվանե Ջավախաշվիլու հուշամեդալով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 փետրվարի 1971)

- 23 դեկտեմբերի** – Ալ. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի դահլիճում նշվում է Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների առաջնեկի՝ Երևանի պետական համալսարանի 50-ամյա հոբելյանը: Հանդիսավոր նիստը բացում է

հանրապետական հոբելյանական համձնաժողովի նախագահ,
Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ե.
Քոչինյանը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարանի 50-ամյակը
(1970 թ. դեկտեմբերի 23-ի հանդիսավոր նիստի տղագրական
հաշվետվությունը), խմբ.՝ Ղարիբջանյան Լ. Պ., Երևան, 1984, էջ 6-7,
տե՛ս նաև «Սովետական Հայաստան», 24 դեկտեմբերի 1970)

23 դեկտեմբերի – Երևանի պետական համալսարանի 50-ամյա-
կի առթիվ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով են
պարգևատրվում 132 համալսարանականներ. ՀԽՍՀ գիտու-
թյան վաստակավոր գործչի պատվավոր կոչման են արժանա-
նում.

Հայկազ Ժամկոչյանը
Սահակ Բազյանը
Սերգեյ Բալասանյանը
Հովհաննես Բարսեղյանը
Նիկոլայ Գասպարյանը
Գևորգ Զուբյանը
Հրանտ Թամրազյանը
Կարպիս Կարազյանը
Միքայել Մանուկյանը
Սուրեն Միքայելյանը
Գուրգեն Սահակյանը
Վաչե Սաղաթելյանը
Ալեքսեյ Սուքիասյանը
Էդուարդ Զրբաշյանը
Ղազար Վարդապետյանը
Աղասի Քանթանյանը

(Տե՛ս «Սովետական Հայաստան», 25 դեկտեմբերի 1970,
տե՛ս նաև «Երևանի համալսարան», 2 հունվարի 1971)

28 դեկտեմբերի – ԽՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտա-
կան կրթության նախարար Վ. Ելյուտինի հրամանագրով բարձ-

րորակ մասնագետների պատրաստման ասպարեզում ունեցած վաստակի և գիտական հետազոտությունների զարգացման գործում ձեռք բերած նվաճումների համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1970 թ. դեկտեմբերի 21-ի հրամանագրով Երևանի պետական համալսարանը Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվելու կապակցությամբ անվանվեց Երևանի Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր պետական համալսարան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 13 փետրվարի 1971)

1971

Ֆիզիկայի ֆակուլտետում ստեղծվում է բյուրեղների աճի և քվանտային էլեկտրոնիկայի ամբիոն:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան,
պատ. խմբ.՝ Ղարիբյան Գ., Երևան, 1981, էջ 78)

Համալսարանի գրադարանի տնօրենությանը և մեթոդական կա-
բինետին կից ստեղծվում է մեթոդական խորհուրդ, բացվում են նաև
նոր ենթաբաժիններ:

(Տե՛ս Ասլանյան Վ., Հայրապետյան Հ., Երևանի պետական համալսարանի
Մարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական
գրադարանը, Երևան, 2001, էջ 57)

ԽՍՀՄ-ում ԳՂՀ ուսանողների և ասպիրանտների խորհրդի լենի-
նյան փոխանցիկ դրոշը շնորհվում է ԵՊՀ-ում սովորող գերմանացի
ուսանողների կազմակերպությանը: ԽՍՀՄ-ում ԳՂՀ դեսպանության
առաջին քարտուղար Յոհաննես Վալսֆլոգը հանդիսավոր արարո-
ղության ժամանակ դեսպանության անունից Խորհրդային Հայաս-
տանի Կառավարությանը և համալսարանի ռեկտորատին շնորհա-
կալություն է հայտնում՝ գերմանացի ուսանողների համար ստեղծած
լավագույն պայմանների համար:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 27 մարտի 1971)

Բանասիրական ֆակուլտետի ուսանողների համար լիտվական
գրականության մասին վեցօրյա դասախոսություն է կարդում Վիլ-
նյուսի համալսարանի դոցենտ Պետրաս Ուժկալնիսը: Նա աշխատու-
թյուններ է գրել հայ միջնադարյան բանաստեղծների ստեղծագործու-
թյունների մասին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 17 ապրիլի 1971)

12 մարտի – Մեծ հանդիսասրահում տեղի է ունենում Աշխարհագրական ֆակուլտետի ուսանողության և պրոֆեսորադասախոսական կազմի հանդիպումը ԽՍՀՄ-Նոր Զելանդիա բարեկամության ընկերության նախագահ, Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պրոֆեսոր, աշխարհագրական գիտությունների դոկտոր Կուզմա Իվանովի հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 16 մարտի 1971)

13 մարտի – Նորքի զանգվածի ուսանողական քաղամասի 2-րդ մասնաշենքի ուսխորհուրդը և գրական ստուդիան կազմակերպում են հանդիպում անվանի բանաստեղծ Վահագն Դավթյանի հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 27 մարտի 1971)

10 ապրիլի – Տեղի է ունենում Արտասահմանյան քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետի (որտեղ սովորում են 50 սփյուռքահայեր, 41 վիետնամցիներ) ուսանողների հանդիպումը անվանի բանաստեղծներ Համո Սահյանի, Հրաչյա Հովհաննիսյանի և արձակագիր Ստեփան Ալաջաջյանի հետ: Հանդիպման գլխավոր նպատակը «Մարդը և մեր ժամանակը» թեմայի քննարկումն էր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 17 ապրիլի 1971)

30 ապրիլի – Համալսարանը հյուրընկալում է Չեխոսլովակիայի Հանրապետության ակադեմիայի թղթակից անդամ, Սլովակիայի ակադեմիայի ակադեմիկոս, Բրատիսլավայի համալսարանի պրոռեկտոր, պրոֆ. Միլոշ Գասիիրովսկին: Վերջինս Պատմության և Քիմիական ֆակուլտետներում հանդիպում է ուսանողության հետ՝ հանդես գալով Չեխոսլովակիայի Հանրապետության պատմությանը և սլովակ ու չեխ ժողովուրդների բարեկամությանը նվիրված դասախոսությամբ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 22 մայիսի 1971)

7 մայիսի – Չեխ տնտեսագետները՝ Պրահայի բարձրագույն ուսումնական հաստատությունների ամբիոնների վարիչներ, դասախոսներ և տնտեսագիտական գիտահետազոտական ինստիտուտի մի խումբ գիտական աշխատողներ, հանդիպում են ունենում Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 22 մայիսի 1971)

27 մայիսի - 7 հունիսի – Համալսարանի ԽՍԿԿ պատմության ամբիոնի հրավերով ուսանողության համար դասախոսություններ է կարդում Բրատիսլավայի համալսարանի Չեխոսլովակիայի կոմունիստական կուսակցության պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Յան Պլևան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 19 հունիսի 1971)

28-29 մայիսի – Համալսարանում սկիզբ է դրվում ևս մի նոր ավանդույթի: Տեղի է ունենում երիտասարդ գիտնականների առաջին գիտական կոնֆերանսը: Երկու օր տևած կոնֆերանսի ընթացքում ընթերցվում է շուրջ 130 զեկուցում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 5 հունիսի 1971)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1854 շրջանավարտ (որից 397-ը՝ երեկոյան, 341-ը՝ հեռակա բաժիններից)՝ 142 ֆիզիկոս, 119 մեխանիկոս-մաթեմատիկոս, 44 երկրաբան, 36 աշխարհագրագետ, 90 պատմաբան, 95 քիմիկոս, 139 կենսաբան, 49 իրավաբան, 263 բանասեր, 21 արևելագետ, 83 տնտեսագետ, 35 ապրանքագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 15, ք. 10)

հունիս – Մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկական կիրառական և կիրառական մաթեմատիկա բաժինների հիման վրա ստեղծվում է Կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը, որի ղեկան է դառնում ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ Ռաֆիկ Տոնոյանը:

(Տե՛ս ԵՊՀ արխիվ, ց. 1, գ. 1 (կող 9), ք. 19, տե՛ս մաս
«Երևանի համալսարան», 12 հունիսի 1971)

24 հունիսի – Համալսարանի երգչախումբը Բրատիսլավայի Յան Կոմենսկու անվան համալսարանի հրավերով մասնակցում է Տրնավայի երգի փառատոնին և արժանանում գերազանց գնահատականի:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 18 սեպտեմբերի 1971)

սեպտեմբեր – Համալսարան են այցելում Լիբանանի, Սիրիայի, Եգիպտոսի Արաբական Հանրապետության, Անգլիայի, Ֆրանսիայի, Ավստրալիայի, Կիպրոսի, Արգենտինայի, Հորդանանի հայկական դպրոցների մի խումբ ուսուցիչներ, որոնց ընդունում է համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Մ. Ներսիսյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 25 սեպտեմբերի 1971)

հոկտեմբեր – Համալսարանի օտար լեզուների ամբիոնի հյուրն էր լեմինգրադցի դոկտոր, պրոֆեսոր Իսիդոր Հեյմովիչ Լևինը: Քսան օր շարունակ նա գերմաներենով դասախոսություններ է կարդում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 16 հոկտեմբերի 1971)

հոկտեմբեր – Սփյուռքահայ ուսանողների խորհրդի հրավերով համալսարան է այցելում Ֆիլադելֆիա քաղաքի «Քնար» հայկական սիրողական երգչախումբը, որի ղեկավարն էր Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի շրջանավարտ Արսեն Սահյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 23 հոկտեմբերի 1971)

2 հոկտեմբերի – Երևանում անցկացվող «Մարդը և տիեզերքը» միջազգային չորրորդ գիտաժողովի շրջանակներում համալսարան է այցելում ԽՍՀՄ տիեզերագնաց, օդաչու Վլադիմիր Շատալովը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 16 հոկտեմբերի 1971)

1972

Կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում ստեղծվում են թվային անալիզի, մաթեմատիկական կիբեռնետիկայի, ԷՀՄ մաթեմատիկական ապահովման ամբիոններ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան,
պատ. խմբ.՝ Ղարիբյան Գ., Երևան, 1981, էջ 53-55)

փետրվար – Ֆիզիկայի ֆակուլտետի դեկանատի, կուսակցական և կոմերիտական կազմակերպությունների նախաձեռնությամբ համալսարանականները հանդիպում են ակադեմիկոս Վ. Համբարձումյանի և Բյուրականի աստղադիտարանի աշխատակիցների հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 26 փետրվարի 1972)

1 փետրվարի – Իրավաբանական ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնը բաժանվում է 2 ինքնուրույն ամբիոնների՝ քրեական իրավունքի ու քրեական դատավարության և կրիմինալիստիկայի:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 26 փետրվարի 1972)

5 ապրիլի – Մեծ դահլիճում տեղի է ունենում ԽՍՀՄ Ժողովրդական արտիստ Գոհար Գասպարյանի մեծարման երեկո:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 8 ապրիլի 1972)

20 ապրիլի – Համալսարանականների հյուրն էր արգենտինացի հանրաճանաչ երգչուհի և կինոդերասանուհի Լոլիտա Թորերսը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 29 ապրիլի 1972)

մայիս – Աշխարհագրական ֆակուլտետում դասախոսություններ է կարդում Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ, դոկտոր, պրոֆեսոր, աշխարհահռչակ գիտնական Յուլյան Գլեբովիչ Սաուշկինը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 6 մայիսի 1972)

11-20 մայիսի – Համալսարանի հյուրն էր Լեհաստանի Լյուբլին քաղաքի Մարի Կյուրի-Սկլոդովսկայայի անվան համալսարանի պատվիրակությունը, որի կազմում էին համալսարանի ռեկտոր, դոկտոր, պրոֆեսոր Զբիգնև Լորկևիչը, գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, դոկտոր Յանուշ Բարցիցկին և ԼՄԲԿ համալսարանական կազմակերպության քարտուղար, դոկտոր Ալբին Կոպրուկովնայկը: Նրանք եկել էին բանակցություններ վարելու երկու համալսարանների միջև նախորդ տարի կնքված պայմանագրի շուրջ: Մշակվեց 1973-75 թթ. աշխատանքային ծրագիր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 27 մայիսի 1972)

16-18 մայիսի – Հոլանդիայի Գրենինգամի համալսարանի մեխանիկա-մաթեմատիկական և ֆիզիկայի ֆակուլտետների 42 ուսանողներ հյուրընկալվեցին ԵՊՀ-ում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 մայիսի 1972)

24 մայիսի – Ավելի քան մեկ հարյուրամյակ է, որ բուլղար ժողովուրդը ամեն տարի տոնում է իր գրերի ստեղծողներ Կիրիլի և Մեֆոդիի օրը: Այդ առիթով Բուլղարիա է մեկնում խորհրդային պատվիրակությունը, որը գլխավորում էր համալսարանի ռեկտոր, Մովսես-բուլղարական բարեկամության ընկերության կենտրոնական վարչության նախագահի տեղակալ և նույն ընկերության հայկական բաժանմունքի նախագահ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Սկրտիչ Ներսիսյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 24 հունիսի 1972)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1901 շրջանավարտ (որից 426-ը՝ երեկոյան, 239-ը՝ հեռակա բաժիններից)՝ 133 ֆիզիկոս, 47 մեխանիկոս-մաթեմատիկոս, 38 կիրառական մաթեմատիկոս, 44 երկրաբան, 30 աշխարհագրագետ, 75 պատմաբան, 104 քիմիկոս, 110 կենսաբան, 57 իրավաբան, 264 բանասեր, 48 արևելագետ, 236 տնտեսագետ, 50 ապրանքագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 15, ք. 10)

սեպտեմբեր – ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության կոլեգիայի և համալսարանի ռեկտորատի որոշմամբ Բանասիրական ֆակուլտետում ստեղծվում է գրականության տեսության և գեղագիտության ամբիոն:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 6 նոյեմբերի 1972)

25-29 սեպտեմբերի – Հայաստանում անցկացվում է սպորավոր բույսերին նվիրված անդրկովկասյան 4-րդ գիտաժողովը, որին մասնակցում էին Անդրկովկասի և մյուս հանրապետությունների, ինչպես նաև Մոսկվայի, Լենինգրադի բուհերի մոտ 80 անվանի գիտնականներ: Գիտաժողովը բացում է Կենսաբանական ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Հ. Բատիկյանը: Գիտաժողովի մասնակիցները մեկնում են շրջաններ՝ տեղում ծանոթանալու բուսական աշխարհին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 սեպտեմբերի 1972)

27-30 սեպտեմբերի – Համալսարանում տեղի է ունենում անդրկովկասյան հանրապետությունների համալսարանների միացյալ կոնֆերանս՝ նվիրված ԽՍՀՄ-ի կազմավորման կեսդարյա հոբելյանին: Կոնֆերանսը բացում է համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Մ. Ներսիսյանը: Այդ օրերին ֆիզիկա-մաթեմատիկական, հասարակական գիտությունների և պատմության ու ԽՍՀՄ պատմության բաժանմունքներում լսվում են ավելի քան 50 զեկուցումներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 7 հոկտեմբերի 1972)

12-14 հոկտեմբերի – Համալսարանում անցկացվում է «Գեղարվեստական քարգմանությունը իբրև ԽՍՀՄ ժողովուրդների գրականությունների փոխադարձ հարստացման և մերձեցման միջոց» համամիութենական գիտաժողովը, որ կազմակերպել էին ԽՍՀՄ գրողների միությունը և Երևանի պետական համալսարանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 21 հոկտեմբերի 1972)

18 հոկտեմբերի – Հանրապետությունում ռուս գրականության շաբաթվա շրջանակներում համալսարանի հյուրերն էին ռուսաստանցի բանաստեղծներ և արձակագիրներ Ռ. Ռոժդեստվենսկին, Դ. Սամոյլովը, Ս. Կունյակը, Ս. Վիկուլովը, Գ. Բակլանովը, Վ. Շեֆները, Լ. Վասիլևան, Օ. Չուխոնցը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 28 հոկտեմբերի 1972)

նոյեմբեր – Համալսարանը հյուրընկալում է Մոսկվայի համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի մի խումբ ուսանողների՝ պրոֆեսոր Դ. Է. Ռոզենտալի գլխավորությամբ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 6 նոյեմբերի 1972)

12 դեկտեմբերի – Մեխանիկա-մաթեմատիկական և Կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետների ուսանողների նախաձեռնությամբ ստեղծվում է «Շիրակացի» ակումբը: Շնորհավորանքի խոսք են հղում ակադեմիկոսներ Արտաշես Շահինյանը, Սերգեյ Մերգելյանը: Ելույթ են ունենում Սիլվա Կապուտիկյանը, Վահագն Ստամբոլցյանը, Լուսինե Ջաքարյանը, Խորեն Պալյանը: Ակումբի նպատակն էր ուսանողներին ծանոթացնել ոչ միայն հայ, այլև տարբեր ազգերի մշակույթներին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 23 դեկտեմբերի 1972)

1973

Կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետին կից սկսում է գործել «Պատանի մաթեմատիկոս» դպրոցը, որտեղ կարող էին սովորել հանրակրթական դպրոցների բարձր դասարանների աշակերտները:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, պատ. խմբ.՝ Ղարիբյան Գ., Երևան, 1981, էջ 59-60)

13 հունվարի – Տեղի է ունենում հանդիսավոր նիստ, որտեղ ՀԿԿ Երևանի քաղկոմի առաջին քարտուղար Լյուդվիգ Ղարիբջանյանը ՀԿԿ Կենտկոմի, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի, Նախարարների խորհրդի և ՀԱՄԽ-ի պատվոգիրը հանձնում է համալսարանին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 հունվարի 1973)

30 հունվարի – Փիլիսոփայության կաբինետում տեղի է ունենում Երևանի սոցիոլոգների հանդիպումը խորհրդային սոցիոլոգիական ասոցիացիայի նախագահի տեղակալ, ԽՍՀՄ ԳԱ սոցիալական հետազոտությունների ինստիտուտի տնօրենի տեղակալ, պրոֆեսոր Գենադի Վասիլևիչ Օսիպովի հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 փետրվարի 1973)

փետրվար – Պատասխան այցով Բրատիսլավա է մեկնում ԽՍՀՄ պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Փ. Ենգոյանը: Համաձայն երկու համալսարանների միջև կնքված փոխադարձ օգնության պայմանագրի՝ նա զեկուցումներ է կարդում Բրատիսլավայի համալսարանի ուսանողության, դասախոսական կազմի և Սլովակիայի պրոպագանդիստների ու կոմսուլտանտների համար:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 17 փետրվարի 1973)

18 ապրիլի – Խորհրդային Միությունում տեղի է ունենում միամսյակ՝ վիետնամական ժողովրդի հետ միջազգային համերաշխության ու Հնդկաստանի շրջանում խաղաղության ամրապնդման նշանաբանով: Այդ առիթով համալսարանում տեղի է ունենում միտինգ, որին մասնակցում էին դասախոսներ, ուսանողներ, մայրաքաղաքի գիտական հիմնարկների, արդյունաբերական ձեռնարկությունների ներկայացուցիչներ: Նրանք ջերմորեն դիմավորում են ԽՍՀՄ-ում Հարավային Վիետնամի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Դանգ Կուանգ Սինին, խորհրդային տիեզերագնաց, օդաչու Գ. Ս. Տիտովին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 28 ապրիլի 1973)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 2102 շրջանավարտ (որից 469-ը՝ երեկոյան, 303-ը՝ հեռակա բաժիններից)՝ 142 ֆիզիկոս, 58 մեխանիկոս-մաթեմատիկոս, 120 կիրառական մաթեմատիկոս, 51 երկրաբան, 31 աշխարհագրագետ, 68 պատմաբան, 106 քիմիկոս, 104 կենսաբան, 48 իրավաբան, 258 բանասեր, 33 արևելագետ, 214 տնտեսագետ, 97 սպրանքագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 15, ք. 10)

սեպտեմբեր – Պատմության ֆակուլտետի դեկանատի, հնագիտության, արքայորդիտության ու ազգագրության ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվում է հանդիպում ԽՍՀՄ և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, Լենինգրադի Էրմիտաժի տնօրեն Բ. Պիոտրովսկու հետ: Նա կարդում է զեկուցում՝ «Եգիպտոսը թուրքահամոռնի ժամանակաշրջանում» թեմայով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 22 սեպտեմբերի 1973)

13 սեպտեմբերի – Երևանում անցկացվող Ասիայի և Աֆրիկայի երկրների՝ պոեզիայի համաշխարհային առաջին մասնագիտական սիմպոզիումի մասնակիցները հանդիպում են համալսարանի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի հետ: Երեկոն բացում է կուսկոմիտեի քարտուղար Ռաֆիկ Ասլանյանը: Պրոֆեսորադասախոսական կազմի անունից հյուրե-

րին ողջունում են ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Էդ. Ադայանը, Արևելագիտության ֆակուլտետի դասախոս Հարություն Դադուրյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 22 սեպտեմբերի 1973)

հոկտեմբեր – Ռեկտորատի հրավերով Լյուբլինի համալսարանի ԽՍՀՄ ժողովուրդների պատմության ամբիոնի վարիչ, լեհ նշանավոր հայագետ, պրոֆեսոր Միրոսլավա Զակշևսկա-Դուբասովան և տեղի Միկրոբիոլոգիայի ու բիոքիմիայի ինստիտուտի տնօրեն, միկրոբիոլոգիայի ամբիոնի վարիչ, դոցենտ Էուգենիուշ Գոնշիորը դասախոսություններով հանդես են գալիս Երևանի պետական համալսարանի պատմության ու կենսաբանական ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության համար:

(Տե՛ս «Երևանի համալսարան» 6 հոկտեմբերի 1973)

17 հոկտեմբերի – Թբիլիսիի աշխատավորների պատվիրակությունը հյուրընկալվում է համալսարանում, հանդիպում պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հետ: Հյուրերին ողջունում են կուսկոմիտեի քարտուղար Ռ. Ասլանյանը, պրոֆ. Գուրգեն Սևակը, Բանասիրական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Բագրատ Ներսիսյանը: Շնորհակալական խոսքով հանդես է գալիս պատվիրակության ղեկավար, Վրաստանի կոմկուսի Թբիլիսիի քաղկոմի առաջին քարտուղար Պ. Գիլաշվիլին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 27 հոկտեմբերի 1973)

նոյեմբեր – Տեղի է ունենում գիտական մատաչքջան՝ նվիրված ակադեմիկոս ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, համալսարանի երկրորդ ռեկտոր Հակոբ Մանանդյանի ծննդյան 100-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 դեկտեմբերի, 1973)

1974

Համալսարանի ՈՒԳԸ-ն պարզևատրվում է ՀամԼԿԵՄ Կենտկոմի և ԽՍՀՄ բարձրագույն միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության «Պատվո դիպլոմ»-ով:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 39, ք. 71)

12 հունվարի – Ի կատարումն ԽՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարի՝ «Հասարակական մասնագիտությունների ֆակուլտետների կանոնադրությունը հաստատելու մասին» 1973 թ. հուլիսի 13-ի N 584 հրամանի՝ ԵՊՀ ռեկտոր Մ. Գ. Ներսիսյանի հրամանով համալսարանում բացվում է Հասարակական մասնագիտությունների ֆակուլտետ՝ հետևյալ բաժիններով՝ երիտասարդ դասախոսի, կոմերիտական աշխատողի, արվեստի և գեղարվեստական ինքնագործունեության, ժուռնալիստ-ֆոտոռեպորտյորի, իրավագիտության: Նույն հրամանով հաստատվում է այդ ֆակուլտետի կանոնադրությունը, և դեկան է նշանակվում ավագ դասախոս Ա. Հայրյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 16 փետրվարի 1974)

20-22 փետրվարի – Տեղի է ունենում ուսանողների համամիութենական կովկասյան 5-րդ տարածաշրջանային գիտական կոնֆերանսը, որը կազմակերպել էին ռեկտորատը, Պատմության ֆակուլտետի դեկանատը և հնագիտության, աղբյուրագիտության և ազգագրության ամբիոնը: Կոնֆերանսին մասնակցում էին Թբիլիսիի, Կուբանի, Ռոստովի, Օրջոնիկիձեի, Գրոգնո, Մախաչկալայի պետական համալսարանների և Ռոստովի պետական մանկավարժական ինստիտուտի ուսանողները: Կոնֆերանսը բացում է հնագիտության, աղբյուրագիտության և ազ-

գագրության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աշոտ Աբրահամյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 2 մարտի 1974)

3 ապրիլի – Ուսանողների կոմունիստական դաստիարակության բնագավառում բազմամյա բեղմնավոր աշխատանքի համար և հազարերորդ համարի լույսընծայման առթիվ ԵՊՀ ռեկտորատի, կուսկոմիտեի, արհկոմիտեի և ԼԿԵՄ կոմիտեի օրգան «Երևանի համալսարան» բազմատիրաժ թերթը պարզևատրվում է Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 5 ապրիլի 1974)

5 ապրիլի – Տեղի է ունենում «Երևանի համալսարան» շաբաթաթերթի 1000-րդ համարի լույսընծայմանը նվիրված հանդիսավոր նիստ, որը ներածական խոսքով բացում է կուսկոմիտեի առաջին քարտուղար Ռ. Ասլանյանը: Թերթի անցած ուղու մասին զեկուցում է թերթի խմբագիր Վ. Մաղալյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 13 ապրիլի 1974)

մայիս – ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մախարարության կոլեգիայի և համալսարանի ռեկտորատի որոշմամբ համալսարանի ռուսաց լեզվի ամբիոնը բաժանվում է 2 ինքնուրույն ամբիոնների՝ ռուսաց լեզվի և ռուսաց լեզվի ու թարգմանության տեսության:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 12 հոկտեմբերի 1974)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 2067 շրջանավարտ (որից 444-ը՝ երեկոյան, 253-ը՝ հեռակա բաժիններից)՝ 40 ֆիզիկոս, 79 մեխանիկոս-մաթեմատիկոս, 70 կիրառական մաթեմատիկոս, 44 երկրաբան, 23 աշխարհագրագետ, 81 պատմաբան, 82 քիմիկոս, 111 կենսաբան, 60 իրավաբան, 251 բանասեր, 44 արևելագետ, 289 տնտեսագետ, 96 ապրանքագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 15, ք. 10)

հունիս – Համալսարանում տեղի է ունենում համամիութենական գի-

տաժողով՝ նվիրված լեզվի մեթոդորգիական և տրամաբանական խնդիրներին: Գիտաժողովում հանդես են գալիս Մոսկվայից, Լենինգրադից, Կիևից, Նովոսիբիրսկից, Օդեսայից, Ֆրունզեից հրավիրված փիլիսոփաներ և լեզվաբաններ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունիսի 1974)

հունիս – Արևելագիտության ֆակուլտետում կազմակերպվում է հանդիպում պարսիկ բանաստեղծուհի Ժալեի հետ, որին մասնակցում էին նաև արձակագիր Աբիգ Ավագյանը և պատմաբան-արևելագետ Հովհաննես Փահլևանյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունիսի 1974)

4-5 հունիսի – Ա. Ս. Պուշկինի ծննդյան 175-ամյակի առթիվ համալսարանում տեղի է ունենում ԽՍՀՄ ԳԱ Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի, Երևանի, Թբիլիսիի, Բաքվի համալսարանների համամիութենական գիտական համատեղ կոնֆերանս՝ «Պուշկինը և սովետական պոեզիան» թեմայով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունիսի 1974)

15 հոկտեմբերի – Համալսարանի գիտական խորհրդի նիստերի դահլիճում բացվում է ՀԽՍՀ ԳԱ, ԵՊՀ և Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի միացյալ գիտական նստաշրջանը՝ նվիրված «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական էպոսի առաջին պատումի հրատարակության 100-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 19 հոկտեմբերի 1974)

28 հոկտ.- 3 նոյեմբ. – Ֆիզիկայի ֆակուլտետում տեղի ունեցած ԽՍՀՄ և ՀԽՍՀ գիտությունների ակադեմիաների, Խորհրդային Միության և Հայաստանի բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական կրթության նախարարությունների և ԵՊՀ գիտական համատեղ նստաշրջանը նվիրված էր «Բյուրեղների առաջացումը և կառուցվածքը» թեմային: Ընթերցվեցին 34 զեկու-

ցումներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 16 նոյեմբերի 1974)

նոյեմբեր – Համալսարանի հնագիտության, աղբյուրագիտության և ազգագրության ամբիոնը պարզևատրվեց ԽՍՀՄ քարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության և ՀամԼ ԿԵՄ Կենտկոմի «Պատվո դիպլոմ»-ով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 6 նոյեմբերի 1974)

1-2 նոյեմբերի – ԵՊՀ-ում հրավիրվում է Լեհաստանի Լյուբլին քաղաքի Մարի Կյուրի-Սկլոդովսկայայի անվան համալսարանի միացյալ գիտական նստաշրջան՝ նվիրված Լեհաստանի Ժողովրդական Հանրապետության 30-ամյակին: Նստաշրջանում զեկուցումներ են ներկայացվում պատմաքաղաքական, տնտեսական թեմաներով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 6 նոյեմբերի 1974)

18-21 նոյեմբերի – Համալսարանում անցկացվում է բուհական գրադարանների գիտագործնական կոնֆերանս: Աշխատանքներին մասնակցում էին հյուրեր Մոսկվայից, Լենինգրադից, Մարատովից, Վիլնյուսից, Խարկովից, Երևանից: Կոնֆերանսը բացում է համալսարանի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Կ. Խաչատուրյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 7 դեկտեմբերի 1974)

1975

Կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում ստեղծվում է ԷՀՄ և ծրագրավորման ամբիոն: Այն ապահովում էր ԷՀՄ և ծրագրավորում առարկայի դասավանդումը Մեխմաթ, Ֆիզիկայի, Ռադիոֆիզիկայի, Քիմիական, Կենսաբանական, Երկրաբանական ֆակուլտետներում:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան,
պատ. խմբ.՝ Ղարիբյան Գ., Երևան, 1981, էջ 56)

Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական, ապ-
րանքագիտության և առևտրի էկոնոմիկայի ֆակուլտետների հիման
վրա ստեղծվում է ՀԽՍՀ 13-րդ բուհը՝ Երևանի ժողովրդական տնտե-
սության ինստիտուտը:

(Տե՛ս ԵՊՀ արխիվ, ց.1, գ. 1 (կող 9), ք. 31,
տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության բարձրագույն
ուսումնական հաստատությունները, Երևան, 2003, էջ 354)

Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանը նո-
րաստեղծ Ժողովրդական տնտեսության ինստիտուտի գրադարանին
հատկացնում է 50.000 միավոր գրականություն:

(Տե՛ս Ասլանյան Վ., Հայրապետյան Հ.,
Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրլյանների
անվան գիտական գրադարանը, Երևան, 2001, էջ 58)

Արևելագիտության ֆակուլտետում ստեղծվում են արաբական և
թուրքական բանասիրության ամբիոնները:

(Տե՛ս ԵՊՀ արխիվ, ց. 1, գ. 1 (կող 9), ք. 26)

Վեներվար – Համալսարանում տեղի է ունենում արտասահմանյան
ուսանողների առաջին միջազգային գիտական կոնֆերանսը՝

նվիրված խորհրդային ժողովրդի՝ ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած պատմական հաղթանակի 30-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 մարտի 1975)

30 մարտի – Տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված ֆաշիստական Գերմանիայի դեմ խորհրդային ժողովրդի տարած հաղթանակի 30-ամյակին: Մասնակցում էր նաև Խորհրդային Միության կրկնակի հերոս, ավիացիայի գեներալ-լեյտենանտ Վ. Ի. Պապկովը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 12 ապրիլի 1975)

ապրիլ – Գումարվում է համալսարանի հասարակագիտական 7 ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի առաջին միացյալ գիտական նստաշրջանը: Բացման խոսքով հանդես է գալիս ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Բրուտյանը: Երեք օրվա ընթացքում 6 բաժանմունքների նիստերում ընթերցվում է 40 զեկուցում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 26 ապրիլի 1975)

10-11 ապրիլի – Իրավաբանական ֆակուլտետի կուսբյուրոյի նախաձեռնությամբ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի երիտասարդ կուսակցականների և կոմերիտական ակտիվի համար անցկացվում է քաղաքական-գիտական նստաշրջան՝ նվիրված երիտասարդների միջազգային դաստիարակությանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 12 ապրիլի 1975)

30 ապրիլի – Համալսարանում հյուրընկալվում են հայկական 89-րդ՝ Թամանյան դիվիզիայի ներկայացուցիչները: Երեկոն բացում է համալսարանի ռեկտոր Մ. Ներսիսյանը: Ներկաները հոտնկայս և բուռն ծավալաբարձրումներով են դիմավորում դիվիզիայի քաջահմուտ հրամանատար, գեներալ Նվեր Սաֆարյանին: Նա պատմում է դիվիզիայի անցած ուղու մասին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 3 մայիսի 1975)

7 մայիսի – Սեժ դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմում ԽՍՀՄ-ի տարած հաղթանակի 30-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 մայիսի 1975)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1562 շրջանավարտ (որից 345-ը՝ երեկոյան, 247-ը՝ հեռակա բաժիններից)՝ 74 ֆիզիկոս, 71 ռադիոֆիզիկոս, 88 մեխանիկոս-մաթեմատիկոս, 87 կիրառական մաթեմատիկոս, 60 երկրաբան, 20 աշխարհագրագետ, 62 պատմաբան, 95 քիմիկոս, 84 կենսաբան, 57 իրավաբան, 235 բանասեր, 37 արևելագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 15, թ. 10)

սեպտեմբեր – ԵՊՀ են այցելում Համալսարանների միջազգային ասոցիացիայի գլխավոր քարտուղար, պրոֆեսոր Ռոջեր Քեյսը, նրա տեղակալներ, պրոֆեսորներ Դուգլաս Էյտլեն, Ժորժ Դալիանը և արտասահմանյան համալսարանների 33 ռեկտորներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 13 սեպտեմբերի 1975)

սեպտեմբեր – Բանասիրական ֆակուլտետի հյուրն էր Լեհաստանի գրողների միության գլխավոր քարտուղար, անվանի գրող Եժի Պուտրամենտը, որը եկել էր իր կնոջ հետ: Հանդիպմանը ներկա էր նաև անվանի բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 27 սեպտեմբերի 1975)

1 սեպտեմբերի – ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության որոշմամբ կազմավորվում է Ռադիոֆիզիկայի ֆակուլտետը՝ «Գերբարձր հաճախությունների ֆիզիկա», «Քվանտային ռադիոֆիզիկա», «Կիսահաղորդչային էլեկտրոնիկա և միկրոէլեկտրոնիկա», «Կիսահաղորդչային նյութերի և սարքերի ֆիզիկա», «Ռադիոալիքների տարածում և ճառագայթող համակարգեր» մասնագիտացումներով:

(Տե՛ս ԵՊՀ արխիվ գ. 1, գ. 1 (կող 9), թ. 20)

15-16 հոկտեմբերի – Անցկացվեց Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտական նստաշրջան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 նոյեմբերի 1975)

25 հոկտեմբերի – Համալսարանում հյուրընկալվում է շախմատի աշխարհի 12-րդ հաղթող Անատոլի Կարպովը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 12 նոյեմբերի 1975)

31 հոկտեմբերի – Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյա հոբելյանի տոնակատարությանը մասնակցելու համար Երևան ժամանած ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների և արտասահմանյան մի շարք երկրների պատվիրակների մի խումբ հյուրընկալվեց համալսարանում: Երեկոն բացում է Էդ. Ջրբաշյանը: Ելույթ է ունենում ԽՍՀՄ գրողների միության վարչության քարտուղար Ա. Սուրկովը: Իրենց բանաստեղծություններով ու քարգմանություններով հանդես են գալիս Մ. Դուդինը, Հ. Շիրազը, Ռ. Ռաջաբը, Ս. Կապուտիկյանը, արձակագիր Մ. Կոլոսովը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 12 նոյեմբերի 1975)

22 նոյեմբերի – ԵՊՀ, Բժշկական և Պոլիտեխնիկական ինստիտուտների սփյուռքահայ ուսանողների ուսանողական խորհուրդների ու հայրենակցական միությունների համատեղ ուժերով համալսարանի մեծ դահլիճում կազմակերպվում է Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակին նվիրված երեկո:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 9 դեկտեմբերի 1975)

18 դեկտեմբերի – Բանասիրական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողները կազմակերպում են հուշ-երեկո՝ նվիրված հայ բեմի մեծագույն վարպետ Հրաչյա Ներսիսյանի ծննդյան 80-ամյակին: Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լուիզա Սամվելյանը ներկայացնում է Հր. Ներսիսյանի կյանքն ու գործունեությունը: Ելույթ են ունենում ՀԽՍՀ ժողովրդական արտիստներ Վարդուհի Վարդերեսյանը և Սիեր Մկրտչյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 23 դեկտեմբերի 1975)

23 ղեկտեմբերի – Տեղի է ունենում աշխարհի նախկին չեմպիոն, Խորհրդային Միության շախմատի 43-րդ առաջնության հաղթող Տիգրան Պետրոսյանի հանդիպումը համալսարանականների հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 հունվարի 1976)

24 ղեկտեմբերի – Համալսարանի մեծ դահլիճում տեղի է ունենում Կնոջ միջազգային տարվան նվիրված հանդիսավոր նիստ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 հունվարի 1976)

1976

Բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության բաժինը առանձնանում է և դառնում (վերաբացվում) ինքնուրույն ֆակուլտետ:

(Տե՛ս ԵՊՀ արխիվ, ց. 1, գ. 1 (կող 9) ք. 25)

Ֆիզիկայի ֆակուլտետի ընդհանուր ֆիզիկայի ամբիոնում բացվում է «Մթնոլորտի ֆիզիկա» մասնագիտացումը, որի գծով ամեն տարի պատրաստվում էր շուրջ 12 ուսանող:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, պատ. խմբ.՝ Ղարիբյան Գ., Երևան, 1981, էջ 64)

հունվար – Տեր և տիկին Հարություն ու Լուսաբեր Կարմիրյանների կտակի համաձայն՝ համալսարանը, ԱՍՆ-ի Համասերաստահայ Վերաշինաց միությունից որպես նվիրատվություն է ստանում IVAK ֆիրմայի հնչյունաբանական (լինգվոֆոնային) լաբորատորիա՝ լրիվ սարքավորումներով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 24 հունվարի 1976)

15-18 հունվարի – Ծաղկաձորում անցկացվում է ԽՍՀՄ ԳԱ «Կոհերենտ և ոչ գծային օպտիկա» խնդրի գիտական խորհրդի արտագնա նստաշրջանը, որի կազմակերպումը վստահված էր համալսարանին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 հունվարի 1976)

20 հունվարի – Համալսարանից Հայաստանի կոմունիստական կուսակցության 26-րդ համագումարի պատգամավորներ են ընտրվում ռեկտոր Մ. Ներսիսյանը, կուսկոմիտեի քարտուղար Ռ. Ալանյանը, ԽՄԿԿ պատմության ամբիոնի վարիչ Փ. Են-

գոյանը, փիլիսոփայության պատմության ամբիոնի վարիչ Գ. Խրլոպյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 17 հունվարի 1976)

11 փետրվարի – Թբիլիսիի և Երևանի համալսարանների իրավաբանական ֆակուլտետների միջև տեղի է ունենում սոցիալիստական մրցության պայմանագրի կնքման հանդիսավոր նիստ, որը հրավիրել էր ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 մարտի 1976)

26 մարտի - 2 ապրիլի – Կենսաբանական ֆակուլտետի հյուրն էր ԽՍՀՄ ԳԱ Կ. Ա. Տիմիրյազևի անվան բույսերի ֆիզիոլոգիայի ինստիտուտի բաժնի վարիչ, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Միքայել Չալախյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 17 ապրիլի 1976)

29 ապրիլի – Տեղի է ունենում պոեզիայի բարեկամության երեկո, որին ներկա էին մի խումբ հայ բանաստեղծներ ու Հայաստանի գրողների 7-րդ համագումարի հյուրեր Մոսկվայից, Ուկրաինայից, Բելառուսիայից, Մոլդովայից, Էստոնիայից, Ղազախստանից:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 մայիսի 1976)

14 մայիսի – Ակադեմիկոս, հայագետ Հր. Աճառյանի ծննդյան 100-ամյակի առթիվ Երևանի պետական համալսարանի հայագիտական հետազոտությունների լաբորատորիան և հայոց լեզվի ամբիոնը կազմակերպում են համատեղ գիտական նստաշրջան, որը ներառական խոսքով բացում է համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Մ. Ներսիսյանը: Ձեկուցումներով հանդես են գալիս Էդ. Աղայանը, Ա. Սուքիասյանը, Հ. Բարսեղյանը, Մ. Ասատրյանը, Ա. Մադոյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 22 մայիսի 1976)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1440 շրջանավարտ (որից 279-ը՝ երեկոյան, 215-ը՝ հեռակա բաժիններից)՝ 77

ֆիզիկոս, 65 ռադիոֆիզիկոս, 93 մեխանիկոս-մաթեմատիկոս, 83 կիրառական մաթեմատիկոս, 49 երկրաբան, 25 աշխարհագրագետ, 59 պատմաբան, 93 քիմիկոս, 93 կենսաբան, 53 իրավաբան, 148 բանասեր, 42 արևելագետ, 66 ռուսագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 15, ք. 10)

հունիս – ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մախարարությունը 1975-1976 ուստարում առաջին անգամ անցկացնում է բնական, հասարակական և տեխնիկական գիտությունների գծով ուսանողական գիտական լավագույն աշխատանքների ստուգատես, որում ԵՊՀ-ն թե՛ ներկայացված աշխատանքների (83) և թե՛ շահած մրցանակային տեղերի (64) քանակով հանրապետության բուհերի մեջ առաջինն է:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 19 հունիսի 1976)

հունիս – Մեծ դահլիճում տեղի է ունենում ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, պետական մրցանակի դափնեկիր Միհայ Ավետիսյանին մվիրված հուշ-երեկո, որը կազմակերպել էին «Թորոս Ռոպին» ակումբը և Բանասիրական ֆակուլտետի ԼԿԵՄ բյուրոն: Երեկոյին ներկա էին նկարչի գործընկերները, արվեստագետներ, գրականագետներ, ուսանողներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 5 հունիսի 1976)

16 հունիսի – Գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի է ունենում համալսարանում հրատարակվող «Երիտասարդ գիտաշխատող» պարբերականի 10-ամյակին մվիրված նստաշրջանի լիագումար նիստ, որին մասնակցում էին համալսարանի ու հանրապետության բուհերի երիտասարդ գիտնականները: Երկու օր տևած նստաշրջանի 10 մասնաճյուղերում ընթերցվում են ավելի քան 40 գիտական զեկուցումներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 26 հունիսի 1976)

սեպտեմբեր – Համալսարանի հյուրերն էին ամերիկյան գեներալներ դոկտոր Շելդոն Վոլֆը (Կալիֆորնիայի համալսարան), դոկտոր

Չարլզ Լենգլին և դոկտոր Լորենց Վալկովիկը (Բնության պահպանության ազգային ինստիտուտ): Նրանք Կենսաբանական ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնում հանդիպում են ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 25 սեպտեմբերի 1976)

28 սեպտեմբերի – ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հյուրն էր Խորհրդային Միության հերոս, բժշկական գիտությունների դոկտոր, տիեզերագնաց Բ. Եզդրովը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 2 հոկտեմբերի 1976)

5 հոկտեմբերի – Համալսարանականները հյուրընկալում են հայ ժողովրդի պանծալի զավակ, Խորհրդային Միության հերոս, մարշալ Հ. Բաղրամյանին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 23 հոկտեմբերի 1976)

23 հոկտեմբերի – Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության հյուրն էր աշխարհահռչակ գրող Վիլյամ Սարոյանը: Այդ հանդիպմանը մասնակցում էին նաև մայրաքաղաքի հասարակայնության հարյուրավոր ներկայացուցիչներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 6 նոյեմբերի 1976)

30 հոկտեմբերի – Հայաստանում Մոլոդավայի մշակույթի օրերի կապակցությամբ համալսարանում տեղի է ունենում բարեկամության, եղբայրության միտինգ, որին մասնակցում էին Մոլդովայի կառավարական պատվիրակության անդամները, համալսարանի ղեկավար աշխատողներ, դասախոսներ, ուսանողներ: Ժողովը բացեց կուսկոմիտեի քարտուղար Ռ. Ասլանյանը: Շնորհակալական խոսքով հանդես են գալիս Մոլդովայի մշակույթի նախարար Ա. Կոնստանտինովը և բանաստեղծ Պ. Բոցուն:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 6 նոյեմբերի 1976)

դեկտեմբեր – Բրատիսլավայի Յան Կոմենսկու անվան համալսարանի հրավերով Չեխոսլովակիա է մեկնում Երևանի պետական համալսարանի հոծ միջավայրի ամբիոնի դոկտոր, պրոֆեսոր Վոլոդյա Սարգսյանը։ Նա այնտեղ կարդացել է ութ դասախոսություն՝ նվիրված համասեռ և ոչ համասեռ անիզոտրոպ մարմինների մաթեմատիկական առաձգականության տեսության հարցերին։ Բացի այդ՝ նա դասախոսություն է կարդացել Սլովակիայի գիտությունների ակադեմիայի մեխանիկների ընկերությունում և Պրահայի գիտությունների ակադեմիայի տեսական ու կիրառական մեխանիկայի ինստիտուտում։ Բրատիսլավայում խորհրդատվություն է անցկացրել իր ստաժորների՝ գիտության թեկնածուներ Ս. Մամրիլովայի և Վ. Օբետկովայի հետ։

(Տե՛ս «Երևանի համալսարան», 11 դեկտեմբերի 1976)

1977

Կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի տեսական կիրառական մաթեմատիկայի ուսումնական լաբորատորիայի կազմում ստեղծվում է «Նաիրի-2» մակնիշի ԷՀՄ-ներով հագեցված ուսումնական հաշվողական դահլիճ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, պատ. խմբ.՝ Ղարիբյան Գ.,
Երևան, 1981, էջ 57)

19 հունվարի – ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով մաթեմատիկական գիտության զարգացման, գիտական կադրերի պատրաստման գործում ունեցած վաստակի համար և ծննդյան 70-ամյակի առթիվ Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Արտաշես Լիպարիտի Շահինյանը պարգևատրվում է Ժողովուրդների բարեկամության շքանշանով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 19 փետրվարի 1977)

7-9 մարտի – Համալսարանը հյուրընկալում է Թբիլիսիի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողներին դեկանի տեղակալ Սոսո Յիատուրաշվիլիի և մի խումբ դասախոսների հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 19 մարտի 1977)

23 մարտի – Տեղի է ունենում ուսանողական գիտական հորեյանական նստաշրջանի լիագումար նիստը՝ նվիրված Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միավորելու 150-ամյակին: Բացման խոսքով հանդես է գալիս համալսարանի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Կ. Խաչատուրյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 2 ապրիլի 1977)

28 մարտի – Համալսարանի N 1 հանրակացարանի ուսանողությունը հանդիպում է բանաստեղծ, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր Գևորգ Էմինի հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 16 ապրիլի 1977)

12 մայիսի – Երևանի պետական համալսարանի ռեկտոր է նշանակվում Սերգեյ Համբարձումյանը (պաշտոնավարել է մինչև 1991 թ. փետրվար ամիսը):

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 1, գ. 19, թ. 40 հակ. կողմ, տե՛ս նաև Երևանի պետական համալսարանի ռեկտորները (1919-1999), Երևան, 1999, էջ 119-127)

16-17 մայիսի – Հրավիրվում է գիտական նստաշրջան, և տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված հայ մեծ վիպասան և դրամատուրգ Դերենիկ Դեմիրճյանի ծննդյան 100-ամյակին: Նիստը բացում է պրոֆեսոր Մ. Սկրյանը, զեկուցումներով հանդես են գալիս Հր. Թամրազյանը, Գ. Անանյանը, Ռ. Դավթյանը, Ժ. Քալանթարյանը, Ռ. Սաքապետոյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 28 մայիսի 1977)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1500 շրջանավարտ (որից 260-ը՝ երեկոյան, 228-ը՝ հեռակա բաժիններից)՝ 83 ֆիզիկոս, 72 ռադիոֆիզիկոս, 135 մեխանիկոս-մաթեմատիկոս, 92 կիրառական մաթեմատիկոս, 49 երկրաբան, 28 աշխարհագրագետ, 73 պատմաբան, 86 քիմիկոս, 96 կենսաբան, 41 իրավաբան, 141 բանասեր, 33 արևելագետ, 83 ռուսագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 15, թ. 10)

22 սեպտեմբերի – Համալսարանի ԼԿԵՄ կոմիտեի հյուրն էր Լեհական Ժողովրդական Հանրապետության լրագրողների պատվիրակությունը: Նրանք ծանոթանում են համալսարանի կրթական համակարգին, գիտահետազոտական և ուսումնադաստիարակչական աշխատանքներին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 հոկտեմբերի 1977)

հոկտեմբեր – Համալսարանի ռեկտորատի և Իրավաբանական ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ու դատավարության ամբիոնի հրավերով Մոսկվայի համամիութենական իրավաբանական հեռակա ինստիտուտի նույն ամբիոնի վարիչ, դոկտոր, պրոֆեսոր Մարիա Շաքարյանը 10 օր շարունակ դասախոսություններ է կարդում և անցկացնում խորհրդատվություններ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հոկտեմբերի 1977)

3-4 նոյեմբերի – Համալսարանում տեղի է ունենում անդրկովկասյան համալսարանների համատեղ հորելյանական կոնֆերանսը: Բացման խոսքով հանդես է գալիս գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Փանոսյանը: Ձեկուցումներ են կարդում Բաքվից՝ պրոֆեսորներ Ս. Գանդիլովը, Կ. Մանակը, Թբիլիսիից՝ պրոֆեսոր Դ. Թուխարելին, դոցենտ Դ. Ջիբլաձեն, Երևանից՝ պրոֆեսորներ Լ. Խուրշուդյանը, Ս. Ջուրաբյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 19 նոյեմբերի 1977)

դեկտեմբեր – Համալսարանը մեկ շաբաթ հյուրընկալում է Ռիգայի համալսարանի «Յուվենտուս» երգչախումբին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 դեկտեմբերի 1977)

27 դեկտեմբերի – Շահագործման է հանձնվում Բանասիրական ֆակուլտետի նոր մասնաշենքը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 հունվարի 1978)

1978

Համալսարանում տեղի է ունենում Հայաստանի կին գիտնականների կոնֆերանս, որին մասնակցում էին հանրապետության բուհերի, ՀԽՍՀ ԳԱ ինստիտուտների ներկայացուցիչներ, ինչպես նաև Վրաստանից ու Ադրբեջանից ժամանած հյուրեր: Բացման խոսքով հանդես է գալիս Հայաստանի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարար Լյուդվիգ Ղարիբջանյանը: Կոնֆերանսի մասնակիցներին ողջունում է նաև ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Ռ. Սվետլովան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 7 հունվարի 1978)

Ֆիզիկայի ֆակուլտետի ռադիացիոն ֆիզիկայի պրոֆլեմային լաբորատորիայի և հատուկ կոնստրուկտորական բյուրոյի հիմքի վրա ստեղծվում է կոնդենսացված միջավայրերի ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, պատ. խմբ.՝ Ղարիբյան Գ., Երևան, 1981, էջ 79)

Մեծ դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի, ՀԽՍՀ Նախարարների խորհրդի, ՀԱՄԽ-ի և ՀԼԿԵՄ Կենտկոմի վոխանցիկ կարմիր դրոշով համալսարանին պարգևատրելուն:

Այդ բարձր պարգևին համալսարանը արժանացել էր 1977 թ.՝ արտադրության արդյունավետության և աշխատանքի որակի բարձրացման նպատակով հանրապետությունում ծավալված սոցմրցության հաղթող ճանաչվելու համար:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 11 մարտի 1978)

Մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետում ստեղծվում են

ֆունկցիաների տեսության և մաթեմատիկական անալիզի ամբիոն-
ներ:

(Երևանի պետական համալսարան, պատ. խմբ.՝ Ղարիբյան Գ.,
Երևան, 1981, էջ 43-44)

Կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի կազմում բացվում
է համալսարանի ուսումնագիտական հաշվողական լաբորատորի-
ան, որի հիմքի վրա 1981 թ. ստեղծում է համալսարանի հաշվողական
կենտրոնը: Այն համալրված էր երրորդ սերնդի միասնական սերիայի
երկու ԷՀՄ-ներով:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, պատ. խմբ.՝ Ղարիբյան Գ.,
Երևան, 1981, էջ 57)

20 հունվարի – «Չարենցյան ընթերցումների»-ի հերթական՝ չոր-
րորդ հոբելյանական նստաշրջանը նվիրված էր Ե. Չարենցի
ծննդյան 80-ամյակին, որը տեղի է ունենում Բանասիրական
ֆակուլտետում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 11 փետրվարի 1978)

մայիս – Համալսարանի հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբա-
նական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովսեփ Թութուն-
ջյանն ընտրվում է ԱՄՆ-ի մտավոր ընդունակությունների զար-
գացման և հոգեմարմնական հետազոտությունների ինստիտու-
տի (Նյու-Յորք) գիտխորհրդի անդամ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 մայիսի 1978)

30 մայիսի - 2 հունիսի – Համալսարանում տեղի է ունենում ԽՍՀՄ
բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության
նախարարության գիտատեխնիկական խորհրդի նախա-
գահության՝ Երևանում անցկացվող նստաշրջանի բացումը:
Նստաշրջանին մասնակցում էին Խորհրդային Միության, ինչ-
պես նաև Հայաստանի տարբեր բուհերի ղեկավարներ, ֆակուլ-
տետների ղեկավարներ, ամբիոնների վարիչներ, անվանի գիտ-
նականներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 17 հունիսի 1978)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1312 շրջանավարտ (որից 96-ը՝ երեկոյան, 134-ը՝ հեռակա բաժիններից)՝ 87 ֆիզիկոս, 77 ռադիոֆիզիկոս, 150 մեխանիկոս-մաթեմատիկոս, 117 կիրառական մաթեմատիկոս, 51 երկրաբան, 29 աշխարհագրագետ, 62 պատմաբան, 110 քիմիկոս, 107 կենսաբան, 54 իրավաբան, 142 բանասեր, 15 արևելագետ, 81 ռուսագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 15, ք. 10)

12 սեպտեմբերի – Համալսարանում տեղի է ունենում հորեյանական գիտական նիստ՝ նվիրված Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի կազմի մեջ մտնելու 150-ամյակին: Նիստը բացում է համալսարանի ռեկտոր Սերգեյ Համբարձումյանը: Ձեկուցումներով հանդես են գալիս պրոֆ. Հ. Ղազարյանը, դոցենտ Հ. Մելիքսեբյանը: Լիագումար նիստից հետո նստաշրջանը շարունակվում է ֆակուլտետներում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 23 սեպտեմբերի 1978)

27 հոկտեմբերի – Դեռևս հոկտեմբերի 23-ից Մոսկվայում սկսված՝ թարգմանության ու պրակտիկայի մի շարք խնդիրներին նվիրված միջազգային սիմպոզիումի, որին մասնակցում էր 22 երկրներից 40 ներկայացուցիչ, աշխատանքները շարունակվում են ԵՊՀ-ում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 նոյեմբերի 1978)

11 նոյեմբերի – Թբիլիսիի ֆիլիարմոնիայի մեծ դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Թբիլիսիի պետական համալսարանի 60-ամյա հորեյանին, որտեղ ելույթ է ունենում ԵՊՀ ռեկտոր, ակադեմիկոս Ս. Համբարձումյանը:

Նույն օրը ԵՊՀ ռեկտորը և Թբիլիսիի պետական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Դ. Ի. Չխիկվիշվիլին ստորագրում են երկու համալսարանների միջև բարեկամության և համագործակցության մասին պայմանագիր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 25 նոյեմբերի 1978)

14-16 նոյեմբերի – Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի դասախոսների համար Երևանում անցկացվում է սեմինար՝ «Նորագույն նվաճումները տիեզերքի ուսումնասիրության բնագավառում և պրոպագանդայի խնդիրները» քեմայով: Այդ կապակցությամբ համալսարանի հյուրերն էին տիեզերագնացներ Յու. Ռոմանենկոն և Գր. Գրեչկոն:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 2 դեկտեմբերի 1978)

դեկտեմբեր – Լրանում է Վիկտոր Համազասպի Համաբարձումյանի 70-ամյակը: Աշխարհահռչակ գիտնականը խորհրդային գիտության զարգացման մեջ ունեցած ակնառու վաստակի և ծննդյան հոբելյանի առթիվ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով պարգևատրվում է Լենինի շքանշանով և «Մուրճ ու մանգաղ» երկրորդ ոսկե մեդալով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 9 դեկտեմբերի 1978)

1979

Կազմակերպվում է Երևանի պետական համալսարանի գիտահետազոտական մասը:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 39, ք. 9)

23 փետրվարի – Մեծ դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված խորհրդային բանակի և ռազմածովային նավատորմի 61-րդ տարեդարձին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 3 մարտի 1979)

13 մարտի – Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, ՀԽՍՀ Նախարարների խորհրդի, ՀԱՍԽ-ի և ՀԼԿԵՄ Կենտկոմի որոշմամբ 1978 թվականի ժողովրդատնտեսական պլանի հաջող կատարման համար տեղի է ունենում համալսարանին երկրորդ անգամ փոխանցիկ դրոշով պարգևատրելու արարողությունը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 17 մարտի 1979)

17-18 ապրիլի – ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության մանկավարժության ու հոգեբանության գիտամեթոդական բաժանմունքի և ԵՊՀ հոգեբանության ամբիոնի հետ համալսարանում անցկացվում է հանրապետական I սեմինարը, որը նվիրված էր ՀԽՍՀ բուհերում և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում հոգեբանական առարկաների դասավանդմանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 28 ապրիլի 1979)

մայիս – ԽՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության ու արդարադատության նախարարությունների կոլեգիաների համատեղ որոշմամբ ԵՊՀ-ում ստեղծվում է խորհրդային

իրավունքի ամբիոն:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 26 մայիսի 1979)

8 մայիսի – Համալսարանի բակում հանդիսավորությամբ բացվում է Հայրենական մեծ պատերազմում զոհված համալսարանականների հիշատակը հավերժացնող աղբյուր-հուշարձանը, որի վրա գրված է. «Հավերժ փառք 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում զոհված համալսարանականներին»:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 12 մայիսի 1979)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1355 շրջանավարտ (որից 102-ը՝ երեկոյան, 135-ը՝ հեռակա բաժիններից)՝ 83 ֆիզիկոս, 68 ռադիոֆիզիկոս, 148 մեխանիկոս-մաթեմատիկոս, 136 կիրառական մաթեմատիկոս, 49 երկրաբան, 20 աշխարհագրագետ, 83 պատմաբան, 83 քիմիկոս, 140 կենսաբան, 58 իրավաբան, 159 բանասեր, 25 արևելագետ, 66 ռուսագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 15, ք. 10)

5 հունիսի – Համալսարանի հյուրն էր «Պորտուգալիա-ՍՍՀՄ» ընկերության պատվիրակությունը, որի անդամները հանդիպում են պրոֆեսորդասախոսական կազմի և ուսանողության հետ: Հանդիպման նպատակն էր նպաստել ուսանողների կապերի ընդլայնման և ամրապնդման գործին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 16 հունիսի 1979)

սեպտեմբեր – Ֆրանսիայի հոգեբանների գլխավոր ասամբլեայի տարեկան նիստում միաձայն պատվավոր անդամ է ընտրվում համալսարանի հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովսեփ Թութունջյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 սեպտեմբերի 1979)

22 սեպտեմբերի – Համալսարանի հյուրերն էին Հայաստանում Ֆրանսիայի օրերի մասնակիցները: Հանդիպումը նոր լիցք է հաղորդում երկու ժողովուրդների բարեկամության ու փո-

խըմբռնման խորացմանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 29 սեպտեմբերի 1979)

26 սեպտեմբերի – Համալսարանի հյուրն էր Գ.Ֆ.Հ կոմունիստական կուսակցության՝ Հեսենի օկրուգային կոմիտեի պատվիրակությունը՝ օկրուգային կոմիտեի նախագահ Ջեպ Մայերի գլխավորությամբ: Հանդիպումը ճանաչողական բնույթի էր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 29 սեպտեմբերի 1979)

հոկտեմբեր – Կանադահայ հոգեբան, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Նյու Յորքի համալսարանի դասախոս, Կանադայի և ԱՄՆ-ի հոգեբանական գիտական ասոցիացիաների անդամ Շաքե Թուգմանյանը «Կլինիկական հոգեբանությունը և նրա մեթոդները» թեմայով դասախոսություն է կարդում համալսարանի ուսանողության համար:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 2 նոյեմբերի 1979)

17-22 հոկտեմբերի – Տեղի է ունենում Երևանի և Լյուբլինի (ԼժՀ) համալսարանների համատեղ գիտական կոնֆերանս՝ նվիրված պատմության, փիլիսոփայության, քիմիայի արդի խնդիրներին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 նոյեմբերի 1979)

17 նոյեմբերի – Բանասիրական ֆակուլտետների մասնաշենքում տեղի է ունենում միտինգ՝ նվիրված Ուսանողության միջազգային օրվան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 24 նոյեմբերի 1979)

20 նոյեմբերի – Իր աշխատանքներն է սկսում համալսարանի ուսանողական գիտական 42-րդ կոնֆերանսը՝ նվիրված հայ մեծ հեղափոխական-դեմոկրատ, գրող և հրապարակախոս Միքայել Նալբանդյանի ծննդյան 150-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 դեկտեմբերի 1979)

դեկտեմբեր – Մեծ դահլիճում տեղի է ունենում հայ հին ճարտարապետությանը նվիրված լուսապատկերների ցուցադրում, որն ուղեկցվում էր դրանց հեղինակ, ԵՊՀ հնագիտության և Փարիզի համալսարանի արվեստագիտության ամբիոնների ասպիրանտ Պատրիկ Տոնապետյանի բացատրություններով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 22 դեկտեմբերի 1979)

1980

Երևանի պետական համալսարանը երրորդ անգամ անընդմեջ արժանանում է Հայաստանի Կենտկոմի, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի, Նախարարների խորհրդի, ՀԱՍԽ և ՀԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 մարտի 1980)

փետրվար – Համալսարանի աշխատակից Անուշավան Թովմասյանը ստանում է «Ճնշման տակ մետաղների լցման կշռաչափման հարմարանք» հեղինակային գյուտի իրավունք (վկայագիր N 705265):

(Տե՛ս «Երևանի համալսարան», 23 փետրվարի 1980)

մարտ – Կենսաբանական ֆակուլտետում կազմակերպվում է հանդիպում Լեհաստանի Լոձ քաղաքի Էվոլյուցիոն կենսաբանության թանգարանի տնօրենի տեղակալ, կենսաբանական գիտությունների դոկտոր Էդուարդ Տրանդայի հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 22 մարտի 1980)

մարտ – Մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետի դիֆերենցիալ հավասարումների ամբիոնի հյուրն էր Մոսկվայի պետական համալսարանի ղեկավարման ընդհանուր խնդիրների ամբիոնի պրոֆ. Վ. Տիխոմիրովը, որն անցկացնում է դասախոսություններ և էքստրենալ խնդիրների տեսությունից գործնական պարապմունքներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 29 մարտի 1980)

18 մարտի – Համալսարանի հյուրերն էին ԱՄՆ-ի Ալյոպայի համալսարանի մի խումբ դասախոսներ և ուսանողներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 22 մարտի 1980)

26-27 մարտի – Համալսարանում տեղի է ունենում անդրկովկասյան համալսարանների միացյալ ուսանողական գիտական կոնֆերանս՝ նվիրված Վ. Ի. Լենինի ծննդյան 110-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 12 ապրիլի 1980)

ապրիլ – ԵՊՀ ուսանողության շրջանում գիտահետազոտական աշխատանքներ կատարելու նկատմամբ սեր ու հակում արթնացնելու, նրանց կատարած հետազոտությունները լայնորեն քարոզելու, ՌԻԳԸ գործունեությունը լավագույն ձևով լուսաբանելու համար «Երևանի համալսարան» շաբաթաթերթը արժանանում է ՌԻԳՀԱ գծով հանրապետական խորհրդի պատվոգրի:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 5 ապրիլի 1980)

ապրիլ – Մեծ դահլիճում տեղի է ունենում հուշ-երեկո՝ նվիրված խոշորագույն նկարիչ Մարտիրոս Սարյանի 100-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 12 ապրիլի 1980)

ապրիլ – Մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետի հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության ամբիոնի հրավերով ուսանողների հյուրն էր Ուկրաինական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Վլադիմիր Սեմյոնովիչ Կորոլյուկը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 12 ապրիլի 1980)

15 ապրիլի – «Ուսանողական գարուն-80» փառատոնի ծրագրով համալսարանում անցկացվում է երիտասարդության համերաշխության ժողով, որին մասնակցում էին ԵՊՀ-ում սովորող արտասահմանցի ուսանողները և Երևանում անցկացվող «Քաղաքական երգ-80» ավանդական փառատոնի մասնակիցները:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 17 մայիսի 1980)

մայիս – Բանասիրական ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողները կազմակերպում են գրական-երաժշտական ցերեկույթ՝ նվիր-

ված հայ մեծ երաժիշտ Կոմիտասին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մայիսի 1980)

28-30 մայիսի – Երևանում տեղի է ունենում «ԽՍՀՄ XXV համագումարի արտաքին քաղաքական ծրագրի իրականացման համար Խորհրդային Միության պայքարի պատմական փորձը» համամիութենական գիտական կոնֆերանս, որը կազմակերպել էին ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի ԽՍՀՄ արտաքին քաղաքականության և միջազգային հարաբերությունների պատմության գիտական խորհուրդը, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի «Համաշխարհային սոցիալիստական սիստեմը» խնդրով զբաղվող գիտական խորհուրդը, «Գիտելիք» համամիութենական ընկերության վարչությանն առընթեր ԽՍՀՄ արտաքին քաղաքականության և միջազգային հարաբերությունների քարոզչության գիտամեթոդական խորհուրդը և Երևանի պետական համալսարանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 7 հունիսի 1980)

հունիս – ԵՊՀ-ում գործում էին 13 ֆակուլտետներ, որոնցում ցերեկային, երեկոյան և հեռակա ուսուցմամբ սովորում էին շուրջ 8000 ուսանողներ, ուսումնական գործընթացը ղեկավարում էին 85 ամբիոններ, որոնցում աշխատում էին մոտ 800 դասախոսներ, այդ թվում՝ ԽՍՀՄ և ՀԽՍՀ գիտությունների ակադեմիաների 30 ակադեմիկոսներ և թղթակից անդամներ, 80 գիտությունների դոկտորներ ու պրոֆեսորներ և 350-ից ավելի թեկնածուներ և դոցենտներ:

Համալսարանը հրատարակում էր մի շարք պարբերականներ՝ «Բանբեր Երևանի համալսարանի», (հասարակական գիտություններ), «Գիտական տեղեկագիր» (բնական գիտություններ), «Երիտասարդ գիտաշխատող» (բնական և հասարակական գիտություններ), «Երևանի համալսարան» (լրատու), ինչպես նաև լույս էին տեսնում «Երևանի համալսարան» շաբաթաթերթն ու «Ուսանողական գիտական աշխատանքներ» ամենամյա ժողովածուն՝ բնական և հասարակական գի-

տուրքունների բաժիններով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 28 հունիսի 1980)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1491 շրջանավարտ (որից 136-ը՝ երեկոյան, 146-ը՝ հեռակա բաժիններից)՝ 136 ֆիզիկոս, 54 ռադիոֆիզիկոս, 165 մեխանիկոս-մաթեմատիկոս, 177 կիրառական մաթեմատիկոս, 52 երկրաբան, 36 աշխարհագրագետ, 72 պատմաբան, 82 քիմիկոս, 135 կենսաբան, 56 իրավաբան, 142 բանասեր, 26 արևելագետ, 76 ռուսագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 15, ք. 10)

1 սեպտեմբերի – Համալսարանում սովորում էր 266 արտասահմանցի ուսանող Ալժիրից, Աֆղանստանից, Կիպրոսից, Լեհաստանից, Նեպալից, Պակիստանից և այլ երկրներից:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ.2, գ.39, ք. 10)

16 սեպտեմբերի - 1 հոկտեմբերի – Զինիական ֆակուլտետի անալիտիկական քիմիայի ամբիոնի հյուրն էր Լենինգրադի համալսարանի նույնանուն ամբիոնի դոցենտ Ալեքսանդր Կարապետի Չարիկովը, որը հանդես է գալիս զեկուցումներով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 11 հոկտեմբերի 1980)

26 նոյեմբերի – Համալսարանում հրավիրվում է հորեյանական գիտական նստաշրջան՝ նվիրված Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման և Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորման 60-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 29 նոյեմբերի 1980)

1981

Կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում ստեղծվում է համակարգերի տեսության ամբիոն, որի ուսումնագիտական բազան ՀԽՍՀ ԳԱ և ԵՊՀ միացյալ հաշվողական կենտրոնն էր:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, պատ. խմբ.՝ Ղարիբյան Գ.,
Երևան, 1981, էջ 56)

ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, ակադեմիկոս Ռ. Ալեքսանդրյանի նախաձեռնությամբ ԵՊՀ մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետում բացվում է օպտիմալ կառավարման տեսության և մոտավոր մեթոդների ամբիոնը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 հոկտեմբերի 2004)

22 հունվարի – Երևանի Ստ. Շահումյանի անվան պալատի մեծ դահլիճում իր աշխատանքներն է սկսում Հայաստանի կոմկուսի XXVII համագումարը. համալսարանից ընտրված պատգամավորներն էին՝

1. Սերգեյ Համբարձումյանը (ռեկտոր),
2. Ռոբերտ Ենգիբարյանը (կուսկոմիտեի քարտուղար),
3. Ծատուր Աղայանը (ԽՄԿԿ պատմության ամբիոնի վարիչ),
4. Անուշ Աղուզումցյանը (Բանասիրական ֆակուլտետի III կուրսի ուսանողուհի):

(Տե՛ս «Երևանի համալսարան», 24 հունվարի 1981)

21 հունվարի – Հայկական ԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության կոլեգիայի և Լուսավորության, բարձրագույն դպրոցի, գիտական հիմնարկների աշխատողների արհմիության հանրապետական կոմիտեի

նախագահության համատեղ նիստի որոշմամբ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի մի շարք անդամներ պարգևատրվում են «Տասներորդ հնգամյակի հարվածային» կրծքանշանով.

Սմբատ Բադալյան - քաղաքատնտեսության ամբիոնի պրոֆ.

Թադևոս Հակոբյան - տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ, պրոֆ.

Յուրի Վարդանյան - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան, պրոֆ.

Նորայր Բեյլերյան - ֆիզիկական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆ.

Վազգեն Պետրոսյան - Ֆիզիկայի ֆակուլտետի դեկանի տեղակալ, դոց.

Ռաֆիկ Տոնոյան - Կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան, դոցենտ

Լևոն Հովհաննիսյան - ռազմ. ամբիոնի վարիչ, գնդապետ

Արամ Հարությունյան - Կոնդենսացված միջավայրի ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտի խմբի դեկավար

Հրանտ Թամրազյան - հայ գրականության ամբիոնի վարիչ, պրոֆ.

Վլադիմիր Սարգսյան - հոծ միջավայրի մեխանիկայի ամբիոնի վարիչ, պրոֆ.:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 14 մարտի 1981)

28 հունվարի - 4 փետրվարի – Բանասիրական ֆակուլտետի ԼԿԵՄ կոմիտեի հրավերով Երևանում իրենց ձմեռային արձակուրդն են անցկացնում Վիլյուսի համալսարանի բանասիրական ֆակուլտետի մի խումբ ուսանողներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 14 փետրվարի 1981)

10-13 մարտի – Համալսարանում տեղի է ունենում երիտասարդ գիտնականների գիտաժողով՝ նվիրված Մայր բուհի հիմնադրման 60-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 28 մարտի 1981)

ապրիլ – Պատմության ֆակուլտետի հնագիտական-ազգագրական թանգարանում տեղի է ունենում համամիութենական 14-րդ ազգագրական գիտական ուսանողական կոնֆերանսը, որին մասնակցում էին Մոսկվայի, Տարտուի, Կազանի և մի շարք այլ համալսարանների պրոֆեսորներ, դասախոսներ և ուսանողներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 մայիսի 1982)

ապրիլ – Համալսարանի հյուրերն էին Լյուբլինի Մարի Կյուրի-Սկլոդովսկայայի անվան համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սկշիդլո Վադսլավ Ստանիսլավովիչը և գեոֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր Միխնա Էդուարդ Ադամովիչը: Երկու համալսարանների միջև կնքվում է 1981-1985 թթ. աշխատանքային և գիտական համագործակցության պայմանագիր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 2 մայիսի 1981)

16 ապրիլի – Մեծ դահլիճում տեղի է ունենում Երիտասարդության միջազգային համերաշխության օրվան նվիրված միտինգ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 2 մայիսի 1981)

մայիս – Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 36-րդ տարեդարձի նախօրյակին համալսարանի սպորտային համալիրի վարչական մասնաշենքի 3-րդ հարկում բացվում է «Մարտական փառքի սենյակ»-ը, որը ներկայացնում էր խորհրդային զինված ուժերի մարտական փառապանծ ուղին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 9 մայիսի 1981)

մայիս – Կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի նախաձեռնությամբ համալսարանում կազմակերպվում է հանդիպում անվանի բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 16 մայիսի 1981)

մայիս – Համալսարանի հյուրն էր Վիլնյուսի երգի-պարի վաստակա-

վոր համույթը, որը համերգային ճոխ ծրագրով հանդես է գալիս մեծ դահլիճում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 մայիսի 1981)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1357 շրջանավարտ (որից 115-ը՝ երեկոյան, 113-ը՝ հեռակա բաժիններից)՝ 112 ֆիզիկոս, 63 ռադիոֆիզիկոս, 157 կիրառական մաթեմատիկոս, 55 երկրաբան, 25 աշխարհագրագետ, 58 պատմաբան, 74 քիմիկոս, 81 կենսաբան, 59 իրավաբան, 88 բանասեր, 34 արևելագետ, 71 ռուսագետ, 26 փիլիսոփա, 25 կենսաֆիզիկոս, 28 կենսաքիմիկոս, 134 մաթեմատիկոս:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 15, ք. 10)

17 հունիսի – ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով գիտամանկավարժական ոլորտի մի խումբ աշխատողներ պարգևատրվում են շքանշաններով ու մեդալներով, այդ թվում՝ համալսարանից.

Սերգեյ Համբարձումյան - ռեկտոր (Լենինի շքանշան),

Գուրգեն Սահակյան - տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչ, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ (Ժողովուրդների բարեկամության շքանշան)

Վարդգես Ասլանյան - վարչա-տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր («Պատվո նշան» շքանշան)

Հովհաննես Բարսեղյան - Բանասիրական ֆակուլտետի դեկան («Պատվո նշան» շքանշան),

Մանուշ Հարությունյան - օտար լեզուների համահամալսարանական ամբիոնի վարիչ («Աշխատանքային գերազանցության համար» մեդալ),

Ջուլիետա Մելիք-Խաչատրյան - բուսաբանության ամբիոնի պրոֆեսոր («Աշխատանքային գերազանցության համար» մեդալ):

(Տե՛ս «Երևանի համալսարան», 19 սեպտեմբերի 1981)

15 սեպտեմբերի – Բանասիրական ֆակուլտետի մասնաշենքի դահլիճում տեղի է ունենում ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի

տարեկան գիտական նատաշրջանի լիագումար նիստը (նվիրված ԵՊՀ 60-ամյակին):

(Տե՛ս «Երևանի համալսարան», 26 սեպտեմբերի 1981)

27 սեպտեմբերի - 3 հոկտեմբերի – Ծաղկաձորում անցկացվում է խորհրդա-չեխտալուծակյան VII սիմպոզիումը, որը նվիրված էր «Ֆունկցիաների տեսության և ֆունկցիոնալ անալիզի մեթոդների կիրառությունը մաթեմատիկական ֆիզիկայի խնդիրներում» խնդրին: Այն կազմակերպել էր Երևանի պետական համալսարանը ԽՍՀՄ ԳԱ Սիբիրի բաժանմունքի, ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի ինստիտուտի և ԽՍՀՄ ԳԱ Լենինի շքանշանակիր Վ. Ա. Ստեկլովի անվան մաթեմատիկայի ինստիտուտի հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 7 նոյեմբերի 1981)

հոկտեմբեր – Երիտասարդության կոմունիստական դաստիարակության գործում ձեռք բերած հաջողությունների համար համալսարանի ԼԿԵՄ կոմիտեն պարգևատրվում է ՀամԼԿԵՄ Կենտկոմի պատվո դրոշով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 հոկտեմբերի 1981)

17 նոյեմբերի – ԵՊՀ-ում տեղի է ունենում ժողով՝ նվիրված Ուսանողների միջազգային օրվան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 21 նոյեմբերի 1981)

դեկտեմբեր – Սահմանվում է Երևանի պետական համալսարանի «Գիտական ուսումնասիրության բնագավառում ձեռք բերած նվաճումների համար» մեդալ, որը համապատասխան վկայականով և 1000 ռուբլի դրամական պարգևով երեք տարին մեկ շնորհվում էր համալսարանի ռեկտորի նշանակած հատուկ հանձնաժողովի որոշմամբ և, որպես կանոն, հանձնվում համալսարանի հիմնադրման օրը (համապատասխան տարվա դեկտեմբերին) համալսարանի խորհրդի նիստում: Համալսարանի հիմնադրման 60-ամյակի օրը հանդիսավոր

պայմաններում առաջին մեղալը համալսարանի ռեկտոր Սերգեյ Համբարձումյանը հանձնում է ՀԽՍՀ ԳԱ նախագահ, սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, համալսարանի երկարամյա դասախոս ու ամբիոնի վարիչ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 դեկտեմբերի 1981, տե՛ս նաև Երևանի պետական համալսարան. 2005-2006 ուստարվա գործունեություն, Երևան, 2006, էջ 20)

4 դեկտեմբերի – ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում է շնորհում հետևյալ դասախոսներին.

1. Հրանտ Բաբայան (քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ),
2. Վիլիկ Հարությունյան (ֆիզմաթ գիտ. դոկտոր, պրոֆեսոր),
3. Լևոն Սկրտչյան (բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետի դեկան),
4. Վլադիմիր Սարգսյան (ֆիզմաթ գիտ. դոկտոր, պրոֆեսոր),
5. Աշոտ Սուքիասյան (բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր),
6. Լիա Օսիպյան (կենսաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր):

(Տե՛ս «Սովետական Հայաստան», 8 դեկտեմբերի 1981)

7 դեկտեմբերի – ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով ՀԽՍՀ բարձրագույն դպրոցի վաստակավոր գործչի պատվավոր կոչում է շնորհվում համալսարանի հետևյալ դասախոսներին.

- Նորայր Բեյլերյան (քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր),
 Հրաչյա Գաբրիելյան (աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր),
 Ավագ Լալայան (Իրավաբանական ֆակուլտետի դեկան, իրավաբ. գիտ. թեկնածու, դոցենտ),
 Ռաֆիկ Մովսիսյանին (պատ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր),
 Ռիմա Պողոսյանին (ֆիզմաթ գիտ. թեկնածու, դոցենտ):
 Պատվոգրով են պարգևատրվում.
 Գառնիկ Ամանյանը (հրատարակչության տնօրեն),

Սողոմոն Բալյանը (պրոֆեսոր),
 Ռոբերտ Ենգիբարյանը (կոսկովիտեի քարտուղար),
 Մալխաս Հովհաննիսյանը (տպարանի գրաշար),
 Հովհաննես Սկրտչյանը (Միացյալ արհմիութենական կոմի-
 տեի նախագահ),
 Սկրտիչ Սկրյանը (ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ),
 Յուրի Վարդանյանը (պրոֆեսոր, Ռադիոֆիզիկայի ֆակուլ-
 տետի դեկան):

(Տե՛ս «Սովետական Հայաստան», 8 դեկտեմբերի 1981,
 տե՛ս նաև «Երևանի համալսարան», 15 դեկտեմբերի 1981)

7 դեկտեմբերի – Համալսարանում բացված Մայր բուհի 60-ամյա-
 կին նվիրված ցուցահանդես են այցելում Հայաստանի կոմ-
 կուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը,
 Նախարարների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանը, ՀԿԿ
 Կենտկոմի քարտուղար Կառլեն Դալլաքյանը, ՀԽՍՀ բարձրա-
 գույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարար
 Լյուդվիգ Ղարիբջանյանը և այլք:

(Տե՛ս «Սովետական Հայաստան», 9 դեկտեմբերի 1981,
 տե՛ս նաև «Երևանի համալսարան», 15 դեկտեմբերի 1981)

8 դեկտեմբերի – Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քար-
 տուղար Կ. Ս. Դեմիրճյանն ընդունում է Երևանի պետական
 համալսարանի 60-ամյակին նվիրված հանդիսություններին
 մասնակցելու համար Երևան ժամանած հյուրերին՝ Մոսկվայի
 և մյուս միութենական հանրապետությունների ներկայացուցիչ-
 ներին: Նույն օրը Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բա-
 լետի պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում
 հորեյանական հանդիսավոր նիստ: Նախագահությունում էին
 Կ. Դեմիրճյանը, Ֆ. Սարգսյանը, Գ. Անդրեևը, Կ. Դալլաքյանը,
 Կ. Ղամբարյանը, Լ. Ներսիսյանը, Լ. Շուստկոն, Ս. Պետրոսյա-
 նը, Հ. Ոսկանյանը, Մ. Արզումանյանը, Գ. Մարտիրոսյանը, Մ.
 Յուզբաշյանը, Վ. Տուրյանը և ուրիշներ:

(Տե՛ս «Սովետական Հայաստան», 9 դեկտեմբերի 1981,
 տե՛ս նաև «Երևանի համալսարան», 15 դեկտեմբերի 1981)

1982

հունվար – ՀԽՍՀ ԳԱ ընդհանուր ժողովում Երևանի պետական համալսարանից ակադեմիկոսի բարձր կոչման են արժանանում.

1. Գուրգեն Սերոբի Սահակյանը՝ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի գծով,

2. Միքայել Լևոնի Տեր-Միքայելյանը՝ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի գծով,

3. Արշալույս Համբարձումի Գաբրիելյանը՝ երկրաբանության գծով,

4. Էդուարդ Բագրատի Աղայանը՝ լեզվաբանության գծով,

5. Գևորգ Աբելի Բրուտյանը՝ փիլիսոփայության գծով,

6. Էդվարդ Մկրտչի Ջրբաշյանը՝ գրականության և գրականագիտության գծով:

Թղթակից անդամներ են դառնում՝

1. Ռուբեն Վիկտորի Համբարձումյանը՝ մաթեմատիկայի գծով,

2. Դավիթ Միերի Սեդրակյանը՝ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի գծով,

3. Սերգեյ Հայկի Մատինյանը՝ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի գծով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 հունվարի 1982)

15-19 փետրվարի – Ծաղկածորում տեղի է ունենում «Դիսկրետ մաթեմատիկայի ժամանակակից պրոբլեմներ» թեմայով հանրապետական կոնֆերանս՝ նվիրված Երևանի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի հիմնադրման 10-ամյակին: Կոնֆերանսին մասնակցում էին Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի, ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի, ինչպես նաև Մոսկվա, Լենինգրադ, Կիև, Կազան,

Ռիգա, Նովոսիբիրսկ, Թբիլիսի, Բաքու, Կրասնոյարսկ, Իրկուտսկ, Դոնեցկ, Գորկի քաղաքների մի շարք բուհերի և գիտական օջախների ավելի քան 60 գիտնականներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 6 մարտի 1982)

25-26 մարտի – ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության և համալսարանի հոգեբանության ամբիոնի նախաձեռնությամբ անցկացվում է հոգեբանության պատմության արդիական խնդիրներին նվիրված համամիութենական անդրանիկ կոնֆերանսը, որին մասնակցում էին Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի, Սինսկի, Թբիլիսիի, Տարտուի, Գորկու և այլ քաղաքների բուհերի ու գիտահետազոտական հաստատությունների հոգեբանության նշանավոր պատմաբաններ, փիլիսոփաներ, սոցիոլոգներ, մանկավարժներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 ապրիլի 1982)

26 մարտի – ԽՍՀՄ-ում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան Արթուր Հարտմանն այցելում է համալսարան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 27 մարտի 1982)

ապրիլ – Բանասիրական ֆակուլտետի մասնաշենքում տեղի է ունենում միտինգ՝ նվիրված Լատինական Ամերիկայի պայքարող ժողովուրդների համերաշխությանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 մայիսի 1982)

20 ապրիլի – Տեղի է ունեցնում Երիտասարդության համերաշխության օրվան նվիրված միտինգ, որին մասնակցում էին նաև համալսարանում սովորող արտասահմանցի և սփյուռքահայ ուսանողներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 24 ապրիլի 1982)

21 ապրիլի – Ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետի հյուրն էր բուլղար բանաստեղծ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Կայսին Կուլինը: Հանդիպմանը ներկա էին նաև բանաստեղծ-

ներ Հ. Սահյանը և Ս. Կապուտիկյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 մայիսի 1982)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1398 շրջանավարտ (որից 133-ը՝ երեկոյան, 113-ը՝ հեռակա բաժիններից)՝ 129 ֆիզիկոս, 55 ռադիոֆիզիկոս, 179 կիրառական մաթեմատիկոս, 52 երկրաբան, 39 աշխարհագրագետ, 51 պատմաբան, 64 քիմիկոս, 75 կենսաբան, 50 իրավաբան, 85 բանասեր, 27 արևելագետ, 73 ռուսագետ, 25 փիլիսոփա, 27 կենսաֆիզիկոս, 26 կենսաքիմիկոս, 118 մաթեմատիկոս, 25 մեխանիկոս, ռումանագերմանական լեզուների և գրականությունների 52 մասնագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 15, թ. 10)

հունիս – Համալսարանից «ՍՄԿԿ-ում գտնվելու 50 տարի» կրծքանշանի արժանացան կուսակցության և աշխատանքի ութ վետերաններ.

Հուսիկ Խոսրովի Նաջարյան (Պատմության ֆակուլտետ),
Սերոբ Պողոսի Պողոսյան (Պատմության ֆակուլտետ),
Ալմաստ Զերոբի Մինասյան (Կենսաբանական ֆակուլտետ),

Մովսես Սկրտչի Մարգարյան (դիալեկտիկական մատերիալիզմի ամբիոն),

Թումիկ Ստեփանի Բատիկյան (քաղաքացիական պաշտպանության ամբիոն),

Լևոն Ղարիբի Մխիթարյան (վարչատնտեսական մաս)

Գարեգին Նիկողայի Դանիելյան (վարչատնտեսական մաս),

Խաչիկ Իսահակի Պետրոսյան (համալսարանի տպարան):

(Տե՛ս «Երևանի համալսարան», 12 հունիսի 1982)

հոկտեմբեր – Եմայի (ԳԴՀ) համալսարանի պրոֆեսոր Լյուդվիգ Հելմը «Հակակոմունիզմը ժամանակակից բուրժուական փիլիսոփայության և գաղափարախոսության մեջ», «Բուրժուական գաղափարախոսության քննադատությունը» թեմաներով դա-

սախտություններ է կարդում Իրավաբանական, Պատմության, Բանասիրական և Ռադիոֆիզիկայի ֆակուլտետների ուսանողների և պրոֆեսորդասախոսական կազմի համար:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 23 հոկտեմբերի 1982)

30 նոյեմբերի - 3 դեկտեմբերի – Համալսարանում անցկացվում է «Մեծ Հոկտեմբերը, սոցիալիզմը և ազգային հարցի լուծումը» թեմայով միջազգային գիտական կոնֆերանս՝ նվիրված ԽՍՀՄ կազմավորման 60-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 11 դեկտեմբերի 1982)

դեկտեմբեր – Համալսարանում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված ակադեմիկոս Արսեն Տերտեքյանի ծննդյան 100-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 8 հունվարի 1983)

28 դեկտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր ժողով՝ նվիրված ՀԿԿ Կենտկոմի, ՀԽՍՀ Նախարարների խորհրդի, ՀԱՄԽ և ՀԼԿԵՄ Կենտկոմի կողմից համալսարանին փոխանցիկ կարմիր դրոշի հանձնմանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 8 հունվարի 1983)

1983

23 փետրվարի – Բանասիրական ֆակուլտետի մասնաշենքում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված խորհրդային բանակի և ռազմածովային նավատորմի կազմավորման 65-րդ տարեդարձին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 26 փետրվարի 1983)

15 մարտի – Լեզվաբանության զարգացման, գիտական կադրերի պատրաստման գործում վաստակի համար և ծննդյան 70-ամյակի առթիվ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Էդուարդ Բագրատի Աղայանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության կողմից պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 23 ապրիլի 1983)

21-22 մարտի – Փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետում տեղի է ունենում ՌԻԳ-Ը նստաշրջան՝ նվիրված Կ. Մարքսի ծննդյան 165 և մահվան 100-ամյա տարելիցներին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 2 ապրիլի 1983)

14 ապրիլի – Խորհրդային գրականության զարգացման, որակյալ կադրերի պատրաստման գործում վաստակի համար և ծննդյան 80-ամյակի առթիվ Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր, գրականագետ Հարություն Գաբրիելի Մկրտչյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության կողմից պարգևատրվում է Ժողովուրդների բարեկամության շքանշանով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 ապրիլի 1983)

19 ապրիլի – Հայկական ԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության N 169 հրամանով հաստատվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր Երևանի պետական համալսարանի կանոնադրությունը:

(Տե՛ս «Կանոնադրություն Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր Երևանի պետական համալսարանի», Երևան 1984, էջ 3)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1325 շրջանավարտ (որից 127-ը՝ երեկոյան, 105-ը՝ հեռակա բաժիններից)՝ 131 ֆիզիկոս, 67 ռադիոֆիզիկոս, 127 կիրառական մաթեմատիկոս, 51 երկրաբան, 49 աշխարհագրագետ, 50 պատմաբան, 53 քիմիկոս, 61 կենսաբան, 33 իրավաբան, 91 բանասեր, 17 արևելագետ, 67 ռուսագետ, 30 փիլիսոփա, 18 կենսաֆիզիկոս, 22 կենսաքիմիկոս, 114 մաթեմատիկոս, 19 մեխանիկոս, ռումանագերմանական լեզուների և գրականությունների 48 մասնագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 15, ք. 10)

23 սեպտեմբերի – Գրականության զարգացման բնագավառում վաստակի համար և ծննդյան 60-ամյակի առթիվ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Էդվարդ Մկրտչի Ջրբաշյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության կողմից պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 29 հոկտեմբերի 1983)

հոկտեմբեր – Համալսարանի հյուրն էր Խորհրդային ռազմածովային ուժերի հայազգի նշանավոր ծովակալ Վլադիմիր Սեմյոնի Փիրումովը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 29 հոկտեմբերի 1983)

նոյեմբեր – Համալսարան է այցելում Տանգանիայի երիտասարդության միության գլխավոր քարտուղար, Տանգանիայի հեղափոխական կուսակցության ազգային գործկոմի անդամ Մոհամեդ Սեյֆ Խատիբը երիտասարդության միության բաժնի վարիչնե-

րի հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 19 նոյեմբերի 1983)

14 նոյեմբերի – Բանասիրական ֆակուլտետի հյուրն էր սփյուռքահայ անվանի բանաստեղծ Վահե Վահյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 26 նոյեմբերի 1983)

դեկտեմբեր – ՀԽՍՀ պետական մրցանակի է արժանանում համալսարանի ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լևոն Մկրտչի Մկրտչյանը՝ հայ դասական քնարերգության ուսումնասիրման և պրոպագանդման բնագավառում կատարած աշխատանքների համար:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 2 հունվարի 1984)

1984

Սկսվում է համալսարանի գրադարանային նոր շենքի կառուցումը (ճարտարապետ Լ. Բալայան, քանդակագործ Վ. Ղազարյան):

(Տե՛ս Ասլանյան Վ., Հայրապետյան Հ. Երևանի պետական համալսարանի: Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանը, Երևան, 2001, էջ 58)

Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Սերգեյ Ալեքսանդրի Համբարձումյանին շնորհվում է Բրատիսլավայի (ՉԽՍՀ) Յան Կոմենսկու անվան համալսարանի պատվավոր դոկտորի կոչում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 29 սեպտեմբերի 1984)

23 հունվարի – Մեծ դահլիճում տեղի է ունենում պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության նախընտրական ժողով, որտեղ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ազգությունների խորհրդի ընտրությունների Երևանի Մյասնիկյանի N 392 ընտրատարածքի համար պատգամավորության թեկնածու է առաջադրվում համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 հունվարի 1984)

20-29 փետրվարի – Համալսարանում անցկացվեց Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների ֆակուլտետների ղեկանների որակավորման բարձրացման սեմինար-խորհրդակցություն: Այն կազմակերպել էին ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարությունը և հանրապետության բուհերի ռեկտորների խորհուրդը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 17 մարտի 1984)

12 մարտի – Մեծ դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր ժողով, որտեղ ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Կ. Դավաթյանը ՀԿԿ Կենտկոմի, ՀԽՍՀ Նախարարների խորհրդի, ՀԱՄԽ-ի և ՀԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ դրոշը հանձնում է համալսարանին (յոթերորդ անգամ անընդմեջ):

(Տե՛ս «Երևանի համալսարան», 24 մարտի 1984)

15 մարտի – Մեծ դահլիճում տեղի է ունենում պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության և աշխատակիցների հանդիսավոր ժողովը՝ նվիրված բուհերի միջև ծավալված համամիութենական սոցմրցությունում հաղթողի փոխանցիկ կարմիր դրոշի և առաջին կարգի դիպլոմի հանձնմանը: Այն համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ս. Համբարձումյանին է հանձնում ԽՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարի առաջին տեղակալ Ն.Կրասնովը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մարտի 1984)

մայիս – Լրանում է «Երևանի համալսարան» շաբաթաթերթի լույսընծայման 60 տարին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 5 մայիսի 1984)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1337 շրջանավարտ (որից 102-ը՝ երեկոյան, 112-ը՝ հեռակա բաժիններից)՝ 133 ֆիզիկոս, 65 ռադիոֆիզիկոս, 175 կիրառական մաթեմատիկոս, 54 երկրաբան, 49 աշխարհագրագետ, 50 պատմաբան, 48 քիմիկոս, 60 կենսաբան, 45 իրավաբան, 89 բանասեր, 23 արևելագետ, 63 ռուսագետ, 25 փիլիսոփա, 19 կենսաֆիզիկոս, 23 կենսաքիմիկոս, 132 մաթեմատիկոս, 21 մեխանիկոս, ռումանագերմանական լեզուների և գրականությունների 49 մասնագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 15, ք. 10)

1 սեպտեմբերի – Համալսարանի կենտրոնական մասնաշենքի առջև տեղի է ունենում Գիտելիքների օրվան նվիրված անդրանիկ

միտինգը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 5 սեպտեմբերի 1984)

հոկտեմբեր – Գումարվում է ՀԽՍՀ ԳԱ Մաշտոցի անվան Մատենադարանի և Երևանի պետական համալսարանի միացյալ գիտական նստաշրջան՝ նվիրված Գլաճորի համալսարանի 700-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 27 հոկտեմբերի 1984)

1985

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանին շնորհվում է ԵՊՀ «Գիտական ուսումնասիրության բնագավառում ձեռք բերած նվաճումների համար» մեդալ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2005-2006 ուստարվա գործունեություն, Երևան, 2006, էջ 20)

7-9 հունվարի – ՀԼԿԵՄ Կենտկոմը, ՀԽՍՀ լուսավորության նախարարությունը, Հայկական աշխարհագրական ընկերությունը, «Գիտելիք» ընկերության հանրապետական վարչությունը և ԵՊՀ աշխարհագրական ֆակուլտետի դեկանատը անցկացնում են պատանի աշխարհագրագետների հանրապետական կոնֆերանս՝ նվիրված ֆաշիստական Գերմանիայի նկատմամբ խորհրդային ժողովրդի տարած հաղթանակի 40-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 19 հունվարի 1985)

10 փետրվարի – Քաղաքացիական կռիվների հերոս Գայի (Հայկ Բժշկյանց) հետքերով արշավ կազմակերպելու և այն հաջող իրականացնելու համար ԵՊՀ ԼԿԵՄ կոմիտեն և Գայի անվան ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբը Խորհրդային Միության պատերազմի վետերանների խորհրդի կողմից պարգևատրվում են առաջին կարգի դիպլոմով և մեդալով: Նույն արշավի կազմակերպման համար ԵՊՀ-ն արժանանում է նաև ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի մեդալին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 6 ապրիլի 1985)

25 մարտի – Համալսարանում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Աշխարհագրական ֆակուլտետի ստեղծման

50-ամյա հոբելյանին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 մարտի 1985)

29 ապրիլի – Մեծ դահլիճում գումարվում է ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի հոբելյանական գիտական նստաշրջանը՝ նվիրված խորհրդային ժողովրդի և նրա զինված ուժերի տարած պատմական հաղթանակի 40-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 9 մայիսի 1985)

մայիս – Պատմության ֆակուլտետի հյուրն էր Հայրենական մեծ պատերազմի հայ քաջորդիներից պահեստի գեներալ-մայոր Աշոտ Ամատունին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 25 մայիսի 1985)

5 մայիսի – Հայրենական մեծ պատերազմում ֆաշիզմի դեմ խորհրդային ժողովրդի տարած հաղթանակի 40-ամյակին էր նվիրված համալսարանում տեղի ունեցած հանդիսավոր ժողովը: Այդ առթիվ համալսարանի ռեկտոր Ս. Համբարձումյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի սահմանած հոբելյանական մեդալներ հանձնեց պատերազմի և աշխատանքի վետերաններին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 18 մայիսի 1985)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1312 շրջանավարտ (որից 100-ը՝ երեկոյան, 88-ը՝ հեռակա բաժիններից)՝ 129 ֆիզիկոս, 65 ռադիոֆիզիկոս, 177 կիրառական մաթեմատիկոս, 49 երկրաբան, 53 աշխարհագրագետ, 48 պատմաբան, 47 քիմիկոս, 55 կենսաբան, 41 իրավաբան, 90 բանասեր, 24 արևելագետ, 23 տնտեսագետ-կիրքնետիկոս, 63 ռուսագետ, 23 փիլիսոփա, 18 կենսաֆիզիկոս, 23 կենսաքիմիկոս, 126 մաթեմատիկոս, 20 մեխանիկոս, 50 ռոմանագերմանական լեզուների և գրականությունների մասնագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 15, ք. 10)

30 օգոստոսի - 6 սեպտեմբերի – Որպես համալսարանի հյուր՝ Երևանում էր գտնվում ԱՄՆ-ի Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի Լինքոլնի լաբորատորիայի լազերային կենտրոնի ղեկավար, պրոֆեսոր Արամ Մուրադյանը: Նա համալսարանում հանդես է գալիս լազերային ֆիզիկայի ժամանակակից խնդիրներին նվիրված դասախոսությունների շարքով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 21 սեպտեմբերի 1985)

սեպտեմբեր – Համալսարանի հայոց լեզվի ամբիոնից կազմավորվեց մի նոր՝ հայոց լեզվի պատմության ամբիոն. նորաստեղծ ամբիոնի վարիչ նշանակվեց Հովհաննես Բարսեղյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 19 հոկտեմբերի 1985)

հոկտեմբեր – Լրացավ համալսարանի «Գիտական տեղեկագիր» հանդեսի 60-ամյակը (1925-1985):

(Տե՛ս «Երևանի համալսարան», 19 հոկտեմբերի 1985)

նոյեմբեր – Համալսարանականների հյուրն էր «Ամերիկյան երիտասարդության ղեկավարների կենտրոն» ասոցիացիայի պատվիրակությունը, որը Հայաստանում էր գտնվում խորհրդա-ամերիկյան երկրորդ սեմինար-խորհրդակցության առթիվ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 26 նոյեմբերի 1985)

11 դեկտեմբերի – Համալսարանի մեծ դահլիճում տեղի է ունենում հոբելյանական երեկո՝ նվիրված Բանասիրական ֆակուլտետի հիմնադրման 50-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 21 դեկտեմբերի 1985)

1986

հունվար – Համալսարանի հյուրն էր անվանի գրող, Սոցիալիստական աշխատանքի հերոս, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Սերո Խանգադյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 18 հունվարի 1986)

հունվար – «Գիտական ուսումնասիրության բնագավառում ձեռք բերած նվաճումների համար» երկրորդ (առաջին մեդալը ստացել է ակադեմիկոս Վ. Համբարձումյանը) մեդալը հանդիսավոր պայմաններում հանձնվում է համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 25 հունվարի 1986,
Երևանի պետական համալսարան. 2005-2006 ուստարվա
գործունեություն, Երևան, 2006, էջ 20)

19 փետրվարի – 1985 թվականին և 11-րդ հնգամյակում ձեռք բերած հաջողությունների, ԽՍՀՄ XXVII և Հայաստանի կոմկուսի XXVIII համագումարները արժանավայել դիմավորելու համար համալսարանը ճանաչվեց հանրապետական սոցիալիստական մրցության հաղթող և արժանացավ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, ՀԽՍՀ Նախարարների խորհրդի, ՀԱՍԽ-ի և ՀԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշի՝ գրանցվելով ԺՏՆՑ պատվո տախտակին, ընդ որում՝ 11-րդ հնգամյակում 5 տարի անընդմեջ հաղթող ճանաչվելու համար այս դրոշը հանձնվեց համալսարանին՝ ընդմիշտ պահպանության:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 մարտի 1986)

մարտ – Համալսարանի գիտական գրադարանը Խորհրդային Միության 839 բուհական գրադարաններից 14-րդ է, որին պետակա-

նորեն իրավունք է տրվել միջազգային գրքափոխանակություն կատարելու:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 22 մարտի 1986)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1358 շրջանավարտ (որից 95-ը՝ երեկոյան, 96-ը՝ հեռակա բաժիններից)՝ 110 ֆիզիկոս, 81 ռադիոֆիզիկոս, 175 կիրառական մաթեմատիկոս, 52 երկրաբան, 53 աշխարհագրագետ, 54 պատմաբան, 51 քիմիկոս, 50 կենսաբան, 50 իրավաբան, 87 բանասեր, 34 արևելագետ, 26 տնտեսա-կիրեռնետիկոս, 80 ռուսագետ, 22 փիլիսոփա, 22 կենսաֆիզիկոս, 26 կենսաքիմիկոս, 125 մաթեմատիկոս, 24 մեխանիկոս, 45 ռոմանագերմանական լեզուների և գրականությունների մասնագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 15, ք. 10)

21 հունիսի – Ուսանող երիտասարդության կոմունիստական դաստիարակության բնագավառում կատարած բազմամյա բեղմնավոր աշխատանքի համար և 1500-րդ հորեյանական համարի լույս ընծայման կապակցությամբ Երևանի Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր պետական համալսարանի ռեկտորատի, կուսկոմիտեի, արհկոմիտեի և ԼԿԵՄ կոմիտեի օրգան «Երևանի համալսարան» բուհական շաբաթաթերթը պարգևատրվում է Հայկական ԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մախարարության և Լուսավորության, բարձրագույն դպրոցի, գիտական հիմնարկների հանրապետական կոմիտեի պատվոգրով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 21 հունիսի 1986)

7-25 հուլիսի – Երևանի պետական համալսարանի ռեկտոր
ընկ. Ս. Ա. Համբարձումյանին.

«Աշխատանքային քննաշրջանը Երևանի պետական համալսարանի պատվիրակությունը՝ թվով 14 հոգի, անցկացրեց Բրատիսլավայի (ՉԽՍՀ) N 4 գործարանում: Խումբը, որ ղեկավարում էր Արմեն Աղամյանը, լավ աշխատեց և բարի անուն

վաստակեց մեր քաղաքացիների շրջանում:

Շնորհակալություն ենք հայտնում այս երիտասարդների մեջ աշխատասիրություն ու կարգապահություն դաստիարակելու համար, ցանկանում ենք Ձեզ մեծ հաջողություններ հետագա գործունեության ընթացքում:

N 4 գործարանի ղիբեկտոր Յուլիոս Պողոտնի»:

(«Երևանի համալսարան», 17 հոկտեմբերի 1986)

նոյեմբեր – ԽՍՀՄ Կենտկոմը և ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը, քննության առնելով ԽՍՀՄ Նախարարների խորհրդին առընթեր գիտության և տեխնիկայի գծով Լենինյան և ԽՍՀՄ պետական մրցանակների կոմիտեի ներկայացրած առաջարկությունները, որոշում են ընդունել 1986 թ. ԽՍՀՄ պետական մրցանակներ շնորհելու խորհրդային մի խումբ գիտնականների: Նրանց թվում էր համալսարանի մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետի դեկան, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Ռաֆայել Արամի Ալեքսանդրյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 29 նոյեմբերի 1986)

30 դեկտեմբերի – ՀԽՍՀ ԳԱ-ում տեղի ունեցած ընդհանուր ժողովում ԳԱ ակադեմիկոս է ընտրվում Ռաֆայել Արամի Ալեքսանդրյանը (մաթեմատիկայի գծով):

Թղթակից անդամներ են դառնում՝

1. Վլադիմիր Սարգսի Սարգսյանը (մեխանիկայի գծով),
2. Սիսաք Արշամի Դավթյանը (կենսաքիմիայի գծով),
3. Լիա Լևոնի Օսիպյանը (բուսաբանության և բույսերի ֆիզիոլոգիայի գծով),
4. Հրանտ Սմբատի Թամրազյանը (գրականության գծով),
5. Էդուարդ Ռաֆայելի Աթայանը (լեզվաբանության գծով):

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 հունվարի 1987)

1987

հունվար – ԵՊՀ-ում հյուրընկալվում է Հալեպի համալսարանի պրոֆեսոր, դոկտոր Ա. Իբրիկը: Այցը նշանավորվեց երկու համալսարանների միջև համագործակցության պայմանագրի ստորագրմամբ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 հունվարի 1987)

հունվար – ԵՊՀ-ում հյուրախաղերով հանդես է գալիս Ռիգայի պետական համալսարանի «Յուվենտուս» քառաձայն երգչախումբը (Լատվիական ԽՍՀ վաստակավոր կոլեկտիվ):

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 հունվարի 1987)

11 ապրիլի – Երևանի և Լյուբլինի Մարի-Կյուրի Սկլոդովսկայայի անվան (Լեհաստան) համալսարանների միջև տասնամյա ժամկետով գիտական համագործակցության նոր պայմանագիր է կնքվում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 25 ապրիլի 1987)

մայիս – Լրանում է համալսարանի «Կոմիտաս» քառաձայն ինքնագործ երգչախմբի 50-ամյա հոբելյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 16 մայիսի 1987)

մայիս – Բանասիրական ֆակուլտետում տեղի է ունենում հանդիպում հանրապետության վաստակավոր նկարիչ, Հայաստանի լեռնիյան կոմերիտիության մրցանակի դափնեկիր, քանդակագործ Լևոն Թոքմաջյանի հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 մայիսի 1987)

մայիս – Երևանի և Մոնպելիեի (Ֆրանսիա) Պոլ Վալերիի անվան համալսարանների միջև դեռ 1986 թ. կնքված գիտամշակութային համագործակցության պայմանագրի համաձայն՝ հոգեբանության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Հ. Թութունջյանը և Ռուսաց լեզվի ու գրականության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Լ. Մկրտչյանը դասախոսություններ կարդալու և գիտահետազոտական աշխատանքներ կատարելու նպատակով մեկամսյա ժամկետով գործուղվում են Մոնպելիեի համալսարան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 մայիսի 1987)

15 մայիսի – Տեղի է ունենում համալսարանի և ՀԽՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի համատեղ կազմակերպած գիտական նստաշրջանը՝ նվիրված հայ ականավոր լեզվաբան, համալսարանի երախտավոր դասախոս, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, պրոֆեսոր Գրիգոր Այվազի Ղափանցյանի ծննդյան 100-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 մայիսի 1987)

29 մայիսի – Հայաստանում Մեծ հոկտեմբերի 70-ամյակի առթիվ անցկացվող ՌՍՖՍՀ գրականության և արվեստի օրերի շրջանակներում այդ միջոցառման մի խումբ մասնակիցներ այցելում են համալսարան, հանդիպում պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 13 հունիսի 1987)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1057 շրջանավարտ (որից 87-ը՝ երեկոյան, 88-ը՝ հեռակա բաժիններից)՝ 73 ֆիզիկոս, 52 ռադիոֆիզիկոս, 119 կիրառական մաթեմատիկոս, 24 երկրաբան, 35 աշխարհագրագետ, 39 պատմաբան, 47 քիմիկոս, 50 կենսաբան, 35 իրավաբան, 80 բանասեր, 16 արևելագետ, 17 տնտեսագետ-կիրեռնետիկոս, 73 ռուսագետ, 22 փիլիսոփա, 22 կենսաֆիզիկոս, 25 կենսաքիմիկոս, 93 մաթեմատիկոս, 16 մեխանիկոս, ռոմանագերմանական լեզուների և գրականությունների 44 մասնագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 15, ք. 10)

10 հունիսի – ԵՊՀ-ի և Հալեպի համալսարանի միջև կնքվում է գիտական և մշակութային համագործակցության պայմանագիր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 25 մարտի 1989)

հոկտեմբեր – Համալսարան են այցելում Արգենտինայի տարբեր քաղաքների համալսարանների մի խումբ ռեկտորներ ու դասախոսներ: Այցելության նպատակն էր ծանոթանալ ԵՊՀ պատմությանը, գիտահետազոտական աշխատանքներին՝ հետագայում համագործակցության և բարեկամության պայմանագրեր կնքելու համար:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 հոկտեմբերի 1987)

հոկտեմբեր – Համալսարանի գիտական գրադարանի հյուրն էր գրող Վահագն Դավթյանը իր 65-ամյակի առթիվ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 24 հոկտեմբերի 1987)

19 հոկտեմբերի – Մեծ դահլիճում տեղի է ունենում մաթեմատիկայի «Ուսանողը և գիտատեխնիկական առաջադիմությունը» համաժողովներից II օլիմպիադիայի հանդիսավոր բացումը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 24 հոկտեմբերի 1987)

4 նոյեմբերի – Մեծ դահլիճում տեղի է ունենում Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 70-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 7 նոյեմբերի 1987)

23-26 նոյեմբերի – Համալսարանում գումարվում է անդրկովկասյան համալսարանների հասարակագետների գիտական նստաշրջան՝ նվիրված Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 70-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 28 նոյեմբերի 1987)

26 նոյեմբերի – Համալսարանում տեղի է ունենում միտինգ՝ նվիր-

ված 1987 թ. դեկտեմբերի 7-ին Վաշինգտոնում կայանալիք
խորհրդա-ամերիկյան բանակցություններին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 28 նոյեմբերի 1987)

26-29 նոյեմբերի – Համալսարանում անցկացվում է համալսարանական
ուսանողների համամիութենական առաջին «Ունիֆորմ-87» փա-
ռատոնը՝ նվիրված ԽՍՀՄ կազմավորման 65-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 12 դեկտեմբերի 1987)

1988

Համալսարանի գիտական գրադարանի հատուկ ֆոնդը լուծարվում է. նախկինում գրաքննությամբ արգելված գրականությունը մատչելի է դառնում բոլոր ընթերցողներին:

(Տե՛ս Ասլանյան Վ., Հայրապետյան Հ., Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանը, Երևան, 2001, էջ 58)

Մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետի մեխանիկայի բաժնի հիման վրա համալսարանում ստեղծվում է մեխանիկայի առանձին ֆակուլտետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 փետրվարի 1988)

հունվար – Ըստ դասախոսների և ուսանողների փոխանակման մասին ԵՊՀ-ի և Լյուբլինի (Լեհաստան) Մարի Կյուրի-Սկլոդովսկայայի անվան համալսարանի միջև կնքված պայմանագրի՝ հաջողությամբ ավարտվում է այդ համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետի ուսանողների ու դասախոսների արտադրաճանաչողական պրակտիկան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 16 հունվարի 1988)

փետրվար – Քիմիական ֆակուլտետում նշվում է օրգանական քիմիայի ու ֆիզիկական կոլոիդային քիմիայի ամբիոնների հիմնադրման 60-ամյակը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 13 փետրվարի 1988)

24 փետրվարի – Տեղի է ունենում համալսարանի աշխատակիցների ընդհանուր ժողովը, որը նվիրված էր Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում և նրա շուրջը տեղի ունեցող իրադարձու-

թյուններին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 12 մարտի 1988)

27 փետրվարի – Մեծ դահլիճում տեղի է ունենում համալսարանի աշխատակազմի միտինգը՝ քննարկելու ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի դիմումը՝ ուղղված Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորներին ու ժողովուրդներին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 5 մարտի 1988)

16 մարտի – Բանասիրական ֆակուլտետում նշվում է Անտոն Մակարենկոյի ծննդյան 100-ամյա հոբելյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 26 մարտի 1988)

ապրիլ – Նիստերի դահլիճում տեղի է ունենում Արևմտյան Բեռլինի Հումբոլդտների անվան համալսարանից ժամանած պատվիրակության հանդիպումը Իրավաբանական ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 9 ապրիլի 1988)

1 ապրիլի – Տեղի է ունենում Երևանի պետական համալսարանի կուսակցական կոմիտեի նիստ, որտեղ օրակարգային հարցերում քննարկվում է նաև ԼՂԻՄ-ի շուրջ ստեղծված վիճակը: Քննարկումներից և ելույթներից հետո կուսակցական կոմիտեն հաստատեց «Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջ ստեղծված իրադարձությունների հետ կապված համալսարանում իրավիճակի կայունացման միջոցառումների պլանը»:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 166, ց. 1, գ. 1147, ք. 55, 62-63)

23 ապրիլի – Բանասիրական ֆակուլտետը կազմակերպում է հուշ-ցերեկույթ՝ նվիրված Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 23 ապրիլի 1988)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1002 շրջանա-

վարտ (որից 71-ը՝ երեկոյան, 83-ը՝ հեռակա բաժիններից)՝ 66 ֆիզիկոս, 29 ռադիոֆիզիկոս, 144 կիրառական մաթեմատիկոս, 27 երկրաբան, 41 աշխարհագրագետ, 37 պատմաբան, 48 քիմիկոս, 53 կենսաբան, 34 իրավաբան, 80 բանասեր, 16 արևելագետ, 10 տնտեսագետ-կիրառական, 62 ռուսագետ, 16 փիլիսոփա, 21 կենսաֆիզիկոս, 23 կենսաքիմիկոս, 88 մաթեմատիկոս, 6 մեխանիկոս, 47 ռոմանագերմանական լեզուների և գրականությունների մասնագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 15, ք. 10)

8 հունիսի – Տեղի է ունենում Երևանի պետական համալսարանի կուսակցական կոմիտեի նիստը, որտեղ քննարկվում է մաս ՀԽՍՀ-ում ստեղծված վիճակը: Քննարկումներից հետո կուսակցական կոմիտեի նիստում հաստատվեց «Ստեղծված արտակարգ իրավիճակում համալսարանի ուսանողների շրջանում տարվող աշխատանքների միջոցառումների պլանը»:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 166, ց. 1, գ. 1147., ք. 88, 104-105)

սեպտեմբեր – Կենսաբանական ֆակուլտետ է այցելում ամերիկահայ գիտնական Ռայմոնդ Դամադյանը, որը Հայաստանում էր գտնվում ՀԽՍՀ ԳԱ հրավերով: Նա մանրամասն տեղեկություններ է հաղորդում «Ֆոնար» ընկերության թողարկած իր հեղինակած «Ֆոնար-Քյու Ի Դի 80» բժշկական սարքի վերաբերյալ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 24 սեպտեմբերի 1988)

սեպտեմբեր – Բոլոնիայի համալսարանի ռեկտոր Ֆաբիո Ռովերսի Մոնակոյի պաշտոնական հրավերով Իտալիա է մեկնում ԵՊՀ պատվիրակությունը՝ ռեկտոր Սերգեյ Համբարձումյանի գլխավորությամբ: Երկու համալսարանների միջև ստորագրվում է գիտամշակութային համագործակցության պայմանագիր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 հոկտեմբերի 1988)

5 սեպտեմբերի – Տեղի է ունենում Երևանի պետական համալսարանի կուսկոմիտեի և ռեկտորատի համատեղ նիստը: Նիստում քննարկվեց նոր ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքների հարցը: Որոշվեց հանձնարարել ֆակուլտետների ղեկավարներին և կուսակցական քարտուղարներին ուսումնական տարին սկսել կամակերպված, բարձրացնել ուսումնական կարգապահությունը, ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ ուսումնական պրոցեսը նորմալ հունի մեջ դնելու համար: Բացառել դասադուլները, բացատրական լայն աշխատանք տանել դասադուլների կազմակերպման դեմ:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 166, ց. 1, գ. 1147, ք. 124-125)

հոկտեմբեր – Սլովակիայի Ստարա Տուրա քաղաքում տեղի է ունենում ԽՍՀՄ, ՉԽՍՀ, ԳԴՀ գիտնականների խորհրդակցություն, որտեղ Երևանի պետական համալսարանի մեխանիկայի ֆակուլտետի ղեկան Վ. Սարգսյանը արժանանում է Բրատիսլավայի համալսարանի մեծ հուշամեդալին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 5 նոյեմբերի 1988)

18 նոյեմբերի – Տեղի է ունենում Երևանի պետական համալսարանի ուսանողության, պրոֆեսորադասախոսական կազմի և աշխատողների բազմահազարանոց բողոքի միտինգ՝ նվիրված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի իրադարձություններին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 19 նոյեմբերի 1988)

1989

հունվար – Քիմիական ֆակուլտետում հիմնվում է կատալիզի ամբիոն, որի գիտական ուղղության հիմնական խնդիրներից մեկը բարձր արդյունավետության և ընտրողականության կատալիզատորների ստեղծումն ու նպատակաուղղված կատալիտիկ գործընթացների իրականացումն է: Ամբիոնի վարիչ նշանակվեց քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆ. Ա. Մուշեղյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 7 հունվարի 1989)

հունվար – Ուսումնական գործընթացին զուգահեռ՝ համալսարանականները շարունակում են մասնակցել Սպիտակի 1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժի հետևանքների վերացման աշխատանքներին: Բոլոր ֆակուլտետների ուսանողներից և դասախոսներից կազմված ջոկատները երկու օրը մեկ անգամ երկու հերթավոխով (ցերեկը՝ 100, գիշերը՝ 50 հոգի) հերթապահում են «Չվարթնոց» օդանավակայանում, հսկում ստացվող բեռները՝ հասցեավայրեր հասցնելու համար: Արտասահմանյան քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետի ուսանողները ստանձնում են իրենց հարևանությամբ գտնվող հյուրանոցի երեխաների խնամքը: Ուսանողներն անում էին ամեն ինչ՝ ցրելու աղետը վերապրած երեխաների սարսափի զգացումը: Սփյուռքահայ ուսանողների հետ երկրաշարժի առաջին օրվանից տարբեր աշխատանքներ ու հանձնարարություններ են կատարում նաև հնդիկ, լատսի, արաբ, նեպալցի ուսանողները: Նրանք աշխատում են աղետի վայրերում, օդանավակայանում, երրորդ մանկական կլինիկական հիվանդանոցում, արտասահմանյան մասնագետների խմբերում՝ կատարելով թարգմանչի դեր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 7 հունվարի 1989)

13 հունվարի – Տեղի է ունենում համալսարանի ներկայացուցիչների ժողովը, որտեղ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորության թեկնածու է առաջադրվում համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 21 հունվարի 1989)

փետրվար – Տեղի է ունենում համալսարանի արհկոմիտեի նիստ, որտեղ քննարկվում են ուսանողության բուժսպասարկման, երկրաշարժից տուժած բնակավայրերից համալսարանում սովորող ուսանողների հետ տարվող աշխատանքների և հետագա միջոցառումների, համալսարանի աշխատակիցների 1989 թ. սոցպարտավորությունների ստուգման ու սոցմրցության պլանավորման և այլ հարցեր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 25 փետրվարի 1989)

փետրվար – Բանասիրական ֆակուլտետի Վ. Սարոյանի անվան արտասահմանյան գրականության նորաստեղծ կաբինետում բացվում է ցուցահանդես՝ նվիրված ֆրանսիական հեղափոխության 200-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 25 փետրվարի 1989)

10 փետրվարի - 6 մարտի – ԵՊՀ-ի և Հալեպի համալսարանի միջև կնքված գիտական և մշակութային համագործակցության պայմանագրի համաձայն՝ Սիրիայի Արաբական Հանրապետություն են մեկնում Մեխանիկայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Վ. Սարգսյանը, Ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Լ. Սկրտչյանը, Պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ստ. Եսայանը: Նրանց դասախոսությունները մեծ հետաքրքրություն են առաջացնում Հալեպի համալսարանի տարբեր ֆակուլտետների ուսանողների, դասախոսների և ասպիրանտների շրջանում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 25 մարտի 1989)

18 փետրվարի – Տեղի է ունենում Երևանի պետական համալսարանի կուսակցական կոմիտեի ընդլայնված նիստը, որին մասնակցում էին կուսկոմիտեի անդամները, պրոռեկտորները, ֆակուլտետային սկզբնական կուսակցական կազմակերպությունների բյուրոների քարտուղարները, դեկանները, արհկոմիտեի նախագահի տեղակալները, ֆակուլտետային արհբյուրոների նախագահները, ԼԿԵՄ կոմիտեի քարտուղարի տեղակալները և սկզբնական կոմերիտական կազմակերպությունների բյուրոների քարտուղարները, ուսանողության ներկայացուցիչները, ՀԿԿ Երևանի քաղկոմի երկրորդ քարտուղար Վ. Բ. Աղայանը, ՀԿԿ Մյասնիկյանի շրջկոմի առաջին քարտուղար Մ. Հ. Ջաքարյանը, ՀՍՍՀ ժողովրդական կրթության նախարարի տեղակալ Լ. Պ. Ղարիբջանյանը:

Նիստում քննարկվեց Ղարաբաղյան շարժման և Սումգայիթի ոճրագործությունների տարելիցի կապակցությամբ համալսարանի կուսակցական կազմակերպության կողմից կազմակերպվող միջոցառումների հարցը, և ընդունվեցին համապատասխան որոշումներ:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 166, ց. 1, գ. 1148, ք. 16-24)

10-20 մարտի – Տեղի է ունենում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների՝ 1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժի պատճառով հետաձգված տարեկան գիտական նստաշրջանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 ապրիլի 1989)

29 մարտի – Տեղի ունեցավ Երևանի պետական համալսարանի ընդլայնված նիստը, որին ներկա էին կուսկոմիտեի անդամները, համալսարանի պրոռեկտորները, ֆակուլտետի դեկանները և կուրս. բյուրոների քարտուղարները: Նիստը վարում էր կուսկոմիտեի քարտուղար՝ Յու. Ի. Սկրտումյանը: Նիստում քննարկվեց համալսարանում դասադուրը կանխելու միջոցառումների մասին հարցը, և համապատասխան որոշումներ ընդունվեցին:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 166, ց. 1, գ. 1148., ք. 48-49)

մայիս – Համալսարանի հոգեբանության ամբիոնի հիմնադիր և առաջին վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովսեփ Թութունջյանը ընտրվում է ԽՍՀՄ հոգեբանների ընկերության պատվավոր անդամ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 մայիսի 1989)

10-12 մայիսի – Տեղի է ունենում սփյուռքահայ գրականության հարցերին նվիրված երկրորդ հանրապետական գիտաժողովը (առաջինը տեղի է ունեցել 1985 թ.): Այն կազմակերպել էր ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը և Հայ բանասիրության ֆակուլտետը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 մայիսի 1989)

12 մայիսի – Համալսարանի մեծ դահլիճում տեղի է ունենում «Վերածնունդ» ժողովրդական խորհրդի հիմնադիր համաժողովը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 27 մայիսի 1989)

15 մայիսի – Իր աշխատանքներն է սկսում համալսարանի գիտական մատաչրջանը՝ նվիրված Երևանի պետական համալսարանի հիմնադրման 70-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 հունիսի 1989)

18 մայիսի – Տեղի է ունենում ԵՊՀ սկզբնական կուսակցական կազմակերպության ընդհանուր ժողովը, որտեղ քննարկվում է «Երևանի պետական համալսարանում, հանրապետությունում և Արցախում տիրող իրավիճակը և համալսարանի կուսակցական կազմակերպության խնդիրը» հարցը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 3 հունիսի 1989)

28 մայիսի – Համալսարանի կենտրոնական մասնաշենքի բակում առաջին անգամ տեղի է ունենում բազմամարդ միտինգ՝ նվիրված 1918 թ. հայոց պետականության վերականգնման 71-րդ տարելդարծին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 17 հունիսի 1989)

31 մայիսի – Տեղի է ունենում Երևանի պետական համալսարանի կուսակցական կոմիտեի նիստը, որտեղ քննարկվեց «Ղարաբաղ» կոմիտեի անդամների նկատմամբ խափանման ձևը փոխելու համար ՀԽՍՀ դատախազություն միջնորդագիր ներկայացնելու մասին հարցը: Որոշվեց, որ համալսարանի կուսկոմիտեն միջնորդի ՀԽՍՀ դատախազությանը՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամների նկատմամբ խափանման ձևը փոխելու և մինչև դատը նրանց անհապաղ ազատ արձակելու համար, քանի որ հանրապետությունում ստեղծված պայթյունավտանգ կացությունը հղի էր անկանխատեսելի հետևանքներով:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 166, ց. 1, գ. 1148, ք. 76-77)

հունիս – ԵՊՀ-ում գործում էր 17 ֆակուլտետ, որոնց ցերեկային, երեկոյան և հեռակա բաժիններում սովորում էր 8500 ուսանող: Ուսումնական գործընթացը ղեկավարում էր շուրջ 100 ամբիոն, որոնցում աշխատում էր մոտ 1000 դասախոս, այդ թվում՝ ԽՍՀՄ և ՀԽՍՀ գիտությունների ակադեմիաների 30 ակադեմիկոսներ և թղթակից անդամներ, 93 գիտությունների դոկտորներ ու պրոֆեսորներ և 500-ից ավելի թեկնածուներ ու դոցենտներ, 60-ից ավելի գիտության և բարձրագույն դպրոցի վաստակավոր գործիչներ, շուրջ 10 ԽՍՀՄ և ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիրներ: ԵՊՀ-ն դասվում էր ԽՍՀՄ 70 առաջատար բուհերի շարքին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 24 հունիսի 1989)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1388 շրջանավարտ (որից 90-ը՝ երեկոյան, 89-ը՝ հեռակա բաժիններից)՝ 122 ֆիզիկոս, 68 ռադիոֆիզիկոս, 212 կիրառական մաթեմատիկոս, 55 երկրաբան, 54 աշխարհագրագետ, 55 պատմաբան, 51 քիմիկոս, 56 կենսաբան, 51 իրավաբան, 90 բանասեր, 13 արևելագետ, 26 տնտեսագետ-կիրեռնետիկոս, 77 ռուսագետ, 30 փիլիսոփա, 19 կենսաֆիզիկոս, 21 կենսաքիմիկոս, 148 մաթեմատիկոս, 18 մեխանիկոս, 43 ռոմանագերմանական լեզուների և գրականությունների մասնագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 15, ք. 10)

14 հունիսի – ՀԽՍՀ կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Ս. Գ. Հարությունյանը հանդիպում է ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հետ: Հանրապետության ղեկավարը՝ Ս. Հարությունյանը, հանգամանորեն ներկայացում է ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարի աշխատանքները: Բացի այդ՝ նա ուշադրություն է դարձնում հանրապետության բնակչությանը հուզող հարցերին՝ երկրաշարժի հետևանքների վերացմանը, էկոլոգիային, տարածաշրջանի ազգամիջյան հարաբերություններին և ԼՂԻՄ-ի խնդրին: Նույն օրը Ս. Հարությունյանը հանդիպում է համալսարանի կուսկոմիտեի և գիտական խորհրդի անդամների հետ, քննարկվում են հանրապետության բարձրագույն դպրոցի գործունեությանը, բուհական գիտության զարգացմանը, ԵՊՀ անհետաձգելի խնդիրներին, ինչպես նաև ուսանող երիտասարդության հետ տարվող աշխատանքներին առնչվող հարցեր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 հուլիսի 1989)

21 հունիսի – ԵՊՀ է այցելում Մոսկվայի բարձրագույն կոմերիտական դպրոցի չիլիացի ունկնդիրների մի խումբ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 հուլիսի 1989)

1 սեպտեմբերի – Համալսարանի կենտրոնական հրապարակում տեղի է ունենում աշխատակիցների հանդիսավոր հավաք-միտինգ՝ նվիրված Գիտելիքի օրվան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 16 սեպտեմբերի 1989)

14 սեպտեմբերի – Տեղի է ունենում համալսարանի կուսկազմակերպության դռնբաց ժողով, որտեղ քննարկվում են «Կուսակցության ազգային քաղաքականությունը արդի պայմաններում» և «Ռեզիտում իրադրության սրման և ԼՂԻՄ-ի պրոբլեմի լուծման ուղղությամբ ՀԽՍՀ Գերագույն խորհրդին ներկայացվող Երևանի պետական համալսարանի կուսակցական կազմակերպության առաջարկությունների մասին» հարցերը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 սեպտեմբերի 1989)

15 սեպտեմբերի – Համալսարանի հրապարակում տեղի է ունենում ուսանողական հանրահավաք՝ նվիրված Արցախում և հանրապետության սահմանամերձ շրջաններում ստեղծված լարված իրադարձություններին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 7 հոկտեմբերի 1989)

25 սեպտեմբերի - 10 հոկտեմբերի – Մաթեմատիկայի ֆակուլտետի հրավերով համալսարան էր եկել Բոստոնի համալսարանի մաթեմատիկոս, պրոֆ. Արշակ Հաճյանը: Երկու շաբաթվա ընթացքում Մաթեմատիկայի ֆակուլտետի դասախոսների և բարձր կուրսերի ուսանողների առջև նա հանդես է գալիս դասախոսություններով՝ «Էրգոտիկ տեսությունն անվերջ չափով օժտված տարածություններում» թեմայով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 21 հոկտեմբերի 1989)

հոկտեմբեր – Բանասիրական ֆակուլտետի ընթերցասրահում բացվում է մեծ գորավար Անդրանիկին նվիրված ցուցահանդես:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 21 հոկտեմբերի 1989)

հոկտեմբեր – Համալսարանականների հյուրն էր ամերիկահայ երգիչ Գևորգ Մուրադյանը (Քեյվլին Ջորջ):

(Տե՛ս «Երևանի համալսարան», 21 հոկտեմբերի 1989)

նոյեմբեր – Բանասիրական ֆակուլտետի հրավերով համալսարան էին եկել սփյուռքահայ և խորհրդահայ գրողներ Հակոբ Կարապետյանը, Հակոբ Սարգսյանը, բանաստեղծ Վահրամ Հաճյանը և գրականագետ Սոնա Հովհաննիսյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 11 նոյեմբերի 1989)

11 նոյեմբերի – ԽՍՀՄ-ում ԱՄՆ-ի արտակարգ ու լիազոր դեսպան Ջեյ Բ. Մեթրոկը տիկնոջ հետ այցելում է համալսարան և հանդիպում ղեկավարության հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 25 նոյեմբերի 1989)

25 նոյեմբերի – Համալսարանականները իրենց բողոքն են հայտնում նոյեմբերի 19-ին Կենտրոնական հեռուստատեսության «Ժամանակ» ծրագրով, իսկ նոյեմբերի 20-ին «Պրավդա» թերթում հրատարակված ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարի տեղակալ Ա. Ա. Բեսսամերտնիխի հայտարարության առիթով՝ ուղղված ԽՍՀՄ-ում ԱՄՆ-ի արտակարգ ու լիազոր դեսպան Ջ. Մեթրոկին, ԱՄՆ-ի Սենատի արտաքին գործերի հանձնաժողովի՝ Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ ընդունած բանաձևի կապակցությամբ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 25 նոյեմբերի 1989)

25 նոյեմբերի – Ականավոր տնտեսագետ, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Ա. Ադամբեկյանը այցելում է համալսարան, որտեղ հանդիպում է պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ակտիվի հետ: Հանդիպման ընթացքում նա ներկայացնում է աղետի գոտու տնտեսությունը վերականգնելու, հանրապետությունը ազատ տնտեսական գոտի դարձնելու և Հայաստանում մենեջերների դպրոց հիմնադրելու հարցեր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 9 դեկտեմբերի 1989)

29 նոյեմբերի – Տեղի է ունենում համալսարանականների բողոքի միտինգ, որտեղ քննարկվում է «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրադրությունը կարգավորելու միջոցառումների մասին» ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 2 դեկտեմբերի 1989)

25 դեկտեմբերի – Տեղի է ունենում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների ավանդական տարեկան գիտական նստաշրջանը, որը նվիրված էր ԵՊՀ հիմնադրման 70-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 հունվարի 1990)

1990

ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ին շնորհվում է «Գիտական ուսումնասիրության բնագավառում ձեռք բերած նվաճումների համար» ԵՊՀ մեդալ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1996/97
ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1997, էջ 18)

հունվար – Համալսարանի կոլեկտիվը իր բողոքի ձայնն է բարձրացնում Ադրբեջանում ու Արցախի շուրջ, ինչպես նաև Հայաստանի սահմանամերձ շրջաններում ստեղծված չափազանց լարված իրադարձությունների դեմ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 հունվարի 1990)

5 հունվարի – Տեղի ունեցավ Երևանի պետական համալսարանի կուսակցական կազմակերպության նիստը, որտեղ քննարկվեց նաև ԼՂԻՄ-ի կուսակցական կազմակերպությունը ՀԿԿ-ի մեջ ընդգրկելու մասին հարցը:

(Տե՛ս ՀԱԱ, ֆ. 166, ց. 1, գ. 1149, ք.1-2)

16 հունվարի – Համալսարանի մեծ դահլիճում տեղի է ունենում Հայոց համագգային շարժման (ՀՀՇ) Երևանի պետական համալսարանի կազմակերպության հիմնադիր ժողովը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 հունվարի 1990)

28 փետրվարի – Համալսարանամերձ հրապարակում տեղի է ունենում բողոքի միտինգ, որին մասնակցում էին հազարավոր ուսանողներ և դասախոսներ, մայրաքաղաքի հասարակայնության ներկայացուցիչներ: Նախքան միտինգի սկսվելը համալսարանականները մեկ րոպե լռությամբ հարգում են անցած երկու

տարիների ընթացքում Ադրբեջանի հայաբնակ քաղաքներում՝ Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում և այլուր սպանված հայերի հիշատակը: Վերջում բողոքի միտինգի մասնակիցների կողմից ընդունվում է դիմում՝ ուղղված կենտրոնական իշխանության մարմիններին (Մոսկվա), այնուհետև նրանք շարժվում են դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որտեղ կանգնեցնում են Արցախյան շարժման գոհերի հիշատակին նվիրված հուշասյուն:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 մարտի 1990)

մարտ – Գումարվում է ՀԽՍՀ ԳԱ և ԵՊՀ համատեղ գիտական նստաշրջան՝ նվիրված խոշորագույն հայագետ Մանուկ Աբեղյանի ծննդյան 125-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մարտի 1990)

6 մարտի – Մեծ դահլիճում տեղի է ունենում բարեգործական համերգ՝ նվիրված համալսարանական կանանց և աղջիկների գարնանային տոնին: Այն կազմակերպել էր համալսարանի կանանց խորհուրդը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 մարտի 1990)

20 ապրիլի – Տեղի է ունենում համալսարանի երիտասարդ մասնագետների գիտական նստաշրջան՝ նվիրված Հայոց մեծ եղեռնի 75-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 28 ապրիլի 1990)

մայիս – Համալսարանականների հյուրն էր ԽՍՀՄ Ժողովրդական կրթության պետական կոմիտեի նախագահ Գ. Ա. Յագոդինը: Հանդիպման ժամանակ նա ներկայացնում է Հայաստանում իր տպավորությունները, անդրադառնում կրթական համակարգի խնդիրներին և գոհունակություն հայտնում ԵՊՀ-ին կից «Լազեռային տեխնիկա» գիտաարտադրական միավորման մասին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 26 մայիսի 1990)

20 մայիսի - 3 հունիսի - 15 հուլիսի – Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունների արդյունքներով ԵՊՀ կոլեկտիվի անդամներից ՀԽՍՀ ժողովրդական պատգամավորներ են ընտրվում՝

1. Արարքցյան Բաբկեն (Կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ),

2. Իշխանյան Ռաֆայել (Հայոց լեզվի պատմության ամբիոն),

3. Մանուկյան Վազգեն (Կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ),

4. Մովսիսյան Յուրի (Տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետ),

5. Ոսկանյան Աշոտ (Փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետ),

6. Պետրոսյան Ռաֆիկ (Իրավաբանական ֆակուլտետ),

7. Սաղոյան Արշակ (Ինժեներական հոգեբանության լաբորատորիա),

8. Սարգսյան Կտրին (Բաղադրական պատմության ամբիոն),

9. Վարդանյան Յուրի (Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ),

10. Ջուլյան Սուրեն (Արտասահմանյան ուսանողների և ասպիրանտների համար ռուսաց լեզվի ամբիոն)

11. Վարդանյան Դավիթ (Ֆիզիկայի ֆակուլտետ),

12. Գրիգորյան Ավետիք (Ֆիզիկայի ֆակուլտետ),

13. Սահակյան Մելս (Տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետ),

14. Հակոբյան Հակոբ (Մաթեմատիկայի ֆակուլտետ):

(Տե՛ս «Երևանի համալսարան», 8 սեպտեմբերի 1990)

28 մայիսի – Մեծ դահլիճում գումարվում է հանդիսավոր նիստ՝ նվիրված հայոց պետականության վերականգնման 72-րդ տարելիցին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 2 հունիսի 1990)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1377 շրջանավարտ (որից 94-ը՝ երեկոյան, 85-ը՝ հեռակա բաժիններից)՝ 116

ֆիզիկոս, 89 ռադիոֆիզիկոս, 193 կիրառական մաթեմատիկոս, 67 երկրաբան, 53 աշխարհագրագետ, 46 պատմաբան, 42 քիմիկոս, 67 կենսաբան, 57 իրավաբան, 86 բանասեր, 24 արևելագետ, 18 տնտեսագետ-կիրքեռնետիկոս, 76 ռուսագետ, 27 փիլիսոփա, 20 կենսաֆիզիկոս, 27 կենսաքիմիկոս, 119 մաթեմատիկոս, 21 մեխանիկոս, 50 ռոմանագերմանական լեզուների և գրականությունների մասնագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 15, ք. 10)

4 սեպտեմբերի – Տեղի է ունենում ԵՊՀ ԼԿԵՄ կոմիտեի ընդլայնված նիստ, որտեղ որոշվեց սեպտեմբերի 5-ից դադարեցնել համալսարանի ԼԿԵՄ կոմիտեի խմբային, կուրսային և ֆակուլտետային կոմերիտական բոլոր կազմակերպությունների ընտրովի մարմինների գաղափարաքաղաքական գործունեությունը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 սեպտեմբերի 1990)

8 սեպտեմբերի – «Երևանի համալսարան» շաբաթաթերթը սկսում է լույս տեսնել «Գիտությունը ուժ է» նոր նշանաբանով. միաժամանակ ղեկավար մարմինների որոշմամբ թերթը դառնում է Երևանի պետական համալսարանի խորհրդի պաշտոնաթերթ²⁰:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 8 սեպտեմբերի 1990)

3 հոկտեմբերի – Եվրախորհրդարանի պատվիրակությունը հյուրընկալվում է համալսարանում: Հանդիպման ընթացքում քննարկվում են Երևանի պետական համալսարանի և եվրոպական համալսարանների միջև գիտամշակութային փոխադարձ կապեր ստեղծելու, ինչպես նաև դասախոսներ փոխանակելու հարցեր: Վերջում պրոռեկտոր պրոֆ. Գ. Ղարիբյանը պատվիրակության ղեկավար Հ. Սալիին է հանձնում ԵՊՀ հոբելյանական հուշամեդալ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 հոկտեմբերի 1990)

26 հոկտեմբերի – Մեծ դահլիճում տեղի է ունենում ՀՀ Գերագույն խորհրդի համալսարանական պատգամավորների հանդիպու-

մը Մայր բուհի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսումնաօժանդակ բնագավառի աշխատողների և ուսանողության հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 նոյեմբերի 1990)

նոյեմբեր – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ «Գիտական ուսումնասիրության բնագավառում ձեռք բերած նվաճումների համար» համալսարանի մեդալով է պարգևատրվում ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1996/97 ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1997, էջ 18, տե՛ս նաև «Երևանի համալսարան», 24 նոյեմբերի 1990)

2 նոյեմբերի – Ժուռնալիստիկայի բաժնում տեղի է ունենում ՀՀ Գերագույն խորհրդի լրատվության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սերուժան Տեր-Գուլանյանի հանդիպումը ուսանողության և պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 17 նոյեմբերի 1990)

27 նոյեմբերի - 5 դեկտեմբերի – Բացվում է ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների տարեկան գիտական նստաշրջանը ֆակուլտետներում, հայագիտական կենտրոնում, «Լազերային տեխնիկա» ԳԱՄ-ում և ֆիզդաստիարակության ամբիոնում: 9 օրվա ընթացքում 22 գիտական բաժանմունքներում և 16 ենթաբաժանմունքներում ընթերցվեցին շուրջ 400 զեկուցումներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 8 դեկտեմբերի 1990)

դեկտեմբեր – Ժուռնալիստիկայի բաժնի 2-րդ կուրսի ուսանողների հյուրն էր բուլղարահայ սիրված գրող Սևդա Սևանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 8 դեկտեմբերի 1990)

դեկտեմբեր – Կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի հիման վրա ստեղծվում են երկու նոր՝ Ինֆորմատիկայի և հաշվողա-

կան մաթեմատիկայի ու Մաթեմատիկական կիրառությունների և
հետազոտությունների ավտոմատացման ֆակուլտետներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 դեկտեմբերի 1990)

4-6 դեկտեմբերի – Գումարվում է ուսանողական գիտական հերթա-
կան՝ 53-րդ կոնֆերանսը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 դեկտեմբերի 1990)

1991

Համալսարանի գիտական գրադարանին տրվում է գիտական առաջին կարգ:

(Տե՛ս Ասլանյան Վ., Հայրապետյան Հ., Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանը, Երևան, 2001, էջ 58)

Համալսարանում բացվելում է ևս մի նոր մասնագիտություն՝ «Միջազգային տնտեսական հարաբերություններ»:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 12 հունվարի 1991)

ՀՀ ԳԱԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի նախաձեռնությամբ ստեղծվում է պատմաբանների հայկական ընկերակցություն, որի հիմնադիր ժողովը տեղի է ունենում ԵՊՀ-ում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 9 մարտի 1991)

19-22 հունվարի – Համալսարանում տեղի է ունենում ամբողջատիրության հիմնահարցերին նվիրված առաջին միջազգային գիտաժողովը՝ «Ամբողջատիրություն. այլևս երբեք» նշանաբանով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 2 փետրվարի 1991)

11 փետրվարի – ՀՀ բարձրագույն կրթության և գիտության պետական կոմիտեի նախագահ Վ. Մ. Հարությունյանի հրամանով Երևանի պետական համալսարանի ռեկտոր է նշանակվում Նորայր Հունանի Առաքելյանը (պաշտոնավարել է մինչև 1993 թ. սեպտեմբերի 30-ը):

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 1, գ. 20, թ. 11, 12, տե՛ս նաև «Երևանի համալսարան», 16 փետրվարի 1991)

մարտ – Ամերիկահայ դոկտոր Հելեն Թաքեսյանը համալսարանին է նվիրում 23 մեծածավալ արկղերով իր անձնական գրադարանը և գրասենյակային գեղեցիկ պիտույքներ՝ մոտ 22603 դոլար արժողությամբ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 9 մարտի 1991)

28 մայիսի – Համալսարանում տեղի է ունենում գիտաժողով՝ նվիրված Հայկական հարցին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 8 հունիսի 1991)

6 հունիսի – Ամփոփվում են Ժուռնալիստիկայի բաժնում հայտարարված «Ոսկե գրիչ» մրցույթի արդյունքները: Լավագույն 10 մասնակիցները արժանանում են մրցանակի:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 8 հունիսի 1991)

6 հունիսի – Կենսաբանական ֆակուլտետի նիստերի դահլիճում տեղի է ունենում գիտական նստաշրջան՝ նվիրված էկոլոգիայի և բնության պահպանության ժամանակակից խնդիրներին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունիսի 1991)

14 հունիսի – ԵՊՀ մեծ դահլիճում տեղի է ունենում ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի և համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հանդիպումը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 22 հունիսի 1991)

27 հունիսի – Համալսարանի և Բեյրութի (Լիբանան) «Համազգայինի» հայագիտական բարձրագույն հիմնարկի միջև կնքվում է ուսումնագիտական համագործակցության և ուսանողների ու դասախոսների փոխանակության պայմանագիր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 28 սեպտեմբերի 1991)

1 սեպտեմբերի – Բանասիրական ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների և գրականության բաժնի հիման վրա ստեղծվում է

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետը, որի ղեկան է ընտրվում Կարո Կարապետյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 2 նոյեմբերի 1991)

հոկտեմբեր – Համալսարանի բարերար, դոկտոր Հելեն Թաքեսյանից (ԱՄՆ) համալսարանը երկրորդ անգամ ստանում է նոր նվիրատվություն՝ 17 մեծածավալ արկղ թանկարժեք իրերով՝ մոտ 25000 դոլար արժողությամբ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 26 հոկտեմբերի 1991)

9-11 հոկտեմբերի – Համալսարանում անցկացվում է միջբուհական ուսանողական գիտական նստաշրջան՝ նվիրված Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ստեղծման 1500-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 12 հոկտեմբերի 1991)

նոյեմբեր – Համալսարան են այցելում Հունաստանի Հանրապետության արտգործնախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ Էմանուել Մեգալոկոնոմոսը և ԽՍՀՄ-ում Հունաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Իլիաս Գունարիսը: Համալսարանի ղեկավարության հետ հանդիպման ընթացքում արծարծվեցին երկու երկրների բուհերի միջև համագործակցության հարցեր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 2 նոյեմբերի 1991)

5 դեկտեմբերի – Բանասիրական ֆակուլտետում ուսանողությունը հանդիպում է ունենում ՀՀ նախկին վարչապետ Վազգեն Մանուկյանի հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 7 դեկտեմբերի 1991)

1992

21 հունվարի – ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Բաբկեն Արարք-ցյանը համալսարանի գիտխորհրդի ընդլայնված նիստում հանդիպում է ունենում պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 25 հունվարի 1992)

24 մարտի – Համալսարանի հրապարակում ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության նախաձեռնությամբ կազմակերպվում է «Ուսանողությունը հանուն Արցախի» համաուսանողական հանրահավաք:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 28 մարտի 1992)

25 մարտի – Համալսարան է այցելում Ռուսաստանում և արդեն մաս Հայաստանում Ավստրալիայի արտակարգ և լիազոր դեսպան Քեյվին Հոգը: Հանդիպման վերջում դեսպանն անգլերեն մասնագիտական գրականություն է նվիրում Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 28 մարտի 1992)

ապրիլ – ԱՄՆ-ից վերադառնում է Երևանի պետական համալսարանի պատվիրակությունը, որը գլխավորում էր ռեկտոր, ակադեմիկոս Ն. Առաքելյանը: Համագործակցության պայմանագրեր են ստորագրվել Ֆրեզնո քաղաքի և Բոստոնի Նորթիսթերն համալսարանների հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 ապրիլի 1992)

ապրիլ – ԵՊՀ ղեկավարության և պրոֆեսորադասախոսական կազմի հյուրն էր ՀՀ բարձրագույն կրթության և գիտության նախարար

Վ. Գնունին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 ապրիլի 1992)

8 ապրիլի – ԵՊՀ ուսանողական ակումբների խորհրդում տեղի է ունենում ուսանողական կենտրոնի հիմնադիր ժողովը, որի նպատակն էր քննարկել և հաստատել ուսանողական կենտրոնի «Կանոնադրությունը»:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 ապրիլի 1992)

մայիս – Համալսարանի գիտական գրադարանի ղեկավարությունը հյուրընկալում է ԱՄՆ-ի Կոնգրեսի գրադարանի ռեֆերենտ Մայքլ Նեյբերտին և Մոսկվայում ԱՄՆ-ի Կոնգրեսի գրադարանի բյուրոյի տնօրեն Սիլսայիլ Լևներին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 մայիսի 1992)

1 մայիսի – ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ն. Հ. Առաքելյանի հրամանով գործողության մեջ է դրվում «Ուսանողների խրախուսման և նրանց նկատմամբ կիրառվող կարգապահական ներգործության միջոցների մասին» նոր կարգը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունիսի 1992)

16-17 հունիսի – Կենսաբանական ֆակուլտետում տեղի է ունենում Շրջակա միջավայրի պահպանության միջազգային օրվան նվիրված գիտաժողով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 հունիսի 1992)

24 հունիսի – ԵՊՀ նիստերի փոքր դահլիճում տեղի է ունենում հանդիպում Հայաստանում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Վ. Ստուլիչինի հետ, որը նախաձեռնել էր Ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 հունիսի 1992)

31 օգոստոսի – Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն

Տեր-Պետրոսյանի հրամանագրով որոշվեց սահմանել, որ Երևանի պետական համալսարանը ինքնավար պետական բարձրագույն ուսումնական գիտական և մշակութային հաստատություն է ՀՀ բարձրագույն կրթության համակարգում:

Հանձնարարվեց ՀՀ Կառավարությանը՝ ա) հստակեցնել Երևանի պետական համալսարանի և ՀՀ բարձրագույն կրթության և գիտության նախարարության փոխհարաբերությունները, բ) լուծել Երևանի պետական համալսարանին պատկանող Աբովյան փողոցի թիվ 52 մասնաշենքի համալիրը նրան սահմանված կարգով վերադարձնելու հարցը:

Միևնույն ժամանակ հանձնարարվում է երկամսյա ժամկետում քննել և հաստատել Երևանի պետական համալսարանի կանոնադրությունը և ստեղծել տնտեսական նախադրյալներ բարձրագույն կրթության ու գիտության ներդաշնակ զարգացման համար:

(Տե՛ս Երևանի պետական համալսարանի
նեկտորները, (1919-1999), Երևան, 1999, էջ 132,
տե՛ս նաև «Երևանի համալսարան», 15 սեպտեմբերի 1992)

սեպտեմբեր – Քիմիական ֆակուլտետում բացվում է էկոլոգիական քիմիայի բաժինը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հոկտեմբերի 1992)

18-19 սեպտեմբերի – Համալսարանի գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի է ունենում «Կանայք հանուն առաջադեմ և ժողովրդավար Հայաստանի» խորագրով գիտաժողով, որին մասնակցում էին կին հասարակական-քաղաքական գործիչներ, մտավորականներ, գործարար կանայք:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 սեպտեմբերի 1992)

29 հոկտեմբերի – Բանասիրական ֆակուլտետում ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության նախաձեռնությամբ տեղի է ունենում համալսարանական ուսանողական ժողով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 հոկտեմբերի 1992)

11-13 նոյեմբերի – Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում տեղի է ունենում գիտաժողով՝ նվիրված գործաբանական լեզվաբանության և օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի հարցերին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 նոյեմբերի 1992)

դեկտեմբեր – Ֆրանսիայի Մոնպելիե քաղաքի N 3 համալսարանի հրավերով ԵՊՀ ռեկտոր, ակադեմիկոս Նորայր Առաքելյանը և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Ռաֆայել Մաթևոսյանը երկու շաբաթով մեկնում են Ֆրանսիա՝ ԵՊՀ-ի և Մոնպելիեի համալսարանի միջև համագործակցության կազմակերպական խնդիրները ճշտելու նպատակով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 դեկտեմբերի 1992)

18 դեկտեմբերի – Համալսարանում հյուրընկալվելում է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Չժան Յան Յանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 հունվարի 1993)

1993

հունվար – Համալսարան է այցելում ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Ահմադ Սոփիանին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունվար 1993)

11 մարտի – Տեղի է ունենում Մաթեմատիկական կիրառական և հետազոտումների ավտոմատացման ֆակուլտետի ընդհանուր ժողովը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 մարտի 1993)

30 ապրիլի – Ամերիկյան (Հոլիվուդի աստղ) աշխարհահռչակ կինոդերասանուհի, երգչուհի Շերլին Սարգսյանն այցելում է համալսարան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 մայիսի 1993)

30 ապրիլի – Տեղի է ունենում ԵՊՀ արհկազմակերպության հիմնադիր կոնֆերանսը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունիսի 1994)

14 մայիսի – Եռօրյա պալքարից հետո ավարտվում է Անանիա Շիրակացու անվան առաջին ուսանողական մաթեմատիկական օլիմպիադան, որը կազմակերպվել էր Մաթեմատիկայի ֆակուլտետի և Կանադայի «Նոր սերունդ» մշակութային միության ու նրա հաստանյան մասնաճյուղի նախաձեռնությամբ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մայիսի 1993)

26 մայիսի – Ֆիզիկայի ֆակուլտետում տեղի է ունենում միջոցառում՝ նվիրված Ֆիզիկոսի օրվան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մայիսի 1993)

28 մայիսի - 10 հունիսի – Երևանի պետական համալսարանի հյուրն էր Բոլոնիայի համալսարանի պրոֆեսոր Գաբրիելա Ուլոիոնճյանը: Նա եկել էր միջհամալսարանական համագործակցության շրջանակներում Հայագիտական կենտրոնում համատեղ գիտական աշխատանք կատարելու համար:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունիսի 1993)

հունիս – Երևանի պետական համալսարանի շրջանավարտները ըստ մասնագիտությունների. 161 ֆիզիկոս, 85 ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի մասնագետ, 17 կիսահաղորդիչների և դիէլեկտրիկների ֆիզիկայի մասնագետ, 231 կիրառական մաթեմատիկոս, 41 երկրաբան, 27 երկրաֆիզիկոս, 41 երկրաբան. հանույթի մասնագետ, 55 աշխարհագրագետ, 84 պատմաբան, 55 քիմիկոս, 74 կենսաբան, հայոց լեզվի և գրականության 86 մասնագետ, 26 արաբագետ, 10 պարսկագետ, 6 թուրքագետ, 28 տնտեսագետ-կիրոնետիկոս, 78 ռուսագետ, 34 փիլիսոփա, սոցիոլոգ և հոգեբան, 20 կենսաֆիզիկոս, 23 կենսաքիմիկոս, 137 մաթեմատիկոս, 32 մեխանիկոս, 31 անգլերենի, 6 գերմաներենի, 10 ֆրանսերենի մասնագետ, 28 ժողովրդագրագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 2, գ. 15, ք. 11)

հունիս – Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան տիկին Ֆրանս դը Հարտինգը Լիոնի առևտրաարդյունաբերական պալատի տնօրեն Գոնգազ Ռուբսի հետ այցելում է համալսարան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունիսի 1993)

1 հունիսի – Տեղի է ունենում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և գիտաշխատողների ընդհանուր ժողով, որտեղ քննարկվում են կրթության և սոցիալ-տնտեսական վիճակի հարցեր: Ժողովն ընդունում է որոշում՝ ուղղված Հայաստանի Հանրապետության նախագահին, ՀՀ Գերագույն խորհրդի նախագահին, ՀՀ վարչապետին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունիսի 1993)

9 հունիսի – Համալսարանում հյուրընկալվում են Ռուսաստանում Արգենտինայի արտակարգ և լիազոր դեսպան Խուան Կարլոս Օլիման և դեսպանատան տնտեսական ու առևտրի գծով խորհրդական Ռոբերտո Գուլիմոն: Հանդիպման ժամանակ քննարկվում են ԵՊՀ և Բուենոս Այրեսի համալսարանի միջև կնքված (1990 թ. հունիսի 28-ին) պայմանագրի կատարման հարցերը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 հունիսի 1993)

հուլիս – Համալսարանում հյուրընկալվեց ՀՀ-ում Եգիպտոսի Հանրապետության ժամանակավոր հավատարմատար Ահմեդ Ֆուադ Մուհամեդ Ռապանը: Հանդիպումը ապագա համագործակցությունն ավելի ամուր հիմքերի վրա դնելու նպատակ էր հետապնդում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 հուլիսի 1993)

հուլիս – ԵՊՀ է այցելում Հայաստանում հյուրընկալվող Ավստրալիայում Քուվեյթի արտակարգ և լիազոր դեսպան Ֆեյսալ ալ Ղալիսը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 սեպտեմբերի 1993)

3 հուլիսի – Տեղի է ունենում ԵՊՀ գիտխորհրդի ընդլայնված նիստ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի, Գերագույն խորհրդի նախագահ Բ. Արարքյանի, կրթության և գիտության գծով պետական նախարար Ա. Ղազարյանի և բարձրագույն կրթության ու գիտության նախարար Վ. Գնունու մասնակցությամբ: Նիստը բացելով՝ համալսարանի ռեկտոր Ն. Առաքելյանը հանրապետության նախագահի և մյուս ղեկավարների ուշադրությունը հրավիրում է հանրապետության առաջատար բուհում տիրող իրավիճակի վրա: Նա հատկապես ընդգծում է աշխատավորության և ուսանողության սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, շեշտում իշխանությունների հետ համատեղ աշխատանքով դրությունը շտկելու անհրաժեշտությունը, պահանջ դնում Մայր բուհի մայր շենքը կրկին համալսարանին վերադարձնելու: Ռեկտորը անդրադառնում է նաև համալսարանականներին հուզող մի շարք այլ հարցերի, դժգոհում, որ 1992 թ. օգոստոսի 31-ին ՀՀ

նախագահի՝ ԵՊՀ-ի մասին արձակած հրամանագրի ոչ մի կետ կյանքի չի կոչվել:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հուլիսի 1993)

17 սեպտեմբերի – Բանասիրական ֆակուլտետի դասախոսների և ուսանողների հյուրն էր Սփյուռքի ճանաչված մտավորական, գրող և գրականագետ Վահե Օշականը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հոկտեմբերի 1993)

17 սեպտեմբերի – Համալսարանում էին պաշտոնական այցով Երևան ժամանած բրիտանացի խորհրդարանականները: Հանդիպման ընթացքում քննարկվում է նաև ԵՊՀ-ի և անգլիական որոշ բուհերի, մասնավորապես՝ Վեսթմիսթերի համալսարանի միջև փոխհամագործակցություն ծավալելու հարցը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հոկտեմբերի 1993)

25 հոկտեմբերի – ՀՀ Կառավարության որոշմամբ համալսարանի ռեկտոր է նշանակվում Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանը (պաշտոնավարել է մինչև 2006 թ. հունվարի 16-ը):

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 1, գ. 21, ք. 116, 119)

5 նոյեմբերի – ՀՀ արտաքին գործերի նախարարության հրավերով արաբ պատմաբան, հայագետ, դոկտոր Սալեհ Ջահրեդդինը հանդիպում է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 նոյեմբերի 1993)

16 նոյեմբերի – ԵՊՀ ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը ընդունում է ՀՀ-ում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան Հարի Գիլմորին: Հանդիպման ընթացքում քննարկվում են նաև համալսարանի և ամերիկյան համալսարանների միջև համագործակցության աշխուժացման հարցեր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 նոյեմբերի 1993)

1994

Մշակվում է համալսարանի զարգացման առաջին ծրագիրը, որի հիման վրա 1995-96 ուստարվանից անցում կատարվեց բազմաստիճան կրթական համակարգի:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 մարտի 2002)

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սկրտիչ Ներսիսյանին շնորհվում է ԵՊՀ «Գիտական ուսումնասիրության բնագավառում ձեռք բերած նվաճումների համար» մեդալ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1996/97 ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1997, էջ 18)

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գուրգեն Սահակյանին շնորհվում է ԵՊՀ «Գիտական ուսումնասիրության բնագավառում ձեռք բերած նվաճումների համար» մեդալ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1996/97 ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1997, էջ 18)

5 ապրիլ – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի է ունենում պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հանդիպում ՌԴ նախագահի՝ քաղաքական գծով խորհրդական, ճանաչված քաղաքագետ, պրոֆ. Անդրանիկ Սիիրանյանի հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 ապրիլի 1994)

20 ապրիլ – ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի հետ հանդիպում է ՀՀ վարչապետ Հրանտ Բազրաժյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 ապրիլի 1994)

27 ապրիլի – ԵՊՀ ուսանողության հյուրն էր Հայաստանում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան Հարի Գիլմորը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 ապրիլի 1994)

մայիս-հունիս – Համալսարանում էին գտնվում ԱՄՆ-ից ժամանած չորս սփյուռքահայ մասնագետներ՝ Ջորջ Բեդիրյանը, Չարլզ Գարոյանը, Ջարուհի Տեր-Սկրտչյանը և Ռոբերտ Թեմբեքճյանը: Նրանք ժամանել էին «Ֆուլբրայթ» և Կալիֆորնիայի Ֆրեզնո քաղաքի համալսարանի կողմից մշակված «Ուսուցում Հայաստանի համար» ծրագրերի իրականացմանը նպաստելու նպատակով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 հունիսի 1994)

26-30 մայիսի – Պատմության ֆակուլտետում տեղի է ունենում գիտա-ժողով՝ նվիրված Հայաստանի առաջին հանրապետության հռչակման 76-րդ տարեդարձին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մայիսի 1994)

31 մայիսի - 1 հունիսի – Տեղի է ունենում համալսարանի 75-ամյակին նվիրված «Քաղաքական գիտությունը և քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով գիտական կոնֆերանս:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունիսի 1994)

հունիս – Երևանի պետական համալսարանի շրջանավարտները ըստ մասնագիտությունների. 112 ֆիզիկոս, ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի 59 մասնագետ, 22 կիսահաղորդիչների և դիէլեկտրիկների ֆիզիկայի մասնագետ, 202 կիրառական մաթեմատիկոս, 41 երկրաբան, 61 աշխարհագրագետ, 75 պատմաբան, 40 քիմիկոս, 73 կենսաբան, հայոց լեզու և գրականության 125 մասնագետ, 15 արաբագետ, 7 պարսկագետ, 10 թուրքագետ, 32 տնտեսագետ-կիրառական, 71 ռուսագետ, 37 փիլիսոփա, սոցիոլոգ և հոգեբան, 35 կենսաֆիզիկոս, 35 կենսաքիմիկոս, 94 մաթեմատիկոս, 43 մեխանիկոս, 34 անգլերենի, 16 գերմաներենի, 13 ֆրանսերենի մասնագետ, 39 ժուռնալիստ, 90 իրավագետ, 10 հիդրոէրկրաբան, 33

տնտեսագետ, 23 միջազգային տնտեսական կապերի գծով մասնագետ:

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի
արխիվ, ֆ. 2, գ. 15, ք. 11)

հուլիս – Կենսաբանական ֆակուլտետում մեկնարկում է շրջանավարտ-դափնեկրի կոչում շնորհելու նախաձեռնությունը՝ ի հիշատակ Թուրուզի Սաբատյե համալսարանի պրոֆեսոր Քլոդ Թորոսյանի:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հուլիսի 1994)

սեպտեմբեր – ԵՊՀ հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի հյուրեր էր Թավրիզի համալսարանի պրոֆեսոր, Իրանի նորաստեղծ գիտությունների ակադեմիայի հիմնադիր անդամ, սփյուռքահայ ճանաչված մաթեմատիկոս Սկրտիչ Թումանյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 սեպտեմբերի 1994)

19 սեպտեմբերի – Հայաստանի Հանրապետության Կառավարության N 440 որոշումով Իջևանի տարածաշրջանային քոլեջը վերակազմավորվում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1996/97 ուս.տարվա
հաշվետվություն, Երևան, 1997, էջ 268)

22 սեպտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչումներ են շնորհվում հասարակական-քաղաքական հետևյալ գործիչներին՝

Քերոլայն Քոքսին (Մեծ Բրիտանիա)՝ մարդասիրական անձնվեր գործունեության համար.

Դենիզ Պոլանին (Ֆրանսիա),

Ժիրայր Դեդեյանին (Ֆրանսիա),

Վիկտոր Սադովնիչին (ՌԴ),

Վարդան Գրիգորյանին (ԱՄՆ),

Ռոբերտ Գյուլբենկյանին (Պորտուգալիա),

Երվանդ Թերզյանին (ԱՄՆ),
 Սիհրան Աղաբաբյանին (ԱՄՆ),
 Ռիչարդ Հովհաննիսյանին (ԱՄՆ),
 Ռսկան Պարսեղյանին (ԱՄՆ)՝ գիտության ասպարեզում
 ձեռք բերած ակնառու նվաճումների համար,
 Լուիս Սիմոն Մանուկյանին (ԱՄՆ)՝ հասարակական-հայրե-
 նասիրական բեղուն գործունեության համար,
 Շահեն արքեպիսկոպոս Աճեմյանին (Իսրայել)՝ հասարակա-
 կան-հայրենասիրական բեղուն գործունեության և գիտության
 ասպարեզում ձեռք բերած նվաճումների համար,
 Ալեք Մանուկյանին (ԱՄՆ)՝ հայանպաստ մեծ վաստակի
 համար:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1996/97
 ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1997, էջ 19)

հոկտեմբեր – Համալսարանի հիմնադրման 75-ամյա հոբելյանին
 նվիրված հանդիսավոր արարողությունների օրերին տեղի է
 ունենում անվանակոչված լսարանների բացումը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 հոկտեմբերի 1994)

11 հոկտեմբերի – Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազ-
 գային թատրոնի դահլիճում տեղի է ունենում Երևանի պետա-
 կան համալսարանի հիմնադրման 75-ամյակին նվիրված հոբե-
 լյանական հանդիսավոր նիստ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 հոկտեմբերի 1994)

11-12 հոկտեմբերի – Մեծ դահլիճում տեղի է ունենում ԵՊՀ պատմու-
 թյանը, միջազգային կապերին և բարձրագույն կրթության հա-
 մակարգի վերափոխումներին նվիրված միջազգային գիտաժո-
 դով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 հոկտեմբերի 1994)

12 հոկտեմբերի – Տեղի է ունենում համալսարանի գրադարանի նո-
 րակառույց շենքի հանդիսավոր բացումը (12.000 քմ ընդհանուր

մակերեսով, 1100 ընթերցողական նստատեղով):

(Տե՛ս Ասլանյան Վ., Հայրապետյան Հ., Երևանի պետական
համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրլյանների
անվան գիտական գրադարանը, Երևան, 2001, էջ 58)

27 հոկտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս-Բուտրոս Ղալիին (Եգիպտոս) գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար շնորհվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1996/97
ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1997, էջ 19)

3 նոյեմբերի – Համալսարան է այցելում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար, միջազգային իրավունքի և քաղաքագիտության պրոֆեսոր Բուտրոս-Բուտրոս Ղալին, որին հանձնվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման վկայականը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 նոյեմբերի 1994)

17 նոյեմբերի – Համալսարանի գիտխորհրդի նիստում ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման վկայական է հանձնվում Մոսկվայի համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Վիկտոր Անտոնովիչ Սադովնիչին: Այնուհետև տեղի է ունենում երկու համալսարանների միջև համագործակցության պայմանագրի ստորագրման հանդիսավոր արարողություն:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 նոյեմբերի 1994)

20 նոյեմբերի – ԵՊՀ է այցելում Հայաստանում Հունաստանի արտակարգ և լիազոր դեսպան Յակովոս Սպեցիոսը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 դեկտեմբերի 1994)

24 նոյեմբերի – Համալսարանի ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը ընդունում է Հայաստանի Հանրապետությունում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան

Չժառ Սիդին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 նոյեմբերի 1994)

6 դեկտեմբերի – Համալսարանի գիտխորհրդի նիստում ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման վկայական է հանձնվում հասարակական-քաղաքական նշանավոր գործիչ, Մեծ Բրիտանիայի Լոնդոնի պալատի փոխխոսնակ, Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կոմիտեի անդամ Քերոլայն Քոքսին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 դեկտեմբերի 1994)

1995

Շվեյցարահայ բարերար Տիգրան Իզմիրլյանը գրադարանին է նվիրաբերում 1 մլն ԱՄՆ դոլար: Ստեղծվում է համալսարանի գրադարանի հիմնադրամ: Չեռք են բերվում «Պենտիում» դասի 36 համակարգիչ, տպագրման, բազմացման և ժամանակակից այլ սարքավորումներ:

(Տե՛ս Ասլանյան Վ., Հայրապետյան Հ., Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանը, Երևան, 2001, էջ 58)

1 հունվարի – Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տնօրենի հրամանով վերահաստատվում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի հաստիքային ցուցակը:

(Տե՛ս Տարեգրություն, տե՛ս ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պաշտոնական կայք՝ <http://ijevan.ysu.am/about-ysu-ib/chronicle/>, մուտք՝ 07.06.2019)

16 հունվարի – Ռեկտորատը, լսելով և քննարկելով «Երևանի համալսարան» թերթի խմբագիր Վ. Մաղալյանի հաշվետվությունը, որոշեց «Երևանի համալսարան» թերթը հունվարի 1-ից համալսարանի ներսում ժամանակավորապես տարածել անվճար: Թերթի տպաքանակը նախկին 1000-ի փոխարեն սահմանվեց 500:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 հունվարի 1995)

21 մարտի – Տեղի է ունենում հանդիպում Բարձրագույն զինվորական բազմապրոֆիլ հրամանատարական ուսումնարանի պետ, գեներալ-մայոր Ս. Մարտիրոսյանի և ԵՊՀ ավարտական կուրսերի ուսանողների միջև: Հանդիպման ժամանակ քննարկվում են բարձրորակ կադրային սպաների պատրաստմանը առնչվող մի

շարք խնդիրներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մարտի 1995)

13 ապրիլի – Տեղի է ունենում ԵՊՀ գիտխորհրդի նիստ, որը նվիրված էր Հայոց մեծ եղեռնի 80-ամյա տարելիցին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 ապրիլի 1995)

18 ապրիլի – Պատմության ֆակուլտետը Ազգային հարցի և գեոցիդի ուսումնասիրման կենտրոնի հետ կազմակերպում է Մեծ եղեռնի 80-ամյակին նվիրված գիտական նստաշրջան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 29 ապրիլի 1995)

28-29 ապրիլի – Համալսարանի ուսանողական խորհուրդը կազմակերպեց «Հայոց ցեղասպանությունը և համամարդկային արժեքները» թեմայով գիտաժողով-սեմինար:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 29 ապրիլի 1995)

4 մայիսի – Տեղի է ունենում ԵՊՀ գիտխորհրդի ընդլայնված նիստ՝ նվիրված 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում տառապանակալի 50-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 մայիսի 1995)

26 մայիսի – Պատմության ֆակուլտետը կազմակերպում է գիտական նստաշրջան՝ նվիրված Հայաստանի առաջին հանրապետության 77-րդ տարեդարձին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 մայիսի 1995)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1577 շրջանավարտ: Ըստ ֆակուլտետների՝ շրջանավարտները բաշխված էին հետևյալ կերպ. Մաթեմատիկայի ֆակուլտետ՝ 137, Մեխանիկայի՝ 25, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 198, Ֆիզիկայի՝ 117, Ռադիոֆիզիկայի՝ 89, Բիոմիական՝ 54, Կենսաբանական՝ 113, Երկրաբանական՝ 62, Աշխարհագրա-

կան՝ 41, Տնտեսագիտության՝ 56, Պատմության՝ 122, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության՝ 52, Բանասիրական՝ 131, Ռուս բանասիրության՝ 75, Ռոմանագերմանական բանասիրության՝ 83, Արևելագիտության՝ 30, Իրավաբանական՝ այդ թվում 2-րդ մասնագ. (հեռակա)՝ 192:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1998/99
ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1999, էջ 27)

7 հունիսի – Մեծ դահլիճում տեղի ունեցած միջոցառումը նվիրված էր դարաբաղյան պատերազմում նահատակված համալսարանական ազատամարտիկների հիշատակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունիսի 1995)

9 հունիսի – Մոսկվայի և Երևանի պետական համալսարանների միջև կնքվում է գիտական, ուսումնական և մշակութային համագործակցության 1995-1998 թթ. պայմանագիր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունիսի 1995)

29 հունիսի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ գիտության ասպարեզում ակնառու նվաճումների համար Ֆրեդերիկո Մայորին (Ֆրանսիա) շնորհվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1996/97
ուս.տարվա հաշվետվություն, Երևան 1997, էջ 19)

29 հունիսի – ԵՊՀ գիտխորհրդի ընդլայնված նիստում քննարկվում է «Հանրակրթական դպրոցի նոր ուսումնական պլանների և հրատարակման ներկայացրած դպրոցական դասագրքերի մասին» հարցը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հուլիսի 1995)

16 սեպտեմբերի – Տեղի է ունենում Աստվածաբանության ֆակուլտետի հիմնադրման հանդիսավոր բացման արարողությունը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 սեպտեմբերի 1995)

28 սեպտեմբերի – Բանասիրական ֆակուլտետում տեղի է ունենում ամերիկահայ ազգային գործիչ, մանկավարժ Գաբրիել Իմճեճիկյանի հանդիպումը համալսարանականների հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 սեպտեմբերի 1995)

28 սեպտեմբերի – Համալսարանի գիտխորհրդի նիստերի դահլիճում Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի իսպանական բանասիրության մասնագիտացման ուսանողների ու պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ տեղի է ունենում հանդիպում Հայաստանում Ուրուգվայի Արևելյան Հանրապետության և Արգենտինայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպաններ Պեդրո Խոսե Դոնդոյի և Առնոլդ Մանուել Լիստերի և նրանց ուղեկցող անձանց հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հոկտեմբերի 1995)

2 հոկտեմբերի – Կենսաբանական ֆակուլտետի դահլիճում տեղի է ունենում Փարիզ-7 համալսարանի պրոֆեսոր, Լ. Պաստերի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ, բնական գիտությունների դոկտոր Դենիզ Պոլանին ԵՊՀ պատվավոր դոկտորի վկայականի հանձնման հանդիսավոր արարողությունը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հոկտեմբերի 1995)

28 հոկտեմբերի – Հանդիսավորությամբ համալսարանի կենտրոնական մասնաշենքի բակում բացվում է Մովսես Խորենացու հուշարձանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 նոյեմբերի 1995)

21 նոյեմբերի – Պատմության ֆակուլտետի միջազգային հարաբերությունների պատմության և տեսության բաժնի ուսանողությունը հանդիպում է Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Յու. Սկրտումյանի հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 նոյեմբերի 1995)

30 նոյեմբերի – Պատմության ֆակուլտետում «Զեյթուն» պատմամշակութային միության հետ գումարվում է գիտական նստաշրջան՝ նվիրված Զեյթունի 1895-1896 թթ. հերոսամարտի 100-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 դեկտեմբերի 1995)

14 դեկտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ հասարակական-հայրենասիրական բեղուն գործունեության և գիտության ասպարեզում ձեռք բերած նվաճումների համար ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչումներ են շնորհվում

Ամենայն հայոց կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա-ին,
Ռիտա Պալյանին (ԱՄՆ),
Ալեքսեյ Սիսակյանին (ՌԴ),
Քրիստիան Շնիցլերին (Գերմանիա),
Քլոդ Մութաֆյանին (Ֆրանսիա):

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1996/97
ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1997, էջ 19)

6 դեկտեմբերի – Մեծ դահլիճում համերգով հանդես է գալիս Հայաստանի ռադիոընկերության սիմֆոնիկ նվագախումբը՝ ՀՀ վաստակավոր արտիստ և Պետական մրցանակի դափնեկիր, դիրիժոր, պրոֆ. Օհան Դուրյանի ղեկավարությամբ: Համերգը նվիրված էր 1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժի զոհերի հիշատակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 դեկտեմբերի 1995)

1996

Բեռլինի գրադարանային ինստիտուտի (DBI) աջակցության ծրագրով ԵՊՀ գրադարանին տրվում է 150.000 գերմանական մարկի օժանդակություն՝ եռամյա ժամկետում (1996-1999 թթ.) անհրաժեշտ նյութեր ձեռք բերելու, Ռոստոկի համալսարանի գրադարանի հետ աշխատանքային փոխայցելություններ կազմակերպելու համար:

(Տե՛ս Ասլանյան Վ., Հայրապետյան Հ., Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանը, Երևան, 2001, էջ 59)

հունվար – Համալսարանում ստեղծվում է մի նոր, Հայաստանում իր տեսակի մեջ եզակի կազմակերպություն՝ շրջանավարտների ընկերակցություն, որի նպատակն էր համալսարանի շրջանավարտներին համախմբել բուհի շուրջ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունվարի 1996)

25 հունվարի – ՀՀ վարչապետի N 26 որոշմամբ հաստատվում է Երևանի պետական համալսարանի կանոնադրությունը (ուժը կորցրել է 2001 թվականի դեկտեմբերի 15-ի N 1222 որոշումով):

(Տե՛ս ԵՊՀ պատմության քանգարանի արխիվ, ֆ. 24, գ. 8, ք. 22)

16 փետրվարի – Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ ՀՀ ԳԱԱ բոլոր թղթակից անդամները համարվում են իսկական անդամներ (ակադեմիկոսներ):

Երևանի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից ՀՀ ԳԱԱ իսկական անդամներ դարձան՝

Վլադիմիր Սարգսի Սարգսյանը,

Վլադիմիր Միքայելի Հարությունյանը,

Լիա Լևոնի Օսիպյանը,
Միսաք Արշամի Դավթյանը,
Լենդրուշ Արշակի Խուրշուդյանը,
Հրանտ Սմբատի Թամրազյանը,
Էդուարդ Ռաֆայելի Աթայանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 մարտի 1996)

29 փետրվարի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար Վալենտին Օսկոցկուն (ՌԴ) շնորհվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1996/97
ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1997, էջ 19)

4 ապրիլի – Տեղի է ունենում ԵՊՀ գիտխորհրդի ընդլայնված հանդիսավոր նիստ, որտեղ ռուս անվանի հրապարակախոս, գիտնական ու գրող, Ռուսաստանի մշակույթի վաստակավոր գործիչ Վալենտին Օսկոցկուն է հանձնվում ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման վկայականը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 ապրիլի 1996)

27 ապրիլի – ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովում Երևանի պետական համալսարանից ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ ընտրվեցին՝
Էդուարդ Վարդանի Չուբարյանը (ֆիզիկայի գծով),
Էդուարդ Մուշեղի Ղազարյանը (ֆիզիկայի գծով),
Յուրի Սերգեյի Չիլինգարյանը (ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի գծով),
Կարեն Նորայրի Քոչարյանը (ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի գծով),
Ալիդա Ավետիսի Ավետիսյանը (քիմիայի գծով),
Սամվել Կիմի Շուքուրյանը (ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի գծով),
Լևոն Մկրտչի Մկրտչյանը (գրականության գծով):

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մայիսի 1996)

27 ապրիլի – Երևանի պետական համալսարանի ուսանողության, պրոֆեսորադասախոսական կազմի և աշխատողների հյուրն էր Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրելին Ա. Ամենայն հայոց կաթողիկոսը: Նրան է հանձնվում ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման վկայականը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 մայիսի 1996)

30 ապրիլի – Մեծ դահլիճում համալսարանականների հյուրն էր արգենտինահայ բանաստեղծուհի Ալիսիա Կիրակոսյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մայիսի 1996)

20 մայիսի – «Նշանագիտություն և լեզուների դասավանդում». այս խնդրին էր նվիրված Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի միջազգային երկրորդ գիտաժողովը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունիսի 1996)

23 մայիսի – Աստվածաբանության ֆակուլտետում դեկան Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի ջանքերով բացվում է գրադարան-ընթերցարան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունիսի 1996)

23 մայիսի – Ինֆորմատիկայի և հաշվողական մաթեմատիկայի ֆակուլտետի մասնաշենքի 4-րդ հարկում բացվում է Արմեն Մարտիրոսյանի անունը կրող ժամանակակից համակարգչային կենտրոնը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 29 հունիսի 1996)

27 մայիսի – Տեղի է ունենում համալսարանական զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված հուշարձան-կոթողի (լսաչքար) բացումը Բանասիրական ֆակուլտետի մասնաշենքի հրապարակում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունիսի 1996)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 2119 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Մաթեմատիկայի՝ 144,

Մեխանիկայի՝ 17, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 179, Ֆիզիկայի՝ 108, Ռադիոֆիզիկայի՝ 83, Քիմիական՝ 59, Կենսաբանական՝ 90, Երկրաբանական՝ 60, Աշխարհագրական՝ 50, Տնտեսագիտական՝ 172, Պատմության՝ 179, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության՝ 64, Բանասիրական՝ 396, Ռուս բանասիրության՝ 67, Ռոմանագերմանական բանասիրության՝ 160, Արևելագիտության՝ 82, Իրավաբանական (այդ թվում՝ 2-րդ մասնագ. (հեռակա)) 179, Արտասահմանյան քաղաքացիների նախապատրաստական՝ 33:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1995/1996 ուս.տարվա

հաշվետվություն, Երևան, 1996, էջ 16,

տե՛ս նաև Երևանի պետական համալսարան. 1998/99

ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1999, էջ 27)

20 հունիսի – ԵՊՀ գիտխորհրդի ընդլայնված նիստում Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (ՄՀՄԻ) առաջին փոխտնօրեն, նշանավոր ֆիզիկոս, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆ. Ալեքսեյ Նորայրի Սիսակյանին է հանձնվում ԵՊՀ պատվավոր դոկտորի վկայականը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 29 հունիսի 1996)

27 հունիսի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի է ունենում հանդիպում Հայաստանի գրողների միության վարչության նախագահ, անվանի արձակագիր Հրանտ Մաթևոսյանի հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հուլիսի 1996)

հուլիս – Ինֆորմատիկայի և հաշվողական մաթեմատիկայի ու Մաթեմատիկական կիրառական և հետազոտությունների ավտոմատացման ֆակուլտետների վերամիավորմամբ ստեղծվում է Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը:

(Երևանի պետական համալսարան. 1995/96

ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1996, էջ 78)

9 հուլիսի – Հայաստանի Հանրապետությունում Չինական Ժո-

ղովրդական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան
Յան Կեժունին այցելում է Երևանի պետական համալսարան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 հուլիսի 1996)

13-18 հուլիսի – Տեղի է ունենում համահայկական ուսանողական
առաջին վեհաժողովը՝ «Հայաստանը համայն հայության հայ-
րենիքն է» նշանաբանով: Այն նախաձեռնել էր «Պարմանի» ու-
սանողական կազմակերպությունը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 հուլիսի 1996)

16 հուլիսի – Պաշտոնական այցով ԵՊՀ է այցելում Հայաստանում
Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանի ժամանա-
կավոր պաշտոնակատար, դեսպանորդ Փարվիզ Ջեյնալին:
Հանդիպման ընթացքում ԵՊՀ ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը և
դեսպանորդ Փ. Ջեյնալին ստորագրում են պայմանագիր Արևե-
լագիտության ֆակուլտետում պարսկերեն լեզվի ու գրականու-
թյան, Իրանի մշակույթի ու պատմության խնդիրներով զբաղ-
վող ուսանողների ու դասախոսների համար «Իրան» անունով
կաբինետ ստեղծելու մասին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 հուլիսի 1996)

27 հուլիսի – Աստվածաբանության ֆակուլտետի գիտխորհրդի նիս-
տում որոշվում է ֆակուլտետի նորաստեղծ գրադարանն անվա-
նել դրա հիմնադիր-բարերարի անունով՝ «Շահե Արքեպիսկո-
պոս Աճեմյանի անվան կաբինետ»:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 նոյեմբերի 1996)

12 օգոստոսի – Վախճանվում է ազգային հերոս, ՀՀ գիտություննե-
րի ազգային ակադեմիայի պատվավոր նախագահ, աշխար-
հահռչակ աստղագետ, աշխարհի բազմաթիվ ակադեմիկոսների
անդամ, ակադեմիկոս Վիկտոր Համազասպի Համբարձումյա-
նը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 սեպտեմբերի 1996)

3 հոկտեմբերի – Երևանի պետական համալսարանի գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի է ունենում ՀՀ արտաքին գործերի նախարարության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողովի և Երևանի պետական համալսարանի հայ արվեստի պատմության ՅՈՒՆԵՍԿՕ-ի նորաստեղծ ամբիոնի կազմակերպած միջազգային գիտաժողովի բացումը՝ «Հայ արվեստը և ճարտարապետությունը» նշանաբանով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հոկտեմբերի 1996)

19 հոկտեմբերի – ԵՊՀ ռեկտոր Ռ. Մարտիրոսյանն ընդունում է գերմանացի երիտասարդ գիտնական, դոկտոր Քրիստիան Շնիցլերին: Նրան շնորհվում են ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում և ԵՊՀ հոբելյանական հուշամեդալ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 նոյեմբերի 1996)

25 հոկտեմբերի – Աստվածաբանության ֆակուլտետի նախաձեռնությամբ տեղի է ունենում «Քրիստոնեական մշակույթի ուսումնասիրության համալսարանական ուսանողների կենտրոն» հասարակական կազմակերպության հիմնադիր ժողովը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 հոկտեմբերի 1996)

31 հոկտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ Տնտեսագիտության ֆակուլտետում ստեղծվում է կառավարման և գործարարության (մենեջմենթի և բիզնեսի) ամբիոն:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 14 դեկտեմբերի 1996)

6 նոյեմբերի – Հայաստանի Հանրապետության վարչապետ Արմեն Սարգսյանը համալսարանում հանդիպում է հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորների խորհրդի անդամների հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 նոյեմբերի 1996)

6 նոյեմբերի – Համալսարանի գիտխորհրդի նիստերի դահլիճում իր աշխատանքն է սկսում «Անգլիական բանասիրության և անգլե-

րենի ուսուցման խնդիրները Հայաստանում. նվաճումներ և հեռանկարներ» քննայով գիտաժողովը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 նոյեմբերի 1996)

7 նոյեմբերի – Տեղի է ունենում համալսարանի ուսանողության արհկոմիտեի կազմակերպած հուշ-ցերեկույթը՝ նվիրված Արցախյան հերոսամարտերում զոհված համալսարանական ազատամարտիկներին՝

Թաթուլ Կրպեյանին,
Վարդան Հովհաննիսյանին,
Տիգրան Սարգսյանին,
Վարդան Բախշյանին,
Պետրոս Ղևոնդյանին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 նոյեմբերի 1996)

19 նոյեմբերի – Գիտական գրադարանի դահլիճում ԵԱՀԿ միջխորհրդարանական վեհաժողովի փոխնախագահ, Գերմանիայի Բունդեսթագի գերմանակովկասյան խմբի նախագահ Վիլլի Վիմմերը հանդիպում է համալսարանականների հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 նոյեմբերի 1996)

28 նոյեմբերի – ԵՊՀ-ում հյուրընկալվում է Ճապոնիայի հայտնի գիտնական, հասարակական-քաղաքական գործիչ, պրոֆեսոր Կագուրո Իման: ԵՊՀ ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը և պրոֆեսոր Կագուրո Իման ստորագրում են համագործակցության պայմանագիր: Ի հուշ բարեկամական հանդիպման՝ ռեկտորը հյուրին շնորհում է ԵՊՀ հորելյանական հուշամեդալ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 14 դեկտեմբերի 1996)

27 դեկտեմբերի – ԵՊՀ է այցելում Իրանի Իսլամական Հանրապետության առաջին փոխնախագահ, դոկտոր Հասան Հաբիբին: Նույն օրը մեծարգո հյուրը մասնակցում է նաև Արևելագիտության ֆակուլտետում պարսից լեզվի կաբինետի բացմանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 դեկտեմբերի 1996)

1997

1996-1997 ուստարում ԵՊՀ-ում դասախոսում էին 210 պրոֆեսոր, 514 դոցենտ, 142 ավագ դասախոս, 266 դասախոս, 162 ասիստենտ, սովորում էր 8028 ուսանող:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1996/97 ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1997, էջ 21-22)

14 փետրվարի – Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Միշել Լեգրանը ռեկտոր Ռ. Մարտիրոսյանի հրավերով այցելում է համալսարան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 փետրվարի 1997)

14-15 մարտի – Տեղի է ունենում «Բարակապատ համակարգերի մեխանիկայի ժամանակակից հարցեր» թեմայով գիտաժողով՝ նվիրված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Ալեքսանդրի Համբարձումյանի ծննդյան 75-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մարտի 1997)

20 մարտի – Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի փոխնախարար Մահմուդ Վայեզին, Հայաստանում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան Համիդ Ռեզա Նիքար Էսֆահանին այցելում են համալսարան: Նրանք Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության կաբինետին ԻԻՀ դեսպանատան միջոցով նվիրում են պարսկերենով ընտիր գրականություն:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մարտի 1997)

17 ապրիլի – Համալսարանի գիտական գրադարանի դահլիճում կազմակերպվում է թարգմանության խնդիրներին նվիրված գի-

տաժողով Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի անգլիական բաժնի նախաձեռնությամբ: Այն իր տեսակի մեջ առաջինն էր, որ քննում էր զուտ քարգմանական խնդիրներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 ապրիլի 1997)

8-9 մայիսի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում կազմակերպվում է միջազգային գիտաժողով՝ նվիրված ՀՀ-ում իրավաբանական կրթության խնդիրներին և զարգացման հեռանկարներին: Այն հովանավորում է ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալությունը (USAID):

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մայիսի 1997)

25 մայիսի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ բարեգործական մեծ ներդրումների և հասարակական-հայրենասիրական բեղուն գործունեության համար Տիգրան Իզմիրյանին (Շվեյցարիա) և գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար Յուզեֆ Բրիլլային (Սլովակիա) շնորհվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1996/97 ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1997, էջ 19)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1768 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Մաթեմատիկայի՝ 125, Մեխանիկայի՝ 21, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 184, Ֆիզիկայի՝ 87, Ռադիոֆիզիկայի՝ 83, Քիմիական՝ 58, Կենսաբանական՝ 87, Երկրաբանական՝ 58, Աշխարհագրական՝ 81, Տնտեսագիտական՝ 158, Պատմության՝ 140, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության՝ 72, Բանասիրական՝ 169, Ռուս բանասիրության՝ 47, Ռոմանագերմանական բանասիրության՝ 195, Արևելագիտության՝ 91, Իրավաբանական (այդ թվում՝ 2-րդ մասնագ. (հեռակա)) 112:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1996/1997 ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1997, էջ 23)

9 հունիսի – ԵՊՀ գիտական գրադարանը անվանակոչվում է շվեյցարահայ բարերարներ «Սարգիս և Մարի Իզմիրլյանների» պատվին: Հանդիսությանը ներկա էին ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը և պաշտոնատար այլ անձինք:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 հունիսի 1997)

9 հունիսի – ԵՊՀ գիտխորհրդի ընդլայնված նիստում սփյուռքահայ ազգանվեր գործիչ Սարգիս Իզմիրլյանի որդուն՝ Տիգրան Իզմիրլյանին է հանձնվում ԵՊՀ պատվավոր դոկտորի վկայականը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 հունիսի 1997)

12 հունիսի – ԵՊՀ ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանն ընդունում է ՀՀ-ում Իսրայելի արտակարգ և լիազոր դեսպան տիկին Լիլի Խախամիին: Հանդիպման նպատակն էր Երուսաղեմի և Երևանի համալսարանների միջև համագործակցության զարգացումը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունիսի 1997)

11 հուլիսի – ԵՊՀ հոգեբանության ամբիոնում տեղի է ունենում հայ և վրացի հոգեբան-գիտնականների հանդիպում: Համագործակցության նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 սեպտեմբերի 1997)

15 հուլիսի – ԵՊՀ գիտխորհրդի նիստում քննարկվում և որոշ լրացումներով ու փոփոխություններով միաձայն ընդունվում է «Երևանի պետական համալսարանի ամբիոնի պատվավոր վարիչ» կոչում սահմանելու որոշումը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 սեպտեմբերի 1997)

28 օգոստոսի – Համալսարանի գիտխորհրդի որոշմամբ Անուշ Մաթևոսյանին (ԱՄՆ) ԵՊՀ կրթամշակութային կենտրոնի ստեղծման

գործում բարեգործական խոշոր ներդրման համար շնորհվում է ԵՊՀ պատվավոր բարերարի կոչում: Նույն նիստում ԵՊՀ համակարգչային կենտրոնի ստեղծման գործում բարեգործական խոշոր նվիրատվություն անելու համար ԵՊՀ պատվավոր բարերարի կոչում է շնորհվում մաս Ժորժ և Շուշիկ Մարտիրոսյաններին (ԱՄՆ):

(Տե՛ս Երևանի պետական համալսարան 1996/97 ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1997, էջ 20)

4 սեպտեմբերի – Բանասիրական ֆակուլտետի մասնաշենքում մեծ հանդիսավորությամբ բացվում է սփյուռքահայ բարեգործ Ս. Մաթևոսյանի անվան կրթամշակութային կենտրոնը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 սեպտեմբերի 1997)

13 սեպտեմբերի – ՀՀ վարչապետ Ռոբերտ Քոչարյանն ու կրթության և գիտության նախարար Արտաշես Պետրոսյանը հանդիպում են ուսանողության և պրոֆեսորադասախոսական կազմի հետ: Ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը վարչապետին հանձնում է համալսարանի հոբելյանական հուշամեդալ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 սեպտեմբերի 1997)

24 սեպտեմբերի – ԵՊՀ հրավերով բարեկամական այցով Երևան էին ժամանել Ռոստոկի համալսարանի գրադարանի տնօրեն, դոկտոր Պիտեր Հոֆմանը և գրադարանի արտասահմանյան գրականության կապերի բաժնի վարիչ տիկին Մարի Շումախերը: Հանդիպման նպատակն էր ամրապնդել երկու երկրների միջև բարեկամական կապերը և մշակութային փոխառնչությունները:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հոկտեմբերի 1997)

13 հոկտեմբերի – Ռեկտորատի նիստում Երևանի և Բոլոնիայի (Իտալիա) համալսարանների միջև կնքվում է համագործակցության պայմանագիր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 նոյեմբերի 1997)

30 հոկտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ 20-րդ դարի գրականության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների և ժողովուրդներին մերձեցնող հասարակական գործունեության համար Անդրեյ Բիտովին (ՌԴ) շնորհվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան 1996/97 ուստարվա հաշվետվություն, Երևան, 1997, էջ 19)

14 նոյեմբերի – Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գերմաներենի ամբիոնին կից բացվում է ավստրիական գրադարան-ընթերցարանի Ավստրիայի արտաքին գործերի նախարարության աշխատակից, Հարավային Կովկասի Ատեշեի պատասխանատու Հայդեմարի Գյուրերի օժանդակությամբ:

(«Երևանի համալսարան», 30 նոյեմբերի 1997)

10-11 դեկտեմբերի – ԵՊՀ գիտական գրադարանի դահլիճում տեղի է ունենում «Ժողովրդական գործընթացները Հայաստանում» գիտագործնական կոնֆերանսը՝ նվիրված ՄԱԿ-ի ընդունած մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 50-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 դեկտեմբերի 1997)

11 դեկտեմբերի – Համալսարանականների հյուրն էր Ուկրաինայում և Հայաստանի Հանրապետությունում Ինդոնեզիայի արտակարգ և լիազոր դեսպան Գդե Արսու Կադգարը: Հանդիպման ընթացքում քննարկվում են երկու երկրների համալսարանների միջև կայանալիք համագործակցության հարցեր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 դեկտեմբերի 1997)

23 դեկտեմբերի – Համալսարանի գիտխորհրդի որոշմամբ գիտականակերպչական բեղուն գործունեության համար DESY գիտական կենտրոնի ֆիզիկական հետազոտությունների գծով փոխտնօրեն Գերհարդ Ջոնգենին (Գերմանիա) շնորհվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1997/1998 ուստարվա հաշվետվություն, Երևան, 1998, էջ 20, տե՛ս նաև «Երևանի համալսարան», 15 հունվարի 1998)

1998

1997-1998 ուստարում ԵՊՀ-ում դասախոսում էին 201 պրոֆեսոր, 514 դոցենտ, 144 ավագ դասախոս, 301 դասախոս, 169 ասիստենտ, սովորում էր 7960 ուսանող:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1997/98 ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1998, էջ 22, 23)

1997-1998 ուստարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում սովորում էր 652 ուսանող:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1997/98 ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1998, էջ 286)

19 հունվարի – ԵՊՀ գիտական գրադարանի մամուլի սրահում բացվում է ցուցահանդես՝ նվիրված «Բրիտանական շաբաթին»: Բացմանը ներկա էին Հայաստանում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր դեսպան, դոկտոր Ջոն Միքչինները, ԵՊՀ ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը, Մեծ Բրիտանիայի հայ համայնքի ներկայացուցիչներ, պաշտոնատար այլ անձինք:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 հունվարի 1998)

13 փետրվարի – Արևելագիտության ֆակուլտետում բացվում է Ֆիրդուսու անվան իրանագիտության սրահ: Արարողությանը մասնակցում էր ՀՀ վարչապետ Ռ. Քոչարյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 14 փետրվարի 1998)

17 փետրվարի – Տեղի է ունենում համալսարանի գիտխորհրդի հերթական ընդլայնված նիստը՝ նվիրված արցախահայության ազգային-ազատագրական պայքարի 10-րդ տարեդարձին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 28 փետրվարի 1998)

28 փետրվարի – ԵՊՀ արհմիության ուսանողական ակումբների համադաշնության «Բայրոնյան ընկերակցությունը» հանդիպում է կազմակերպում ամերիկյան համալսարանի պրոֆեսոր Վիրջիլ Սլոմայերի հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մարտի 1998)

2 ապրիլի – Համալսարանի գիտխորհրդի նիստում գերմանացի անվանի ֆիզիկոս, DESY գիտական կենտրոնի գիտական հետազոտությունների գծով փոխտնօրեն, պրոֆեսոր Գերհարդ Ջոնգենին է հանձնվում ԵՊՀ պատվավոր դոկտորի վկայականը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 ապրիլի 1998)

14 ապրիլի – ԵՊՀ գիտական գրադարանի նախաձեռնությամբ տեղի է ունենում տաղանդավոր դերասան, ասմունքող Վլադիմիր Աբաջյանի հանդիպումը ուսանողների հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 ապրիլի 1998)

23 ապրիլի – ԵՊՀ գիտական գրադարանի դահլիճում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված Մեծ եղեռնի 83-րդ տարելիցին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 ապրիլի 1998)

2 մայիսի – Բանասիրական ֆակուլտետի մասնաշենքում բացվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի տեղեկատվության և փաստաթղթերի կենտրոնը: Այդ առթիվ շնորհավորանքի խոսք է ասում ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով հայկական ազգային հանձնաժողովի գլխավոր քարտուղար Վարդուհի Ասատրյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 մայիսի 1998)

11-17 մայիսի – Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում գումարվում է Վիլյամ Շեքսպիրին նվիրված միջազգային գիտաժողով: Այն կազմակերպել էր անգլիական բանասիրության ամբիոնը: Դա ամբիոնի թարգմանչական ճյուղի 7 տարիների աշխատանքի ամփոփումն էր մասնավորապես շեքսպի-

րագիտության բնագավառում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունիսի 1998)

26 մայիսի – ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրյանների անվան գիտական գրադարանի դահլիճում Պատմության ֆակուլտետը համատեղ գումարում է գիտաժողով՝ նվիրված 1918 թ. մայիսյան հերոսամարտերի 80-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 մայիսի 1998)

30 մայիսի – Իրավաբանական ֆակուլտետում բացվում է համակարգչային կենտրոն-գրադարան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 հունիսի 1998)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1314 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Մաթեմատիկայի՝ 64, Մեխանիկայի՝ 14, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 135, Ֆիզիկայի՝ 67, Ռադիոֆիզիկայի՝ 79, Քիմիական՝ 56, Կենսաբանական՝ 88, Երկրաբանական՝ 24, Աշխարհագրական՝ 30, Տնտեսագիտության՝ 112, Պատմության՝ 103, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության՝ 67, Բանասիրական՝ 137, Ռուս բանասիրության՝ 43, Ռոմանագերմանական բանասիրության՝ 148, Արևելագիտության՝ 68, Իրավաբանական (այդ թվում՝ 2-րդ մասնագ. (հեռակա))՝ 79:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1997/98 ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1998, էջ 24)

հունիս – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը տալիս է 170 շրջանավարտ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1997/98 ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1998, էջ 286)

29 հունիսի - 4 հուլիսի – ԵՊՀ-ում անցկացվում է «Դասական և քվանտային ինտեգրվող համակարգեր» թեմայով III միջազգային գիտական կոնֆերանսը, որը կազմակերպել էին տեսական ֆիզիկայի ամբիոնը և «Դուբնայի» (Ռուսաստան) միջուկային

հետազոտությունների միացյալ ինստիտուտը: Գիտաժողովին մասնակցում էին 40-ից ավելի գիտնականներ տարբեր երկրներից:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 սեպտեմբերի 1998)

16 սեպտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ Պատմության ֆակուլտետի միջազգային հարաբերությունների բաժնի հենքի վրա ստեղծվում է Միջազգային հարաբերությունների ֆակուլտետը (դեկան՝ Էդիկ Զոհրաբյան):

(Տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ http://www.ysu.am/site/index.php?lang=1&page=3&p_num=&id=85, տե՛ս նաև «Երևանի համալսարան», 15 հոկտեմբերի 1998)

23 սեպտեմբերի – ԵՊՀ-ի և Փարիզի արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի միջև կնքվում է համագործակցության պայմանագիր, համաձայն որի՝ նախատեսվում էին երկու ուսումնագիտական հաստատությունների միջև գիտական ու մշակութային տարբեր բնույթի միջոցառումներ, ուսանողների ու դասախոսների փոխալյցելություններ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հոկտեմբերի 1998)

22 հոկտեմբերի – Հայաստանում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Անդրեյ Ուռնովը լիազորությունները ավարտելու կապակցությամբ այցելում է ԵՊՀ: Ի հիշատակ հանդիպման՝ ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը հյուրին է հանձնում ԵՊՀ հորելյանական ոսկե հուշամեդալ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 հոկտեմբերի 1998)

23 հոկտեմբերի – ԵՊՀ է այցելում Հայաստանում Սիրիայի Արաբական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Համիդ Հասանը՝ իր պետության կրթության նախարարության համձնարարականով: Սիրիայի տարբեր համալսարանների կողմից ուղարկված ավելի քան 300 միավոր գրականությունը դեսպանը

հանձնում է ԵՊՀ գիտական գրադարանին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 հոկտեմբերի 1998):

26 հոկտեմբերի – ԵՊՀ-ն հյուրընկալում է Հունաստանի Սալոնիկ քաղաքի Արիստոտելի անվան համալսարանի պատվիրակությանը: Կնքվում է համագործակցության պայմանագիր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 հոկտեմբերի 1998)

7 նոյեմբերի – Բանասիրական ֆակուլտետի մանկավարժության ամբիոնում տեղի է ունենում դեռևս 4 տարի առաջ հիմնված Աստրիկ Ազնավուրյանի անունը կրող կենտրոնի պաշտոնական բացումը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 նոյեմբերի 1998)

7 նոյեմբերի – Սփյուռքահայ ճանաչված բարերարներ տեր և տիկին Պալյանների ներկայությամբ տեղի է ունենում «Վարդգես և Ռիտա Պալեանների անվան գիտաժողովների դահլիճի» հանդիսավոր բացումը: Ներկա էին Հայաստանում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան Մայքլ Լեմանը, Սիրիայի արտակարգ և լիազոր դեսպան Համիդ Հասանը, «ԵՊՀ բարեկամների միություն» կազմակերպության նախագահ Վարդգես Պալյանը, ատենադպիր Երվանդ Ազատյանը, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ, մամուլի ներկայացուցիչներ, բազմաթիվ հյուրեր, ուսանողներ և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 նոյեմբերի 1998)

24 նոյեմբերի – ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանի և պաշտոնատար այլ անձանց ուղեկցությամբ ԵՊՀ Վարդգես և Ռիտա Պալեանների անվան դահլիճում տեղի է ունենում հանդիպում Լեհաստանի արտգործնախարար Բրոնիսլավ Գերեմեկի և ուսանողության հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 նոյեմբերի 1998)

30 նոյեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի ընդլայնված նիստում տեղի ունեցավ հանդիպում ՀՀ վարչապետը Ա. Դարբինյանի հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 դեկտեմբերի 1998)

10-12 դեկտեմբերի – Բանասիրական ֆակուլտետի մանկավարժության ամբիոնը կազմակերպում է Սպիտակի 1988 թ. աղետալի երկրաշարժի 10-ամյակին նվիրված գիտաժողով՝ «Երեխաների դաստիարակության խնդիրներն աղետի գոտում» թեմայով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 դեկտեմբերի 1998)

21 դեկտեմբերի – ԵՊՀ Ե. Չարենցի անվան դահլիճում տեղի է ունենում հանդիպում ԼՂՀ պաշտպանության նախարար, գեներալ-լեյտենանտ Սամվել Բաբայանի հետ ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության նախաձեռնությամբ: ԵՊՀ ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը հյուրին նվիրում է համալսարանի մեդալը՝ ի նշան առաջին անգամ ԵՊՀ այցելության:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 դեկտեմբերի 1998)

25 դեկտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ գիտության բնագավառում ձեռք բերած նվաճումների և հայրենասիրական բեղուն գործունեության համար Երվանդ Ազատյանին (ԱՄՆ) և Զավեն Եկավյանին (Պորտուգալիա) շնորհվում են ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչումներ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1998/99 ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1999, էջ 17)

1999

1998-1999 ուստարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում սովորում էր 644 ուսանող:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1998/99 ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1999, էջ 290)

16-19 փետրվարի – Թուրքիայի Սիջին Արևելքի տեխնիկական համալսարանի հրավերով Անկարա է մեկնում ԵՊՀ պատվիրակությունը՝ Ռ. Մարտիրոսյանի գլխավորությամբ: Այնտեղ ստորագրվում է համագործակցության համաձայնագրի հուշագիր՝ դասախոսների և ուսանողների փոխանակման, տարածքային համատեղ հետազոտությունների անցկացման, ուսումնական, մշակութային ու մարզական կապերի հաստատման մասին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 27 փետրվարի 1999)

24 փետրվարի – ԵՊՀ Ե. Չարենցի անվան դահլիճում տեղի է ունենում հանդիպում ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Սկրտչյանի հետ: Զննարկվում է «Կրթության մասին» օրենքի նախագիծը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 27 փետրվարի 1999)

25 փետրվարի – Համալսարանի գիտխորհրդի որոշումով Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանին (ԱՄՆ) ԵՊՀ-ին հումանիտար օգնություն կազմակերպելու համար շնորհվում է ԵՊՀ պատվավոր բարերարի կոչում:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1998/99 ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1999, էջ 18)

26 փետրվարի – Համալսարանի ռեկտորի N 42 հրամանով՝ ԵՊՀ հիմնադրման 80-ամյակը նշելու և անցկացնելու նպատակով ստեղծվում է կազմկոմիտե (նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան):

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 մարտի 1999)

10 մարտի – Համալսարանի ուսանողության հյուրն էր ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը. հանդիպումը կրում էր «Բանակ և ուսանողություն» կարգախոսը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 մարտի 1999)

18 մարտի – Վարդգես և Ռիտա Պալեանների անվան նիստերի դահլիճում համալսարանականների հյուրն էր ՀՀ նախագահի արտաքին կապերի գծով խորհրդական, ՀՀ դեմոկրատական կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մարտի 1999)

23 մարտի – ԵՊՀ Վարդգես և Ռիտա Պալեանների անվան դահլիճում տեղի է ունենում Հայաստանի մարդկային զարգացման չորրորդ զեկույցի («Պետության դերը Հայաստանում մարդկային զարգացման ազգային զեկույցում») շնորհանդեսը: Ներկա էին ՀՀ վարչապետը, կառավարության անդամներ, Հայաստանում ՄԱԿ-ի մշտական ներկայացուցիչներ, գիտնականներ, դասախոսներ և բազմաթիվ ուսանողներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մարտի 1999)

27 մարտի – Բանասիրական ֆակուլտետի մասնաշենքում տեղի է ունենում ուսանողական ակումբների համադաշնության մեջ մտնող Մովսես Խորենացու անվան երիտասարդ պատմաբանների ակումբի բացումը: Ակումբի նպատակն է ազգային տոների նշումը, գիտաժողովների և մշակութային միջոցառումների կազմակերպումը համալսարանում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մարտի 1999)

30 մարտի – ԵՊՀ ռեկտորատը մեծ դահլիճում կազմակերպում է մեծարձան ցերեկույթ՝ նվիրված անվանի բանաստեղծուհի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սիլվա Կապուտիկյանի ծննդյան 80-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 ապրիլի 1999)

2 ապրիլի – ԵՊՀ Վարդգես և Ռիտա Պալեանների անվան դահլիճում տեղի է ունենում հանդիպում Հայաստանում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Չժու Չժաոշունի հետ: Վերջինս հանդես է գալիս «Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտաքին քաղաքականությունը և հայ-չինական հարաբերությունները» թեմայով դասախոսությամբ:

(«Երևանի համալսարան», 15 ապրիլի 1999)

14 ապրիլի – Ազգային ժողովը ընդունում է կրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքը:

(Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.), գիրք Բ, էջ 887)

29 ապրիլի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ գիտության բնագավառում ձեռք բերած նվաճումների և հասարակական բեղուն գործունեության համար Հունաստանի նախագահ Կոստանտինոս Ստեֆանոպոլոսին շնորհվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1998/99 ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1999, էջ 17)

մայիս – ԵՊՀ հյուրն էին Թուրքիայի հայոց նորընտիր պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը և պոլսահայ մի խումբ ուխտավորներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մայիսի 1999)

13 մայիսի – Հունաստանի նախագահ Կոստանտինոս Ստեֆանոպոլոսը ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի հետ այցելում է ԵՊՀ:

Այդ օրը հանդիսավոր պայմաններում բացվում է Հունաստանի Կառավարության հովանավորությամբ հիմնված Հունագիտական կենտրոն-գրադարանը: Հունաստանի նախագահին է հանձնվում ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման վկայականը:

(Տե՛ս Ասլանյան Վ., Հայրապետյան Հ., Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանը, Երևան, 2001, էջ 59, տե՛ս նաև «Երևանի համալսարան», 31 մայիսի 1999)

13 մայիսի – ԵՊՀ Ե. Չարենցի անվան դահլիճում տեղի է ունենում հանդիպում ՀՀ ազգային ռադիոյի տնօրեն Ա. Ամիրյանի հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մայիսի 1999)

15 մայիսի – Ռեկտորատի նիստում ԵՊՀ պատվավոր բարերարի կոչման վկայական է ստանում Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունիսի 1999)

18-20 մայիսի – Գյումրի քաղաքում տեղի է ունեցնում եռօրյա գիտա-ժողով՝ նվիրված ԵՊՀ հիմնադրման 80-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունիսի 1999)

25 մայիսի – Մեծ դահլիճում առաջին անգամ հյուրընկալվում են Արցախի պետական համալսարանի ուսանողության և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները (ի դեմս ռեկտոր Պ. Գևորգյանի):

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունիսի 1999)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 2697 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Մաթեմատիկայի՝ 121, Մեխանիկայի՝ 50, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 203, Ֆիզիկայի՝ 106, Ռադիոֆիզիկայի՝ 116, Քիմիա-

կան՝ 121, Կենսաբանական՝ 211, Երկրաբանական՝ 85, Աշխարհագրական՝ 81, Տնտեսագիտության՝ 223, Պատմության՝ 104, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության՝ 161, Միջազգային հարաբերությունների՝ 50, Բանասիրական՝ 236, Ռուս բանասիրության՝ 87, Ռոմանագերմանական բանասիրության՝ 300, Արևելագիտության՝ 141, Իրավաբանական (այդ թվում՝ 2-րդ մասնագ. (հեռակա)) 276, Աստվածաբանության՝ 25:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1998/99 ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1999, էջ 27)

հունիս – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը տալիս է 128 շրջանավարտ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 1998/99 ուս.տարվա հաշվետվություն, Երևան, 1999, էջ 290)

2 հուլիսի - Համալսարանում բացվում է դեղագործության ամբիոն:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 մարտի 1999)

26 օգոստոսի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ Լևոն Մակարյանին (ՀՀ) և Հելեն Թաքեսյանին (ԱՄՆ) բարեգործական օգնություն կազմակերպելու համար շնորհվում է ԵՊՀ պատվավոր բարերարի վկայական:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2001-2002 ուստարվա հաշվետվություն, Երևան, 2002, էջ 22)

22 սեպտեմբերի – Տեղի է ունենում պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների տարեկան գիտական նստաշրջան՝ նվիրված համալսարանի 80-ամյա հոբելյանին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 սեպտեմբերի 1999)

1 հոկտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում է շնորհվում.

Ժան-Ժակ Սերանոյին (Ֆրանսիա),
 Ժան-Կլոդ Գրիոյին (Ֆրանսիա),
 Միշել Գերոյին (Ֆրանսիա),
 Յուրի Հովհաննիսյանին (ՌԴ),
 Ստեֆան Ֆովինին (Ֆրանսիա):

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2001-2002
 ուստարվա հաշվետվություն, Երևան, 2002, էջ 22)

1 հոկտեմբերի – ԵՊՀ ռեկտորատի որոշմամբ ստեղծվում է Ժուռնալ-
 լիստիկայի ֆակուլտետը (ղեկան՝ Գառնիկ Անանյան):

(Տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝
http://www.ysu.am/site/index.php?lang=1&page=3&p_num=&id=69)

4 հոկտեմբերի – ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի հրամանագրով՝
 ԵՊՀ 80-ամյա հոբելյանի կապակցությամբ համալսարանի մի
 խումբ դասախոսներ և աշխատակիցներ պարգևատրվել են ՀՀ
 շքանշաններով ու մեդալներով:

«Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով պարգևատրվել է
 ռեկտոր Ռ. Մ. Մարտիրոսյանը,

«Մովսես Խորենացի» մեդալով՝

Է. Ռ. Աթայանը, Հ. Խ. Բարսեղյանը, Վ. Ա. Դիլոյանը, Լ. Հ.
 Հարությունյանը, Գ. Ա. Ղարիբյանը, Ռ. Խ. Մաթևոսյանը, Լ. Ս.
 Մարտիրոսյանը, Գ. Վ. Մելիքյանը,

«Անանիա Շիրակացի» մեդալով՝

Ա. Ա. Ավետիսյանը, Ս. Ի. Բալասանյանը, Ս. Պ. Բալյանը, Ռ.
 Մ. Հարությունյանը, Վ. Մ. Հարությունյանը, Վ. Ս. Սարգսյանը,
 Դ. Մ. Սեդրակյանը, Յու. Լ. Վարդանյանը, Ռ. Ն. Տոնոյանը,

«Մխիթար Գոշ» մեդալով՝

Գ. Ս. Ղազինյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հոկտեմբերի 1999)

5 հոկտեմբերի – ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի բակում տեղի է
 ունենում 7-րդ դարի գիտնական, աստղագետ և մաթեմատիկոս
 Անանիա Շիրակացու արձանի, իսկ կենտրոնական մասնա-

շենքի ճեմասրահում՝ Յուրի Ղամբարյանի և Վիկտոր Համբարձումյանի կիսանդրիների բացման արարողությունը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հոկտեմբերի 1999)

6 հոկտեմբերի – ԵՊՀ 80-ամյակին էր նվիրված հոբելյանական հանդիսությունների շրջանակում Ալ. Սպենդիարյանի անվան ազգային օպերայի և բալետի թատրոնում տեղի ունեցած հանդիսավոր նիստը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հոկտեմբերի 1999)

24 դեկտեմբերի – Պատմության ֆակուլտետի Վարդգես և Ռիտա Պալեանների անվան դահլիճում գումարվում է գիտաժողով՝ նվիրված Ղևոնդ Ալիշանի ծննդյան 180-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունվարի 2000)

2000

1999-2000 ուսումնական տարում ԵՊՀ բակալավրիատում սովորում էր 6876 ուսանող (Քիմիայի ֆակուլտետում 5-ամյա ուսուցմամբ՝ 328), մագիստրատուրայում՝ 481 ուսանող և 196 ասպիրանտ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 1999/2000 ուստարի, Երևան, 2000, էջ 23, 24, 26)

1999-2000 ուստարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն ուներ 693 ուսանող:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 1999/2000 ուստարի, Երևան, 2000, էջ 293)

փետրվար-մարտ – Փոխադարձ այցելության շրջանակներում ԱՄՆ-ի Կալիֆոռնիայի (Ֆրեզնո) պետական համալսարան է այցելում ԵՊՀ պատվիրակությունը՝ ռեկտոր Ռ. Մարտիրոսյանի գլխավորությամբ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 29 ապրիլի 2000)

8-9 փետրվարի – ՀՀ կրթության և գիտության նախարարության նախաձեռնությամբ ԵՊՀ-ում տեղի է ունենում սեմինար-խորհրդակցություն՝ նվիրված բարձրագույն կրթության կատարելագործմանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 25 փետրվարի 2000)

24 փետրվարի – ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի հրամանագրով գիտության և կրթության ասպարեզում ներդրած նշանակալի ավանդի համար Երևանի պետական համալսարանի պրոռեկտոր, բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Սեմյոն Տիգրանի Հախումյանը պարգևատրվում է «Մովսես Խորենա-

ցի» մեղալով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 25 փետրվարի 2000)

13 մարտի – ԵՊՀ Ե. Չարենցի անվան դահլիճում գումարվում է համատեղ գիտաժողով: Մասնակցում էին Մոսկվայի իտալական մշակույթի ինստիտուտի ռեկտորը, Հայաստանում Իտալիայի հյուպատոսարանի հյուպատոսի պաշտոնակատար Անտոնիո Մոնտալտեն, պրոֆեսոր Ջակոմո Գամբետին և այլք:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մարտի 2000)

15 մարտի - 16 մայիսի – ԵՊՀ-ում մեկնարկում է «Ուսանողական գալուց-2000» ավանդական ամենամյա փառատոնը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 մայիսի 2000)

27 մարտի – Նշվեց Կենսաբանական ֆակուլտետի գործունեության 65-ամյակը: Ներկաները մասնակցում են հիմնովին վերանորոգված հանդիսասրահի բացման արարողությունը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 ապրիլի 2000)

4 ապրիլի – ԵՊՀ ռեկտորատի և Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ղեկավարության նախաձեռնությամբ ուսանողների հյուրն էր ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 ապրիլի 2000)

11 ապրիլի – ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի հրամանագրով Գևորգ Ջախոկյանը պարգևատրվում է «Սբ. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 29 ապրիլի 2000)

14 ապրիլի – Աստվածաբանության ֆակուլտետի ուսանողներին և դասախոսներին է այցելում Ամենայն հայոց կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Գարեգին Բ-ն:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 29 ապրիլի 2000)

20 ապրիլի – Արևելագիտության ֆակուլտետում բացվում է Սյուզան Մուքարաբի անվան դասասրահը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 մայիսի 2000)

1 մայիսի – Երևանի պետական համալսարանի և Անկարայի համալսարանի միջև ստորագրվում են գիտամանկավարժական փոխադարձ համագործակցության «Համաձայնագիր» և «Աշխատանքային ծրագիր»:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 մայիսի 2000)

23-29 մայիսի – ԵՊՀ-ում կազմակերպվում է միջազգային գիտաժողով՝ «Անապատացման գործընթացի կենսաաշխարհագրական և էկոլոգիական ասպեկտները չորային և կիսաչորային շրջաններում» թեմայով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունիսի 2000)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 1754 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Մաթեմատիկայի՝ 80 բակալավր, 4 մագիստրոս²¹, Մեխանիկայի՝ 27 բակալավր, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 116 բակալավր, Ֆիզիկայի՝ 59 բակալավր, 8 մագիստրոս, Ռադիոֆիզիկայի՝ 48 բակալավր, 2 մագիստրոս, Քիմիական (ներառյալ 5-ամյա ուսուցմամբ շրջանավարտները) 107 բակալավր, Կենսաբանական՝ 92 բակալավր, Երկրաբանական՝ 59 բակալավր, Աշխարհագրական՝ 53 բակալավր, Տնտեսագիտության՝ 158 բակալավր, 7 մագիստրոս, Պատմության՝ 72 բակալավր, 1 մագիստրոս, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության՝ 113 բակալավր, 2 մագիստրոս, Միջազգային հարաբերությունների՝ 27 բակալավր, 6 մագիստրոս, Բանասիրական՝ 98 բակալավր, 2 մագիստրոս, Ժողովրդագրության՝ 45 բակալավր, Ռուս բանասիրության՝ 54 բակալավր, Ռոմանագերմանական բանասիրության՝ 204 բակալավր, Արևելագիտության՝ 75 բակալավր, Իրավաբանական (ներառյալ 2-րդ մասնագիտության՝ հեռակա շրջանավարտները) 185 բակալավր, Աստվածաբա-

նության՝ 50 բակալավր:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 1999/2000
ուստարի, Երևան, 2000, էջ 28)

հունիս – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը տալիս է 136 շրջանավարտ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան.
հաշվետվություն 1999/2000 ուստարի, Երևան, 2000, էջ 293)

հոկտեմբեր – Ամենամյա այցով ԵՊՀ կենսաբանական ֆակուլտետի
գեներտիկայի և բջջաբանության ու մանրէաբանության ամբիոն-
ները հյուրընկալում են Ֆրանսիայի մի խումբ կենսաբանների:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 նոյեմբերի 2000)

6 հոկտեմբերի – Մեծ դահլիճում նշվում է Երևանի Անանիա Շիրակա-
ցու անվան ճեմարան-գիտակրթական համալիրի հիմնադրման
10-ամյակը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 14 հոկտեմբերի 2000)

1 նոյեմբերի – ԵՊՀ-ում տեղի է ունենում երկու խոշոր իրադարձություն.
բացվում են Իրավաբանական և Պատմության ֆակուլտետնե-
րի հիմնադրոգված հարկաբաժինները: Շինարարական աշ-
խատանքներն իրականացվել են ԱՄՆ-ում ստեղծված ԵՊՀ
Բարեկամների միության նախաձեռնությամբ և անհատ բարե-
րարների նյութական միջոցներով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 նոյեմբերի 2000)

1 նոյեմբերի – Ե. Չարենցի անվան դահլիճում տոնվում է հայ մեծ բա-
նաստեղծ, քնարերգության վարպետ Ավետիք Իսահակյանի
ծննդյան 125-ամյակը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 նոյեմբերի 2000)

25 նոյեմբերի – Ե. Չարենցի անվան դահլիճում տեղի է ունենում
թարգմանչաց արվեստին նվիրված 6-րդ գիտաժողովը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 դեկտեմբերի 2000)

5 դեկտեմբերի – Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի, Երևանի պետական համալսարանի և Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի ներկայացուցիչները ԱՄՆ-ի Կառավարության հետ ստորագրում են փոխըմբռնման հուշագիր՝ «Համակարգչային ուսումնական կենտրոն» փորձնական ծրագրի վերաբերյալ՝ ի դեմս ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության հայաստանյան գրասենյակի տնօրենի պաշտոնակատար Ջարինքեր Չիմայի:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 դեկտեմբերի 2000)

8 դեկտեմբերի – ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովում համալսարանից ՀՀ ԳԱԱ քոթակից անդամ են ընտրվում.
Գեղամ Գրիգորի Գևորգյանը (մաթեմատիկայի գծով),
Գրիգոր Ալեքսանի Ղարիբյանը (տնտեսագիտության, փիլիսոփայության և իրավագիտության գծով):

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 հունվարի 2001)

23 դեկտեմբերի – Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ Բարյո Տեր-Սկրտչյանին (ԱՄՆ) և Լևոն Ջեքիյանին (Իտալիա) շնորհվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2001-2002
ուստարվա հաշվետվություն, Երևան 2002, էջ 22)

28 դեկտեմբերի – Ե. Չաբենցի անվան դաիլիճում տեղի է ունենում «Խաղաղություն, մշակույթ, համամարդակային արժեքներ և քաղաքացիական հասարակություն» թեմայով գիտական նստաշրջան՝ նվիրված ընտանիքի համընդհանուր խնդիրներին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 հունվարի 2001)

2001

2000-2001 ուսումնական տարում ԵՊՀ բակալավրիատում սովորում էր 7231 ուսանող (Քիմիայի ֆակուլտետում 5-ամյա ուսուցմամբ՝ 335), մագիստրատուրայում՝ 970 ուսանող և 196 ասպիրանտ:

«Իրավագիտություն» երկրորդ մասնագիտությամբ (հեռակա) սովորում էր 176 ուսանող:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2000-2001 ուստարվա, Երևան, 2001, էջ 23, 24, 26)

2000-2001 ուսումնական տարում ԵՊՀ Իջևանի բնական գիտությունների ֆակուլտետն ուներ 155, Հումանիտար գիտությունների ֆակուլտետը՝ 328, Տնտեսագիտության ֆակուլտետը՝ 167, Կիրառական արվեստի ֆակուլտետը՝ 90 ուսանող:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2000-2001 ուստարվա, Երևան, 2001, էջ 305, 308, 311, 131)

16 հունվարի – Հայաստան կատարած պաշտոնական այցի վերջին օրը ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար լորդ Ջորջ Ռոբերտսոնը հանդիպում է ԵՊՀ ուսանողների հետ: Նա հանդես է գալիս գեկուցմամբ՝ Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունների, ինչպես նաև Հյուսիսատլանտյան դաշինքի տարածաշրջանային քաղաքականության վերաբերյալ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 հունվարի 2001)

27 հունվարի – Համազգային ուսանողական շարժումը և ԵՊՀ ուսանողական գիտական ընկերությունը Ե. Չարենցի անվան դահլիճում կազմակերպում են ուսանողական գիտաժողով՝ «Հայոց ցեղասպանություն. նոր դար, նոր մարտահրավեր» թեմայով: Սինչ այդ կազմակերպիչներն ու հրավիրյալներն այցելել էին

հայոց ցեղասպանության թանգարան և հուշահամալիր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 փետրվարի 2001)

17 փետրվարի – ԵՊՀ գիտական խորհրդի հերթական նիստում Տնտեսագիտության ֆակուլտետի խորհրդի առաջարկով որոշում է ընդունվում ֆակուլտետում բացելու երկրորդ մասնագիտության ուսուցում՝ հանրապետությունում տնտեսագետ կադրերի աճող պահանջարկը բավարարելու նպատակով:

Գլխխորհրդի որոշմամբ նույն ֆակուլտետում բացվեց նաև ֆինանսահաշվարկային ամբիոն:

Գլխխորհուրդը, հաշվի առնելով Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի որոշումը և այդ ֆակուլտետի ղեկանի հաղորդումը, որոշեց «Կիրառական մաթեմատիկա» մասնագիտությունը վերանվանել «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա»:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 28 փետրվարի 2001)

27 մարտի – Թատրոնի միջազգային օրվա առթիվ ԵՊՀ ուսանողական ակումբների համադաշնության «Հանդիպումներ» ակումբի հրավերով ուսանողների հյուրն էր Հայաստանի ժողովրդական դերասան, Երևանի թատերական ինստիտուտի ռեկտոր Սոս Սարգսյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 16 ապրիլի 2001)

2 ապրիլի – ԵՊՀ-ում տեղի է ունենում Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանության կողմից կազմակերպված «Աֆրո-ամերիկյան մշակութային օրեր» միջոցառման բացման արարողությունը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 16 ապրիլի 2001)

7-8 ապրիլի – «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» նախաձեռնությամբ Երևանի պետական համալսարանի տարբեր ֆակուլտետների 47 ուսանողներ Արցախում մասնակցում են ծառատունկին: ԵՊՀ ուսանողների ջանքերով տնկվեց 4000 ծառ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 ապրիլի 2001)

19-25 ապրիլի – ԵՊՀ միացյալ արհկոմիտեն, ուսանողական ակումբների համադաշնությունը անցկացրին «Երիտասարդությունը ընդդեմ ցեղասպանության» նշանաբանով շաբաթ: Հայոց մեծ եղեռնի հիշատակին նվիրված այս միջոցառումները 1998 թ. պարբերաբար կազմակերպվում են ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հետ համատեղ:

(Տես «Երևանի համալսարան», 30 ապրիլի 2001)

24 մայիսի – Տեղի է ունենում ԵՊՀ գիտխորհրդի նիստը, պաշտոնական այցով ՀՀ-ում գտնվող Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևին համալսարանում հյուրընկալելու համար: Հասարակական բեղում գործունեության համար Ղազախստանի նախագահին շնորհվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

(Տես Երևանի պետական համալսարան, հաշվետվություն 2001-2002 ուստարվա, Երևան, 2002, էջ 22)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 2011 շրջանավարտ, որից 1613-ը՝ բակալավրիատում, 398-ը՝ մագիստրատուրայում: Շրջանավարտները, ըստ ֆակուլտետների, բաշխված էին հետևյալ կերպ. Մաթեմատիկայի ֆակուլտետ՝ 60 բակալավր, 14 մագիստրոս, Մեխանիկայի՝ 31 բակալավր, 11 մագիստրոս, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 102 բակալավր, 30 մագիստրոս, Ֆիզիկայի՝ 78 բակալավր, 23 մագիստրոս, Ռադիոֆիզիկայի՝ 47 բակալավր, 12 մագիստրոս, Զինիական՝ 89 բակալավր, 4 մագիստրոս, Կենսաբանական՝ 78 բակալավր, 44 մագիստրոս, Երկրաբանական՝ 54 բակալավր, 9 մագիստրոս, Աշխարհագրական՝ 52 բակալավր, 8 մագիստրոս, Տնտեսագիտության՝ 148 բակալավր, 44 մագիստրոս, Պատմության՝ 68 բակալավր, 13 մագիստրոս, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության՝ 108 բակալավր, 34 մագիստրոս, Միջազգային հարաբերությունների՝ 74 բակալավր, 13 մագիստրոս, Բանասիրական՝ 87 բակալավր, 37 մագիստրոս, Ժուռնալիստիկայի՝ 35 բակալավր, 8 մագիստրոս, Ռուս

բանասիրության՝ 54 բակալավր, 15 մագիստրոս, Ռոմանագեր-մանական բանասիրության՝ 182 բակալավր, 36 մագիստրոս, Արևելագիտության՝ 71 բակալավր, 13 մագիստրոս, Իրավաբանական՝ 157 բակալավր, 20 մագիստրոս, Աստվածաբանության՝ 38 բակալավր, 10 մագիստրոս:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2000-2001 ուստարվա, Երևան, 2001, էջ 27)

հունիս – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը տալիս է 141 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Բնական գիտությունների՝ 30, Հումանիտար գիտությունների՝ 62, Տնտեսագիտության՝ 36, Կիրառական արվեստի՝ 13:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2000-2001 ուստարվա, Երևան, 2001, էջ 305, 308, 311, 313)

16 հունիսի – ԵՊՀ երկրորդ ռեկտոր, պատմաբան Հակոբ Մանանդյանի աճյունը, որն արդեն կես դար հանգչում էր Երևանի պետական համալսարանի հին շենքի (Աբովյան N 52) բակում, հանդիսավոր արարողությամբ փոխադրվեց Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոն:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 հուլիսի 2001)

18 հունիսի – ԵՊՀ ռեկտորատի նիստում Սարատովի պետական համալսարանի ռեկտոր Դմիտրի Տրուբեցկովը և ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանը ստորագրում են համագործակցության պայմանագիր, որով նախատեսվում էին ուսանողների, ասպիրանտների և գիտաշխատողների փոխանակություն, համատեղ գիտական ծրագրերի մշակում և իրականացում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 հուլիսի 2001)

11 սեպտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին հասարակական բեղում գործունեության համար շնորհվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2001-2002 ուստարվա, Երևան, 2002, էջ 22)

19-21 սեպտեմբերի – Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առթիվ Երևանի պետական համալսարանում տեղի է ունենում «Քրիստոնյա Հայաստանը քաղաքակրթությունների խաչմերուկ» թեմայով միջազգային գիտաժողով, որի կազմակերպմանը, ԵՊՀ-ից բացի, աջակցել էին այդ տոնակատարության անցկացման պետական հանձնախումբը և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով Հայաստանի ազգային հանձնաժողովը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 6 հոկտեմբերի 2001)

18 հոկտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի որոշումով Վրաստանի նախագահ Էդուարդ Շեվարձնաձեին շնորհվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2001-2002 ուստարվա, Երևան, 2002, էջ 22)

25 հոկտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի որոշումով Ռումինիայի Հանրապետության նախագահ Իոն Իլիեսկուին հասարակական բեղուն գործունեության համար շնորհվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում: Նույն օրը մեկ այլ որոշումով գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում է շնորհվում նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Կոյիչիրո Մացուտրոին (Ճապոնիա) և ԱՄՆ-ի Կոնգրեսի Սենեթի համալսարանի քաղաքական-սոցիալական աշխատանքի ինստիտուտի նախագահ Նենսի Հեմֆերսին:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2001-2002 ուստարվա հաշվետվություն, Երևան, 2002, էջ 22)

15 նոյեմբերի – ՀՀ կատարած պաշտոնական այցի շրջանակներում Լեհաստանի Հանրապետության նախագահ Ալեքսանդր Կվաշնևսկին և նրա ղեկավարած պատվիրակության մի խումբ անդամներ հյուրընկալվում են ԵՊՀ-ում և մասնակցում գիտխորհրդի ընդլայնված նիստին:

Լեհաստանի նախագահ Ալ. Կվաշնևսկին նիստում հանդես

է գալիս «Եվրոպան ապագայի աշխարհամաս. երկխոսության, տոլերանտականության և համագործակցության դերը» թեմայով զեկուցմամբ:

Հանդիպման վերջում ԵՊՀ ռեկտորը Ալ. Կվաշնևսկուն պարգևատրեց ԵՊՀ ռսկէ մեդալով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 նոյեմբերի 2001)

դեկտեմբեր – Պատմության ֆակուլտետի մի խումբ ուսանողների մախաճեռնությամբ ստեղծվում է Հայկական հարցի և ցեղասպանության պատմության խնդիրներն ուսումնասիրող հանձնախումբ (հետագայում՝ Հայկական հարցի ուսումնասիրման հանձնախումբ): Պատմության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը պատրաստակամություն է հայտնում օգնելու և աջակցելու այդ աշխատանքներին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 դեկտեմբերի 2001)

14 դեկտեմբերի – Պատմության ֆակուլտետում տեղի է ունենում երիտասարդ գիտնականների համալսարանական հոբելյանական գիտաժողով՝ նվիրված Լ.Ղ.Հ անկախության հռչակման 10-րդ տարեդարձին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 դեկտեմբերի 2001)

15 դեկտեմբերի – ՀՀ Կառավարության N 1222 որոշումով հաստատվում է ԵՊՀ նոր կանոնադրությունը:

(ԵՊՀ պատմության բանգարանի արխիվ, ֆ. 24, գ. 8, ք. 25)

2002

2001-2002 ուստարում Երևանի պետական համալսարանում դասախոսում էին 220 պրոֆեսոր, 499 դոցենտ, 235 ասիստենտ, 15 ավագ դասախոս, 457 դասախոս:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2001-2002 ուստարվա, Երևան, 2002, էջ 24)

2001-2002 ուսումնական տարում ԵՊՀ բակալավրիատում սովորում էր 7823 (Քիմիայի ֆակուլտետում 5-ամյա ուսուց.՝ 342), մագիստրատուրայում՝ 1246 ուսանող, ասպիրանտուրայում՝ 297 ասպիրանտ:

«Իրավագիտություն» երկրորդ մասնագիտությամբ (հեռակա) սովորում էր 186 ուսանող:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2001-2002 ուստարվա, Երևան, 2002, էջ 27, 29, 31)

2001-2002 ուսումնական տարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետում սովորում էր 168, Հումանիտար գիտությունների ֆակուլտետում՝ 373, Տնտեսագիտության ֆակուլտետում՝ 174, Կիրառական արվեստի՝ ֆակուլտետում 100 ուսանող:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2001-2002 ուստարվա, Երևան, 2002, էջ 338, 341, 345, 347)

13 փետրվարի – Տեղի է ունենում ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի հանդիպումը ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի հետ, որին մասնակցում էին նաև հանրապետության մյուս բուհերի ղեկավարները և ՀՀ ԳԱԱ նախագահ Ֆ. Սարգսյանը: Կրթական հիմնախնդիրներից բացի՝ արծարծվում են նաև տնտեսական, հասարակական-քաղաքական գիտամշակութային բազմաթիվ հարցեր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 28 փետրվարի 2002)

25 փետրվարի – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի նորակառույց դահլիճում գումարվում է ուսանողական գիտաժողով՝ նվիրված գորավար Անդրանիկ Օգանյանի կյանքին և գործունեությանը: Բացի մասնաճյուղի ուսանողներից և դասախոսներից՝ գիտաժողովին մասնակցում էին նաև Իջևան քաղաքի այլ ուսումնական հաստատությունների սովորողներ և հյուրեր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 9 մարտի 2002)

13 մարտի – ԵՊՀ մեծ խորհրդի հատուկ նիստում ԵՊՀ ռեկտոր է ընտրվում ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 մարտի 2002)

15 մարտի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի է ունենում «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան» հինգհատորյակի հրատարակության ավարտին նվիրված շնորհանդես:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 մարտի 2002)

27 մարտի – Թատրոնի միջազգային օրվա առթիվ Ե. Չարենցի անվան դահլիճում տեղի է ունենում հանդիպում դերասան Խորեն Աբրահամյանի հետ: Այն կազմակերպել էր Ժուռնալիստիկայի ֆակուլտետի խորհուրդը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 5 ապրիլի 2002)

ապրիլ – ՀՀ արդարադատության նախարարությունը ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը գրանցում է որպես իրավաբանական անձ և տալիս վկայական:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2002-2003 ուստարի, Երևան, 2003, էջ 341)

11 ապրիլի – ԵՊՀ ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հյուրն էր ՀՀ-ում Կուբայի արտակարգ և լիազոր դեսպան Կառլոս Պալմարոլա Կորդերոն: Նա Ե. Չա-

րենցի անվան դահլիճում հանդես է գալիս Կուրալի կրթության, գիտության և տնտեսության վերաբերյալ ընդարձակ դասախոսությամբ, այնուհետև՝ պատասխանում ուսանողների հարցերին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 ապրիլի 2002)

18-26 ապրիլի – Համալսարանի միացյալ արհկոմիտեի ուսանողական ակումբների համադաշնությունը անցկացնում է «Երտասար-դությունն ընդդեմ ցեղասպանության» նշանաբանով շաբաթ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 ապրիլի 2002)

24 ապրիլի – Վաղ առավոտյան համալսարանի գլխավոր մասնաշենքի հրապարակից կազմակերպվում է երթ դեպի Ծիծեռնակաբերդ: Ամեն տարի այդ օրը Ծիծեռնակաբերդի բարձունք են գնում հարյուրավոր համալսարանականներ՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 ապրիլի 2002)

8-12 մայիսի – ԵՊՀ լրատվական ծառայության՝ Սյունիքում կազմակերպած գիտագործնական կոնֆերանսին («Արդի հայ լրագրության խնդիրները և զարգացման միտումները» թեմայով), ներկա էին ԵՊՀ պրոռեկտոր, պրոֆեսոր Ա. Սիմոնյանը, Հայաստանում «Պրոմեդիա» կազմակերպության ղեկավար Պիտեր Այքստուտը, խմբագիրներ, լրագրողներ, ուսանողներ ԵՊՀ-ից և Հայաստանի սլավոնական համալսարանից:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մայիսի 2002)

9 մայիսի – Ավանդույթի համաձայն՝ ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի հրապարակում հավաքվում են Հայրենական մեծ պատերազմի համալսարանական վետերաններ, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ուսանողներ, աշխատողներ: Նրանք իրենց հարգանքի տուրքն են մատուցում Մեծ հայրենականի ռազմաճակատներում, ինչպես նաև Արցախի գոյամարտում զոհված հարյուրավոր համալսարանականների

հիշատակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 մայիսի 2002)

22 մայիսի – Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի իտալերենի բաժանմունքի աշխատակիցների և ուսանողության հյուրն էր Հայաստանում Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպան Պաոլո Անդրեա Տրաբալցան:

2001 թ.-ից Իտալիայի դեսպանությունը համագործակցում է իտալերենի բաժանմունքի հետ, որի շրջանակում համալսարան է գործուղվել Սիվերիո Պարադիզոն՝ իտալերեն դասավանդելու համար:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մայիսի 2002)

24 մայիսի – ՀՀ պաշտպանության նախարարության և ԵՊՀ ղեկավարության միջև ստորագրվում է համաձայնագիր, համաձայն որի՝ Իրավաբանական ֆակուլտետում պետպատվերով տեղեր են հատկացվելու «ռազմական իրավագիտություն» մասնագիտությամբ մագիստրատուրայում սովորողների համար:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մայիսի 2002)

21 հունիսի – Կենսաբանական ֆակուլտետի ընթերցասրահում ֆակուլտետի դասախոսների, ուսանողների և բազմաթիվ հյուրերի համար դասախոսություն է կարդում գերմանացի անվանի գիտնական, Կոտրուս քաղաքի պաթոլոգիայի ինստիտուտի տնօրեն, պրոֆ. Պիտեր Ստոսիեկը: Թեման էր իմունոհիստոքիմիական մեթոդի կիրառմամբ ուռուցքային հիվանդությունների ախտորոշմանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 29 հունիսի 2002)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 2280 շրջանավարտ, որից 1755-ը՝ բակալավրիատում, 525-ը՝ մագիստրատուրայում: Շրջանավարտները, ըստ ֆակուլտետների, բաշխված էին հետևյալ կերպ. Մաթեմատիկայի ֆակուլտետ՝ 62 բակալավր, 21 մագիստրատուրոս, Մեխանիկայի՝ 26 բակալավր, 13

մագիստրոս, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 124 բակալավր, 35 մագիստրոս, Ֆիզիկայի՝ 61 բակալավր, 26 մագիստրոս, Ռադիոֆիզիկայի՝ 61 բակալավր, 15 մագիստրոս, Քիմիական՝ 57 բակալավր, 10 մագիստրոս, Կենսաբանական՝ 78 բակալավր, 41 մագիստրոս, Երկրաբանական՝ 52 բակալավր, 11 մագիստրոս, Աշխարհագրական՝ 52 բակալավր, 7 մագիստրոս, Տնտեսագիտության՝ 193 բակալավր, 51 մագիստրոս, Պատմության՝ 67 բակալավր, 32 մագիստրոս, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության՝ 111 բակալավր, 40 մագիստրոս, Միջազգային հարաբերությունների՝ 122 բակալավր, 24 մագիստրոս, Բանասիրական՝ 99 բակալավր, 47 մագիստրոս, Ժուռնալիստիկայի՝ 37 բակալավր, 15 մագիստրոս, Ռուս բանասիրության՝ 33 բակալավր, 18 մագիստրոս, Ռումնագերմանական բանասիրության՝ 201 բակալավր, 40 մագիստրոս, Արևելագիտության՝ 99 բակալավր, 22 մագիստրոս, Իրավաբանական՝ 177 բակալավր, 40 մագիստրոս, Աստվածաբանության՝ 43 բակալավր, 17 մագիստրոս:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2001-2002 ուստարվա, Երևան, 2002, էջ 33)

հունիս – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը տալիս է 162 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Բնական գիտությունների՝ 27, Հումանիտար գիտությունների՝ 76, Տնտեսագիտության՝ 42, Կիրառական արվեստի՝ 17:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2001-2002 ուստարվա, Երևան, 2002, էջ 339, 343, 345, 348)

9 հուլիս – Աշխատանքային այցով Երևանում գտնվող Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Վալտեր Շվիմերը ԵՊՀ և գիտ-խորհրդի նիստերի դահլիճում պրոֆետորադասախոսական կազմի, ուսանողության առջև զեկուցում է կարդում՝ նվիրված տարածաշրջանային խնդիրներին, Եվրախորհրդին անդամակցելուն ուղղված Հայաստանի պարտականությունների կատարմանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 13 հուլիսի 2002)

3 սեպտեմբերի – Երևանի պետական համալսարանի կենտրոնական մասնաշենքի հրապարակում մեծ հանդիսավորությամբ բացվում է հայ տաղանդավոր քանդակագործ, ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ Արա Սարգսյանի (1902 թ. Կ. Պոլիս – 1969 թ. Երևան) կոմպոզիցիոն մտահղացումների գլուխգործոցը՝ «Սահակ Պարթև և Մեսրոպ մաշտոց» խմբաքանդակը, որում մեծ վարպետությամբ օգտագործված են հայ միջնադարյան պատկերաքանդակի ավանդույթները:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 14 սեպտեմբերի 2002)

10 հոկտեմբերի – Պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչման հյուրընկալվում է Երևանի պետական համալսարանում: Պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչների հետ հանդիպման վերջում ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը Ուկրաինայի նախագահին պարգևատրում է ԵՊՀ ոսկե մեդալով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 21 հոկտեմբերի 2002)

13 հոկտեմբերի – Արցախի պետական համալսարանը (ԱրՊՀ) 12 օրով հրավիրել էր ԵՊՀ կենդանաբանության ամբիոնի գիտաշխատողներին, մագիստրոսներին և ասպիրանտներին՝ մասնակցելու ԱրՊՀ-ում կազմակերպված դասախոսություններին, գիտարշավներին ու գիտաժողովներին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 11 նոյեմբերի 2002)

15-19 հոկտեմբերի – Երևանի պետական համալսարանում տեղի է ունենում «Միջազգային և ներպետական իրավունքի փոխգործության հիմնահարցերը» թեմայով երրորդ միջազգային գիտագործնական սեմինարը, որը կազմակերպել էին ՀՀ իրավաբանների միությունը և Իրավաբանների միջազգային միությունը: Սեմինարի աշխատանքներին մասնակցելու համար Երևան էին ժամանել Ռ.Դ. Ուկրաինայի, Մոլդովայի, Վրաստանի մի խումբ նշանավոր իրավաբան-գիտնականներ, պաշտոնատար անձինք:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 հոկտեմբերի 2002)

21-25 հոկտեմբերի – Ե. Չարենցի անվան դահլիճում տեղի է ունենում գիտական նստաշրջան՝ «Բայական համակարգը հայերենի տարբերականներում» (գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար, բարբառներ) թեմայով, որը կազմակերպել էին Փարիզի Հայ ուսմանց միությունը, ֆրանսիական գիտական հետազոտությունների պետական կենտրոնը, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը և հայ բարբառագետների ընկերությունը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 հոկտեմբերի 2002)

20 նոյեմբերի – Հայաստանում մեկնարկում է միջազգային կրթության շաբաթը, որի առիթով հենց առաջին օրը ԵՊՀ ուսանողներին է այցելում Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Օրդուեյը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 նոյեմբերի 2002)

27 դեկտեմբերի – Տեղի է ունենում ԵՊՀ մեծ խորհրդի հերթական նիստը, որը նվիրված էր Մայր բուհի 2001-2002 ուստարվա գործունեության վերաբերյալ ռեկտոր Ռ. Մարտիրոսյանի հաշվետվությանը, դրա քննարկմանը և արդյունքների ամփոփմանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 1 հունվարի 2003)

2003

2002-2003 ուստարում Երևանի պետական համալսարանում դասախոսում էին 206 պրոֆեսոր, 474 դոցենտ, 255 ասիստենտ, 4 ավագ դասախոս, 426 դասախոս:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2002-2003 ուստարի, Երևան, 2003, էջ 27)

2002-2003 ուսումնական տարում ԵՊՀ բակալավրիատում սովորում էր 8423 (Քիմիայի ֆակուլտետում 5-ամյա ուսուց.՝ 378), մագիստրատուրայում՝ 1473 ուսանող, ասպիրանտուրայում՝ 316 ասպիրանտ:

«Իրավագիտություն» երկրորդ մասնագիտությամբ (հեռակա) սովորում էր 187 ուսանող:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2002-2003 ուստարի, Երևան, 2003, էջ 30, 32, 34)

2002-2003 ուսումնական տարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում սովորում էր 887 ուսանող՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Բնական գիտությունների՝ 197, Հումանիտար գիտությունների՝ 400, Տնտեսագիտության՝ 183, Կիրառական արվեստի՝ 107:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2002-2003 ուստարի, Երևան, 2003, էջ 346, 350, 354, 356)

14 փետրվարի – Պաշտոնական այցով ՀՀ-ում գտնվող ՌԴ մշակույթի նախարար Սիլսայիլ Շվիդկոյը հանդիպում է ԵՊՀ գիտխորհրդի անդամների և ուսանողության ներկայացուցիչների հետ: Ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը Մ. Շվիդկոյին պարգևատրում է ԵՊՀ ոսկե հուշամեդալով: Վերջինս ԵՊՀ գրադարանին է նվիրում Սանկտ Պետերբուրգի հիմնադրման 300-ամյակին նվիրված ֆիլմի ժապավենը: Հանդիպմանը ներկա էին նաև ՌԴ և ՀՀ ար-

տակարգ և լիազոր դեսպաններ Անատոլի Դրյուկովը և Արմեն Սմբատյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 28 փետրվարի 2003)

28 փետրվարի – Երևանի պետական համալսարանի բոլոր ֆակուլտետների ուսանողները և պրոֆեսորադասախոսական կազմը գլխավոր մասնաշենքի առջևից շարժվում են Ծիծեռնակաբերդ՝ հարգանքի տուրք մատուցելու 1988 թ. սումգայիթյան ոճրագործության անմեղ զոհերի հիշատակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 մարտի 2003)

10-12 մարտի – ՀՀ ԳԱԱ նիստերի դալիճում տեղի է ունենում «Սոցիալական աշխատանք առանց սահմանների» միջազգային գիտաժողովը, որը կազմակերպել էին ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնը և Մեծ Բրիտանիայի բաց համալսարանը: Գիտաժողովին աջակցել էին ՀՀ սոցիալական ապահովության նախարարությունը, PADCO-ն (Հայաստանում սոցիալական բարեփոխումների ծրագիր) և Իռլանդիայի սոցիալական աշխատողների ընկերությունը:

Գիտաժողովի նպատակն էր ԱՊՀ և մասնավորապես Հարավային Կովկասի տարածաշրջանի երկրներում սոցիալական աշխատանքի բնագավառում փորձի փոխանակումը և սոցիալական աշխատանքի առանձնահատկությունների քննարկումը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 մարտի 2003)

17 մարտի – «Աֆրո-ամերիկյան մշակույթի օրեր» միջոցառումների շրջանակներում ԵՊՀ-ում հյուրընկալվել էին ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Օրդոնեյը և ԱՄՆ դեսպանատան հասարակական կապերի գծով պատասխանատու Բիմբերլի Հարգանը: Շարժառիթը ԱՄՆ դեսպանատան կողմից անգլիական բանասիրության բաժնին նվիրաբերած գրադարանի բացումն էր (130 միավոր ամերիկյան դասական գրականության լավագույն նմուշներ):

(«Երևանի համալսարան», 31 մարտի 2003)

20 մարտի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի է ունենում ԵՊՀ խորհրդակցություն: Ամբիոնի վարիչների, ֆակուլտետների դեկանների ու նրանց տեղակալների, անվանի գիտնականների, ՀՀ ԳԱԱ ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկվում են Մայր բուհում ուսուցման որակը բարձրացնելու, գիտահետազոտական աշխատանքները ամուր հիմքերի վրա դնելու հարցեր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 ապրիլի 2003)

17 ապրիլի – Պատմության ֆակուլտետի մեծ դահլիճում կազմակերպվում է «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը և Թուրքիայի ձեռնարկած հակաքայլերը» թեմայով գիտաժողով-քննարկում, որը նախաձեռնել էր Պատմության ֆակուլտետի Հայկական հարցի ուսումնասիրման հանձնախումբը:

Գիտաժողովին ներկա էին ՀՀ ԿԳ նախարար Լ. Մկրտչյանը, ՀՀ ԱԳՆ Թուրքիայի բաժնի վարիչ Ա. Հարությունյանը:

Ելույթ է ունենում նաև «Միություն ընդդեմ ցեղասպանության» կազմակերպության (Գերմանիա) նախագահ, ազգությամբ թուրք Ալի Էրթեմը, որը, դատապարտելով Հայոց ցեղասպանությունը, հայտարարեց, որ հայերից խլվածը պետք է վերադարձվի:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 ապրիլի 2003)

3 մայիսի – Հայտնի բանասեր, մշակութաբան, երաժշտագետ, Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Բ. Մ. Գասպարովը Ե. Չարենցի անվան դահլիճում հանդես է գալիս դասախոսությունների շարքով՝ 1. «Լեզվաբանություն և մշանագիտություն», 2. «Գրականություն և գեղագիտություն», 3. «Երաժշտություն» թեմաներով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 մայիսի 2003)

22 մայիսի – Պատմության ֆակուլտետի մեծ դահլիճում տեղի է ունենում գիտաժողով՝ նվիրված Սանկտ Պետերբուրգի հիմ-

նադրման 300-ամյակին: Բացի ուսանողներից և պրոֆեսորա-դասախոսական կազմի ներկայացուցիչներից՝ գիտաժողովին մասնակցում էին նաև բազմաթիվ գիտնականներ, հյուրեր, ինչպես նաև ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Ա. Դրյուկովը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մայիսի 2003)

27 մայիսի – Պատմության ֆակուլտետի մեծ դահլիճում տեղի ունեցած հանդիսավոր նիստը նվիրված էր Հայաստանի առաջին համալսարանի կազմավորման 85-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մայիսի 2003)

29-31 մայիսի – Երևանի պետական համալսարանի Ծաղկաձորի նորարաց ուսումնաարտադրական բազայում անցկացվում է «Կիսահաղորդչային միկրոէլեկտրոնիկա» IV գիտաժողովը, որը ազդարարեց ՀՀ ԳԱ հիմնադրման 60-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսությունների սկիզբը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 հունիսի 2003)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 2485 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Մաթեմատիկայի՝ 61 բակալավր, 25 մագիստրոս, Մեխանիկայի՝ 29 բակալավր, 11 մագիստրոս, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 113 բակալավր, 39 մագիստրոս, Ֆիզիկայի՝ 60 բակալավր, 42 մագիստրոս, Ռադիոֆիզիկայի՝ 46 բակալավր, 28 մագիստրոս, Քիմիական՝ 99 բակալավր, 12 մագիստրոս, Կենսաբանական՝ 77 բակալավր, 50 մագիստրոս, Երկրաբանական՝ 61 բակալավր, 16 մագիստրոս, Աշխարհագրական՝ 51 բակալավր, 13 մագիստրոս, Տնտեսագիտության՝ 178 բակալավր, 77 մագիստրոս, Պատմության՝ 86 բակալավր, 34 մագիստրոս, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության՝ 133 բակալավր, 50 մագիստրոս, Միջազգային հարաբերությունների՝ 135 բակալավր, 45 մագիստրոս, Բանասիրական՝ 92 բակալավր, 52 մագիստրոս, Ժուռնալիստիկայի՝ 41 բակալավր, 10 մագիստ-

րոս, Ռուս բանասիրության՝ 39 բակալավր, 18 մագիստրոս, Ռոմանագերմանական բանասիրության՝ 189 բակալավր, 58 մագիստրոս, Արևելագիտության՝ 93 բակալավր, 33 մագիստրոս, Իրավաբանական՝ 174 բակալավր, 48 մագիստրոս, Աստվածաբանության՝ 50 բակալավր, 17 մագիստրոս:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2002-2003 ուստարի, Երևան, 2003, էջ 36)

հունիս – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը տալիս է շրջանավարտներ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Բնական գիտությունների՝ 43, Հումանիտար գիտությունների՝ 75, Տնտեսագիտության՝ 43, Կիրառական արվեստի՝ 20:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2002-2003 ուստարի, Երևան, 2003, էջ 348, 351, 354, 356)

30 հունիսի – ԵՊՀ մեծ դահլիճում առաջին անգամ տեղի ունեցավ բնագիտական ֆակուլտետների բակալավրիատի գերազանցիկ ուսանողների դիպլոմների հանձնման արարողությունը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 հուլիսի 2003)

սեպտեմբեր-դեկտեմբեր – Տնտեսագիտական ֆակուլտետի միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնում կազմակերպվում են Կանադայի առևտրային քաղաքականության ու իրավունքի կենտրոնի և Առևտրի համաշխարհային կազմակերպության վերաբերյալ դասընթացներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 մայիսի 2004)

15 սեպտեմբերի – Սեպտեմբերի 14-ին պաշտոնական այցով Հայաստան ժամանած Լիտվայի նախագահ Ռոլանդաս Պակսասը իր ղեկավարած պատվիրակության մի խումբ անդամներով ներկա է գտնվում Երևանի պետական համալսարանի գիտխորհրդի ընդլայնված նիստին և ներկայացնում Լիտվայի արտաքին քաղաքականության և ընդհանրապես զարգացման հեռանկարներ:

ըը:

Վերջում ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը Լիտվայի նախագահին պարզեցատրում է ԵՊՀ հոբելյանական ոսկե հուշամեդալով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 սեպտեմբերի 2003)

19-21 սեպտեմբերի – ԵՊՀ 13 ֆակուլտետների 42 ուսանող ՀՀ անկախության օրվա առթիվ ֆիզիկական դաստիարակության ամբիոնի երեք դասախոսների ղեկավարությամբ մեկնում են արշավի դեպի Արցախ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 սեպտեմբերի 2003)

9 հոկտեմբերի – «Եվրասիա հիմնադրամի» և Նյու Յորքի «Կարմեզի» կորպորացիայի ֆինանսավորմամբ ԵՊՀ-ում հանդիսավորությամբ բացվում է «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ» (ՀՌԿԿ) ծրագրի հայաստանյան բաժանմունքը:

Համանման կենտրոններ էին բացվել նաև Հարավային Կովկասի մյուս երկրներում՝ Վրաստանում և Ադրբեջանում:

ՀՌԿԿ-ները հասանելիություն են ապահովում ժամանակակից հետազոտական ռեսուրսների և տվյալների շտեմարաններ՝ նպատակ ունենալով զարգացնել հասարակագիտական հետազոտության ու հանրային քաղաքականության վերլուծության ոլորտը Հարավային Կովկասում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 հոկտեմբերի 2003)

11 հոկտեմբերի – ՀՀ-ում Իսպանիայի արտակարգ և լիազոր դեսպան Խոսե Մարիա Ռոբլես Ֆրագան (նստավայրը՝ Մոսկվա) այց է կատարում ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ և հանդիպում է իսպաներենի բաժնի ուսանողների հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 հոկտեմբերի 2003)

22 հոկտեմբերի – ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի և վարչապետ Ա. Մարգարյանի մոտ ընդունելությունից հետո «Ռուսաստանի

միասնական էներգահամակարգեր» ռուսական բաժնետիրական ընկերության պատվիրակությունն ընկերության նախագահ Անատոլի Չուբայսի գլխավորությամբ այցելում է ԵՊՀ և հանդիպում ուսանողության ու պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 հոկտեմբերի 2003)

23 հոկտեմբերի – Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում տեղի է ունենում իտալական ուսումնասիրությունների կենտրոնի բացումը, որին մասնակցում են ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը, ՀՀ-ում Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպան Մարկո Կլեմենտեն՝ տիկնոջ հետ, դասախոսներ, ուսանողներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 հոկտեմբերի 2003)

24 հոկտեմբերի – Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տանը կազմակերպվում է ԵՊՀ զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված շախմատային բլից-մրցաշար:

ԵՊՀ 14 ֆակուլտետների 76 ուսանողներ պայքարի մեջ մտան շվեյցարական մրցակարգով՝ հաղթողին որոշելով տասը թուրքականոց յոթ տուրերով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 հոկտեմբերի 2003)

27 հոկտեմբերի – ԵՊՀ նիստերի մեծ դահլիճում հանդիսավորությամբ նշվում են Մայր բուհի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի 5-րդ և միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ստեղծման 10-րդ տարեդարձները:

Հանդիսավոր նիստին մասնակցում էին ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանը, ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Ա. Ռուստամյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը, պաշտոնատար այլ անձինք, ինչպես նաև ուսանողներ, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ և բազմաթիվ հյուրեր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 նոյեմբերի 2003)

4-8 նոյեմբերի – Ֆիզիկայի ֆակուլտետի կոնֆերանսների դահլիճում անցկացվում է երտասարդ հայ ֆիզիկոսների (մինչև 35 տարեկան) երրորդ գիտաժողովը («Ֆիզիկա-2003»):

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 նոյեմբերի 2003)

14 նոյեմբերի – Երկար տարիների դադարից հետո ԵՊՀ-ում կրկին կազմակերպվում է «Ոսկե ձեռքեր» անվանումը կրող ցուցահանդես, որին մասնակցում էին համալսարանի մի շարք ֆակուլտետների ուսանողներ, ինչպես նաև մեկական ուսանողուհիներ Մ. Հերացու անվան պետական բժշկական և Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարաններից:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 նոյեմբերի 2003)

25 նոյեմբերի – ԵՊՀ-ում մեկնարկում է Հյուսիսարևելյան եվրոպական տարածաշրջանի ծրագրավորման բուհական քիմային միջազգային մրցույթը, որը անդրկովկասյան խմբի համար չորրորդն էր: Նախորդ երեքը անցկացվել էին Թբիլիսիում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 նոյեմբերի 2003)

27 նոյեմբերի – Պատմության ֆակուլտետում տեղի է ունենում գիտաժողով՝ «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին» քեմայով: Ներկա էր նաև ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպանի խորհրդական Ալեքսանդր Ջազանովը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 դեկտեմբերի 2003)

17 դեկտեմբերի – Տեղի է ունենում ԵՊՀ արհեստակցական կազմակերպության հաշվետու-ընտրական 2-րդ կոնֆերանսը: ԵՊՀ ղեկավարության և աշխատողների միջև աշխատանքային և սոցիալ-տնտեսական հարաբերությունները կարգավորելու նպատակով կոնֆերանսը հիմք դրեց կոլեկտիվ պայմանագրերի համակարգին: Հաստատվեց ԵՊՀ արհեստակցական կազմակերպության նոր կանոնադրությունը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2003-2004 ուստարի, Երևան, 2004, էջ 361)

18 ղեկավարներ – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ Ռոբերտ Տեր-Մերկերյանին (Ֆրանսիա) գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար շնորհվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2003-2004
ուստարի, Երևան, 2004, էջ 25)

2004

2003-2004 ուստարում Երևանի պետական համալսարանում դասախոսում էին 210 պրոֆեսոր, 482 դոցենտ, 290 ասիստենտ, 2 ավագ դասախոս, 429 դասախոս:

(Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2003-2004 ուստարի, Երևան, 2004, էջ 28)

2003-2004 ուսումնական տարում ԵՊՀ բակալավրիատում սովորում էր 9005 (Քիմիայի ֆակուլտետում 5-ամյա ուսուց.՝ 380), մագիստրատուրայում՝ 1623 ուսանող, ասպիրանտուրայում՝ 367 ասպիրանտ:

«Իրավագիտություն», «Տնտեսագիտություն» մասնագիտություններով երկրորդ մասնագիտությամբ (հեռակա) սովորում էր 191 ուսանող:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2003-2004 ուստարի, Երևան, 2004, էջ 32-36)

2003-2004 ուսումնական տարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Բնական գիտությունների ֆակուլտետում սովորում էր 201, Հումանիտար գիտությունների ֆակուլտետում՝ 430, Տնտեսագիտության ֆակուլտետում՝ 183, Կիրառական արվեստի ֆակուլտետում՝ 121 ուսանող:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2003-2004 ուստարի, Երևան, 2004, էջ 365, 368, 372, 374)

4 մարտի – «Հանրակրթության պետական կրթակարգի» նոր մախա-գիծը քննարկելու նպատակով ՀՀ ԿԳ մախարար Ս. Երիցյանը և հեղինակային խմբի անդամները ԵՊՀ գիտխորհրդում հանդիպում են գիտխորհրդի անդամների, ամբիոնների վարիչների ու պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների

հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 մարտի 2004)

6-19 մարտի – Գերմանական «Լայքոս» (Lycos) ընկերության Երևանի մասնաճյուղը ԵՊՀ-ում անցկացնում է web ծրագրավորողների մրցույթ՝ երկու փուլով:

Մասնակցում էին ԵՊՀ մաթեմատիկայի, մեխանիկայի, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետների 118 ուսանողներ: 2-րդ փուլ անցան 56-ը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 մարտի 2004)

10 մարտի – ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը ԵՊՀ մեծ դահլիճում հանդիպում է ուսանողների հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 մարտի 2004)

17 մարտի – ԵՊՀ Վարդգես և Ռիտա Պալեանների անվան դահլիճում անցկացվում է Փիլիսոփայության, սոցիոլոգիայի ու հոգեբանության ֆակուլտետի և ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության միացյալ ուժերով կազմակերպված «Փիլիսոփաները հրավիրում են բանավեճի» թեմայով միջոցառումը, որը նվիրված էր 20-րդ դարի փիլիսոփայության կարևորագույն խնդիրներին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 մարտի 2004)

18 մարտի – «Երևանի համալսարան» թերթի 2000-րդ հոբելյանական համարի լույսընծայման առթիվ Ե. Չարենցի անվան դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր նիստ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մարտի 2004)

2-5 ապրիլի – Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնը հյուրընկալել էր միջազգային իրանագիտական կոնֆերանսի մասնակիցներին: Շուրջ 20 երկրներից ժամանած ավելի քան 70 մասնակիցներ ներկայացնում են իրանագիտության բազմաթիվ հիմնախնդիրների վերաբերյալ իրենց զեկույցներ:

րը: Ձեկուցումները վերաբերում էին տարբեր ուղղությունների՝ գրականության, պատմության, լեզվաբանության, քաղաքագիտության և այլն:

«Հասարակությունը, պատմությունը և մշակույթը իրանական աշխարհում» թեմայով կոնֆերանսը կազմակերպել էր Նյու Յորքի պետական համալսարանում գործող «Իրանալեզու հասարակությունների ուսումնասիրության միջազգային ընկերակցությունը» (ASPS: Association for the Study of Persianate Societies):

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 ապրիլի 2004)

5 ապրիլի – Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պերճ Մեղրակյանը ՀՀ նախագահի, վարչապետի. արտգործնախարարի հետ հանդիպելուց հետո այցելում է Երևանի պետական համալսարան: Ի պատիվ բարձրաստիճան հյուրի՝ գումարվում է ռեկտորատի ընդլայնված նիստ ԵՊՀ գիտխորհրդի անդամների, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հանդիպման վերջում ԵՊՀ ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը ՀԲԸՄ նախագահ Պերճ Մեղրակյանին է հանձնում ԵՊՀ հոբելյանական ոսկե հուշամեդալ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 ապրիլի 2004)

14 ապրիլի – Հայաստանում ԵԱՀԿ գրասենյակի տնօրեն, քաղաքական գիտությունների դոկտոր Վ. Ֆ. Պրյախինն այցելում է ԵՊՀ ու Վարդգես և Ռիտա Պալեանների անվան դահլիճում հանդես գալիս «ԵԱՀԿ պատմությունը, գործունեությունը և արդի խնդիրները» թեմայով դասախոսությամբ՝ անդրադառնալով հատկապես «սառը պատերազմից» հետո ընկած ժամանակաշրջանում ԵԱՀԿ-ի դերին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 ապրիլի 2004)

15 ապրիլի – Աբովյան փողոցում գտնվող ԵՊՀ հիմնադիր շենքի ետնամասում տեղի է ունենում նոր մասնաշենքի կառուցման հան-

դիսավոր հիմնարկերը, որին ներկա էին համալսարանի դեկավարությունը, ֆակուլտետների դեկաններ, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ուսանողներ, հյուրեր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 ապրիլի 2004)

17-18 ապրիլի – «Հայաստանում քաղաքացիական կրթության ծրագրի» (CEP) մասնակցությամբ ԵՊՀ-ում կազմակերպվում է գիտաժողով՝ քաղաքացիություն, միջազգային հարաբերություններ, գրականագիտություն, տնտեսագիտություն, բանասիրություն մասնագիտությունների գծով:

Շուրջ 60 մասնակիցներ, որոնք ներկայացնում էին Երևանում հանրապետության մի շարք քաղաքներ (Գյումրի, Իջևան, Հրազդան, Գորիս և այլն), ընտրվել էին կոնֆերանս-բանավեճին մասնակցել ցանկացող ավելի քան հարյուր դիմողներից:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 ապրիլի 2004)

20 ապրիլի – «Երևանի պետական համալսարանն ընդդեմ ցեղասպանության» ծրագրի շրջանակներում ԵՊՀ Վարդգես և Ռիտա Պալեանների անվան դահլիճում տեղի է ունենում «Հայոց ցեղասպանության հիմնախնդիրները» թեմայով գիտաժողովի բացում: Բացման խոսքով հանդես է գալիս ԵՊՀ պրոռեկտոր պրոֆ. Ա. Հ. Սիմոնյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 ապրիլի 2004)

7 մայիսի – ԵՊՀ Վարդգես և Ռիտա Պալեանների անվան դահլիճում ԱՄՆ-ի բարձրագույն ռազմական քոլեջի ուսանողներն ու դասախոսները հանդիպում են Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ: Հանդիպում-քննարկմանը, որին ներկա էր նաև ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանատան ռազմական կցորդը, հիմնականում շոշափվում են միջազգային քաղաքականությանը վերաբերող հարցեր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մայիսի 2004)

15-17 մայիսի – Իրավաբանական ֆակուլտետի ուսումնական դատական նիստերի դահլիճում անցկացվում է միջբուհական ուսանողական գիտաժողով՝ «Եվրոպական իրավական արժեքների հայաստանի Հանրապետության ինտեգրումը» թեմայով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 հունիսի 2004)

21 մայիսի – ԵՊՀ-ում կազմակերպվում է «Ֆրանսիա-Հայաստան. մշակութային երկխոսություն» թեմայով գիտաժողով՝ նվիրված հայ-ֆրանսիական լեզվամշակութային կապերին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 հունիսի 2004)

25-28 մայիսի – Հայաստանի Վ. Սարգսյանի անվան առաջին ռազմական բարձրագույն ուսումնական հաստատության հիմնադրման 10-ամյակին նվիրված կուրսանտական գիտական 4-րդ կոնֆերանսին ակտիվորեն մասնակցում են մաս ԵՊՀ քիմիական ֆակուլտետի ուսանողները:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 հունիսի 2004)

27-29 մայիսի – Նոր պայմանագիր կնքելու նպատակով համալսարանում հյուրընկալվում է Կալիֆոռնիայի (Ֆրեզնո) պետհամալսարանի պաշտոնական պատվիրակությունը՝ ռեկտոր, դոկտոր Ջոն Վեյթի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին մաս Ֆրեզնոյի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, պրոֆ. Տիգրան Գույումճյանը և ԵՊՀ պատվավոր դոկտոր, պրոֆ. Բարլո (Պարույր) Տեր-Սկրտչյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 հունիսի 2004)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 2821 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Մաթեմատիկայի՝ 67 բակալավր, 18 մագիստրոս, Մեխանիկայի՝ 29 բակալավր, 12 մագիստրոս, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 132 բակալավր, 58 մագիստրոս, Ֆիզիկայի՝ 70 բակալավր, 32 մագիստրոս, Ռադիոֆիզիկայի՝ 56 բակալավր, 22 մագիստրոս, Քիմիական՝ 110 բակալավր, 11 մագիստրոս, Կենսա-

բանական՝ 77 բակալավր, 38 մագիստրոս, Երկրաբանական՝ 48 բակալավր, 19 մագիստրոս, Աշխարհագրական՝ 60 բակալավր, 14 մագիստրոս, Տնտեսագիտության՝ 251 բակալավր, 92 մագիստրոս, Պատմության՝ 71 բակալավր, 39 մագիստրոս, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության՝ 138 բակալավր, 62 մագիստրոս, Միջազգային հարաբերությունների՝ 128 բակալավր, 67 մագիստրոս, Բանասիրական՝ 134 բակալավր, 56 մագիստրոս, Ժուռնալիստիկայի՝ 50 բակալավր, 15 մագիստրոս, Ռուս բանասիրության՝ 45 բակալավր, 6 մագիստրոս, Ռոմանագերմանական բանասիրության՝ 228 բակալավր, 55 մագիստրոս, Արևելագիտության՝ 129 բակալավր, 39 մագիստրոս, Իրավաբանական՝ 215 բակալավր, 57 մագիստրոս, Աստվածաբանության՝ 53 բակալավր, 18 մագիստրոս:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2003-2004 ուստարի, Երևան, 2004, էջ 38)

հունիս – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը տալիս է շրջանավարտներ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Հումանիտար գիտությունների՝ 75, Տնտեսագիտության՝ 45, Կիրառական արվեստի՝ 20:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2003-2004 ուստարի, Երևան, 2004, էջ 370, 372, 375)

3 հունիսի – ԵՊՀ Վարդգես և Ռիտա Պալեանների անվան դահլիճում տեղի է ունենում ՀՀ արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանի հանդիպումը Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողների հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 հունիսի 2004)

30 հունիսի – ԵՊՀ գիտխորհուրդը միաձայն որոշում է ընդունում նոր ուսումնական տարվանից համալսարանում բացել Սոցիոլոգիայի ֆակուլտետ:

(Տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝

http://www.yu.am/site/index.php?lang=1&page=3&p_num=&id=77,
տե՛ս նաև «Երևանի համալսարան», 15 հուլիսի 2004)

4 սեպտեմբերի – Համալսարանի գիտխորհրդի որոշմամբ Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մուհամմադ Խաթամին հասարակական-քաղաքական ակնառու գործունեության համար շնորհվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

(Երևանի պետական համալսարան, հաշվետվություն 2003-2004 ուստարի, Երևան, 2004, էջ 25)

9 սեպտեմբերի – Երկօրյա պաշտոնական այցով ՀՀ-ում գտնվող Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մեյեդ Մուհամմադ Խաթամին այցելում է Երևանի պետական համալսարան և հանդիպում պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչների հետ: Ներկա էին նաև բարձրաստիճանի հյուրեր թե՛ Իրանից և թե՛ Հայաստանից:

Հանդիպման վերջում ԵՊՀ ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը ԻԻՀ նախագահին հանձնեց ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման վկայականը և ԵՊՀ հոբելյանական ոսկե հուշամեդալ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 սեպտեմբերի 2004)

17 սեպտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի դահլիճում տեղի է ունենում Հայաստանի և Արցախի բուհերի, այդ թվում՝ ԵՊՀ ուսման մեջ առաջավոր մի խումբ ուսանողների «Բարեկամություն» անվանական կրթաթոշակի հանձնման արարողությունը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 սեպտեմբերի 2004)

30 սեպտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ Բուլղարիայի նախագահ Գեորգի Պրվանովին հասարակական-քաղաքական ակնառու գործունեության համար շնորհվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, հաշվետվություն 2003-2004 ուստարի, Երևան, 2004, էջ 25)

2 հոկտեմբերի – Եռօրյա պաշտոնական այցով ՀՀ-ում գտնվող ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Սերգեյ Միրոնովը հանդիպում է Երևանի պետական համալսարանի

գիտական խորհրդի անդամների, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչների հետ: Ներկա էին մաս ՀՀ ԱԺ նախագահ Ա. Բաղդասարյանը, Ս. Միրոնովին ուղեկցող պաշտոնատար անձինք և լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 հոկտեմբերի 2004)

4-17 հոկտեմբերի – Ասիական սեյսմոլոգիական հանձնաժողովի 5-րդ գագաթնաժողովի շրջանակներում Վարդգես և Ռիտա Պալեանների անվան դահլիճում անցկացվում են մախասիմ-պոզիումային ուսուցման դասընթացներ, որոնք ԵՊՀ աշակցությամբ կազմակերպել էին Ասիական սեյսմոլոգիական հանձնաժողովը (ASC) ու Հայկական սեյսմոլոգիայի և երկրի ֆիզիկայի աստղիագիան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 հոկտեմբերի 2004)

5 հոկտեմբերի – ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի հրավերով երկօրյա պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Բուլղարիայի Հանրապետության նախագահ Գեորգի Պրվանովը հանդիպում է ԵՊՀ գիտխորհրդի անդամների, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչների հետ:

Հանդիպման վերջում ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը Գ. Պրվանովին է հանձնում ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման վկայականը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 հոկտեմբերի 2004)

6-12 հոկտեմբերի – Կազմակերպվում է ԵՊՀ 85-ամյակին և Մաքեմատիկայի ֆակուլտետի 80-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով՝ «Մասնական ածանցյալներով դիֆերենցիալ հավասարումները գորբալ և երկրաչափական տեսանկյուններից» թեմայով: Այն կազմակերպել էին Երևանի պետական համալսարանը և ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտը՝ Շվեդիայի գիտությունների թագավորական ակադեմիայի, Վիեննայի Վուլֆգանգ Պաուլի ինստիտուտի, «Հետազոտական մաթեմա-

տիկա», «Պրոմեթևս-Գիտություն» և ԳԱՏԱՀ հիմնադրամների հովանավորությամբ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 հոկտեմբերի 2004)

8 հոկտեմբերի – Բրազիլացի աշխարհահռչակ գրող Պաոլո Կոելյոն, որին ընդունել էին ՀՀ նախագահը, մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարը, հյուրընկալվում է Երևանի պետական համալսարանում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 հոկտեմբերի 2004)

21 հոկտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ հասարակական-քաղաքական ակնառու գործունեության համար ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում է շնորհվում Առնոլդ Ռյուտելին (Էստոնիա): Նույն նիստում հասարակական, հայրենասիրական, մշակութային բեղուն գործունեության և քրիստոնեական քարոզչության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում է շնորհվում մաս Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ին:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2003-2004 ուստարի, Երևան, 2004, էջ 25)

5 նոյեմբերի – ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յասայ դե Հոուս Սիեֆերը և նրան ուղեկցող պատվիրակությունը, որ տարածաշրջանային այցով գտնվում էին Երևանում, հանդիպում են ԵՊՀ գիտխորհրդի անդամների, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչների հետ: Ներկա էր մաս ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը: Ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարին է ընծայում ԵՊՀ ոսկե հուշամեդալ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 8 նոյեմբերի 2004)

16 նոյեմբերի – Պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Էստոնիայի նախագահ Առնոլդ Ռյուտելը հանդիպում է Երևանի պե-

տական համալսարանի գիտխորհրդի անդամների, ուսանողության և դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ:
ԵՊՀ ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը Էստոնիայի նախագահին է հանձնում ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման վկայական:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 նոյեմբերի 2004)

18 նոյեմբերի – Երևանի պետական համալսարանը հյուրընկալում է Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ին: Առիթը վերջինիս գահակալության 5-րդ տարեդարձն էր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 նոյեմբերի 2004)

1 դեկտեմբերի – Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի համակարգչային լսարաններում և համակարգչային կենտրոնում անցկացվում է ուսանողական քիմային մրցույթ: Դա, փաստորեն, համաշխարհային ուսանողական օլիմպիադա է, որի պաշտոնական անվանումն է ACM ICPC:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 դեկտեմբերի 2004)

2005

2004-2005 ուստարում Երևանի պետական համալսարանում դասախոսում էին 221 պրոֆեսոր, 487 դոցենտ, 312 ասիստենտ, 453 դասախոս:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2004-2005 ուստարի, Երևան, 2005, էջ 28)

ԵՊՀ գիտնականներին շնորհվել են միջազգային 14 ծրագրերի դրամաշնորհներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 5 հունվարի 2006)

ԵՊՀ հրատարակչությունը լույս է ընծայել 125 անուն գիրք, որը նրա գոյության ընթացքում արձանագրված ամենաբարձր ցուցանիշներից էր: Այդ հրատարակչությունների ընդհանուր ծավալը կազմում է 3.880 հրատ. մամուլ, տպաքանակը՝ մոտ 28.000 օրինակ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 5 հունվարի 2006)

2004-2005 ուսումնական տարում ԵՊՀ բակալավրիատում սովորում էր 9511 (Քիմիայի ֆակուլտետում 5-ամյա ուսուց.՝ 337), մագիստրատուրայում՝ 1837 ուսանող, ասպիրանտուրայում՝ 323 ասպիրանտ:

«Իրավագիտություն», «Տնտեսագիտություն» մասնագիտություններով երկրորդ մասնագիտությամբ (հեռակա) սովորող ուսանողների թիվը 202 էր:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2004-2005 ուստարի, Երևան, 2004, էջ 32-36)

2004-2005 ուսումնական տարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում սովորում է 1044 ուսանող:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2004-2005 ուստարի, Երևան, 2005, էջ 387)

20 հունվարի – ԵՊՀ գիտական խորհրդի նիստում քննարկվում է ԱՄՆ-ի պետքարտուղարի օգնական Էլիզաբեթ Ջոնսի հայտարարությունը՝ ԼՂ հակամարտության վերաբերյալ. ընդունվում է հայտարարություն, որում մասնավորապես հույս էր հայտնվում, որ «Էլիզաբեթ Ջոնսի հայտարարությունը ընդամենը նրա անձնական կարծիքն է և չի արտահայտում ԱՄՆ-ի պաշտոնական տեսակետը, քանի որ Ամերիկայի Միացյալ Նահանգները մշտապես կառուցողական և հավասարակշռված դերակատարում է ունեցել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացում»:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 25 հունվարի 2005)

7 փետրվարի – Պատմության ֆակուլտետի խորհուրդը հանդես է գալիս դատապարտող հայտարարությամբ 2004 թ. փետրվարի 19-ին Բուդապեշտում աղբբեջանցի հանցագործի կողմից Հայոց բանակի սպա Գուրգեն Մարգարյանի սպանության տարելիցի առիթով: Հայտարարությունում Հունգարիայի իշխանություններից և դատարանից պահանջվում էր, որ նողկալի մարդասպանը ստանա արժանի պատիժ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 փետրվարի 2005)

8 փետրվարի – Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողության և պրոֆեսորադասախոսական կազմի հյուրն էր ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 15 փետրվարի 2005)

1-5 մարտի – ԵՊՀ մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնը և Տորոնտոյի (Կանադա) դեղագործության ֆակուլտետը Ֆիզիկայի ֆակուլտետի ղեկան, պրոֆեսոր Ս. Հարությունյանի և Տորոնտոյի համալսարանի պրոֆեսոր Տ. Չալիկյանի նախաձեռնությամբ ծաղկաձորում կազմակերպում է «Հիդրատացիան և մոլեկուլի ճանաչման թերմոդինամիկան» թեմայով գիտաժողով, որը հովանավորում էին ԵՊՀ-ն, Տորոնտոյի համալսարանը, Հայրուս-գազարդը, NFSAT-ը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մարտի 2005)

16-17 մարտի – ԵՊՀ Ե. Չարենցի անվան դահլիճում տեղի է ունենում ռուսաց լեզվի հանրապետական-միջբուհական օլիմպիադան, որին մասնակցում էին 100-ից ավելի ուսանողներ տարբեր բուհերից՝ ԵՊՀ-ից, Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական, Մ. Հերացու անվան պետական բժշկական, Հայաստանի պետական ճարտարագիտական, Ռուս-հայկական (Սլավոնական), Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական, Գավառի տարածաշրջանային պետական համալսարաններից, Գյուղատնտեսական ակադեմիայից, Ֆիզկուլտուրայի հայկական պետական, Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտներից: Օլիմպիադային ներկա էին ԵՊՀ ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը, ՀՀ-ում ՌԴ դեսպան Անատոլի Դրյուկովը, դեսպանատան և բուհերի այլ ներկայացուցիչներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 ապրիլի 2005)

31 մարտի – ՀՀ ժամանած Սիրիայի ցեղապետերը պաշտոնական այցով եղան նաև Երևանի պետական համալսարանում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 ապրիլի 2005)

11 ապրիլի – ՀՀ նախագահ Ռոբերտ Զոհարյանը հանդիպում է Տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 ապրիլի 2005)

19-20 ապրիլի – ԵՊՀ ուսանողական կառույցների միացյալ ուժերով և ռեկտորատի անմիջական աջակցությամբ կազմակերպվում է ուսանողական գիտական նստաշրջան՝ «Հայոց ցեղասպանության խնդիրները XXI դարում» թեմայով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 ապրիլի 2005)

21 ապրիլի – Հայոց մեծ եղեռնի 90-րդ տարելիցի կապակցությամբ մեծ դահլիճում գումարվում է ԵՊՀ գիտխորհրդի ընդլայնված նիստ: Գիտխորհրդի անդամներից բացի՝ նիստին մասնակցում

էին պրոֆետրադասախոսական կազմի ներկայացուցիչներ և ուսանողներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 ապրիլի 2005)

11 մայիսի – ԵՊՀ ուսանողական գիտական ընկերությունը Պալեանների անվան դահլիճում կազմակերպում է գիտաժողով՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի և Շուշիի ազատագրման 13-ամյակին: Գիտաժողովին մասնակցում էին ուսանողներ տարբեր ֆակուլտետներից, դասախոսներ, լրագրողներ, հյուրեր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 մայիսի 2005)

28 մայիսի – ԵՊՀ ուսանողությունը և պրոֆետրադասախոսական կազմը մասնակցում են Արագած լեռան շուրջ կազմակերպված Միասնության շուրջպարին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 հունիսի 2005)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 3081 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների. Մաթեմատիկայի՝ 62 բակալավր, 27 մագիստրոս, Մեխանիկայի՝ 32 բակալավր, 10 մագիստրոս, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 166 բակալավր, 48 մագիստրոս, Ֆիզիկայի՝ 91 բակալավր, 47 մագիստրոս, Ռադիոֆիզիկայի՝ 70 բակալավր, 20 մագիստրոս, Քիմիական՝ 111 բակալավր, 18 մագիստրոս, Կենսաբանական՝ 91 բակալավր, 50 մագիստրոս, Երկրաբանական՝ 66 բակալավր, 21 մագիստրոս, Աշխարհագրական՝ 49 բակալավր, 16 մագիստրոս, Տնտեսագիտության՝ 229 բակալավր, 101 մագիստրոս, Պատմության՝ 116 բակալավր, 46 մագիստրոս, Փիլիսոփայության և հոգեբանության՝ 79 բակալավր, 45 մագիստրոս, Սոցիոլոգիայի՝ 80 բակալավր, 29 մագիստրոս, Միջազգային հարաբերությունների՝ 150 բակալավր, 85 մագիստրոս, Բանասիրական՝ 138 բակալավր, 58 մագիստրոս, Ժողովրդագրության՝ 48 բակալավր, 23 մագիստրոս, Ռուս բանասիրության՝ 50 բակալավր, 9 մագիստրոս, Ռոմանագերմանական

բանասիրության՝ 248 բակալավր, 66 մագիստրոս, Արևելագիտության՝ 121 բակալավր, 54 մագիստրոս, Իրավաբանական՝ 203 բակալավր, 51 մագիստրոս, Աստվածաբանության՝ 40 բակալավր, 17 մագիստրոս:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2004-2005 ուստարի, Երևան, 2005, էջ 38)

հունիս – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը տալիս է շրջանավարտներ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Բնական գիտությունների՝ 44, Հումանիտար գիտությունների՝ 99, Տնտեսագիտության՝ 44, Կիրառական արվեստի՝ 18:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2004-2005 ուստարի, Երևան, 2005, էջ 388, 393, 395, 399)

3-5 հունիսի – Ստեփանակերտում տեղի է ունենում հայոց գրերի գյուտի և արցախահայ դպրության կենտրոնի՝ Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյակին նվիրված կրթական միջազգային գիտաժողով, որը կազմակերպել էին ԼՂՀ և ՀՀ Կառավարությունները, ՀՀ պետական բուհերի ռեկտորների խորհուրդը:

Գիտաժողովն իր աշխատանքները ավարտեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր քարտուղարին ուղղված ուղերձի ընթերցմամբ, որտեղ մասնավորապես դիմում էին ՅՈՒՆԵՍԿՕ-ին, որ նա Լեռնային Ղարաբաղում դեռևս 405 թ. հիմնադրված Ամարաս կրթօջախի համալիրը վերցնի իր հովանավորության տակ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 հունիսի 2005)

7 հունիսի – ԵՊՀ-ում անցկացվում է «Լավագույն ուսանող» 5-րդ հոբելյանական մրցանակաբաշխությունը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 հունիսի 2005)

19 հուլիսի – Հայաստանի Հանրապետության Կառավարությունը որոշում է ընդունում (N 975-Ն) «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին»:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 հունվարի 2006)

5 սեպտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ Ինտերպոլի գլխավոր քարտուղար Ռոնալդ Քեննեթ Նորլին (ԱՄՆ) իրավապահական և հասարակական-քաղաքական ոլորտներում միջազգային ակնառու գործունեության համար շնորհվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

Նույն նիստում հասարակական-քաղաքական ակնառու գործունեության համար ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում է շնորհվում նաև Ֆինլանդիայի մախագահ Տարյա Կաարինա Հալոնենին:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2004-2005 ուստարի, Երևան, 2005, էջ 25)

11-15 սեպտեմբերի – ՀՀ ԳԱԱ-ի, Կրթության և գիտության մախարության, Երևանի պետական համալսարանի, Երևանի Ա. Ալիխանյանի անվան ֆիզիկայի ինստիտուտի, Ֆիզիկոսների հայկական ընկերակցության ու ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի գիտական խորհրդի մախաձեռնությամբ Երևանում կազմակերպվում է հայ ֆիզիկոսների առաջին համաշխարհային կոնգրեսը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 սեպտեմբերի 2005)

20-27 սեպտեմբերի – ԵՊՀ Ծաղկաձորի հանգստյան տանը տեղի է ունենում «Հարմոնիկ անալիզ և մոտավորություններ» թեմայով երրորդ միջազգային գիտաժողովը: Այն կազմակերպվել էր Երևանի պետական համալսարանի և ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտի համատեղ ջանքերով և «Հետազոտական թեմատիկա», «Պրոմեթևս-Գիտություն», ԳԱՏՀ հիմնադրամների և Սիջազգային մաթեմատիկական միության հովանավորությամբ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 հոկտեմբերի 2005)

27 սեպտեմբերի – ՀՀ մախագահ Ռ. Քոչարյանի հրավերով պաշտոնական այցով Հայաստանում գտնվող (սեպտեմբերի 26-28) Ֆինլանդիայի Հանրապետության մախագահ Տարյա Հալոնենը ամուսնու՝ Պեննտի Յարայարվիի և իրեն ուղեկցող պատվի-

րակության հետ հանդիպում է ունենում ԵՊՀ գիտխորհրդի անդամների և ուսանողության ներկայացուցիչների հետ:

Վերջում ԵՊՀ ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը Տ. Հայրենյանին հանձնեց ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման վկայական:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 սեպտեմբերի 2005)

28 սեպտեմբերի – Ինտերպոլի գլխավոր քարտուղար Ռոնալդ Քեն-նեթ Նոբլը ԵՊՀ Պալեանների անվան դաիլիճում հանդիպում է պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության (ոչ միայն համալսարանական) հետ: Հանդիպմանը ներկա էին մասնակցացուցիչներ ՀՀ ՆԳ նախարարությունից, Ինտերպոլի հայաստանյան գրասենյակից:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 հոկտեմբերի 2005)

հոկտեմբեր – ԵՊՀ ուսանողական խորհուրդը կազմակերպում է մշակութային խոշոր միջոցառում, որին մասնակցել են մասն Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի, Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի, Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի շնորհալի ուսանողներ: Միջոցառմանը ներկա են գտնվել ավելի քան 500 համալսարանականներ և հյուրեր:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2005-2006 ուստարվա գործունեություն, Երևան, 2006, էջ 402)

6 հոկտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ Լատվիայի նախագահ Վալրա-Վիկե Ֆրեյբերգային հասարակական-քաղաքական ակնառու գործունեության համար շնորհվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

Նույն նիստում Միչիգանի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ Գևորգ Բարդակչյանին գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար նույնպես շնորհվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2004-2005 ուստարի, Երևան, 2005, էջ 25)

8 հոկտեմբերի – ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի հրավերով հոկտեմբերի 6-ին պաշտոնական այցով Հայաստան ժամանած Լատվիայի Հանրապետության նախագահ տիկին Վայրա-Վիկե Ֆրեյբերգան ամուսնու՝ Իմանթս Ֆրեյբերգայի հետ հյուրընկալվում է Երևանի պետական համալսարանում և մասնակցում այդ առթիվ գումարված գիտական խորհրդի ընդլայնված նիստին: Հանդիպման վերջում ԵՊՀ ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը Լատվիայի նախագահին է հանձնում ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման վկայականը և ԵՊՀ հոբելյանական ոսկե հուշամեդալ: (Տե՛ս «Երևանի համալսարան», 20 հոկտեմբերի 2005)

13 հոկտեմբերի – Հայաստանի Հանրապետության Կառավարությունը որոշում (N 1894-Ն) է ընդունում «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և ՀՀ Կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 15-ի N 1222-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:

(Տե՛ս «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», N 74 (446) 30 նոյեմբերի 2005, էջ 66, 68, տե՛ս նաև «Երևանի համալսարան», 10 հունվարի 2006)

19 հոկտեմբերի – Հայ բանասիրության ֆակուլտետի Ե. Չարենցի անվան դահլիճում ֆակուլտետի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի հետ հանդիպում է արգենտինահայ անվանի բանաստեղծուհի Ալիսիա Կիրակոսյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 նոյեմբերի 2005)

31 հոկտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի է ունենում Հայաստանի պետական բուհերի ռեկտորների խորհրդի նիստը: Այն նվիրված էր ՀՀ-ում սահմանադրական բարեփոխումներին: Նիստին մասնակցում էր նաև ՀՀ նախագահի՝ սահմանադրական փոփոխությունների հարցերով ներկայացուցիչ Արմեն Հարությունյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 նոյեմբերի 2005)

4 նոյեմբերի – ՀՀ ԱԳ նախարար Վ. Օսկանյանը հանդիպում է Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողների հետ: Հանդիպումը նվիրված էր ՀՀ-ում իրականացվող սահմանադրական բարեփոխումներին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 նոյեմբերի 2005)

12 նոյեմբերի – Ե. Չարենցի անվան դահլիճում տեղի է ունենում Հայկական աշխարհագրական ընկերության հերթական՝ 9-րդ համագումարը, որը համընկնում էր այդ գիտահասարակական կազմակերպության հիմնադրման 70-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 նոյեմբերի 2005)

15 նոյեմբերի – ԵՊՀ ՈՒԳԸ-ն և Իրավագիտության ֆակուլտետը համատեղ կազմակերպում են խորհրդաժողով՝ նվիրված ՀՀ-ում սահմանադրական բարեփոխումների հարցին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 նոյեմբերի 2005)

17 նոյեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի ընդլայնված նիստում քննարկվում է ՀՀ-ում սահմանադրական բարեփոխումների հարցը: Գիտխորհրդի անդամներից բացի՝ նիստին մասնակցում էին ամբիոնների վարիչներ, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ և ուսանողներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 նոյեմբերի 2005)

21 նոյեմբերի – ԵՊՀ մեծ դահլիճում տեղի է ունենում համաբուհական համերգ, որը նվիրված էր Ուսանողների միջազգային օրվան (նոյեմբերի 17):

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 նոյեմբերի 2005)

25 նոյեմբերի – Ե. Չարենցի անվան դահլիճում Համազգային հայ կրթական ու մշակութային միության և Երևանի պետական համալսարանի նախաձեռնությամբ տեղի է ունենում գիտաժողով, որը նվիրված էր Հայաստանի առաջին հանրապետության

հանրային կրթության և արվեստի նախարար Նիկոլ Աղբալյանի ծննդյան 130-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 նոյեմբերի 2005)

2 դեկտեմբերի – Ե. Չարենցի անվան դահլիճում տեղի է ունենում գիտական նստաշրջան՝ «Մեսրոպ Մաշտոց. Հայ գրերի դերն ու նշանակությունը» թեմայով: Այն կազմակերպել էր ԵՊՀ ուսանողական գիտական ընկերությունը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 դեկտեմբերի 2005)

7 դեկտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում կնքվում է համագործակցության պայմանագիր ԵՊՀ-ի և «Սինոփսիս» ընկերության միջև: Այդ արարողությանը մասնակցում էին Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, Ֆիզիկայի և Ռադիոֆիզիկայի ֆակուլտետների ուսանողներ, դասախոսներ, ռեկտորատի անդամներ, «Սինոփսիս» ընկերության աշխատակիցներ և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 դեկտեմբերի 2005)

15 դեկտեմբերի – ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն Պալեանների անվան դահլիճում կազմակերպում է սեմինար-քննարկում՝ նվիրված 20-րդ դարի փիլիսոփայական ուղղություններից էքզիստենցիալիզմի մարդաբանական հիմնախնդիրներին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 դեկտեմբերի 2005)

21 դեկտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ Ռուզան Օհանջանյանին (ԱՄՆ) գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար շնորհվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում, իսկ Աբրահամ Մուրաֆյանին (ԱՄՆ) ԵՊՀ ուսանողությանը բարեգործական օգնություն ցուցաբերելու համար՝ ԵՊՀ պատվավոր բարերարի կոչում:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2006-2007 ուստարվա գործունեություն, Երևան, 2007, էջ 32, 33)

2006

2005-2006 ուստարում Երևանի պետական համալսարանում դասախոսում էին 218 պրոֆեսոր, 486 դոցենտ, 361 ասիստենտ, 438 դասախոս: Համալսարանում գործում էր 103 ամբիոն: Համալսարանի ասպիրանտուրայում սովորում էր 290 ասպիրանտ, որոնք, ըստ ֆակուլտետների, բաշխված էին հետևյալ կերպ. Մաթեմատիկայի՝ 14, Սեխանիկայի՝ 8, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 17, Ֆիզիկայի՝ 22, Ռադիոֆիզիկայի՝ 8, Զինիայի՝ 17, Կենսաբանության 22, Երկրաբանության 4, Աշխարհագրության 9, Տնտեսագիտության՝ 42, Միջազգային հարաբերությունների՝ 15, Պատմության՝ 13, Փիլիսոփայության և հոգեբանության՝ 13, Սոցիոլոգիայի՝ 14, Հայ բանասիրության՝ 12, Ժողովրդագրության՝ 5, Ռուս բանասիրության՝ 1, Ռոմանագերմանական բանասիրության՝ 12, Արևելագիտության՝ 13, Իրավագիտության՝ 19, Աստվածաբանության՝ 9:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2005-2006 ուստարվա գործունեություն, Երևան, 2006, էջ 8, 25, 35)

2005-2006 ուստարում ԵՊՀ գրադարանի գրքային ֆոնդը ընդգրկում էր մոտ 2 մլն միավոր գրականություն, որից գիտական՝ 1154428 միավոր, ուսումնական՝ 767953: Օտար լեզվով գրականությունը 271273 միավոր է: Պահեստային և գրավորխանակման ֆոնդում հաշվվում էին 37584 միավոր գիրք և ամսագիր:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2005-2006 ուստարվա գործունեություն, Երևան, 2006, էջ 392)

2005-2006 ուստարում Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողների թիվը 1148 էր, որից 412-ը՝ պետպատվերով:

Մասնաճյուղում գործում էր 4 ֆակուլտետ՝ Բնական գիտությունների, Հումանիտար գիտությունների, Տնտեսագիտության, Կիրառական արվեստի:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2005-2006 ուստարվա գործունեություն, Երևան, 2006, էջ 404)

2005-2006 ուստարում ԵՊՀ եկամուտների գումարը կազմում է 415858.0 հազար դրամ, այդ թվում՝ բյուջետային ընդհանուր ֆինանսավորում՝ 1164873.0 հազար դրամ, ծառայության դիմաց՝ 2993711.0 հազար դրամ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2005-2006 ուստարվա գործունեություն, Երևան, 2006, էջ 74)

2005-2006 ուսումնական տարում ԵՊՀ բակալավրիատում սովորում էր 10050 (Քիմիայի ֆակուլտետում 5-ամյա ուսուցմամբ՝ 261), մագիստրատուրայում՝ 1998 ուսանող:

«Իրավագիտություն», «Տնտեսագիտություն» մասնագիտություններով երկրորդ մասնագիտությամբ (հեռակա) սովորող ուսանողների թիվը 220 էր:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2005-2006 ուստարվա գործունեություն, Երևան, 2006, էջ 31-36)

2005-2006 ուսումնական տարում ԵՊՀ ատենախոսական խորհուրդներում պաշտպանվել է 100 ատենախոսություն, որոնցից 7-ը՝ դոկտորական:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2005-2006 ուստարվա գործունեություն, Երևան, 2006, էջ 63)

9 հունվարի – Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թ. հուլիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին» N 975-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին և 8-րդ կետերին համաձայն՝ ՀՀ վարչապետը հաստատում է Երևանի պետական համալսարան

նի կառավարման բարձրագույն մարմնի՝ խորհրդի կազմը (72 անդամ):

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 հունվարի 2006)

16 հունվարի – Տեղի ունեցավ ԵՊՀ կառավարման բարձրագույն մարմնի՝ նորաստեղծ խորհրդի առաջին նիստը: Նիստը վարում էր ՀՀ ԿԳ նախարար Ս. Երիցյանը: Օրակարգում ընդգրկված էր երեք հարց. 1. ԵՊՀ կառավարման խորհրդի նախագահի ընտրություն, 2. Կազմակերպական բնույթի հարցեր, 3. ԵՊՀ ռեկտորի ընտրության կարգի հաստատում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 հունվարի 2006)

16 հունվարի – ՀՀ ԿԳ նախարարի հրամանով մինչև ՀՀ օրենսդրությամբ և ԵՊՀ կանոնադրությամբ սահմանված բաց մրցույթով ռեկտորի ընտրությունն ու նշանակումը ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար նշանակվեց բնագիտական ֆակուլտետների ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Էդվարդ Վարդանի Չուբարյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 հունվարի 2006)

27 հունվարի – Տեղի է ունենում ԵՊՀ կառավարման բարձրագույն մարմնի խորհրդի երկրորդ նիստը: Օրակարգում ընդգրկված էր երեք հարց. 1. ԵՊՀ խորհրդի նախագահի ընտրությունը, 2. ԵՊՀ խորհրդի աշխատակարգի հաստատումը, 3. ԵՊՀ ռեկտորի ընտրությունների ընթացակարգի հաստատումը:

ԵՊՀ խորհրդի նախագահի ընտրության համար առաջադրվեցին ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի և ԵՊՀ նախկին ռեկտոր, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի թեկնածությունները (վերջինս ինքնաբացարկ հայտնեց): Փակ (զաղտնի) քվեարկությամբ Ս. Սարգսյանը ընտրվեց ԵՊՀ կառավարման խորհրդի նախագահ: Նիստում որոշվեց ԵՊՀ ռեկտորի ընտրություններն անցկացնել 2006 թ. մարտի 22-ին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 հունվարի 2006)

2 փետրվարի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը պարգևատրվում է ԵՊՀ «Գիտական ուսումնասիրության բնագավառում ձեռք բերած նվաճումների համար» մեդալով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 մայիսի 2006, տե՛ս նաև Երևանի պետական համալսարան. 2005-2006 ուստարվա գործունեություն, Երևան, 2006, էջ 20)

28 փետրվարի – ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողությունը մասնակցում են Հանրապետության հրապարակում տեղի ունեցած հանրահավաքին, որը նվիրված էր սումգայի-թյան ոճրագործության 18-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 մարտի 2006)

13 մարտի – Տեղի է ունենում ԵՊՀ կառավարման խորհրդի երրորդ նիստը, որը վարում էր խորհրդի նախագահ, ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը: Օրակարգում դրված էին խորհրդի քարտուղարի և ռեկտորի ընտրության ընթացակարգի ընդունման հարցեր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 մարտի 2006)

22 մարտի – Տեղի է ունենում ԵՊՀ կառավարման բարձրագույն մարմնի՝ խորհրդի չորրորդ նիստը, որին մասնակցում էին խորհրդի 72 անդամներից 70-ը: Բացելով նիստը՝ խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը ներկայացնում է օրակարգը՝ ԵՊՀ ռեկտորի ընտրության հարցը: ԵՊՀ ռեկտորի պաշտոնի թափուր տեղի համար դիմել էր 4 թեկնածու՝ Գեղամ Գևորգյանը (Մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ), Սամվել Հարությունյանը (Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր), Գագիկ Ղազինյանը (Իրավագիտության ֆակուլտետի դեկան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր) և Արամ Սիմոնյանը (ԵՊՀ հումանիտար ֆակուլտետների ուսումնական աշխատանքների գծով պրոռեկ-

տոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր): Փակ (գաղտնի) քվեարկության առաջին և երկրորդ փուլերում ԵՊՀ ղեկավար չի ընտրվում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մարտի 2006)

23 մարտի – Մեծ դահլիճում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հետ հանդիպում է ունենում Սանկտ Պետերբուրգի Էրմիտաժի պետական թանգարանի տնօրեն, ՌԴ ԳԱ թղթակից անդամ Սիլսայիլ Բորիսովիչ Պիոտրովսկին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մարտի 2006)

31 մարտի – Ե. Չարենցի անվան դահլիճում տեղի է ունենում արցախյան հերոսամարտում զոհված ազատամարտիկ Նորայր Մարությանին նվիրված գրքի (հեղ.՝ Աշոտ Պետրոսյան) շնորհանդեսը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 ապրիլի 2006)

10 ապրիլի – ՀՀ ԿԳ նախարարի հրամանով դադարեցվում են բնագիտական ֆակուլտետների ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդվարդ Վարդանի Չուբարյանի՝ ԵՊՀ ղեկավարի պաշտոնակատարի լիազորությունները՝ իր դիմումի համաձայն:

ՀՀ ԿԳ նախարարի՝ նույն օրվա մեկ այլ հրամանով 2006 թ. ապրիլի 11-ից ԵՊՀ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվում հումանիտար ֆակուլտետների ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Արամ Հրաչիկի Սիմոնյանը՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ԵՊՀ ղեկավարի ընտրությունը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 ապրիլի 2006)

10 ապրիլի – Ռուս բանասիրության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողությունը ունկնդրում են ՌԴ Լերմոնտովյան միության նախագահ, Մոսկվայի միջազգային հա-

րաբերությունների պետական ինստիտուտի պրոֆեսոր Վ. Ա. Չախարովի դասախոսությունը՝ «Ի՞նչ չգիտենք Լեռնոնտովի մասին» թեմայով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 ապրիլի 2006)

20 ապրիլի – ԵՊՀ ուսանողական գիտական ընկերությունում կազմակերպվում է «Հայոց ցեղասպանության հայեցակետերն արդի փուլում» թեմայով ուսանողական կոնֆերանս՝ նվիրված Հայոց մեծ եղեռնի 91-րդ տարելիցին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 30 ապրիլի 2006)

27 ապրիլի – ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի հրավերով պաշտոնական այցով Հայաստան ժամանած Լիտվայի Հանրապետության նախագահ Վալդաս Ադամկուսը հանդիպում է ԵՊՀ գիտախորհրդի անդամների, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչների հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 մայիսի 2006)

27 ապրիլի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի է ունենում միջբուհական ուսանողական գիտաժողով՝ «Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնախնդիրները և մարտավարությունը» թեմայով՝ նվիրված Մեծ եղեռնի 91-րդ տարելիցին: Այն կազմակերպել էին ԵՊՀ ՈՒԳԸ-ն և ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միությունը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 մայիսի 2006)

11-13 մայիսի – INTAS ծրագրի «Եվրասիական քաղաքագիտական ցանց ետխորհրդային տարածաշրջանում ռեժիմների փոփոխությունների համեմատական հետազոտություն» դրամաշնորհի շրջանակում Եվրասիական քաղաքական հետազոտությունների ցանցը ԵՊՀ-ի հետ Պալեանների անվան դահլիճում անցկացնում է «Ինստիտուցիոնալ փոխակերպումներ և ինստիտուցիոնալ դիզայնի համեմատությունը ետխորհրդային երկրներում» թեմայով գիտաժողով, որին, բացի համալսարան-

նականներից, մասնակցում էին նաև արտասահմանյան մի շարք երկրների գիտնականներ և հյուրեր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 մայիսի 2006)

15 մայիսի – Տեղի է ունենում ԵՊՀ կառավարման խորհրդի նիստ: Կատարվում էր ԵՊՀ ռեկտորի կրկնակի ընտրություն: Նիստը վարում էր խորհրդի նախագահ, ՀՀ պաշտպանության նախարար Ս. Սարգսյանը: Խորհրդի 72 անդամներից ներկա էին 71-ը: Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով Արամ Սիմոնյանը ընտրվում է ԵՊՀ ռեկտոր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 մայիսի 2006)

19 մայիսի – Տեղի է ունենում ԵՊՀ նոր մասնաշենքի հանդիսավոր բացումը Աբովյան փողոցի N 52 հասցեում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 31 մայիսի 2006)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 3411 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Մաթեմատիկայի՝ 73 բակալավր, 25 մագիստրոս, Մեխանիկայի՝ 31 բակալավր, 8 մագիստրոս, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 189 բակալավր, 48 մագիստրոս, Ֆիզիկայի՝ 96 բակալավր, 35 մագիստրոս, Ռադիոֆիզիկայի՝ 72 բակալավր, 28 մագիստրոս, Քիմիայի՝ 113 բակալավր, 16 մագիստրոս, Կենսաբանության՝ 94 բակալավր, 53 մագիստրոս, Երկրաբանության՝ 61 բակալավր, 17 մագիստրոս, Աշխարհագրության՝ 53 բակալավր, 14 մագիստրոս, Տնտեսագիտության՝ 255 բակալավր, 136 մագիստրոս, Պատմության՝ 115 բակալավր, 44 մագիստրոս, Փիլիսոփայության և հոգեբանության՝ 97 բակալավր, 43 մագիստրոս, Սոցիոլոգիայի՝ 79 բակալավր, 37 մագիստրոս, Միջազգային հարաբերությունների՝ 171 բակալավր, 81 մագիստրոս, Հայ բանասիրության՝ 133 բակալավր, 61 մագիստրոս, Ժուռնալիստիկայի՝ 58 բակալավր, 22 մագիստրոս, Ռուս բանասիրության՝ 68 բակալավր, 17 մագիստրոս, Ռոմանագերմանական բանասիրության՝ 293 բակալավր, 89 մագիստրոս,

Արևելագիտության՝ 141 բակալավր, 61 մագիստրոս, Իրավագիտության՝ 241 բակալավր, 80 մագիստրոս, Աստվածաբանության՝ 46 բակալավր, 17 մագիստրոս:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2005-2006 ուստարվա գործունեություն, Երևան, 2006, էջ 38)

հունիս – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը տալիս է շրջանավարտներ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Բնական գիտությունների՝ 48, Հումանիտար գիտությունների՝ 98, Տնտեսագիտության՝ 52, Կիրառական արվեստի՝ 20:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. հաշվետվություն 2005-2006 ուստարվա, Երևան, 2006, էջ 406, 408, 412, 415)

1 հունիսի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ Սեյմուր Փափերթին (ԱՄՆ-ի Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտ) գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար շնորհվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2005-2006 ուստարվա գործունեություն, Երևան, 2006, էջ 22)

9 հունիսի – Պալեանների անվան սրահում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հետ հանդիպում է արվեստի և գիտությունների ամերիկյան ակադեմիայի, գիտությունների և ճարտարագիտության ազգային ակադեմիաների, մաս Գրանսիայի, Նորվեգիայի, Բավարիայի գիտությունների ակադեմիաների և Լոնդոնի թագավորական գիտական ընկերության արտասահմանյան անդամ, Սթենֆորդի համալսարանի համակարգչային ծրագրավորման արվեստի վաստակավոր պրոֆեսոր, դոկտոր Դոնալդ Է. Կնոթը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 հունիսի 2006)

13-15 հունիսի – ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության ֆինանսավորմամբ ու երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոնի նախաձեռնությամբ

ԵՊՀ-ում անցկացվում է «Երիտասարդություն, իրականություն, հեռանկարներ» թեմայով համահայկական երիտասարդական երկրորդ համաժողովը, որին մասնակցում էին ՀՀ, ԼՂՀ և Ջավախքի 80 երիտասարդական կազմակերպությունների, կուսակցությունների երիտասարդական թևերի, բուհերի, հաշմանդամների, սկաուտների և իրավաբանների միությունների, բարեգործական ՀԿ-ների շուրջ 300, ինչպես նաև պետական կառավարման մարմինների և ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպությունների 22 ներկայացուցիչներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 20 հունիսի 2006)

28 հունիսի – Երևանի պետական համալսարանում հյուրընկալվում էր ըստ IBF աշխարհի հնգակի և ըստ IBO աշխարհի քառակի հաղթող, ավստրալաբնակ Վախթանգ (Վիկ) Դարչինյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 հուլիսի 2006)

3 հուլիսի – Երևանի պետական համալսարանի նախաձեռնությամբ ԵՊՀ հյուրերի տան դահլիճում տեղի է ունենում «Սիմետրիայի մեթոդները ֆիզիկայում» թեմայով 12-րդ միջազգային գիտաժողովի առաջին նիստը՝ նվիրված Դուբնայի Ատոմային հետազոտությունների միացյալ ինստիտուտի հիմնադրման 50-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», 10 հուլիսի 2006)

5 սեպտեմբերի – Աստվածաբանության ֆակուլտետի ուսանողների և դասախոսների հետ հանդիպում է Սիրիայի Արաբական Հանրապետության մուֆթի շեյխ Ահմադ Նադդ ալ Դին Հասսունին:

(Տե՛ս «Հայաստան», 15 սեպտեմբերի 2006,

տե՛ս նաև Սիրիայի Արաբական Հանրապետության մուֆթին ԵՊՀ-ում,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.y-su.am/news/hy/223DtaXDA65V6w77LgScjhM79B>, մուտք՝ 06.07.9019)

12 սեպտեմբերի – Երևանի պետական համալսարան է այցելում Իրանի Իսլամական Հանրապետության Մեջլիսի նախագահ Դոլան

Ալի Հադդադ Ադելը: Հանդիպման վերջում ԵՊՀ ռեկտորը Մեջ-
լիսի նախագահին պարգևատրում է ԵՊՀ ոսկե մեդալով:

(Տե՛ս «Առավոտ», 13 սեպտեմբերի 2006,
«Հայաստան», 15 սեպտեմբերի 2006,
տե՛ս նաև ԻԻՀ Մեջլիսի նախագահը մայր բուհում,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.y-su.am/news/hy/fpVS4ITNyhTQHXLajARZhu5oAn>, մուտք՝ 06.07.9019)

12 սեպտեմբերի – Կենտրոնական մասնաշենքի առջև ԵՊՀ մշակույ-
թի կենտրոնի նախաձեռնությամբ տեղի է ունենում համերգ-մի-
ջոցառում՝ նվիրված առաջին կուրսեցիների երդմանը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2006-2007
ուստարվա գործունեություն, Երևան, 2007, էջ 541)

12 սեպտեմբերի – ՀՀ նախագահ Ռոբերտ Բոչարյանի հրամանագրե-
րով ՀՀ անկախության հռչակման 15-ամյակի կապակցությամբ
պատվավոր կոչումներ և մեդալներ են շնորհվում կրթության,
գիտության և սպորտի բնագավառների մի խումբ ներկայացու-
ցիչների: ԵՊՀ-ից պարգևատրվել են.

Էդուարդ Չուբարյան (գիտության վաստակավոր գործչի կո-
չում),

Բաբկեն Հարությունյան («Մովսես Խորենացի» մեդալ):

(Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 14 սեպտեմբերի 2006)

15 սեպտեմբերի – ՀՀ ԿԳ նախարարությունը հաստատում է ասպի-
րանտուրայի ընդունելության նոր կարգը, որի համաձայն՝ դի-
մորդները պարտավորվում են կենտրոնացված և առավել բար-
դացված ստուգարքներ հանձնել օտար լեզվից և ինֆորմատի-
կայի ու համակարգչից օգտվելու հիմունքներից:

(Տե՛ս «Երևանի համալսարան», մարտ 2007)

20 սեպտեմբերի – ԵՊՀ մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան Գե-
ղամ Գևորգյանը հանդիպեց ուսանողներին: Արդեն ամենամյա

ավանդույթ դարձած հանդիպման ժամանակ դեկանը ներկայացրեց անցած ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքներն ու պատասխանեց ուսանողների հարցերին: Սակայն հանդիպման հիմնական նպատակը ֆակուլտետի օլիմպիական թիմի պարզևատրումն էր: Այս տարի Մաթեմատիկայի ֆակուլտետի օլիմպիական թիմը մասնակցել է միանգամից երկու օլիմպիադաների: Իրանի Իսլամական Հանրապետությունում կազմակերպված օլիմպիադայից թիմը վերադարձել է խմբային բրոնզե և անհատական ոսկե ու բրոնզե մեդալներով: Իսկ Ուկրաինայում կայացած Եվրոպական համալսարանների օլիմպիադայից բոլորն էլ վերադարձել են անհատական պարգևներով, որոնցից մեկը՝ երկրորդ, մեկը՝ երրորդ կարգի մրցանակներով: Հանդիպմանը ներկա էր նաև ԵՊՀ ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Արսեն Քարամյանը: Պրոռեկտորը հանձնեց ԵՊՀ շրջանավարտների միավորման պատրաստած նվերները և, առիթից օգտվելով, հակիրճ ներկայացրեց ուսանողների հետ տարվող աշխատանքներում առաջիկա անելիքները:

(Տե՛ս Տե՛ս Մաթեմատիկայի ֆակուլտետի օլիմպիական թիմն այս անգամ էլ ձեռնունայն չի վերադարձել, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/11FQMqprRPiOFtaqW1bQ7g3sA>, մուտք՝ 06.07.2019)

26 սեպտեմբերի – «Սինոփսիս» ընկերությունը ԵՊՀ-ին է տրամադրում Չարլզ Բեբիջի անվան դրամաշնորհ, որով համալսարանում բացվում է համակարգչային երկու համաձայն կենտրոն: Հետագա համագործակցության և ծրագրի բարեհաջող մեկնարկի առթիվ ԵՊՀ ռեկտորը «Սինոփսիս» ընկերության նախագահ Չի-Ֆուն Չանին պարգևատրում ԵՊՀ ոսկեգոծ մեդալով:

(Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 27 սեպտեմբերի 2006, տե՛ս նաև Այսօրվա համակարգիչը կրթում է վաղվա մասնագետին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.ysu.am/news/hy/aqRfDcrBdGrXS80EK1yLezB71f>, մուտք՝ 06.07.9019)

28 սեպտեմբերի – Ժուռնալիստիկայի ֆակուլտետում տեղի է ունենում Քենթիի և Լուիզիանայի պետական համալսարանների, Ժուռնալիստիկայի և մեդիա մենեջմենթի կոլկասյան դպրոցի համագործակցությամբ իրականացվող «Ժուռնալիստիկայի հայկական դպրոց» մագիստրոսական միջազգային նոր ծրագրի շնորհանդեսը:

(Տե՛ս «Երկիր», 29 սեպտեմբերի 2006, տե՛ս նաև Երևանի պետական համալսարան, 2006-2007 ուստարվա գործունեություն, Երևան, 2007, էջ 541)

29 սեպտեմբերի – ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ Ռումինիայի նախագահ Տրայան Բասեսկուն հասարակական-քաղաքական ասպարեզում բեղում գործունեության և ակնառու նվաճումների համար շնորհվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, 2005-2006 ուստարվա գործունեություն, Երևան, 2006, էջ 22)

3 հոկտեմբերի – ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միությունը ԵՊՀ-ում կազմակերպում է ուսանողների հանդիպումը Փարիզի 9-րդ թաղամասի քաղաքապետ, սոցիալիստական կուսակցությունը ներկայացնող Ժակ Բրավոյի հետ:

(Տե՛ս «Երկիր», 6 հոկտեմբերի 2006)

4 հոկտեմբերի – ԵՊՀ-ում անցկացվում է ACM ICPC ծրագրավորման ուսանողական թիմային միջազգային օլիմպիադայի հայաստանյան քառորդ եզրափակիչ փուլը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան, 2006-2007 ուստարվա գործունեություն, Երևան, 2007, էջ 542)

5 հոկտեմբերի – Երևանի պետական համալսարան է այցելում Ռումինիայի նախագահ Տրայան Բասեսկուն: Հանդիպման ընթացքում Ռումինիայի նախագահը մանրամասն ներկայացնում է այն ուղին, որն անցել էր Ռումինիան Եվրամիությանը անդամակցելու ճանապարհին: Հանդիպման վերջում ԵՊՀ ռեկտոր

Ա. Սիմոնյանը Տրայան Բասենկուն է հանձնում ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման վկայականը և համալսարանի ոսկե մեդալ:

(Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 6 հոկտեմբերի 2006,

տե՛ս նաև «Հայկական ժամանակ», 6 հոկտեմբերի 2006,

«Չորրորդ իշխանություն» 6 հոկտեմբերի 2006,

տե՛ս նաև Ռումինիայի նախագահը ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.ysu.am/news/hy/B0tF4V8ea2oUqNeK2LCdpjgQKo>, մուտք՝ 30.07.2019)

11 հոկտեմբերի – Համալսարանականների հյուրն էր դաշնակահարուհի, երաժշտագետ, գրող Նամի Միկոյանը: Հանդիպման վերջում նա իր հոր՝ Գրիգոր Հարությունյանի անվան կրթաթոշակ է սահմանում ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում սովորող լավագույն ուսանողներին:

(Տե՛ս «Առավոտ», 12 հոկտեմբերի 2006)

18 հոկտեմբերի – Ե. Չարենցի անվան դահլիճում համալսարանականներին է հյուրընկալվում աշխարհահռչակ օպերային երգչուհի Հասմիկ Պապյանը:

(Տե՛ս «Առավոտ», 19 հոկտեմբերի 2006, տե՛ս նաև

Երևանի պետական համալսարան. 2006-2007

ուստարվա գործունեություն, Երևան, 2007, էջ 542)

19 հոկտեմբերի – Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Անրի Կյունին հանդիպում է Իրավագիտության և Միջազգային հարաբերությունների ֆակուլտետների ուսանողների հետ:

(Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 20 հոկտեմբերի 2006)

24 հոկտեմբերի – ԵՊՀ ռեկտորատը և «Տեմպուս»-ի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչները վկայականներ շնորհեցին ԵՊՀ գրադարանում անցկացված դասախոսների վերապատրաստման երկշաբաթյա դասընթացի մասնակիցներին: ԵՊՀ պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանը նշեց, որ ԵՊՀ-ի և «Տեմ-

պուս»-ի միջև համագործակցությունը սկսվել էր երկու տարի առաջ. «ԵՊՀ գրադարանը մոտ 194 հազար եվրո գրանտ է շահել Եվրամությունից՝ մեր բուհի գրադարանը համակարգչայնացնելու և այն կիրառելու հմտություն ձեռք բերելու համար»: Նա ավելացրեց, որ ԵՊՀ ղեկավարությունը մտադիր է բուհում ստեղծել հեռաուսուցման համակարգ՝ հատկապես հաշվի առնելով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի, Հայկական սփյուռքի առկայությունը:

(Տե՛ս Ուսանող առանց բուհի,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/LHU1yKL6cYP7dd1OYvPvsH1fwo>, մուտք՝ 06.07.2019)

2 նոյեմբերի – ԵՊՀ ռեկտոր, պրոֆեսոր Արամ Սիմոնյանը Ֆրանսիայի Մոնպելիե-1 համալսարանի միջազգային կապերի գծով պրոռեկտոր, իրավագիտության պրոֆեսոր Բերնարդ Դյուրանին հանձնեց ԵՊՀ պատվավոր դոկտորի վկայականը: ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչումը Բերնարդ Դյուրանին շնորհվել էր դեռևս 2001 թվականին:

(Տե՛ս Բերնարդ Դյուրանը ԵՊՀ պատվավոր դոկտոր է,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/ACMHtOr5fMpkYbAHezoOIUmRno>, մուտք՝ 06.07.2019)

3 նոյեմբերի – Ժուռնալիստիկայի ֆակուլտետի լսարաններից մեկը անվանակոչվում է գոհված ազատամարտիկ, լրագրող Նորայր Մարությանի անունով:

(Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 4 նոյեմբերի 2006)

9 նոյեմբերի – ԵՊՀ-ում իր աշխատանքներն է սկսում «Հայ-ֆրանսիական պատմական առնչությունները» թեմայով գիտաժողովը, որին ներկա էին նաև ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Սերժ Սմեսովը և ռեկտոր Արամ Սիմոնյանը: Գիտաժողովի ընթացքում հնչում են հայ և ֆրանսիական պատմական մի շարք իրողությունների՝ 1890 թ. Ֆրանսիայի խորհրդարանում Հայկական հարցի քննարկմանը, Հայոց ցե-

դասպանության տարիներին ֆրանսիական մամուլում տեղ գտած հրապարակումներին, 20-րդ դարասկզբին Ֆրանսիայում հայ մտավորականներին և արվեստագետներին առնչվող գեկուցումներ:

(Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 10 նոյեմբերի 2006)

10 նոյեմբերի – ԵՊՀ կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ պաշտպանության նախարար Ս. Սարգսյանը ԵՊՀ գիտխորհրդի ընդլայնված նիստում պրոֆեսորադասախոսական կազմին է ներկայացնում «ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն» փաստաթղթի նախագիծը:

(Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11 նոյեմբերի 2006, տե՛ս նաև Ազգային անվտանգությունն սկսվում է ԵՊՀ-ից, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.ysu.am/news/hy/9Tm02BesujaiZBs92LSietTAPa>, մուտք՝ 06.07.9019)

17 նոյեմբերի – ԵՊՀ ուսանողները և դասախոսները հյուրընկալում են ՌԴ արտաքին գործերի նախարարությանը կից դիվանագիտական ակադեմիայի ռեկտոր Ալեքսանդր Պանովին:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան 2006-2007 ուստարվա գործունեություն, Երևան, 2007, էջ 542)

23 նոյեմբերի – ԵՊՀ գիտական խորհուրդը հաստատում է Բոլոնիայի գործընթացի համաձայն ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների իրականացման ուղղությամբ Երևանի պետական համալսարանում նախատեսվող գործողությունների ծրագիրը, որը ավարտվելու էր 2008-2009 ուստարում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», մարտ 2007)

29 նոյեմբերի – Պատմության, Տնտեսագիտության և Աստվածաբանության ֆակուլտետները, որոնք տեղակայված են Աբովյան 52 շենքում, նշում են իրենց մասնաշենքի 100-ամյա տարեդարձը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2006-2007 ուստարվա գործունեություն, Երևան, 2007, էջ 542)

27 դեկտեմբերի – Տեղի է ունենում ԵՊՀ կառավարման խորհրդի տարեկերջյան ամփոփիչ նիստը: ԵՊՀ ռեկտորը հանդես եկավ տարեկան հաշվետվությամբ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան 2006-2007 ուստարվա գործունեություն, Երևան, 2007, էջ 542)

2007

2006-2007 ուստարում Երևանի պետական համալսարանում դասախոսում էին 213 պրոֆեսոր, 475 դոցենտ, 386 ասիստենտ, 460 դասախոս:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2006-2007 ուստարվա գործունեություն, Երևան, 2007, էջ 12)

2006-2007 ուսումնական տարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում (առկա ուսուցում) սովորող ուսանողների թիվը, ըստ ֆակուլտետների, հետևյալն էր. Բնական գիտությունների՝ 275, Հումանիտար գիտությունների՝ 486, Տնտեսագիտության՝ 233, Կիրառական արվեստի՝ 159:

Հեռակա ուսուցման ուսանողների թիվը 97 էր²²:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2006/2007 ուստարվա գործունեություն, Երևան, 2007, էջ 457, 462, 468, 471, 474)

17 հունվարի – Տեղի է ունենում պետական բուհերի ռեկտորների հանդիպում ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ: Քննարկվում են բուհական համակարգում իրականացվող բարեփոխումների ընթացքը և անելիքները, մասնավորապես՝ Հայաստանի՝ Բոլոնիայի գործընթացին միանալու, կրթական երկաստիճան և կրեդիտային համակարգերի ներդրման ընթացքում ի հայտ եկած խնդիրները և դրանց լուծման ուղիները:

(Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 17 հունվարի 2007)

26 հունվարի – Երևանի պետական համալսարանում տեղի է ունենում ԵՊՀ-ի և ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի կազմակերպած հանրապետական գիտաժողովը՝ նվիրված հայոց ազգային բանակի կազմավորման 15-ամյա-

կին:

(Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 27 հունվարի 2007, տե՛ս նաև «Երևանի համալսարան, մարտ 2007»)

14 փետրվարի – ԵՊՀ ռեկտորատի ընդլայնված նիստում քննարկվում է «Հանրակրթության մասին ՀՀ օրենքի» նախագիծը՝ ԿԳ փոխ-նախարար Բագրատ Եսայանի և ԱԺ գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական համձ-նաժողովի նախագահ Հրանուշ Հակոբյանի մասնակցությամբ: Համալսարանի մանկավարժության ամբիոնի վարիչ Նազիկ Հովհաննիսյանը ներկայացնում է նախագծի վերաբերյալ ԵՊՀ դասախոսների կարծիքները:

(Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 15 փետրվարի 2007, տե՛ս նաև «Ազգ», 15 փետրվարի 2007)

9 մարտի – ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանը հյուրընկալեց ԱՄՆ-ի Քոնեքթիքուտի համալսարանի սոցիալական աշխատանքի դպրոցի՝ Հայաս-տան ժամանած ուսանողներին: Ուսանողները Հայաստան էին ժամանել երկու համալսարանների համատեղ ուսումնական ծրագրի շրջանակներում²³:

(Տե՛ս Իրական համագործակցության փուլում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/EEenhWa6d5STP3bQoYrtEZmzoaz>, մուտք՝ 05.07.2019)

4 ապրիլի – ԵՊՀ գիտխորհրդի դահլիճում հյուրընկալվել էր Հայաս-տանում ԱՄՆ-ի գործերի ժամանակավոր հավատարմատար Էնթոնի Գոդֆրին: Նա համալսարանականներին ներկայացավ հայ-ամերիկյան հարաբերություններին նվիրված փոքրիկ դա-սախոսությամբ:

Ելույթից հետո Հայաստանում ԱՄՆ-ի գործերի ժամանա-կավոր հավատարմատարը պատասխանեց ներկաների հար-ցերին: Շոշափվեցին Ղարաբաղի Հանրապետության՝ հայ-ադրբեջանական բանակցություններում որպես բանակցող

կողմ ներգրավելու, հայ-թուրքական հարաբերությունների և մի շարք այլ հարցեր:

(Տե՛ս Էնթոնի Գոդֆրին ԵՊՀ-ում,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/aeq9Yelle2vu1H6tHSiW0wVHrf>, մուտք՝ 06.07.2019)

5 ապրիլի – ԵՊՀ-ում բացվում է քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն:

(Տե՛ս «Երևանի համալսարան», ապրիլ 2007)

16 ապրիլի – Պատմության ֆակուլտետում նշվում է հայ արվեստի պատմության և տեսության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի հիմնադրման 10-ամյակը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան 2006-2007 ուստարվա գործունեություն, Երևան, 2007, էջ 544)

17 ապրիլի – ԵՊՀ Ռիտա և Վարդգես Պալեանների անվան դահլիճում տեղի է ունենում միջազգային գիտաժողով՝ «Օրակարգ 2021. Ժողովրդավարության զարգացման քսան տարիներ. ընտրությունների դերը ժողովրդավարության գործընթացում» թեմայով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», ապրիլ 2007)

23 ապրիլի – Երևանի պետական համալսարանում հյուրընկալվում է ցեղասպանության մասին վավերագրական կինոնկարի («Ճշացողները») ռեժիսոր Կարլա Կարապետյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», ապրիլ 2007)

27 ապրիլի – ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը այցելում է ԵՊՀ, հանդիպում ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

(Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 28 ապրիլի 2007, տե՛ս նաև «Երևանի համալսարան», ապրիլ 2007)

27 ապրիլի – Հետբուհական լրացուցիչ կրթության հիմնախնդիրները քննարկելու և լուծման մեխանիզմներ առաջարկելու նպատակով Երևանի պետական համալսարանի հետբուհական մասնագիտական կրթության վարչությունը կազմակերպել էր գիտագործնական սեմինար:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Քաղծառայության խորհրդի, Կրթության ազգային ինստիտուտի և տարբեր բուհերի ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկում ծավալվեց Հայաստանում հետբուհական կրթությունը զարգացնելու ուղղությամբ: ԵՊՀ հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ Ժասմեն Աղապյանը սեմինարի մասնակիցներին համառոտ ներկայացրեց վարչության հնգամյա գործունեությունը, որը հիմնականում իրականացվել է դասախոսների որակավորման բարձրացման և վերապատրաստման, ինչպես նաև քաղծառայողների և կրթության աշխատողների մասնագիտական վերապատրաստման ուղղությամբ:

(Տե՛ս Նպաստում է բարձրագույն կրթությանը,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/m3GdRJvIjHRrYY9qWWLHLFNrmA>, մուտք՝ 05.07.2019)

30 ապրիլի – Երևանի կամերային երաժշտության տանը տեղի է ունենում ցերեկույթ՝ նվիրված ԵՊՀ գոհված ուսանող-ազատամարտիկների հիշատակին և «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի 10-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», ապրիլ 2007)

3 մայիսի – ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը հանդիպում է ԵՊՀ գիտ-խորհրդի անդամների հետ: Նա մասնակցում է նաև ԵՊՀ եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնի բացման արարողությանը, որին ներկա էր նաև ՀՀ ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանը:

(Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 4 մայիսի 2007)

8 մայիսի – ՀՀ վարչապետ, ԵՊՀ կառավարման խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանը ԵՊՀ-ում հանդիպում է ուսանողների հետ և պատասխանում նրանց հուզող բազմաթիվ հարցերի:

(Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 9 մայիսի 2007)

14 մայիսի – Երևանի պետական համալսարանում հյուրընկալվում է հայտնի տիեզերագնաց, պրոֆեսոր Յուրի Բատուրինը, որը Հայաստան էր ժամանել ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հրավերով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», մայիս/հունիս 2007)

23 մայիսի – Տեղի ունեցավ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրյանների անվան գրադարանի ռեսուրս կենտրոնի բացման արարողությունը: 28 համակարգիչներով հագեցած ռեսուրս կենտրոնը բացվել է Եվրամիության «Տեմպուս» ծրագրի հետ համագործակցության շրջանակներում:

«Տեմպուս» ծրագրի հայաստանյան ղեկավար Լանա Կարլովան նշեց, որ իրենց ծրագրի շրջանակներում սա գրադարանի գործունեությանը նվիրված առաջին համագործակցությունն էր: ԵՊՀ ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Արսեն Քարամյանը հույս հայտնեց, որ համագործակցությունը կշարունակվի: Պրոռեկտորը նշեց, որ ԵՊՀ-ն իր հերթին հավաստում է, որ առաջիկա ժամանակահատվածում բավական մեծ ներդրումներ է կատարելու գրադարանային գործի զարգացման համար:

(Տե՛ս Եվս մեկ քայլ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝

<http://ysu.am/news/hy/50n5qHL246jX4vPi8bOubejcBy>, մուտք՝ 05.07.2019)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 3438 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Մաթեմատիկայի՝ 94 բակալավր, 27 մագիստրոս, Մեխանիկայի՝ 30 բակալավր, 11 մագիստրոս, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 209 բակալավր, 67 մագիստրոս, Ֆիզիկայի՝ 87 բակալավր, 44 մագիստրոս, Ռադիոֆիզիկայի՝ 81 բակալավր, 18

մագիստրոս, Քիմիայի՝ 90 բակալավր, 17 մագիստրոս, Կենսաբանության՝ 88 բակալավր, 52 մագիստրոս, Երկրաբանության՝ 58 բակալավր, 20 մագիստրոս, Աշխարհագրության՝ 59 բակալավր, 20 մագիստրոս, Տնտեսագիտության՝ 245 բակալավր, 140 մագիստրոս, Պատմության՝ 123 բակալավր, 47 մագիստրոս, Փիլիսոփայության և հոգեբանության՝ 90 բակալավր, 40 մագիստրոս, Սոցիոլոգիայի՝ 65 բակալավր, 34 մագիստրոս, Միջազգային հարաբերությունների՝ 189 բակալավր, 95 մագիստրոս, Հայ բանասիրության՝ 131 բակալավր, 79 մագիստրոս, Ժուռնալիստիկայի՝ 66 բակալավր, 28 մագիստրոս, Ռուս բանասիրության՝ 64 բակալավր, 18 մագիստրոս, Ռոմանագերմանական բանասիրության՝ 259 բակալավր, 95 մագիստրոս, Արևելագիտության՝ 123 բակալավր, 59 մագիստրոս, Իրավագիտության՝ 228 բակալավր, 83 մագիստրոս, Աստվածաբանության՝ 46 բակալավր, 19 մագիստրոս:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2006-2007 ուստարվա գործունեություն, Երևան, 2007, էջ 42)

հունիս – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը տալիս է շրջանավարտներ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Բնական գիտությունների՝ 51, Հումանիտար գիտությունների՝ 117, Տնտեսագիտության՝ 50, Կիրառական արվեստի՝ 27:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2006/2007 ուստարվա գործունեություն, Երևան, 2007, էջ 459, 464, 469, 472)

6 հունիսի – Ժուռնալիստիկայի ֆակուլտետը և Լրագրողների միջազգային կենտրոնի (ICFJ) հայաստանյան մասնաճյուղը համատեղ կազմակերպել էին «Ժուռնալիստական կրթության ապագան Հայաստանում» թեմայով առաջին գիտաժողովը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», մայիս/հունիս 2007)

9 հունիսի – ԵՊՀ են այցելում Գերմանիայի Տրիերի համալսարանի նախագահ Պետեր Շվենկմեյզերը և նույն համալսարանի պրոֆեսոր Վոլֆգանգ Լուն: ԵՊՀ-ի և Տրիերի համալսարանի միջև

կնքվում է համագործակցության նոր պայմանագիր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», մայիս/հունիս 2007)

21 հունիսի – ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի կոնֆերանսների դահլիճում մեկնարկեց «Բոլոնիայի գործընթացի շրջանակներում բարձրագույն կրթության մեջ ինստիտուցիոնալ բարեփոխումները» թեմայով միջազգային սեմինարը:

Սեմինարը կազմակերպել էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կրթության ծրագրավորման միջազգային ինստիտուտը Մոսկվայում ՅՈՒՆԵՍԿՕ-ի գրասենյակի և Երևանի պետական համալսարանի հետ:

(Տե՛ս Միջազգային սեմինար, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝

<http://ysu.am/news/hy/wBCLSzs0RdFwqG8Io8xen59bd6>, մուտք՝ 05.07.2019)

21-23 հունիսի – ՀՀ ԿԳ նախարարության, ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարության, ՀՀ ԳԱԱ-ի, ԵՊՀ-ի և ԱրՊՀ-ի նախաձեռնությամբ գումարվում է գիտաժողով՝ «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան» թեմայով՝ նվիրված Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին:

(Տե՛ս Շուշին հայոց քաղաքակրթության օրրան,

Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին

նվիրված գիտաժողովի ծրագիր, Երևան, 2007)

23 հունիսի – Ֆիզիկայի ֆակուլտետի դահլիճում տեղի է ունենում Մաթեմատիկայի ֆակուլտետում ստեղծված ակտուար մաթեմատիկայի ամբիոնի բացման արարողությունը, որին մասնակցում էին ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Աղվան Վարդանյանը, ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանը և ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան մասնաճյուղի սոցիալական հատվածի խորհրդատու Վլադիմիր Յաքսենկոն:

(Տե՛ս «Երևանի համալսարան», մայիս/հունիս 2007)

27 հունիսի – Պաշտոնական այցով ՀՀ ժամանած Հունաստանի նախագահ Կարոլոս Պապուլիասին հյուրընկալում են նաև ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողությունը:

Հանդիպման ավարտին ԵՊՀ ռեկտորը Հունաստանի հյուրին է հանձնում ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման վկայականը և ԵՊՀ ոսկե մեդալ:

(Տե՛ս «Ազգ», 28 հունիսի 2007, տե՛ս նաև «Երևանի համալսարան», մայիս/հունիս 2007)

28 հունիսի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ Մեխանիկայի և Մաթեմատիկայի ֆակուլտետները միավորվում են, և ստեղծվում է նոր՝ Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ:

(Տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝

http://www.ysu.am/site/index.php?lang=1&page=3&p_num=&id=53
տե՛ս նաև «Երևանի համալսարան», մայիս-հունիս 2007)

15-30 հուլիսի – Համազգային ուսանողական ֆորումի շրջանակներում սփյուռքահայ 70 ուսանողներ այցելում են ԵՊՀ: Նրանց հետ հանդիպման ժամանակ ԵՊՀ ռեկտորը հանգամանորեն ներկայացնում է ԵՊՀ ֆակուլտետները, մասնագիտությունները, ինչպես նաև սփյուռքահայերի կարգավիճակի, վարձավճարների, կրեդիտային համակարգի ճկունության և ուսանողների փոխանակման ծրագրերով ԵՊՀ-ում սովորելու հնարավորությունները:

(Տե՛ս «Երևանի համալսարան», սեպտեմբեր 2007)

16-27 հուլիսի – ԵՊՀ-ում տեղի է ունենում «Կրթության որակի ապահովման ներբուհական մեխանիզմների մշակումն ու ներդրումը Հայաստանում» քննատիկ ամառային հավաքը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», սեպտեմբեր 2007)

20-25 օգոստոսի – ԵՊՀ-ում տեղի է ունենում եվրոպական և ազգային աստղագիտական ընկերությունների միացյալ համաժողովը՝ «JENAM-2007»:

(Տե՛ս «Երևանի համալսարան», սեպտեմբեր 2007)

7-9 սեպտեմբերի – ՀՀ ՁԼՄ-ների ներկայացուցիչները հյուրընկալվում են ԵՊՀ Ծաղկաձորի «Համալսարան» ուսումնասիրտադրական բազայում:

Հանդիպման առիթը «Բոլոնիայի գործընթացը ԵՊՀ-ում» եռօրյա սեմինար-քննարկումն էր, որի նախաձեռնողը ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչությունն էր:

(Տե՛ս «Ազգ», 11 սեպտեմբերի 2007, տե՛ս նաև «Երևանի համալսարան», սեպտեմբեր 2007)

11 սեպտեմբերի – Երևանի պետական համալսարանում ռեկտոր Արամ Սիմոնյանը և Թբիլիսիի պետական համալսարանի ռեկտոր Գեորգի Խուբուան ստորագրում են համաձայնագիր, որով կրթական, գիտական և մշակութային բնագավառներում երկու բուհերի միջև սկիզբ է դրվում համագործակցության:

(Տե՛ս «Առավոտ», 12 սեպտեմբերի 2007, տե՛ս նաև «Երևանի համալսարան», սեպտեմբերի 2007)

17 սեպտեմբերի – Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում բացվում է պորտուգալերենի հատուկ լսարան, որը հնարավորություն է ընձեռում ուսանողներին ուսումնասիրելու պորտուգալերեն և ծանոթանալու Բրազիլիայի պատմությանն ու մշակույթին: Լսարանի բացմանը ներկա էին ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Արման Կիրակոսյանը, Բրազիլիայի արտակարգ և լիազոր դեսպան տիկին Ռենատե Ստիլլեն, ռեկտոր Արամ Սիմոնյանը:

(Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 18 սեպտեմբերի 2007)

20 սեպտեմբերի – Երևանի պետական համալսարանի և Ֆրանսիայի Նիցցա քաղաքի Սոֆիա Անտիպոլիս համալսարանի միջև կնքվում է պայմանագիր, որը նախատեսում էր համագործակցություն և ծրագրերի փոխանակման խթանում երկու բուհերի միջև:

(Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 21 սեպտեմբերի 2007)

28 սեպտեմբերի – ԵՊՀ պրոռեկտոր Արսեն Քարամյանն ու մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան Գեղամ Գևորգյանը հանդիպեցին ֆակուլտետի ուսանողներին:

Հանդիպման ընթացքում ներկայացվեցին ֆակուլտետի՝ անվանական կրթաթոշակ ստացած չորս ուսանողները, մյուս ուսանողների՝ միջազգային օլիմպիադաներում մասնակցության արդյունքները, ինչպես նաև ֆակուլտետի աշխատակիցների այլ ձեռքբերումներ:

Գեղամ Գևորգյանը հայտնեց, որ ֆակուլտետի շրջանավարտների ջանքերով ուսանողները կարողացան մասնակցել օլիմպիադային, ինչպես նաև վերանորոգվել և կահավորվել է ֆակուլտետի ընթերցասրահը: Ա. Քարամյանը կարևորեց Գ. Գևորգյանի ջանքերը ֆակուլտետի շրջանավարտների հետ հաջողությամբ համագործակցելու համար, ինչը շատ քիչ դեկանների է հատուկ:

(Տե՛ս Գեղամ Գևորգյանը երախտապարտ է հովանավորներին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/5IKqGoXxLJ4jX25gsUNAB01dKKT>, մուտք՝ 05.07.2019)

2 հոկտեմբերի – Հնդկական ազգային-ազատագրական շարժման առաջնորդ, փիլիսոփա Մահաթմա Գանդիի ծննդյան օրվա առթիվ ԵՊՀ-ում կազմակերպվում է հուշ-երեկո:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2007-2008 ուստարվա գործունեություն, Երևան, 2008, էջ 604)

5 հոկտեմբերի – Ֆրանսիայի Պրովանսի համալսարանի հայոց լեզվի ամբիոնի վարիչ Ռոբեր Տեր-Մերկերյանին է հանձնվում ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման վկայականը:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2007-2008 ուստարվա գործունեություն, Երևան, 2008, էջ 604)

5 հոկտեմբերի – ԵՊՀ-ում նշվում է «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի հիմնադրման 40-րդ տարեդարձը:

(Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 6 հոկտեմբերի 2007, տե՛ս նաև «Երևանի համալսարան», հոկտեմբեր 2007)

8 հոկտեմբերի – ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանը և Հայաստանում գտնվող ՌԴ կենտրոնական բանկի առաջին փոխնախագահ Ալեքսեյ Ուլյուկանը հանդիպում են Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողների հետ:

(Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 9 հոկտեմբերի 2007)

11 հոկտեմբերի – Երևանի պետական համալսարանի և Դուբնայի բնության, հասարակության ու մարդու միջազգային համալսարանի միջև ստորագրվում է համագործակցության պայմանագիր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», հոկտեմբեր 2007)

13 հոկտեմբերի – «Մեծահասակների ուսումնառության շաբաթ» ծրագրի շրջանակներում բացվում է աշխատանքային հերթական շուկան: Տոնավաճառը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության գործակալության, «USAID» ամերիկյան ծրագրի, մի քանի կենտրոնների, ինչպես նաև ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնների համատեղ նախաձեռնության արդյունքն էր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», հոկտեմբեր 2007)

13 հոկտեմբերի – ԵՊՀ-ում կայացած ծրագրավորման քիմային բաց առաջնության ժամանակ, որին մասնակցում էին ԵՊՀ-ի, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի, «Անանիա Շիրակացի» ճեմարանի և Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի քիմերը, «ԵՊՀ-1» քիմն արժանանում է առաջին կարգի մրցանակի:

(Տե՛ս «Երևանի համալսարան», հոկտեմբեր 2007)

15 հոկտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ Յարոսլավ Ռոմանի Դաշկևիչին (Ուկրաինա) գիտության և կրթության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար շնորհվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2007-2008 ուստարվա գործունեություն, Երևան, 2008, էջ 29)

16 հոկտեմբերի – Երևանի պետական համալսարանում տեղի է ունենում «Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» թեմայով միջազգային երկրորդ գիտաժողովը: Նախաձեռնողներն ու կազմակերպիչներն էին Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիան (ԱՌՀԱ), ՀՀ կրթության և գիտության նախարարությունը և ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», հոկտեմբեր 2007)

18 հոկտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադին հասարակական և քաղաքական ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար շնորհվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

(Երևանի պետական համալսարան, 2007-2008
ուստարվա գործունեություն, Երևան, 2008, էջ 30)

22 հոկտեմբերի – Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մահմուդ Ահմադինեժադը ՀՀ կատարած պաշտոնական այցի շրջանակներում հանդիպում է Երևանի պետական համալսարանի դասախոսներին և ուսանողներին:

ԵՊՀ ռեկտորը նրան է հանձնում ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման վկայականը և ոսկե մեդալ:

(Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 23 հոկտեմբերի 2007,
տե՛ս նաև «Երևանի համալսարան», հոկտեմբեր 2007)

25 հոկտեմբերի – Տեղի է ունենում ԵՊՀ ուսանողական խորհրդի «Մեր ժամանակը» պարբերականի լույսընծայման շնորհանդեսը:

(Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 26 հոկտեմբերի 2007)

5 նոյեմբերի – Երևանի պետական համալսարանի ուսանողների և Քաղաքական դասընթացների երևանյան դպրոցի (ՔԴԵԴ) սաների հյուրն էր Եվրախորհրդի գլխավոր քարտուղար Թերի Դևիսը:

(Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 6 նոյեմբերի 2007,
տե՛ս նաև «Երևանի համալսարան», նոյեմբեր 2007)

5 նոյեմբերի – «Ռուսաստանի օրերն աշխարհում» ծրագրի շրջանակներում Ռուս բանասիրության ֆակուլտետը նշում է իր կազմավորման 30-ամյակը և Հայաստանում ռուսագիտության սկզբնավորման 70-ամյակը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», նոյեմբեր 2007)

9-12 նոյեմբերի – Երևանի պետական համալսարան է այցելում Բուլղարիայի Սուրբ Կլեմենտ Օրչիդսկու անվան պետական համալսարանի պատվիրակությունը: Ուսումնական այս հաստատության ղեկավար Բոյան Բիոլչևը և պրոռեկտոր Ալեքսանդր Ֆեդոտովը ԵՊՀ ղեկավարության հետ քննարկում են 2006 թ. կնքված պայմանագրի շրջանակներում համագործակցության հետագա ծրագրերը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», նոյեմբեր 2007)

12 նոյեմբերի – ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Սերժ Սմետվը Ե. Չարենցի անվան դահլիճում հանդիպեց Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ուսանողներին: Ուսանողները դեսպանին ողջունեցին թատերական ու երաժշտական կատարումներով: Ֆրանսիական բաժնի ուսանողները Ռեյմոն Բնոյի գրքից վերցված պատմվածքի միջոցով լսարանում ձեռք բերած գիտելիքները ներկայացրին Սերժ Սմետվի ուշադրությանը մաս բեմի վրա: Ուսանողների ֆրանսերենի իմացությամբ հիացած դեսպանը շնորհակալություն հայտնեց Մայր բուհի դասախոսներին՝ ուսանողներին փայլուն ֆրանսերեն դասավանդելու համար:

(Տե՛ս Դեսպանը հիացած էր, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝

<http://ysu.am/news/hy/e2lSdr6UIwToyDMAQTtKxWJFqK>, մուտք՝ 05.07.2019)

13 նոյեմբերի – ԵՊՀ ղեկավարը հյուրընկալում է ՀՀ-ում Եգիպտոսի Արաբական Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Վահիդ ալ-դին Իսմայիլ Ջալալին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», նոյեմբեր 2007)

14 նոյեմբերի – ԵՊՀ ռեկտորը հյուրընկալեց Թեհրանի համալսարանի միջազգային հարաբերությունների վարչության գլխավոր տնօրեն Մուհամեդ Մուսավիին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», նոյեմբեր 2007)

14 նոյեմբերի – Պաշտոնական այցով ՀՀ-ում գտնվող Բուլղարիայի Հանրապետության վարչապետ Սերգեյ Ստանիշևը ԵՊՀ Ռիտա և Վարդգես Պալեանների անվան դահլիճում հանդիպում է համալսարանի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», նոյեմբեր 2007)

15 նոյեմբերի – Իրավագիտության ֆակուլտետի ուսանողական խորհուրդը ՀՀ իրավաբանների միության և «Շրջակա միջավայրի պահպանության կենտրոն» ՀԿ-ի աջակցությամբ Իրավագիտության ֆակուլտետում կազմակերպում է գիտաժողով՝ «Շրջակա միջավայրի իրավունքի հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», նոյեմբեր 2007)

16 նոյեմբերի – ԵՊՀ ղեկավարության և «Վարդանանք» ռազմասիայ-րենասիրական դաստիարակության ակումբի նախաձեռնությամբ Տնտեսագիտության ֆակուլտետում բացվում են Արցախյան ազատամարտում զոհված, ֆակուլտետի նախկին ուսանողներ Վաչագան Ավակիմովի և Ֆուրման Գյորգյանի անունը կրող լսարաններ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», նոյեմբեր 2007)

19 նոյեմբերի – ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում բացվում է «111 ակնթարթ Շուշի բերդաքաղաքի կյանքից» խորագիրը կրող ցուցահանդեսը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», նոյեմբեր 2007)

23 նոյեմբերի – Ֆիզիկայի ֆակուլտետում բացվում է Արցախյան ազատամարտում զոհված համալսարանական Լեոնիդ Ազգալ-դյանի անվան լսարան:

(Տե՛ս «Երևանի համալսարան», նոյեմբեր 2007)

24 նոյեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ Հերման Գուլցին (Գերմանիա) գիտության և կրթության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար շնորհվում է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2007-2008 ուստարվա գործունեություն, Երևան, 20308, էջ 30)

30 նոյեմբերի – Հայաստան կատարած այցի շրջանակներում ՌԴ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Սմբատյանի ուղեկցությամբ ԵՊՀ են այցելում ՌԴ մշակութային մի խումբ հայտնի գործիչներ՝ ՌԴ մշակույթի և կինեմատոգրաֆիայի դաշնային գործակալության ղեկավար Սիլսայիլ Շվիդկոյը, Էրմիտաժի գլխավոր տնօրեն Սիլսայիլ Պիոտրովսկին, «Օգոնյոկ» ամսագրի գլխավոր տնօրեն, կինոռեժիսոր Վիկտոր Լոշակը, ՌԴ ժողովրդական արտիստ Վենիամին Սմեխովը, ՌԴ ժողովրդական արտիստ, Մոսկվայի սատիրայի թատրոնի գեղարվեստական ղեկավար Ալեքսանդր Շիրվինդտը, ՌԴ ժողովրդական արտիստ Իգոր Կոստոլնսկին, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Մոսկվայի դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Զիգարխանյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», դեկտեմբեր 2007)

4 դեկտեմբերի – Ֆիզիկայի ֆակուլտետի ուսանողների հյուրն էր Արցախյան հերոսամարտի լեգենդար հրամանատար, գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս):

(Տե՛ս «Երևանի համալսարան», դեկտեմբեր 2007)

11-12 դեկտեմբերի – Ֆիզիկայի ֆակուլտետի կոնֆերանսների դահլիճում ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մոսկվայի գրասենյակի նախաձեռնու-

թյամբ տեղի է ունենում միկրոուսումնասիրություններ անցկացնող գիտությունների փորձերին նվիրված աշխատանքային երկօրյա սեմինար: Այն նախատեսված էր հայաստանյան դպրոցների ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության ուսուցիչների, ինչպես նաև ԵՊՀ բնագիտական ֆակուլտետների դասախոսների համար:

(Տե՛ս «Երևանի համալսարան», ղեկտենքեր 2007)

12-13 դեկտեմբերի – Իրավագիտության ֆակուլտետի դատական ​​​​նիստերի դահլիճում անցկացվում է ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության և պատմության, քաղաքացիական իրավունքի և քրեական իրավունքի ամբիոնների հիմնադրման 70-ամյակին նվիրված երկօրյա գիտաժողով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», ղեկտենքեր 2007)

12-13 դեկտեմբերի – Շախմատի՝ պրոֆեսորադասախոսական կազմի միջբուհական մրցաշարի կանանց մրցավեճում ԵՊՀ թիմը գրավեց առաջին տեղը:

(Տե՛ս Երևանի պետական ​​​​համալսարան. 2007-2008 ուստարվա գործունեություն, Երևան, 2008, էջ 609)

26 դեկտեմբերի – Տեղի է ունենում ԵՊՀ կառավարման խորհրդի նիստ, որտեղ լավում է ԵՊՀ ռեկտորի տարեկան հաշվետվությունը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», հունվար 2008)

2008

2007-2008 ուստարում Երևանի պետական համալսարանում դասախոսում էին 197 պրոֆեսոր, 504 դոցենտ, 405 ասիստենտ, 465 դասախոս:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2007-2008 ուստարվա գործունեություն, Երևան, 2008, էջ 12)

2007-2008 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանի առկա ուսուցման բակալավրիատում սովորում էր 10538 ուսանող, մագիստրատուրայում՝ 2388 ուսանող, ասպիրանտուրայում՝ 407 (ներկայացված է առկա և հեռակա ասպիրանտների ինչպես նաև օտարերկյա ասպիրանտների թիվը) ասպիրանտ, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 896 ուսանող:

(Տե՛ս Երևանի պետական համալսարանի 2011-2012 ուստարվա գործունեություն, Երևան, 2012, էջ 44-45)

2007-2008 ուսումնական տարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում (առկա ուսուցում) սովորողների թիվը, ըստ ֆակուլտետների, հետևյալն էր՝ Բնական գիտությունների՝ 283, Հումանիտար գիտությունների՝ 509, Տնտեսագիտության՝ 302, Կիրառական արվեստի՝ 179 ուսանող: Հեռակա ուսուցման ուսանողների թիվը 256 էր:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2007-2008 ուստարվա գործունեություն, Երևան, 2008, էջ 543, 548, 555, 558, 561)

15 հունվարի – Հրատարակվում է ԵՊՀ ռեկտորի նոր հրամանը՝ ԵՊՀ մասնաճյուղերում ծխելու դեմ պայքարն ուժեղացնելու միջոցառումներ ձեռնարկելու մասին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», հունվար 2008)

24 հունվարի – ՀՀ ՉՈՒ գլխավոր շտաբի պետ, պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, գեներալ-գնդապետ Սեյրան Օհանյանը բանակի օրվա տոնական միջոցառումների շրջանակներում հանդիպեց ԵՊՀ գիտխորհրդի անդամների հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», հունվար 2008)

28 հունվարի – ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրյանների անվան գրադարանում բացվում է գերմաներենի անկյուն: Նախաձեռնությունը ԵՊՀ գիտական գրադարանին էր: Աջակցել էին ՀՀ-ում Գերմանիայի դեսպանությունը և գերմանական հետազոտական ընկերությունը (DFG), որի դրամաշնորհային միջոցներով ընթերցասրահն ապահովվեց լավագույն գրականությամբ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», հունվար 2008)

1 փետրվարի – ԵՊՀ մեծ դահլիճում տեղի է ունենում «Աջակցություն երիտասարդ համալսարանականների բնակարանաշինությանը» ծրագրի շնորհանդեսը, որին ներկա էին ՀՀ վարչապետ, ԵՊՀ կառավարման խորհրդի նախագահ, «ԵՊՀ շրջանավարտների միավորում», ՀԿ հոգաբարձուների խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանը, «ԵՊՀ շրջանավարտների միավորում» ՀԿ նախագահ Արսեն Քարամյանը, «Գլենդել Հիլզ» շինարարական ընկերության և «Կոնվերս» բանկի ներկայացուցիչները:

(Տե՛ս «Երևանի համալսարան», փետրվար 2008)

7 փետրվարի – ԵՊՀ-ում «Ռուսական աշխարհ» հիմնադրամի օժանդակությամբ բացվում է ռուսական ռեսուրսային կենտրոն: Այն հազեցած է ռուսական գիտական, գեղարվեստական պարբերականների և այլ գրականության թարմ հրատարակություններով: Համակարգչային սերվերն ապահովում է կենտրոնի այցելուների մուտքը Ռուսաստանի առաջատար գրադարանների էլեկտրոնային ռեսուրսներ:

(Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 8 փետրվարի 2008)

9-10 փետրվարի – Իրավագիտության ֆակուլտետի ուսանողական թիմը Կենտրոն և Նորք Մարաշ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ Ֆիլիպ Ջեսսպիի անվան՝ միջազգային իրավունքի շրջանակներում անցկացված դատախազ-մրցույթում զբաղեցնում է առաջին տեղը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», փետրվար 2008)

27 փետրվարի – ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատունը ԵՊՀ գրադարանին է նվիրում շուրջ 600 ամուն գիրք:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան 2007-2008 ուստարվա գործունեություն, Երևան, 2008, էջ 611)

28 փետրվարի – ԵՊՀ ռեկտորը ընդունում է ՀՀ-ում Մեքսիկայի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Ալֆրեդո Պերես Բրավոյին: Հանդիպմանը դեսպանը ներկայացնում է Մեքսիկայի համալսարանի պատմությունը և կարևորում կրթության և գիտության դերն ու նշանակությունը պետության կառուցման և զարգացման գործում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», մարտ 2008)

29 փետրվարի – ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը այցելում է ԵՊՀ և հանդիպում ուսանողների հետ:

(Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 1 մարտի 2008 տե՛ս նաև «Երևանի համալսարան», մարտ 2008)

19 մարտի – Մաթեմատիկայի և մեխանիկայի ու Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետների ուսանողները մասնակցեցին Իսրայելի Արիելի համալսարանի կազմակերպած միջազգային մաթեմատիկական օլիմպիադային: ԵՊՀ թիմը գրավում է երրորդ տեղը՝ իրենից առաջ թողնելով Կիևի և Բրեմենի համալսարանների թիմերին:

(Տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝

[http:// www.y-su.am/site/news/print.php?lang=1&page=2&id=1305](http://www.y-su.am/site/news/print.php?lang=1&page=2&id=1305))

14-18 ապրիլի – Հայ բանասիրության ֆակուլտետը և նույն ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպում են ուսանողական միջբուհական գիտաժողով, որին մասնակցում էին ոչ միայն ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի, այլև Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի, Գավառի պետական համալսարանի, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողները:

(Տե՛ս «Երևանի համալսարան», մայիս 2008)

21 ապրիլի – Կենսաբանության ֆակուլտետում տեղի է ունենում «Կենդանիների իրավունքների պաշտպանության բիոէթիկական ասպեկտները» թեմայով սեմինար:

(Տե՛ս «Երևանի համալսարան», ապրիլ 2008)

24 ապրիլի – ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողությունը սգո երթ են կազմակերպում դեպի Հայոց մեծ եղեռնի զոհերի հուշահամալիր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», ապրիլ 2008)

6 մայիսի – Պատմության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության և ԵՊՀ մշակույթի կենտրոնի ջանքերով կազմակերպված՝ մայիսյան հերոսամարտերին նվիրված միջոցառմանը ներկա էր նաև գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», մայիս 2008)

8 մայիսի – Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում անցկացվում է «Մաթեմատիկա-2008» մրցույթը, որին մասնակցում էր ֆիզմաթ թեքումով 11 վարժարանների մոտ 40 աշակերտ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», մայիս 2008)

16 մայիսի – ԵՊՀ-ում մեկնարկում է «Օտարերկրացիների ուսուցումը Հայաստանում. հիմնախնդիրներ և լուծումներ» երկօրյա

միջազգային կրթական գիտաժողովը: Միջոցառման կազմակերպիչը ԵՊՀ օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետն էր, որին աջակցել էր ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», մայիս 2008)

16 մայիսի – Երևանի պետական համալսարանի հիմնադրման 89-րդ տարեդարձի օրը ԵՊՀ մշակույթի կենտրոնի ջանքերով անցկացվում է «ԵՊՀ լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխությունը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», մայիս 2008)

20 մայիսի – ԵՊՀ 90-ամյա հոբելյանին ընդառաջ՝ ԵՊՀ պատմության թանգարանի և մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ բացվում է «Չարթոնք» խորագիրը կրող ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին ԵՊՀ պատմության թանգարանի կերպարվեստի ֆոնդի լավագույն կտավները:

(Տե՛ս «Երևանի համալսարան», մայիս 2008)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է 3728 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Մաթեմատիկայի և մեխանիկայի՝ 137 բակալավր, 52 մագիստրոս, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 187 բակալավր, 61 մագիստրոս, Ֆիզիկայի՝ 110 բակալավր, 53 մագիստրոս, Ռադիոֆիզիկայի՝ 88 բակալավր, 34 մագիստրոս, Քիմիայի՝ 128 բակալավր, 20 մագիստրոս, Կենսաբանության՝ 84 բակալավր, 60 մագիստրոս, Աշխարհագրության և երկրաբանության՝ 127 բակալավր, 41 մագիստրոս, Տնտեսագիտության՝ 241 բակալավր, 156 մագիստրոս, Պատմության՝ 132 բակալավր, 58 մագիստրոս, Փիլիսոփայության և հոգեբանության՝ 96 բակալավր, 61 մագիստրոս, Սոցիոլոգիայի՝ 96 բակալավր, 41 մագիստրոս, Միջազգային հարաբերությունների՝ 202 բակալավր, 123 մագիստրոս, Հայ բանասիրության՝ 150 բակալավր, 76 մագիստրոս, Ժուռնալիստիկայի՝ 48 բակալավր, 28 մագիստրոս, Ռուս

բանասիրության՝ 64 բակալավր, 22 մագիստրոս, Ռոմանագերմանական բանասիրության՝ 289 բակալավր, 122 մագիստրոս, Արևելագիտության՝ 134 բակալավր, 52 մագիստրոս, Իրավագիտության՝ 239 բակալավր, 86 մագիստրոս, Աստվածաբանության՝ 36 բակալավր, 17 մագիստրոս:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2007-2008 ուստարվա գործունեություն, Երևան, 2008, էջ 42)

հունիս – Աշխարհագրության և Երկրաբանության ֆակուլտետները միացվում են, և ստեղծվում է նոր ֆակուլտետ՝ Աշխարհագրության և երկրաբանության:

(Տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ http://www.y-su.am/site/index.php?lang=1&page=3&p_num=&id=21)

հունիս – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը տալիս է շրջանավարտներ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Բնական գիտությունների՝ 107, Հումանիտար գիտությունների՝ 113, Տնտեսագիտության՝ 54, Կիրառական արվեստի՝ 65:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2007-2008 ուստարվա գործունեություն, Երևան, 2008, էջ 545, 550, 556, 559)

2 հունիսի – Երևան ժամանած Վարչապալի համալսարանի պատվիրակությունը, որի կազմում էին ռեկտոր, պրոֆեսոր Կատարժինա Խալաշչինսկա-Մացուկովը, երկու պրոռեկտորները, Մեմբերների ֆակուլտետի ղեկանը և Արևելյան Եվրոպայի հետազոտությունների կենտրոնի տնօրենը, համագործակցության պայմանագիր է կնքում Երևանի պետական համալսարանի ռեկտորի հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», հունիս-հուլիս 2008)

2-14 հունիսի — ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում անցկացվում է «Կրթության եռաստիճան համակարգը Բոլոնիայի գործընթացի շրջանակներում» թեմայով ամառային դպրոցը: Այն կազմակերպել էին «Ազգային զարգացման գիտակրթական կենտրոն»

ՀԿ-ն և Երևանի պետական համալսարանը՝ Բաց հասարակության ինստիտուտ-հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», հունիս-հուլիս 2008)

9 հունիսի – ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հրավերով մեկշաբաթյա այցով Հայաստան ժամանած Եվրոպայի ուսանողական միության անդամներ՝ նախագահ Կոեն Գևերը, Ուսանողական միության զարգացման կոմիտեի ղեկավար Յենս Յանգբլուքը, Գործադիր կոմիտեի անդամ Վիորել Պրոտենասան հանդիպում են ԵՊՀ ռեկտորի և ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Արսեն Զարամյանին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», հունիս-հուլիս 2008)

11-12 հունիսի – Երևանի պետական համալսարանում տեղի է ունենում Բորիս Պիտրովսկու ծննդյան 100-ամյակին և Հռիփսիմե Ջանփոլադյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողով՝ «Բ. Բ. Պիտրովսկին և Հայաստանը» թեմայով:

(Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 12 հունիսի 2008, տե՛ս նաև «Երևանի համալսարան», հունիս-հուլիս 2008)

14 հունիսի – ԵՊՀ Ծաղկաձորի «Համալսարան» ուսումնաարտադրական բազայում մեկնարկում է «Ոչ գծային անալիզ և մասնակի ածանցյալներով հավասարումներ՝ երկրաչափական մեկնաբանությամբ» թեմայով մաթեմատիկական 10-օրյա ամառային դպրոցը:

Հրավիրված էին մաթեմատիկայի բնագավառի՝ աշխարհի ամենաճանաչված մասնագետները՝ Լուիս Կաֆարելլին, Անրի Բերեցկին, Յան Բրենիերը, Նիմա Ուրալցևան, Մարկ Բերնտը և ուրիշներ, որոնք ժամանել էին աշխարհի տարբեր երկրներից՝ ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Գերմանիայից, ՌԴ-ից, Ավստրիայից, Խորվաթիայից, Թուրքիայից, Իրանից, Շվեդիայից, Ուկրաինայից, Հունգարիայից, Բուլղարիայից, Իսպանի-

այից, Չինաստանից: Ամառային դպրոցի կայացումը և հյուրերի մասնակցությունը հիմնականում ապահովում էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի «ՉԻՆՊԱ» հիմնադրամը (Ֆրանսիա), իտալական ICTP ինստիտուտը, Գերմանիայի «Մաքս Պլանկ» ինստիտուտը, Շվեդական թագավորական տեխնոլոգիաների ինստիտուտը, ՀՀ Կառավարությունը՝ ի դեմս Գիտության պետական կոմիտեի, ԵՊՀ-ի և ՀՀ ԳԱԱ-ի:

(Տե՛ս «Երևանի համալսարան», հունիս-հուլիս 2008)

9 հուլիսի – ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ տեղի է ունենում «Աջակցություն երիտասարդ համալսարանականների բնակարանաշինությանը» ծրագրի շրջանակներում կառուցվող բազմաբնակարան համալիրի հիմնարկերի պաշտոնական արարողությունը: Միջոցառմանը մասնակցում էին Երևանի քաղաքապետ Երվանդ Ջախարյանը, ԵՊՀ ռեկտորը և ավելի քան 200 շահառուներ՝ իրենց ընտանիքներով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», սեպտեմբեր 2008)

10 սեպտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի դահլիճում տեղի է ունենում հանդիպում ՌԴ մշակութային գործիչների («Յունոստ» ամսագրի գլխավոր խմբագիր, պոետ Վալերի Դուդրև, «Նովին իգվեստիյա» թերթի քաղաքականության բաժնի խմբագրի տեղակալ Ալեքսանդր Կոլեսնիչենկո, գրող-երգիծաբաններ Անատոլի Տրուշկին և Ալեքսանդր Խորտ, ՌԴ վաստակավոր արտիստ, Ուտյոսովի անվան համույթի մենակատար Անատոլի Շուբարդին) հետ, որոնք ՀՀ էին այցելել «Հայաստանում ռուսական խոսքի օրեր» միջոցառման շրջանակում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», սեպտեմբեր 2008)

16 սեպտեմբերի – Իրավագիտության ֆակուլտետում տեղի է ունենում էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի բացման պաշտոնական արարողությունը: Միջոցառմանը ներկա էին ԵՊՀ ռեկտորը, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար դեսպան Սերգեյ Կապինսոն, Իրավագիտության ֆակուլտետի

դեկան Գագիկ Ղազինյանը, բնապահպանության ոլորտի փորձագետներ, ԵՊՀ դեկաններ, դասախոսներ և ուսանողներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», սեպտեմբեր 2008)

16 սեպտեմբերի – Իրավագիտության ֆակուլտետում բացվում է փախստականների իրավունքների պաշտպանության իրավաբանական կլինիկա: Այդ ոլորտում համագործակցության վերաբերյալ ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի ներկայացուցիչ Բուշրա Հալեպոտան և ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը ստորագրում են փոխըմբռնման հուշագիր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», սեպտեմբեր 2008)

17 սեպտեմբերի – ԵՊՀ են այցելում Համաշխարհային բանկի կրթության գլխավոր մասնագետները՝ «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի ղեկավար Խուան Մանուել Մորենոն և Զամիլ Սալմին: ՀՔ ներկայացուցիչները ԵՊՀ գիտխորհրդի դահլիճում նախ հանդիպում են Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի իսպաներենի բաժնի ուսանողների հետ, այնուհետև նրանց հյուրընկալում է ԵՊՀ ռեկտորը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», սեպտեմբեր 2008)

17 սեպտեմբերի – Ֆիզիկայի ֆակուլտետի կոնֆերանսների դահլիճում մեկնարկում է գիտաժողով՝ նվիրված Վիկտոր Համբարձումյանի ծննդյան 100-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», սեպտեմբեր 2008)

19-26 սեպտեմբերի – ԵՊՀ Ճաղկածորի ուսումնաարտադրական բազայում ԵՊՀ-ի և ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտի նախաձեռնությամբ անցկացվում է «Հարմոնիկ անալիզ և մոտավորություն-IV» թեմայով գիտաժողով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», սեպտեմբեր 2008)

22 սեպտեմբերի – ԵՊՀ Ե. Չարենցի անվան դահլիճում կայանում է ռուսահայ բարերար, «Գիտության, կրթության և առողջապահության զարգացումը Հայաստանում» բարեգործական ֆոնդի նախագահ, «Ռուսկոմնենդիվիժմոստ» ընկերության գլխավոր տնօրեն, պրոֆեսոր Հրանտ Պողոսյանի և ԵՊՀ, ինչպես նաև ՀՀ պետական այլ բուհերի՝ գերազանց առաջադիմությամբ սովորող 214 ուսանողների հանդիպումը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», սեպտեմբեր 2008)

23-24 սեպտեմբերի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի է ունենում «Ներքին որակի ապահովում: Փորձը, խնդիրներն ու միտումները» թեմայով երկօրյա աշխատաժողով: Տեղեկատվության տարածման այդ աշխատաժողովը կազմակերպվել էր «Ներքին որակի ապահովման համակարգը Հայաստանի բուհերում» նախագծի շրջանակում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», սեպտեմբեր 2008)

29 սեպտեմբերի – ԵՊՀ-ում մեկնարկում է «Հայաստանը և Բուլղարիան. անցյալը, ներկան, ապագան» թեմայով գիտաժողովը: Այն կազմակերպվել էր ԵՊՀ-ի, Հայաստանի գրողների միության նախաձեռնությամբ և ՀՀ մշակույթի նախարարության օժանդակությամբ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», հոկտեմբեր 2008)

1 հոկտեմբերի – ՀՀ Սահմանադրական դատարանի հրավերով Հայաստան ժամանած Լատվիայի դատավորների խումբը այցելում է Իրավագիտության ֆակուլտետ, որտեղ պատվիրակության անդամները հանդիպում են ֆակուլտետի պրոֆեսորա-դասախոսական կազմի և մագիստրատուրայի ուսանողության հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», հոկտեմբեր 2008)

1 հոկտեմբերի – Պատմության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության և մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ

անցկացվում է Մոնթե Մելքոնյանի հիշատակին նվիրված միջոցառում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», հոկտեմբեր 2008)

14 հոկտեմբերի – Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողների հյուրն էր ՀՀ-ում Ուկրաինայի արտակարգ և լիազոր դեսպան Ալեքսանդր Բոժկոն:

(«Երևանի համալսարան», հոկտեմբեր 2008)

14 հոկտեմբերի – Լեհաստանի Հանրապետության Սենատի միջոցներով, «Վապուլնոտա Պոլսկա» ընկերության ֆինանսավորմամբ, ինչպես նաև ԵՊՀ ղեկավարության օժանդակությամբ Ռուս բանասիրության ֆակուլտետում բացվում է Յան Կոխանովսկու անվան լեհերեն լեզվի լսարան: Ներկա էին ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը և ՀՀ-ում Լեհաստանի արտակարգ և լիազոր դեսպան Տոմաշ Կոնտեն:

(Տե՛ս «Երևանի համալսարան», հոկտեմբեր 2008)

22 հոկտեմբերի – ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը հյուրընկալում է Գերմանիայի Հալե-Վիտտենբերգի Մարթին Լյութերի անվան համալսարանի պատվիրակությանը, որի կազմում էին այդ համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Վուլֆ Դեպենբրոֆը, Աստվածաբանության ֆակուլտետի պրոֆեսոր Հերման Գոլցը, Հումանիտար ֆակուլտետի պրոֆեսոր Գերհարդ Մեյգերը, Արևելագիտության ինստիտուտի ղոկտոր Արմենուի Դրոստ-Աբգարյանը, համալսարանի լեզուների կենտրոնի տնօրեն Ինգրիդ Ստուլեն, Միջազգային համագործակցության վարչության աշխատակից Իլյա Դոբերը և ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Անդրեա Վիկտորինը: Հանդիպմանը ներկա էին նաև ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանը, գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը, միջազգային համագործակցության վարչության պետ Ալեք-

սանդր Մարգարովը և Կենսաբանության ֆակուլտետի դեկան Էմիլ Գևորգյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», հոկտեմբեր 2008)

22-25 հոկտեմբերի – Երևանի «Մոսկվայի տանը» անցկացվում է «Կրթություն և կարիերա EXPO-2008» ինններորդ միջազգային մասնագիտացված տոնավաճառը: Կրթության բնագավառում ամենամեծ ցուցահանդեսին ԵՊՀ-ն մասնակցում էր երրորդ անգամ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», հոկտեմբեր 2008)

23 հոկտեմբերի – ԵՊՀ էկոլոգիական իրավունքի գիտատնտմական կենտրոնում քննարկվում է «Տեղեկություն ստանալու ազատության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», հոկտեմբեր 2008)

24 հոկտեմբերի – Իրավագիտության ֆակուլտետի և Երևանի պետական բժշկական համալսարանի ուսանողները ԵՊՀ Պալեանցների անվան դահլիճում քննարկում են «Էֆթանագիա» երևույթը և դրան առնչվող մի շարք հիմնահարցեր:

(Տե՛ս «Երևանի համալսարան», հոկտեմբեր 2008)

7 նոյեմբերի – Երևանի պետական համալսարանի պատմության թանգարանը Երևան քաղաքի պատմության թանգարանի հետ ԵՊՀ 90-ամյակին ընդառաջ կազմակերպում է ցուցահանդես՝ «Երևանի պետական համալսարանը երեկ և այսօր» խորագրով: Այն բացվում է Երևան քաղաքի պատմության թանգարանում, որտեղ ցուցադրվում են համալսարանի պատմությունը վավերացնող բազմաթիվ ցուցանմուշներ՝ լուսանկարներ, փաստաթղթեր, լաբորատոր սարքեր, անվանի համալսարանականների անձնական իրեր և այլն: Իր ելույթում ռեկտոր Արամ Սիմոնյանը նշում է. «Ուրախալի է, որ այս ցուցադրությամբ մենք պաշտոնապես բացում ենք ԵՊՀ 90-ամյա հոբելյանի տոնակատարության ծրագիրը: Հատկանշական է, որ այն սկսում

ենք Երևանի քաղաքապետարանից, Երևանի սրտից, Երևան քաղաքի պատմության քանդարանից»:

(Տե՛ս «Ազգ», 8, 22 նոյեմբերի 2008, տե՛ս նաև «Երևան 7 օր», 11-13 նոյեմբերի 2008, տե՛ս նաև «Կրթություն», 11 նոյեմբերի 2008 տե՛ս նաև «Երևանի համալսարան», նոյեմբեր 2008)

7 նոյեմբերի – Տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողների հետ հանդիպում է ՀՀ ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», նոյեմբեր 2008)

10 նոյեմբերի – Ե. Չարենցի անվան դահլիճում տեղի է ունենում «Սերունդների երկխոսություն 40 տարի անց» խորագրով հանդիպումը, որը կազմակերպել էր ԵՊՀ մշակույթի կենտրոնը Մայր բուհի 90-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում: Մասնակցում էին Բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժնի առաջին շրջանավարտները:

(Տե՛ս «Երևանի համալսարան», նոյեմբեր 2008)

13 նոյեմբերի – Սոցիոլոգիայի ֆակուլտետը բոլորում է կազմավորման 4-րդ տարեդարձը: Այդ առթիվ ֆակուլտետում անցկացվում են մի շարք միջոցառումներ, որոնք կազմակերպել էին ֆակուլտետի ղեկավարությունը, ուսանողական գիտական ընկերությունը և ուսանողական խորհուրդը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», նոյեմբեր 2008)

14 նոյեմբերի – Օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետում մեկնարկում է «Բնագիտությունը 21-րդ դարում. ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ» թեմայով համահայկական կրթական երկօրյա գիտաժողով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», նոյեմբեր 2008)

16 նոյեմբերի – ՄԱԿ-ի հռչակած Հանդուրժողականության միջազգային օրվա առթիվ Փիլիսոփայության և հոգեբանության ֆա-

կուլտետում կազմակերպվեց «Կլոր-սեղան-բանավեճ», որին մասնակցում էին տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ՝ հոգեբաններ, փիլիսոփաներ, իրավաբաններ, ազգագրագետներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», նոյեմբեր 2008)

20-21 նոյեմբերի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում անցկացվում է «Էկոլոգիայի և բնության պահպանության կարևորությունը կայուն զարգացման հեռանկարում» թեմայով միջազգային գիտաժողով: Այն կազմակերպվել էր Կենսաբանության ֆակուլտետի էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի նախաձեռնությամբ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», նոյեմբեր 2008)

24 նոյեմբերի – ՀՀ դրամի 15-րդ տարեդարձի առթիվ ԵՊՀ ՌԻԳԸ-ն Պալեանների անվան դահլիճում կազմակերպում է «Կլոր սեղան» միջոցառումը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», նոյեմբեր 2008)

25 նոյեմբերի – Պատմության ֆակուլտետի դահլիճում նշվում է ՀՀ ազգային հերոս Սոմքե Մելքոնյանի ծննդյան 51-րդ տարեդարձը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», նոյեմբեր 2008)

25 նոյեմբերի – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան Գ. Պետրոսյանի հրավերով ՀՀ-ում Եգիպտոսի Արաբական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վահիդ ադ-դին Իսմայիլ Ջալալին հյուրընկալվում է Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում:

(Տե՛ս «Երևանի համալսարան», նոյեմբեր 2008)

28 նոյեմբերի - 1 դեկտեմբերի – ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության և Ֆիզիկայի ու Ռադիոֆիզիկայի ֆակուլտետների ուսանողների նախաձեռնությամբ կազմակերպվում է գիտաժո-

դով՝ նվիրված Վիկտոր Համբարձումյանի ծննդյան 100-ամյակին: Մասնակցում էին ոչ միայն Մայր բուհի ուսանողները, այլև մասնագետներ Բյուրականի աստղադիտարանից:

(Տե՛ս «Երևանի համալսարան», դեկտեմբեր 2008)

3 դեկտեմբերի – Իրավագիտության ֆակուլտետի էկոլոգիական իրավունքի գիտատնտեսական կենտրոնում ֆակուլտետի ՈՒԳԸ-ի օժանդակությամբ «Էկոլոգիական անվտանգություն» քեմայով կազմակերպվում է միջբուհական ուսանողական գիտաժողով:

(Տե՛ս «Երևանի համալսարան», դեկտեմբեր 2008)

4 դեկտեմբերի – Վեհափառ հայրապետ Վազգեն Ա-ի ծննդյան 100-ամյակի առթիվ ԵՊՀ ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպում է ուխտագնացություն դեպի Սուրբ Էջմիածին, որտեղ ուսանողները ծաղիկներ են դնում Վեհափառի շիրիմին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», դեկտեմբեր 2008)

9 դեկտեմբերի – Արևելագիտության ֆակուլտետի N 320 լսարանում բացվում է ցուցահանդես՝ նվիրված Սիրիայի մշակույթին և կենցաղին: Ցուցահանդեսին ներկա էր նաև ՀՀ-ում Սիրիայի Արաբական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Աբդուլ Համիդ Սալլումը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», դեկտեմբեր 2008)

15 դեկտեմբերի – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողների հետ հանդիպում է ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Մարկ Պերեն դը Բրիշամբոն:

(Տե՛ս Խաղաղություն մաղթեց Հայաստանին,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/>

Ihvwqkeyw3SKWHMwNdJ01nabRW, մուտք՝ 05.07.2019)

16 դեկտեմբերի – Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողների հետ հանդիպում է Լեհաստանի Լոձի համալսա-

րանի պրոֆեսոր Անջելյ դե Լագարին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», ղեկտեմբեր 2008)

19 ղեկտեմբերի – ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի Աարաբագիտության ամբիոնի ուսանողներն ու պրոֆեսորադասախոսական կազմը հյուրընկալեցին ՀՀ-ում Եգիպտոսի Արաբական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վահիդ ադ-դին Իսմայիլ Ջալալին: Հանդիպումն անցկացվում էր Եգիպտոսի «ճվիրած» Մուբարակի անվան լսարանում և բացառապես արաբերենով:

(Տե՛ս Վահիդ ադ-դին Ջալալը կրկին ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/y6hwWtMTqQUkYZtB8dC4wu0S47>, մուտք՝ 05.07.2019)

25 ղեկտեմբերի – Գիտխորհրդի նիստերի ղահլիճում տեղի է ունենում Երևանի պետական համալսարանի կառավարման խորհրդի նիստը, որը նախագահում էր ՀՀ նախագահ, ԵՊՀ կառավարման խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանը: Նիստի օրակարգում դրված էր 4 հիմնական հարց՝ ռեկտորի հաշվետվությունը ԵՊՀ 2007/2008 ուստարվա գործունեության վերաբերյալ, ԵՊՀ 2008 թ. եկամուտների և ծախսերի կատարողականի (հունվար-նոյեմբեր) հաստատումը, ԵՊՀ 2009 թ. ֆինանսական տարվա եկամուտների ու ծախսերի նախահաշվի հաստատումը և ԵՊՀ 2009/2010-2013/2014 ուստարիների զարգացման ռազմավարության ծրագրի հիմնադրույթների հաստատումը: Օրակարգային յուրաքանչյուր հարցի քննարկումից հետո խորհրդի անդամները միաձայն հաստատում են առաջարկված դրույթները և բավարար գնահատում կատարված աշխատանքները:

(Տե՛ս «Երևանի համալսարան», հունվար 2009)

25 ղեկտեմբերի – ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի ճեմասրահում հանդիսավոր պայմաններում տեղի է ունենում ականավոր գիտնականներ Աշոտ Հովհաննիսյանի (1887-1972), Գուրգեն Սահակյանի (1913-2000), Էդուարդ Ադայանի (1913-1991) և

Գևորգ Ջահուկյանի (1920-2005) բրոնզաձույլ կիսանդրիների
բացման արարողությունը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», հունվար 2009)

2009

2008-2009 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանում դասավանդում էին 196 պրոֆեսորներ, 500 դոցենտներ, 430 ասիստենտներ, 453 դասախոսներ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2011-2012 ուստարվա գործունեություն, Երևան, 2012, էջ 12)

2008-2009 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանի առկա ուսուցում բակալավրիատում սովորում էր 10624 ուսանող, մագիստրատուրայում՝ 2474 ուսանող, ասպիրանտուրայում՝ 542 (առկա և հեռակա, ինչպես նաև օտարերկյա) ասպիրանտ, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 1647 ուսանող:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2011-2012 ուստարվա գործունեություն, Երևան, 2012, էջ 44-45)

26 հունվարի – Հայոց բանակի տոնի առթիվ ԵՊՀ է այցելում ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը: «Զինված ուժեր-կրթական համակարգ» համագործակցության ծրագրերի շրջանակում նախարարը որոշել էր համալսարանականներին անձամբ ներկայացնել հայոց բանակի առօրյան, խնդիրները, իրականացվող ու նախատեսվող բարեփոխումները: Հանդիպման վերջում, ԵՊՀ ռեկտորատի որոշմամբ, ՀՀ պաշտպանության նախարար, Արցախի հերոս, «Ոսկե արծիվ» շքանշանի ասպետ Սեյրան Օհանյանը արժանանում է ԵՊՀ ոսկե հուշամեդալի: Իր հերթին նախարարը ԵՊՀ ռեկտորին պարգևատրում է ՀՀ ՊՆ գերատեսչական «Անդրանիկ Օզանյան» մեդալով, Արևելագիտության ֆակուլտետի դեկան Գ. Մելիքյանին՝ «Դրաստամատ Կանայան» մեդալով, իսկ Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յու. Վարդանյանին, Իրավագիտության

Ֆակուլտետի դասախոս Տ. Բարսեղյանին և Ֆիզիկայի ֆակուլտետի դասախոս Ա. Կիրակոսյանին՝ «Վազգեն Սարգսյան» մեդալով: Առավել աչքի ընկած մի խումբ ուսանողներ նախաբարից ստանում են անվանական ժամացույցներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», հունվար 2009)

11 փետրվարի – Գիտխորհրդի դահլիճում ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների համար դասախոսություն է կարդում ռուս անվանի գիտնական Սերգեյ Կապիցան: Մեծանուն գիտնականը Հայաստան էր ժամանել Եվրասիական հետազոտությունների ինստիտուտի հայաստանյան մասնաճյուղի հրավերով՝ մասնակցելու Մենդելևևի անվան կրթաթոշակի հանձնման արարողությանը:

Նույն օրը համալսարանի գիտական խորհրդի դահլիճում նախարար Ներսես Երիցյանը հանդիպեց ուսանողների հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», փետրվար 2009)

17 փետրվարի – Համալսարանի գիտական խորհրդի դահլիճում Արժույթի միջազգային հիմնադրամի գործադիր տնօրեն Ահե Բաքերը և ՀՀ ֆինանսների փոխնախարար Վարդան Արամյանը հանդիպում են ԵՊՀ ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի հետ: Ահե Բաքերը դասախոսություն է կարդում համաշխարհային տնտեսական ճգնաժամի և տարածաշրջանում դրա հետևանքով ստեղծված իրավիճակի վերաբերյալ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», փետրվար 2009)

27 փետրվարի – Տեղի է ունենում «Սինոփսիս» ընկերության մարկետինգի գծով փոխնախագահ «Սինոփսիս-Արմենիա» ՓԲԸ գլխավոր գործադիր տնօրեն Ռիչ Գոլդմանի հանդիպումը Ռադիոֆիզիկայի, Ֆիզիկայի, Մաթեմատիկայի և մեխանիկայի, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետների ուսանողների հետ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», մարտ 2009)

4 մարտի – Կենսաբանության ֆակուլտետում մեկնարկում է կենսաբանության ոլորտում ուսանողական առաջին միջազգային գիտաժողովը, որտեղ Հայաստանում գործող բրիտանական խորհրդի «Այռեքս» և «Տեմպուս» միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները կենսաբան ուսանողներին տեղեկացրին իրենց կողմից իրականացվող կրթական ծրագրերի մասին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», մարտ 2009)

6 մարտի – ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի հյուրն էր ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը: Հանդիպման ընթացքում ԵՊՀ ռեկտորը «Համալսարանում ռազմահայրենասիրական դաստիարակության ավանդույթները զարգացնելու և զոհված ուսանող ազատամարտիկների հիշատակը հավերժացնելու գործում ունեցած ներդրման համար» պատվոգրեր է հանձնում «Վարդանանքի» աչքի ընկած մի խումբ անդամների և ակումբի նախագահ Ս. Աբրահամյանին: ՀՀ պաշտպանության նախարարն էլ խոստանում է, որ ակումբն այդուհետև կարող է ակնկալել թե՛ նախարարության և թե՛ անձամբ իր աջակցությունը: Հանդիպման ավարտին ԵՊՀ ռեկտորը համալսարանականների անունից նախարարին նվիրում է գեղանկարիչ Նարգիզ Փաշայանի «Գարուն» կտավը: Իր հերթին Սեյրան Օհանյանը ծաղիկներ և հուշանվերներ է հանձնում համալսարանական զոհված ազատամարտիկների զավակներին ու հարազատներին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», մարտ 2009)

9 ապրիլի – Ժուռնալիստիկայի ֆակուլտետում մեկնարկում է «Գովազդը և PR-ը հայաստանյան ՋԼՄ-ներում» թեմայով գիտաժողովը: Այն կազմակերպել էր ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերությունը:

(Տե՛ս «Երևանի համալսարան», ապրիլ 2009)

14 ապրիլի – Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում

մեկնարկում է «Օտար լեզուները Հայաստանում. նոր մարտահրավերներ, նոր մոտեցումներ» քեմայով երկօրյա գիտաժողով, որին մասնակցում էին 43 ուսանողներ և երիտասարդ դասախոսներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», ապրիլ 2009)

15 ապրիլի – Մեծ դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր միջոցառում՝ նվիրված «Ռուսկի միր» հիմնադրամի հովանու ներքո ԵՊՀ-ում գործող Ռուսական կենտրոնի հիմնադրման առաջին տարեդարձին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», ապրիլ 2009)

16 ապրիլի – ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախապահում մեկնարկում է «Ուսուցումը Հայաստանում» 8-րդ ամենամյա միջազգային ցուցահանդեսը: «Expo Center» ընկերության, ՀՀ կրթության և գիտության նախարարության ու ԵՊՀ-ի կազմակերպած ցուցահանդեսին մասնակցում էին կրթության ոլորտում գործունեություն ծավալող 30-ից ավելի կազմակերպություններ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», ապրիլ 2009)

20 ապրիլի – Պատմության ֆակուլտետում տեղի է ունենում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչիկ Ռուբենի Սիմոնյանի անձնական գրադարանը ֆակուլտետի Ն. Մառի անվան գրադարան-ընթերցասրահին նվիրելու արարողությունը, ինչպես նաև նրա՝ «Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ)» գրքի շնորհանդեսը: Բացման խոսքով հանդես է գալիս Պատմության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Էդիկ Սիմասյանը: Սիջոցառմանը ներկա էին նաև ԵՊՀ ռեկտորը, ՀՀ կրթության և գիտության նախարար Ս. Սեյրանյանը: Նախարարն ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանին կրթության ու գիտության ոլորտում ներդրած մեծագույն ավանդի համար և ծննդյան 80-ամյակի առթիվ պարգևատրում է ՀՀ ԿԳ նախարարության բարձրա-

գույն պարզևով՝ հուշամեդալով:

(Տե՛ս Ավետիսյան Լ., Կարևոր միջոցառում
ԵՊՀ Պատմության ֆակուլտետում,
տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի»,
1 (127), Երևան, 2009, էջ 209)

23 ապրիլ – ԵՊՀ ռեկտորը հյուրընկալեց Բուլղարիայի Հանրապետության կրթության և գիտության փոխնախարար Կրիշո Աթանասովին: Քննարկվում է բուլղարերենի ուսուցման խորացման հարցը ԵՊՀ-ում: Իրագեցվում է, որ Ռուս բանասիրության ֆակուլտետի ուսանողները բակալավրիատն ավարտելուց հետո կարող են մեկնել Բուլղարիա՝ մագիստրոսի որակավորում ստանալու համար, որից հետո վերադառնալով Հայաստան՝ ֆակուլտետում դասավանդել բուլղարերեն:

(Տե՛ս «Երևանի համալսարան», ապրիլ 2009)

15 մայիս – ԵՊՀ ռեկտորի գլխավորությամբ համալսարանի դասախոսները և ուսանողները ԵՊՀ հիմնադրման 90-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում այցելում են Կոմիտասի անվան պանթեոն և ծաղիկներ դնում հասարակական-քաղաքական ու մշակութային գործիչների շիրիմներին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», մայիս 2009)

16 մայիս – ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի բակում տեղի է ունենում մեծ միջոցառում՝ նվիրված համալսարանի 90-ամյակին: Հորեյանին ներկա էին ՀՀ նախագահ, ԵՊՀ կառավարման խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանը, Ամենայն հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ն, Երևանի քաղաքապետը, նախարարներ, ԵՊՀ նախկին ռեկտորներ, դասախոսներ և ուսանողներ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», մայիս 2009)

22 մայիս – ՀՀ նախագահի հրավերով Հայաստանում գտնվող Խորվաթիայի նախագահ Սոյեֆան Մեսիչն այցելում է Երևանի

համալսարան: Իր ելույթում Խորվաթիայի նախագահը համառոտ ներկայացնում է իր երկրի՝ որպես պետության կայացման պատմական անցյալը, տարվող քաղաքականությունը և ծրագրերը: Հանդիպման վերջում ԵՊՀ ռեկտորը Խորվաթիայի նախագահին է հանձնում ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման վկայականը և ԵՊՀ ոսկե մեդալ:

(Տե՛ս «Երևանի համալսարան», մայիս 2009)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է առկա ուսուցման 3721 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Մաթեմատիկայի և մեխանիկայի՝ 133 բակալավո, 64 մագիստրոս, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի համապատասխանաբար՝ 162 և 74, Ֆիզիկայի՝ 83 և 48, Ռադիոֆիզիկայի՝ 74 և 37, Քիմիայի՝ 182 և 15, Կենսաբանության՝ 103 և 41, Աշխարհագրության և երկրաբանության՝ 112 և 40, Պատմության՝ 120 և 95, Սիջազգային հարաբերությունների՝ 221 և 122, Տնտեսագիտության՝ 250 և 170, Փիլիսոփայության և հոգեբանության՝ 91 և 63, Սոցիոլոգիայի՝ 93 և 29, Հայ բանասիրության՝ 132 և 53, Ժուռնալիստիկայի՝ 51 և 32, Ռուս բանասիրության՝ 67 և 17, Ռոմանագերմանական բանասիրության՝ 298 և 114, Արևելագիտության՝ 122 և 65, Իրավագիտության՝ 229 և 66, Աստվածաբանության՝ 46 և 13, ՏՏԿՀ կենտրոնի՝ 24 մագիստրոս:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2011-2012 ուստարվա գործունեություն, Երևան, 2012, էջ 50)

11 հունիսի – Երևանի պետական համալսարանում մեկնարկեց Սոցիոլոգիայի միջազգային ինստիտուտի 39-րդ համաշխարհային կոնգրեսը:

«Սոցիոլոգիան խաչմերուկներում» խորագրով քառօրյա գիտաժողովին, բացի ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանից ու ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմից, ներկա էին 50 երկրների 89 համալսարանների և գիտահետազոտական կենտրոնների 300-ից ավելի գիտնականներ ու պրոֆեսորներ:

Կոնգրեսի կազմակերպիչն էր Ստոկհոլմում գտնվող Սոցիո-լոգիայի միջազգային ինստիտուտը, իսկ համակազմակերպիչն էր Երևանի պետական համալսարանը:

(Տե՛ս Արժանի մարտահրավեր արժանի գիտնականներին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/aZkbgn8TpXHSJ78EsSwVqeT0NQ>, մուտք՝ 06.07.2019)

19 հունիսի – Ամփոփվեցին երիտասարդ ստեղծագործողների՝ ԵՊՀ հիմնադրման 90-ամյակին նվիրված միջբուհական մրցույթի արդյունքները:

(Տե՛ս Միջբուհական գրական տոն ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/GRhXheNHZ5PidjLIiAUHr2wvBL>, մուտք՝ 05.07.2019)

24 հունիսի – ԵՊՀ գիտխորհրդի դահլիճում տեղի ունեցավ հանդիպում ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի և «Լույս» հիմնադրամի տնօրեն Ժաքլին Կարասալանյանի հետ: Վարչապետը ուսանողներին տեղեկացրեց, որ ՀՀ նախագահ Մերժ Սարգսյանի նախաձեռնությամբ ստեղծվել է «Լույս» հիմնադրամը, որը մեծ ծրագրեր է իրականացնելու:

(Տե՛ս Հայ ուսանողները՝ փոքրիկ «Լույսեր» աշխարհում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/4k9dq2aA1G2vIHZn2pldshCpD>, մուտք՝ 05.07.2019)

25 հունիսի – Պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Վրաստանի նախագահ Միխայիլ Սահակաշվիլին այցելում է Երևանի պետական համալսարան և հանդիպում պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետ: Վրաստանի նախագահը ներկայացնում է Վրաստանի սոցիալ-տնտեսական զարգացումները և իր կատարած բարեփոխումները, որից հետո պատասխանում է ուսանողների և դասախոսների հարցերին: Վերջում ԵՊՀ ռեկտորը Մ. Սահակաշվիլին է հանձնում ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման վկայականը և ոսկե մեդալ:

(Տե՛ս Լավ հարևանը հեռու բարեկամից լավ է, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/quality/hy/1404988744/page/439/new/18342>, մուտք՝ 30.07.2019)

30 հունիսի – ԵՊՀ հիմնադրման 90-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում Բերձորում ստեղծվում է «Համալսարանական պուրակ», որտեղ ԵՊՀ պատվիրակությունը տնկում է 90 ընկուզենի: Խորհրդանշական էր ոչ միայն ծառերի քանակը, այլև պուրակի տարածքի ընտրությունը: Բերձորը ԼՂՀ-ի այն հատվածն է, որն Արցախը կապում է Հայաստանի հետ: ԵՊՀ ռեկտորի ղեկավարությամբ ծառատունկին մասնակցում են ավելի քան 100 համալսարանականներ՝ դասախոսներ, ուսանողներ, աշխատակիցներ:

(Տե՛ս ԵՊՀ-ի արցախյան նոր հասցեն,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/quality/hy/1404988744/page/439/new/18339>, մուտք՝ 30.07.2019)

15-18 հուլիսի – ԵՊՀ ուսանողները մասնակցեցին Իրանի Իսլամական Հանրապետությունում անցկացվող ամենամյա միջազգային մաթեմատիկական օլիմպիադային: Այստեղ համալսարանականները վաստակեցին 1 արծաթե և 3 բրոնզե մեդալներ: 14 մեդալներից 4-ը բաժին հասավ Հայաստանի օլիմպիականներին: Թիմի կազմում էին Վարդան Ոսկանյանը (Մաթ. և մեխ. ֆակուլտետ, մազ. 1-ին կուրս), Հայկ Ալեքսանյանը (Մաթ. և մեխ. ֆակուլտետ, մազ. 1-ին կուրս), Ալբերտ Թամազյանը (Մաթ. և մեխ. ֆակուլտետ, 3-րդ կուրս) և Ներսես Խաչատրյանը (ԻԿՄ, 4-րդ կուրս): Առաջին տեղի մրցանակները բաժին ընկան հյուրընկալող երկրի մասնակիցներին:

(Տե՛ս Լավագույնները միջազգային օլիմպիադաներում,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/rNkvjt3SIu36dOYfumQcUzoG5x>, մուտք՝ 06.07.2019)

25-30 հուլիսի – ԵՊՀ ուսանողները մասնակցեցին Բուդապեշտում անցկացված IMC (International Mathematics Competition) միջազգային մրցույթին (այն ամեն տարի անցկացվում է եվրոպական որևէ երկրում): Տարիքային սահմանափակման պատճառով մասնակցեցին միայն 1-4-րդ կուրսերի ուսանողները: Բոլոր չորս օլիմպիականներն էլ արժանացան արծաթե

մեղալմների և ստացան երկրորդ կարգի դիպլոմներ: IMC-ում թիմը ներկայացնում էին Դավիթ Կարազուլյանը (Մաթ. և մեխ. ֆակուլտետ, 3-րդ կուրս), Արմեն Նուրբեկյանը (Մաթ. և մեխ. ֆակուլտետ, 4-րդ կուրս), Անուշ Մարտիրոսյանը (Մաթ. և մեխ. ֆակուլտետ, 4-րդ կուրս) և Արման Մարգարյանը (Ֆիզիկայի ֆակուլտետ, 3-րդ կուրս):

(Տե՛ս Լավագույնները միջազգային օլիմպիադաներում,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/rNkvj3SIu36dOYfumQcUzoG5x>, մուտք՝ 06.07.2019)

27 օգոստոսի – ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում մեկնարկեց «Օպտիկայի և ֆոտոնիկայի արդի հիմնախնդիրները» խորագրով միջազգային գիտաժողովը:

Աշխարհի մոտ 15 երկրներից եկած մասնագետների ուշադրության կենտրոնում այնպիսի ոլորտներ էին, որոնք Հայաստանում դեռևս այնքան էլ զարգացած չէին՝ մետամատերիալները, նանոկառուցվածքները, բիոֆոտոնիկան և այլն: Գիտաժողովը կազմակերպվել էր ԵՊՀ-ի, ԳԱԱ-ի և Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի համատեղ ջանքերով: Այն իր ձևաչափով տարբերվում էր ավանդական գիտաժողովից. և՛ ամառային դպրոց էր, և՛ գիտաժողով:

(Աշխարհի ֆիզիկոսները ԵՊՀ-ի հարկի տակ,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/wUms2h9G50sESw6ODS0gnwkZVA>, մուտք՝ 06.07.2019)

7 սեպտեմբերի – ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանողների հետ հանդիպեց ՎիվաՄել-ՄՏՄ-ի գլխավոր տնօրեն Ռաֆ Յիրիկյանը: Նա դասախոսություն կարդաց «ՎիվաՄել-ՄՏՄ՝ բիզնես, որն ունի առաքելություն» թեմայով: Նախաձեռնությունը ԵՊՀ պատմության ֆակուլտետի ՌԻԳԸ-ինն էր: Որպես հանդիպման վայր ընտրվել էր Ռադիոֆիզիկայի ֆակուլտետը, որովհետև հենց այստեղ են պատրաստվում այդ ընկերության ապագա պոտենցիալ աշխատակիցները, այսինքն՝ հեռահա-

դորդակցության մասնագետները:

(Տե՛ս «VIVACELL-ն ուսանողներին առաջարկում է...»,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/o41R3RSpWMVxwQUJaWuP8yO7OQ>, մուտք՝ 06.07.2019)

25 սեպտեմբերի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում մեկնարկեց «Քաղաքացիական օրենսդրության զարգացումը ԱՊՀ երկրներում» խորագրով գիտաժողովը, որի նախաձեռնողը Իրավաբանների միջազգային միությունն էր, իսկ կայացմանն աջակցել էին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետն ու Հայաստանի իրավաբանների միությունը: Մասնակիցները ներկայացնում էին ԱՊՀ 5 երկրների փորձը: Ներկա էին նաև ՀՀ դատական տարբեր մարմինների ներկայացուցիչներ, ֆակուլտետի դասախոսներ, ասպիրանտներ և ուսանողներ: Ձեկուցումներով հանդես եկան ՌԳ նախագահի՝ իրավական հարցերով օգնական Վենիամին Յակովլևը, ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Արման Սկրտումյանը և ոլորտում հայտնի այլ մասնագետներ:

(Տե՛ս Քաղաքացիական իրավունքը՝ քննարկման առարկա, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/uqN9ibdZC9InPgDQErmo6g3la>, մուտք՝ 06.07.2019)

26 սեպտեմբերի – ԵՊՀ ԻԿՄ ֆակուլտետում անցկացվեց ծրագրավորման ամենամյա օլիմպիադա, որը նվիրված էր Մայր բուսի 90-ամյակին:

(Տե՛ս «Օլիմպիական հաղթարշավը մեկնարկեց», տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/29DMYwkeHpN9JMeswjcxHGEEHz>, մուտք՝ 06.07.2019)

28 սեպտեմբերի – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում դասախոսությամբ հանդես եկավ ավստրիացի դիվանագետ Ալֆրեդ Միստոնգին:

Թեման էր՝ «Ավստրիայի առաջին և երկրորդ հանրապետությունների արտաքին քաղաքականությունը»: Դիվանագետը

մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողներին ոչ միայն ներկայացրեց այդ ժամանակահատվածում Ավստրիայի արտաքին քաղաքականությունը, այլև գուգահեռներ անցկացրեց ԱՊՀ պետությունների հետ:

(Տե՛ս Ավստրիացի դիվանագետը՝ «ԵՊՀ դասախոս», տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/afdqUpiwHitOXe1FGyMesmnGly>, մուտք՝ 06.07.2019)

29 սեպտեմբերի – ԵՊՀ մեծ դահլիճում տեղի ունեցավ Մայր բոլի 90-ամյակին նվիրված գրքերի շնորհանդեսը:

(Տե՛ս Գրքերի շնորհանդես, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/nDgcoXg6pPozI80ID0DYDekrHd>, մուտք՝ 06.07.2019)

3 հոկտեմբերի – Երեկոյան ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի բակից մեկնարկեց համալսարանականների երթը դեպի Ալ. Սպենդարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիկան թատրոն, որտեղ տեղի ունեցավ տոնական միջոցառում նվիրված ԵՊՀ 90-ամյակին:

(Տե՛ս «Երևանի համալսարան», հոկտեմբեր, 2009)

7 հոկտեմբերի – ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը և Միջազգային համագործակցության վարչության պետ Ալեքսանդր Մարգարովը հյուրընկալեցին ՀՀ-ում Եգիպտոսի Արաբական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վահիդ ադ-դին Իսմայիլ Ջալալին, Կահիրեի համալսարանի հայագիտական կենտրոնի դասախոս Ջեյնաբ Աբու Սիննին և նույն համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկան Ահմադ Ջայեդին:

(Տե՛ս Ակտիվ համագործակցությունը շարունակվում է, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/QQYUpOHWHqrTiJKyehkeqM8DrL>, մուտք՝ 06.07.2019)

9 հոկտեմբերի – ԵՊՀ-ում մեկնարկեց Հարավկովկասյան երրորդ կի-

նուփառատունը՝ «Ես մարդ եմ» խորագրով, որը տևեց 3 օր:

(Տե՛ս Կինոփառատուն անիվների վրա,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/MCbiV1D10hnNRbdBEyeNKtvZss>, մուտք՝ 06.07.2019)

23 հոկտեմբերի – ԵՊՀ-ում մեկնարկեց «Անձի զարգացման հիմնախնդիրները» խորագիրը կրող միջազգային երկօրյա գիտա-ժողովը:

(Տե՛ս Անձի զարգացման հիմնախնդիրներն ակտուալ են,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/h1HmQB3jWm1dTsLsnOUk5rQRli>, մուտք՝ 06.07.2019)

27 հոկտեմբերի – ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը համալսարանականների մեկնարկեց իր կամավորական ծրագրերից մեկը:

(Տե՛ս ՄԱԿ-ը հրավիրում է ուսանողներին,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/zCnIJxrtuaDTIFW180UcFCPxo>, մուտք՝ 07.07.2019)

28 հոկտեմբերի – ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակը ԵՊՀ ՄԱԿ-ի ավանդապահ գրադարանին մոտ 2000 միավոր գիրք նվիրեց: Միջոցառումը, որի ժամանակ հանձնվեցին գրքերը, նվիրված էր ԵՊՀ 90-ամյակին և ՄԱԿ-ի 64-րդ տարելիցին:

(Տե՛ս ՄԱԿ-ը գրքեր նվիրեց ԵՊՀ-ին,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/2vQkWLKYzBaTv8l1yUIIS89j45>, մուտք՝ 06.07.2019)

30 հոկտեմբերի – ԵՊՀ-ում հյուրընկալվեց Բելառուսի Հանրապետության արտաքին գործերի նախարար Սերգեյ Մարտիկովը:

(Տե՛ս Խոսում էին դիվանագիտության լեզվով,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/unK6rB61Sq5CHHjv0w3ILQtVeK>, մուտք՝ 06.07.2019)

30 հոկտեմբերի – Մոսկվայի պետական տնտեսագիտության, վիճակագրության և ինֆորմատիկայի համալսարանի (MESI) ներկայացուցիչների և հայաստանյան բուհերի ղեկավարների մասնակցությամբ Երևանի պետական համալսարանում քննարկ-

վեցին ռուս-հայկական կրթական հաստատություններին վերաբերող հարցեր:

(Տե՛ս MESI-ն հանդիպում է հայ գործընկերներին,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/4Gn8jh3CmK8tl1UaajJybJczpy>, մուտք՝ 06.07.2019)

31 հոկտեմբերի – Գյումրու Բայրոնի անվան թիվ 20 դպրոցում անցկացվեց ծրագրավորման միջբուհական օլիմպիադա՝ նվիրված ԵՊՀ 90-ամյակին: Կազմակերպիչներն էին ԵՊՀ ուսանողական խորհուրդը, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ուսանողական խորհուրդը և Գյումրու քաղաքապետարանը: Մասնակցում էին 11 թիմեր (ԵՊՀ-ից՝ 4, Ռուս-հայկական պլավոնական համալսարանից՝ 5, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանից՝ 1, ՀՊՃՀ Գյումրու մասնաճյուղից՝ 1):

(Տե՛ս ԵՊՀ-ին շնորհավորեցին նաև Գյումրիում,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/FjQlXonUd8NsI44WYx2BnJnfrm>, մուտք՝ 06.07.2019)

6 նոյեմբերի – ԵՊՀ Պալեանների դահլիճում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Չարլզ Լոնսդեյլի հետ հանդիպմանը ուսանողները հնարավորություն ունեցան հարցեր ուղղելու այս պետության քաղաքական համակարգի, մի շարք միջազգային խնդիրների ու իրենց հետաքրքրող այլ թեմաների շուրջ:

(Տե՛ս Ինչի՞ մասին էր խոսում դեսպանը,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/jNaN203ADG91hJPmKuP7Z23zqV>, մուտք՝ 06.07.2019)

6 նոյեմբերի – ԵՊՀ պատմության քանգարանի սրահում տեղի ունեցավ ԵՊՀ 90-ամյակին նվիրված հոբելյանական հուշանվերների ցուցահանդեսի բացման արարողությունը:

(Տե՛ս ԵՊՀ-ն ցուցադրում է իր նվերները,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/bPWjvwXYozh5kurnO8IBbXnqxl>, մուտք՝ 06.07.2019)

16 նոյեմբերի – ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի գլխավոր քարտուղար Միխայիլ Կրոտովը հանդիպեց ԵՊՀ ուսանողների հետ: Հանդիպման ժամանակ անդրադարձ եղավ ԱՊՀ երկրների համար կարևորագույն մի շարք հարցերի, ինչպես նաև նախատեսվող համատեղ միջոցառումներին, ծրագրերին:

(Տե՛ս Մանրամասնում է ԱՊՀ ՄԽՎ-ի գլխավոր քարտուղարը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/GS1vtTXXN4Spnsr6TuWDOKis1F>, մուտք՝ 06.07.2019)

17 նոյեմբերի – Երևանի պետական համալսարանի մեծ դահլիճում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանը շուրջ երկու տասնյակ բուհերի 42 ուսանողների 500-ական դոլարին համարժեք դրամ կրթաթոշակ տրամադրեց: Ուսանողների միջազգային օրվա 70-րդ տարեդարձի առթիվ առաջին անգամ ուսանողներին հանձնվեց «Գագիկ Ծառուկյան» հիմնադրամի անվանական կրթաթոշակը:

(Տե՛ս Կրթաթոշակներ՝ լավագույններին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/VOh4DS3FtQ7YgBxvDdZsq0vfnR>, մուտք՝ 06.07.2019)

20 նոյեմբերի – ԵՊՀ օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետում մեկնարկեց «Բնագիտությունը 21-րդ դարում. ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ» թեմայով համահայկական երկրորդ կրթական գիտաժողովը: Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանն իր ելույթում նշեց, որ հանրակրթական դպրոցներում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի բնագիտական առարկաներին: Զեկուցումով («Բնագիտությունը և ռազմագիտությունը») հանդես եկավ նաև ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը:

(Տե՛ս Բնական գիտությունները կարևորվում են, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/oMtmpKLgoFJLjixKEEnRRFoZrtH>, մուտք՝ 06.07.2019)

26 նոյեմբերի – Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպել էր գիտաժողով՝ նվիրված Արամ Մանուկյանի 130-ամյակին: Մասնակցում էին Պատմության և Ժուռնալիստիկայի ֆակուլտետների ուսանողական գիտական ընկերությունների անդամները: Զեկուցումներում ուսանողներն անդրադարձան Արամ Մանուկյանի կյանքին, գործունեությանը, Վանի նահանգապետ եղած տարիներին նրա վարած քաղաքականությանը:

(Տե՛ս Արամ Մանուկյանի կյանքը նորովի,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/JjGed9ol5smFtvBhxqJ9ErGwlt>, մուտք՝ 07.07.2019)

8 դեկտեմբերի – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում դասախոսությամբ հանդես եկավ Ջորջ Մարշալի անվան Եվրասիայի անվտանգության հարցերի հետազոտության եվրոպական կենտրոնի պրոֆեսոր Գրեգորի Գլխոնը:

(Տե՛ս «Հույս արտահանողը»,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/QL3EfZTusgnRbaEuCLYQfx8wPg>, մուտք՝ 07.07.2019)

9 դեկտեմբերի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դատական միատերի դահլիճում անցկացվեց ամենամյա միջբուհական գիտաժողովը:

Այն նվիրված էր ականավոր իրավաբան, գիտնական, Սահմանադրական դատարանի նախկին անդամ, նախկին գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի 70-ամյակին: Կազմակերպիչներն էին Իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳՐ-ն, ՈՒԽ-ն, ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնը և ՀՀ իրավաբանների միությունը: Գիտաժողովին, բացի ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողներից, մասնակցում էին Արցախի, ինչպես նաև Հայաստանի ինը պետական և ոչ պետական բուհերի իրավագիտության ֆակուլտետների ուսանողները:

(Տե՛ս Իրավաբանները՝ իրավունքի մասին,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք <http://ysu.am/news/hy/tLTJ8gr0qS4W4NTwPPP5MtdXovG>, մուտք՝ 06.07.2019)

10 դեկտեմբերի – Լատվիայի Հանրապետության նախագահ Վալդիս Զատլերսը այցելեց Երևանի պետական համալսարան: Նրան ուղեկցող պատվիրակության կազմում էին նաև Էկոնոմիկայի, ներքին գործերի, շրջակա միջավայրի պաշտպանության նախարարները, արտաքին կապերի գծով խորհրդարանական հանձնաժողովի նախագահը, այլ պաշտոնատար անձինք: Հանդիպման վերջում ԵՊՀ ռեկտորը Վալդիս Զատլերսին հանձնեց ԵՊՀ ոսկե մեդալ և ԵՊՀ պատվավոր դոկտորի վկայականը:

(Տե՛ս Նախագահական այց ԵՊՀ,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/CCi3jFxs0wRX1stbDy3pt8a7YL>, մուտք՝ 06.07.2019)

2010

2009-2010 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանում դասավանդում էին (ներառյալ համատեղողները) 204 պրոֆեսորներ, 514 դոցենտներ, 430 ասիստենտներ, 465 դասախոսներ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2011-2012 ուստարվա գործունեություն, Երևան, 2012, էջ 12)

2009-2010 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանի առկա ուսուցման բակալավրիատում սովորում էր 10942 ուսանող, մագիստրատուրայում՝ 2552 ուսանող, ասպիրանտուրայում՝ 452 (առկա, հեռակա ասպիրանտների և օտարերկյա) ասպիրանտ, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 2612 ուսանող, մագիստրատուրայում՝ 125 ուսանող:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2011-2012 ուստարվա գործունեություն, Երևան, 2012, էջ 44-45)

2009-2010 ուսումնական տարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում սովորողների թիվը (առկա ուսուցում), ըստ ֆակուլտետների, հետևյալն էր՝ Բնական գիտությունների՝ 198, Հումանիտար գիտությունների՝ 523, Տնտեսագիտության՝ 289, Կիրառական արվեստի՝ 139:

Հեռակա ուսուցման ուսանողների թիվը 405 էր:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2009-2010 ուստարվա գործունեություն, Երևան, 2010, էջ 556, 563, 573, 577, 580)

20 հունվարի – Հայաստանյան շուրջ 50 բուհերի ներկայացուցիչներ ԵՊՀ-ում ծանոթացան «Բարձրագույն կրթության բարեփոխումներ միջազգային համագործակցության միջոցով» խորագիրը կրող «Տեմպուս» IV ծրագրի 3-րդ մրցույթի պայմաններին: Տեղեկատվական ելույթներից առաջ ներկաներին ողջունեցին Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության

ղեկավար Ռաուլ դե Լյուցենբերգերը, «Մասնագիտական կրթության ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի, ՀՀ ԿԳՆ, ԵՊՀ ներկայացուցիչները:

(Տե՛ս Տեմպուս IV ծրագրի 3-րդ մրցույթը,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/C6ybiLwahbyMCPpqB01gBd9w96>, մուտք՝ 06.07.2019)

25 հունվարի – ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը Երևանի պետական համալսարանում հանդիպեց բարձրագույն ուսումնական հաստատությունների պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետ:

(Տե՛ս Հայոց բանակը 18 տարեկան է,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/2EDBczOLBYKfFhBqB01gBd9w96>, մուտք՝ 06.07.2019)

22 փետրվարի – ԵՊՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի հյուրընկալում էր հայտնի տնտեսագետ, ՌԴ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, ՌԴ Կառավարությանն առընթեր Ժողովն տնտեսության ակադեմիայի ամբիոնի վարիչ Աբել Գեգիկի Ադանբեկյանը: Նա վերլուծեց համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա:

(Տե՛ս ԵՊՀ-ն հյուրընկալեց խոշորագույն տնտեսագետին,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/kxtGN00jO0uXUquFCmTWch8E3s>, մուտք՝ 08.06.2019)

22 փետրվարի – Երևանի պետական համալսարանի ռեկտորը և ԵՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահը կնքում են կողեկտիվ պայմանագիր, համաձայն որի՝ կողմերը պարտավորվում են համագործակցել սոցիալական գործընկերության հիմնական սկզբունքների հիման վրա և իրականացնել աշխատողների և գործատուի շահերի համաձայնեցումը աշխատանքային հարաբերություններում:

Այս պայմանագրի դրույթները ենթակա են կատարման

Երևանի պետական համալսարանի բոլոր ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների համար: «Արհմիությունը պարտավորվում է աջակցել գործատուի կողմից աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման ուղղությամբ տարվող միջոցառումների իրականացմանը: Հարկ եղած դեպքում Արհմիությունը պարտավոր է առաջարկություն ներկայացնել գործատուին կատարվելիք այն աշխատանքների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են իրականացնել առանձին աշխատատեղերում՝ աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման վիճակը բարելավելու համար», - նշված էր կոլեկտիվ պայմանագրում:

(Տե՛ս Աշխատելու են ընդհանուր կանոնակարգով,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/tVzUptZmIux2jk3pCnk4SXrMhd>, մուտք՝ 05.07.2019)

26 փետրվարի – ԵՊՀ մեծ դահլիճում տեղի ունեցավ դպրոցականների օլիմպիադայի ամփոփման և մրցանակակիրների պարգևատրման արարողությունը, որի կազմակերպիչն էր Մայր բուհը:

(Տե՛ս Հաղթողները պարգևատրվեցին,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/TDVQDaZpDiCk6QiYOWhXgQskSz>, մուտք՝ 08.06.2019)

10 մարտի – ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ մի խումբ առաջին կուրսեցիներ այցելեցին Երկրաբանության թանգարան, ծանոթացան տարբեր բաժիններում ցուցադրված մնուշներին:

(Տե՛ս Հյուրընկալում է երկրաբանական թանգարանը,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/enkfVKcopDnApGAIQ7uSzD1sFS>, մուտք՝ 08.06.2019)

15 մարտի – ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի կոնֆերանսների դահլիճում տեղի ունեցավ հայկական առաջին ակտուարական ամսագրի

շնորհանդեսը:

(Տե՛ս Մասնագիտական նոր ամսագիր,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ [http://ysu.am/news/hy/
q10TcwjlIVBT72ZEnRegx9O9WC](http://ysu.am/news/hy/q10TcwjlIVBT72ZEnRegx9O9WC), մուտք՝ 08.06.2019)

17 մարտի – ՀՀ սփյուռքի նախարարության և «Հայկական սփյուռք» կենտրոնի ներկայացուցիչների մասնակցությամբ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետում տեղի ունեցավ քննարկում՝ «Արևմտահայերենի վաղվա օրը» թեմայով: Սփյուռքի փոխնախարար Ստեփան Պետրոսյանը, կարևորելով արևմտահայերենի դերը Սփյուռքում և հայրենիքում բնակվող հայերի համար, նշեց, որ մասնագետ լեզվաբանների կարծիքներն ու տեսակետները Սփյուռքի նախարարությանը կօգնեն Հայաստան-Սփյուռք համագործակցության ծրագրերն իրականացնելիս:

(Տե՛ս Արևմտահայերենը դարձնել կենդանի լեզու,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ [http://ysu.am/news/hy/
c9AFnGQcLEG3y7KPcJDWAanljY](http://ysu.am/news/hy/c9AFnGQcLEG3y7KPcJDWAanljY), մուտք՝ 08.06.2019)

1 ապրիլի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի էկոլոգիական իրավունքի գիտատեսումական կենտրոնում տեղի ունեցավ հանդիպում-սեմինար՝ «Սեռական ազատության դեմ ուղղված ոտնձգությունների իրավական և բժշկական հիմնախնդիրները» խորագրով: Կազմակերպիչներն էին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և Երևանի պետական բժշկական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունները:

(Տե՛ս Հավաքվել էին ապագա բժիշկները և իրավաբանները,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ [http://ysu.am/news/hy/
tKaBXtySq2hf1VKofjQOCJ8VNj](http://ysu.am/news/hy/tKaBXtySq2hf1VKofjQOCJ8VNj), մուտք՝ 08.06.2019)

15 ապրիլի – ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչության աշխատակիցները և ԵՊՀ դասախոսները այցելեցին Աշտարակի թիվ 5 դպրոց:

Այցը նպատակ ուներ դասախոսությունների միջոցով հստակեցնելու աշակերտների մասնագիտական կողմնորոշումները,

ապահովելու կենդանի շփում աշակերտների և դասախոսների միջև:

(Տե՛ս Համալսարանականներն ուղղորդում են աշակերտներին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Qau9IjhyfTQpHP0vtAcciEO8s>, մուտք՝ 07.06.2019)

16 ապրիլի – ԵՊՀ պատմության ֆակուլտետի մշակութաբանության ամբիոնի նախաձեռնությամբ տեղի ունեցավ մշակութաբանության ուսանողական երկրորդ գիտաժողովը, որը կրում էր «Մշակույթը, պատմությունը և արդիականությունը» խորագիրը:

(Տե՛ս Չեկուցում են մշակութաբանները, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/CUBcwhdHL8zOh81ucLDu4mLVNW>, մուտք՝ 08.06.2019)

19 ապրիլի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դատական ​​նիստերի դահլիճում տեղի ունեցավ մասնագիտական ​​քննարկում: Իրավագիտությունը որպես մասնագիտություն ընտրած մի խումբ երիտասարդներ քննարկում էին ոլորտում բազմիցս շոշափված մի խնդիր՝ իրավունքի², թե՞ օրենքի գերիշխանություն: Քննարկմանը մասնակցում էր նաև Ռուսաստանում գործող Երիտասարդ գիտնականների ասոցիացիայի նախագահ Արտյոմ Մանուկյանը:

Երիտասարդ իրավաբանի ներկայությունը հնարավորություն տվեց խնդրի մասին խոսելու նաև Ռուսաստանի Դաշնության օրինակներով:

(Տե՛ս Իրավունքի գերիշխանություն, օրենքի իշխանություն, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/0q4qtLA15cr9XoyHk7xZKmM5Vo>, մուտք՝ 08.06.2019)

27 ապրիլի – Մեկնարկեց ԵՊՀ ուսանողական գիտական ​​ընկերության կազմակերպած հանրապետական ​​գիտաժողովը՝ նվիրված Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցին: Եռօրյա գիտաժողովին մասնակցում են հայաստանյան 6 բուհերի 35 ու-

սանողներ:

(Տե՛ս Գիտական եռօրյա՝ Մեծ եղեռնի հիշատակին,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/tl4p1Hof0NOMONvHg9MKyOiodH>, մուտք՝ 08.06.2019)

30 ապրիլի – Պատմության ֆակուլտետում ամփոփվեց ՀՀ ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի 45-ամյակին նվիրված միջոցառումների շարքը:

(Տե՛ս «Կարոտից խելառ» Թաթուլը,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1Ys8DLNnMxmeoqgWzMJC2EjXPR>, մուտք՝ 08.06.2019)

3 մայիսի – ԵՊՀ ռեկտորը հյուրընկալեց Ախալցխայի պետական համալսարանի պատվիրակությանը: Հանդիպմանը երկու բուհերի ռեկտորները համագործակցության պայմանագիր ստորագրեցին:

(Տե՛ս Տարածաշրջանային նոր բարեկամը,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/9VbMTews4KbHbqcXiMnBbxbmGi>, մուտք՝ 06.07.2019)

6 մայիսի – ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ուսանողական խորհուրդը կազմակերպեց բնապահպանական թեմայով ֆիլմաշարի դիտում, որը նվիրված էր շրջակա միջավայրի պահպանությանը:

(Տե՛ս Բնապահպանությունը մեր առողջությունն է,
տե՛ս տեսԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/6pv1fuZWZuOMHAITa1oo3SB3mY>, մուտք՝ 06.07.2019)

7 մայիսի – ԵՊՀ-ում ապագա իրավաբանների ու դիվանագետների հյուրն էր Հայաստանում մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը:

(Տե՛ս Ջրույց օրենքի ու մարդու իրավունքների շուրջ,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/ZUnLMvpglhVw9itjJUf5XCONTL>, մուտք՝ 08.06.2019)

7 մայիսի – Թբիլիսիում մեկնարկեց «Հանդուրժողականությունը՝ որպես համագործակցության նախապայման» թեմայով հայ-վրացական գիտաժողովը:

Այն կազմակերպել էին Երևանի պետական համալսարանը, Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանն ու Վրաստանում Հայաստանի դեսպանությունը:

(Տե՛ս Հայ-վրացական գիտաժողով,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/nvZS4liVZ6sKWB48i40BnXMUxq>, մուտք՝ 09.06.2019)

10 մայիսի – ԵՊՀ գրադարանի նախաձեռնությամբ համալսարանականներին ներկայացվեց ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեղագործական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աշոտ Սաղիյանի հեղինակած «Ամինաթթուների, պեպտիդների և սպիտակուցների քիմիա» բուհական դասագիրքը:

(Տե՛ս Բուհական դասագիրքը պատրաստ է,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/kwEXq8eVYQfagBC0ZVN2YRT8gO>, մուտք՝ 08.06.2019)

11 մայիսի – ԵՊՀ մեծ դահլիճում տեղի ունեցավ «Великая отечественная война-память сердца» խորագրով միջոցառում, որով ամփոփվեց ԵՊՀ ռուսական կենտրոնի նախաձեռնությամբ դեռ ապրիլի 15-ից սկսված՝ Հայրենական մեծ պատերազմին նվիրված միջոցառումների շարքը: Ներկա էին ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության և Բելառուսի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպաններ Վյաչեսլավ Կովալենկոն և Ստեփան Սուխարենկոն, ՀՀ գրողների միության նախագահ Լևոն Անանյանը, Հայրենական մեծ պատերազմի մասնակից վետերաններ, ԵՊՀ ուսանողներ և դասախոսներ: ԵՊՀ ուսանողները և Մշակույթի կենտրոնի երգչախումբը կատարեցին պատերազմական տարիներին նվիրված ստեղծագործություններ:

(Տե՛ս Նշվեց Հայրենական մեծ պատերազմի 65-ամյակը,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/fC1SkOtiy59Ih8YJvpabMQ0hGE>, մուտք՝ 08.06.2019)

12 մայիսի – Երևանի պետական համալսարանում մեկնարկեց Տիգրան Մեծի ծննդյան 2150-ամյակին նվիրված միջոցառումների շարքը:

(Տե՛ս Տիգրան Մեծը՝ ազգային մեծություն,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/gNPnZRpN9cpjTkFVf3TSBlr4d1>, մուտք՝ 07.06.2019)

13 մայիսի – ԵՊՀ Չարենցի անվան դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ առաջին պատվավոր դոկտոր, 20-րդ դարի մեծ մարդասեր, Խաղաղության նոբելյան մրցանակի դափնեկիր, Հայ դատի պաշտպան Ֆ. Նանսենին նվիրված հիշատակի երեկո: Հայաստանի «Ֆրիտյոֆ Նանսեն» հիմնադրամի և ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի կազմակերպած միջոցառման ընթացքում Ֆ. Նանսենի անվան մեդալներ շնորհվեցին, ինչպես Հայաստանի «Ֆրիտյոֆ Նանսեն» հիմնադրամի նախագահ Ֆելիքս Բախչինյանը նշեց, բոլոր այն մարդկանց, ովքեր ավանդ ունեն մարդասիրության, հասարակական-քաղաքական, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ կատարված աշխատանքներում: Մեդալներ ստացան լրագրող, ռեժիսոր Ցվետանա Պասկալևան, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի քանգարանի տնօրեն Հենրիկ Բախչինյանը, «Ֆրիտյոֆ Նանսեն՝ աշխարհի խիղճը» ֆիլմի ռեժիսոր Էդուարդ Տեր-Սահակյանը, ռեժիսոր Վիգեն Չալոյանյանը, «Նովոյե Վրեմյա» թերթի գլխավոր խմբագիր Ռուբեն Սաթյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, ԵՊՀ անգլերենի ամբիոնի վարիչ Ելենա Երզնկյանը, սիրիահայ բարերար Վարուժան Եսայանը, սիրիահայ Հայկ Բյուզանդյանը, ինչպես նաև կոմպոզիտոր Մարտին Վարդապարյանը:

(Տե՛ս Մեծ հայասերի հիշատակին,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/gnHmUKXKxwRiwqmVyLP7HEs8wh>, մուտք՝ 08.06.2019)

19 մայիսի – ԵՊՀ գիտխորհրդի դահլիճում համալսարանականները հյուրընկալեցին ԽՍՀՄ կրկնակի հերոսներ, օդաչու-տիեզեր-

րագնացներ Ալեքսեյ Լեոնովին, Վիկտոր Գորբատկոյին, Վլադիմիր Լյախովին:

Հյուրերին ուղեկցում էր Ռուսաստանի համալիր անվտանգության ակադեմիայի փոխտնօրեն Կարո Հակոբյանը: Հանդիպման վերջում ԵՊՀ ռեկտորը համալսարանականների և ռեկտորատի անունից տիեզերագնացներին ԵՊՀ ոսկե մեդալ շնորհեց:

(Տե՛ս Հյուրը տիեզերքից, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Uh8BBwp6ChfuyBJVXwFFNq7But>, մուտք՝ 08.06.2019)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է առկա ուսուցման 3835 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Մաթեմատիկայի և մեխանիկայի՝ 131 բակալավր, 61 մագիստրոս Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 139 բակալավր, 37 մագիստրոս, Ֆիզիկայի՝ 92 բակալավր, 51 մագիստրոս, Ռադիոֆիզիկայի՝ 80 բակալավր, 34 մագիստրոս, Զինվորական 142 բակալավր, 30 մագիստրոս, Կենսաբանության՝ 93 բակալավր, 60 մագիստրոս, Աշխարհագրության և երկրաբանության՝ 113 բակալավր, 45 մագիստրոս, Պատմության՝ 140 բակալավր, 76 մագիստրոս, Միջազգային հարաբերություններ՝ 269 բակալավր, 132 մագիստրոս, Տնտեսագիտության՝ 271 բակալավր, 146 մագիստրոս, Փիլիսոփայության և հոգեբանության՝ 86 բակալավր, 75 մագիստրոս, Սոցիոլոգիայի՝ 98 բակալավր, 33 մագիստրոս, Հայ բանասիրության՝ 148 բակալավր, 89 մագիստրոս, Ժողովրդագրության՝ 57 բակալավր, 30 մագիստրոս, Ռուս բանասիրության՝ 60 բակալավր, 21 մագիստրոս, Ռոմանագերմանական բանասիրության՝ 265 բակալավր, 118 մագիստրոս, Արևելագիտության՝ 120 բակալավր, 72 մագիստրոս, Իրավագիտության՝ 221 բակալավր, 88 մագիստրոս, Աստվածաբանության՝ 34 բակալավր, 13 մագիստրոս, ՏՏԿՀ կենտրոն՝ 47 մագիստրոս, ԵՈՒ կենտրոն՝ 18 մագիստրոս:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2011-2012 ուստարվա գործունեություն, Երևան, 2012, էջ 50)

հունիս – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը տալիս է շրջանավարտներ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Բնական գիտությունների՝ 53, Հումանիտար գիտությունների՝ 122, Տնտեսագիտության՝ 54, Կիրառական արվեստի՝ 74:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2009-2010 ուստարվա գործունեություն, Երևան, 2010, էջ 558, 550, 565, 572)

15 հունիսի – ԵՊՀ ռեկտորն ընդունեց Ռոստոկի համալսարանի քիմիայի ինստիտուտի օրգանական քիմիայի բաժնի վարիչ Պետեր Լանգերին:

(Տե՛ս Համագործակցություն՝ ի նպաստ ուսանողների, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/tqesNb7t5ZTflVhg1q0f6MlsYP>, մուտք՝ 07.06.2019)

19 հունիսի – Սանկտ Պետերբուրգում Երևանի պետական համալսարանի ռեկտորը և տեղի պետական համալսարանի ռեկտոր Նիկոլայ Կրոպաչովը ստորագրեցին համագործակցության ծրագիր:

Ստորագրման արարողությունը, որին ներկա էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն ու Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդևը, տեղի ունեցավ Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի 300-ամյակի միջոցառումների շրջանակում:

(Տե՛ս Համագործակցության նոր ծրագիր, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/JVvhpHEKxBd3QsNmo2FFZWmb3N>, մուտք՝ 09.06.2019)

30 օգոստոսի – «Գալուստ Կյուլպենկյան» հիմնադրամի և Երևանի պետական համալսարանի միջև ստորագրվեց պայմանագիր 2010-2011 թվականների համար:

(Տե՛ս Համաձայնագիր ԵՊՀ-ի և Գ. Կյուլպենկյան հիմնադրամի միջև, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/fpMtWIqtEaCby0kWB180oxzS9l>, մուտք՝ 09.06.2019)

1 սեպտեմբերի – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողների սեպտեմբերյան առաջին դասախոսությունը կարդաց ՀՀ արտաքին գործերի նախարարը: Չևակորված բարի ավանդույթի համաձայն՝ Էդվարդ Նալբանդյանը

Գիտելիքի օրվա առթիվ այցելում է ԵՊՀ:

(Տե՛ս Առաջին դասախոսությունը կարդաց արտգործնախարարը,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/154f0Qilssdt9hd0aQovAIXpn4>, մուտք՝ 08.06.2019)

17 սեպտեմբերի – ԵՊՀ-ում մեկնարկեց Իրավագիտության ֆակուլտետի էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի նախաձեռնած քննարկումների շարքը:

(Տե՛ս Օրինու. քայլ երկրորդ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝
<http://ysu.am/news/hy/ydAKqm6MQmlGobyIDD5WhS35zJ>,
մուտք՝ 08.06.2019)

20 սեպտեմբերի – ԵՊՀ այցելեց Պերուջայի համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ստեֆանիա Ջիանինին:

(Տե՛ս Նոր համագործակցություն Երևանի և Պերուջայի համալսարանների միջև, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/CYx2aAcIsCCdL4gvzUktHCs3cl>, մուտք՝ 09.06.2019)

30 սեպտեմբերի – ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում հյուրընկալվեց լեզենդար հայ հետախույզ, Խորհրդային Միության հերոս Գեորգի Վարդանյանը:

(Տե՛ս Հետախույզության հայ լեզենդը շարունակում է աշխատել, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/7kqkqhIGowXtp4OqMTdUpfr34d>, մուտք՝ 09.06.2019)

1 հոկտեմբերի – ԵՊՀ-ում տեղի ունեցավ «Ֆրանսիական ժամանակակից գրականության օրերը Երևանում» նախաձեռնության առաջին միջոցառումը:

(Տե՛ս «Ֆրանսիական ժամանակակից գրականության օրերը» սկիզբ առան ԵՊՀ-ից, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/UWyb4Asdez0S8RSgqUPk0P2PI4>, մուտք՝ 09.06.2019)

19 հոկտեմբերի ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետում տեղի ունեցավ «Լրագրությունը ճգնաժամային իրավիճակներում» խորագրով սեմինար:

Հայաստանյան լրատվամիջոցների համար նախատեսված

սեմինարը կազմակերպել էին ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետը, Հայաստանում Գերմանիայի դեսպանատունը և Բեռլինի «Դոյչե Վելլե» հեռուստառադիոակադեմիան: Այս սեմինարին նախորդել էր սեպտեմբեր ամսին կազմակերպված նույնաբնույթ թեմայով 10-օրյա սեմինարը Թբիլիսիում, որին մասնակցել էին հայ, վրացի և ադրբեջանցի լրագրողներ:

(Տե՛ս Օբյեկտիվություն՝ նույնիսկ ճգնաժամային իրավիճակում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/VeCIRuYROB8z5P48WN03gQkhk4>, մուտք՝ 08.06.2019)

19 հոկտեմբերի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում քննարկվեցին վերջին երկու տասնամյակում Հայաստանում անչափահասների հանցավորության վիճակը, օրենքների կենսումնակությունը և վիճակի բարելավմանն ուղղված քայլերի մշակումը: Զննարկման մասնակիցները ներկայացնում էին այդ ոլորտին անմիջականորեն առնչվող կազմակերպություններ՝ ՀՀ դատախազություն, Ոստիկանություն, Փորձաքննությունների ազգային բյուրո, Արդարադատության, Կրթության և գիտության նախարարություններ և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ:

(Տե՛ս «Գողակա՞ն» թե՞ իրական օրենքներ. ընտրում են անչափահասները, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/cABi1a63HX58ebUhUj9AWTYUEI>, մուտք՝ 08.06.2019)

21 հոկտեմբերի – ԵՊՀ-ում հյուրընկալվեց Կենտրոնական Եվրոպայի ամենամասսայական օրաթերթի՝ լեհական «Գազետա վիբորչա» պարբերականի գլխավոր խմբագիր, «Սոլիդարնոստ» շարժման համահիմնադիր Ադամ Սիխնիկը:

(Տե՛ս «Նայում եմ, նայում... ու նախանձում», տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/7Dpq0q0lXnSeYetv4sRCgMvDgS>, մուտք՝ 09.06.2019)

22 հոկտեմբերի – ԵՊՀ ռուսական կենտրոնում տեղի ունեցավ «Ռուսական տոները և սովորույթները» թեմայով կլոր սեղան-քննարկում: Միջոցառման մասնակից Նիկոլ Աղբալյանի անվան համար 19 դպրոցի 8-րդ դասարանի աշակերտները ներկայացրին

ռուսական խորհրդանիշների՝ մատրյոշկայի, սամովարի, վալենկայի, բուբլիկի, բալալայկայի, չաստուշկայի, ինչպես նաև սնահավատությունների վերաբերյալ հետաքրքիր մանրամասներ:

(Տե՛ս Կլոր-սեղան քննարկում ռուսական կենտրոնում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/thxvKV4aeEFRFicyJbAfTHyeVh>, մուտք՝ 08.06.2019)

25 հոկտեմբերի – Պաշտոնապես մեկնարկեց Երևանի պետական և Ռոստոկի համալսարանների «Վիզուալ հաշվարկ» մագիստրոսական ծրագիրը:

(Տե՛ս Կրկնակի դիպլոմ մեկ մագիստրոսական ծրագրի համար, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/J7MHWMfxo38KCQJ9iJ016zYrzG>, մուտք՝ 08.06.2019)

27 հոկտեմբերի – Կիսահաղորդիչների էլեկտրոնային ավտոմատացված նախագծման ոլորտի համաշխարհային առաջատար «Սինոփսիս» ընկերության և Երևանի պետական համալսարանի կողմից անցկացվող համատեղ ճարտարագիտական կրթության ուսումնական ծրագրի շրջանակներում ԵՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի 19 շրջանավարտները «Սինոփսիս Արմենիայի» գրասենյակում հանդիսավոր պայմաններում ստացան իրենց դիպլոմներն ու հավաստագրերը:

(Տե՛ս Ճարտարագիտական կրթություն. մրցումակ կադրեր, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/duNnucINE2PrPgmyfPWHVOKr>, մուտք՝ 08.06.2019)

2 նոյեմբերի – Տեղի ունեցավ ԵՊՀ հանրային ծառայողների վերապատրաստման կենտրոնի բացման պաշտոնական արարողությունը: Կենտրոնի նպատակն է նպաստել ՀՀ քաղաքացիական, համայնքային և պետական ծառայողների վերապատրաստման համակարգերում ՀՀ Կառավարության և ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից անցկացվող բարեփոխումների իրականացմանը:

ԵՊՀ հանրային ծառայողների վերապատրաստման կենտրոնը Եվրոպական միության ֆինանսավորմամբ հիմնադրվել է «TEMPUS ECESIS» ծրագրի շրջանակում:

(Տե՛ս «TEMPUS»-ը ԵՊՀ-ում նոր կենտրոն է «բացել», տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/PQxDXOXoGPbsFIOXRpfmeh5GKj>, մուտք՝ 08.06.2019)

5 նոյեմբերի – Պաշտոնապես բացվեց ԵՊՀ գրադարանի արվեստի ֆոնդը:

(Տե՛ս Գրապահոցից ընթերցողի սեղանին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/UPXSSxLJeNQr0Z0OAWUqB0hpzE>, մուտք՝ 08.06.2019)

6 նոյեմբերի – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում Ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպել էր «Տավուշի մարզի արդի հիմնախնդիրներն ու զարգացման հեռանկարները» խորագրով ուսանողական գիտաժողով:

(Տե՛ս ԵՊՀ ՌԻԳԸ-ն՝ Տավուշի մարզում Տավուշի մասին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/3PbHQ6dF10VvxGybHXHKAvmwKv>, մուտք՝ 09.06.2019)

8 նոյեմբերի – ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետում մեկնարկեց «21-րդ դարի կրոնական մարտահրավերներն ու Հայաստանը» խորագրով երկօրյա գիտաժողովը, որի կազմակերպիչներն էին Աստվածաբանության ֆակուլտետը և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական «Կլոր սեղան» հիմնադրամը:

(Տե՛ս Դիմակայում են աստվածաբանները, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/wAx5sq6Thr9xExOPVirM3o7yhT>, մուտք՝ 08.06.2019)

23 նոյեմբերի – ԵՊՀ պատմության ֆակուլտետում անցկացվեց գիտաժողով՝ նվիրված ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի կա-

յացրած հայ-թուրքական սահմանի վերաբերյալ Իրավարար վճռի 90-ամյակին:

Գիտաժողովի վերջում ԵՊՀ պատմության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը հաստատեց որոշում, որում ամփոփ ներկայացվեց գիտաժողովի մասնակիցների՝ հարցի վերաբերյալ ընդհանուր դիրքորոշումը:

(Տե՛ս Ընդունվել է որոշում,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/ETMw7fgJdOvaTMZgjj9lh5q5AK>, մուտք՝ 09.06.2019)

26 նոյեմբերի – ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում մեկնարկեց «Գյոթե, Շիլլեր. հայացք 21-րդ դարից» խորագիրը կրող մեկօրյա միջազգային գիտաժողովը:

(Տե՛ս Շիլլերը և Գյոթեն միավորում են մեզ,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/vhZ2ukBEMm0hWM8OLSiHO9SnnR>, մուտք՝ 08.06.2019)

29 նոյեմբերի – ԵՊՀ Չարենցի անվան դահլիճում նշվեց մեծանուն գրող Հրաչյա Քոչարի 100-ամյակը: ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Նադաշ Մարտիրոսյանի նախաձեռնած միջոցառումը կազմակերպվել էր ԵՊՀ հայ բանասիրության, արևելագիտության և ժուռնալիստիկայի ֆակուլտետների համատեղ ջանքերով:

(Տե՛ս Հոբելյանական ցերեկույթ ԵՊՀ-ում,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/ZMEysi0cIoRBgBV0TncKUXFiSG>, մուտք՝ 08.06.2019)

7 դեկտեմբերի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում ՀՀ ԿԳ նախարարությունն անցկացրեց գիտաժողով՝ նվիրված որակավորումների ազգային շրջանակի մշակման և ներդրման գործընթացին: Այն նախագահում էր ՀՀ ԿԳ նախարարի տեղակալ Կարինե Հարությունյանը:

(Տե՛ս Ազգային տարբերակ,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/2ZXEX0x5C003uVeb6LB5PCLbi8i>, մուտք՝ 08.06.2019)

8 դեկտեմբերի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում մեկնարկեց ՀՀ Սահմանադրության 15-ամյակին նվիրված երկօրյա գիտա-ժողովը:

(Տե՛ս Մեկնարկել է միջբուհական գիտաժողովը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/2kIN6IUwmIjAUKaX67AiNkNNWz>, մուտք՝ 08.06.2019)

15 դեկտեմբերի – ԵՊՀ Չարենցի անվան դահլիճում անցկացվեցին «Լրագրողները ազատամարտիկների մասին» մրցույթի ամփոփումն ու պարգևատրման պաշտոնական արարողությունը: Նորայր Մարությանի անվան «Լրագրողներն ազատամարտիկների հիշատակին» հիմնադրամի նախաձեռնությամբ կազմակերպվող մրցույթը իրականացվել էր ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի և «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի համատեղ ջանքերով²⁴:

(Տե՛ս Լրագրողները ազատամարտիկների մասին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/zqEHwsN4owDGgfuswEnyxf6cwL>, մուտք՝ 09.06.2019)

16 դեկտեմբերի – ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանն ու գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանն Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում ծանոթացան նոր ձեռք բերված սարքավորումներին, որոնք արդեն իրենց տեղն էին գտել ֆակուլտետի լաբորատորիաներում: Նորագույն սարքավորումներից են «LՕՄՕ» մակնիշի 7 միկրոսկոպներ և լրացուցիչ թվային տեսահամակարգեր, սեյսմոհետազոտական ժամանակակից սարք դաշտային և լաբորատոր հետազոտությունների համար, Միացյալ Նահանգներում արտադրվող հորատանցքային կայան, որը թույլ է տալիս ուսումնասիրություններ կատարել մինչև 600 մետր խորության պայմաններում և նույնիսկ ջրամբարներում:

(Տե՛ս Եվ սա դեռ սկիզբն է, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/V7NsQIgmnbYirPXSxCKMBgmOZK>, մուտք՝ 09.06.2019)

16 դեկտեմբերի – ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի նախաձեռնությամբ կազմակերպվել էր հանդիպում ԱՊՀ երկրների ինֆորմացիոն խորհրդի մի քանի ներկայացուցիչների և ապագա լրագրողների հետ: Ինֆորմխորհուրդը ստեղծվել էր ԱՊՀ երկրների ղեկավարների խորհրդի որոշմամբ: Նրա խնդիրն է գտնել այնպիսի հնարավորություններ, որոնք թույլ կտան ընդլայնել ԱՊՀ ինֆորմացիոն գործակալությունների և ՋԼՄ-ների միջև համագործակցությունն ու ստեղծել ընդհանուր ինֆորմացիոն դաշտ:

(Տե՛ս ԱՊՀ-ի ինֆորմացիոն դաշտը ապահովողները ԵՊՀ-ում էին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք <http://ysu.am/news/hy/UsjQvknYehGj9m20ULn64K2spt>, մուսք՝ 09.06.2019)

16 դեկտեմբերի – ԵՊՀ էին այցելել Արմավիր քաղաքի՝ Վարդան Բախշյանի անունը կրող հ. 2 դպրոցի 8-րդ դասարանցիները: «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի նախաձեռնությամբ պարբերաբար սույն դպրոցի տարբեր դասարանների աշակերտներ այցելում են Մայր բուհ՝ ծանոթանալու ԵՊՀ պատմության ֆակուլտետի ասպիրանտ Վարդան Բախշյանի համալսարանական կյանքին և դաստիարակվելու նրա հայրենասիրական ոգով:

(Տե՛ս Հայրենիքի նվիրյալը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/7eFdPH4wUUIBRKYdGbXobfndXi>, մուսք՝ 08.06.2019)

20 դեկտեմբերի – ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանն ու գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը հերթական շրջայցն իրականացրին բնագիտական ուղղվածություն ունեցող ֆակուլտետների լաբորատորիաներում: Նրանք ծանոթացան Ֆիզիկայի և Ռադիոֆիզիկայի ֆակուլտետների համար գնված նոր սարքավորումներին:

(Տե՛ս Ձեռքբերումների «շքերթը» շարունակվում է, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/BWRJdV9HHTj81ut4YqWeaT8cwU>, մուսք՝ 08.06.2019)

23 դեկտեմբերի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում ամփոփվեց «ՆԱՏՕ-ն և տարածաշրջանային անվտանգության հիմնահարցերը» կրթական ծրագրի առաջին դասընթացը: Ներգրավված ուսանողներին մասնակցության հավաստագրերը հանձնեց Հայաստանում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր դեսպան Չարլզ Լոնսդեյլը: «Երիտասարդ հետազոտողների ազգային կենտրոն» ՀԿ-ի (ԵՀԱԿ) նախաձեռնած դասընթացն իրականացվել է ՆԱՏՕ-ի կենտրոնակայանի հանրային դիվանագիտության դեպարտամենտի և Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան աջակցությամբ: Ծրագրի շրջանակում որպես կամրնտրական պարտադիր դասընթաց՝ նոր առարկան ուսումնասիրել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողների մի մասը:

Հայաստանում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր դեսպան Չարլզ Լոնսդեյլը հավաստագրերը հանձնելուց առաջ ուսանողների համար փոքրիկ դասախոսություն կարդաց: Դեսպանը կարևորեց այն հանգամանքը, որ դասընթացն անցկացվում էր Լիսաբոնի գազաթնաժողովի և նոր ռազմավարական հայեցակարգի համաձայնեցման՝ ՆԱՏՕ-ի համար խիստ հետաքրքիր ժանակաշրջանում:

(Տե՛ս Հայաստան-ՆԱՏՕ. կրթական նոր ձևաչափ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/3pBQ9qn1ddoOFMkqKLs8OstHav>, մուտք՝ 09.06.2019)

24 դեկտեմբերի – Կայացավ ԵՊՀ խորհրդի նիստը, որը նախագահում էր ՀՀ նախագահ, ԵՊՀ խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանը: Տարեվերջյան նիստի օրակարգում ընդգրկված էին հետևյալ 4 հիմնական հարցերը.

1. ռեկտորի հաշվետվությունը ԵՊՀ 2009/2010 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ,
2. ԵՊՀ 2010 թ. եկամուտների և ծախսերի կատարողականի (հունվար-նոյեմբեր) հաստատումը,
3. ԵՊՀ 2011 թ. ֆինանսական տարվա եկամուտների և

ծախսերի նախահաշվի հաստատումը,

4. «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կանոնադրության նախագծի (նոր խմբագրությամբ) ընդունումը:

ԵՊՀ խորհրդի միաձայն որոշմամբ հավանություն տրվեց ԵՊՀ 2010 թ. եկամուտների և ծախսերի կատարողականին, և հաստատվեց ԵՊՀ 2011 թ. ֆինանսական տարվա եկամուտների ու ծախսերի նախահաշիվը: Խորհուրդը նաև հաստատեց «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կանոնադրության նոր խմբագրությամբ նախագիծը և առաջարկեց ՀՀ Կառավարությանը սահմանված կարգով ընդունել «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ: ԵՊՀ խորհրդի մեկ այլ որոշմամբ հավանություն տրվեց ԵՊՀ 2009/2010 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ հաշվետվությանը: ԵՊՀ 2009/2010 ուսումնական տարվա գործունեությունը գնահատվեց բավարար:

(Տե՛ս 2010-ը ամփոփվեց ԵՊՀ խորհրդի նիստում,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/M5twA4activavu5KpWsKqagpCb>, մուտք՝ 09.06.2019)

2011

2010-2011 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանում դասավանդում էին 211 պրոֆեսորներ, 548 դոցենտներ, 427 ասիստենտներ, 480 դասախոսներ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2011-2012 ուստարվա գործունեություն, Երևան, 2012, էջ 12)

2010-2011 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանի առկա ուսուցման բակալավրիատում սովորում էր 11250 ուսանող, մագիստրատուրայում՝ 2451 ուսանող, ասպիրանտուրայում՝ 365 (առկա, հեռակա օտարերկյա) ասպիրանտ, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 3195 ուսանող, մագիստրատուրայում՝ 385 ուսանող:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2011-2012 ուստարվա գործունեություն, Երևան, 2012, էջ 44-45)

2010-2011 ուսումնական տարում ԵՊՀ ատենախոսական խորհուրդներում պաշտպանվել են 116 ատենախոսություններ, որոնցից 10-ը դոկտորական:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2011-2012 ուստարվա գործունեություն, Երևան, 2012, էջ 81)

2010-2011 ուսումնական տարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում (առկա ուսուցում) սովորող ուսանողների թիվը, ըստ ֆակուլտետների, հետևյալն էր՝ Բնական գիտությունների՝ 172, Հումանիտար գիտությունների՝ 524, Տնտեսագիտության՝ 295, Կիրառական արվեստի՝ 137:

Մինչհամալսարանական կրթության և հեռակա ուսուցման ուսանողների թիվը 832 էր:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2010-2011 ուստարվա գործունեություն, Երևան, 2011, էջ 625, 633, 649, 654, 658)

29 հունվարի – Տեղի ունեցավ ԵՊՀ նոր ձևավորված խորհրդի նիստը: Քանի որ խորհուրդը դեռ նախագահ չուներ, նիստը վարեց ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը: Նիստի օրակարգի հարցերը 2-ն էին՝ խորհրդի նախագահի ընտրություն և ընթացիկ հարցեր: Անդամների կողմից թեկնածու առաջադրվեց Սերժ Սարգսյանը: Քանի որ այլ թեկնածուներ չկային, կանոնակարգի համաձայն, անցկացվեց բաց քվեարկություն: ԵՊՀ խորհրդի նախագահ միաձայն ընտրվեց Սերժ Սարգսյանը:

(Տե՛ս Կայացավ ԵՊՀ խորհրդի անդրանիկ նիստը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1miRtd32hk5RsgWNfxl9vhlIn>, մուտք՝ 09.06.2019)

17 փետրվարի – ԵՊՀ-ում մեկնարկեց Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1650-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շարքը: Թեմատիկ ելույթներով հանդես եկան ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ, ԳԱԱ թղթակից անդամ Բաբկեն Հարությունյանը և հայ գրականության ամբիոնի վարիչ Սամվել Մուրադյանը:

(Տե՛ս Մաշտոցյան տարին սկսված է, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/OwHVWgkakNA6YV3ctdSOAR64Az>, մուտք՝ 09.06.2019)

22 փետրվարի – Երևանի պետական համալսարանի գիտխորհրդի ընդլայնված նիստում հյուրընկալվեցին ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանն ու կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը:

Հանդիպման ավարտին բանակ-հասարակություն կապի ամրապնդման և երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության գործում ունեցած ներդրման համար մի շարք համալսարանականներ պարգևատրվեցին պատվոգրերով ու հուշանվերներով: ԵՊՀ ռեկտորն էլ պաշտպանության նախարարին հանձնեց ԵՊՀ ռսկեզօծ մեդալը, իսկ նախարարության աշխատակիցներին պարգևատրեց ԵՊՀ բրոզե

մեղալներով ու պատվոգրերով:

(Տե՛ս Գիտությանը ու ուժով հզորացած,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/q0TP9HMSGI6GYb2CBzEAvbu2ZO>, մուտք՝ 09.06.2019)

28 փետրվարի – ԵՊՀ Պալեանոցների անվան դահլիճում համալսարանականները հյուրընկալեցին Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպան Մարի Յովանովիչին: Դեսպանատան և ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության նախաձեռնությամբ կազմակերպված հանդիպման թեման քաղաքացիական հասարակության հիմնախնդիրներն էին:

(Տե՛ս Սմարթֆոնից մինչև ցուցատախտակ,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Uy1v8b2abask7MpBtCNGHfRCf>, մուտք՝ 09.06.2019)

4 մարտի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ղեկան Գազիկ Դազիկյանը և ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար Գեղամ Դաբիրջանյանը ստորագրում են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և ՀՀ Ազգային ժողովի միջև համագործակցության հուշագիր: Ըստ հուշագրի՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը մասնակցելու է օրինաստեղծ գործընթացին: Համալսարանական մասնագետները ստեղծվող նախագծերի վերաբերյալ մասնագիտական եզրակացություններ են ներկայացնելու, իրականացնելու են արդեն իսկ գործող իրավական ակտերի մոնիթորինգ:

(Տե՛ս Այսուհետ նաև իրավական հիմքով,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/xWupKaRwj9hLi144bZ8LzjZnTE>, մուտք՝ 09.06.2019)

25 մարտի – ԵՊՀ մեծ դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ-ի կողմից կազմակերպված 2011 թ. դպրոցական օլիմպիադայի արդյունքների ամփոփման ու պարգևատրման պաշտոնական արարողությունը:

(Տե՛ս 320 աշակերտներ արժանացան պարգևների,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/8ImJ3Uia0tDG18pnZ170oCBveh>, մուտք՝ 09.06.2019)

9 ապրիլի – ԵՊՀ շրջանավարտների միավորման «Աջակցություն երիտասարդ համալսարանականների բնակարանաշինությանը» ծրագրի շրջանակում կառուցված բազմաբնակարան-բազմաֆունկցիոնալ շենքի պաշտոնական բացման հանդիսավոր արարողությանը ներկա էին նաև ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, Երևանի քաղաքապետ Կարեն Կարապետյանը:

Իրենց բնակարանների պաշտոնական նորամուտն էին տոնում 315 ընտանիքներ²⁵:

(Տե՛ս Համալսարանական բնակարանամուտ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/ofiEMDzq9cdYkrQHJohCiX31Jl>, մուտք՝ 09.06.2019)

13 ապրիլի – Ֆիզիկայի ֆակուլտետում տեղի ունեցավ Յուրի Գագարինի՝ տիեզերք կատարած թռիչքի 50-ամյակին նվիրված կինոդիտում:

(Տե՛ս Տիեզերանվան հերոսը Ֆիզիկայի ֆակուլտետում, Օտե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/SXc7JEe5lm2s4xhSY1urYet9ar>, մուտք՝ 09.06.2019)

15 ապրիլի – ՀՀ 9 բուհերի թանգարանների շուրջ 20 աշխատակիցներ ԵՊՀ պատմության թանգարանում քննարկեցին բուհական թանգարանների խնդիրները: Հետաքրքիր դասախոսություններ կայացրեց Մինեսոտայի համալսարանի Ֆրեդերիկ Ռ. Վեսմանի անվան արվեստի թանգարանի տնօրեն և գլխավոր ֆոնդապահ, Թանգարանների միջազգային խորհրդի «Համալսարանական թանգարաններ և հավաքածուներ» միջազգային կոմիտեի խորհրդի անդամ Լինդա Քինգը:

(Տե՛ս ԵՊՀ պատմության թանգարանը համախմբեց, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք <http://ysu.am/news/hy/BD6ExgPpXv8ZTXP7p8k5DnqfJX>, մուտք՝ 09.06.2019)

20 ապրիլի – Հայոց մեծ եղեռնի տարելիցին ընդառաջ՝ ԵՊՀ հրատարակչությունը հայ ընթերցողին ներկայացրեց Գոնսալո Գուարչի «Հայոց կտակ», Ստեփան Պողոսյանի «Հայոց ցեղասպա-

նության պատմություն» (1-3-րդ հատորներ), Հրաչիկ Սիմոնյանի «Ազատագրական պայքարի ուղիներով», Վահան Բայբուրդյանի «Օսմանյան կայսրության պատմություն», Ստյոպա Պետոյանի «Թուրքերը թուրքերի մասին» (1-ին հատոր) գրքերը:

Հրատարակվել էին նաև «Թուրքերը թուրքերի մասին» գրքի 2-րդ հատորը, որի աշխատանքներն իրականացրել էր Ստեփան Պողոսյանը, Վարուժան Պողոսյանի «Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ-XX դարի սկիզբ)», Դորա Սաքայանի «Զմյուռնիա, 1922, բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը» (հայերեն և անգլերեն), Ռաֆիկ Նահապետյանի «Աղձնիքահայերի՝ մանկան խնամքի ավանդական սովորույթներն ու ծեսերը», Վիլիելմ Բաումի «Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները» գրքերը: Նախատեսվում էր պետական պատվերի շրջանակներում հրատարակել «Թուրքերը թուրքերի մասին» գրքի երրորդ հատորը, ինչպես նաև այս երեք հատորների ամփոփագրերը՝ անգլերենով:

(Տե՛ս Հայոց մեծ եղեռնը նոր գրքերում,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/8ZJ0PtEale10uAGIHrfHdUncA5>, մուտք՝ 09.06.2019)

28 ապրիլ – ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետ այցելեց Լիտվայի ժուռնալիստների միության նախագահ Դենիլուս Ռադկիչուսը: Վերջինս ուսանողներին ցուցադրեց նաև իր պատրաստած մի տեսաշար, որտեղ ներկայացված են արդի լրագրության բոլոր այն նորամուծությունները, որոնք գործածվում էին ամբողջ աշխարհում:

(Տե՛ս Լիտվացի լրագրողը ԵՊՀ-ում,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/hQCaWjcQV9z7BfYPf7ujoak7HY>, մուտք՝ 09.06.2019)

4 մայիս – ՀՀ պաշտպանության նախարարությունում մեկնարկեց «Պատմություն և մշակույթ. ընդդեմ կեղծիքի և ոտնձգության» խորագրով հանրապետական գիտաժողովը, որին մասնակցում

էր մաս Երևանի պետական համալսարանը: Եռօրյա գիտաժողովն անցկացվեց ՀՀ պաշտպանության մախարարին առընթեր հասարակական խորհրդի մախաձեռնությամբ:

(Տե՛ս Ընդդէմ կեղծիքի և ոտնձգության,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/IOCSXqTzQdE1vDDRwV9FydC3BO>, մուտք՝ 09.06.2019)

4 մայիսի – ԵՊՀ ուսանողները հյուրընկալել էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ու ՀՀ կրթության և գիտության մախարար Արմեն Աշոտյանին:

(Տե՛ս Կոռուպցիայի դէմ պայքարում եմ վարչապետի հետ,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/kWHnVdD83ARIrHverO2XMvmldN>, մուտք՝ 09.06.2019)

12 մայիսի – ԵՊՀ-ում տեղի ունեցավ միջազգային սեմինար՝ նվիրված Եվրամիություն-Հայաստան հարաբերություններին: «Եվրամիության դերը Հարավային Կովկասում. համագործակցությունից գործընկերություն բարեփոխումների միջոցով. մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով սեմինարին մասնակցում էին Եվրամիության պատվիրակության ղեկավար Ռատու դե Լյուցենբերգերը, Միացյալ ազգերի զարգացման ծրագրի գրասենյակի ներկայացուցիչ Դաֆինա Գերչևան, Պորտուգալիայի Կոյիմբրա համալսարանի պրոֆեսորներ Մաբրի Ռաբել Ֆրիերը և Լիսինիա Սիմաուն:

(Տե՛ս Եվրամիություն-Հայաստան հարաբերությունները մոր փուլում եմ,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Sf5KggpJu2UBvMrxcCAj2RDI8d>, մուտք՝ 09.06.2019)

18 մայիսի – ԵՊՀ այցելեց ՀՀ-ում Հնդկաստանի արտակարգ և լիազոր դեսպանը: Հանդիպման մալատակն էր ուսանողներին ներկայացնել «ահաբեկչություն» չարիքի տարբեր կողմերը, ինչպես մաս ամրացնել արդեն մի քանի տարվա պատմություն ունեցող համագործակցությունը Հնդկաստանի դեսպանատան հետ: Հնդկաստանի դեսպան Աչալ Մալիտտրան մանրամասն

ներկայացրեց ահաբեկչության ֆեմոնները, նշեց դրա իրագործման պատճառներն ու հետևանքները: Հանդիպմանը ներկա էին Միջազգային հարաբերությունների, Պատմության, Արևելագիտության, Սոցիոլոգիայի և Իրավագիտության ֆակուլտետի ուսանողները:

(Տե՛ս Հնդկաստանի դեսպանը ահաբեկչության մասին,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/srB3GWqBMfawBENxOuGcAyNIwu>, մուտք՝ 09.06.2019)

24 մայիսի – ԵՊՀ-ում էր Չիլիի մասնավոր կենսաթոշակային համակարգի ստեղծող, տնտեսագետ Խոսե Պինիերան²⁶: Հայտնի տնտեսագետը ուսանողների ու դասախոսների հետ հանդիպման էր եկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արթուր Գրիգորյանի, ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ներսես Երիցյանի, Վրաստանի առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Անդրյու Ուրուշաձեի հետ: Խոսե Պինիերան Հայաստանում էր ՀՀ Կառավարության հրավերով:

(Տե՛ս «Աստված մանրուքների մեջ է»,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/x8mqUu3nvaQB5Wuak8AYJg0qay>, մուտք՝ 09.06.2019)

25 մայիսի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Կիրառական կենսաբանություն» մագիստրոսական մոդուլի շնորհանդեսը: Ելույթներ ունեցան ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանն ու Հայաստանի պետական ագրարային համալսարանի ռեկտոր Արշալույս Թարվերդյանը: Ձեկուցումներով հանդես եկավ «TEMPUS» գրասենյակի հայաստանյան համակարգող Լանա Կարլովան (««Տեմպուս» ծրագրի կարևորությունը կրթական համակարգի զարգացման համար»), ԵՊՀ-ՀՊԱՀ ծրագրերի համակարգողներ Նելլի Հովհաննիսյանը և Հովիկ Սայադյանը: «TEMPUS MPAB» (MAster Program in Applied Biosciences) ծրագրի շրջանակներում եվրոպական և վրացական համալսարանների հետ ԵՊՀ կենսաբանության ֆակուլ-

տետում ու Հայաստանի պետական ագրարային համալսարանում մշակվել է «Կիրառական կենսաբանություն» մագիստրոսական նոր ծրագիրը:

(Տե՛ս Կիրառական կենսաբանություն. մագիստրոսական նոր ծրագիր, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/ZMJJzqcIbK72uw05CLbJvWVVeip>, մուտք՝ 09.06.2019)

26 մայիսի – ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը ներկայացնում է «Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում» տարածաշրջանային միջմասնագիտական նոր մագիստրոսական ծրագիրը: Այն իրականացնելու են 4 գործընկեր համալսարաններ (Երևանի պետական համալսարան, Կիևի Տարաս Շևչենկոյի անվան ազգային համալսարան, Բելառուսի պետական համալսարան և Մոլդովայի քաղաքական և տնտեսագիտական եվրոպական ուսումնասիրությունների համալսարան): Դասընթացի շրջանակներում նախատեսվում է ուսանողների և դասախոսների փոխանակում, ուսուցողական այցեր ԵՄ ինստիտուտներ, վերապատրաստում ծրագրին մասնակից երկրներում:

(Տե՛ս Նոր կրթական ծրագիր, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/ZIRSNlcobVViz1FjQtmBfs4Z4w>, մուտք՝ 09.06.2019)

27 մայիսի – Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Ջոն Կիրակոսյանի անվան լսարանում տեղի ունեցավ գիտխորհրդի նիստ, որը նվիրված էր ֆակուլտետի դեկան Գեղամ Պետրոսյանի ծննդյան 60-ամյակին: Նիստին ներկա էին ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար Արամ Սիմոնյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանը, գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը, ինչպես նաև ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը:

Նիստի վերջում ռեկտորի պաշտոնակատար Արամ Սիմոնյանը դեկանին հանձնեց ԵՊՀ պատվոգիր և ԿԳՆ ոսկե հու-

շամեղալը:

(Տե՛ս Ոսկե հուշամեղալ ԿԳՆ-ի կողմից,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/hgE3NoYaWj7vQ9M05J7aR0FObe>, մուտք՝ 09.06.2019)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է առկա ուսուցման 3937 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Մաթեմատիկայի և մեխանիկայի՝ 113 բակալավր, 63 մագիստրոս, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 125 բակալավր, 46 մագիստրոս, Ֆիզիկայի՝ 75 բակալավր, 55 մագիստրոս, Ռադիոֆիզիկականի՝ 66 բակալավր, 37 մագիստրոս, Քիմիայի՝ 125 բակալավր, 29 մագիստրոս, Կենսաբանության՝ 105 բակալավր, 60 մագիստրոս, Աշխարհագրության և երկրաբանության՝ 113 բակալավր, 42 մագիստրոս, Պատմության՝ 162 բակալավր, 79 մագիստրոս, Սիջազգային հարաբերություններ՝ 316 բակալավր, 126 մագիստրոս, Տնտեսագիտության՝ 259 բակալավր, 135 մագիստրոս, Փիլիսոփայության և հոգեբանության՝ 108 բակալավր, 87 մագիստրոս, Սոցիոլոգիայի՝ 93 բակալավր, 35 մագիստրոս, Հայ բանասիրության՝ 148 բակալավր, 74 մագիստրոս, Ժողովրդագրության՝ 60 բակալավր, 28 մագիստրոս, Ռուս բանասիրության՝ 78 բակալավր, 23 մագիստրոս, Ռումնագերմանական բանասիրության՝ 354 բակալավր, 113 մագիստրոս, Արևելագիտության՝ 164 բակալավր, 50 մագիստրոս, Իրավագիտության՝ 225 բակալավր, 69 մագիստրոս, Աստվածաբանության՝ 39 բակալավր, 18 մագիստրոս, ՏՏԿՀ կենտրոն՝ 27 մագիստրոս, ԵՈՒ կենտրոն՝ 13 մագիստրոս:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2011-2012
ուստարվա գործունեություն, Երևան, 2012, էջ 50)

հունիս – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը տալիս է շրջանավարտներ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Բնական գիտությունների՝ 60, Հումանիտար գիտությունների՝ 119, Տնտեսագիտության՝ 89, Կիրառական արվեստի՝ 34:

Հեռակա ուսուցման շրջանավարտների թիվը 91 էր:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2010-2011
ուստարվա գործունեություն, Երևան, 2011, էջ 627, 635, 650, 655, 661)

3 հունիսի – Խորհրդային Միության հերոս, տիեզերագնաց Ալեքսեյ Բալանդինը հանդիպեց ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի ուսանողների հետ: Նա մաս Երիտասարդ տիեզերագնացների համառոտաստանյան միության փոխնախագահն էր: Նա Հայաստան էր ժամանել «Ռոստոտրոդնիչեստվո»-ի կազմակերպած ծրագրի շրջանակներում, որին մասնակցում էին մոտ 70 երկրներ:

(Տե՛ս Ռոս տիեզերագնացը ԵՊՀ-ում,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/s142eIoYwiUpKhZTTRi1glulOL>, մուտք՝ 09.06.2019)

17 հունիսի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնում «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության մախաճեռնությամբ և կենտրոնի ղեկավար Աիդա Իսկոյանի անմիջական օժանդակությամբ տեղի ունեցավ «Պետական անտառները համայնքային կազմակերպություններին առանց մրցույթի հավատարմագրային կառավարման հանձնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության՝ 2006 թ. ընդունված որոշման քննարկում: Մասնակցում էին «Կանաչ ջրային միջավայր» ՀԿ նախագահ Լիլիթ Բաղդարյանը, «Կանաչ արահետ» ՀԿ բնապահպանական ծրագրերի խորհրդատու Լիա Ասատրյանը, «Վալեքս» խմբի գլխավոր իրավաբան Սահակ Կարապետյանը, «Շողեր միություն» ՀԿ նախագահ Հասմիկ Ասլանյանը, «Տապան» էկոակումբի նախագահ Հրանտ Սարգսյանը, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի փոխնախագահ և գլխավոր անտառապետ Ռուբեն Պետրոսյանը և այլք:

(Տե՛ս Որոշման քննարկում ԵՊՀ-ում,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/jcwl6EurIjVigZzRPto1dGd8g>, մուտք՝ 09.06.2019)

21 հունիսի – ԵՊՀ ռեկտոր վերընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արամ Սիմոնյանը:

(Տե՛ս ԵՊՀ ռեկտորը վերընտրվեց,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.ysu.am/news/hy/ChbFoo0xglkCFzXITIOH3zaLaS>, մուտք՝ 09.06.2019)

22 հունիսի – ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում հերթական անգամ հյուրընկալվել էր մասնագիտությամբ ինժեներ, միաժամանակ նաև գեմոլոգիական լուրջ կրթություն ստացած ֆրանսահայ Գրիգոր Թուլլույանը:

(Տե՛ս Գեմոլոգիան ԵՊՀ-ում հիմնադրելու ակնկալիքով,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/BwTCLtVoXH0AGFvTrWCwMagkVG>, մուտք՝ 09.06.2019)

22 հունիսի – ԵՊՀ Պալեանների անվան դաիլին՝ Իրավագիտության ֆակուլտետի նախաձեռնությամբ կազմակերպվել էր օրենքի մի շարք բացթողումների, մասնավորապես՝ Քրեական օրենսգրքի վերանայման հայեցակարգերին մվիրված հանդիպում-քննարկում: Ձեկուցումներով հանդես եկան Իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի վարիչ Արա Գաբուլյանն ու ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Դավիթ Ավետիսյանը: Հանդիպմանը ներկա էին ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, ԱԺ պատգամավորներ, ոլորտի մասնագետներ, ուսանողներ:

(Տե՛ս Փոփոխություններ քրեական օրենսգրքում,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/B2rooc8De61fqcSsr8v5MIp931>, մուտք՝ 09.06.2019)

22 հունիսի – ԵՊՀ հյուրն էր հռոմեական եկեղեցու կարդինալ Ջեանֆրանկո Ռավագին²⁷: Հանդիպման վերջում, գիտխորհրդի որոշմամբ, հասարակական, քաղաքական և մշակութային բեղուն գործունեություն և աստվածաբանության ու քրիստոնեության քարոզչության ասպարեզում ունեցած ակնառու մվաճումների համար կարդինալը ստացավ Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտորի կոչում և արժանացավ ԵՊՀ ոսկեգոծ մեդալի:

(Տե՛ս Հռոմեական կարդինալը՝ ԵՊՀ պատվավոր դոկտոր,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.ysu.am/news/hy/i8LcaevyhiFp3nO13hfOhFkQj>, մուտք՝ 10.06.2019)

24 հունիսի – ԵՊՀ գիտխորհրդի դահլիճում կայացավ «Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում» գրքի շնորհանդեսը:

(Տե՛ս Նոր գրքի շնորհանդես ԵՊՀ-ում,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Cedaj6l8LsIbOqXNySL55sBTf>, մուտք՝ 09.06.2019)

1 հուլիսի – ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական հետազոտական (SSԿՀ) կենտրոնում տեղի ունեցավ մագիստրոսական դիպլոմների հանձնման արարողություն: ՏՏԿՀ կենտրոնի գիտական ղեկավար Սամվել Շուքուրյանը նախքան դիպլոմների հանձնումը նշեց, որ այդուհետ կենտրոնի ուսանողները մագիստրատուրան կավարտեն ոչ միայն «Տեղեկատվական համակարգերի կառավարում» և «Տեղեկատվական համակարգերի մշակում», այլև «Վիզուալ հաշվարկներ» մագիստրոսական ծրագրով:

(Տե՛ս ԵՊՀ-ն «թողարկեց» ՏՏ ոլորտի մոր ու որակյալ կադրեր,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/3c2NooVLDbbRJ2QmvDdw9wkwjI>, մուտք՝ 09.06.2019)

12 հուլիսի – ԵՊՀ Պալեանների դահլիճում տեղի ունեցավ «Հանցավորության նկատմամբ վերահսկողություն և կանխարգելում» խորագրով միջազգային գիտաժողով: Ողջույնի խոսքով հանդես եկավ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի փոխդեսպան Կարել Հոֆստրան: Այնուհետև ելույթ ունեցավ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու Աննա Մարգարյանը, որ ներկայացավ «Վիկտիմիզացիան Հայաստանում. ԵԱՀԿ 2010 թ. հարցման արդյունքներ» զեկուցումով: Միջոցառմանը ներկա էին միջազգային կազմակերպությունների, ՀԿ-ների ներկայացուցիչներ, Իրավագիտության ֆակուլտետի ուսանողներ և այլ հյուրեր:

(Տե՛ս Հանցավորության նկատմամբ վերահսկողություն և կանխարգելում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/gwXL1uG0lsk137ohQ3WVMPjkkZ>, մուտք՝ 09.06.2019)

13 հուլիսի – ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը դիպլոմներ հանձնեց ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի 81 գերազանց շրջանավարտների: Մինչ բուն արարողությանն անցնելը ԵՊՀ «սև շենքի» դահլիճում հավաքված հյուրերը, բակալավրիատի ու մագիստրատուրայի շրջանավարտները լսեցին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի դասախոսությունը՝ «Գլոբալ տնտեսության և ՀՀ տնտեսական զարգացումները» թեմայով:

(Տե՛ս ԵՊՀ-ն տվեց «քայլող գովազդի» ևս մեկ սերունդ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.ysu.am/news/hy/8Ng0O17u6m1yQKyZozajM9y7xB>, մուտք՝ 09.06.2019)

1 սեպտեմբերի – Երևանի պետական համալսարանում մեկնարկում է կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման հնգամյա կրթագիտական ծրագիրը, որի իրականացումը և ֆինանսավորումը ստանձնում է Մայր բուհը, իսկ կազմակերպման պատասխանատուն Հետբուհական լրացուցիչ կրթության վարչությունն է:

(Տե՛ս Նոր հնարավորություններ դասախոսների համար, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/yDmkupIro1kbd6zfWG8Lb7SWmx>, մուտք՝ 09.06.2019)

1 սեպտեմբերի – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում կայացավ Էդվարդ Նալբանդյանի և ուսանողների հանդիպումը:

(Տե՛ս ԱԳ մախարարը հանդիպեց ուսանողների հետ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.ysu.am/news/hy/9aTl7ruvMWINL8pz9xs4ihg5IW>, մուտք՝ 09.06.2019)

1 սեպտեմբերի – ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի հյուրը Գերմանիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Մարտիրոսյանն էր:

(Տե՛ս Շնորհավորանքները Գերմանիայից էին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/WCbJjRTRiQ7SbJaegRaxyBsMO5>, մուտք՝ 09.06.2019)

10 սեպտեմբերի – Ծաղկածորում գործող ԵՊՀ «Համալսարան» ուսումնասիրտադրական բազայում կայացավ «Հարմոնիկ անալիզ և մոտավորություններ» խորագրով մաթեմատիկական գիտաժողովի բացման պաշտոնական արարողությունը: Բացման խոսքով հանդես եկավ գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը: Նա գիտաժողովի մասնակիցներին մաղթեց աշխատանքային բեղմնավոր օրեր:

(Տե՛ս Մաթեմատիկական սեմինարների շարք, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/kkZxG93Vg0q3z7OTayU0vg1nEr>, մուտք՝ 09.06.2019)

14 սեպտեմբերի – ԵՊՀ գիտական խորհրդի դահլիճում մեկնարկեց Եվրոպական միության աջակցությամբ հիմնադրված «Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում» տարածաշրջանային մագիստրոսական ծրագիրը: Մասնակից 22 ուսանողներից 11-ը Հայաստանից էին, իսկ մյուսները ժամանել էին Բելառուսից, Մոլդովայից, Ուկրաինայից, Վրաստանից և Ռուսաստանից: Միջոցառմանը մասնակցում էին ԵՊՀ ռեկտորը, Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Ռաուլ դե Լյուցենբերգերը, ՍԱԿ-ի հայաստանյան գրասենյակի համակարգողի գլխավոր խորհրդական Արմեն Բայբուրդյանը, ՀՀ արտգործնախարարի տեղակալ Զոհրաբ Մնացականյանը:

(Տե՛ս ԵՊՀ-ն տարածաշրջանի նոր լաբորատոր կենտրոն, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/bvsnzMTmgGvtIOFPXnRs6iWzHZ>, մուտք՝ 09.06.2019)

15 սեպտեմբերի – «Տեմպուս» ծրագրի հայաստանյան գրասենյակը կազմակերպել էր «Միջազգային հեռանկարներ. ուսանողամետ դասընթաց» քեմալով սեմինար: Ներկա էին ԵՊՀ ուսանողներ, դասախոսներ, նաև այլ բուհերի ներկայացուցիչներ: Սեմինարի հատուկ հյուրն էր Շվեդիայի Լունդի համալսարանի գլխավոր խորհրդական, համալսարանական կառավարման մասնագետ Բոել Բիլգենը, որը խոսեց ««Տեմպուս» ծրագիրը որպես միջազ-

գայնացման և որակի ապահովման գործիք» թեմայի մասին՝ առանձնապես կարևորելով համալսարանի կառավարման համակարգը և ուսանողների շարժունակության քաղաքականությունը:

(Տե՛ս «Տեմպուր» համալսարանների միջազգայնացման գործիք, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.ysu.am/news/hy/qC2I0ekXjW9ZyqlDwe0qJiLW59>, մուտք՝ 09.06.2019)

16 սեպտեմբերի – ԵՊՀ-ում մեկնարկեց իրանցի ուսանողների առաջին միջազգային գիտահետազոտական կոնֆերանսը: Նախաձեռնողը Հայաստանում իրանցի ուսանողների միությունն էր, իսկ համակազմակերպիչները՝ Հայաստանում ԻԻՀ դեսպանատունը, Ուկրաինայում և Բելառուսում ԻԻՀ գիտական ներկայացուցչությունը, Իրանի գիտությունների, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարարությունը: Գիտաժողովին մասնակցում էին ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհի մի շարք երկրներում սովորող իրանցի ուսանողները:

(Տե՛ս Իրանական գիտությունը տեղավորվել էր ԵՊՀ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/9Z1pGNKuoUmlHZ28xEBoeveDfr>, մուտք՝ 09.06.2019)

17 սեպտեմբերի – ԵՊՀ-ում տեղի ունեցավ սեմինար-քննարկում «Դի-ուս» նախագծի հետագա ընթացքի վերաբերյալ²⁸:

(Տե՛ս Ինքնագնահատման փորձ ՀՀ բուհերում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.ysu.am/news/hy/VYQD2dBR3jTDvtN112RJ32EXx5>, մուտք՝ 10.06.2019)

25 սեպտեմբերի – Երևանի պետական համալսարանի նախասրահում մեկնարկեց «Հեղուկ բյուրեղների օպտիկա-2011» (Optics of Liquid Crystals (OLC)-2011) խորագրով միջազգային ամենամյա կոնֆերանսը: Կազմակերպիչներն էին ԵՊՀ-ն և ՀՀ գիտության պետական կոմիտեն:

(Տե՛ս OLC-2011. մեկնարկը տրվեց ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/SYALjaUyC2ycUn27vEfjrKs3PI>, մուտք՝ 09.06.2019)

26 սեպտեմբերի – ԵՊՀ-ում մեկնարկեց «Կրթությունը, գիտությունը և տնտեսությունը բուհերում. ինտեգրում միջազգային կրթական տարածքում» թեմայով միջազգային գիտաժողով, որին մասնակցում էին 120 մասնագետներ աշխարհի տարբեր երկրներից: Գիտաժողովն անցկացվում է դեռևս խորհրդային տարիներից՝ 3 տարին մեկ որևէ երկրում: ՌԴ և ՀՀ Կառավարությունների համատեղ որոշմամբ՝ 2011 թ. այն անցկացվում է Հայաստանում, իսկ կատարողները 2 երկրների կրթության և գիտության նախարարություններն էին: Գիտաժողովում զեկուցումով հանդես եկավ մաս ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

(Տե՛ս Արտասահմանցի մասնագետները՝ դարձյալ ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.y-su.am/news/hy/GRI4kBoiUW4CP2Jh7izgJIPENL>, մուտք՝ 10.06.2019)

27 սեպտեմբերի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում մեկնարկեց «Փախստականների իրավունք» խորագրով քառօրյա սեմինարը:

(Տե՛ս Կուսումնասիրվեն փախստականների հիմնախնդիրները, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/0cZhUZpZDx7rriddlt7fCwqb9u>, մուտք՝ 09.06.2019)

4 հոկտեմբերի – «Կոմրադ Ադենաուեր» հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնում անցկացվեց «Արևելյան գործընկերություն» թեմայով բաց դասախոսություն: Կենտրոնի պատվավոր հյուրն էր գերմանական Բունդեսթագի պատգամավոր, Զրիստոնեա-դեմոկրատական կուսակցության արտաքին հարաբերությունների աշխատանքային խմբի ղեկավար, Բունդեսթագի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ Կարլ Գյորգ Բերմանը: Դասախոսությանը ներկա էին միջազգային տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, կենտրոնի դասախոսներ, ուսանողներ:

(Տե՛ս Բունդեսթագի պատգամավորը համալսարանում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/RVzoulawdMBNiW3HzWSxi5yEUc>, մուտք՝ 09.06.2019)

4 հոկտեմբերի – ԵՊՀ-ում «Քաղաքականությունը և լրատվությունը» թեմայով փոքրիկ դասախոսություն կարդաց ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի՝ 2008 թ. նախընտրական թվային մարքեթինգով զբաղված, ԱՄՆ դեմոկրատական կուսակցության թվային մարտավարությամբ և այդ բրենդի մարքեթինգն իրականացնող ամերիկյան «Bully Pulpit Interactive» ընկերության գործադիր տնօրեն Բեն Քոֆեյ Քլարկը: Վերջինս նաև պատվիրատուների սպասարկման և նոր բիզնեսների մշակման հարցերով պատասխանատուն էր: Նա քաղաքական գովազդներ պատրաստելու, համացանցում նախագահական ընտրարշավները համակարգելու շուրջ 7 տարվա փորձ ուներ: Հանդիպմանը, որը կազմակերպել էր Միջազգային համագործակցության վարչությունը, ներկա էին Միջազգային հարաբերությունների, Սոցիոլոգիայի և Ժողովրդագրության ֆակուլտետների ուսանողները:

(Տե՛ս Ամերիկացի քաղաքական մարքետոլոգը ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/LO2Py1JGI9ls1MGkfYQF08kQX>, մուտք՝ 09.06.2019)

7 հոկտեմբերի – ԵՊՀ այցելեց ԱՄՆ Թաֆթս համալսարանի իրավունքի և դիվանագիտության դպրոցի պրոֆեսոր, միջազգային իրավունքի մասնագետ Յան Ջոնսթոնը, որը ԵՊՀ ուսանողների համար հանդես եկավ «Պաշտպանության պարտականություն. նորմի էվոլյուցիան-Կոստովից Լիբիա» թեմայով դասախոսությամբ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2011-2012 ուստարվա գործունեություն, Երևան, 2012, էջ 118)

11 հոկտեմբերի – ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը Հայաստանում եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Ռաուլ դե Լյուցենբերգերի առաքելությունը Հայաստանում ավարտելու կապակցությամբ կազմակերպել էր «Արևելյան գործընկերության գազաթնաժողովային զարգացումներն ու սպասելիքները» թեմայով դասախոսություն:

Հանդիպմանը, բացի Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի ուսանողներից, մասնակցում էին նաև դասախոսներ, Հայաստանում ԵՄ պատվիրակության աշխատակազմի և միջազգային այլ կառույցների ներկայացուցիչներ: Դեսպանը նշեց, որ սեպտեմբերին Վարշավայում անցկացված Արևելյան գործընկերության 2-րդ գագաթնաժողովն ուղղված էր Եվրամիության և Արևելյան Եվրոպայի ու Հարավային Կովկասի երկրների հետ համագործակցության ամրապնդմանը:

(Տե՛ս Լյուցեմբերգերի վերջին դասախոսությունը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/o16EDHb0kaFQ5fZ1YvrCuLi1tz>, մուտք՝ 09.06.2019)

12 հոկտեմբերի – ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի դահլիճում համալսարանականների հետ հանդիպեց Նոբելյան մրցանակի դափնեկիր Ժորես Ալֆյորովը: Ռուս ֆիզիկոսի հետ հանդիպմանը ներկա էին ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը, ԵՊՀ ռեկտորը, պրոռեկտորները, ֆակուլտետների ղեկավանները, գիտաշխատողներ և ուսանողներ:

(Տե՛ս Ժորես Ալֆյորովը այցելեց ԵՊՀ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/qRsKX2WrPiwueX2dlxbpa9TNSX>, մուտք՝ 09.06.2019)

19 հոկտեմբերի – «Իտալերեն լեզվի շաբաթն աշխարհում» միջոցառման շրջանակում ԵՊՀ Ե. Չարենցի անվան դահլիճում Հայաստանում Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպան Բրունո Սկապինին և Ֆլորենցիայի համալսարանի դասախոս Մարինո Բիոնդին հանդիպեցին համալսարանականների հետ: Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ռոմանական բանասիրության ամբիոնի կազմակերպած միջոցառմանը ներկա էր նաև ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը:

(Տե՛ս Իտալերեն լեզվի շաբաթը նաև ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/BLltr0CVffRIZk5VtEDRGIAcRT>, մուտք՝ 09.06.2019)

19 հոկտեմբերի – ԵՊՀ-ում մեկնարկեց Ռուս բանասիրության ֆակուլտետի կազմակերպած «Ռուսաց լեզուն և գրականությունը XXI դարի գիտական հարացույցում» խորագրով միջազգային երկօրյա ավանդական գիտաժողովը: Այն մվիրված էր բանասեր Հրանուշ Մարգարյանի հիշատակին: Գիտաժողովի հիմնական նպատակը ռուսաց լեզվի և գրականության, թարգմանության տեսության, լեզվաբանության ու միջմշակութային հաղորդակցության արդիական խնդիրների շուրջ կատարված հետազոտությունների արդյունքների ամփոփումն էր: Մասնակցում էին շուրջ 90 մասնագետներ Ռուսաստանից, Վրաստանից, Գերմանիայից, Հունաստանից, Լեհաստանից ու Հայաստանից: Բացման խոսքով հանդես եկավ Ռուս բանասիրության ֆակուլտետի դեկան Պավել Բալայանը:

(Տե՛ս Ռուսերենը XXI դարի գիտական հարացույցում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1vSL0CZLXQQTbaN5MRTTfeAxaU>, մուտք՝ 09.06.2019)

27 հոկտեմբերի – Երևանի պետական համալսարանում ամփոփվեցին «ԱՐՓԱ» ընկերության («ARPA» կամ «Analisys Research & Planning for Armenia») նախաձեռնած նորարարության մրցույթի արդյունքները, և տեղի ունեցավ հաղթողների պարգևատրման հանդիսավոր արարողությունը: Միջոցառմանը մասնակցում էին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, ԵՊՀ ռեկտորը, «ԱՐՓԱ»-ի նախագահ Հակոբ Փանոսյանը, ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, մի շարք հյուրեր և ուսանողներ:

(Տե՛ս Պարգևատրվեցին նորարարական մրցույթի հաղթողները, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/77OmFcpenNgcdDQw4qkiZuGuyo>, մուտք՝ 09.06.2019)

28 հոկտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի դահլիճում մեկնարկեց «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» խորագրով եռօրյա միջազգային գիտաժողովը, որին մասնակցում էին աշխարհի 12 պետությունների 43 համալսարան-

ների ավելի քան 200 մասնագետներ:

(Տե՛ս Աշխարհի հոգեբանները համալսարանում,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/b4Ooigr1FY3k4hdLD1MwQ00jAR>, մուտք՝ 09.06.2019)

7 նոյեմբերի – ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի մասնաշենքում տեղի ունեցավ Հայ-հնդկական տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների գերազանցության կենտրոնի պաշտոնական բացման արարողությունը: Միջոցառմանը մասնակցում էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, Հնդկաստանի Հանրապետության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների պետնախարար Սաչին Պիլոտը, ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների մասնավոր ոլորտի և տարբեր բուհերի ղեկավարներ, ինչպես նաև Հնդկաստանի պատվիրակությունը, որի կազմում էին բարձրաստիճան պաշտոնյաներ և ՏՏ ոլորտի փորձագետներ²⁹:

(Տե՛ս Հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոնն արդեն գործում է,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/f1WcAln8BZIRnf3kPpHHeJzAta>, մուտք՝ 09.06.2019)

8 նոյեմբերի – ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը հյուրընկալեց եգիպտական պատվիրակությանը, որը գլխավորում էր Եգիպտոսի Արաբական Հանրապետության մշակույթի նախարարի խորհրդական, մշակույթի արտաքին հարաբերությունների 1-ին պետքարտուղար Հոսսամ Նասսարը: Միջոցառումը նվիրված էր Հայաստանում Եգիպտոսի մշակույթի օրերին:

(Տե՛ս Մշակութային համագործակցության մոր փուլ,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.ysu.am/news/hy/4SCN1gLUb7hQayYBr7ENr1SgA2>, մուտք՝ 10.06.2019)

9 նոյեմբերի – Նորվեգիայի արտաքին գործերի նախարար Յոնաս Գաիր Շոյորեն այցելեց Երևանի պետական համալսարան: Նորվեգացի դիվանագետը կարևորեց իր առաջին այցը Հա-

յաստան և հատկապես հանդիպումը համալսարանականների հետ:

(Տե՛ս Նորվեգացի պաշտոնյան հանդիպեց ուսանողների հետ,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.y-su.am/news/hy/R3jRm0jvtlCEIMrwT6uPEsCpLk>, մուտք՝ 10.06.2019)

10 նոյեմբերի – Երևանի պետական համալսարանի ռեկտոր Արամ Սիմոնյանը հյուրընկալեց Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Անրի Ռենոին ու Մշակույթի և համագործակցության հարցերով խորհրդական Ժան-Պոլ Մարտենին:

(Տե՛ս Հայաստան-Ֆրանսիա. հավերժ բարեկամներ,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.y-su.am/news/hy/nWgeIPy6Jrv0YOQcywyEEi0YTq>, մուտք՝ 10.06.2019)

18 նոյեմբերի – Հայաստանում Ֆրանսիայի և Գերմանիայի դեսպանատների հրավերով մեր երկիր այցելած գերմանական ծագումով ֆրանսիացի քաղաքագետ Ալֆրեդ Գրոսսերը ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի դահլիճում հանդես եկավ «Ողբերգական անցյալ և կառուցողական հիշողություն. ֆրանս-գերմանական օրինակը կարո՞ղ է ընդհանրական լինել» թեմայով դասախոսությամբ: Հանիպմանը, բացի համալսարանականներից, մասնակցում էին հայաստանյան այլ բուհերի ու գիտական կառույցների ներկայացուցիչներ: Հանրահայտ պրոֆեսորին նախ ողջունեց և կենսագրական որոշ տվյալներ ներկայացրեց ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը:

(Տե՛ս Ալֆրեդ Գրոսսերը ԵՊՀ-ում,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.y-su.am/news/hy/2wTQn7NIF9piIh7AxGXDa27LYj>, մուտք՝ 10.06.2019)

13 դեկտեմբերի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում անցկացվեց պրոֆեսորադասախոսական կազմի ամենամյա գիտաժո-

դովը, որը նվիրված էր ՀՀ անկախության 20-ամյակին:

(Նոր օրենսգիրքը գրվում է նաև ԵՊՀ-ում,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ [http://ysu.am/news/hy/
PnHggdhrLlzqJowW6rTW6fYffR](http://ysu.am/news/hy/PnHggdhrLlzqJowW6rTW6fYffR), մուտք՝ 09.06.2019)

16 դեկտեմբերի – ԵՊՀ պատմության ֆակուլտետի, «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի և ՀԱՄԿ-ի (Հայաստանի ազգային սկստուական շարժում/կազմակերպություն) կենտրոնական վարչության համատեղ ջանքերով տեղի ունեցան Պատմության ֆակուլտետի ասպիրանտ, զոհված ազատամարտիկ Վարդան Բախշյանի նահատակության 20-րդ տարելիցին նվիրված մի շարք միջոցառումներ:

(Տե՛ս Վարդանը մտավորական էր, զինվոր, մարդ...,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ [http://www.ysu.am/news/hy/
H6nmdv9vwsu6pyYqg0PBuHftB8R](http://www.ysu.am/news/hy/H6nmdv9vwsu6pyYqg0PBuHftB8R), մուտք՝ 09.06.2019)

21 դեկտեմբերի – ԵՊՀ-ում էին հավաքվել Հայաստանի մի խումբ գործարարներ ու խոշոր կազմակերպությունների ներկայացուցիչներ: Կազմակերպիչը ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնն էր:

(Տե՛ս Գործարարները գալիս են բուհ՝ կադրեր ընտրելու,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ [http://ysu.am/news/hy/
Q3F69EI7Tx3p9rvwmqTX3SuSvi](http://ysu.am/news/hy/Q3F69EI7Tx3p9rvwmqTX3SuSvi), մուտք՝ 09.06.2019)

2012

2011-2012 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանում դասավանդում էին 215 պրոֆեսորներ, 546 դոցենտներ, 424 ասիստենտներ, 489 դասախոսներ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2015-2016 ուստարվա գործունեություն, Երևան, 2016, էջ 14)

2011-2012 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանի առկա ուսուցման բակալավրիատում սովորում էր 8498 ուսանող, մագիստրատուրայում՝ 2647 ուսանող, ասպիրանտուրայում՝ 236 ասպիրանտ, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 3469 ուսանող, մագիստրատուրայում՝ 673 ուսանող, ասպիրանտուրայում՝ 211 ասպիրանտ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2015-2016 ուստարվա գործունեություն, Երևան, 2016, էջ 47-48)

2011-2012 ուսումնական տարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում (առկա ուսուցում) սովորող ուսանողների թիվը, ըստ ֆակուլտետների, հետևյալն էր՝ Բնական գիտությունների՝ 115, Հումանիտար գիտությունների՝ 390, Տնտեսագիտության՝ 192, Կիրառական արվեստի՝ 96:

Մինչհամալսարանական կրթության և հեռակա ուսուցման բաժնի ուսանողների թիվը 855 էր:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2011-2012 ուստարվա գործունեություն, Երևան, 2012, էջ 589, 597, 608, 613, 616)

հունվար – Երևանի պետական համալսարանը տալիս է հեռակա ուսուցման մագիստրատուրայի 115 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Միջազգային հարաբերությունների՝ 43, Տնտեսագիտության՝ 72:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2015-2016 ուստարվա գործունեություն, Երևան, 2016, էջ 54)

17 հունվարի – ԵՊՀ գիտխորհրդի դահլիճում տեղի ունեցավ խորհրդի նիստ: Խորհրդի նախագահին և անդամներին ներկայացվեցին 2010-2011 ուստարվա ընթացքում ԵՊՀ դիմորդների և ընդունվողների, պրոֆեսորադասախոսական կազմի, գիտական աշխատանքների հիմնական ուղղությունները, իրականացված դրամաշնորհները, բուհի գրադարանի գրքային ֆոնդ մուտքագրված և լույս ընծայված գրականության տվյալները: Նիստի ընթացքում հաստատվեցին 2011 թ. եկամուտների և ծախսերի կատարողականը և ԵՊՀ 2012 թ. ֆինանսական տարվա եկամուտների ու ծախսերի նախահաշիվը:

(Տե՛ս Անվտվվեց 2010-2011 ուստարին,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.ysu.am/news/hy/b9rw0eCUy8EhoF4ZOPhpHDGN23>, մուտք՝ 10.06.2019)

25 հունվարի – ԵՊՀ-ում անցկացվեց հայոց բանակի կազմավորման 20-ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողով, որին մասնակցում էին ինչպես համալսարանի, այնպես էլ ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչները:

(Տե՛ս ԵՊՀ-ն՝ բանակի տոնին ընդառաջ,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.ysu.am/news/hy/UEGbHAMnJBarbfoHsr7e5WteHK>, մուտք՝ 10.06.2019)

10 փետրվարի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր Երևանի պետական համալսարանի և ՀՀ արդարադատության նախարարության միջև:

(Տե՛ս Ստորագրվեց հուշագիր,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.ysu.am/news/hy/TcSb2EHAm5WxlgeH0775IIDcc>, մուտք՝ 10.06.2019)

13 փետրվարի – Ժամը 10:00-ին Եվրոպական տիեզերական գործակալությունն արձակում է «LARES» (LAsEr Relativity Satellite) արբանյակը GMT Գվիանայի տիեզերական կենտրոնից (Կուրու-Kourou): ԵՊՀ կոսմոլոգիայի գիտահետազոտական խմբի ղեկավար, ֆիզմաթ գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վահագն Գուրգա-

դյանը՝ որպես «LARES»-ի 4 հոգանոց գիտական խմբի անդամ, Կուրտում մասնակցում է արձակման աշխատանքներին: Դա կատարվել է VEGA եռաստիճան, կրող նոր հրթիռի առաջին քռիչքի միջոցով՝ այդպիսով շարունակելով «Ariane» հրթիռների շարքը:

(Տե՛ս Արբանյակի արձակմանը «մասնակցել է» նաև ԵՊՀ-ն, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/aC0unc01FNIxjVlaOstENF7Jq2>, մուտք՝ 11.06.2019)

մարտ – Մեկնարկեց ԵՊՀ ինստիտուցիոնալ (բուհական) հավատարմագրման շրջանակում ընթացող ինքնավերլուծության (ինքնագնահատման) գործընթացը՝³⁰ համաձայն ՀՀ Կառավարության՝ 2011 թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ միջին և բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների պետական հավատարմագրման կարգի»:

(Տե՛ս Երևանի համալսարան, հեկտեմբեր, 2012)

2 մարտի – ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Անդրեյ Սորոկինը և ռեկտոր Արամ Սիմոնյանը ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում «Կայուն զարգացման կենտրոն» հիմնադրելու վերաբերյալ:

(Տե՛ս Ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.ysu.am/news/hy/LvOHLohf3eithf3fFIYubxOV2u>, մուտք՝ 10.06.2019)

5 մարտի – «Արմենիա Մարիոթ» հյուրանոցի «Սիս» սրահում տեղի ունեցավ ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի 2011 թ. «Տարեգրքի» շնորհանդեսը:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ՀՀ ֆինանսների նախարար Վաչե Գաբրիելյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանը, ՀՀ Կառավարության աշխատակազմի ղեկավար Դավիթ Սարգսյանը, ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, Հայաստանի պետական

տնտեսագիտական համալսարանի ռեկտոր Կորյուն Աթոյանը, ԱԺ պատգամավորներ, քաղաքական գործիչներ և բարձրաստիճան պաշտոնյաներ:

(Տե՛ս Գրքի շնորհանդես, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/fzlv2WxH5CtzqOOINJWvyy9z2o>, մուտք՝ 14.06.2019)

5 մարտի – ԵՊՀ «Օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետ» կառուցվածքային ստորաբաժանումը ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ վերակազմակերպվեց «ԵՊՀ միջազգային կրթական կենտրոն»-ի:

(Տե՛ս Երևանի պետական համալսարանի 2011-2012 ուստարվա գործունեություն, Երևան, 2012, էջ 12)

6 մարտի – ԵՊՀ մեծ դահլիճում «ԵՊՀ օլիմպիադա 2012»-ի 453 հաղթողներ ստացան մրցանակներ:

(Տե՛ս Ամփոփվեց ԵՊՀ դպրոցական օլիմպիադան, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.ysu.am/news/hy/63H4GltIsOacCDco3oS0iASn24>, մուտք՝ 10.06.2019)

2 ապրիլի – ԵՊՀ գիտխորհրդի դահլիճում տեղի ունեցավ հանդիպում ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի հետ: Հանդիպմանը, բացի ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմից, ֆակուլտետների ղեկավարներից, ներկա էին մաս ալլ բուհերի ներկայացուցիչներ:

(Տե՛ս Սերգեյ Լավրովի այցելությունը Մայր բուհ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/DwJU6x1bg3768B8mLOLHIZvWtv>, մուտք՝ 12.06.2019)

3 ապրիլի – ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը «Մաքադեմիան» ընկերության հետ համագործակցության շրջանակներում կազմակերպել էր «3 D gaming» խորագրով մասնագիտական դասընթաց Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ավարտական կուրսի ուսանողների համար:

(Տե՛ս Մասնագիտական դասընթաց ուսանողների համար, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/zhB6qWqOyOB485pW2Wk44a6kfX>, մուտք՝ 11.06.2019)

16 ապրիլի – ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանն ընդունեց Հալլե-Վիքենբերգի Մարտին Լյութերի անվան համալսարանի գիտահետազոտական աշխատանքների ու երիտասարդ գիտնականների գծով պրոռեկտոր, դոկտոր, պրոֆեսոր Գեզինե Ֆոլյանտի-Յուստին, որը Հայաստան էր այցելել ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանության հրավերով:

(Տե՛ս Համագործակցությունը շարունակվում է,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.ysu.am/news/hy/Gd7zl7XroVWRYDWQ6N8MRKjeXy>, մուտք՝ 10.06.2019)

17 ապրիլի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության (DAAD) ներկայացուցիչները հանդիպեցին ուսանողների հետ: Ուսանողներին նախ ողջունեց ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանն ու ներկայացրեց հանդիպման նպատակները: Ներկա էր նաև ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանը:

(Տե՛ս Նոր հնարավորություններ ուսանողների համար,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Qh3iqGyuAvKFARaWxDCatAIP23>, մուտք՝ 11.06.2019)

18 ապրիլի – ԵՊՀ էր ժամանել Կահիրեի պետական համալսարանի պատվիրակությունը՝ հայ-եգիպտական կրթական կապերն ավելի ամրապնդելու համար: Հյուրերի կազմում էին Կահիրեի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալն ու հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի ղեկավարը: ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանը հյուրերին ներկայացրեց համալսարանի ընդհանուր քաղաքականությունը:

(Տե՛ս Գրագետ արարերեն. եգիպտացիները տպավորված էին,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.ysu.am/news/hy/BPz8l7XrNLfKtMRKCGnquKo822>, մուտք՝ 10.06.2019)

19 ապրիլի – ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի հյուրն էր «ԻՍՕ» միջազգային կազմակերպության նախագահ Բորիս Ալյոշինը: Նա հանդես եկավ միջազգային տնտեսական չափանիշների մասին դասախոսությամբ:

(Տե՛ս Բորիս Ալյոշինի այցելությունը ԵՊՀ,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/bN5onfkHY0O2fvgoJaGNVm9xoM>, մուտք՝ 13.06.2019)

25 ապրիլի – ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի Ռոբերտ Շումանի անվան սրահում հյուրընկալվել էր անգլիացի աշխարհահռչակ գրող Ջորջ Գորդոն Բայրոնի ուղիղ հետնորդը՝ Լորդ Ռոբին Բայրոնը:

(Տե՛ս Լորդ Ռոբին Բայրոնը հանդիպեց համալսարանականների հետ,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/hMf4jLb354IdUAaueUkalmVG>, մուտք՝ 13.06.2019)

26 ապրիլի – ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի ու «Ֆինանսաբանկային քոլեջ» հիմնադրամի համատեղ ջանքերով Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնում տեղի ունեցավ «ՀՀ ֆինանսաբանկային համակարգում աշխատել ցանկացող անձանց իրազեկվածության բարձրացում» թեմայով քննարկում:

(Տե՛ս Ֆինանսաբանկային համակարգում կարող է աշխատել ցանկացած անձ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/ph36uLRN3f7b30m9tSVDNhPyUM>, մուտք՝ 11.06.2019)

27-28 ապրիլի – ԱՄՆ Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր Ժան Պիեռ Բիերին ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի ուսանողների համար հաղես եկավ «Աստվածաբանական հնէաբանություն» թեմայով դասախոսությամբ:

(Տե՛ս Դասախոսություն աստվածաբանների համար,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/WJE1ofGZnZZH62MzJbJery0z>, մուտք՝ 10.06.2019)

2 մայիսի – ԵՊՀ գիտխորհրդի դահլիճում մեծ շուքով նշվեց ԵՊՀ հրատարակչության 90-ամյա հոբելյանը: Հանդիպմանը, բացի Մայր բուհի ղեկավարից, պրոռեկտորներից և պրոֆեսորա-դասախոսական կազմի ներկայացուցիչներից, մասնակցում էին նաև ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, «Գալուստ Կյուլպենկյան» հիմնադրամի հայկական բաժանմունքի նախկին տնօրեն Զավեն Եկավյանը, «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիքյանը և այլ մտավորականներ ու պաշտոնատար անձինք:

(Տե՛ս ԵՊՀ հրատարակչությունը 90 տարեկան է, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.ysu.am/news/hy/QpvmIS3gsIbVsiovePbVS0gHXa>, մուտք՝ 10.06.2019)

18 մայիսի – ԵՊՀ Պալեանների դահլիճում տեղի ունեցավ «Եվրասիականություն. արժեհամակարգ, թե՞ զարգացման ճանապարհ (Ղազախստանի օրինակով)» թեմայով գիտաժողով: Հանդիպման նախաձեռնողներն էին ԵՊՀ միջազգային համագործակցության վարչությունը, ՀՀ-ում Ղազախստանի Հանրապետության դեսպանությունը, ինչպես նաև «Եվրոպական ինտեգրացիա» հասարակական կազմակերպությունը: Գիտաժողովին Եվրասիական տնտեսական գոտու, միության պատմական տվյալների ու հիմնական գաղափարների մասին զեկուցումներով հանդես եկան դեսպանի խորհրդական Ալմատ Տեոկինը, դեսպանի 2-րդ խորհրդական Ժենիս Ումբետովը, Ալեքսանդր Մարգարովը և Արթուր Աթանեսյանը: Ելույթներից հետո մասնակիցների ու զեկուցողների միջև ակտիվ քննարկումներ ծավալվեցին:

(Տե՛ս Եվրասիականությունը Ղազախստանի օրինակով, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/rBkjPk2wgSaT697hMYNKtUr9lg>, մուտք՝ 12.06.2019)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է առակա ուսուցման 3863 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Մաթեմատիկայի և մեխանիկայի՝ 137 բակալավր, 63 մա-

գիստրոս, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 162 բակալավր, 38 մագիստրոս, Ֆիզիկայի՝ 98 բակալավր, 41 մագիստրոս, Ռադիոֆիզիկայի՝ 77 բակալավր, 26 մագիստրոս, Զինվորական՝ 170 բակալավր, 34 մագիստրոս, Կենսաբանության՝ 100 բակալավր, 60 մագիստրոս, Աշխարհագրության և երկրաբանության՝ 173 բակալավր, 43 մագիստրոս, Պատմության՝ 141 բակալավր, 98 մագիստրոս, Միջազգային հարաբերությունների՝ 232 բակալավր, 132 մագիստրոս, Տնտեսագիտության՝ 289 բակալավր, 100 մագիստրոս, Փիլիսոփայության և հոգեբանության՝ 87 բակալավր, 81 մագիստրոս, Սոցիոլոգիայի՝ 87 բակալավր, 47 մագիստրոս, Հայ բանասիրության՝ 125 բակալավր, 79 մագիստրոս, Ժողովրդագրության՝ 57 բակալավր, 34 մագիստրոս, Ռուս բանասիրության՝ 93 բակալավր, 28 մագիստրոս, Ռոմանագերմանական բանասիրության՝ 327 բակալավր, 118 մագիստրոս, Արևելագիտության՝ 125 բակալավր, 46 մագիստրոս, Իրավագիտության՝ 142 բակալավր, 67 մագիստրոս, Աստվածաբանության՝ 42 բակալավր, 15 մագիստրոս, ՏՏԿՀ կենտրոն՝ 28 մագիստրոս, ԵՌԼ կենտրոն՝ 21 մագիստրոս:

(ՏԵՆ Երևանի պետական համալսարան. 2011-2012
ուստարվա գործունեություն, Երևան, 2012, էջ 50)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է հեռակա ուսուցման բակալավրիատի 489 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Մաթեմատիկայի և մեխանիկայի՝ 8, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 11, Ֆիզիկայի՝ 13, Կենսաբանության՝ 20, Աշխարհագրության և երկրաբանության՝ 24, Պատմության՝ 57, Միջազգային հարաբերությունների՝ 72, Տնտեսագիտության՝ 51, Սոցիոլոգիայի՝ 14, Հայ բանասիրության՝ 43, Ժողովրդագրության՝ 18, Ռուս բանասիրության՝ 15, Ռոմանագերմանական բանասիրության՝ 80, Իրավագիտության՝ 55, Աստվածաբանության՝ 8:

(ՏԵՆ Երևանի պետական համալսարան. 2015-2016
ուստարվա գործունեություն, Երևան, 2016, էջ 54)

հունիս – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը տալիս է առկա ուսուցման շրջանավարտներ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Բնական գիտությունների՝ 56, Հումանիտար գիտությունների՝ 142, Տնտեսագիտության՝ 66, Կիրառական արվեստի՝ 36:

Մինչհամալսարանական կրթության և հեռակա ուսուցման բաժնի շրջանավարտների թիվը 147 էր:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2011-2012 ուստարվա գործունեություն, Երևան, 2012, էջ 591, 598, 609, 572, 618)

1 հունիսի – ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի «Ռոբերտ Շուման» սրահում ԵՄ հատուկ ներկայացուցիչ, դեսպան Ֆիլիպ Լեֆորտը հանդիպեց կենտրոնի պրոֆեսորա-դասախոսական կազմի ներկայացուցիչների, փորձագետների և ուսանողության հետ: Հարավային Կովկասի և Վրաստանի ճգնաժամի հարցերով փորձագետը ԵՊՀ էր այցելել Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի և Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության հրավերով: Հանդիպումը նվիրված էր ԵՄ արտաքին և անվտանգության քաղաքականությանը, հարավկովկասյան մարտահրավերներին, մասնավորապես՝ մարդու իրավունքներին և ժողովրդավարացմանը, ինչպես նաև հակամարտությունների կարգավորման գործում ԵՄ-ի դերակատարությանը:

(Տե՛ս ԵՄ-ն տարածաշրջանային խնդիրների մասին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/QYsLYnEdEcDg7QCV1EHf1OrKpg>, մուտք՝ 11.06.2019)

7 հունիսի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպանի խորհրդական և Հայաստանում «Ռուստորոտնիչեստվո» միջտարածաշրջանային հասարակական կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության ղեկավար Վիկտոր Կրիվոպոսկովը հանդիպեց ԵՊՀ ուսանողների հետ: Հյուրը դասախոսություն կարդաց հայ-ռուսական արդի հարաբերությունների, մասնավորապես՝ քաղաքական, տնտե-

սակաճ և կրթական ուղղություններին առնչվող թեմաներով:

(Տե՛ս Քննարկվեցին հայ-ռուսական հարաբերությունները,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/47sEfiOpGOMHfXYZIVxkp2JJcL>, մուտք՝ 10.06.2019)

25 հունիսի – ԵՊՀ-ում մեկնարկեց ՀՀ սփյուռքի նախարարության ամառային դպրոցը: Դրա նպատակն էր աջակցել Սփյուռքում հայոց լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը, նպաստել համայնքներում ազգային ինքնության պահպանմանը և այլն:

(Տե՛ս Ամառային դպրոց սփյուռքահայերի համար,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/xWoPZqsg7qd152Xd4CqtFhwtH6>, մուտք՝ 11.06.2019)

27 հունիսի – Ամփոփվեց «Բուհ-աշխատաշուկա. արդի կամուրջների հաստատում և փոխգործակցության ընդլայնում» ծրագիրը, որի ընթացքում ներկայացվեց նաև ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի նորաստեղծ կայքը՝ www.career.ysu.am:

(Տե՛ս Ծրագիրը ամփոփվեց կայքի շնորհանդեսով,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.ysu.am/news/hy/pMlnjXhVrrla1T3bMNA9PCrEa>, մուտք՝ 10.06.2019)

28 հունիսի – ԵՊՀ գիտխորհրդի նիստի ժամանակ ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության մասին զեկույց ներկայացրեց ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանը: Ձեկույցի համաձայն՝ զբաղվածության առումով պատկերն այսպիսին էր. ավարտելու պահին բակալավրիատի շրջանավարտների 7.8%-ն ուներ մասնագիտական, 9.9%-ը՝ ոչ մասնագիտական աշխատանք, իսկ մագիստրատուրայի շրջանավարտների 50%-ն ուներ ոչ մասնագիտական, 34.1%-ը՝ մասնագիտական աշխատանք:

(Տե՛ս Ուստարին ավարտվեց,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/cTeZUAyIBpBA37J49ginZQzkrb>, մուտք՝ 11.06.2019)

3 հուլիսի – ԵՊՀ պատմության ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի շուրջ 106 շրջանավարտների դիպլոմների հանձնման պաշտոնական արարողությունը տեղի ունեցավ Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցու բակում³¹:

(Տե՛ս Ուստարին ավարտվեց,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/cTeZUAyIBpBA37J49ginZQzkrb>, մուտք՝ 11.06.2019)

10 սեպտեմբերի – ԵՊՀ ուսանողների հյուրերն էին «Վիքիպեդիա» ազատ հանրագիտարանը գործարկող «Վիքիմեդիա» հիմնադրամի խորհրդի անդամ, նախկին նախագահ Տինգ Չենը, հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության համակարգող Սուսաննա Մկրտչյանը և հայերեն «Վիքիպեդիայի» ադմինիստրատոր Վիկտոր Գրիգորյանը:

(Տե՛ս Բարի գալուստ «Վիքիպեդիա»,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/t44DwjxZqwmXHPe8kFCvmWuB7Z>, մուտք՝ 11.06.2019)

12 սեպտեմբերի – ԵՊՀ ռեկտորն ընդունեց ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Հեֆթերնին, ով Մայր բուհ էր այցելել հայ-ամերիկյան դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-ամյակին նվիրված ցուցահանդեսին մասնակցելու համար: Ցուցահանդեսին ներկայացված էին 20-21-րդ դարերի ամերիկացի 50 գրողների 110 աշխատանքներ, ինչպես նաև տեղադրված էին հայ-ամերիկյան դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-ամյակին նվիրված 40 պատկերներ:

(Տե՛ս ԱՄՆ դեսպանն այցելեց ԵՊՀ,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/ITmOWuJz6nWil17oZmiYpjM8vt>, մուտք՝ 11.06.2019)

20 սեպտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի դահլիճում տեղի ունեցավ «Ազգային գաղափարախոսությունը տեղեկատվական անվտանգության համատեքստում» խորագրով գիտաժողով, որը նվիր-

ված էր ՀՀ անկախության 21-ամյակին: Գիտաժողովը, որը վարում էր տեղեկատվական քաղաքականության փորձագետ Վահրամ Միրաքյանը, կազմակերպել էին ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը և ««ArmSEC» գիտակրթական կենտրոն» հասարակական կազմակերպությունը:

Գիտաժողովի կազմակերպման ու անցկացման աշխատանքներին իր ակտիվ մասնակցությունն է ունեցել նաև ՀՀ պաշտպանության նախարարությունը:

(Տե՛ս Քննարկվեցին ազգային գաղափարախոսության հիմնախնդիրները, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/znbtpaihOD6B3FI02WW2Am1vky>, մուտք՝ 12.06.2019)

10 հոկտեմբերի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում Մայր բուհի գերմանախոս ուսանողները ևս մեկ անգամ ծանոթացան Գերմանիայում սովորելու և աշխատելու հնարավորություն ընձեռող «Միջազգային խորհրդարանական կրթաթոշակ» ծրագրի մանրամասներին: Հանդիպման կազմակերպիչն էր ԵՊՀ միջազգային համագործակցության վարչությունը: Կրթաթոշակի հայաստանյան հավակնորդների ընտրության համար Գերմանիայից ժամանած պատվիրակությունը գլխավորում էր Բունդեսթագի անդամ Վոլֆգանգ Բյորնգենը³²:

(Տե՛ս Եվս մեկ հնարավորություն ուսանողների համար, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/5udrIWwQFkHrDorSc1RICrSgAq>, մուտք՝ 11.06.2019)

12 հոկտեմբերի – ԵՊՀ մեթոդական խորհրդի անդամների համար փոքրիկ դասախոսություն կարդաց ամերիկյան Հարվարդի համալսարանի Դերեք Բոկի անվան կրթության և ուսումնառության կենտրոնի ղեկավար Էլլեն Սարկիսյանը: Վերջինս համալսարանի ֆակուլտետների մեթոդական խորհրդի նախագահներին ներկայացրեց այն փորձը, որը կիրառվում է ամերիկյան համալսարանում դասախոսների վերապատրաստումը

ճիշտ կազմակերպելու համար:

(Տե՛ս Դասավանդման մեթոդները մշտապես փոփոխական են,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/SV7ycMVV9CjNKYOQfUddOWdDQy>, մուտք՝ 10.06.2019)

13 հոկտեմբերի – ԵՊՀ 6-րդ մասնաշենքի մեծ դահլիճում տեղի ունեցավ Հայկական տնտեսագիտական միության կազմակերպած՝ 2012 թ. տարեկան եռօրյա գիտաժողովի բացման հանդիսավոր արարողությունը: Մասնակցում էին ոչ միայն հայ, այլև վրացի ու չեխ փորձառու տնտեսագետներ: ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը միջոցառման բացման խոսքում կարևորեց նմանօրինակ գիտաժողովի անցկացումը՝ նշելով, որ այսպիսի միջոցառումները կարող են հարթակ դառնալ և նպաստել բազում հարցերի լուծման:

(Տե՛ս Մայր բուհում հյուրնկալվել էին անվանի տնտեսագետներ,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/S56NfaaUqtQnAg67xtDfwTMuDN>, մուտք՝ 10.06.2019)

16 հոկտեմբերի – ԵՊՀ 6-րդ մասնաշենքի (Սև շենք) դահլիճում Պատմության ֆակուլտետի ուսանողները հանդիպեցին գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցի հետ: Ֆակուլտետի դեկան Էդիկ Սինապյանը նախ ողջունեց հյուրին և միջոցառման մասնակիցներին, ապա որոշ մանրամասներ ներկայացրեց հայ ժողովրդի մեծագույն զավակ, պատերազմի բովով անցած հերոսի կենսագրականից:

(Տե՛ս Արցախյան հերոսն այցելեց ԵՊՀ,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/gx13Dd0RBkoXFabawjdOqNOi2V>, մուտք՝ 12.06.2019)

18 հոկտեմբերի – Դոնեցկի ազգային համալսարանի և ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետներն համագործակցության անժամկետ պայմանագիր կնքեցին:

(Տե՛ս ԵՊՀ-ն ու Դոնեցկի ազգային համալսարանը գործընկերներ են,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.ysu.am/news/hy/j39fjT6KlejUTHMtgeJloRUVuB>, մուտք՝ 10.06.2019)

18 հոկտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի դահլիճում Ջրուսաշրջության համաշխարհային կազմակերպության գլխավոր քարտուղար Թալեր Ռիֆային հանդիպեց ուսանողների հետ: Ներկա էին ՀՀ էկոնոմիկայի փոխնախարար Արա Պետրոսյանը, ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանը, ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության պետ Ալեքսանդր Մարգարովը, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ուսանողներ³³:

(Տե՛ս Դասախոսություն տուրիզմի մասին,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/ecmqiW00hQAuj4g71Dr1xbwq76>, մուտք՝ 12.06.2019)

25 հոկտեմբերի – ԵՊՀ 8-րդ մասնաշենքի դահլիճում տեղի ունեցավ Սայաթ-Նովայի 300-ամյակին նվիրված գիտաժողով, որը կազմակերպվել էր ԵՊՀ ռեկտորատի, Հայաստանի գրողների միության և Հայ բանասիրության ֆակուլտետի ղեկավարության ջանքերով:

Գիտաժողովին մասնակցում էին ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը, Հայաստանի գրողների միության նախագահ Լևոն Անանյանը, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Ավիկ Իսահակյանը, ֆակուլտետների ղեկավաններ, դասախոսներ և ուսանողներ³⁴:

(Տե՛ս Սայաթ-Նովա, աշուղ, երգահան, բանաստեղծ, փիլիսոփա...,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/koRyXRT5o7lAT4fo9usF86hZ6V>, մուտք՝ 10.06.2019)

30 հոկտեմբերի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի նախաձեռնությամբ ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Անրի Ռենոն հանդիպեց ուսանողների հետ:

(Տե՛ս Համագործակցությունը շարունակվում է,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/IKStgffNxtlQpbJ9mXSvS1CHe6>, մուտք՝ 10.06.2019)

6 նոյեմբերի – ԵՊՀ ուսանողները լսեցին «ՀՀ բնական և մշակութային ժառանգությունը» թեմայով դասախոսություն: Հանդիպումը կազմակերպել էր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի էկոլոգիական իրավունքի գիտատեսումական կենտրոնը:

Դասախոսությանը ներկա էին Աշխարհագրության և երկրաբանության, Բիմիայի, Կենսաբանության և Իրավագիտության ֆակուլտետների ուսանողներ, ինչպես նաև «Ազգային ջրային համագործակցություն» ՀԿ ներկայացուցիչներ: Դասախոսությունը վարում էր «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրենի տեղակալ, կենս. գիտ. դոկտոր Սամվել Բալոյանը:

(Տե՛ս Հայաստանի բնական ժառանգությունը՝ ֆոտոշարքով, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/oyYwrSbUBBC8HtZmZqdcPDNusK>, մուտք՝ 12.06.2019)

16 նոյեմբերի – Ուսանողական տոնի նախօրեին ԵՊՀ այցելեց ՀՀ պաշտպանության նախարար, գեներալ-գնդապետ Սեյրան Օհանյանը:

Նախքան ուսանողների հետ հանդիպումը նախարարը ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում մասնակցեց համալսարանական զոհված ազատամարտիկներ Արա Ավանեսյանի, Էդուարդ Ավագյանի, Սարգիս Խոջյանի և Տիգրան Պետրոսյանի անվան լսարանների բացմանը:

(Տե՛ս Ուսանողական տոնի մասնակից էր նաև ՊՆ-ն, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.ysu.am/news/hy/Uvmrbd37vDYl6gL8uNqyVsXgh2>, մուտք՝ 10.06.2019)

17 նոյեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի դահլիճում Ուրուգվայի Արևելյան Հանրապետության Ներկայացուցիչների պալատի նախագահ Խորխե Օրիկոն և նրա գլխավորած պատվիրակությունը հանդիպեցին ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետ: Արամ Սիմոնյանը Խորխե Օրիկոյին հանձնեց ԵՊՀ ոսկեգոծ մեդալ, Հայաստանի և ԵՊՀ-ի մասին պատմող բուկ-

լետներ ու արժաններ:

(Տե՛ս Յուրաքանչյուր ժողովուրդ ինքնորոշման իրավունք ունի,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1cEZ8EJCnxRXfc61iHd32OGHwV>, մուտք՝ 12.06.2019)

22 նոյեմբերի – ԵՊՀ Չարենցի անվան դահլիճում տեղի ունեցավ «На свете лишь одна Армения, она у каждого своя» խորագրով միջոցառումը, որը կազմակերպել էր Ռուս բանասիրության ֆակուլտետի ուսանողական խորհուրդը:

(Տե՛ս Հայ-ռուսական գրական կապերն ամրապնդվում են,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/PaBGIs8y2lf94dZMB47VA18nev>, մուտք՝ 12.06.2019)

22 նոյեմբերի – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում անցկացվեց Հայաստանի և Լեհաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-ամյակին նվիրված գիտաժողով, որի կազմակերպիչները Հայաստանում Լեհաստանի դեսպանությունն ու Միջազգային հարաբերությունների ֆակուլտետն էին:

Մասնակիցներին ողջունելու էր եկել նաև ՀՀ-ում Լեհաստանի արտակարգ և լիազոր դեսպան Զդիսլավ Ռաչինսկին:

(Տե՛ս Քաղաքական գործընկերներ՝ արդեն 20 տարի,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/XdlmLi1uO8C5eSz4Z8m0cWQ3ed>, մուտք՝ 14.06.2019)

30 նոյեմբերի – Պաշտոնական այցով ՀՀ ժամանած Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուխամեդովը այցելեց ԵՊՀ, հանդիպում ունեցավ պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հետ: Նրան շնորհվեց Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտորի կոչում:

(Տե՛ս Թուրքմենստանի նախագահը ԵՊՀ էլ այցելեց,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/pl4xicGedwqJUI01I6JPta4epx>, մուտք՝ 11.06.2019)

5 դեկտեմբերի – ԵՊՀ 6-րդ մասնաշենքի դահլիճում տեղի ունեցավ «Հետքուհական մասնագիտացում աուդիտի և ֆինանսների ոլորտում» խորագրով սեմինար-դասընթաց: Միջոցառումը «Այ էյ Բի» ուսումնախորհրդատվական ընկերության հետ համագործակցության շրջանակներում կազմակերպել էր ԵՊՀ կարիերայի և շրջանավարտների կենտրոնը:

(Տե՛ս Միջազգային որակավորումների կարևորությունը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/AWcDGoHxB5mc7g3JxCAW7j9JCR>, մուտք՝ 11.06.2019)

6 դեկտեմբերի – Մոսկվայում «Արգումենտի ի ֆակտի» գործակալության լրատվական կենտրոնում կայացավ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան Գեղամ Պետրոսյանի «Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920 թթ.)» գրքի ռուսերեն հրատարակության շնորհանդեսը: Այն ներառված էր «Կովկասագետների գիտական ընկերության» և «Ռուս-հայկական համագործակցություն» կազմակերպության ջանքերով իրականացվող «Զգո՛ւյշ, պատմական փաստեր են» ծրագրի շրջանակում: Ներկա էին ԱՊՀ ինստիտուտի բաժնի պետ, քաղաքագիտության դոկտոր Սիլվայիլ Ալեքսանդրովը, Սևծովյան-Կասպիական տարածաշրջանի քաղաքական և սոցիալական հետազոտությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող Անդրեյ Արեշևը, ՌԴ ԳԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող Ալեքսանդր Սկակովը, Ռազմավարական հետազոտությունների ռուսաստանյան ինստիտուտի «Ազգային ռազմավարության հարցեր» ամսագրի գլխավոր խմբագիր Աժդար Կուրտովը:

(Տե՛ս Գրքի շնորհանդես, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք <http://ysu.am/news/hy/ho2WqgUsfHuaV86JaY633ZIImt>, մուտք՝ 11.06.2019)

7 դեկտեմբերի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում մեկնարկեց «Erasmus Mundus»-ի միանգամից երկու ծրագիր՝ «WEBB» և «BACKIS»: Միջոցառման կազմակերպիչն էր ԵՊՀ միջազ-

գային համագործակցության վարչությունը: Հանդիպման ընթացքում ելույթ ունեցավ Իտալիայի Բոլոնիայի համալսարանի կողմից համակարգվող «WEBB» (Whole Europe Beyond Borders) ծրագրի ներկայացուցիչ Ֆրանչեսկա Մալտորոն: Այնուհետև Ֆրանսիայի Մոնպելիե-1 համալսարանի ներկայացուցիչ Քոլին Վոլը ներկայացրեց «BACKIS» (Between Black and Caspian Seas) ծրագրի մանրամասները:

(Տե՛ս Եվրոպայում սովորելու նոր հնարավորություններ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/tqf1s6jKKzZW8bfOv3AtA5w5nH>, մուտք՝ 11.06.2019)

10 դեկտեմբերի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում «Erasmus Mundus» միջազգային փոխանակումների կրթական ծրագրի շրջանակներում ուսանողներին ներկայացվեց «Յանուս» նախագիծը:

Միջոցառմանը մասնակցում էին ոչ միայն համալսարանականներ, այլև այլ բուհերի ներկայացուցիչներ: Հանդիպման նախաձեռնողներն էին ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության գրասենյակի բաժինը: Գրասենյակի բաժնի աշխատակից Մարիամ Եղյանը նախ ներկայացրեց «Erasmus Mundus» կրթական ցանցի հիմնական նպատակները, որից հետո ծրագրի համակարգողներ, ռումինական Յասիի Ալեքսանդրու Յոան Կուզա համալսարանի ներկայացուցիչներ Կոստանտին Մարիուս Ապոստոլայեն և Ստանիսլավ Պերկիցը ներկայացրին ծրագրի մանրամասները³⁵:

(Տե՛ս Նոր նախագիծ ուսանողների համար, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/NZv1HXvHQiwtbnavsbLF28NbZ9>, մուտք՝ 11.06.2019)

17 դեկտեմբերի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնը ՀՀ բնապահպանության նախարարության հետ կազմակերպել էր «ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության կողմից ռիսկի վրա հիմնված

ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ քննարկում:

(Տե՛ս Հանուն կազմակերպության բարեխիղճ աշխատանքի, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/m7hAdjm8elSoZXyGKwMFKGfrCB>, մուտք՝ 11.06.2019)

21 դեկտեմբերի – Տեղի ունեցավ ԵՊՀ խորհրդի տարեվերջյան ամփոփիչ նիստը: ԵՊՀ ռեկտորը ներկայացրեց 2011-2012 ուսումնական տարվա ԵՊՀ գործունեության հաշվետվությունը:

(Տե՛ս Ուստարին ամփոփվեց, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/XqvezBT3TBJhkimv7hwYydvM5i>, մուտք՝ 13.06.2019)

25 դեկտեմբերի – ԵՊՀ-ի, Հայաստանի դեղ արտադրողների և ներմուծողների միության (ԴԱՆ) և «Ջի Էքս Պի» գերազանցության կենտրոնի ներկայացուցիչների միջև ստորագրվում է համագործակցության հուշագրի, որի նպատակն է ամրապնդել փոխգործակցությունը: Հուշագրի համաձայն՝ ԵՊՀ ուսանողներին հնարավորություն է տրվում «ԴԱՆ» միության անդամ դեղագործական կազմակերպություններում անցնելու ուսումնական պրակտիկա, ինչպես նաև մասնակցելու «Ջի Էքս Պի» գերազանցության կենտրոնում անցկացվող մասնագիտական վերապատրաստման դասընթացներին, որոնք անցկացվում էին Եվրոպական միության պատշաճ գործունեության չափանիշների համաձայն:

(Տե՛ս Ստորագրվել է նոր հուշագիր, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/prPrn913C7pLuZ6mUok5ooNus5>, մուտք՝ 13.06.2019)

2013

2012-2013 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանում դասավանդում էին 206 պրոֆեսորներ, 557 դոցենտներ, 378 ասիստենտներ, 447 դասախոսներ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2015-2016 ուստարվա գործունեություն, Երևան, 2016, էջ 14)

2012-2013 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանի առկա ուսուցման բակալավրիատում սովորում էր 9353 ուսանող, մագիստրատուրայում՝ 2777 ուսանող, ասպիրանտուրայում՝ 198 ասպիրանտ, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 3967 ուսանող, մագիստրատուրայում՝ 882 ուսանող, ասպիրանտուրայում՝ 313 ասպիրանտ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2015-2016 ուստարվա գործունեություն, Երևան, 2016, էջ 47-48)

2012-2013 ուսումնական տարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում (առկա ուսուցում) սովորող ուսանողների թիվը, ըստ ֆակուլտետների, հետևյալն էր՝ Բնական գիտությունների՝ 113, Հումանիտար գիտությունների՝ 390, Տնտեսագիտության՝ 162, Կիրառական արվեստի՝ 88: Հեռակա ուսուցման բաժնի ուսանողների թիվը 933 էր:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2012-2013 ուստարվա գործունեություն, Երևան, 2013, էջ 650, 659, 672, 679, 683)

հունվար – Երևանի պետական համալսարանը տալիս է հեռակա ուսուցման մագիստրատուրայի 241 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Պատմության՝ 6, Սիջազգային հարաբերություններ՝ 82, Տնտեսագիտության՝ 84, Հայ բանասիրության՝ 22, Իրավագիտության՝ 47:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2015-2016 ուստարվա գործունեություն, Երևան, 2016, էջ 54)

26 հունվարի – ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում Մայր բուհի ռեկ-

տորատի և Մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Երազի իմ երկիր» խորագրով միջոցառումը, որը նվիրված էր ՀՀ զինված ուժերի կազմավորման 21-րդ տարեդարձին: Ներկա էին ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, բարձրաստիճան զինվորականներ, ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, պրոռեկտորներ, ֆակուլտետների ղեկավարներ, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ուսանողներ:

(Տե՛ս «Արիության դաս» Մայր բուհում,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/rRT3kxwu55KrjUQigORa3Zqof>, մուտք՝ 11.06.2019)

12 փետրվարի – ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանը հանդիպեց Ուսանողական խորհրդի անդամների հետ: Հանդիպման նախաձեռնողը հենց պրոռեկտորն էր, որը ցանկանում էր ուղղակի շփումների միջոցով հասկանալ, թե ինչ խնդիրների առջև է կանգնած ԵՊՀ ուսանողը, ինչ խոչընդոտներ կան ուսումնական գործընթացում:

(Տե՛ս Ուսանողների հետ հանդիպումները պարբերական կլիմեն,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/8DfJtJWtF2OFZKyTJmmnjpPg5E>, մուտք՝ 14.06.2019)

13 փետրվարի – ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի Ռոբերտ Շումանի անվան սրահում ՀՀ-ում Գերմանիայի Դաշնության նախկին դեսպան Հանս-Յոհան Շմիդտը խոսեց Եվրոպական միության ու Հայաստանի միջև արդեն իսկ հաստատված կապերի ու դրանց հետագա զարգացման մասին, ինչպես նաև պատասխանեց ուսանողներին հետաքրքրող մի շարք հարցերի:

(Տե՛ս Բաց դասախոսություն ԵՊՀ-ում,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/NktunODOwKTwrI4zmvtrPbCnI9>, մուտք՝ 14.06.2019)

17 ապրիլի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դատական ​​նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Միջազգային քրեական դատարան» քննայով սեմինար-քննարկում:

Դասախոսությամբ հանդես եկավ Սիերա Լեոնեի միջազգային քրեական տրիբունալի նախկին դատախազ, Միջազգային քրեական դատարանի փաստաբան Նիկոլաս Կումջյանը:

(Տե՛ս Ցեղասպանությունից մինչև ագրեսիա.

սեմինար-քննարկում ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝

<http://ysu.am/news/hy/1366199717>, մուտք՝ 14.06.2019)

19 ապրիլ – ԵՊՀ Չարենցի անվան դահլիճում տեղի ունեցավ համադիպում-գրույց Արցախյան ազատամարտի հերոսների հետ: Միջոցառումը, որը կազմակերպվել էր ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետը, սկսվեց ՀՀ օրհներգով, այնուհետև մասնակիցները մեկ թույլ լույսով հարգեցին Եղեռնի և Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակը: Ներկա էին ազատամարտիկներ Աղասի Կարապետյանը, Շահեն Աճեմյանը, Սոս Գեկչյանը, Էդիկ Մարկոսյանը, Վաչագան Գալստյանը, Անուշ Մացակյանը, զոհված ազատամարտիկի մայր Գոհար Արմենակյանը, Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի դեկան Սամվել Աբրահամյանը, միջոցառման կազմակերպիչ, անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բան. գիտ. թեկնածու Նաիրա Գասպարյանը և ուսանողներ:

(Տե՛ս Դանաչենք և հիշենք մեր հերոսներին,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք

<http://www.ysu.am/news/hy/1366375163>, մուտք՝ 14.06.2019)

25 ապրիլ – ԱՄՆ-ի պետքարտուղարության և Ամերիկյան խորհուրդների հովանու ներքո անցկացվող «Կառավարման ոճ. անձնական և պրոֆեսիոնալ հարաբերություններ» ծրագրի շրջանակում մեկշաբաթյա այցով Հայաստան ժամանած ԱՄՆ-ի Փենսիլվանիա նահանգի Սենատի անդամ Մայք Բրուքսերն հյուրընկալվեց Երևանի պետական համալսարանում:

ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետի տեղակալ,

ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ Արսեն Նիկողոսյանի կողմից ղեկավարվող ծրագիրը միտված էր օրենսդրական մեխանիզմների, կառավարման սկզբունքների, հնարավոր ներդրումների վերաբերյալ քննարկումների միջոցով Հայաստանի և Փենսիլվանիա նահանգի պետական, հասարակական ու կրթական համապատասխան կառույցների միջև համագործակցության եզրեր գտնելուն ու ամերիկյան առաջատար փորձը Հայաստանում տեղայնացնելուն:

ԵՊՀ ռեկտորի աշխատասենյակում կայացած հանդիպման ժամանակ պրոֆեսոր Արամ Սիմոնյանն այս տեսանկյունից առավել քան օգտակար և կարևոր համարեց Փենսիլվանիա նահանգի քաղաքական, տնտեսական ու ակադեմիական շրջանակներում մեծ հեղինակություն վայելող պաշտոնյայի այցն ու համագործակցության հեռանկարների վերաբերյալ հետաքրքրվածությունը:

Մայք Բրուքսերը, որը Սենատի ֆինանսական հանձնաժողովի նախագահն էր, իր հերթին կարևորեց ԱՄՆ-ի պես առաջատար երկրների կողմից զարգացման ուղի բռնած երկրներին լոգիստիկ, տեղեկատվական, խորհրդատվական, ֆինանսատեխնիկական և այլ կարգի աջակցության ցուցաբերումը համաշխարհային մակարդակում կայունության ու բարեկեցության հաստատման տեսանկյունից:

Ռեկտոր Արամ Սիմոնյանը, պրոռեկտորներ Գեղամ Գևորգյանն ու Ալեքսանդր Գրիգորյանը հյուրին ներկայացրին Երևանի պետական համալսարանի կառուցվածքը, կրթական ծրագրերը, բուհի վարկանիշը, ծրագրային ու ինստիտուցիոնալ ինքնագնահատման գործընթացը, այս ամենին առնչվող խնդիրների համալիրը:

Սենատորի հանդիպումը զուգադիպեց ԵՊՀ գիտական խորհրդի հերթական նիստին, ուստի օրակարգային հարցերի քննարկմանն անցնելուց առաջ համալսարանականները հետաքրքրությամբ ունկնդրեցին Փենսիլվանիա նահանգի կառավարման համակարգի, բյուջետավորման, կրթության կազմա-

կերպման և այլ թեմաների մասին պարոն Բրուքերերի ելույթը:

(Տե՛ս Փենսիլվանիայի սենատոր Մայք Բրուքերերը ԵՊՀ-ում,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝

<http://ysu.am/news/hy/1367327826>, մուտք՝ 05.07.2019)

25 ապրիլի – ԵՊՀ գիտխորհրդի նիստում քննարկվեց և հաստատվեց ԵՊՀ ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույցը:

(Տե՛ս ԵՊՀ հավատարմագրման գործընթացը շարունակվում է,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1366894276>, մուտք՝

05.07.2019)

7 մայիսի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ գեներալային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի բացման արարողությունը, որին, բացի համալսարանականներից և ծրագրի նախաձեռնողներից, ներկա էին մաս կանանց առաջնորդության խնդիրներով զբաղվող մի շարք հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Միջոցառման կազմակերպիչն էր Միջազգային համագործակցության վարչությունը³⁶:

(Տե՛ս Գեներալային խնդիրները առաջնային են,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝

<http://ysu.am/news/hy/1367927211>, մուտք՝ 13.06.2019)

8 մայիսի ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնում Ֆրանսիայի ազգային գիտահետազոտական կենտրոնի հետազոտող (CNRS), Վաշինգտոնում Կարնեգիի «Սերժավոր Արևելք» ծրագրի փորձագետ Բայրամ Բակլին «Թուրքիայի փափուկ ուժն ու մշակութային դիվանագիտությունը Կովկասում և Կենտրոնական Ասիայում» թեմայով դասախոսություն կարդաց համալսարանականների համար:

Հանդիպման գաղափարը ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանության մշակութային խորհրդինն էր, իսկ կազմակերպչական աշխատանքներն իրականացրել էր ԵՊՀ միջազգային համագործակցության վարչությունը:

(Տե՛ս Զննարկվեցին Թուրքական քաղաքականության մեխանիզմները, տես ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1368011309>, մուտք՝ 13.06.2019)

15 մայիսի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում Միջազգային համագործակցության վարչության նախաձեռնությամբ անցկացվեց «Արևելյան գործընկերություն» թեմայով դասախոսություն, որը վարում էր գերմանացի պրոֆեսոր Ռայներ Լինդները:

(Տե՛ս Զննարկվեցին ԵՄ-ի ներդրումային քաղաքականության հարցերը, տես ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1368621070>, մուտք՝ 14.06.2019)

24 մայիսի – ԵՊՀ-ում կազմակերպվել էր աշխատանքային հանդիպում, որտեղ եվրոպացի մասնագետները ներկայացնում էին իրենց հաջողված փորձը:

Այն անցկացվում էր Միջազգային համագործակցության վարչության ու Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ Եվրամիության «TEMPUS» ծրագրի շրջանակներում: Մասնակցում էին հայաստանյան մի շարք ձեռնարկությունների ներկայացուցիչներ և «Cap4Com» ծրագրում ներգրավված ԵՊՀ աշխատակիցները, ովքեր ներկայացրին այն հեռանկարները, որոնք կարող են լինել բուհի և ձեռնարկությունների համագործակցության արդյունքում:

(Տե՛ս Բուհ-աշխատաշուկա. եվրոպական ու տեղական փորձի խաչմերուկում, տես ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1369381068>, մուտք՝ 13.06.2019)

30 մայիսի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և ՀՀ Վճռաբեկ դատարանի միջև կնքվեց համագործակցության հուշագիր: Կնքված հուշագրի շրջանակներում ֆակուլտետը հնարավորություն ստացավ ուսումնական գործընթացի տեսական հիմքը համադրելու և լրացնելու նաև գործնական գիտելիքներով ու հմտություններով, ապահովելու գիտահետազոտական աշխատանքների պրակտիկ ուղղվածությունը: Իր հերթին ՀՀ Վճռա-

բեկ դատարանին հնարավորություն ընճեռվեց ստանալու մասնագիտական ոլորտում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի խորհրդատվական օժանդակությունը, դատական պրակտիկայում ծագած իրավական խնդիրների վերաբերյալ տեսական հիմնավորումները, վերլուծություններն ու գիտական հետազոտությունները:

(Տե՛ս Ստեղծվում է պրակտիկայի լայն շրջանակ,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝

<http://ysu.am/news/hy/1370241251>, մուտք՝ 13.06.2019)

31 մայիսի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում համալսարանականները հանդիպեցին Քուվեյթի պատվիրակությանը՝ Ազգային ժողովի նախագահ Ալի Ֆահդ Ալ-Ռաշիդի գլխավորությամբ:

(Տե՛ս Հայաստանի և Քուվեյթի համագործակցությունը

քնակոխում է նոր փուլ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝

<http://ysu.am/news/hy/1369998857>, մուտք՝ 13.06.2019)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է առկա ուսուցման 4168 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Մաթեմատիկայի և մեխանիկայի՝ 155 բակալավր, 51 մագիստրոս, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 142 բակալավր, 29 մագիստրոս, Ֆիզիկայի՝ 89 բակալավր, 47 մագիստրոս, Ռադիոֆիզիկայի՝ 77 բակալավր, 35 մագիստրոս, Դեղագիտության և քիմիայի՝ 105 բակալավր, 30 մագիստրոս, Կենսաբանության՝ 92 բակալավր, 62 մագիստրոս, Աշխարհագրության և երկրաբանության՝ 182 բակալավր, 46 մագիստրոս, Պատմության՝ 166 բակալավր, 120 մագիստրոս, Սիջազգային հարաբերությունների՝ 288 բակալավր, 184 մագիստրոս, Տնտեսագիտության՝ 259 բակալավր, 99 մագիստրոս, Փիլիսոփայության և հոգեբանության՝ 121 բակալավր, 75 մագիստրոս, Սոցիոլոգիայի՝ 84 բակալավր, 54 մագիստրոս, Հայ բանասիրության՝ 153 բակալավր, 101 մագիստրոս, Ժուռնալիստիկայի՝ 62 բակալավր, 50 մագիստրոս, Ռուս բանասիրության՝ 90 բակալավր, 32 մագիստրոս, Ռումնագերմանական բանասիրության՝ 366 բակա-

լավը, 184 մագիստրոս, Արևելագիտության՝ 140 բակալավր, 60 մագիստրոս, Իրավագիտության՝ 152 բակալավր, 71 մագիստրոս, Աստվածաբանության՝ 44 բակալավր, 7 մագիստրոս, ՏՏԿՀ կենտրոն՝ 21 մագիստրոս, ԵՌԻ կենտրոն՝ 43 մագիստրոս:

(ՏԵՍ Երևանի պետական համալսարան. 2015-2016 ուստարվա գործունեություն, Երևան, 2016, էջ 53)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է հեռակա ուսուցման բակալավրիատի 662 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Մաթեմատիկայի և մեխանիկայի՝ 18, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 16, Ռադիոֆիզիկայի՝ 11, Քիմիայի 17, Կենսաբանության՝ 15, Աշխարհագրության և երկրաբանության՝ 43, Պատմության՝ 50, Միջազգային հարաբերությունների՝ 87, Տնտեսագիտության՝ 61, Փիլիսոփայության և հոգեբանության՝ 25, Սոցիոլոգիայի՝ 18, Հայ բանասիրության՝ 67, Ժուռնալիստիկայի՝ 26, Ռուս բանասիրության՝ 25, Ռոմանագերմանական բանասիրության՝ 106, Իրավագիտության՝ 72, Աստվածաբանության՝ 5:

(ՏԵՍ Երևանի պետական համալսարան. 2015-2016 ուստարվա գործունեություն, Երևան, 2016, էջ 54)

հունիս – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը տալիս է առկա ուսուցման շրջանավարտներ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Բնական գիտությունների՝ 38, Հումանիտար գիտությունների՝ 131, Տնտեսագիտության՝ 66, Կիրառական արվեստի՝ 30:

Հեռակա ուսուցման շրջանավարտների թիվը 153 էր:

(ՏԵՍ Երևանի պետական համալսարան. 2012-2013 ուստարվա գործունեություն, Երևան, 2013, էջ 652, 660, 673, 680, 686)

25 հունիսի – ԵՊՀ հրատարակչություն այցելեց իսպանացի հայտնի գրող, մեծ հայասեր Գոնսալո Գուարչը:

(ՏԵՍ Գոնսալո Գուարչը Մայի բուհի հյուրն էր, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝

<http://ysu.am/news/hy/1372240448>, մուտք՝ 13.06.2019)

28 հունիսի – ԵՊՀ Չարենցի անվան դաշինքում տեղի ունեցավ

«Վարդանանք» ակումբի «Ամառային դպրոց-2013»-ի բացման արարողությունը: Դպրոցը գործում է ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի «Միացյալ Հայաստան» կրթամշակութային արշավ-ծրագրի շրջանակներում: Միջոցառմանը բացման խոսքով հանդես եկավ ակումբի նախագահ Սաթենիկ Աբրահամյանը:

(Տե՛ս Մեկնարկեց 5-րդ ամառային դպրոցը,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝

<http://ysu.am/news/hy/1372415089>, մուտք՝ 13.06.2019)

2 հուլիսի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում Մայր բուհի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները հանդիպեցին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Դին Շփիլմանի հետ: Հանդիպմանը ներկա էին նաև ՀՀ ՍԴ նախագահ Գագիկ Հարությունյանը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր Ալվինա Գյուլումյանը: Հյուրին ողջունեց ԵՊՀ ռեկտորը, որը խոսեց մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի խնդիրների մասին, ինչպես նաև կենսագրական որոշ մանրամասներ ներկայացրեց հյուրի հարուստ կյանքից:

(Տե՛ս Դին Շփիլմանն արժանացավ ԵՊՀ պատվավոր
դոկտորի կոչմանը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1372764289>, մուտք՝ 14.06.2019)

24-31 օգոստոսի – ԵՊՀ Ծաղկաձորի ուսումնասրտադրական բազայում կայացավ «Մաթեմատիկական Հայաստանում. ձեռքբերումներն ու հեռանկարները» երկրորդ միջազգային գիտաժողովը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 70-ամյակին: Այն կազմակերպել էին Երևանի պետական համալսարանը, ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտը, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը, Հայաստանի Ամերիկյան համալսարանը, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանը: Ձեկուցումով հանդես եկան այնպիսի հանրահայտ մա-

թեմատիկոսներ, ինչպիսիք են Եվրոպական մաթեմատիկական միության նախագահ, Շվեդիայի Միտտագ Լեֆլերի անվան ինստիտուտի տնօրեն Արի Լապտեր, ՌԴ ԳԱԱ ակադեմիկոսներ Սերգեյ Ադյանը, Յակով Սիմայը, Իդար Իբրահիմովը, Յուրի Մատիասևիչը, թոթակից անդամներ Սերգեյ Կոնյագինն ու Ալեքսանդր Ռազդորովը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Ալեքսանդր Թալալյանն ու Նորայր Առաքելյանը, արևմտյան առաջատար համալսարանների պրոֆեսորներ Ալեքսանդր Օլսևսկին (Իսրայել), Պշեմիսլավ Վոյտաշչիկը (Լեհաստան), Դանիել Մունդիչին (Իտալիա), Խոսե Ռոդրիգեսը (Պորտուգալիա), Լեոն Թախտաջանը (ԱՄՆ), Հական Հեդենմալմը (Շվեդիա) և ուրիշներ: Մասնակիցների շարքում էին նաև արտասահմանյան համալսարաններում աշխատող 16 հայ մաթեմատիկոսներ, որոնցից մի քանիսը ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի շրջանավարտներ էին:

(Տե՛ս Միջազգային գիտաժողովը համախմբել էր մաթեմատիկոսներին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1378208903>, մուտք՝ 13.06.2019)

27 օգոստոսի – ԵՊՀ-ում բացվեց ՀՀ-ում առաջին և միակ Իսլամագիտության կենտրոնը³⁷:

ԵՊՀ-ի ու Թեհրանի հումանիտար գիտությունների և մշակութային ուսումնասիրությունների ինստիտուտի համատեղ ստեղծած կենտրոնը գործելու է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում:

Նախքան կենտրոնի բացումը իրանական ինստիտուտի ներկայացուցիչները հանդիպեցին ԵՊՀ ռեկտորի հետ՝ քննարկելու համար հնարավոր համագործակցությունը:

(Տե՛ս Իսլամագիտության ուսումնասիրման նոր աստիճան ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1377600939>, մուտք՝ 13.06.2019)

11 սեպտեմբերի – ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում մեկնարկեց «IONS

Armenia» միջազգային ուսանողական գիտաժողովը:

(Տե՛ս Երիտասարդ գիտնականները համախմբվել էին ԵՊՀ-ում,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1378893035>,
մուտք՝ 13.06.2019)

18 սեպտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը հանդիպեց պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների և ուսանողության հետ: Նախարարը խոսեց բանակ-բուհ, բանակ-հասարակություն թեմաների վերաբերյալ, ներկայացրեց ՀՀ ՁՈՒ ընդհանուր վիճակը, առկա խնդիրներն ու դրանց ուղղությամբ իրականացվող ծրագրերը: Նախարարի ելույթ-դասախոսությունը լսելու և նրան հարցեր ուղղելու հնարավորություն ունեին ոչ միայն համալսարանականները, այլև ՁԼՄ-ների ներկայացուցիչները:

(Տե՛ս Բուհ-բանակ համագործակցությունը
շարունակական է լինելու, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝
<http://ysu.am/news/hy/1379500671>, մուտք՝ 14.06.2019)

23 սեպտեմբերի – Դիլիջանում անցկացվող միջազգային գիտաժողովով մեկնարկեց ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հիմնադրման 80-ամյակին նվիրված միջոցառումների շարքը:

(Տե՛ս Միջազգային գիտաժողով իրավաբանների
մասնակցությամբ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝
<http://ysu.am/news/hy/1379938178>, մուտք՝ 13.06.2019)

1 հոկտեմբերի – ԵՊՀ-ում մեկնարկեց նիցշեագիտությանը նվիրված միջազգային գիտաժողով, որն այսպիսի ընդգրկունությամբ առաջին անգամ էր անցկացվում Հայաստանում: «Նիցշեն մշակութային համատեքստում» խորագրով 3-րդ միջազգային գիտաժողովի 50-ից ավելի մասնակիցներից 16-ը ժամանել էին արտասահմանյան 7 երկրներից՝ Գերմանիայից, Հնդկաստանից, Բուլղարիայից, Լիտվայից, Լեհաստանից, Ռուսաստանից և Վրաստանից: Իսկ հայ մասնակիցները ոչ միայն ԵՊՀ ար-

տասահմանյան գրականության ամբիոնի, այլև մյուս ֆակուլտետների դասախոսներն էին, ինչպես նաև նիցշեագիտությամբ զբաղվող այլ մասնագետներ:

Գիտաժողովի կազմակերպիչը Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի արտասահմանյան գրականության ամբիոնն էր:

(Տե՛ս Նիցշե. մարդ, ում դեռ բացահայտում են,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝

<http://ysu.am/news/hy/1380622763>, մուտք՝ 13.06.2019)

9 հոկտեմբերի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դատական նիստերի դահլիճում ուսանողները հանդիպեցին Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի նախագահի տեղակալ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Մավրիցի հետ: Հանդիպմանը ներկա էին նաև ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան Գագիկ Ղազինյանը, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ և մագիստրոսներ:

(Տե՛ս Զննարկվեցին սահմանադրական իրավունքի

ոլորտի խնդիրները, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝

<http://www.ysu.am/news/hy/1381318608>, մուտք՝ 14.06.2019)

18 հոկտեմբերի – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում տեղի ունեցավ «ՀՀ արդի արտաքին քաղաքականություն. հիմնախնդիրներ և մարտահրավերներ» խորագրով գիտաժողով, որը նվիրված էր ՀՀ անկախության 22-րդ տարեդարձին: Կազմակերպիչը Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնն էր:

(Տե՛ս Մեկ Հայաստան, ընտրության երկու հնարավորություն,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1382087027>,

մուտք՝ 13.06.2019)

29 հոկտեմբերի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում անցկացվեց ««Արևելյան գործընկերություն» ծրագիրը և Հայաստանը. նպատակներ, պրակտիկա, մարտահրավերներ» թեմայով կտր սեղան-քննարկում: Հանդիպումը կազմակերպվել էր «Արևելյան գործընկերություն. նպատակներ, փորձ, մարտահրավերներ: Ծրագրում ներառված պետություններում ներդրման գործընթացի ուսումնասիրություն» նախագծի շրջանակներում, իսկ նախաձեռնողները ԵՊՀ-ն՝ ի դեմս Սիջազգային համագործակցության վարչության, և Կրակովի Յագելլոնյան համալսարանն են: Ֆինանսավորումը տրամադրել էր Լեհաստանի ԱԳՆ հանրային և մշակութային դիվանագիտության դեսպարտամենտը:

(Տե՛ս Արևելյան գործընկերություն. կողմ և դեմ,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝

<http://ysu.am/news/hy/1383039043>, մուտք՝ 13.06.2019)

31 հոկտեմբերի – Եվրոպական խորհրդարանի պատգամավոր, դոկտոր Չարլզ Թեննոքին հանձնվեցին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման հավաստագիրը և հուշամեդալը: Հյուրը հանդես եկավ Հայաստանի և ԵՄ հեռանկարների մասին դասախոսությամբ: Եվրոպական ատյաններում հայանպաստ դիրքերից հանդես եկող պատգամավորի դասախոսությանը ներկա էին ԵՊՀ գիտ-խորհրդի անդամներ, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ և թեմայով հետաքրքրված ուսանողներ³⁸:

(Տե՛ս ԵՄ պատգամավորը ԵՊՀ պատվավոր դոկտոր,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1383212731>

տե՛ս նաև <http://ysu.am/news/hy/1383216437>, մուտք՝ 13.06.2019)

1 նոյեմբերի – Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի նախաձեռնությամբ մեկնարկեց «Շիրվան, Առան և Ադրբեջան. պատմամշակութային հետադարձ հայացք» խորագրով միջազգային երկօրյա գիտաժողովը, որը նվիրված է իրանցի անվանի պատմաբան, պրոֆեսոր Էմայաթոլա Ռեզայի հիշատակին: Գիտաժողովի աշխատանքներին ակտիվորեն մասնակցում են արևելագետներ (իրանագետներ ու կովկա-

սագետներ) Գերմանիայի, Իրանի, Լեհաստանի, Կանադայի, Հայաստանի, Մեծ Բրիտանիայի, Նիդերլանդների, Ռուսաստանի ու Վրաստանի հեղինակավոր գիտական կենտրոններից ու համալսարաններից:

(Տե՛ս Անվանի արևելագետները մեկտեղվել են Մայր Բուհում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1383293895>, մուտք՝ 13.06.2019)

5 նոյեմբերի – ԵՊՀ ռեկտորն ընդունեց ՀՀ-ում Լիտվայի Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Էրիկաս Պետրիկասին:

(Տե՛ս Հայ-լիտվական համագործակցության նոր փուլ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1383654107>, մուտք՝ 13.06.2019)

7 նոյեմբերի – ԵՊՀ գիտխորհուրդը հյուրընկալեց Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ Վիկտոր Խրիստենկոյին:

Շուրջ 1.5 ժամ տևած դասախոսության ընթացքում պարոն Խրիստենկոն խոսեց Մաքսային միության ստեղծման ու դրան նպաստող քաղաքական ու տնտեսական իրադարձությունների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի, ինչպես նաև Հայաստանի՝ Մաքսային միությանն անդամակցելու հեռանկարների մասին:

(Տե՛ս Վիկտոր Խրիստենկոն հյուրընկալվեց ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1383833736>, մուտք՝ 05.07.2019)

7 նոյեմբերի – Ավստրիայի Սահմանադրական դատարանի պատվիրակությունն Ավստրիայի ՍԴ նախագահ Գերհարդ Հոլցինգերի գլխավորությամբ այցելեց ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ:

(Տե՛ս Ավստրիական փորձը պետք է Հայաստանին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1383819020>, մուտք՝ 13.06.2019)

8 նոյեմբերի – ԵՊՀ Պալեանների անվան դաիլիճում տեղի ունեցավ պրոֆեսոր Վահան Բայրուրյանին մվիրվաճ (80-ամյակի առթիվ) հորեվյանական միջոցառում: Այդ միջոցառումը ԵՊՀ ռեկտորատի նախաճեռնությամբ կազմակերպել էր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ղեկավարությունը՝ ի դեմս դեկան Գեղամ Պետրոսյանի: Համալսարանական կրթության կայացման, զարգացման, մասնագիտական ակնառու ճեռքերումների, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի կայացման և երիտասարդ մասնագետների պատրաստման գործում ունեցաճ նշանակալի ավանդի համար, ինչպես նաև ճննդյան 80-ամյակի կապակցությամբ ԵՊՀ ռեկտորը Վահան Բայրուրյանին պարգևատրեց ԵՊՀ հուշամեդալով:

(Տե՛ս Վաստակաշատ գիտնականը 80 տարեկան է,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1383911965>,
մուտք՝ 14.06.2019)

19 նոյեմբերի – ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի հեռաուսուցման լաբորատորիայի լսարաններից մեկն անվանակոչվեց Ֆիզիկայի ֆակուլտետի նախկին ուսանող, զոհվաճ ազատամարտիկ Արմեն Կոթոլյանի անունով:

(Տե՛ս Նոր լսարան հեռաուսուցման լաբորատորիայում,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1384865528>,
մուտք՝ 13.06.2019)

26 նոյեմբերի – ԵՊՀ Պալեանների անվան դաիլիճում տեղի ունեցավ «Հանրային հաղորդակցություն. արդի մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները. Հայաստան-2013» թեմայով գիտաճողով: Կազմակերպիչներն էին Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետը և Երևանի պետական լեզվաբանական համալսարանի տեղեկատվության և հանրային հաղորդակցման տեխնոլոգիաների կենտրոնը:

(Տե՛ս Ճգնաճամային մասնագիտություն՝ PR,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1385464201>,
մուտք՝ 14.06.2019)

3 դեկտեմբերի – ԵՊՀ պատմության ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախաձեռնությամբ մեկնարկեց եռօրյա միջբուհական ուսանողական գիտաժողով, որը նվիրված էր Պատմաբանի օրվան: Մայր բուհի, Գևորգյան հոգևոր ճեմարանի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ու Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտի ուսանողներն այս գիտաժողովում հնարավորություն ստացան ներկայացնելու իրենց հետազոտությունները:

(Տե՛ս Գիտաժողովը նվիրված էր պատմաբանի օրվան, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1386151328>, մուտք՝ 14.06.2019)

11 դեկտեմբերի – ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ռոմանական բանասիրության ամբիոնի նախաձեռնությամբ հեռավար ուսուցման սկզբունքով անցկացվեց առցանց սեմինար: Իտալիայից Երևանի հետ ուղիղ կապ էր հաստատել Պերուջայի՝ արտասահմանցիների համար նախատեսված համալսարանի անվանի դասախոս Նատալե Ֆիլոբետտոն, որն էլ վարեց առցանց սեմինար-դասընթացը:

(Տե՛ս Հեռավար սեմինարը վարեց իտալացի դասախոսը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1386852190>, մուտք՝ 13.06.2019)

16 դեկտեմբերի – Միջազգային հարաբերությունների և Սոցիոլոգիայի ֆակուլտետների մագիստրոսների համար դասախոսություն կարդացին ՀՀ-ում Հնդկաստանի արտակարգ և լիազոր դեսպան Սուրեշ Բաբուն ու Մայր բուհում Հնդկաստանից հրավիրված դասախոս Սանջայ Սրիվաստավան: Միջոցառումը կազմակերպվել էր ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության ջանքերով:

(Տե՛ս Դասը վարեց ՀՀ-ում Հնդկաստանի արտակարգ և լիազոր դեսպանը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1387201745>, մուտք՝ 14.06.2019)

2014

2013-2014 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանում դասավանդում էին 207 պրոֆեսորներ, 581 դոցենտներ, 375 ասիստենտներ, 453 դասախոսներ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2017-2018 ուստարվա գործունեություն, Երևան, 2018, էջ 18)

2013-2014 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանի առկա ուսուցման բակալավրիատում սովորում էր 9452 ուսանող, մագիստրատուրայում՝ 2698 ուսանող, ասպիրանտուրայում՝ 209 ասպիրանտ, իսկ հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 3884 ուսանող, մագիստրատուրայում՝ 1337 ուսանող, ասպիրանտուրայում՝ 313 ասպիրանտ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2017-2018 ուստարվա գործունեություն, Երևան, 2018, էջ 52)

2013-2014 ուսումնական տարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում (առկա ուսուցում) սովորող ուսանողների թիվը, ըստ ֆակուլտետների, հետևյալն էր՝ Բնական գիտությունների՝ 65, Հումանիտար գիտությունների՝ 313, Տնտեսագիտության՝ 156, Կիրառական արվեստի՝ 76: Հեռակա ուսուցման բաժնի ուսանողների թիվը 972 էր:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2013-2014 ուստարվա գործունեություն, Երևան, 2014, էջ 679, 687, 700, 706)

հունվար – Երևանի պետական համալսարանը տալիս է հեռակա ուսուցման մագիստրատուրայի 357 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Պատմության՝ 15, Միջազգային հարաբերությունների՝ 77, Տնտեսագիտության՝ 130, Փիլիսոփայության և հոգեբանության՝ 30, Սոցիոլոգիայի՝ 5, Հայ բանասիրության՝ 39,

Ժուռնալիստիկայի՝ 13, Իրավագիտության՝ 48:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2015-2016
ուստարվա գործունեություն, Երևան, 2016, էջ 54)

14 փետրվարի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճի նախասրահում Մայր բուհի ղեկավարությունը համագործակցության պայմանագրեր կնքեց մի շարք դպրոցների տնօրենների հետ: Համդիպմանը մասնակցում էին ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանը, Մինչհամալսարանական կրթության վարչության պետ Վաչագան Գալստյանը և Դիմորդների հետ տարվող աշխատանքների բաժնի վարիչ Էմին Սանթրոսյանը:

(Տե՛ս Համագործակցությունը շարունակական է լինելու, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Th-cooperation-will-be-continuous>, մուտք՝ 14.06.2019)

4 մարտի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում Միջազգային հարբերությունների ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների և ուսանողների հետ հանդիպեց ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մոհամմադ Ռեյիսիին:

(Տե՛ս Արտասամանյան դիվանագետը ապագա դիվանագետների հյուրն էր, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Ambassador-of-the-Islamic-Republic-of-Iran-to-Armenia-Mohammad-Raeisi-was-hosted-at-YSU>, մուտք՝ 14.06.2019)

11-14 մարտի – ԵՊՀ պատվիրակությունը պաշտոնական այցով գտնվում էր Բելգորդի պետական ազգային հետազոտական համալսարանում: Պատվիրակության կազմում էին ռեկտոր Արամ Սիմոնյանը, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ղեկան Վահրամ Դումանյանը, Քիմիայի ֆակուլտետի ղեկավարական քիմիայի ամբիոնի վարիչ Աշոտ Սադյանը և Ֆիզիկայի ֆակուլտետի Գ. Սահակյանի անվան տեսական ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր Գագիկ Կրյուչկյանը:

Այցի շրջանակներում տեղի բուհի և ԵՊՀ-ի միջև ստորագրվեց համաձայնագիր:

(Տե՛ս Բելգորոդի համալսարանը՝ ԵՊՀ-ի գործընկեր, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Belgorod-University-YSU-New-Partner>, մուտք՝ 14.06.2019)

15 մարտի – Երևանում ու ՀՀ 7 մարզերում՝ Շիրակում, Արմավիրում, Տավուշում, Արարատում, Գեղարքունիքում, Սյունիքում և Լոռիում, մեկնարկեց «ԵՊՀ օլիմպիադան»: Հանրակրթական 15 առարկաներ (մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, ինֆորմատիկա, կենսաբանություն, աշխարհագրություն, հայ ժողովրդի պատմություն, մարդու իրավունքներ և ժողովրդավարություն, հայոց լեզու և գրականություն, ռուսաց լեզու, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ստեղծագործական աշխատանք, հայ եկեղեցու պատմություն) ներառած օլիմպիադան անցկացվեց հանրակրթական դպրոցների ոչ միայն 12-րդ դասարանցիների, այլև այն աշակերտների համար, ովքեր դպրոցում գերազանց տիրապետում էին թվարկված առարկաներին: Օլիպիադայի մասնակիցների թիվը գերազանցում էր 2800-ը:

(Տե՛ս «ԵՊՀ օլիմպիադա-2014». գիտելիքների ստուգում քննություններից առաջ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/YSU-Olympiad-2014-1396521054>, մուտք՝ 14.06.2019)

18 մարտի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության նախաձեռնությամբ «Մալվինյան հարցը» խորագրով գեկուցումով հանդես եկավ միջազգային իրավունքի պրոֆեսոր Ֆաբիան Ռ-այմոնդոն:

Հանդիպմանը, բացի ԵՊՀ միջազգային հարաբերությունների, իրավագիտության և սոցիոլոգիայի ֆակուլտետների ուսանողներից, ներկա էին նաև ՀՀ-ում Արգենտինայի արտակարգ և լիազոր դեսպան Դիեգո Էռնեստո Ալվարես Ռիվերան, դեսպանության, ինչպես նաև Մալվինյան խմբի հայաստանյան ներ-

կայացուցիչներ:

(Տե՛ս «Մալվինյան հարցը» ներկայացվեց ԵՊՀ-ում,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ [http://ysu.am/news/hy/Malvinas-
Question-Discussed-at-YSU](http://ysu.am/news/hy/Malvinas-Question-Discussed-at-YSU), մուտք՝ 07.07.2019)

25 մարտի – ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում մեկնարկեց «Հայ-վրացական գիտական ու մշակութային կապերն ու տարածաշրջանային խնդիրները» թեմայով եռօրյա գիտաժողովը: ԵՊՀ էր այցելել վրաց գիտնականներից կազմված ներկայացուցչական պատվիրակությունը, որը գլխավորում էր Թբիլիսիի Ի. Ջավախիշվիլիի անվան պետական համալսարանի ռեկտոր Վլադիմիր Պապավան:

(Տե՛ս Բուհերի համագործակցությունն ընդլայնվում է,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ [http://ysu.am/news/hy/
THE-COOPERATION-IS-EXPANDED](http://ysu.am/news/hy/THE-COOPERATION-IS-EXPANDED), մուտք՝ 17.06.2019)

27 մարտի – ԵՊՀ ռեկտորի աշխատասենյակում ԵՊՀ-ի և Քուվեյթի համալսարանի միջև տեղի ունեցավ փոխանակման և համագործակցության պայմանագրի ստորագրում: Պատվիրակության կազմում էին Քուվեյթի համալսարանի ռեկտոր Աբդալ-Կատիֆ ալ-Բադրը, Ուսումնական հարցերով պրոռեկտոր տիկին Ֆիրյալ Բու Ռաբիան, Բժշկագիտության ֆակուլտետի ղեկան, պրոֆեսոր Ադել Այեդը, աշխատակազմի ղեկավար Մուհամմադ ալ-Մուլեյմանը և ռեկտորի խորհրդական Մուհսեն ալ-Մուալլիմը: Քուվեյթի պատվիրակությունը Հայաստան էր ժամանել միջբուհական համագործակցության, ինչպես նաև կրթության ու գիտության ոլորտներում փոխգործակցության հեռանկարները քննարկելու համար:

Կողմերը վերանայեցին երկու բուհերի միջև գործող համագործակցության պայմանագիրը և պարտավորվեցին աշխատանքային պայմանագրերի միջոցով կյանքի կոչել այն:

(Տե՛ս Միջբուհական համագործակցության նոր հեռանկարներ,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ [http://ysu.am/news/hy/
COOPERATION-WITH-KUWAIT](http://ysu.am/news/hy/COOPERATION-WITH-KUWAIT), մուտք՝ 14.06.2019)

15 ապրիլի – Երևանի պետական համալսարանը և Արցախի պետական համալսարանը (ԱրՊՀ) ստորագրեցին համագործակցության պայմանագիր, համաձայն որի՝ հայկական երկու բուհերը կրթական, գիտահետազոտական և ուսումնամեթոդական ոլորտներում համատեղ ծրագրեր պետք է մշակելին և իրականացնելին, կազմակերպեն դասախոսների և ուսանողների ակադեմիական փոխանակում, ինչպես նաև իրականացնելին տեղեկատվական, մարզական և մշակութային միջոցառումներ:

(Տե՛ս ԵՊՀ-ն ու ԱրՊՀ-ն արդեն պաշտոնապես են համագործակցելու, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1397553570>, մուտք՝ 14.06.2019)

6 մայիսի – Պետական, քաղաքական ու հասարակական գործիչ Ջոն Կիրակոսյանի ծննդյան 85-ամյակի կապակցությամբ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում անցկացվեց հոբելյանական նիստ, և բացվեց նրա անվան լսարան:

Միջոցառման նախաձեռնողը Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ղեկավարությունն էր:

(Տե՛ս «Ջոն Կիրակոսյանի մեծությունը հիմնավորման կարիք չունի», տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/85th-anniversary-of-John-Kirakosyan-was-celebrated>, մուտք՝ 17.06.2019)

7 մայիսի – ԵՊՀ պատմության ֆակուլտետում մեկնարկեց «Եվրոպա և Կովկաս. միջտարածաշրջանային կապերն ու ինքնության հարցերը» խորագրով միջազգային գիտաժողովը:

(Տե՛ս Եվրոպայի ու Կովկասի հատման կետում են հայտնվել պատմաբանները, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/At-the-intersection-point-of-Europe-and-Caucasus>, մուտք՝ 17.06.2019)

16 մայիսի – ԵՊՀ-ում մեկնարկեց առաջին միջազգային քաթագիտական գիտաժողովը, որի նախաձեռնողն էր ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնը:

(Տե՛ս Թաթերի հիմնախնդիրները քննարկվում են ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/The-issues-of-Tat-People-were-discussed-at-YSU>, մուտք՝ 17.06.2019)

20 մայիսի – ԵՊՀ պատմության թանգարանում տեղի ունեցավ «Դասը վարում են ազատամարտիկները» խորագրով միջազգային միջոցառումը:

ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին և Շուշիի ազատագրման 22-րդ տարեդարձին նվիրված հանդիսության նախաձեռնողներն էին ԵՊՀ պատմության թանգարանն ու «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբը:

(Տե՛ս Հաղթանակած սերունդ. վարդանանքիներ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/The-generation-of-victory>, մուտք՝ 17.06.2019)

27 մայիսի – Ուրալի դաշնային համալսարանի միջազգային կրթության ինստիտուտի պատվիրակությունը տնօրեն Եկատերինա Լյուբիմովայի գլխավորությամբ այցելեց ԵՊՀ:

(Տե՛ս Ակտիվանում են ԵՊՀ-ի կապերը Ուրալի դաշնային համալսարանի հետ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1401365822>, մուտք՝ 14.06.2019)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է առկա ուսուցման 3763 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Մաթեմատիկայի և մեխանիկայի՝ 134 բակալավր, 45 մագիստրոս, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 100 բակալավր, 37 մագիստրոս, Ֆիզիկայի՝ 84 բակալավր, 43 մագիստրոս, Ռադիոֆիզիկայի՝ 55 բակալավր, 32 մագիստրոս, Դեղագիտության և քիմիայի՝ 98 բակալավր, 58 մագիստրոս, Կենսաբանության՝ 121 բակալավր, 70 մագիստրոս, Աշխարհագրության և երկրաբանության՝ 148 բակալավր, 62 մագիստրոս, Պատմության՝ 167 բակալավր, 112 մագիստրոս, Միջազգային հարաբերությունների՝ 201 բակալավր, 161 մագիստրոս, Տնտեսագիտության՝ 202 բակալավր, 117 մագիստրոս, Փիլիսոփայության և հոգեբանության՝ 89 բակալավր, 80 մագիստրոս, Սոցիոլոգիայի՝ 82 բակալավր, 45 մագիստրոս, Հայ բանասիրության՝ 163 բակալավր, 60 մագիստրոս, Ժուռնալիստիկայի՝ 40 բակալավր, 50 մագիստրոս, Ռուս բանասիրության՝ 98 բակալավր, 18 մագիստրոս:

գիստրոս, Ռոմանագերմանական բանասիրության՝ 366 բակալավր, 139 մագիստրոս, Արևելագիտության՝ 131 բակալավր, 56 մագիստրոս, Իրավագիտության՝ 101 բակալավր, 52 մագիստրոս, Աստվածաբանության՝ 44 բակալավր, 12 մագիստրոս, ՏՏԿՀ կենտրոն՝ 33 մագիստրոս, ԵՌԿ կենտրոն՝ 57 մագիստրոս:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2015-2016 ուստարվա գործունեություն, Երևան, 2016, էջ 53)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է հեռակա ուսուցման բակալավրիատի 754 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Մաթեմատիկայի և մեխանիկայի՝ 21, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 19, Ֆիզիկայի 7, Ռադիոֆիզիկայի՝ 4, Քիմիայի 30, Կենսաբանության՝ 22, Աշխարհագրության և երկրաբանության՝ 48, Պատմության՝ 67, Միջազգային հարաբերությունների՝ 145, Տնտեսագիտության՝ 79 բակալավր, Փիլիսոփայության և հոգեբանության 21, Սոցիոլոգիայի՝ 7, Հայ բանասիրության՝ 68, Ժողովրդագրության՝ 24, Ռուս բանասիրության՝ 24, Ռոմանագերմանական բանասիրության՝ 90, Իրավագիտության՝ 64, Աստվածաբանության՝ 14:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2015-2016 ուստարվա գործունեություն, Երևան, 2016, էջ 54)

հունիս – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը տալիս է առկա ուսուցման շրջանավարտներ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Բնական գիտությունների՝ 21, Հումանիտար գիտությունների՝ 114, Տնտեսագիտության՝ 51, Կիրառական արվեստի՝ 40:

Հեռակա ուսուցման շրջանավարտների թիվը 177 էր:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2013-2014 ուստարվա գործունեություն, Երևան, 2014, էջ 681, 689, 701, 707, 713)

9 հունիսի – ԵՊՀ հունագիտության կենտրոն այցելեց ՀՀ-ում Հումաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Իոաննիս Տայիսը: Հանդիպմանը ներկա էին ԵՊՀ ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր Արարատ Մալխասյանը, Ռուս բա-

նասիրության ֆակուլտետի դեկան Պավել Բալայանը, Միջազգային համագործակցության վարչության պետ Ալեքսանդր Մարգարովը, ինչպես նաև ԵՊՀ հումանագիտության կենտրոնի տնօրեն Լևոն Հակոբյանը:

Դեռապանը կարևորեց երկու հնագույն ժողովուրդների համագործակցության ընդլայնմանն ու հունարենի տարածմանն ուղղված ծրագրերը՝ նշելով, որ Մայր բուհն արտերկրում իրենց լեզվի տարածմանը նպաստող կարևոր օղակներից մեկն է:

(Տե՛ս Հայ-հունական համագործակցության նոր հեռանկարներ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Greek-ambassador-visited-YSU-Greek-Centre>, մուտք՝ 14.06.2019)

10 հունիսի – ՀՀ Ազգային ժողովի ոսկեգոծ դահլիճում ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը ԵՊՀ հիմնադրման 95-ամյա հոբելյանի կապակցությամբ գիտության, կրթության ոլորտներում ներդրած մեծ ավանդի և գիտամանկավարժական բեղմնավոր գործունեության համար ՀՀ Ազգային ժողովի Պատվո մեդալով պարգևատրեց կրթության և գիտության ոլորտների մի շարք ներկայացուցիչների: ՀՀ ԱԺ Պատվո մեդալներով պարգևատրվեցին ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի դեկան, ֆիզմաթ գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռոլանդ Ավագյանը, ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դեկան, փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ Ալեքսան Բաղդասարյանը, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մինասյանը, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տնտես. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հայկ Սարգսյանը, ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության պետ, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ Հրանտ Ժամհարյանը:

ՀՀ ԱԺ նախագահի շնորհակալագրերին արժանացան ԵՊՀ օպտիմալ կառավարման տեսության և մոտավոր մեթոդների ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Միքայել Պողոսյանը, ԵՊՀ աստվածաբանության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկ-

տոր, դոցենտ Ռաֆիկ Վարդանյանը, ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկան, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Տարիել Ղոչիկյանը, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու Աննա Մարգարյանը, ԵՊՀ օպտիկայի ամբիոնի պրոֆեսոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Համլետ Կարայանը:

(Տե՛ս «Մայր բուհն անընդհատ բարձրացնում է նշանոթը».

Գալուստ Սահակյան, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝

<http://ysu.am/news/hy/YSU-constantly-strives-for-more>,

մուտք՝ 14.06.2019)

12 հունիսի – ԵՊՀ 95-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շրջանակներում գիտական խորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Կրթությունը 21-րդ դարում. խնդիրներ և մարտահրավերներ» խորագրով միջազգային գիտաժողով, որին, բացի հայաստանյան բուհերից, մասնակցում էին նաև Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Մոլդովայի, Բուլղարիայի, Վրաստանի, Գերմանիայի, ԱՄՆ-ի և Շվեյցարիայի ուսումնական հաստատությունների ներկայացուցիչները:

(Տե՛ս Կրթությունը XXI-րդ դարում. խնդիրներ և մարտահրավերներ,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ [http://ysu.am/news/hy/Education-in-the-](http://ysu.am/news/hy/Education-in-the-21-st-century-issues-and-challenges)

21-st-century-issues-and-challenges, մուտք՝ 17.06.2019)

11 սեպտեմբերի – ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհեց գերմանացի հանրահայտ գիտնական Թոմաս Լիբիին³⁹:

(Տե՛ս Հեռանկարային համագործակցություն բջջագենետիկայի ոլորտում,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ [http://ysu.am/news/hy/Prospective-](http://ysu.am/news/hy/Prospective-cooperation-in-the-field-of-cytogenetics)

cooperation-in-the-field-of-cytogenetics, մուտք՝ 14.06.2019)

12 սեպտեմբերի – ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը հյուրընկալեց Հայաստանում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Տյան Չանչունին: Հանդիպմանը մասնակցում էին նաև ԵՊՀ պրոռեկտորներ Գեղամ Գևորգյա-

նը, Ալեքսանդր Գրիգորյանը և Միջազգային համագործակցության վարչության պետ Ալեքսանդր Մարգարովը:

(Տե՛ս Չինարենն ու չինականը ԵՊՀ ուսանողների համար, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Chinese-culture-and-language-for-YSU-students>, մուտք՝ 14.06.2019)

18 սեպտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ աշխատանքային խորհրդակցություն. քննարկվեցին ԵՊՀ ուսանողներին համալսարանական էլեկտրոնային փոստի հասցեներ տրամադրելու, ինչպես նաև շրջանավարտների «HEN-GEAR» պորտալը ԵՊՀ-ում շահագործելու հարցերը:

(Տե՛ս Համալսարանական էլեկտրոնային փոստի հասցեներ բոլոր ուսանողների համար, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/ysumail-am-available-for-students-soon>, մուտք՝ 14.06.2019)

9 հոկտեմբերի – ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Առաջին համաշխարհային պատերազմին նվիրված նիստ:

«Խաղաղության կորստից մինչև Եվրոպական միության հիմնում» խորագիրը կրող միջոցառման կազմակերպիչներն էին Հայաստանում Ֆրանսիայի և Գերմանիայի դեսպանությունները, ինչպես նաև Երևանի պետական համալսարանը:

(Տե՛ս Պատմության դասերը ֆրանս-գերմանական տեսանկյունից, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/From-a-missed-peace-to-the-construction-of-the-European-Union>, մուտք՝ 17.06.2019)

13 հոկտեմբերի – ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանդիպում Անտիոքի և համայն Արևելքի նորընտիր պատրիարք Նորին Սրբություն Մորան Մոր Իգնատիոս Եփրեմ Երկրորդի հետ:

Ատրիի ուղղափառ եկեղեցու հոգևոր պետին ուղեկցում էին Տրիպոլիի և Լեռնային Լիբանանի արքեպիսկոպոս, Ս. Սիմոնի

գլխավոր քարտուղար Մոր Թեոփիլոս Սալիբան, Հոմսի արքեպիսկոպոս Մոր Սիլվանոս Բուտրոս ալ Նեհմենիը, պատրիարքական քարտուղար Մոր Տիմոթեոս Մաթթա ալ Խուրիին, հայր Կարլոս Բարին և հայր Ջոզեֆ Բալին:

(Տե՛ս Ասորի ուղղափառ եկեղեցու հովվապետն այցելեց Մայր բուհ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Patriarch-of-Antioch-and-All-the-East-His-Holiness-Moran-Mor-Ignatius-Aphrem-II-was-received-at-YSU>, մուտք՝ 17.06.2019)

20 հոկտեմբերի – ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանն իր աշխատասենյակում ընդունեց Մոսկվայի Մ. Ա. Շոլոխովի անվան պետական հումանիտար համալսարանի պատվիրակության անդամներին՝ ի դեմս համալսարանի ռեկտոր, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Նեչանի: Հանդիպմանը ներկա էին ԵՊՀ պրոռեկտորներ Գեղամ Գևորգյանը, Ալեքսանդր Գրիգորյանը, ինչպես նաև Միջազգային համագործակցության վարչության պետ Ալեքսանդր Մարգարովը: Հանդիպման վերջում կողմերը բարեկամական հարաբերությունները զարգացնելու ու խորացնելու, կրթության, գիտության ու արտադրական գործունեության բնագավառում փոխադարձ կապեր հաստատելու նպատակով փոխշահավետ համագործակցության պայմանագիր կնքեցին:

(Տե՛ս Մայր բուհը հումանիտար ոլորտում կհամագործակցի ռուսական համալսարանի հետ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/The-delegation-of-the-Moscow-University-for-the-Humanities-was-received-at-YSU>, մուտք՝ 14.06.2019)

23 հոկտեմբերի – Հայաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում ԵՊՀ այցելեց գերմանական DAAD գրասենյակի գլխավոր քարտուղար Դորոթեա Ռյուլանդը:

(Տե՛ս Գերմանական բուհերի հետ կապերի խորացումը՝ որպես գլխավոր նպատակ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Development-of-cooperation-with-German-HEI>, մուտք՝ 14.06.2019)

29 հոկտեմբերի – ԵՊՀ դասախոսների և ուսանողների հետ հանդիպեց Ռազմավարական հետազոտությունների ռուսական ինստիտուտի տնօրեն, գեներալ-լեյտենանտ Լեոնիդ Ռեշեդնիկովը⁴⁰։ ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում կայացած հանդիպման ընթացքում Լ. Ռեշեդնիկովը ներկայացրեց իրենց ինստիտուտն ու դրա գործունեությունը, աշխատակազմը։

(Տե՛ս Հայ-ռուսական համագործակցությունը՝ նոր ձևաչափով, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Armenian-Russian-cooperation-in-a-new-format>, մուտք՝ 14.06.2019)

7 նոյեմբերի – ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը Կանադայի գիտահետազոտական խմբի ղեկավար, Մանիտոբայի համալսարանի պրոֆեսոր Տապաշ Չակրաբորտին հանձնեց ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման վկայականը։

(Տե՛ս ԵՊՀ-ն ևս մեկ պատվավոր դոկտոր ունի, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Tapash-Chakraborty-YSU-Honorary-Doctor>, մուտք՝ 14.06.2019)

12 նոյեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ-ում հավատարմագրված ՆԱՏՕ-ի անդամ մի շարք երկրների դեսպանների հանդիպումը պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետ։ Ելույթ ունեցան ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր դեսպան Քաթրին Լիչը, ՀՀ-ում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Հեֆֆերնը, ՆԱՏՕ-ի անդամ պետությունների ռազմական կցորդները, Հաբավային Կովկասում ՆԱՏՕ-ի կապի սպա Ուիլյամ Լահուն, ՀՀ-ում գործող մի շարք դեսպանատների և ՀՀ ԱԳՆ ներկայացուցիչները, ինչպես նաև ՆԱՏՕ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ, դեսպան Սամվել Մկրտչյանը։

(ՆԱՏՕ-Հայաստան համագործակցության հեռանկարները քննարկվեցին նաև ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/NATO-Armenia-cooperation-perspectives-were-discussed-at-YSU>, մուտք՝ 17.06.2019)

13 նոյեմբերի – ԵՊՀ Պալեանների անվան դաիլիճում տեղի ունեցավ «Հայաստանի եվրասիական հեռանկարը. տարածաշրջանային և գլոբալ մարտահրավերներ» խորագրով միջազգային գիտաժողով: Կազմակերպիչներն էին ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետն ու «Ինտեգրացիա և զարգացում» հետազոտության և վերլուծության հասարակական կազմակերպությունը: Եվրասիական տարածաշրջանային և գլոբալ հիմնահարցերի վերաբերյալ զեկուցում ներկայացրին ՌԴ ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն, պատմ. գիտ. դոկտոր Թամարա Գուզենկովան, Ղազախստանի հրապարակային քաղաքականության ինստիտուտի փոխտնօրեն, պատմ. գիտ. թեկնածու Մերիկ Կոժեկնովը, Բելառուսի պետական համալսարանի քաղաքագիտ. դոկտոր, պրոֆեսոր Լև Կրիշտապովիչը: Ձեկուցումով հանդես եկան նաև Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները:

(Տե՛ս Քննարկումների առանցքում Հայաստանի Եվրասիական հեռանկարներն էին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Eurasian-perspectives-are-in-focus>, մուտք՝ 15.06.2019)

27 նոյեմբերի – ՀՀ Կառավարության նիստում որոշում ընդունվեց «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը վերակազմակերպել հիմնադրամի⁴¹:

(Տե՛ս Մայր բուհը վերակազմակերպվել է հիմնադրամի, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/YSU-was-reorganized-into-foundation>, մուտք՝ 15.06.2019)

4 դեկտեմբերի – ԵՊՀ ռեկտորն իր աշխատասենյակում ընդունեց Ֆրանսիայի Մոնպելիե-1 և Մոնպելիե-2 համալսարանների ներկայացուցիչներին:

Հանդիպմանը մասնակցում էին ԵՊՀ պրոռեկտորներ Ալեքսանդր Գրիգորյանը, Գեղամ Գևորգյանը, Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գագիկ Ղազինյանը, Միջազգային հա-

րաբերությունների ֆակուլտետի ղեկան Գեղամ Պետրոսյանը և Միջազգային համագործակցության վարչության պետ Ալեքսանդր Մարգարովը: Հանդիպման վերջում ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում բարեկամ համալսարանների ներկայացուցիչները, մասնավորապես՝ ԵՊՀ իրավագիտության և Մոնպելիե-1 համալսարանի իրավագիտության և քաղաքագիտության ֆակուլտետների ղեկանները համագործակցության պայմանագիր կնքեցին:

(Տե՛ս Համագործակցությունն ամրապնդվեց պայմանագրի ստորագրմամբ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Representatives-of-Montpellier--1-and-Montpellier--2-were-received-by-YSU-administration>, մուտք՝ 17.06.2019)

9 դեկտեմբերի – ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում մեկնարկեց «Ֆիզիկան կյանքի մասին գիտություններում» (Physics in Life Sciences) խորագրով երիտասարդ գիտնականների դպրոցը:

(Տե՛ս Երբ հանդիպում են երիտասարդներն ու կյանքի մասին գիտությունները, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Physics-in-Life-Sciences>, մուտք՝ 17.06.2019)

17 դեկտեմբերի – ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հրավերով ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ հանդիպում ունեցավ Արժույթի միջազգային հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ղեկավար Թերեզա Սանչեսը

(Տե՛ս Թերեզա Սանչես. «Հայաստանի տնտեսությունը խիստ դրվարայնացված է» տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Teresa-Sanchez-visited-YSU>, մուտք՝ 07.07. 2019)

22 դեկտեմբերի – ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ խորհրդի նիստը:

(Տե՛ս ԵՊՀ խորհուրդն ամփոփեց ուստարին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/YSU-Council-summrized-the-academic-year>, մուտք՝ 17.06.2019)

25 դեկտեմբերի – ՀՀ ԿԳ նախարարը ներկայացնում է հայկական բուհերի վարկանիշները՝ ըստ Բուհերի ազգային վարկանիշավորման համակարգի: ԵՊՀ-ն ընդգրկված էր առաջին խմբում և 2014 թ. արդյունքներով գլխավորում էր երեք կրթական աստիճաններում և երեք ու ավելի մասնագիտական ոլորտներում կրթական ծրագրեր իրականացնող բուհերի ցուցակը՝ 6.69 վարկանիշային միավորով: Երկրորդ տեղում Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանն էր (5.67 միավոր), իսկ եռյակը եզրափակում էր Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը (5.53 միավոր)⁴²:

(Տե՛ս ԵՊՀ-ն հայաստանյան բուհերի առաջատարների շարքում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք <http://ysu.am/news/hy/YSU-has-got-a-leading-position-among-Armenian-universities>, մուտք՝ 17.06.2019)

2015

2014-2015 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանում դասավանդում էին 209 պրոֆեսորներ, 601 դոցենտներ, 405 ասիստենտներ, 403 դասախոսներ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2017-2018 ուստարվա գործունեություն, Երևան, 2018, էջ 18)

2014-2015 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանի առկա ուսուցման բակալավրիատում սովորում էր 10039 ուսանող, մագիստրատուրայում՝ 2492 ուսանող, ասպիրանտուրայում՝ 139 ասպիրանտ, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 3577 ուսանող, մագիստրատուրայում՝ 1295 ուսանող, ասպիրանտուրայում՝ 319 ասպիրանտ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2017-2018 ուստարվա գործունեություն, Երևան, 2018, էջ 52)

2014-2015 ուսումնական տարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում (առկա ուսուցում) ուսանողների թիվը, ըստ ֆակուլտետների, հետևյալն էր՝ Բնական գիտությունների՝ 68, Հումանիտար գիտությունների՝ 267, Տնտեսագիտության՝ 142, Կիրառական արվեստի՝ 72: Հեռակա ուսուցման բաժնի ուսանողների թիվը 1008 էր:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2014-2015 ուստարվա գործունեություն, Երևան, 2015, էջ 645, 650, 664, 669, 674)

հունվար – Երևանի պետական համալսարանը տալիս է հեռակա ուսուցման մագիստրատուրայի 449 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Կենսաբանության՝ 7, Աշխարհագրության և երկրաբանության՝ 14 , Պատմության՝ 32, Միջազգային հարաբերությունների՝ 92, Տնտեսագիտության և կառավարման՝ 115,

Փիլիսոփայության և հոգեբանության՝ 29, Սոցիոլոգիայի՝ 13, Հայ բանասիրության՝ 48, Ժուռնալիստիկայի՝ 10, Ռումանագերմանական բանասիրության՝ 37, Իրավագիտության՝ 52:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2015-2016 ուստարվա գործունեություն, Երևան, 2016, էջ 54)

20 փետրվարի – ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի ճեմասրահում՝ ականավոր գիտնականների կիսանդրիների կողքին, իր արժանի տեղը գտավ մասն հնագետ, պատմաբան, արևելագետ Աշխարհբեկ Լոռիս-Մելիք Զալանթարի կիսանդրին: Բրոնզաձույլ արձանի բացման արարողությանը ներկա էին ԵՊՀ ղեկավարությունը, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ներկայացուցիչներ, գիտնականի ընտանիքի անդամներ և ուրիշներ:

(Տե՛ս ԵՊՀ-ում տեղադրվեց Աշխարհբեկ Զալանթարի կիսանդրին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/The-bust-of-Ashkharbek-Kalantar-was-placed-at-YSU>, մուտք՝ 07.07.2019)

21 փետրվարի – Տեղի ունեցավ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի հավատարմագրման հանձնաժողովի նիստը. որոշում կայացվեց 3 բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրում շնորհել: Հանձնաժողովի որոշմամբ՝ Երևանի պետական համալսարանին շնորհվեց հավատարմագրում 6 տարի ժամկետով, իսկ Երևանի պետական բժշկական համալսարանին և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանին (նախկին ՀՊՃՀ)՝ 4 տարի ժամկետով: Հավատարմագրման գործընթացի ուղղությամբ ԵՊՀ-ում տարվող աշխատանքները բոլոր փուլերում համակարգել էր ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանը:

(Տե՛ս ԵՊՀ-ն 6 տարով ինստիտուցիոնալ հավատարմագրում է ստացել, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/YSU-received-accreditation-for-6-years>, մուտք՝ 17.06.2019)

26 փետրվարի – ԵՊՀ-ում համագործակցության համաձայնագիր ստորագրվեց ԵՊՀ-ի և Մոսկվայի ազգային հետազոտական համալսարանի (Национальный исследовательский университет «МИЭТ») միջև: Նախատեսվում էին կրթական ծրագրերի համատեղ իրականացում, պրոֆեսորադասախոսական կազմի ակադեմիական փոխանակում, համատեղ հետազոտություններ և այլն:

(Տե՛ս ԵՊՀ արտասահմանյան գործընկերների թիվն ավելացավ ևս մեկով, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Cooperation-with-MNRU>, մուտք՝ 17.06.2019)

12 մարտի – ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում մեկնարկեց «Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցերը» խորագրով միջազգային գիտաժողովը:

(Տե՛ս Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցերը երիտասարդների աչքերով, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/3rd-international-conference-Modern-Problems-of-Economics>, մուտք՝ 17.06.2019)

18 մարտի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ հանդիպում Ժուռնալիստների միջազգային ֆեդերացիայի (The International Federation of Journalists-IFJ) նախագահ Ջիմ Բումելայի հետ:

Հանդիպմանը մասնակցում էին Ժուռնալիստիկայի, Միջազգային հարաբերությունների և Սոցիոլոգիայի ֆակուլտետների ուսանողները:

Ջիմ Բումելան խոսեց ժուռնալիստիկայի վրա ժամանակակից տեխնոլոգիաների դրական և բացասական ազդեցությունների մասին՝ ընդգծելով այն միտքը, որ համացանցը և առցանց լրագրությունը լուրջ մարտահրավերներ են նետում ամսագրային ժուռնալիստիկային՝ ստիպելով վերջինիս նույնպես մուտք գործել համաշխարհային սարդոստայն:

Բանախոսի ելույթից հետո ուսանողները հարցեր տվեցին հյուրին: Հարկ է նշել, որ առավել աչքի էին ընկնում ապագա

յրագրողները, ովքեր Ջիմ Բումելային ուղղեցին հեղինակային իրավունքի, առցանց լրագրության և «տեղեկատվություն-անվտանգություն» համատեքստում լրագրողական էթիկայի մասին մի շարք հարցեր:

(Տե՛ս Համալսարանականների հյուրը էր Ջիմ Բումելան, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Jim-Boumelha-viited-ysu>, մուտք՝ 07.07.1019)

26 մարտի – ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնում տեղի ունեցավ «Իսլամական պետությունը և մերձավորարևելյան զարգացումները» խորագրով կլոր սեղան-քննարկում:

(Տե՛ս Հետազոտությունների առանցքում «Իսլամական պետություն» խմբավորումն է, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Islamic-state-in-focus>, մուտք՝ 17.06.2019)

27 մարտի – ԵՊՀ մեծ դահլիճում տեղի ունեցավ «ԵՊՀ օլիմպիադա-2015»-ի փակման հանդիսավոր արարողությունը: Մասնակցում էին ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, պրոռեկտորներ, ֆակուլտետների ղեկավարներ, ամբիոնի վարիչներ, Երևանի և մարզերի դպրոցների տնօրեններ, պարզևի արժանացած դպրոցականներ, ծնողներ:

(Տե՛ս «Երիտասարդ սերունդ կրթելը վեհ գործ է...», տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Closing-ceremony-of-YSU-Olympiad-2015>, մուտք՝ 17.06.2019)

17 ապրիլի – ԵՊՀ ուսանողների հետ հանդիպեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի պատգամավոր, կրթական հարցերով հանձնաժողովի անդամ Թանկրեդ Շիպանսկին: Կազմակերպիչը ԵՊՀ միջազգային համագործակցության վարչությունն է, իսկ հանդիպման առանցքում գերմանական կրթական համակարգն ու բուհերն էին, այնտեղ սովորելու և աշխատելու հնարավորությունները:

(Տե՛ս Համալսարանականների հյուրը գերմանացի պատգամավորն էր, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Tankred-Schipanski-was-received-at-YSU>, մուտք՝ 17.06.2019)

17 ապրիլի – Մայր բուհի ղեկավարության և ԵՊԼՀ Կոնֆուցիոսի ինստիտուտի աջակցությամբ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում բացվեց չինարենի և չինական մշակույթի կենտրոն:

Միջոցառմանը մասնակցում էր ՀՀ-ում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Թիան Էրլունին:

(Տե՛ս Հայ-չինական հարաբերությունների զարգացման նոր հարթակ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Chinese-Language-and-Culture-will-be-studied-at-YSU>, մուտք՝ 17.06.2019)

18 ապրիլի – Մայր բուհի 100 ուսանողներ, ֆակուլտետների ղեկաններ, պրոֆեսորադասախոսական կազմի, ինչպես նաև վարչական և ուսանողական կառույցների ներկայացուցիչներ՝ ԵՊՀ ռեկտորի գլխավորությամբ, այցելեցին Ախուրյան և Արաքս գետերի խառնարան, որտեղ, ի հիշատակ Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի, ծաղկեպսակներ իջեցրին և ծաղիկներ նետեցին մայր Արաքս գետը:

(Տե՛ս Հիշում ենք և պահանջում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/We-remember-and-demand>, մուտք՝ 17.06.2019)

21 ապրիլի – ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի մեծ դահլիճում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ԵՊՀ միջոցառումներից գլխավորը՝ գիտխորհրդի ընդլայնված հանդիսավոր նիստը: Մասնակցում էին համալսարանի ղեկավարությունը, պրոֆեսորադասախոսական կազմի, մեծ թվով ուսանողության, տարբեր կառույցների ու Հայկական սփյուռքի ներկայացուցիչներ:

(Տե՛ս Ցեղասպանությունից վերածնունդ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/From-genocide-to-revival>, մուտք՝ 17.06.2019)

25 ապրիլի – Համալսարանականների հետ հանդիպեցին Հունաստանի Ազգային ժողովի նախագահ Ջոյի Կոնստանտապուլոսն⁴³ ու ՀՀ-ում Հունաստանի արտակարգ և լիազոր դեսպան Իոաննիս

Տայիսը:

(Տե՛ս Հույն քաղաքական գործիչները այցելեցին ԵՊՀ,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Zoe-Konstantopoulou-and-Ioannis-Tayis-visited-YSU>, մուտք՝ 17.06.2019)

29 ապրիլի – ԵՊՀ-ում բացվեց երախտիքի ծառուղին: ԵՊՀ գրադարանի մուտքի մոտ՝ Չարենցի փողոցի կողմից, տեղադրված են 20-րդ դարասկզբի մեծագույն ողբերգությունը հասարակական լայն շրջանակներում քննադատած, բողոքի ու կարեկցանքի խոսքեր արտահայտած, ինչպես նաև հայության մի սովոր հատվածին մահվան ճիրաններից փրկված ու օգնություն ցուցաբերած օտարազգի հայտնի գործիչներից 12-ի կիսանդրիները:

(Տե՛ս ԵՊՀ-ում բացվեց երախտիքի ծառուղի,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Alley-of-Gratitude-was-opened-at-YSU>, մուտք՝ 17.06.2019)

4 մայիսի – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում մեկնարկեց «Օտար լեզուների դասավանդման արդի խնդիրները» խորագրով միջհամալսարանական գիտաժողովը, որը նվիրված էր Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ստեղծման 5-ամյակին:

(Տե՛ս Զննարկումների կիզակետում օտար լեզուների
դասավանդման արդի խնդիրներն են, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝
<http://ysu.am/news/hy/Foreign-language-teaching>, մուտք՝ 17.06.2019)

7 մայիսի – ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում մեկնարկեց «Միջմշակութային հաղորդակցման հմտությունների կատարելագործումը անգլերենը որպես օտար լեզու ուսուցանելիս» խորագրով երկօրյա գիտաժողովը: Միջազգային գիտաժողովին մասնակցում էին ինչպես հայաստանյան, այնպես էլ ԱՄՆ բուհերի ու գիտական կենտրոնների ներկայացուցիչներ: Նպատակն էր քննարկել ՀՀ բուհերում անգլերենի ուսուցմանն առնչվող մի շարք գործնական խնդիրներ, որոնք

կարևոր են հայ ուսանողների միջմշակութային հաղորդակցության հմտությունները զարգացնելու համար: Գլխավորովի բացմանը ներկա էին ԵՊՀ գլխավոր քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը, Հայաստանում ԱՄՆ դեսպանատան մշակութային բաժնի ներկայացուցիչ Նենսի վեն Հորնը, Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի դեկան Սամվել Արախանյանը, Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչ Շուշանիկ Պարոնյանը, պրոֆեսորասախտական կազմի ներկայացուցիչներ, ուսանողներ և հյուրեր:

(Տե՛ս Հետազոտության առանցքում անգլերեն լեզվի ուսուցման հարցերն են, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Cross-cultural-communication-and-teaching-of-English-language>, մուտք՝ 17.06.2019)

9 մայիսի – Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյակի տոնակատարությունների առթիվ ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները և ուսանողները ավանդույթի համաձայն «Հաղթանակ» զբոսայգի գնալուց առաջ թարմ ծաղիկներ դրեցին Մայր բուռի տարածքում գտնվող հուշարձանների մոտ:

(Տե՛ս Մեր և ձեր հաղթանակը 70 տարեկան է, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/70th-anniversary-of-the-victory-in-the-great-patriotic-war>, մուտք՝ 17.06.2019)

12 մայիսի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում մեկնարկեց «ATHENA» նախագծի արդյունքների համեմատական հեմանշման երկօրյա ֆորումը: Եվրամիության «Տեմպուս» ծրագրի «ATHENA» նախագծի (Աջակցություն Եվրոպական հարևանության տարածքի բուհերի ինքնավարության ու կայունության ամրապնդմանը) ֆորումը նվիրված էր Հայաստանի, Ռուսիայի և Մոլդովայի բուհական համակարգի ինքնավարությանը և կայունությանն առնչվող մարտահրավերների, նախագծի շրջանակներում այդ ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների արդյունքների, առկա խնդիրների համեմատական

վերհանմանն ու վերլուծությանը:

(Տե՛ս Ինքնավարությունն ու ֆինանսական կայունությունը՝
որպես բուհերի զարգացման գլխավոր նախապայման,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ [http://ysu.am/news/hy/](http://ysu.am/news/hy/ATHENA-project-in-focus)
ATHENA-project-in-focus, մուտք՝ 17.06.2019)

15 մայիսի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ղեկավարության աջակցությամբ ներկայացվեցին «Նովայա Եվրասիա» հանդեսը, «Եվրասիական ինտեգրում» մագիստրոսական կրթական ծրագիրը:

Հանդիպմանը մասնակցում էին ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ղեկան Գեղամ Պետրոսյանը, ՌԴ սոցիալական ծրագրերի աջակցության հիմնադրամի վարչության նախագահ Արդրեյ Սերգիևը, «Նովայա Եվրասիա» հանդեսի գլխավոր խմբագիր Գալինա Սկորոբոգատովան, ՌԴ հումանիտար հետազոտությունների ակադեմիայի նախագահ, փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Խաչատուր Մարինոսյանը և «Ինտեգրացիա և զարգացում» ՀԿ նախագահ, քաղաքական վերլուծաբան Արամ Սաֆարյանը:

(Տե՛ս «Եվրասիական ինտեգրում». նոր կրթական
ծրագիր ուսանողների համար, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ [http://ysu.am/](http://ysu.am/news/hy/Eurasian-integration-master-program)
news/hy/Eurasian-integration-master-program, մուտք՝ 17.06.2019)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է առկա ուսուցման 2097 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Մաթեմատիկայի և մեխանիկայի՝ 39 բակալավր, 45 մագիստրոս, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 39 բակալավր, 38 մագիստրոս, Ֆիզիկայի՝ 11 բակալավր, 38 մագիստրոս, Ռադիոֆիզիկայի՝ 19 բակալավր, 35 մագիստրոս, Դեղագիտության և քիմիայի՝ 30 բակալավր, 59 մագիստրոս, Կենսաբանության՝ 22 բակալավր, 43 մագիստրոս, Աշխարհագրության և երկրաբանության՝ 51 բակալավր, 81 մագիստրոս, Պատմության՝ 89 բակալավր, 94 մագիստրոս, Միջազգային հարաբերություն-

ների՝ 125 բակալավր, 150 մագիստրոս, Տնտեսագիտության և կառավարման՝ 62 բակալավր, 113 մագիստրոս, Փիլիսոփայության և հոգեբանության՝ 39 բակալավր, 66 մագիստրոս, Սոցիոլոգիայի՝ 15 բակալավր, 36 մագիստրոս, Հայ բանասիրության՝ 56 բակալավր, 78 մագիստրոս, Ժուռնալիստիկայի՝ 26 բակալավր, 42 մագիստրոս, Ռուս բանասիրության՝ 25 բակալավր, 34 մագիստրոս, Ռոմանագերմանական բանասիրության՝ 74 բակալավր, 120 մագիստրոս, Արևելագիտության՝ 33 բակալավր, 44 մագիստրոս, Իրավագիտության՝ 70 բակալավր, 52 մագիստրոս, Աստվածաբանության՝ 9 բակալավր, 10 մագիստրոս, ՏՏԿՀ կենտրոն՝ 18 մագիստրոս, ԵՌԿ կենտրոն՝ 39 մագիստրոս, Մասս մեդիայի գիտակրթ. կենտրոն՝ 22 մագիստրոս, Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ՝ 6:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2015-2016 ուստարվա գործունեություն, Երևան, 2016, էջ 53)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է հեռակա ուսուցման բակալավրիատի 769 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Մաթեմատիկայի և մեխանիկայի՝ 5, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 17, Ֆիզիկայի 9, Ռադիոֆիզիկայի՝ 6, Դեղագիտության և քիմիայի 41, Կենսաբանության՝ 29, Աշխարհագրության և երկրաբանության՝ 68, Պատմության՝ 83, Սիջագգային հարաբերությունների՝ 125, Տնտեսագիտության և կառավարման՝ 98, Փիլիսոփայության և հոգեբանության 26, Հայ բանասիրության՝ 74, Ժուռնալիստիկայի՝ 21, Ռուս բանասիրության՝ 20, Ռոմանագերմանական բանասիրության՝ 70, Իրավագիտության՝ 64, Աստվածաբանության՝ 13:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2015-2016 ուստարվա գործունեություն, Երևան, 2016, էջ 54)

հունիս – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը տալիս է 4 շրջանավարտ (Կիրառական արվեստի ֆակուլտետ):

Հեռակա ուսուցման շրջանավարտների թիվը 188 էր:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2014-2015
ուստարվա գործունեություն, Երևան, 2015, էջ 670, 677)

2 հունիսի – ԵՊՀ Ռոբերտ Շումանի անվան սրահում «ՀՌ-ԿԿ-Հայաստան» կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպվել էր համադիպում-քննարկում:

«Քաղաքականության մարտահրավերները Հայաստանի համար տարածաշրջանային և համաշխարհային տնտեսական ցնցումների համատեքստում» թեմայով զեկուցում կարդաց Արժույթի միջազգային հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ղեկավար Թերեզա Դաբան Սանչեսը: Մասնակցում էին տարբեր ֆակուլտետների ուսանողներ, հետազոտական կենտրոնների ներկայացուցիչներ ու երիտասարդ հետազոտողներ:

(Տե՛ս Քննարկման առանցքում տարածաշրջանային տնտեսական ցնցումներն էին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Regional-economic-issues-in-focus>, մուտք՝ 17.06.2019)

19 հունիսի – ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի հերթական նիստը: Օրակարգում ներառված էր «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ղեկավարի ընտրության հարցը: Փակ և գաղտնի քվեարկությամբ ԵՊՀ ղեկավարի պաշտոնում միաձայն ընտրվեց ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Արամ Սիմոնյանը:

(Տե՛ս Մայր բուհը կշարունակի ղեկավարել Արամ Սիմոնյանը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Rectors-Electon>, մուտք՝ 17.06.2019)

26 հունիսի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում կազմակերպվել էր «Թուրքմենստանի մշտական չեզոքության կարգավիճակը կայուն զարգացման և միջազգային կառուցողական համագործակցության հիմք» խորագրով միջազգային գիտաժողով-

վր: Կազմակերպիչներն էին ԵՊՀ ռեկտորատն ու Արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնը և ՀՀ-ում Թուրքմենստանի դեսպանությունը:

(Տե՛ս Թուրքմենական չեզոքության 20-ամյակը նշվեց գիտաժողովով, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/20th-anniversary-of-neutrality-of-Turkmenistan>, մուսք՝ 17.06.2019)

25 օգոստոսի – ԵՊՀ-ում տեղի ունեցավ Վենետիկի հանձնաժողովի անդամների հանդիպումը Հայաստանի քաղաքական ուժերի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: ՀՀ սահմանադրական բարեփոխումների նախագիծը քննարկելու էին եկել Վենետիկի հանձնաժողովի անդամներ Քրիստոֆ Գրաբենվարտերը, Այվարս Էնձինսը և հանձնաժողովի գլխավոր քարտուղարի տեղակալ Սիմոնա Գրանատա Մենդիմին: Իսկ հայաստանյան կողմից մասնակցում էին խորհրդարանական խմբակցությունների ղեկավարներ, տարբեր կուսակցությունների անդամներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, իրավաբաններ և ուրիշներ:

(Տե՛ս Հանդիպման առանցքում սահմանադրական բարեփոխումներն են, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Meeting-with-Venice-Commission-members>, մուսք՝ 05.07. 2019)

1 սեպտեմբերի – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի առաջին կուրսեցիների առաջին դասը վարեց ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը:

(Տե՛ս Արտաքին գործերի նախարարը՝ ապագա դիվանագետների հյուր, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Edward-Nalbandyan-visited-YSU>, մուսք՝ 17.06.2019)

9 սեպտեմբերի – Բելգիացի խորհրդականները հանդիպեցին ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի ուսանողների հետ: Հյուրերի թվում էին Բելգիայի Թագավորության խորհրդարանի պատգամավորներ Անդրե դյու Բյուս դե Վարնաֆը, Կա-

րիմ վան Օվերմեյերը, Էրվե Դուայենը, Ժյուլի դը Գրոտը, Ֆաթումատա Սյոլիբեն և Սիմոն Զուսկինդը:

(Տե՛ս Եվրոպացի պատգամավորները այցելեցին ԵՊՀ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Belgian-delegation-visited-YSU>, մուտք՝ 17.06.2019)

9 սեպտեմբերի – ԵՊՀ-ի և «Հայկական ծրագրեր» ընկերության միջև համագործակցության համաձայնագիր կնքվեց:

(Տե՛ս ԵՊՀ-ն ընդլայնում է համագործակցությունը մասնավոր հատվածի հետ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Cooperation-with-Armenian-Programs>, մուտք՝ 17.06.2019)

11 սեպտեմբերի – ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար Անդրեյ Սորոկինը պարգևատրվեց ԵՊՀ հուշամեդալով, որը նրան հանձնեց ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանն իր աշխատասենյակում կայացած հանդիպման ժամանակ: Մասնակցում էին նաև ԵՊՀ պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը, Սիջազգային համագործակցության վարչության պետ Ալեքսանդր Մարգարովը, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ղեկան Մարատ Գրիգորյանը և Կայուն զարգացման կենտրոնի ղեկավար Ռուբեն Մովսեսյանը:

Հանդիպման ընթացքում կողմերն ամփոփեցին վերջին տարիների համագործակցության արդյունքները, խոսեցին նաև որոշ անելիքների մասին:

(Տե՛ս ԵՊՀ-ն պարգևատրեց իր ընկերոջն ու գործընկերոջը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Andrey-Sorokinwas-awarded-YSU-medal>, մուտք՝ 05.07.2019)

30 սեպտեմբերի – ԵՊՀ ռեկտորի՝ N 173§40 և N 173§41 հրամանների համաձայն՝ համալսարանի ներքին փաստաթղթաշրջանառության, ինչպես նաև սովորողների գիտական աշխատանքների էլեկտրոնային գործածման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է կիրառվել միասնական կողավորման համակարգ:

ԵՊՀ փաստաթղթերը (ներքին ակտեր, պայմանագրեր, գրություններ, նամակներ, տեղեկանքներ և այլն) այդուհետ պատրաստվելու էին համակարգչային տեքստերի «Յունիկոդ» (Unicode) կոդավորման համակարգի և դրան համապատասխան հայկական տառատեսակների (Sylfaen, Arial Unicode, Arian AMU, GHEA Grapalat, GHEA Mariam) կիրառմամբ:

Ինչ վերաբերում է ուսանողներին, ապա վերջիններս նույնպես 2015-2016 ուստարվանից գիտական աշխատանքները (կուրսային և ավարտական աշխատանքներ, մագիստրոսական թեզեր, թեկնածուական ատենախոսություններ և այլն) պետք է պատրաստեին «Յունիկոդ» կոդավորման համակարգի և դրան համապատասխան վերը նշված հայկական տառատեսակների կիրառմամբ՝ բացառությամբ բնագիտական ֆակուլտետներում օգտագործվող հատուկ մասնագիտական ծրագրերի⁴⁴:

(Տե՛ս Կլիրառվի համակարգչային միասնական կոդավորում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Unified-encoding-wil-be-applied>, մուտք՝ 05.07.2019)

6 հոկտեմբերի – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դասախոսները և ուսանողները հյուրընկալել էին ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Ժան-Ֆրանսուա Շարպանտիեին: Նա ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում ներկայացրեց «Ֆրանկոֆոնիան միջազգային հարաբերություններում. Երևանում կայանալիք նախարարական համաժողովի նպատակները» թեմայով դասախոսություն: Հանդիպմանը ներկա էին ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան Գեղամ Պետրոսյանը, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ և ուսանողներ:

(Տե՛ս ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպանը դասախոսություն կարդաց ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Extraordinary-and-Plenipotentiary-Ambassador-of-France-delivered-a-lecture-at-YSU>, մուտք՝ 17.06.2019)

14 հոկտեմբերի – ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում մեկնարկեց ակադեմիկոս զիտանական Մանուկ Աբեղյանի 150-ամյակին նվիրված երկօրյա գիտական նստաշրջանը:

(Տե՛ս Մանուկ Աբեղյանի 150-ամյակը նշանավորվեց գիտական հետազոտություններով, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/150th-anniversary-of-Manuk-Abeghyan>, մուտք՝ 17.06.2019)

20 հոկտեմբերի – ԵՊՀ-ի և «Զի-Ար-Սի գիտելիքի կենտրոն» ՍՊԸ-ի միջև փոխըմբռնման հուշագիր կնքվեց:

(Տե՛ս ԵՊՀ-ն շարունակում է ընդլայնել գործընկերների շրջանակը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/GRC-Knowledge-Center-to-cooperate-with-YSU>, մուտք՝ 17.06.2019)

22 հոկտեմբերի – Տեղի ունեցավ ԵՊՀ գիտխորհրդի ընդլայնված նիստ, որի ընթացքում ՀՀ Սահմանադրության նախագծի որոշ դրույթների վերաբերյալ տեղեկություններ հաղորդեցին այն մշակած հանձնաժողովի անդամները:

Նիստի սկզբում, որին մասնակցում էին նաև տարբեր ֆակուլտետների ամբիոնների վարիչներ, դասախոսներ, ՋԼՄ ներկայացուցիչներ և ուրիշներ, ելույթ ունեցան ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան Գագիկ Ղազինյանն ու սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ Գևորգ Դանիելյանը, ովքեր ՀՀ նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամներ են:

(Տե՛ս Սահմանադրական բարեփոխումների իրազեկումը հասավ ԵՊՀ գիտխորհուրդ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Constitutional-reforms-were-discussed-at-YSU>, մուտք՝ 05.07.2019)

24 հոկտեմբերի – Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի շրջանավարտների 3-րդ միջազգային համաժողովի շրջանակներում ԵՊՀ էին այցելել Եվրասիական տարածաշրջանի առաջատար բուհերի մի շարք ներկայացու-

ցիչներ:

Մասնավորապես ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի ուղեկցությամբ Մայր բուհի հյուրերն էին ՌԴ արտաքին գործերի նախարարության Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի (МГИМО) ռեկտոր Անատոլի Տորկունովը, գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Եվգենի Կոժոկինը, ՌԴ արտաքին գործերի նախարարության դիվանագիտական ակադեմիայի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Օլեգ Իվանովը, Դրոգստանի արտաքին գործերի նախարարության դիվանագիտական ակադեմիայի ռեկտոր Նուրլան Այտմուրզաևը, Բելառուսի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ղեկան Վիկտոր Շադոբսկին, Լ. Ն. Գոմիլևի անվան եվրասիական ազգային համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ներկայացուցիչ Ժանար Մեդետբասկան ու Ղազախստանի միջազգային հարաբերությունների և համաշխարհային լեզուների համալսարանի դասախոս Գաբիտ Ժումատայը: Հյուրերին ընդունեցին ԵՊՀ պրոռեկտորներ Գեղամ Գևորգյանը և Ռուբեն Մարկոսյանը: Գեղամ Գևորգյանը ողջունեց կրթության ոլորտի ներկայացուցիչներին, հակիրճ ներկայացրեց ԵՊՀ պատմությունը, կառուցվածքը, ուսումնագիտական գործընթացները, ինչպես նաև անդրադարձավ համալսարանի՝ արտասահմանյան բուհերի հետ միջազգային համագործակցությանը:

Անատոլի Տորկունովը Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի 200-ամյակի առիթով ԵՊՀ ղեկավարությանը հանձնեց հուշամեդալ և մոսկովյան արևելագիտության վերաբերյալ գիրք, որի շնորհանդեսը տեղի էր ունեցել Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի շրջանավարտների 3-րդ միջազգային համաժողովի շրջանակներում:

Պրոռեկտոր Գեղամ Գևորգյանն էլ ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանի անունից ԵՊՀ հուշամեդալ հանձնեց МГИМО-ի ռեկտորին:

Անատոլի Տորկունովը ԵՊՀ ղեկավարությանը փոխանցեց

մաս ԵՏՄ բարձրագույն ուսումնական հաստատությունների ասոցիացիայի ստեղծման մասին հռչակագրի նախագիծը և նշեց, որ փաստաթղթին ծանոթանալուց և կառույցի ստեղծման ու հիմնադրման վերաբերյալ քննարկումներից հետո այն կստորագրվի:

(Տե՛ս ԵՊՀ-ում կայացավ ԵՏՄ բուհերի ասոցիացիայի անդամ երկրների ներկայացուցիչների հանդիպումը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Meeting-of-EurAsEC-HEI-association-at-YSU>, մուտք՝ 05.07.2019)

2 նոյեմբերի – Երևանի պետական համալսարանում տեղի ունեցավ Կոստվոյում և Աֆղանստանում ՆԱՏՕ-ի ղեկավարած գործողություններին մասնակցող հայ խաղաղապահների լուսանկարների ցուցահանդեսի բացումը:

Ներկա էին ՆԱՏՕ-ի, ՀՀ արտաքին գործերի և պաշտպանության նախարարությունների ներկայացուցիչներ, ՆԱՏՕ-ի անդամ երկրների դեսպաններ, ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ուսանողներ և ուրիշներ:

(Տե՛ս Ցուցահանդեսի բացումը տեղի ունեցավ ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/An-exhibition-devoted-to-NATO-actions>, մուտք՝ 17.06.2019)

10-11 նոյեմբերի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի նախաձեռնությամբ և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) աջակցությամբ ֆակուլտետը հյուրընկալեց Դիփհուլցի (Գերմանիա) դատարանի դատավոր, Օսնաբրյուքի համալսարանի պատվավոր պրոֆեսոր Հելմուտ Յունենմանին: Երկօրյա դասախոսությունների ընթացքում նա ուսանողներին ծանոթացրեց Գերմանիայում անչափահասների և 18-21 տարեկան երիտասարդների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկություններին:

(Տե՛ս Գերմանական փորձը փոխանցում է անձամբ գերմանացի դատավորը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/German-judge-shared-his-experience>, մուտք՝ 17.06.2019)

17 նոյեմբերի – Մեկնարկեց «Եվրասիական անվտանգության ապահովման արդիական խնդիրները» խորագրով Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) երիտասարդական 2-րդ դպրոցը:

ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում կայացած արարողությանը բացման խոսքով հանդես եկան ՀԱՊԿ վերլուծական աստղիացիայի համակարգող, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Իգոր Պանարինը, ԵՊՀ ռեկտորը, ՀՀ-ում Բելառուսի արտակարգ և լիազոր դեսպան Իգոր Նազարուկը, ՀՀ-ում Ղազախստանի ռազմական կցորդ, գնդապետ Կենժաբեկ Օրինբանը, իսկ Ռուսաստանի Դաշնության դեսպանության ներկայացուցիչը հանդիպման մասնակիցներին փոխանցեց ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Իվան Վոլինկինի ուղերձը:

(Տե՛ս Քննարկումների կիզակետում Եվրասիական տարածաշրջանի բազմակողմանի զարգացման խնդիրներն են, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Development-of-Eurasian-region-in-focus>, մուտք՝ 05.07.2019)

27 նոյեմբերի – ԵՊՀ Ե. Չարենցի անվան սրահում տեղի ունեցավ «Մատյան Սաջջադի» (իմամ Սաջջադի աղոթքները) հայերեն թարգմանությամբ գրքի շնորհանդեսը:

Միջոցառմանը ներկա էին Աիլ ալ-Բեյթի համաշխարհային համագումարի գլխավոր քարտուղար այաթոլլա Մոհամմադ Հասան Ախթարիին, Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը, ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) արտակարգ և լիազոր դեսպան Մեյլեդ Քազեմ Սաջադին, ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Վարդան Ոսկանյանը, ԻԻՀ դեսպանության մշակույթի խորհրդական Մաջիդ Մեշքին, դեսպանության աշխատակիցներ, ԵՊՀ պրոֆեսորա-

դասախոսական կազմի ներկայացուցիչներ, ուսանողներ, հյուրեր:

(Տե՛ս Հայ-իրանական կապերն ամրանում են, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Armenian-Iranian-ties-strengthen> մուտք՝ 17.06.2019)

23 դեկտեմբերի – ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի հերթական նիստը:

(Տե՛ս Կայացավ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի հերթական նիստը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/YSU-Board-session-2015>, մուտք՝ 17.06.2019)

25 դեկտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Երևանի համալսարան» պաշտոնաթերթի 95-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառումը:

(Տե՛ս ՀՀ ամենաերկարակյաց թերթը՝ «Երևանի համալսարան»-ը 95 տարեկան է, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Yerevan-University-newspaper-is-95-years-old>, մուտք՝ 17.06.2019)

2016

2015-2016 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանում դասավանդում էին 212 պրոֆեսորներ, 585 դոցենտներ, 372 ասիստենտներ, 383 դասախոսներ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2017-2018 ուստարվա գործունեություն, Երևան, 2018, էջ 18)

2015-2016 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանի առկա ուսուցման բակալավրիատում սովորում էր 11680 ուսանող, մագիստրատուրայում՝ 1757 ուսանող, ասպիրանտուրայում՝ 127 ասպիրանտ, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 3255 ուսանող, մագիստրատուրայում՝ 948 ուսանող, ասպիրանտուրայում՝ 288 ասպիրանտ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2017-2018 ուստարվա գործունեություն, Երևան, 2018, էջ 52)

2015-2016 ուսումնական տարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում (առկա ուսուցում) սովորող ուսանողների թիվը, ըստ ֆակուլտետների, հետևյալն էր՝ Բնական գիտությունների՝ 68, Հումանիտար գիտությունների՝ 327, Տնտեսագիտության՝ 158, Կիրառական արվեստի՝ 88:

Հեռակա ուսուցման բաժնի ուսանողների թիվը 1033 էր:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2015-2016 ուստարվա գործունեություն, Երևան, 2016, էջ 415, 417, 424, 427, 430)

հունվար – Երևանի պետական համալսարանը տալիս է հեռակա ուսուցման մագիստրատուրայի 423 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Կենսաբանության՝ 5, Աշխարհագրության և երկրաբանության՝ 11, Պատմության՝ 24, Միջազգային հարաբերությունների՝ 93, Տնտեսագիտության և կառավարման՝ 145, Փիլիսոփայության և հոգեբանության՝ 30, Սոցիոլոգիայի՝ 20,

Հայ բանասիրության՝ 25, Ժուռնալիստիկայի՝ 7, Ռոմանագերմանական բանասիրության՝ 22, Իրավագիտության՝ 41:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2015-2016 ուստարվա գործունեություն, Երևան, 2016, էջ 54)

26 հունվարի – ԵՊՀ ղեկավարությունը հյուրընկալեց ԵՄ կրթության տնօրենության՝ ԱՊՀ-ում և Կենտրոնական Ասիայում տարածաշրջանային և երկկողմանի համագործակցության բաժնի ղեկավար Կատյա Դոլգովա-Դրեյերին և ԵՄ երևանյան գրասենյակի ներկայացուցիչ Լիանա Ամիրբեկյանին:

Հանդիպման ընթացքում ԵՊՀ ռեկտորը նախ ներկայացրեց Մայր բուհում իրականացվող հակակոռուպցիոն ծրագրերի որոշ մանրամասներ, ապա հավելեց, որ ԵՊՀ-ն պատրաստ է համագործակցելու միջազգային կառույցների հետ: Այդ խնդրի մասին առավել համգամանակից խոսեցին նաև ԵՊՀ պրոռեկտորները:

(Տե՛ս Քննարկումներ կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Discussions-in-the-framework-of-the-corruption-combat>, մուտք՝ 20.06.2019)

3 փետրվարի – ԵՊՀ իրավագետները հյուրընկալել էին Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) հարավկովկասյան բաժնի ղեկավար Թերեզա Թալիսմենրին և հայաստանյան գրասենյակի ղեկավար Նելլի Թումասյանին: Հանդիպմանը մասնակցում էին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ղեկան Գագիկ Ղազինյանը և քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ Աննա Մարգարյանը:

(Տե՛ս Բազմաբնույթ ծրագրեր ապագա իրավագետների համար, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Various-projects-for-future-lawyers>, մուտք՝ 20.06.2019)

16 փետրվարի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում ՊՆ ներկայացուցիչները հանդիպեցին ուսանողների հետ:

(Տե՛ս Այլընտրանքային ծառայության հնարավորություն համալսարանականների համար, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Alternative-military-service>, մուտք՝ 20.06.2019)

16 փետրվարի – ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում տեղի ունեցավ ակադեմիկոսներ Արսեն Տերտերյանի, Էդվարդ Ջրբաշյանի և Հրանտ Թամրազյանի կիսանդրիների բացման հանդիսավոր արարողությունը:

(Տե՛ս ԵՊՀ-ում տեղադրվեցին մեծանուն ակադեմիկոսների կիսանդրիները, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Busts-of-eminant-academicians>, մուտք՝ 05.07.2019)

22 փետրվարի – ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում նշվեց Մայր բուսի գրադարանի 95-ամյակը:

(Տե՛ս ԵՊՀ գրադարանը 95 տարեկան է, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/YSU-Library-is-95-years-old>, մուտք՝ 20.06.2019)

23 փետրվարի – ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում ԵՊՀ դասախոսների և ուսանողների հյուրն էր ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ռիչարդ Միլսը: Հանդիպմանը մասնակցում էին ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, պրոռեկտորները, մի շարք ֆակուլտետների դեկաններ և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ինչպես նաև Սիջազգային հարաբերությունների, Իրավագիտության, Սոցիոլոգիայի ֆակուլտետների և Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի ուսանողներ:

(Տե՛ս ԱՄՆ դեսպանը դասախոսություն կարդաց համալսարանականների համար, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Richard-Mills-was-received-at-YSU>, մուտք՝ 20.06.2019)

25 փետրվարի – ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի մանրէաբանության, բույսերի և մանրէների կենսատեխնոլոգիայի ամբիոնում դասախոսությամբ հանդես եկավ կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարանի կենսատեխնոլոգիայի և մանրէաբանության ամ-

բիոնի վարիչ Իրինա Բատլուցկայան:

(Տե՛ս Զարգացման մոր հեռանկարներ կենսատեխնոլոգիայի ոլորտում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/New-prospects-in-the-field-of-biotechnology>, մուտք՝ 20.06.2019)

2 մարտի – ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը հյուրընկալեց Բելգորոդի հետազոտական համալսարանի ֆարմացիայի ֆակուլտետի ղեկան Իրինա Սպիչակին: Կողմերը քննարկեցին քիմիայի և դեղագործության ոլորտում շահավետ համագործակցության և գիտակրթական ծրագրերի իրականացման հնարավորությունները: Հանդիպմանը մասնակցում էին նաև ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանը, գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը, ԵՊՀ դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի պրոֆեսոր Աշոտ Սահյանը: Հանդիպման ավարտին ԵՊՀ-ի և ՌԴ Բելգորոդի հետազոտական համալսարանի միջև համագործակցության համաձայնագիր կնքվեց:

(Տե՛ս Փոխգործակցություն կծավալվի քիմիայի բնագավառում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Cooperation-with-BRU>, մուտք՝ 18.06.2019)

3 մարտի – ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանին շնորհվեց ԵՊՀ պատվավոր պրոֆեսորի կոչումը:

(Տե՛ս ՀՀ ԱԳ նախարարը՝ ԵՊՀ պատվավոր պրոֆեսոր, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Edward-Nalbandyan-YSU-Honorary-Professor>, մուտք՝ 18.06.2019)

11 մարտի – ԵՊՀ պատմության քանգարանում տեղի ունեցավ «Մայր բուհը և մենք» խորագրով ուսանողական մրցույթ:

ԵՊՀ պատմության քանգարանի, Պատմության և Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետների ղեկավարության և ուսանողական գիտական ընկերությունների կազմա-

կերպած մրցույթը նվիրված էր ՀՀ անկախության 25-ամյակին:

(Տե՛ս Մրցում են ուսանողները, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝
<http://ysu.am/news/hy/Competition-for-students>, մուտք՝ 23.06.2019)

15 մարտի – ԵՊՀ պատմության ֆակուլտետում տեղի ունեցավ «Նեմեսիս» գործողությանը նվիրված միջոցառում, որտեղ ցուցադրվեց նաև ֆիլմ, որում մասնագետները ներկայացնում և վերլուծում էին պատմության անցած այդ էջն ու փաստում, թե գործողությունները որքանով են շաղկապված մեկը մյուսին:

(Տե՛ս Մարտի 15-ը «Նեմեսիս» գործողության օրն է, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Nemesis-operation-in-focus> մուտք՝ 20.06.2019)

16 մարտի – ԵՊՀ պատմության ֆակուլտետում «Արվեստը և քաղաքականությունը» թեմայով դասախոսություն կարդաց ԱՄՆ Կալիֆորնիայի համալսարանի դասախոս, պրոֆեսոր Փոլ Ֆոն Բլումը:

(Տե՛ս Ներկայացվեցին աֆրո-ամերիկյան արվեստի առանձնահատկությունները, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝
<http://ysu.am/news/hy/Paul-Von-Blum-was-received-at-YSU>,
 մուտք՝ 18.06.2019)

19 մարտի – ԵՊՀ մի շարք դասախոսներ Արցախի մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում հանդես եկան ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված դասախոսություններով, որոնց նպատակն էր նպաստել բանակ-հասարակություն կապի ամրապնդմանը, զինվորների ռազմաքաղաքական գիտելիքների զարգացմանը և նրանց մարտական ոգու բարձրացմանը:

(Տե՛ս ԵՊՀ-բանակ կապն ամրապնդվում է, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/YSU-Army-ties-strengthen>, մուտք՝ 20.06.2019)

30 մարտի – ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) կրթական և հետազոտական կենտրոնում տեղի ունեցավ «Ցանցային վիրտուալիզացում» խորագրով առցանց սեմինար-դասընթաց, որը կազմակերպվել էր ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի ու «ԱՐՓԱ» ինստիտուտի համագործակցության շրջանակում: Դասախոսեց Հյուսիսային Կարոլինայի համալսարանի դոկտոր Ջորջ Ռուսասը:

(Տե՛ս Ցանցային վիրտուալիզացում և ոչ միայն..., տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Network-virtualization-and-not-only>, մուտք՝ 20.06.2019)

2 ապրիլի – Արցախա-ադրբեջանական շփման գծի հարավային, հարավարևելյան և հյուսիսարևելյան ուղղություններով Ադրբեջանի զինված ուժերը ձեռնարկում են բացահայտ հարձակողական գործողություններ՝ այլ զինատեսակների հետ միասին օգտագործելով հրետանի, զրահատեխնիկա և օդուժ:

Բացի առաջնագծում ընթացող մարտերից, հակառակորդը հրետանային հարվածներ է հասցնում Արցախի Հանրապետության խաղաղ բնակավայրերի և մի շարք գորամասերի մշտական տեղակայման վայրերին⁴⁵:

(Տես Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության պաշտոնական կայք՝ <http://nkrmil.am/news/view/198> մուտք՝ 06.07.2019)

6 ապրիլի – ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանի աշխատասենյակում բուհի ղեկավարությունը հանդիպեց Ազգային հետազոտական համալսարանի Սանկտ Պետերբուրգի մասնաճյուղի էկոնոմիկայի բարձրագույն դպրոցի տնօրենի տեղեկալ Վալերի Գորդինի, Արևելագիտության և աֆրիկագիտության բաժնի դոցենտ Ալեքսեյ Օբրագովի և Էկոնոմիկայի բաժնի ղեկավար Սերգեյ Սլոբոդյանի հետ: Հանդիպմանը ներկա էին նաև ԵՊՀ միջազգային համագործակցության և գիտական քաղաքականության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանը, Միջազգային

համագործակցության վարչության պետ Ալեքսանդր Մարգարովը, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ղեկան Մարատ Գրիգորյանը, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ղեկան Գեղամ Պետրոսյանը, ինչպես նաև ներկայացուցիչներ Արևելագիտության ու Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետներից:

(Տե՛ս ԵՊՀ-ն պատրաստական է համագործակցելու ռուսական բուհերի հետ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Cooperation-with-Russian-HEI>, մուտք՝ 18.06.2019)

6 ապրիլի – ԵՊՀ-ում անցկացվեց «Տեղեկատվական անվտանգությունը և տեղեկատվական պատերազմները հայ-ադրբեջանական հակամարտության համատեքստում» խորագրով գործնական դասընթաց: ԵՊՀ մարտական պատրաստության ակումբի նախաձեռնությամբ կազմակերպված այդ միջոցառմանը մասնակցում էին բուհի տարբեր ֆակուլտետների ուսանողներ:

(Տե՛ս Տեղեկատվական անվտանգության դասընթաց ուսանողների համար, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Information-security-courses>, մուտք՝ 20.06.2019)

11 ապրիլի – Իրավագիտության ֆակուլտետի դատական ​​նիստերի դահլիճում համալսարանականների համար դասախոսություններ կարդաց Ստոկհոլմի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ղեկան, ՄԱԿ-ի ԵՏՀ Օրիոսի կոմվենցիայի համապատասխանության կոմիտեի նախագահ, պրոֆեսոր Յոնաս Էրբեսսոնը:

(Տե՛ս Բնապահպանություն. լոկալ և համընդհանուր խնդիրներ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Professor-Jonas-Ebbesson-delivered-a-lecture-at-YSU-Faculty-of-Law>, մուտք՝ 19.06.2019)

12 ապրիլի – Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական ​​համալսարանում կայացած Եվրասիական համալսարանների ասոցիացիայի խորհրդի ընդլայնված նիստի նպատակն էր ամրապնդել

և զարգացնել եվրասիական համալսարանների միջև կրթական ու գիտական համագործակցությունը:

Հայաստանից մասնակցեց ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանը:

(Տե՛ս Կատեղծվի Եվրասիական ցանցային համալսարան,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/>

Eurasian-network-university, մուտք՝ 05.07.2019)

15 ապրիլի – ԵՊՀ մեծ դահլիճում տեղի ունեցավ «ԵՊՀ օլիմպիադա-2016»-ի պարգևատրման և փակման հանդիսավոր արարողությունը:

(Տե՛ս 340 դպրոցականներ արժանացան դիպլոմների և

գովասանագրերի, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/>

Closing-ceremony-of-YSU-Olympiad-2016, մուտք՝ 19.06.2019)

22 ապրիլի – ԵՊՀ ռեկտորի աշխատասենյակում բուհի ղեկավարությունը հյուրընկալեց Կիպրոսի համալսարանի ռեկտոր Կոնստանտինոս Քրիստոֆիդեսին: Հանդիպմանը ներկա էին նաև ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանը, գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը և Միջազգային համագործակցության վարչության պետ Ալեքսանդր Մարգարովը:

ԵՊՀ և Կիպրոսի համալսարանի ռեկտորները ստորագրեցին համագործակցության նոր համաձայնագիր:

(Տե՛ս ԵՊՀ-ի և Կիպրոսի համալսարանի միջև կապն ամրապնդվում է,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ [http://ysu.am/news/hy/Delegation-of-the-](http://ysu.am/news/hy/Delegation-of-the-University-of-Cyprus-visited-YSU-1461426708)

University-of-Cyprus-visited-YSU-1461426708, մուտք՝ 19.06.2019)

26 ապրիլի – ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում դասախոսությամբ հանդես եկավ Ֆրանսիայի Ռեննեսի համալսարանի (University of Rennes) պրոֆեսոր Շտեֆեն Ռոթը (Steffen Roth)⁴⁶:

(Տե՛ս Մասնագիտական դասախոսություն սոցիոլոգների համար,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/>

Lecture-for-sociologists, մուտք՝ 19.06.2019)

28 ապրիլի – ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում ռեկտորատի ընդլայնված նիստի ժամանակ ԵՊՀ ռեկտորը հայագգի բարերար, «Տավիտյան» հիմնադրամի նախագահ, ծրագրային ապահովմամբ զբաղվող «Սինքսորթ» ընկերության հիմնադիր Ասո Տավիտյանին⁴⁷ հանձնեց ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման վկայագիրը:

(Տե՛ս Հայագգի բարերար Ասո Տավիտյանին շնորհվեց ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Aso-Tavityan-YSU-honorary-doctor>, մուտք՝ 19.06.2019)

2 մայիսի – Հայ բանասիրության ֆակուլտետի դահլիճում տեղի ունեցավ գրաբար բնագրերին նվիրված դասախոսությունների շարք:

(Տե՛ս Ներկայացվեցին գրաբար բնագրերի հետ աշխատանքի յուրահատկությունները, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Grabar-language-in-focus>, մուտք՝ 19.06.2019)

16 մայիսի – ԵՊՀ-ի և Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի միջև կնքվեց համագործակցության համաձայնագիր՝ հետևյալ ուղղությունների շուրջ՝ գիտական և մանկավարժական բարձր որակավորմամբ կադրերի պատրաստում, բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստում, լրացուցիչ պրոֆեսիոնալ կրթության համակարգի զարգացում, հումանիտար և հասարակական գիտությունների հետազոտություն, բնական և ճշգրիտ գիտությունների հետազոտություն, տեխնոլոգիաների զարգացում, հեռաուսուցման համակարգի զարգացում: Համագործակցությունն իրականացվելու է ինչպես կադրերի փորձի փոխանակման ծրագրերի միջոցով, այնպես էլ համատեղ կրթական ծրագրերի մշակմամբ ու իրականացմամբ:

(Տե՛ս ԵՊՀ-ն ընդլայնում է համագործակցության սահմանները, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Cooperation-with-Moscow-colleagues>, մուտք՝ 19.06.2019)

18 մայիսի – ԵՊՀ-ի և Ինդոնեզիայի համալսարանի միջև համագործակցություն ծավալելու և հետագայում այն զարգացնելու նպատակով Մայր բուհ էին այցելել Ինդոնեզիայի համալսարանի ռեկտոր Մուհամմադ Անիսը և նույն համալսարանի միջազգային գրասենյակի ղեկավար Մելդա Քամիլ Արիանդոն։ ԵՊՀ-ի և Ինդոնեզիայի համալսարանի միջև ստորագրվեց համագործակցության պայմանագիր։

(Տե՛ս ԵՊՀ-ն նոր գործընկեր ունի, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝

<http://ysu.am/news/hy/Delegation-of-University-of-Indonesia-visited-YSU>, մուտք՝ 19.06.2019)

20 մայիսի – ԵՊՀ դեղագիտության և քիմիայի ֆակուլտետում տեղի ունեցավ ուսումնագիտական մի շարք լաբորատորիաների հանդիսավոր բացումը։

(Տե՛ս Դեղագիտության ոլորտը զարգացման լուրջ միտումներ ունի,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Pharmacology-field-in-focus>,

մուտք՝ 19.06.2019)

24 մայիսի – Արժույթի միջազգային հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ղեկավար Թերեզա Դաբան Սանչեսը ԵՊՀ-ում ներկայացնում է Հայաստանի տնտեսական զարգացումների միտումները։ Նախաձեռնողներն էին «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան» հիմնադրամը, Արժույթի միջազգային հիմնադրամի հայաստանյան գրասենյակը և Երևանի պետական համալսարանը։

(Տե՛ս Հայաստանի տնտեսական քաղաքականության մարտահրավերները,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Teresa-Daban-Sanchez-visited-YSU>,

մուտք՝ 19.06.2019)

31 մայիսի – Իսպանացի գրող, ճարտարապետ Գոնսալո Գուարչին հանձնվեցին ԵՊՀ պատվավոր դոկտորի վկայական, ԵՊՀ ոսկե մեդալ և պատվավոր դոկտորի համար նախատեսված արձաթաճույլ մատանի՝ ԵՊՀ խորհրդանիշով։

(Տե՛ս Գոնսալո Գուարչը՝ ԵՊՀ պատվավոր դոկտոր,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Gonzalo-Guarch-YSU-Honorary-Doctor>,

մուտք՝ 20.06.2019)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է առակա ուսուցման 4227 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Մաթեմատիկայի և մեխանիկայի՝ 152 բակալավր, 54 մագիստրոս, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 188 բակալավր, 28 մագիստրոս, Ֆիզիկայի՝ 96 բակալավր, 36 մագիստրոս, Ռադիոֆիզիկայի՝ 93 բակալավր, 35 մագիստրոս, Դեղագիտության և քիմիայի՝ 111 բակալավր, 75 մագիստրոս, Կենսաբանության՝ 101 բակալավր, 80 մագիստրոս, Աշխարհագրության և երկրաբանության՝ 180 բակալավր, 65 մագիստրոս, Պատմության՝ 229 բակալավր, 90 մագիստրոս, Միջազգային հարաբերությունների՝ 280 բակալավր, 118 մագիստրոս, Տնտեսագիտության և կառավարման՝ 256 բակալավր, 81 մագիստրոս, Փիլիսոփայության և հոգեբանության՝ 104 բակալավր, 56 մագիստրոս, Սոցիոլոգիայի՝ 95 բակալավր, 37 մագիստրոս, Հայ բանասիրության՝ 183 բակալավր, 60 մագիստրոս, Ժուռնալիստիկայի՝ 74 բակալավր, 27 մագիստրոս, Ռուս բանասիրության՝ 94 բակալավր, 27 մագիստրոս, Ռոմանագերմանական բանասիրության՝ 495 բակալավր, 118 մագիստրոս, Արևելագիտության՝ 124 բակալավր, 32 մագիստրոս, Իրավագիտության՝ 153 բակալավր, 47 մագիստրոս, Աստվածաբանության՝ 58 բակալավր, 19 մագիստրոս, ՏՏԿՀ կենտրոն՝ 20 մագիստրոս, ԵՌԿ կենտրոն՝ 26 մագիստրոս, Մասս մեդիայի գիտակրթական կենտրոն՝ 24 մագիստրոս, Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ՝ 6 մագիստրոս:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2015-2016 ուստարվա գործունեություն, Երևան, 2016, էջ 53)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է հեռակա ուսուցման բակալավրիատի 543 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 14, Ֆիզիկայի՝ 2, Ռադիոֆիզիկայի՝ 6, Դեղագիտության և քիմիայի 48, Կենսաբանության՝ 17, Աշխարհագրության և երկրաբանության՝ 59, Պատմության՝ 57, Միջազգային հարաբերությունների՝ 88, Տնտեսագիտության և կառավարման՝ 42,

Փիլիսոփայության և հոգեբանության՝ 31, Սոցիոլոգիայի՝ 7, Հայ բանասիրության՝ 30, Ժուռնալիստիկայի՝ 16, Ռուս բանասիրության՝ 9, Ռումնագերմանական բանասիրության՝ 53, Իրավագիտության՝ 54, Աստվածաբանության՝ 10:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2015-2016
ուստարվա գործունեություն, Երևան, 2016, էջ 54)

հունիս – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը տալիս է առկա ուսուցման շրջանավարտներ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Բնական գիտությունների՝ 13, Հումանիտար գիտությունների՝ 89, Տնտեսագիտության՝ 53, Կիրառական արվեստի՝ 34:

Հեռակա ուսուցման շրջանավարտների թիվը 161 էր:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2015-2016
ուստարվա գործունեություն, Երևան, 2016, էջ 415, 418, 425, 427, 430)

3 հունիսի – ԵՊՀ-ում մեկնարկեց Իմամ Խոմեյնու մահվան 27-րդ տարելիցին նվիրված հայ-իրանական միջազգային գիտաժողովը: ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության նախաձեռնած «Իմամ Խոմեյնու գաղափարների ու տեսակետների վերլուծությունը» խորագրով գիտաժողովին ներկա էին ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան Գուրգեն Մելիքյանը, Իրանագիտության ամբիոնի վարիչ Վարդան Ոսկանյանը, ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) արտակարգ և լիազոր դեսպան Սեյեդ Քազեմ Սաջադին, Իրանի պետական բարեգործական (Օղաֆ) հիմնադրամի նախագահ Ալի Մոհամադիի Սիրաֆին, համալսարանականներ, հյուրեր և ԻԻՀ դեսպանատան ներկայացուցիչներ:

(Տե՛ս Հայ-իրանական գիտաժողովը նվիրված էր Իմամ Խոմեյնու գաղափարախոսությանը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝
<http://ysu.am/news/hy/Armenian-Iranian-conference-was-dedicated-to-Imam-Khomeini>, մուտք՝ 20.06.2019)

7 հուլիսի – Տեղի ունեցավ ԵՊՀ գիտխորհրդի նիստը, որում հաս-

տատվեցին բուհի՝ մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքն ու բովանդակությունը: Այն նախատեսում էր 2016-2017 ուստարվա համար վերանայել մագիստրատուրայի, իսկ 2017-2018 ուստարվա ընթացքում՝ բակալավրիատի կրթական ծրագրերը:

«Ըստ ներկայացված փաստաթղթի՝ մագիստրատուրայի 1-ին կիսամյակը բաղկացած է միայն ընդհանուր և ընդհանուր մասնագիտական դասընթացներից, 2-րդ կիսամյակը բաղկացած է պարտադիր մասնագիտական դասընթացներից, 3-րդը՝ կամընտրական դասընթացներից, իսկ վերջինն ամբողջությամբ հետազոտական է: Հետազոտական կրթամասում մնացել են գիտական սեմինարը (4 կիսամյակ), մասնագիտական պրակտիկան և թեզը», - փոփոխություններից հիմնականները նշեց ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանը:

Նույն նիստում ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2014-2015 ուստարվա հարցումների արդյունքները դարձյալ ներկայացրեց պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանը: 2014 թ. հարցմանը մասնակցել էր 3496 (71.7 %), իսկ 2015 թ.՝ 2594 (81.5 %) շրջանավարտ: Արդյունքների վերլուծությունը ցույց էր տալիս, որ ընդհանուր առմամբ շրջանավարտները գոհ էին ստացած կրթությունից, և նրանց գերակշիռ մեծամասնությունը իր ծանոթներին խորհուրդ կտար դիմելու ԵՊՀ:

(Տես Վերանայվել է ԵՊՀ մագիստրոսի կրթական ծրագիրը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Master-s-program-has-been-revised>, մուտք՝ 05.07.2019)

25 օգոստոսի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում մեկնարկեց

«Հայկական աշխարհը համացանցում» խորագրով միջազգային երկօրյա գիտաժողովը: ՀՀ սփյուռքի նախարարության և ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համատեղ ջանքերով, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի հետ համագործակցությամբ կազմակերպված գիտաժո-

ղովը համախմբել էր Հայաստանի և Սփյուռքի հայագիտական կենտրոնների ներկայացուցիչներին:

(Տե՛ս Հայաստանն ու Սփյուռքը մեկ հարթակում,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Conference-at-YSU-IAS>, մուտք՝ 20.06.2019)

14 սեպտեմբերի – ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետում տեղի ունեցավ հանդիպում գերմանացի հայտնի PR մասնագետ, ճառագիր (Speechwriter), ազգությամբ հայ Վազրիկ Բազիլի հետ: Մասնակցում էին ոչ միայն ֆակուլտետի ուսանողներն ու դասախոսները, այլև ոլորտի մասնագետներ, որոնց հետաքրքրում էր PR-ի և հաղորդակցության եվրոպական փորձը:

(Տե՛ս PR և հաղորդակցություն. գերմանական փորձը Հայաստանում,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Vazrik-Bazil-at-YSU>, մուտք՝ 19.06.2019)

16 սեպտեմբերի – ԵՊՀ Պալեանների անվան դաշինքում պետհամալսարանի դասախոսներին և ուսանողներին հյուրընկալվել էին «Россия 24», «Первый канал», «НТВ», «РЕН ТВ» և մի շարք այլ հեռուստաընկերությունների ներկայացուցիչներ, ովքեր Հայաստան էին այցելել «Տեֆի-համագործակցություն» 6-րդ միջազգային հեռուստատեսային փառատոնի շրջանակներում:

(Տե՛ս Հեղինակավոր փառատոնի մասնակիցներն այցելեցին Մայր բուհ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Festival-participants-at-YSU>, մուտք՝ 07.07.2019)

19 սեպտեմբերի – Երևանի «Անի Պլազա» հյուրանոցում մեկնարկեց ԱՊՀ երկրների «Ձուլ-ժել-2016»⁴⁸ 4-րդ միջազգային հնգօրյա գիտաժողովը, որը կազմակերպել էր ԵՊՀ ղեղագիտության և քիմիայի ֆակուլտետի անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնը: Գիտաժողովը նվիրված էր ժամանակակից նյութագիտության առավել արագ զարգացող և հեռանկարային բնագավառներից մեկին՝ «Ձուլ-ժել» սինթեզին, ինչպես նաև օրգանական միացությունների, գործառնության նյութերի և հիբրի-

դային դիսպերսիաների ուսումնասիրությանը: Հայաստանի, Ռուսաստանի, Բելառուսի, Ուկրաինայի, Վրաստանի, Ֆրանսիայի, Սլովակիայի և Լեհաստանի գիտնականներին ողջունեց ԵՊՀ դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի պրոֆեսոր Համբարձում Խաչատրյանը:

(Տե՛ս «Զուլ-ժել» նոր խոսք ժամանակակից քիմիայի ոլորտում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Sol-Gel-4th-international-conference>, մուսք՝ 20.06.2019)

20 սեպտեմբերի – ԵՊՀ-ում էր հյուրընկալվել ՀՀ-ում Վենեսուելայի գործերի ժամանակավոր հավատարմատար Ալվարո Սանչես Կորդերոն:

(Տե՛ս Ալվարո Սանչես Կորդերո. «Մեր ժողովուրդներն իրար լավ ծանոթ չեն», տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Venezuelan-Charge-d-Affaires-to-the-RA-Alvaro-Sanchez-Cordero-visited-YSU>, մուսք՝ 19.06.2019)

22 սեպտեմբերի – ԵՊՀ գիտական խորհրդի դահլիճում տեղի ունեցավ «DOC MEN» ծրագրի շրջանակներում կազմակերպված աշխատանքային քննարկում:

ԵՊՀ-ի մասնակցությամբ սա «Էրասմուս+»-ի առաջին ծրագիրն էր: Այն նվիրված էր միկրոէլեկտրոնիկայի գծով կրթական ծրագրերի և կրթական մոդուլների զարգացմանը գործընկեր համալսարաններում:

(Տե՛ս Մայր բուհում մեկնարկեց «Էրասմուս+»-ի նոր ծրագիրը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Erasmus-plus> մուսք՝ 19.06.2019)

23 սեպտեմբերի – ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ղեկավարության, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ) և Օլդենբուրգի Կարլ ֆոն Օսեցկու անվան համալսարանի տնտեսագիտական կրթության ինստիտուտի նախաձեռնությամբ կայացավ «Համակարգված և կայուն էներգաարդյունավետություն Հայաստանում-Միներ-

գիա» նախագծի եզրափակիչ սեմինարը:

(Տե՛ս Էներգաարդյունավետության բարձրացման հարցերն ակտուալ են, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Energy-efficiency-issues-are-in-focus>, մուտք՝ 05.07.2019)

24 սեպտեմբերի – ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչության նախաձեռնությամբ ուսուցիչների վերապատրաստման ծրագրի շրջանակում Մայր բուհ այցելեց Արցախի Շոշ գյուղի Սարգիս Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոցի ուսուցչական անձնակազմը:

(Տե՛ս Արցախի ուսուցիչները Մայր բուհում էին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Artsakh-tutors-visited-YSU>, մուտք՝ 20.06.2019)

3 հոկտեմբերի – ԵՊՀ ռեկտորի աշխատասենյակում Մայր բուհի և Ուրուգվայի համալսարանի միջև համագործակցության պայմանագիր կնքվեց:

(Տե՛ս ԵՊՀ-ն և Ուրուգվայի համալսարանն այսուհետ գործընկերներ են, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Cooperation-with-Uruguay-University>, մուտք՝ 19.06.2019)

3 հոկտեմբերի – ԵՊՀ-ում տեղի ունեցավ «Թուրքմենստան. բարգավաճման և հետևողական զարգացման 25 տարի» խորագրով միջազգային գիտաժողովը: Այն բացեց և ողջույնի խոսքով հանդես եկավ ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Արամ Սիմոնյանը: Ելույթ ունեցան ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանը, ՀՀ-ում Թուրքմենստանի արտակարգ և լիազոր դեսպան Մուհամեդնիազ Մաշալովը, Թուրքմենստանում ՀՀ նախկին արտակարգ և լիազոր դեսպան Արամ Գրիգորյանը, Թուրքմենստանի Մախտումկուլիի անվան պետական համալսարանի հիդրոմետեորոլոգիայի ամբիոնի վարիչ Գ. Խամբասը, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ալեքսանդր Սաֆարյանը: Գիտաժողովին ներկա էին նաև ՀՀ-ում ՌԴ ար-

տակարգ և լիազոր դեսպան Իվան Վոլինկինը, ՀՀ-ում Ղազախստանի արտակարգ և լիազոր դեսպան Թիմուր Ուրազակը, դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ, մշակույթի ճանաչված գործիչներ, ԵՊՀ և հայաստանյան այլ բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, Սիջազգային հարաբերությունների և Արևելագիտության ֆակուլտետների մագիստրատուրայի և բակալավրիատի ուսանողներ:

(Տե՛ս Հայ-թուրքմենական համագործակցության հեռանկարները, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Armenian-Turkmen-cooperation>, մուտք՝ 20.06.2019)

5 հոկտեմբերի – ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետում էին հյուրընկալվել Գերմանիայից ժամանած մի խումբ գիտնականներ, կրթության ոլորտի ներկայացուցիչներ, քաղաքական գործիչներ:

(Տե՛ս Գերմանական պատվիրակությունն այցելեց Աստվածաբանության ֆակուլտետ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/German-delegation-at-Faculty-of-Theology>, մուտք՝ 20.06.2019)

12 հոկտեմբերի – Մայր բուհում տեղի ունեցավ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի հիմնադրման 95-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումը: Ֆակուլտետի մանկավարժության կաբինետը անվանակոչվեց վաստակաշատ գիտնական, մանկավարժության ամբիոնի հիմնադիր, դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Էդիլյանի անվամբ:

(Տե՛ս ԵՊՀ մանկավարժության ամբիոնը 95 տարեկան է, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Chair-of-pedagogy-is-95-years-old>, մուտք՝ 20.06.2019)

12 հոկտեմբերի – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում տեղի ունեցավ հանդիպում Արցախի հերոս, գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյանի (Կոմանդոս) հետ:

(Տե՛ս Ապագա միջազգայնագետները հանդիպեցին Արցախի հերոսի հետ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Commandos-at-YSU>, մուտք՝ 20.06.2019)

20 հոկտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում ԵՊՀ ռեկտորը Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի տնօրեն Վիկտոր Մատվենին հանձնեց ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման հավաստագիրն ու ԵՊՀ ոսկե մեդալը՝ գիտության զարգացման և ՌԴ-ի ու ՀՀ-ի միջև գիտական կապերի ամրապնդման համար:

(Տե՛ս ԵՊՀ պատվավոր դոկտորների թիվը մեկով ավելացավ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Viktor-Matveyev-YSU-honorary-doctor>, մուտք՝ 20.06.2019)

25 հոկտեմբերի – ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը հյուրընկալել էր Ֆրանկոֆոնիայի համալսարանական ասոցիացիայի (AUF) Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակի տնօրեն Մոհամեդ Կետատանին՝ քննարկելու Ֆրանկոֆոնիայի բնագավառում համագործակցության նոր հեռանկարները:

(Տե՛ս Ֆրանկոֆոնիան՝ համալսարանական կրթության զարգացման նոր խթան, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Francophonie-for-education>, մուտք՝ 19.06.2019)

25 հոկտեմբերի – ԵՊՀ պատմության ֆակուլտետի մեծ դահլիճում տեղի ունեցավ «Սողոմոն Թեհլերյանի աջակից ու մարտընկեր՝ Հակոբ Զորյան» խորագրով ցերեկույթը: Սիջոցառումը կազմակերպել էին Պատմության ֆակուլտետը, «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության սկումբը, «Վան-Վասպուրական» հայրենակցական միությունը:

(Տե՛ս «Ովքե՞ր էին Սողոմոն Թեհլերյանի մտերիմները». Հակոբ Զորյան, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Military-Friend-of-Soghomon-Tehleryan-Hakob-Zoryan>, մուտք՝ 20.06.2019)

8 նոյեմբերի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված Թուրքմենստանի անկախության 25-ամյակին: Այն կազմակերպել էին ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետը, ԵՊՀ միջազգային համագործակցության վարչությունը և ՀՀ-ում Թուրքմենստանի դեսպանությունը: Ներկա էին ինչպես դեսպանության ղիվանագիտական կորպուսի ներ-

կայացուցիչներ՝ ի դեմս դեսպան Մուհամեդնիազ Մաշալովի, այնպես էլ Հայաստանում հավատարմագրված այլ դեսպաններ, պատվիրակներ, ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ և ուսանողներ:

(Տե՛ս Թուրքմենստանի 25-ամյակը նշվում է մաս Մայր բուհում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/25th-anniversary-of-Turkmenistan>, մուտք՝ 20.06.2019)

10 նոյեմբերի – ԵՊՀ-ում կայացավ գերժամանակակից տեխնիկայով հագեցած և «IBM» տեխնոլոգիական լուծումներով համալրված «ISTC» ինովացիոն լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի բացման արարողությունը:

Ներկա էին ՀՀ կապի, տրանսպորտի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը, ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ռիչարդ Միլսը, «IBM» համալսարանների հետ հարաբերությունների տարածաշրջանային ղեկավար Սերգեյ Բելովը, ԵՊՀ ղեկավարության, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ՄՁԳ), ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտի մի շարք ներկայացուցիչներ:

(Տե՛ս Տեղի ունեցավ ինովացիոն լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի պաշտոնական բացումը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/YSU-ISTC-opening>, մուտք՝ 20.06.2019)

16 նոյեմբերի – ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում կազմակերպվել էր աշխատանքային խորհրդակցություն. նպատակն էր քննարկել ԵՊՀ-ի և Բռնոյի տեխնոլոգիական համալսարանի միջև կնքված համագործակցության իրականացման ուղիները:

(Տե՛ս Համագործակցություն կծավալվի ատոմային էներգետիկայի բնագավառում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Cooperation-with-Brno-University-of-Technology>, մուտք՝ 20.06.2019)

18 նոյեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում «ՆԱՏՕ-ի շաբաթ» միջոցառումների շրջանակում համալսարանական-

ների հյուրն էր ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի փոխօգնական Ջեյմի Շինը: ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության կազմակերպած հանդիպմանը մասնակցում էին նաև ՀՀ-ում ԱՄՆ-ի և Գերմանիայի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպաններ Ռիչարդ Սիլսն ու Մաթիաս Զիպերը:

(Տե՛ս «ՆԱՏՕ-ի շաբաթ» միջոցառումների շաբթը ամփոփեց իր աշխատանքները, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/NATO-week>, մուտք՝ 20.06.2019)

28 նոյեմբերի – ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում դասախոսությանը հանդես եկավ մորվեզացի պրոֆեսոր Նիլս Կորե Բիրկե-լանդը:

(Տե՛ս Դասախոսության քեման մանրէաբանության արդի խնդիրներն են, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Modern-issues-of-microbiology>, մուտք՝ 19.06.2019)

29 նոյեմբերի – ԵՊՀ ռեկտորը, պրոռեկտորները, Ֆիզիկայի, Ռադիոֆիզիկայի և Արևելագիտության ֆակուլտետների ներկայացուցիչները հյուրընկալել էին Իրանի Իսլամական Հանրապետության ժամանած պատվիրակությանը:

(Տե՛ս Նանոտեխնոլոգիաների ոլորտում մոր համագործակցություն կլինի, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Cooperation-in-the-field-of-nanotechnology>, մուտք՝ 19.06.2019)

5 դեկտեմբերի – ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետ հանդիպեց ՀՀ-ում Արգենտինայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Գոնզալո Ուրրիոլաբեխիտիան:

(Տե՛ս Ապագա լեզվաբաններին հյուրընկալվել էր Արգենտինայի դեսպանը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Ambassador-of-Argentina-visited-YSU>, մուտք՝ 07.07.2019)

15 ղեկսեմբերի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում մեկնարկեց «Իրան-Հայաստան-Վրաստան. խաղաղ հարևանության և զարգացման տեսլականներ» խորագրով միջազգային գիտաժողովը: ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական կյոռ սեղան հիմնադրամի և «Հակամարտությունների և խաղաղության հետազոտման հայկական ասոցիացիա» ՀԿ-ի նախաձեռնությամբ կազմակերպված միջազգային գիտաժողովի հիմնական նպատակն էր քննարկել տարածաշրջանային հիմնախնդիրները և դրանց ազդեցությունը ՀՀ արտաքին քաղաքականության վրա, ինչպես նաև ամրապնդել հարևան պետությունների միջև տնտեսական, ռազմաքաղաքական և մշակութային կապերը:

(Տե՛ս Իրան-Հայաստան-Վրաստան կապերն ամրապնդում են, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Iran-Armenia-Georgia-visions-for-peaceful-neighborhood-and-development>, մուսք՝ 20.06.2019)

21 ղեկսեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանդիպում ՌԴ մարդու իրավունքների հանձնակատար Տատյանա Մոսկալկովայի հետ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի նախաձեռնած հանդիպմանը ներկա էին ԵՊՀ ղեկտորը, ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը, Իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ և ուսանողներ:

(Տե՛ս Համալսարանականների հյոռն էր Տատյանա Մոսկալկովան, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Tatyana-Moskalkova-visited-YSU>, մուսք՝ 20.06.2019)

23 ղեկսեմբերի – ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի տարեվերջյան նիստը, որը նախագահում էր ՀՀ նախագահ, ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանը:

(Տե՛ս Կայացավ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի հերթական նիստը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Session-of-Board-of-Trustees-2016>, մուսք՝ 20.06.2019)

26 դեկտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի միջև կնքվեց համագործակցության հուշագիր: Այն ստորագրեցին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան Գագիկ Ղազինյանն ու ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը: Ներկա էին նաև ԵՊՀ ռեկտորն ու Իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ:

(Տե՛ս Նոր համագործակցություն իրավագիտության ոլորտում,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Memorandum-between-YSU-Faculty-of-Law-and-RA-Human-Rights-Defender>, մուտք՝ 19.06.2019)

27 դեկտեմբերի – ԵՊՀ ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ Մայր բուհի և Իջևանի մասնաճյուղի շուրջ 50 ուսանողներ այցելեցին Տավուշի մարզի սահմանամերձ Բերքաբեր գյուղ:

(Տե՛ս Համալսարանականներն այցելեցին սահմանամերձ գյուղ,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Visit-to-Berkaber>,
մուտք՝ 19.06.2019)

2017

2016-2017 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանում դասավանդում էին 211 պրոֆեսորներ, 551 դոցենտներ, 345 ասիստենտներ, 314 դասախոսներ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2017-2018 ուստարվա գործունեություն, Երևան, 2018, էջ 18)

2016-2017 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանի առկա ուսուցման բակալավրիատում սովորում էր 11249 ուսանող, մագիստրատուրայում՝ 1747 ուսանող, ասպիրանտուրայում՝ 120 ասպիրանտ, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 3101 ուսանող, մագիստրատուրայում՝ 808 ուսանող, ասպիրանտուրայում՝ 320 ասպիրանտ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2017-2018 ուստարվա գործունեություն, Երևան, 2018, էջ 52)

հունվար – Երևանի պետական համալսարանը տալիս է հեռակա ուսուցման մագիստրատուրայի 320 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Աշխարհագրության և երկրաբանության՝ 14, Պատմության՝ 19, Միջազգային հարաբերությունների՝ 54, Տնտեսագիտության և կառավարման՝ 96, Փիլիսոփայության և հոգեբանության՝ 25, Սոցիոլոգիայի՝ 7, Հայ բանասիրության՝ 33, Ժուռնալիստիկայի՝ 11, Ռոմանագերմանական բանասիրության՝ 12, Իրավագիտության՝ 49:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2017-2018 ուստարվա գործունեություն, Երևան, 2018, էջ 59)

2016-2017 ուսումնական տարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում (առկա ուսուցում) սովորող ուսանողների թիվը, ըստ ֆակուլտետների,

հետևյալն էր՝ Բնական գիտությունների՝ 123, Հումանիտար գիտությունների՝ 331, Տնտեսագիտության՝ 144, Կիրառական արվեստի՝ 63: Հեռակա ուսուցման բաժնի ուսանողների թիվը 1044 էր:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2016-2017 ուստարվա գործունեություն, Երևան, 2017, էջ 393, 395, 401, 403)

15 փետրվարի – ԵՊՀ հյուրն էր ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը: Նախքան ուսանողներին հյուրընկալվելը վարչապետը ԵՊՀ գիտիտրիբիի նիստերի դահլիճում հանդիպեց բուհի ռեկտորատի և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչների հետ: Իսկ ուսանողների հետ հանդիպումն անցկացվեց ԵՊՀ մեծ դահլիճում:

(Տե՛ս ՀՀ վարչապետը ԵՊՀ ուսանողների համար մրցույթ է հայտարարել, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/RA-Prime-Minister-Karen-Karapetyan-meet-with-YSU-students>, մուտք՝ 19.06.2019)

15 փետրվարի – ԵՊՀ Հովհաննես Աղամյանի անվան սրահում տեղի ունեցավ «Թվային տեխնոլոգիաների մասին» հեռավար դասախոսությունների շարքի առաջին հանդիպումը: Դասախոսությունը կազմակերպել էին ԵՊՀ ռեկտորատը, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետը և «Արփա» հիմնադրամը: Հեռավար դասախոսությունը վարում էր Հայաստանի ամերիկյան համալսարանի նախկին նախագահ, դոկտոր, պրոֆեսոր Բրյուս Բողոսյանը:

(Տե՛ս Դասախոսությունը թվային տեխնոլոգիաների մասին էր, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Lecture-on-Digital-Technologies>, մուտք՝ 19.06.2019)

16 փետրվարի – ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հյուրն էր Ադրբեջանի քաղաքացի, թալիշական շարժման անդամ, «Թալիշի Սադո» թերթի թղթակից Շահին Միրզոևը: Նա տեղաբնիկ ժողովուրդների հանդեպ իրականացվող կողմնակալ քաղաքականության,

ճնշումների և մարդու իրավունքների ոտնահարման պատճառով ժամանակավոր ապաստան էր ստացել Հայաստանի Հանրապետությունում:

(Տե՛ս Թալիշ լրագրող Շահին Միրզոյևն այցելեց ԵՊՀ տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Talysh-social-and-political-activist-Shahin-Mirzoyev-visited-YSU>, մուտք՝ 07.07.2019)

4 մարտի – ԵՊՀ-ում և ՀՀ բոլոր մարզերում անցկացվեց դպրոցականների ամենամյա 9-րդ օլիմպիադայի 1-ին փուլը:

2009 թվականից անցկացվող այս օլիմպիադայում դպրոցականներն իրենց ուժերը փորձեցին հանրակրթական 13 առարկաների գծով (մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, ինֆորմատիկա, կենսաբանություն, աշխարհագրություն, հայ ժողովրդի պատմություն, հայոց լեզու և գրականություն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ստեղծագործական աշխատանք):

(Տե՛ս «ԵՊՀ օլիմպիադա-2017»-ին մասնակցել է շուրջ 3000 աշակերտ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/YSU-Olympiad-2017>, մուտք՝ 20.06.2019)

10 մարտի – Հունաստանի արտաքին գործերի նախարար Նիկոս Կոցիասն այցելեց ԵՊՀ, հանդիպեց ուսանողների հետ, հանդես եկավ դասախոսությամբ և պատասխանեց նրանց հարցերին: Մայր բուհում նրան ուղեկցում էր իր հայաստանցի գործընկերը՝ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը: ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը նրան հանձնեց ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման հավաստագիրը՝ հասարակական և քաղաքական ասպարեզներում ակնառու նվաճումների, ՀՀ և Հունաստանի Հանրապետության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի համար:

(Տե՛ս Հունաստանի ԱԳ նախարարը՝ ԵՊՀ պատվավոր դոկտոր, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Visit-of-Nikos-Kotzias-to-YSU>, մուտք՝ 20.06.2019)

13 մարտի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում Միջազգային

իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) հետ համագործակցության շրջանակում Բոննի առաջին ատյանի դատարանի դատավոր Ալեքսանդր Ֆյուլինգը հանդես եկավ դասախոսությամբ:

(Տե՛ս Դատավորը ներկայացրեց պատիժ նշանակելու գերմանական փորձը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/The-German-experience-in-the-field-of-law>, մուտք՝ 22.06.2019)

17-19 մարտի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պատվիրակությունը, որի կազմում ընդգրկված էին ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գագիկ Ղազինյանը, ամբիոնի վարիչներ, պրոֆեսորներ Վահրամ Ավետիսյանը, Սամվել Դիլբանդյանը և դոցենտ Սերգեյ Մեդրյանը, այցելեց ԱրՊՀ: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և Արցախի պետական համալսարանի (ԱրՊՀ) միջև կնքվեց համագործակցության հուշագիր, որը նպաստելու է ԱրՊՀ-ում իրավաբանական կրթության կատարելագործմանը: Հուշագրի կնքմանը ներկա էր նաև ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը:

(Տե՛ս Մասնագիտական օգնություն Արցախի պետական համալսարանին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Memorandum-between-YSU-and-ASU>, մուտք՝ 20.06.2019)

30 մարտի – ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնում դասախոսությամբ հանդես եկավ Համբուրգի համալսարանի պրոֆեսոր Լյուդվիգ Պոլը:

(Տե՛ս Գերմանացի պրոֆեսորի դասախոսությունը արդի խոսակցական պարսկերենի մասին էր, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Lecture-by-German-professor>, մուտք՝ 22.06.2019)

31 մարտի – ԵՊՀ մեծ դահլիճում տեղի ունեցավ «ԵՊՀ օլիմպիադա-2017»-ի փակման և պարգևատրման հանդիսավոր արարողությունը: ՀՀ հանրակրթական դպրոցների 86 աշակերտներ ստա-

ցան 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի դիպլոմներ:

(Տե՛ս Ամփոփվեց «ԵՊՀ օլիմպիադա-2017»-ը,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ [http://ysu.am/news/hy/
Closing-ceremony-of-YSU-Olympiad-2017](http://ysu.am/news/hy/Closing-ceremony-of-YSU-Olympiad-2017), մուտք՝ 20.06.2019)

11 ապրիլի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողների հետ հանդիպեց Լեհաստանի երեխաների իրավունքների պաշտպան Մարեկ Սիխալակին:

(Տե՛ս Մարեկ Սիխալակ՝ «Երեխաների իրավունքները հնարած գաղափարներ չեն», տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Marek-Michalak-visited-YSU>,
մուտք՝ 20.06.2019)

13 ապրիլի – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում տեղի ունեցավ «Միջազգային ինտեգրման նոր եղանակները հետխորհրդային տարածքում» թեմայով հեռավար գիտաժողով: Այն կազմակերպվել էր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի ու ՌԴ Եկատերինբուրգ քաղաքի Հաղորդակցման ուղիների Ուրալի պետական համալսարանի նախաձեռնությամբ:

(Տե՛ս ԵՊՀ-ն ամրապնդում է համագործակցությունն իր գործընկերոջ հետ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Cooperation-with-partners-is-expanded>,
մուտք՝ 22.06.2019)

21 ապրիլի – ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի ու «Global Media Lab» կազմակերպության համագործակցության շրջանակում անցկացվեց կրթական ոչ ֆորմալ սեմինար:

(Տե՛ս «University Tour» նախագիծն անցկացվեց նաև Մայր բուհում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/University-tour-project-was-held-at-YSU>
մուտք՝ 22.06.2019)

25 ապրիլի – ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնում անցկացվեց «Սիրիայի քրդական բարբառները. ձևաբանական և բառապաշարի ընդհանուր ակնարկ» խորագրով դասախոսություն, որը վարում էր Բոննի համալսարանի պրոֆեսոր Սեբաստիան Հայնեն:

(Տե՛ս Ապագա իրանագետների ուշադրության կենտրոնում քրդական բարբառներն են, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Professor-Sebastian-Heine-at-YSU> մուտք՝ 22.06.2019)

25 ապրիլի – ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում տեղի ունեցավ հանդիպում ստամբուլահայ գրող, հրապարակախոս, գրականագետ, «Ակօս» թերթի նախկին խմբագիր Վիրջիհան Զիֆիօղլուի հետ:

Հանդիպումը կազմակերպվել էր ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ՈՒԳԸ-ի կողմից և նվիրված էր Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցին:

(Տե՛ս Ապագա բանասերների հյուրը Վիրջիհան Զիֆիօղլուն էր, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Virjihan-Zifioghlu-visited-YSU>, մուտք՝ 05.07.2019)

26 ապրիլի – Մայր բուհում Հնդկաստանի փոխնախագահ Մոհամմադ Համիդ Անսարիին շնորհվեց ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում: Պաշտոնական այցով ՀՀ-ում գտնվող Մոհամմադ Համիդ Անսարիին ուղեկցում էին ՀՀ ԿԳ նախարար Լևոն Սկրտչյանն ու ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը:

Հնդկաստանի փոխնախագահի կենսագրությունից որոշ մանրամասներ ներկայացրեց ԵՊՀ պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը՝ ընդգծելով, որ հայ-հնդկական բարեկամությունն ու տարբեր ոլորտներում ծավալվող համագործակցությունը հազարամյակների պատմություն ունեն:

(Տե՛ս Հնդկաստանի փոխնախագահը՝ ԵՊՀ պատվավոր դոկտոր, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Mohammad-Hamid-Ansari-visited-YSU>, մուտք՝ 07.07.2019)

11 մայիսի – ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի Եգիպտոսի անվան լսարանում Հայաստանում Իրաքի Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Հայդար Ռամզի ալ-Սումեյդային հանդիպեց արաբագիտության ամբիոնի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ:

Հայաստանում Իրաքի Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատարը հանդես եկավ Իրաքի Հանրապետության պատմության և արտաքին քաղաքականության մասին ընդարձակ դասախոսությամբ:

(Տե՛ս Իրաքի դիվանագետը հանդիպեց համալսարանականների հետ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Diplomat-from-Iraq-visited-YSU>, մուտք՝ 07.07.2019)

16 մայիսի – Շվեդիայի Ստոկհոլմ քաղաքում մեկնարկեց Եվրոպական համալսարանների հրատարակչությունների ասոցիացիայի առաջին կոնֆերանս-աշխատաժողովը, որին մասնակցում էր նաև ԵՊՀ հրատարակչությունը:

(Տե՛ս ԵՊՀ հրատարակչությունը՝ ԵՀՀԱ կոնֆերանսի մասնակից, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/YSU-Publishing-House-at-AEUP-conference>, մուտք՝ 20.06.2019)

17 մայիսի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ «Եվրասիական ինտեգրացիան Ռուսաստանի և Հայաստանի համար աշխարհաքաղաքական համատեքստում. մարտահրավերներ և հեռանկարներ» խորագրով գիտաժողովը:

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ու «Ինտեգրացիա և զարգացում» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ կազմակերպված գիտաժողովի նպատակն էր քննարկել ՀՀ-ի և ՌԴ-ի մասնակցությունը Եվրասիական ինտեգրման աշխարհաքաղաքական գործընթացներին:

(Տե՛ս Քննարկման առանցքում եվրասիական ինտեգրման մարտահրավերներն ու հեռանկարներն են, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Eurasian-integration-for-Armenia-and-Russia>, մուտք՝ 22.06.2019)

20 մայիսի – ԵՊՀ-ում կայացավ «Անվտանգությունը Հարավային Կովկասում չճանաչված պետությունների քաղաքական ինստիտուտների զարգացման համատեքստում» թեմայով միջազգային կլոր սեղան-քննարկում:

ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության կազմակերպած քննարկմանը մասնակցում էին Հայաստանի, Արցախի, Աբխազիայի, Ռուսաստանի քաղաքական փորձագետներն ու վերլուծաբանները, ինչպես նաև պետհամալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ուսանողներ:

(Տե՛ս Չճանաչված պետությունների խնդիրները տարածաշրջանային անվտանգության համատեքստում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Security-in-the-South-Caucasus-in-the-context-of-the-development-of-political-institutions-of-the-unrecognized-states>, մուտք՝ 07.07.2019)

22 մայիսի – ԵՊՀ Ե. Չարենցի անվան դահլիճում ամփոփվեցին Ռուս բանասիրության ֆակուլտետի մախաձեռնությամբ կազմակերպված ռուսաց լեզվի օլիմպիադայի արդյունքները:

(Տե՛ս Համալսարանականները հաջող արդյունքներ են գրանցել օլիմպիադայում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Good-results-at-Olympiad>, մուտք՝ 20.06.2019)

24 մայիսի – ԵՊՀ ռեկտորն իր աշխատասենյակում ընդունեց գերմանական պատվիրակության անդամներին՝ ի դեմս Լեփսիուսի տուն-թանգարանի տնօրեն Ռոլֆ Հոսֆելդի, Բրանդենբուրգի գիտության և մշակույթի նախարար Մարտինա Մյունխի, նախարարության միջազգային և ԵՄ գործերի շտաբի ղեկավար Գունդելա Հերվիգի, նախարարության աշխատակցուհի Էլկե Կիեպերի, ինչպես նաև Հայաստանում ԳԴՀ ղեկավար Մատթիաս Կիեպերի: ԵՊՀ ռեկտորը և Պոտսդամի Լեփսիուսի տուն-թանգարանի գիտական ղեկավար Ռոլֆ Հոսֆելդը ստորագրեցին մասնագիտական համագործակցության օժանդակության պայմանագիր:

(Տե՛ս ԵՊՀ-ն համագործակցության մոր հուշագիր է կնքել, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Cooperation-with-Potsdam-Lepsius-Museum>, մուտք՝ 20.06.2019)

26 մայիսի – ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետն ու Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնը բացեցին հեռակոնֆերանսների և հեռաուսուցման լսարան: ԵՄ «Erasmus+» ծրագրի՝ միկրոէլեկտրոնիկայի գծով կրթական ծրագրերի և կրթական մոդուլների զարգացմանն ուղղված «DOC MEN» նախագծի շրջանակում նորագույն սարքավորումներով կահավորված լսարանի բացմանը հեռավար մասնակցում էին նաև արտասահմանյան կրթական կառույցների ներկայացուցիչները:

(Տե՛ս Նոր լսարան հեռակոնֆերանսների և հեռաուսուցման համար, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/New-classroom-for-distance-learning>, մուտք՝ 22.06.2019)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է առկա ուսուցման 3278 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Մաթեմատիկայի և մեխանիկայի՝ 110 բակալավր, 22 մագիստրոս, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 139 բակալավր, 16 մագիստրոս, Ֆիզիկայի՝ 53 բակալավր, 11 մագիստրոս, Ռադիոֆիզիկայի՝ 49 բակալավր, 20 մագիստրոս, Քիմիայի՝ 12 բակալավր, Կենսաբանության՝ 106 բակալավր, 15 մագիստրոս, Աշխարհագրության և երկրաբանության՝ 151 բակալավր, 37 մագիստրոս, Պատմության՝ 207 բակալավր, 67 մագիստրոս, Սիջազգային հարաբերությունների՝ 248 բակալավր, 69 մագիստրոս, Տնտեսագիտության և կառավարման՝ 204 բակալավր, 42 մագիստրոս, Փիլիսոփայության և հոգեբանության՝ 90 բակալավր, 28 մագիստրոս, Սոցիոլոգիայի՝ 107 բակալավր, 11 մագիստրոս, Հայ բանասիրության՝ 159 բակալավր, 30 մագիստրոս, Ժողովրդագրության՝ 66 բակալավր, 16 մագիստրոս, Ռուս բանասիրության՝ 71 բակալավր, 11 մագիստրոս, Ռոմանագերմանական բանասիրության՝ 428 բակալավր, 42 մագիստրոս, Արևելագիտության՝ 135 բակալավր, 30 մագիստրոս, Իրավագիտության՝ 148 բակալավր, 29 մագիստրոս, Աստվածաբանության՝ 59 բակալավր, 11 մագիստրոս, Ֆարմացիայի ինստիտուտ՝ 61 բակալավր, 102 մագիստրոս, ՏՏԿՀ կենտրոն՝

15 մագիստրոս, ԵՈՒ կենտրոն՝ 33 մագիստրոս, Մասս մեդիկայի կրթական կենտրոն՝ 9 մագիստրոս, Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ՝ 9 մագիստրոս:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2017-2018 ուստարվա գործունեություն, Երևան, 2018, էջ 58)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է հեռակա ուսուցման բակալավրիատի 926 շրջանավարտ. Մաթեմատիկայի և մեխանիկայի՝ 13, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 29, Ռադիոֆիզիկայի՝ 20, Քիմիայի՝ 5, Կենսաբանության՝ 27, Աշխարհագրության և երկրաբանության՝ 82, Պատմության՝ 84, Միջազգային հարաբերություններ՝ 151, Տնտեսագիտության և կառավարման՝ 77, Փիլիսոփայություն և հոգեբանության՝ 33, Սոցիոլոգիայի՝ 29, Հայ բանասիրության՝ 34, Ժուռնալիստիկայի՝ 50, Ռուս բանասիրության՝ 17, Ռոմանագերմանական բանասիրության՝ 140, Իրավագիտության՝ 83, Աստվածաբանության՝ 14, Ֆարմացիայի ինստիտուտ՝ 38:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2017-2018 ուստարվա գործունեություն, Երևան, 2018, էջ 59)

հունիս – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը տալիս է առկա ուսուցման շրջանավարտներ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Բնական գիտությունների՝ 21, Հումանիտար գիտությունների՝ 93, Տնտեսագիտության՝ 35, Կիրառական արվեստի՝ 15:

Հեռակա ուսուցման շրջանավարտների քիվը 251 էր:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2016-2017 ուստարվա գործունեություն, Երևան, 2017, էջ 393, 396, 401, 403, 407)

2 հունիսի – ԵՊՀ ռեկտոր Արամ Միմոնյանն ընդունեց չինական պատվիրակությանը, որի կազմում էին Նանկայի համալսարանի պրոռեկտոր, պրոֆեսոր Ժու Գուանգլեյը, համալսարանի օտար լեզուների քոլեջի պրոֆեսոր Յան Գուադոնգը, շրջանավարտների բաժնի տնօրեն Ջենգ Լիջիանը, ինչպես նաև ՀՀ-ում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) ար-

տակարգ և լիազոր դեսպան Թիան Էրլոնգը:

(Հայ-չինական համագործակցության նոր հեռանկարներ,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/New-prospects-of-Armenian-Chinese-cooperation> մուտք՝ 20.06.2019)

15 հունիսի – ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում կայացավ «Հայոց լեզու. Մաշտոցից մինչև մեր օրերը» խորագրով երիտասարդ գիտնականների դպրոցը: Ֆակուլտետի հայոց լեզվի պատմության ամբիոնի նախաձեռնությամբ և ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի հովանավորությամբ կազմակերպված միջոցառմանը ներգրավված էին հանրապետության տարբեր բուհերի, ինչպես նաև Արցախի, Վրաստանի, Սիրիայից Հայաստան ներգաղթած երիտասարդներ:

(Տե՛ս Քննակրվեցին հայոց լեզվին առնչվող հիմնահարցերը,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Issues-of-Armenian-Language-in-focus>, մուտք՝ 22.06.2019)

20-24 հունիսի – ԵՊՀ պատվիրակությունը մասնակցեց Մարտին Լյութերի անվան Հալլե-Վիտենբերգ համալսարանի 200-ամյակին նվիրված միջոցառումներին, ինչպես նաև ստորագրվեց համագործակցության 5-ամյա պայմանագիր:

(Տե՛ս ԵՊՀ-ն ամրապնդում է համագործակցությունն իր գործընկերների հետ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Cooperation-with-Martin-Luther-Halle-Wittenberg-University>, մուտք՝ 20.06.2019)

22 հունիսի – Տեղի ունեցավ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի՝ հարցման կարգով նիստ՝ օրակարգային երկու հարցերով: Առաջինը վերաբերում էր 2016 թ. ֆինանսական տարվա գործունեության ամփոփմանը, երկրորդը՝ ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետում «Միջմշակութային կրոնագիտական հետազոտությունների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծմանը:

Հոգաբարձուների խորհրդի անդամների քվեարկության ար-

դյունքներով որոշվեց հաստատել ներկայացված հաշվետվությունների նախագծերը և 2016 թվականի եկամուտների ու ծախսերի կատարողականի վերաբերյալ հաշվետվության համառոտ տարբերակը հրապարակել www.azdarar.am հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում:

(Տե՛ս ԵՊՀ-ն ամփոփել է 2016թ.-ի ֆինանսական գործունեությունը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Summary-of-2016-financial-year-at-YSU>, մուտք՝ 20.06.2019)

23 հունիսի – ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանն ընդունեց ՀՀ-ում Ինդոնեզիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան, պրոֆեսոր Յուդի Քրիսնանդին:

(Տե՛ս ԵՊՀ-ն կապեր է հաստատում Ինդոնեզիայի հետ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Delegation-from-Indonesia-at-YSU>, մուտք՝ 20.06.2019)

23 հունիսի – ԵՊՀ-ում մեկնարկեց «Կիսահաղորդչային միկրո- և մանոէլեկտրոնիկա» խորագրով միջազգային 11-րդ գիտաժողովը: ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի, ՀՀ ԳԱԱ-ի, «Սինոփսիս Արմենիա» ընկերության և «Բարվա» ինովացիոն կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպված միջոցառմանը մասնակցում էին հայաստանյան տարբեր բուհերի և գիտական կենտրոնների մասնագետներ, ինչպես նաև հյուրեր արտերկրից՝ Իտալիայից և Ռուսաստանի Դաշնությունից: Մայր բուհից ներկա էին ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը, ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ղեկան Խաչատուր Ներկարարյանը, ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս Էդվարդ Ղազարյանը և «Բարվա» ինովացիոն կենտրոնի ղեկավար Արամ Վարդանյանը:

(Տե՛ս Միջազգային գիտաժողովը համախմբել էր ոլորտի մասնագետներին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/11th-International-Symposium-on-Semiconductor-Micro-and-Nanoelectronics>, մուտք՝ 22.06.2019)

30 հունիսի – ԵՊՀ ռեկտորն ընդունեց Շանհայի մանկավարժական համալսարանի (Shanghai Normal University) ներկայացուցիչներին՝ ի դեմս Չինաստանի կոմունիստական կուսակցության կոմիտեի քարտուղար Թիանյոնգ Թենգի: Հանդիպման վերջում ԵՊՀ ռեկտորն ու Թիանյոնգ Թենգը համագործակցության հուշագիր կնքեցին:

(Տե՛ս Մայր բուհը նոր գործընկեր ունի,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Shanghai-Normal-University-YSU-new-partner>, մուտք՝ 20.06.2019)

3 հուլիսի – ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի և Բերգեմի համալսարանի երկարամյա համագործակցության շրջանակում ապագա կենսաբանները կրկին հնարավորություն ստացան ունկնդրելու կենսաբանության ոլորտում հայտնի պրոֆեսոր Նիլս Կորե Բիրկելանդին: Պրոֆեսորի դասախոսությունը մվիդված էր կյանքի ոչ նպաստավոր պայմաններում գոյատևող մանրէների խմբի՝ արքեների կենսաբազմազանությանը և հարմարվողական մեխանիզմներին:

(Տե՛ս Արդյունավետ փոխգործակցությունը շարունակվում է,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Nils-Kare-Birkeland-visited-YSU>, մուտք՝ 20.06.2019)

14 հուլիսի – ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանն ու գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանն ընդունեցին ՉԺՀ կրթաբոլակների հանձնաժողովի քարտուղարության ղեկավարի տեղակալ Վան Շենգանի գլխավորած պատվիրակությանը: Չինաստանից ժամանած հյուրերի գլխավոր նպատակներն էին կրթության ոլորտում ընդլայնել Հայաստանի ու Չինաստանի փոխգործակցության շրջանակը, քննարկել ՉԺՀ Կառավարության կողմից հատկացվող կրթաբոլակների ու փորձի փոխանակմանը առնչվող մի շարք հարցեր, ինչպես նաև հանդիպել Չինաստանում բարձ-

րագույն կրթություն ստացած հայաստանյան տարբեր բուհերի ուսանողների հետ: Այդ նպատակով Չինաստանի պատվիրակությունը ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնում հանդիպել էր չինական տարբեր բուհերում ուսանած շուրջ 10 ուսանողների հետ:

(Տե՛ս Հայ-չինական փոխգործակցությունն ընդլայնվում է, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Representatives-of-the-People-s-Republic-of-China-Scholarship-Commission-visited-YSU>, մուտք՝ 22.06.2019)

24 օգոստոսի – ԵՊՀ-ի և Թուրքմենստանի Մահբումկուլիի անվան պետական համալսարանի միջև համագործակցության նոր հուշագիր ստորագրվեց:

(Տե՛ս Հայ-թուրքմենական համագործակցությունը նոր փուլ է քսակոխում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Armenian-Turkmen-coopers-to-expand>, մուտք՝ 22.06.2019)

30 օգոստոսի – ԵՊՀ-ն և Իրանի Իսլամական Հանրապետության Փայամ-ե Նուր համալսարանը տեխնիկական և գիտահետազոտական համագործակցությունների փոխըմբռնման հուշագիր ստորագրեցին: Արարողությանը ներկա էին ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանն ու Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի վարիչ Վարդան Ոսկանյանը:

(Տե՛ս ԵՊՀ-ն ամրապնդում է համագործակցությունը իրանցի գործընկերների հետ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Cooperation-with-Iranian-specialists-expands>, մուտք՝ 22.06.2019)

18-22 սեպտեմբերի – ԵՊՀ-ում անցկացվեց «Գերխիտ աստղերի և ռելատիվիստական գրավիտացիայի արդի ֆիզիկա» խորագրով միջազգային գիտաժողովը: Գիտաժողովի ավարտից հետո հանրաճանաչ պրոֆեսորներին հյուրընկալեց ԵՊՀ գիտա-

կան քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը:

(Տե՛ս Գիտաժողովը համախմբել է ոլորտի առաջատար մասնագետներին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Conference-brought-together-specialists-of-the-field>, մուտք՝ 22.06.2019)

19 սեպտեմբերի – ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանն ընդունեց Նորվեգիայի արկտիկական համալսարանից (Տրոմսո) ժամանած պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա էին ՀՀ-ում և ՌԴ-ում Նորվեգիայի Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Լեյդուվ Ատլե Նամտվեդտը, ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը, ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության պետ Ալեքսանդր Մարգարովը, ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան Էմիլ Գևորգյանը, ինչպես նաև Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնի գիտական ղեկավար Սամվել Շուքրությանը: Հանդիպման ավարտին Արամ Սիմոնյանն ու Նորվեգիայի արկտիկական համալսարանի պրոռեկտոր Ռենչ Յակոբսենը համաձայնագիր ստորագրեցին և միմյանց հուշանվերներ փոխանցեցին:

(Տե՛ս ԵՊՀ-ն ու մորվեգական Տրոմսո համալսարանը համաձայնագիր են ստորագրել, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Agreement-between-YSU-and-Tromso-University>, մուտք՝ 22.06.2019)

19 սեպտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ գիտական խորհրդի անդամների հանդիպումը հայազգի պրոֆեսոր Խոսե Սարուխանի հետ: Նրան հանձնվեցին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման դիմումը և ԵՊՀ ոսկե մեդալը⁴⁹:

(Տե՛ս Խոսե Սարուխանին հանձնվեց ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման դիմումը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Jose-Sarukhan-YSU-honorary-doctor>, մուտք՝ 07.07. 2019)

25 սեպտեմբերի – ԵՊՀ-ում անցկացվեցին ատոմային էներգետիկայի բնագավառում հայ-ռուսական փոխգործակցության վերաբերյալ սեմինար և «ԴՅՄԻ-ը՝ որպես էներգիայի ստեղծման մշակույթ» խորագրով ցուցահանդես:

(Տե՛ս Ատոմային էներգետիկայի գիտական և գեղագիտական կողմերը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/-Rosatom-Corporation-s-TVEL-Delegation-at-YSU>, մուտք՝ 22.06.2019)

25-30 սեպտեմբերի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները դասախոսություններ կարդացին Արցախի պետական համալսարանում:

(Տե՛ս ԵՊՀ դասախոսները դասախոսություն են կարդացել ԱրՊՀ ուսանողների համար, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Lectures-for-ASU-students>, մուտք՝ 22.06.2019)

30 սեպտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԵԱՀԿ ԽՎՀ Հարավային Կովկասի հարցերով հատուկ ներկայացուցիչ Քրիստիան Վիգենինի հանդիպումը Մայր բուհի ուսանողների հետ:

(Տե՛ս «Մենք մեծ ջանքեր ենք ներդնում, որպեսզի կարողանանք խաղաղություն հաստատել հարևան երկրների միջև», տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Kristian-Vigenin-visited-YSU>, մուտք՝ 05.07.2019)

3 հոկտեմբերի – Ավստրիայի Հայ առաքելական եկեղեցական համայնքի մեծ դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ հրատարակչության հրատարակած գրքերի ցուցահանդեսը:

(Տե՛ս Մայր բուհի հրատարակած գրքերը ներկայացվում են Եվրոպայի հայ համայնքներում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Books-published-at-YSU-presented-for-Armenian-Diaspora>, մուտք՝ 22.06.2019)

5 հոկտեմբերի – ԵՊՀ 6-րդ մասնաշենքի դահլիճում Ֆլորենցիայի համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները Պատմության ֆակուլտետի դասախոսների և ԵՊՀ մի-

ջազգային համագործակցության վարչության աշխատակիցների հետ հանրությանը ներկայացրին միջազգային ծրագրի շրջանակում իրականացվող համագործակցությունը, ինչպես նաև մի քանի տարի շարունակվող «Մետաքսի ճանապարհի Հայաստան. Վայոց Ձոր» հետազոտական ծրագիրն ու արդյունքները:

(Տե՛ս Հաշտոված համագործակցության ևս մեկ օրինակ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Representatives-of-Florence-university-visited-YSU>, մուտք՝ 22.06.2019)

5 հոկտեմբերի – ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնում Միլանի պետական համալսարանի բանասիրության և լեզվաբանության ամբիոնի պրոֆեսոր Անդրեա Սկալան հանդես եկավ «Հունարեն, ասորերեն և իրանական փոխառությունները հին հայերենում» թեմայով դասախոսությամբ:

(Տե՛ս Դասախոսությամբ հանդես եկավ Միլանի պետական համալսարանի պրոֆեսորը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Milan-state-university-professor-delivered-a-lecture>, մուտք՝ 22.06.2019)

13 հոկտեմբերի – ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում մեկնարկեց «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» խորագրով միջազգային 6-րդ գիտաժողովը:

(Տե՛ս Գիտաժողովը նվիրված է հոգեբանության արդի հիմնախնդիրներին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Issues-of-psychology-were-discussed>, մուտք՝ 22.06.2019)

25 հոկտեմբերի – ԵՊՀ գրադարանի նախասրահում տեղի ունեցավ Ռուսական աշխարհագրական ընկերության կողմից կազմակերպվող «Աշխարհի ամենագեղեցիկ երկիրը» խորագրով ամենամյա մրցույթում հաղթած լուսանկարների ցուցադրությունը:

(Տե՛ս Ցուցահանդես. համագործակցության մոր եզրեր, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Photos-on-Russia>, մուտք՝ 22.06.2019)

30 հոկտեմբերի – ԵՊՀ ռեկտորն ընդունեց ԳԴՀ երկրամասերի կրթության և մշակույթի նախարարների խորհրդի գլխավոր քարտուղար Ռուդ Միխալիկին:

(Տե՛ս ԵՊՀ ռեկտորը հյուրընկալեց գերմանացի գործընկերոջը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Udo-Mikhailik-visited-YSU> մուտք՝ 22.06.2019)

7 նոյեմբերի – ԵՊՀ մի քանի հարյուր ուսանողներ դասադուլ են հայտարարել՝ իրենց անհամաձայնությունը հայտնելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ:

(Տե՛ս ԵՊՀ-ն ներկայացրել է իր պաշտոնական դիրքորոշումը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/education-and-military-service>, մուտք՝ 22.06.2019)

8 նոյեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում մեկնարկեց «Հաղորդակցությունից համագործակցություն» խորագրով եռօրյա սեմինար-դասընթացը: Այն կազմակերպվել էր ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի ու Բանկային կառավարման դպրոցի համագործակցության շրջանակում:

(Տե՛ս Դասընթացը՝ որպես մոր գիտելիքների և հմտությունների ձեռքբերման հնարավորություն, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/From-Cooperation-to-Communication>, մուտք՝ 22.06.2019)

9 նոյեմբերի – ԵՊՀ էկոլոգիական իրավունքի գիտատեսմանական կենտրոնում տեղի ունեցավ կլոր սեղան-քննարկում՝ նվիրված Լեհաստանում հայերին թագավորական արտոնություններ տրամադրելու 650-ամյակին: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կազմակերպած կլոր սեղան-քննարկմանը մասնակցում էին ԵՊՀ իրավագիտության և Վարչապալի համալսարանի իրավունքի և կառավարման ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները:

(Տե՛ս Հայ և լեհ իրավաբան գործընկերները քննարկում են կրթական հիմնախնդիրները, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Discussion-of-legal-issues-with-colleagues-from-Poland>, մուտք՝ 22.06.2019)

17 նոյեմբերի – ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության նախաձեռնությամբ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողները Պալեանների անվան դահլիճում հանդիպեցին Մոսկվայում Իսպանիայի Թագավորության գլխավոր հյուպատոս Իստիար Տաբադայի հետ:

(Տե՛ս ԵՊՀ-ում էր Մոսկվայում Իսպանիայի Թագավորության գլխավոր հյուպատոսը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Spanish-delegation-at-YSU>, մուտք՝ 22.06.2019)

20 նոյեմբերի – ԱՊՀ ցանցային համալսարանի կոնսորցիումի շրջանակում Ազգերի բարեկամության ռուսաստանյան համալսարանի (РГУД) պատվիրակության անդամները հանդիպեցին ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանի հետ: Պատվիրակության կազմում էին РГУД-ի ընդհանուր քիմիայի ամբիոնի դոցենտ Ելենա Նևսկայան, օրգանական քիմիայի ամբիոնի դոցենտ Ելենա Սորոկինան, ինչպես նաև Միջազգային կազմակերպությունների ու դրամաշնորհների բաժնի ղեկավար Օլեգ Բարնաշովը:

(Տե՛ս Համագործակցությունը կսկսվի ֆարմացիայի բնագավառից, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Delegation-of-the-Peoples-Friendship-University-of-Russia>, մուտք՝ 22.06.2019)

20 նոյեմբերի – ԵՊՀ-ում տեղի ունեցավ Ուրալի դաշնային համալսարանի պատվիրակության հանդիպումը Մալբի բուհի սոցիոլոգիայի, ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի, կենսաբանության ֆակուլտետների ղեկավարների հետ:

(Տե՛ս Քննարկվեց փոխգործակցությունը նոր ոլորտներում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Ural-Federal-University-delegation-visited-YSU>, մուտք՝ 22.06.2019)

23 նոյեմբերի – ԵՊՀ-ում տեղի ունեցավ հանդիպում Ամստերդամի VU համալսարանի դոկտոր, միջազգային HR մասնագետ Քիլիան Վավուի հետ: Այն կազմակերպվել էր ԵՊՀ շրջանավարտների

և կարիերայի կենտրոնի և Բանկային կառավարման դպրոցի (Banking Management School - BMS) համագործակցության շրջանակում: Դոկտոր Վավուն հանդես եկավ «Աշխատանքային սթրեսի կառավարում» խորագրով դասախոսությամբ:

(Տե՛ս Քիլիան Վավու. «Երբեմն մեզ հենց մի քայլ է պետք սթրեսներից խուսափելու համար», տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Kilian-Wawoe-visited-YSU>, մուտք՝ 22.06.2019)

27 նոյեմբերի – ԵՊՀ ղեկավար Արամ Սիմոնյանն ընդունեց Լիբանան-կանադական համալսարանի պատվիրակությանը, որի կազմում էին բուհի ղեկավար Ռոնի Աբի Նախլին, Միջազգային նախագծերի վարչության ղեկավար Յոլանդ Սալեմը և Լիբանանում ՀՀ դեսպանության մշակութային խորհրդատու Միրելի Խանամիրյանը:

(Տե՛ս Համագործակցությունը կլինի բազմաբևեռ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Aram-Simonyan-received-the-delegation-of-the-Lebanese-Canadian-University>, մուտք՝ 22.06.2019)

6-8 դեկտեմբերի – ԵՄ «Erasmus+» ծրագրի շրջանակում մեկնարկած «DOC MEN» նախագծի շրջանակում ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոն էին այցելել Հոլոնի տեխնոլոգիայի ինստիտուտի (Բսրայել) պրոֆեսոր Մոտտի Հարիդինը և Բեռլինի տեխնիկական համալսարանի (Գերմանիա) պրոֆեսոր Յուրի Պլոտկինը:

(Տե՛ս «DOC MEN» նախագիծը շարունակում է իր աշխատանքները, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Docmen-project-goes-on>, մուտք՝ 22.06.2019)

18 դեկտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում համալսարանականներին հյուրընկալվել էր ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Ռոգ Գոթեմոլլերը:

«ՆԱՏՕ-ի շաբաթ» միջոցառումների շրջանակում Մայր բուհ այցելած Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) բարձրաստի-

ճան պաշտոնյային ողջունեց ԵՊՀ ղեկավարն ու ընդգծեց, որ մասնաբնույթ հանդիպումները կարևոր են համալսարանականների մասնագիտական զարգացման համար:

(Տե՛ս ՆԱՏՕ-ի բարձրաստիճան պաշտոնյան այցելեց ԵՊՀ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Rose-Gottemoeller-visited-YSU>, մուտք՝ 22.06.2019)

19 դեկտեմբերի – ԵՊՀ-ի և «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոնի (ՀԱԲԼԾԿ)» ՊՈԱԿ-ի միջև համագործակցության հուշագիր ստորագրվեց:

(Տե՛ս Հետևողական փոխգործակցություն կծավալվի սննդի անվտանգության ոլորտում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/YSU-and-the-Republican-Veterinary-Sanitary-and-Phytosanitary-Laboratory-Services-Center-SNCO>, մուտք՝ 22.06.2019)

25 դեկտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի տարեվերջյան նիստը, որը նախագահում էր խորհրդի նախագահ, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը:

(Տե՛ս Կայացավ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի ամփոփիչ նիստը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Final-session-of-YSU-Board-for-2017>, մուտք՝ 22.06.2019)

26 դեկտեմբերի – ԵՊՀ էր այցելել Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) արտաքին գործերի նախարարության քաղաքական և միջազգային հետազոտությունների ինստիտուտի պատվիրակությունը: Ինստիտուտի Կովկասի և Կենտրոնական Ասիայի բաժնի վարիչ Ալլուեզա Բիգդելին ընդունեց ԵՊՀ ղեկավար Արամ Միմոնյանը:

(Տե՛ս Այցելության նպատակը փոխշահավետ համագործակցության ծավալումն է, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Ali-Reza-Bigdeli-visited-YSU>, մուտք՝ 22.06.2019)

2018

2017-2018 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանում դասավանդում էին 216 պրոֆեսորներ, 564 դոցենտներ, 351 ասիստենտներ, 336 դասախոսներ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2017-2018 ուստարվա գործունեություն, Երևան, 2018, էջ 18)

2017-2018 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանի առկա ուսուցման բակալավրիատում սովորում էր 10897 ուսանող, մագիստրատուրայում՝ 2130 ուսանող, ասպիրանտուրայում՝ 116 ասպիրանտ, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 2537 ուսանող, մագիստրատուրայում՝ 656 ուսանող, ասպիրանտուրայում՝ 272 ասպիրանտ:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2017-2018 ուստարվա գործունեություն, Երևան, 2018, էջ 52)

2017-2018 ուսումնական տարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում (առկա ուսուցում) սովորող ուսանողների թիվը, ըստ ֆակուլտետների, հետևյալն էր՝ Բնական գիտությունների՝ 117, Հումանիտար գիտությունների՝ 313, Տնտեսագիտության՝ 128, Կիրառական արվեստի՝ 71: Հեռակա ուսուցման բաժնի ուսանողների թիվը 941 էր:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2017-2018 ուստարվա գործունեություն, Երևան, 2018, էջ 378, 380, 385, 388, 391)

հունվար – Երևանի պետական համալսարանը տալիս է հեռակա ուսուցման մագիստրատուրայի 168 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Աշխարհագրության և երկրաբանության՝ 5, Պատմության՝ 7, Միջազգային հարաբերությունների՝ 41, Տնտեսագիտության և կառավարման՝ 46, Փիլիսոփայության և

հոգեբանության՝ 10, Սոցիոլոգիայի՝ 1, Հայ բանասիրության՝ 6, Ռոմանագերմանական բանասիրության՝ 6, Իրավագիտության՝ 30, Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոն՝ 16:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2017-2018
ուստարվա գործունեություն, Երևան, 2018, էջ 59)

23 հունվարի – ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում տեղի ունեցավ Արաբական Միացյալ Էմիրությունների լսարանի պաշտոնական բացումը, որին ներկա էր ՀՀ-ում Արաբական Միացյալ Էմիրությունների արտակարգ և լիազոր դեսպան Ջասիմ Մուհիսսինադ ալ Կասիմին: Արաբական Միացյալ Էմիրությունների միջազգային համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ վերազինված լսարանի հանդիսավոր բացման արարողությանը մասնակցում էին նաև ԵՊՀ պրոռեկտորներ Ալեքսանդր Գրիգորյանը, Գեղամ Գևորգյանը, Ռուբեն Մարկոսյանը, Արևելագիտության ֆակուլտետի ղեկան Ռուբեն Մելքոնյանն ու պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները:

(Տե՛ս ԵՊՀ-ում բացվեց Արաբական Միացյալ
Էմիրությունների լսարան, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝
<http://ysu.am/news/hy/Jassim-Mohammed-Al-Qasimi-visited-YSU>,
մուտք՝ 07.07.2019)

12 փետրվարի – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում տեղի ունեցավ «Հայաստան-Իրան բարեկամության լսարանի» բացման հանդիսավոր արարողությունը: Միջոցառմանը ներկա էին Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) արտակարգ և լիազոր դեսպան Սեյեդ Քալեմ Սաջադին, ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ղեկան Գեղամ Պետրոսյանը, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ուսանողներ, հյուրեր:

Դեսպան Սեյեդ Քազեմ Սաջադին նշեց, որ լսարանի բացումը ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ Իրանն ու Հայաստանը պատրաստակամ են երկու պետությունների միջև երկկողմանիորեն նպաստավոր, տրամաբանված, փոխշահավետ և բարեկամ ժողովուրդների մակարդակին հարիր հարաբերությունների ընդլայնմանը:

Լսարանի պաշտոնական բացման արարողությունից հետո դեսպանը Պալեանների անվան դահլիճում հանդիպում ունեցավ համալսարանականների հետ:

Պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը ողջունեց հյուրին, ի դեմս դեսպանի՝ շնորհավորեց ԻԻՀ ժողովրդին Իսլամական հեղափոխության 39-րդ տարեդարձի կապակցությամբ և խոսքը փոխանցեց դեկան Գեղամ Պետրոսյանին, ով հանգամանալիորեն ներկայացրեց հայ-իրանական հարաբերությունների պատմությունն ու զարգացման փուլերը:

(Տե՛ս ԵՊՀ-ում բացվեց հայ-իրանական բարեկամության լսարան, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Armenia-Iran-lecture-hall>, մուսք՝ 05.07.2019)

21 փետրվարի – ԵՊՀ ռեկտորը հյուրընկալեց ՀՀ-ում Բրազիլիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Աժեմար դե Մենդոնսա Սանկտուսին:

(Տե՛ս ԵՊՀ-ն ընդլայնում է միջազգային կապերը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/More-international-ties>, մուսք՝ 22.06.2019)

27 փետրվարի – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի «Երիտասարդ միջազգայնագետների» ակումբի նախաձեռնությամբ ֆակուլտետի շուրջ 300 ուսանողներ դեկան, պրոֆեսոր Գեղամ Պետրոսյանի հետ 1988 թ. սումգայիթյան ջարդերի 30-րդ տարելիցի կապակցությամբ այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ անմեղ զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցելու:

Ներկաները ծաղկեպսակ դրեցին Սումգայիթի զոհերի հիշատակը հավերժացնող խաչքարի մոտ, որտեղ ելույթ ունեցավ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի Անահիտ Ղազարյանը:

Այնուհետև ուսանողներն այցելեցին մահ Հայոց ցեղասպանության ինստիտուտ-թանգարան:

(Տե՛ս Համալսարանականները հարգանքի տուրք մատուցեցին Սումգայիթի անմեղ զոհերի հիշատակին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Students-visited-Tsitsernakaberd-Memorial-Complex>, մուտք՝ 04.07.2019)

2 մարտի – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում տեղի ունեցավ հանդիպում ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ Վահրամ Կաժոյանի հետ:

«Երիտասարդ միջազգայնագետներ» ակումբի նախաձեռնությամբ կազմակերպված հանդիպումը մկիրված էր Դիվանագետի օրվան և ՄԱԿ-ին Հայաստանի Հանրապետության անդամակցության 26-րդ տարեդարձին: Հանդիպման վայրը մույնպես պատահական չէր ընտրված. այն անցկացվեց ՄԱԿ-ի 4-րդ գլխավոր քարտուղար Բուտրոս Բուտրոս-Ղալիի անունը կրող լսարանում:

(Տե՛ս Թե ինչպես հայերը գրավեցին «Չինաստանը». պատմում է Վահրամ Կաժոյանը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.ysu.am/news/hy/Vahram-Kazhoyan-visited-YSU>, մուտք 28.06.2019)

15 մարտի – ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպության գործառնությունների ղեկավար Շադիկ Մարուխյանի հետ ստորագրեց համագործակցության հուշագիր:

Ըստ այդ փաստաթղթի՝ Հայաստանում վերահաստատված 40 երիտասարդներ հնարավորություն կստանան ԵՊՀ-ում մասնակցելու հատուկ դասընթացների, որոնց նպատակն է սովոր-

րեցնել հայկական աշխատաշուկայի առանձնահատկությունները⁵⁰:

(Տե՛ս 40 ներգաղթյալ երիտասարդներ վերապատրաստվելու հնարավորություն կունենան. նոր ծրագիր ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Training-for-immigrants>, մուտք՝ 22.06.2019)

15 մարտի – Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում հյուրընկալվեց Հանս Շմիդտը՝ Հայաստանում Գերմանիայի Դաշնության նախկին դեսպանը:

(Տե՛ս «Քրիստոնեությունը ձեր երկրի մշակութային անգնահատելի հարստությունն է». Գերմանիայի նախկին դեսպան, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Interview-with-Hans-Jochen-Schmidt>, մուտք՝ 07.07.2019)

19 մարտի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ղեկան Գագիկ Ղազինյանը և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հայաստանյան պատվիրակության ղեկավար Կարոլին Դույեզը կնքեցին փոխըմբռնման հուշագիր:

Ըստ հուշագրի՝ նախատեսվում էր բազմաբովանդակ համագործակցություն՝ միտված միջազգային մարդասիրական իրավունքի ոլորտում կրթության և հետազոտական գործունեության խթանմանը:

(Տե՛ս Միջազգային հանրային իրավունքի իրավաբանական կլինիկա կհիմնադրվի ԵՊՀ-ում. հուշագիր Կարմիր խաչի հետ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Memorandum-with-Red-Cross>, մուտք՝ 07.07.2019)

27 մարտի – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում տեղի ունեցավ գիտաժողով՝ նվիրված Հայաստանի առաջին հանրապետության 100-ամյակին: Այն կազմակերպվել էր ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության և «Երիտասարդ միջազգայնագետներ» ակումբի նախաձեռնությամբ:

(Տե՛ս Ուսանողական գիտաժողով՝ նվիրված Հայաստանի առաջին հանրապետությանը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Conference-on-first-republic>, մուտք՝ 22.06.2019)

6 ապրիլի – ԵՊՀ դասախոսները Մայր բուհի կրթական ծրագրերը ըստ ֆակուլտետների ներկայացնելու համար այցելել են Գորիսի թիվ 4 ավագ դպրոց:

(Տե՛ս ԵՊՀ ասիստենտ. «Հաջողության հասնելու կարևոր հմտություններից են գիտելիքների ամրապնդումը և աշխատասիրությունը», տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Be-industrious-to-succeed>, մուտք՝ 22.06.2019)

10 ապրիլի – ԵՊՀ ռեկտորը հյուրընկալեց Իտալիայից ժամանած պատվիրակությանը, որը գլխավորում էր Իտալիայի արտաքին գործերի և միջազգային համագործակցության նախարարության խորհրդական Ռոբերտո Նոչելլան:

(Տե՛ս ԵՊՀ-ն ծրագրում է ընդլայնել իտալերենի ուսուցանումը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Italian-language-teaching-at-ySU>, մուտք՝ 22.06.2019)

13 ապրիլի – ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնում բացվեց մոլեկուլային բջջագենետիկայի հայ-գերմանական լաբորատորիա՝ վերազինված նոր սարքավորումներով և տեխնիկայով:

(Տե՛ս Ժամանակակից սարքավորումներով վերազինված ԵՊՀ լաբորատորիան նոր հեռանկարներ կբացի երիտասարդ գիտնականների և ուսանողների համար, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Armenian-German-Laboratory-of-Molecular-Cell-Genetics>, մուտք՝ 22.06.2019)

16 ապրիլի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՌԻԳԸ 5-րդ միջազգային գիտաժողովի բացման հանդիսավոր արարողությունը:

(Տե՛ս Մեկնարկել է ԵՊՀ ՌԻԳԸ միջազգային տարեկան 5-րդ գիտաշրջանը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/SSS-5th-International-Conference>, մուտք՝ 22.06.2019)

26 ապրիլի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գագիկ Ղազինյանն ու Սլովենայի Լյուբլյանայի համալսարանի պրոֆեսոր Դամյան Կորոսեչը մոր փոխգործակցություն ծավալելու փաստաթուղթ ստորագրեցին:

Կողմերը պայմանավորվեցին ակտիվ աշխատանքներ իրականացնել փորձի փոխանակման, համատեղ կրթական ծրագրերի ու գիտատուսմնական հանդիպումների անցկացման ուղղությամբ:

(Տե՛ս ԵՊՀ-ի և Լյուբլյանայի համալսարանի իրավագիտության ֆակուլտետները հուշագիր ստորագրեցին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/YSU-and-Ljubljana-university-cooperation>, մուտք՝ 22.06.2019)

2 մայիսի – ԵՊՀ ռեկտորն իր աշխատասենյակում հյուրընկալեց Մարտին Լյութերի անվան Հալլե-Վիտենբերգ համալսարանի պատվիրակությանը, որը գլխավորում էր գերմանական համալսարանի ռեկտոր Ուլո Սթրաթերը: Հանդիպմանը ներկա էին ԵՊՀ պրոռեկտորները, Աստվածաբանության, Ռոմանագերմանական բանասիրության, Իրավագիտության, Արևելագիտության և Միջազգային հարաբերությունների ֆակուլտետների դեկանները, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական կազմի մի շարք ներկայացուցիչներ:

(Տե՛ս Հայ-գերմանական համագործակցությունը մոր ուղրտներ կրնդգրկի, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Armenian-German-cooperation-to-expand>, մուտք՝ 22.06.2019)

7 մայիսի – ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնում տեղի ունեցավ «Եվրոպական տնտեսական քաղաքականություն» թեմայով դասախոսություն, որը կարդաց Էստոնիայի Տարտուի համալսարանի սոցիալական գիտությունների ֆակուլտետի դեկան Ռաուլ Իմեթսը:

Դասախոսությունը բաղկացած էր երկու մասից: Բանախոսն առաջին հատվածում անդրադարձավ Եվրոպական միության սոցիալական և աշխատանքային քաղաքականությա-

նը, աշխատաշուկայի մարտահրավերներին և դրանց լուծման հնարավոր ճանապարհներին:

Երկրորդ հատվածում մանրամասն ներկայացվեցին Եվրոպայում գործազրկության տվյալներն ու նոր աշխատատեղեր ստեղծելու առաջիկա ոչ այնքան արդյունավետ քայլերը:

(Տե՛ս «Եվրոպան առաջիկա չի կարողանում շատ աշխատատեղեր ստեղծել». Ռաուլ Իմեթս, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/About-employment-in-Europe>, մուտք՝ 07.07.2019)

8 մայիսի – ԵՊՀ ռեկտորի աշխատասենյակում համագործակցության հուշագիր ստորագրվեց Մայր բուհի և Բուրգունդիա Ֆրանշ-Կոմտեի համալսարանի միջև: Հանդիպմանը ներկա էին ԵՊՀ պրոռեկտորներ Ալեքսանդր Գրիգորյանն ու Գեղամ Գևորգյանը, Միջազգային համագործակցության վարչության պետ Ալեքսանդր Մարգարովը, ինչպես նաև բնագիտական թևի ֆակուլտետների ղեկավարներ Վահրամ Դումանյանը, Էմիլ Գևորգյանը, Տարիել Ղոչիկյանը, Ռուլանդ Ավագյանն ու Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնի ղեկավար Սամվել Շուքուրյանը:

(Տե՛ս ԵՊՀ-ն ու Ֆրանշ-Կոմտեի համալսարանը կհամագործակցեն ճշգրիտ գիտությունների ոլորտում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Cooperation-with-French-university-of-Franche-Comte>, մուտք՝ 22.06.2019)

24 մայիսի – ԵՊՀ գիտական քաղաքականության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանին և Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դասախոս Կարեն Զեռյանին «Որոշ օրթոգենալ շարքերի զուգամիտության և միակության հարցերը» գիտական հոդվածների շարքի համար հանձնվում է ՀՀ նախագահի մրցանակը:

(Տե՛ս ՀՀ նախագահի նստավայրում տեղի ունեցավ Նախագահի մրցանակ-2017-ի հանձնման արարողությունը, տե՛ս «168 ժամ» կայք՝ <https://168.am/2018/05/24/956385.html>, մուտք՝ 07.07.2019)

31 մայիսի – ԵՊՀ գրադարանի ճեմասրահում տեղի ունեցավ «Intership Hunt. Որոնի՛ր և գտի՛ր քո հնարավորությունը» խորագրով տոնավաճառը:

Աշխատաշուկայում առաջատար և դեռ սկսնակ ավելի քան քսան ընկերություններ ուսանողներին ներկայացրին իրենց գործունեությունը, աշխատելաճի առանձնահատկությունները և դրանցում ընդգրկվելու հնարավորությունները:

Միջոցառումը կազմակերպվել էր ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի և «Breedge» կազմակերպության մասնավոր նախաձեռնությամբ:

(Տե՛ս ԵՊՀ-ում հանդիպեցին գործատուներն ու ուսանողները, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝

<http://ysu.am/news/hy/Students-and-employers-held-a-meeting>,
մուտք՝ 07.07.2019)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է առկա ուսուցման 3844 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների Մաթեմատիկայի և մեխանիկայի՝ 163 բակալավր, 47 մագիստրոս, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 182 բակալավր, 38 մագիստրոս, Ֆիզիկայի՝ 74 բակալավր, 36 մագիստրոս, Ռադիոֆիզիկայի՝ 106 բակալավր, 35 մագիստրոս, Զինվայի՝ 23 բակալավր, 19 մագիստրոս, Կենսաբանության՝ 62 բակալավր, 47 մագիստրոս, Աշխարհագրության և երկրաբանության՝ 221 բակալավր, 53 մագիստրոս, Պատմության՝ 210 բակալավր, 25 մագիստրոս, Միջազգային հարաբերությունների՝ 304 բակալավր, 108 մագիստրոս, Տնտեսագիտության և կառավարման՝ 235 բակալավր, 74 մագիստրոս, Փիլիսոփայության և հոգեբանության՝ 84 բակալավր, 64 մագիստրոս, Սոցիոլոգիայի՝ 103 բակալավր, 31 մագիստրոս, Հայ բանասիրության՝ 120 բակալավր, 30 մագիստրոս, Ժուռնալիստիկայի՝ 68 բակալավր, 24 մագիստրոս, Ռուս բանասիրության՝ 35 բակալավր, 16 մագիստրոս, Ռոմանագերմանական բանասիրության՝ 379 բակալավր, 107 մագիստրոս, Արևելագիտության՝ 121 բակալավր, 31 մագիստրոս,

Իրավագիտության՝ 152 բակալավր, 51 մագիստրոս, Աստվածաբանության՝ 40 բակալավր, 11 մագիստրոս, Ֆարմացիայի ինստիտուտ՝ 59 բակալավր, 69 մագիստրոս, ՏՏԿՀ կենտրոն՝ 19 մագիստրոս, ԵՌԼ կենտրոն՝ 34 մագիստրոս, Մասս մեդիայի կրթական կենտրոն՝ 11 մագիստրոս, ՀԻԻ՝ 5 մագիստրոս, Մանկ. և կրթ. զարգ. կենտրոն՝ 32 բակալավր, 16 մագիստրոս:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2017-2018
ուստարվա գործունեություն, Երևան, 2018, էջ 58)

հունիս – Երևանի պետական համալսարանը տալիս է հեռակա ուսուցման բակալավրիատի 513 շրջանավարտ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի՝ 16, Կենսաբանության՝ 7, Աշխարհագրության և երկրաբանության՝ 58, Պատմության՝ 31, Միջազգային հարաբերությունների՝ 90, Տնտեսագիտության և կառավարման՝ 60, Փիլիսոփայության և հոգեբանության՝ 19, Սոցիոլոգիայի՝ 25, Հայ բանասիրության՝ 34, Ժուռնալիստիկայի՝ 33, Ռուս բանասիրության՝ 10, Ռոմանագերմանական բանասիրության՝ 41, Իրավագիտության՝ 49, Աստվածաբանության՝ 10, Ֆարմացիայի ինստիտուտ՝ 30, Մանկ. և կրթ. զարգ. կենտրոն՝ 16 մագիստրոս:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2017-2018
ուստարվա գործունեություն, Երևան, 2018, էջ 59)

հունիս – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը տալիս է առկա ուսուցման շրջանավարտներ՝ ըստ հետևյալ ֆակուլտետների՝ Բնական գիտությունների՝ 16, Հումանիտար գիտությունների՝ 66, Տնտեսագիտության՝ 38, Կիրառական արվեստի՝ 18:

Հեռակա ուսուցման շրջանավարտների թիվը 133 էր:

(Տե՛ս Երևանի պետական համալսարան. 2017-2018
ուստարվա գործունեություն, Երևան, 2018, էջ 378, 381, 386, 388, 391)

7 հունիսի – ԵՊՀ Չարենցի անվան դահլիճում տեղի ունեցավ հանդիպում հայտնի լրագրող, Պուլիցերյան մրցանակի եռակի

դափնեկիր, «The Boston Globe» պարբերականի հետաքննական թիմի հիմնադիր-անդամ Սթիվեն Քյուրքչյանի հետ:

(Տե՛ս «Ողբերգությունները մեզ ավելի ուժեղ են դարձրել».

Պուլիցերյան մրցանակի եռակի դափնեկիր,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/>

Pain-makes-us-stronger, մուսք՝ 07.07.2019)

13 հունիսի – ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում դասախոսությամբ հանդես եկավ Ղազախստանի ֆինանսների նախարարության հաշվապահական մեթոդաբանության վարչության պետ, ԱՊՀ երկրների հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվողականության խորհրդատվական խորհրդի նախագահ Արմանաի Բեկտուրովան: Միջոցառմանը մասնակցում էին ֆակուլտետի դասախոսներ, ասպիրանտներ, ուսանողներ, ինչպես նաև այլ կազմակերպությունների մասնագետներ:

(Տե՛ս Ղազախ պաշտոնյան դասախոսություն կարդաց

հաշվապահական հաշվառման և աուդիտի մասին,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/>

Armanai-Bekturova-delivered-a-lecture-at-YSU, մուսք՝ 22.06.2019)

14 հունիսի – ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում տեղի ունեցավ սեմինար-քննարկում, որին մասնակցում էին ԵՊՀ-ի և Բեռլինի Հումբոլդտի համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի ներկայացուցիչները և ուսանողները:

(Տե՛ս ԵՊՀ-Հումբոլդտի համալսարան. սեմինար-քննարկում

հողային գիտության զարգացման մասին,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/>

YSU-Humboldt-university-cooperation, մուսք՝ 22.06.2019)

15 հունիսի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում ԱՄՆ Մասաչուսեթսի Քլարք համալսարանի պրոֆեսոր, թուրք հայտնի պատմաբան Թաներ Աքչամը հանդիպեց ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի ուսանողների և դասախոսների հետ: Հանդիպումը

կազմակերպվել էր ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի նախաձեռնությամբ:

Ներկա էին ԵՊՀ պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը, Արևելագիտության ֆակուլտետի ղեկան Ռուբեն Մելքոնյանը, Թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ալեքսանդր Սաֆարյանը, նույն ամբիոնի դասախոս Լուսինե Սահակյանը և Արևելագիտության ֆակուլտետի պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանը:

(Տե՛ս Թուրք պատմաբան Թաներ Աքչամ. «Թուրքիայում ժխտողականության քաղաքականությունը պետության կողմից է սնուցվում», տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Taner-Akcam-about-the-policy-of-denial-of-Turkey>, մուտք՝ 22.06.2019)

27 հունիսի – ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանն իր աշխատասենյակում ընդունեց Ռուսաստանից ժամանած պատվիրակությանը, որը գլխավորում էր Սանկտ Պետերբուրգի գիտության և բարձրագույն կրթության հանձնաժողովի նախագահի առաջին տեղակալ Իրինա Գանուսը:

Ներկա էին նաև ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանն ու գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը:

(Տե՛ս ԵՊՀ ղեկավարությունը հանդիպեց Սանկտ Պետերբուրգի գիտության և բարձրագույն կրթության հանձնաժողովի անդամներին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/St-Petersburg-Science-and-Higher-Education-Commission-at-YSU>, մուտք՝ 22.06.2019)

12 սեպտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանդիպում ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նախագահ Գեորգի Ծերեթելիի հետ:

Բուխի միջազգային համագործակցության վարչության կողմից կազմակերպված հանդիպմանը մասնակցում էին ԵՊՀ ռեկտորը, պրոռեկտորները, պրոֆեսորադասախոսական կազմի

ներկայացուցիչներ և ուսանողներ:

(Տե՛ս «Բոլոր հակամարտությունները պետք է լուծվեն
խաղաղ ճանապարհով». Գեորգի Ծերեթելի,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/>
President-of-the-OSCE-Parliamentary-Assembly-
George-Tsereteli-at-YSU, մուտք՝ 04.07.2019)

12 սեպտեմբերի – ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում Լեհաստանի Ս. Վիշինսկու անվան համալսարանի պրոֆեսոր Քշիշտոֆ Տուրլեյսկին հանդես եկավ «Ժամանակակից նեյրոկենսաբանության ուղղությունները» թեմայով դասախոսությամբ:

(Տե՛ս Լեհ պրոֆեսորը համալսարանականներին ներկայացրեց
ժամանակակից նեյրոկենսաբանության ուղղությունները,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/>
Polish-professor-speaks-of-obituary, մուտք՝ 22.06.2019)

25 սեպտեմբերի – ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտում կազմակերպվել էր Դեղագետի միջազգային օրվան նվիրված միջոցառում⁵¹:

(Տե՛ս ԵՊՀ-ում նշվեց Դեղագետի միջազգային օրը,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/>
International-day-of-pharmacists-at-YSU, մուտք՝ 22.06.2019)

26 սեպտեմբերի – ԵՊՀ «Հովհաննես Աղամյան» սրահում տեղի ունեցավ ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի ու «Վորլդ Վիժն Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության համատեղ ծրագրի փակման արարողությունը: «Տեղահանված հայ երիտասարդ մասնագետների աշխատանքի աջակցում» ծրագրի նպատակն էր հակամարտության գոտիներից, հատկապես՝ Սիրիայից և Ուկրաինայից, ինչպես նաև Ջավախքից Հայաստան տեղափոխված բարձրագույն կրթությամբ երիտասարդներին ծանոթացնել հայկական աշխատաշուկայի առանձնահատկություններին: Ծրագրի պաշտոնական փակմանը ներկա էին Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի փոխտնօրեն Կարինե Նազարյան:

նը, կենտրոնի ներկայացուցիչները, «Վորլդ Վիժն Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության «Զբաղվածության ավելի մեծ հնարավորություններ Հայաստան տեղահանված երիտասարդների համար» ծրագրի համակարգողներ Լորիզ Հալեբիանը և Անի Զուլեցյանը:

(Տե՛ս Ավարտվեց «Տեղահանված հայ երիտասարդ մասնագետների աշխատանքի աջակցում» ծրագիրը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Closure-ceremony-of-Support-to-displaced-young-Armenian-specialists-program>, մուտք՝ 07.07.2019)

26 սեպտեմբերի – ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում «Հիմնական քաղցկեղածինները և օնկոլոգիական հիվանդությունները Հայաստանում» թեմայով դասախոսությամբ հանդես եկավ Մոսկվայի պետական համալսարանի օրգանական քիմիայի ամբիոնի պրոֆեսոր, ֆիզիկական օրգանական քիմիայի լաբորատորիայի վարիչ Վալերի Պետրոսյանը:

(Տե՛ս Հայաստանում օնկոլոգիական հիվանդությունների տարածվածության պատճառները. պարզաբանեց հայտնի պրոֆեսոր Վալերի Պետրոսյանը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Valeri-Petrosyan-talks-about-oncological-diseases-in-Armenia>, մուտք՝ 22.06.2019)

27 սեպտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում մեկնարկեց «Աշխարհագրության և երկրաբանության արդի հիմնախնդիրները» խորագիրը կրող միջազգային գիտաժողովը, որը նվիրված է ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին:

(Տե՛ս Միջազգային գիտաժողով՝ նվիրված աշխարհագրության և երկրաբանության արդի հիմնախնդիրներին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/YSU-100-conference-27-09-2018>, մուտք՝ 22.06.2019)

28 սեպտեմբերի – Ղազախստանի Լ. Գումիլևի անվան եվրասիական ազգային համալսարանից ժամանած պատվիրակության ան-

դամները հանդիպում ունեցան ԵՊՀ ղեկավար կազմի հետ:

(Տե՛ս ԵՊՀ-ն զարգացնում է հարաբերությունները

Եվրասիական ազգային համալսարանի հետ,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ [http://ysu.am/news/hy/Delegation-](http://ysu.am/news/hy/Delegation-of-Eurasian-national-university-at-YSU)

of-Eurasian-national-university-at-YSU, մուտք՝ 22.06.2019)

հոկտեմբեր – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջազգային հարաբերությունների բաժնի առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի 2-րդ կուրսերում և մագիստրատուրայի 1-ին, 2-րդ կուրսերում ներդրվեց «Moodle» էլեկտրոնային ուսուցման համակարգի առցանց դասավանդման ծրագիրը:

(Տե՛ս ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում

կիրառվում են ուսումնառության ժամանակակից միջոցներ,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/About-moodle>,

մուտք՝ 22.06.2019)

3 հոկտեմբերի – ԵՊՀ ռոմանագերմանական ֆակուլտետի ռոմանական բանասիրության ամբիոնը հյուրընկալեց Սևիլյայի «Աթալայա» թատրոնի ղեկավարին և դերասաններին:

(Տե՛ս ԵՊՀ-ում տեղի ունեցավ հանդիպում Սևիլյայի

«Աթալայա» թատրոնի ներկայացուցիչների հետ,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Atalaya-theatre>,

մուտք՝ 07.07.2019)

4 հոկտեմբերի – ՀՀ Արարատի մարզի Ոսկետափ գյուղի ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտներն այցելեցին ԵՊՀ քիմիայի ֆակուլտետ:

(Տե՛ս Աշակերտները՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Pupils-visited-faculty-of-Chemistry>, մուտք՝ 22.06.2019)

9 հոկտեմբերի – ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը հյուրընկալեց Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության ռեկտոր Ժան-Պոլ դը Գոդմարին, որի գլխավորած պատվիրակության հետ հանդիպմանը ներկա էին նաև ԵՊՀ գիտական քաղաքա-

կանության և միջազգային համագործակցության պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը, Միջազգային համագործակցության վարչության պետ Ալեքսանդր Մարգարովը և Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ Ջավեն Հարությունը:

(Տե՛ս Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության ռեկտոր Ժան-Պոլ դը Գոդմարն այցելեց ԵՊՀ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Jean-Paul-de-Gaudemar>, մուտք՝ 22.06.2019)

16-17 հոկտեմբերի – ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանը և Ռրակի ապահովման կենտրոնի տնօրեն Արմեն Բուդաղյանը մասնակցեցին Աստանայում կայացած «Էրազմուս+» ծրագրի շրջանակում կազմակերպված «Երրորդ շրջափուլի (դոկտորական) ծրագրերի ներքին և արտաքին որակի ապահովման համակարգեր» խորագրով միջազգային կոնֆերանսին:

(Տե՛ս Կրթության որակի ապահովման վերաբերյալ նոր ծրագիրը քննարկվել է Լ. Ն. Գումիլովի անվան եվրասիական ազգային համալսարանում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/International-conference-2018>, մուտք՝ 22.06.2019)

17 հոկտեմբերի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում ուսանողների համար դասախոսություն կարդաց Արտաքին կապերի եվրոպական ծառայության Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հարցերով կառավարիչ Թոմաս Մայեր Հարթինգենը: Դասախոսությանը ներկա էին ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն Արթուր Ղազինյանը, Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկին:

(Տե՛ս «Առանց երիտասարդների հեղափոխությունը չէր լինի այնպիսին, ինչպիսին այսօր է». Թոմաս Մայեր Հարթինգեն, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Meeting-with-Thomas-Mayr-Harting>, մուտք՝ 04.07.2019)

24 հոկտեմբերի – ԵՊՀ հայ բանասիրության, ռուս բանասիրության, ռոմանագերմանական բանասիրության, քիմիայի, աշխարհագրության և երկրաբանության, ֆիզիկայի, պատմության ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներն այցելեցին ՀՀ Տավուշի մարզի Բերդավանի միջնակարգ դպրոց:

(Տե՛ս Բերդավանի միջնակարգ դպրոցը հյուրընկալեց համալսարանականներին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Visit-to-Berdavan>, մուտք՝ 22.06.2019)

25 հոկտեմբերի – ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնը հյուրընկալել էր Գերմանիայի Օսնաբրյուկի կիրառական գիտությունների համալսարանի պատվիրակությանը:

Հանդիպումը կազմակերպվել էր Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի ու ԵՊՀ սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի միջև հերթական համագործակցության շրջանակում:

(Տե՛ս Գերմանիայի Օսնաբրյուկի կիրառական գիտությունների համալսարանի պատվիրակությունը՝ Սոցիոլոգիայի ֆակուլտետում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Osnabruck-university-delegation>, մուտք՝ 22.06.2019)

26 հոկտեմբերի – ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչության նախաձեռնությամբ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետ էին այցելել «Բյուրակն» կրթահամալիրի սաները:

(Տե՛ս «Բյուրակն» կրթահամալիրի սաները՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Byurakn-pupils-at-the-faculty-of-chemistry>, մուտք՝ 22.06.2019)

28 հոկտեմբերի – ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ուսանողները պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների

հետ այցելեցին Գյումրի ու կատարեցին բարբառագիտական ուսումնասիրություններ:

(Տե՛ս «Բարբառը մոր կաթի պես քաղցր է. ծնված օրից հետո է».
բարբառագիտական ուսումնասիրություններ Գյումրիում,
տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Dialectical-research-in-Gyumri>, մուտք՝ 22.06.2019)

6 նոյեմբերի – ԵՊՀ գեոդերալիկ հետազոտությունների և առաջնորդության կենտրոնը նախաձեռնել էր հանդիպում Վարչավայի համալսարանի ներկայացուցիչ Մագդալենա Կոնդասի հետ: Հանդիպման ժամանակ մա նշեց, որ սոցիալական ձեռնարկատիրությունը՝ թե՛ որպես պրակտիկա և թե՛ որպես հասկացություն, վերջին տարիներին լայնորեն օգտագործվում է տարբեր ոլորտների մասնագետների կողմից: Հյուրը մասնակիցներին ներկայացրեց մաս համեմատական հետազոտության արդյունքները:

(Տե՛ս Չեռնարկատիրությունը և կանայք. հանդիպում-քննարկում
ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝
<http://ysu.am/news/hy/Female-social-entrepreneurship-in-Palestine-and-Poland>, մուտք՝ 06.07.2019)

7 նոյեմբերի – ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը հանդիպեց Հայաստանում Ռուսաստանի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինի հետ:

Հանդիպմանը ներկա էին ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը, Միջազգային համագործակցության վարչության պետ Ալեքսանդր Մարգարովը, Ռուս բանասիրության ֆակուլտետի դեկան Պավել Բալայանը, ԵՊՀ ռուսական կենտրոնի տնօրեն Արուսյակ Ներսեսյանը:

Դեսպանն առաջին անգամ էր այցելում ԵՊՀ, ուստի Արամ Սիմոնյանը համառոտ ներկայացրեց համալսարանի անցած ուղին: Ռեկտորն անդրադարձավ մաս Ռուս բանասիրության ֆակուլտետի և Ռուսական կենտրոնի գործառնություններին: Այ-

նուհետև Սերգեյ Կոպիրկինը ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում հանդիպեց ուսանողների հետ: Դեսպանը ողջույնի խոսքում անդրադարձավ հայ-ռուսական հարաբերություններին՝ խոսելով դրանց ամուր հիմքերի և բազմակողմանիության մասին:

(Տե՛ս «Ռուսաստանի ժամանակակից պատմությունն առանց հայերի հնարավոր չէ պատկերացնել»․ ՀՀ-ում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Meeting-with-the-ambassador-of-Russia>, մուտք՝ 06.07.2019)

9 նոյեմբերի – Երևանի պետական համալսարանում նշվեց ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի 50-ամյակը, ինչպես նաև մեկնարկեց Հայկական արևելագիտական առաջին միջազգային կոնգրեսը:

Գիտական խորհրդի նիստերի դահլիճում բացման պաշտոնական արարողությանը ներկա էին ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը, ՀՀ ԿԳ՝ նախարարի պաշտոնակատար Արայիկ Հարությունյանը, ՀՀ սփյուռքի նախարարի պաշտոնակատար Մխիթար Հայրապետյանը, ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, հյուրեր հայաստանյան և միջազգային գործընկեր կառույցներից:

(Տե՛ս ԵՊՀ-ում նշվեց Արևելագիտության ֆակուլտետի 50-ամյակը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/First-annual-Armenian-international-congress-on-Oriental-studies>, մուտք՝ 22.06.2019)

23 նոյեմբերի – ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը, ներգրավելով Հայաստանի Հանրապետության առաջատար բուհերի ներկայացուցիչներին, Արդյունաբերողների և գործարարների միության հետ կազմակերպել էր խորհրդաժողով, որը նվիրված էր Հայաստանի տնտեսության զարգացման հիմնախնդիրներին: Խորհրդաժողովին ներկա էր նաև ՀՀ վար-

չապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը:

(Տե՛ս «Ի՞նչ անել». գիտագործնական խորհրդաժողովի արդյունքում կապ է ստեղծվել տնտեսագիտության և կառավարման միջև, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Economy-Development-in-Armenia>, մուտք՝ 06.07.2019)

4 դեկտեմբերի – ԵՊՀ պատմության, աստվածաբանության, արևելագիտության ֆակուլտետների և հայագիտական հետազոտությունների ինստիտուտի ուսանողական գիտական ընկերությունների նախաձեռնությամբ տեղի ունեցավ հանրապետական եռօրյա գիտաժողովի բացման արարողությունը:

(Տե՛ս Պատմաբանի օրվան նվիրված երիտասարդական հանրապետական եռօրյա գիտաժողով ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Conference-dedicated-to-historians-day>, մուտք՝ 22.06.2019)

2019

22 հունվար – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նիստը: Գևորգ Մուրադյանը միաձայն ընտրվեց ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ:

(Տե՛ս Նոր նախագահ և քարտուղար, բյուջեյի նախահաշվի, կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատումներ. տեղի ունեցավ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նիստը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Session-of-YSU-Board>, մուտք՝ 22.06.2019)

24 հունվարի – ԵՊՀ ռեկտորն իր աշխատասենյակում ընդունեց ՀՀ-ում Հումաստանի արտակարգ և լիազոր դեսպան Նաֆսիկա Նանսի Էվա Վրայլային: Հանդիպման ընթացքում քննարկվեցին ԵՊՀ հումագիտության գիտաուսումնական կենտրոն-գրադարանի աշխատանքներին առնչվող հարցեր:

Ներկա էին ԵՊՀ պրոռեկտորներ Ալեքսանդր Գրիգորյանը և Գեղամ Գևորգյանը, Սիջազգային համագործակցության վարչության պետ Ալեքսանդր Մարգարովը և ԵՊՀ հումագիտության կենտրոնի ղեկավար Լևոն Հակոբյանը:

(Տե՛ս ՀՀ-ում Հումաստանի դեսպանությունը շարունակում է աջակցել ԵՊՀ հումագիտության կենտրոնին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Meeting-with-the-Ambassador-of-Greece>, մուտք՝ 22.06.2019)

29 հունվարի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում Մայր բուհը և Նոթինգհեմի Թրենթ համալսարանը ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր՝ երկու համալսարանների իրավագիտության ֆակուլտետների միջև համագործակցություն հաստատելու նպատակով:

Հուշագրի շրջանակում երկու համալսարանները համագործակցելու են համատեղ ուսումնական ծրագրերի մշակման և ուսումնական մեթոդների ներդրման, ուսանողների և դասավանդող անձնակազմի փոխանակման ուղղությամբ, կազմակերպելու են գիտահետազոտական ծրագրեր, սեմինարներ և կոնֆերանսներ:

(Տե՛ս Երկկողմ դիպլոմավորման հնարավորություն և երկարատև համագործակցության հիմք. փոխընթերցման հուշագիր ԵՊՀ-ի և ՆԹՀ-ի միջև, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/YSU-and-NTU-memorandum>, մուտք՝ 23.06.2019)

15 փետրվարի – ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի նախաձեռնությամբ ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում գիտական համայնքի ներկայացուցիչները քննարկեցին, թե ինչ մոտեցումներով կարելի է պայքարել գրագողության դեմ:

Հանդիպման սկզբում ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը, ողջունելով ներկաներին, ասաց, որ գրագողությունը, թվում է, թե հայտնի երևույթ է, բայց մյուս կողմից այսօր հստակ սահմանում չունի: ՀՀ ԲՈԿ-ի նախագահ Սմբատ Գոգյանը նշեց, որ հանդիպման նպատակն է քննարկել և հասկանալ, թե որն է գրագողությունը, ինչպես մաս ստեղծել աշխատանքային խումբ, որը զբաղվելու է երևույթի սահմանման, կանխարգելման և դրա դեմ պատժի չափորոշիչների մշակմամբ:

(Տե՛ս «Գրագողության դեմ պայքարը պետք է սկսվի բուհերից». քննարկում ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Struggle-against-plagiarism>, մուտք՝ 06.07.2019)

28 փետրվար – ԵՊՀ պրոռեկտոր Գեղամ Գևորգյանի աշխատասենյակում տեղի ունեցավ հանդիպում «Rondine Citadella della Place» ասոցիացիայի պատվիրակության հետ:

Հանդիպմանը ներկա էին ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության պետ Ալեքսանդր Մարգարովը, ՀՀ-ում Իտալիայի դեսպանության փոխդեսպան Աննառոզա Կոլան-

ջելոն, «Rondine Citadella della Place» ասոցիացիայի տնօրեն Մաուրո Դ. Անդրեան, «Rondine Citadella della Place» ասոցիացիայի ներկայացուցիչ Վալենտինա Բրոկին:

Հանդիպման սկզբում տնօրեն Մաուրո Դ. Անդրեան պատմեց ասոցիացիայի հիմնադրման պատմությունը, ներկայացրեց գործունեության նպատակները:

(Տե՛ս Իտալական կրթաթոշակ՝ կոնֆլիկտային և հետկոնֆլիկտային երկրների ուսանողների համար, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Meeting-with-Rondine-Citadella-della-Pace>, մուտք՝ 06.07.2019)

7 մարտի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողների համար դասախոսությամբ հանդես եկավ Նյու Դելիի Ջ. Ներտի անվան համալսարանի քաղ. գիտ. թեկնածու, դոկտոր Ամիթաբն Սինգհը:

Սինգհն դասախոսությունը սկսելը Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան Գեղամ Պետրոսյանը ողջունեց ներկաներին և նշեց, որ ֆակուլտետը շարունակում է կազմակերպել արդեն ավանդույթ դարձած հանդիպումները քաղաքական գործիչների և տարբեր երկրներից ժամանած դասախոսների ու դիվանագետների հետ:

(Տե՛ս «Հնդկաստանի պատմությունը լի է հայազգի կերպարներով և Հայաստանի հետ կապված դրվագներով», դոկտոր Ամիթաբն Սինգհ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Lecture-by-Amitabn-Singh>, մուտք՝ 06.07.2019)

19 մարտի – ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Երկու ժողովուրդ, մեկ քաղաքակրթություն» խորագրով միջոցառում՝ նվիրված հայ-իրանական հարաբերություններին և Նովրուզին: Միջոցառումը կազմակերպվել էր՝ հանրությանը ներկայացնելու Հայաստան-Իրան հարաբերությունների զարգացումը, հարևան և բարեկամ ժողովուրդների մշակութային ու պատմական ընդհանրությունները, ինչպես նաև իրանական Նոր տար-

վա՝ Նովրուզի խորհուրդն ու ավանդույթները:

(Տե՛ս «Մենք տոնում ենք մեր բարեկամ Իրանի կարևոր տոներից մեկը՝ դրանով իսկ ցույց տալով մեր սերն ու հարգանքը հարևան ժողովրդի նկատմամբ»․ ԵՊՀ-ում նշվեց Նովրուզը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Event-dedicated-to-Novruz>, մուտք՝ 06.07.2019)

26 մարտի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետն հյուրընկալեց Գերմանիայի Բունդեսբազի պատգամավոր և գերմանահայկական ֆորումի նախագահ Ալբերտ Վայլերին, «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի Հարավային Կովկասի տարածաշրջանի գրասենյակի ղեկավար, դոկտոր Թոմաս Շրասելին, «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի երևանյան գրասենյակի ղեկավար Լիանա Մարությանին և հիմնադրամի գիտաշխատող Քրիստինա Բելմանին:

(Տե՛ս Հայ-գերմանական բուհական համագործակցությունը տեղափոխվում է նոր փուլ. հանդիպում Ալբերտ Վայլերի հետ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Meeting-with-Albert-Weiler>, մուտք՝ 23.06.2019)

2 ապրիլի – ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը կազմակերպել էր «Ղեկավարին կառավարելու հմտությունները» խորագրով դասընթաց «Beeline»-ի հայաստանյան գրասենյակում: Դասախոսությամբ հանդես եկավ Հայաստանում «Beeline»-ի գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինը: Ողջունելով ներկաներին՝ նա նշեց, որ իր ելույթը հիմնված է «HBR» (Harvard Business Review) ամսագրում հրապատարկված «Managing Your Boss» հոդվածի վրա: Անդրեյ Պյատախինը խոսեց այն մասին, թե ինչ արդյունքների կարելի է հասնել՝ կառավարելով ղեկավարին: Այդ գործընթացն ունի շատ նրբություններ, և պետք է հստակ գիտակցել, որ առաջին քայլն է ղեկավարին օգնելը: Աջակցելով և օգնելով ղեկավարին՝ հնարավոր է բարձրացնել թե՛ աշխատանքի արդյունավետությունը, թե՛ բավարարվածությունն աշխատանքով: Նա ներկայացրեց այն գլխավոր առանցքները, որոնք պետք են գործը հաջողելու համար:

Դասընթացի ավարտից հետո մասնակիցները շրջեցին «Beeline»-ի կապի թանգարանում՝ ծանոթանալով թե՛ ընկերության, թե՛ կապի պատմությանը:

(Տե՛ս Ղեկավարին կառավարելու հմտությունները.
դասընթացը վարում էր Հայաստանում «Beeline»-ի գլխավոր
տնօրեն Անդրեյ Պյատախինը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝
<http://ysu.am/news/hy/Lecture-by-Andery-Pyatakhin>, մուտք՝ 07.07.2019)

4 ապրիլի – ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում տեղի ունեցավ «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն» մագիստրոսական ծրագրի համար նախատեսված համակարգչային ուսումնական լաբորատորիայի բացումը:

(Տե՛ս «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն»
մագիստրոսական ծրագրի համար բացվեց համակարգչային
ուսումնական լաբորատորիա, տե՛ս ԵՊՀ պաշտոնական
կայք՝ <http://ysu.am/news/hy/Applied-Statistics-and-Data-Science-Laboratory-Opening>, մուտք՝ 07.07.2019)

12 ապրիլի ԵՊՀ իրանագիտության ամբիոնում տեղի ունեցավ «Շիրվան. պատմություն, մշակույթ և լեզվական իրավիճակ» խորագիրը կրող աշխատաժողով:

Աշխատաժողովին ներկա էին Իրանագիտության ամբիոնի դասախոսներ, ասպիրանտներ, ինչպես նաև ներկայացուցիչներ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտից:

(Տե՛ս «Շիրվան. պատմություն, մշակույթ եվ լեզվական իրավիճակ».
աշխատաժողով ԵՊՀ իրանագիտության ամբիոնում տե՛ս ԵՊՀ
պաշտոնական կայք <http://ysu.am/news/hy/Conference-about-Shirvan>,
մուտք՝ 07.07.2019)

15 ապրիլի – Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում տեղի ունեցավ «Կենտրոնական բանկի անկախությունը որպես ՀՀ սահմանադրականության կարևոր մոդ» թեմայով հանդիպում-քննարկում, որը կազմակերպել էին ԵՊՀ սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնը և ՀՀ կենտրոնական բանկի

«Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամը:

(Տե՛ս «Կենտրոնական բանկի անկախությունը որպես ՀՀ սահմանադրականության կարևոր նորմ». հանդիպում ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Independence-of-the-Central-Bank>, մուտք՝ 07.07.2019)

16 ապրիլի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում հյուրընկալվեցին Հայաստանում Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պարոն Վինչենցո Դել Մոնակոն և Իտալիայի Հանրապետության դատավորներից և Արդարադատության նախարարության պաշտոնյաններից կազմված պատվիրակությունը:

Պատվիրակության կազմում ընդգրկված էին Քրեական արդարադատության գրասենյակի գլխավոր տնօրեն Դոնատելլա Դոնատին, դատավորներ Ֆրանչեսկա Չագորեոն և Անտոնիո Պաստորեն:

(Տե՛ս Համագործակցության հնարավորությունների քննարկում.

Իտալիայի արդարադատության ոլորտի ներկայացուցիչներն Իրավագիտության ֆակուլտետում էին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Meeting-with-representatives-of-Italy-justice-field>, մուտք՝ 07.07.2019)

17 ապրիլի – ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում Էքս Մարսել համալսարանի դոկտոր Վենսան Օլիվիեն հանդես եկավ դասախոսությամբ:

(Տե՛ս Մասնագիտական փորձի փոխանակում Ֆրանսիայի Էքս Մարսել համալսարանի ու ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի միջև, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Experience-exchange-with-Aix-Marseille-university>, մուտք՝ 23.06.2019)

18 ապրիլի – ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում տեղի ունեցավ «Մինգապորի զարգացում. հաջողության հիմքերը» թեմայով հանդիպում-դասախոսություն, որը վարում էր Հոնկոնգի չինական (Հան) ակադեմիայի փոխտնօրեն, մի-

ջազգայնագետ Վահագն Վարդանյանը:

(Տե՛ս ԵՊՀ-ում դասախոսություն կարդաց Հոնկոնգի չինական ակադեմիայի փոխտնօրենը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝

<http://ysu.am/news/hy/Vahagn-Vardanyan-talks-about-Singapore>, մուտք՝ 23.06.2019)

18 ապրիլի – ԵՊՀ «Հովհաննես Ադամյան» սրահում Գեոդեթային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի նախաձեռնությամբ ներկայացվեց «19-րդ դարի պատրիարքարանի արխիվները և օսմանահայ կանայք» հետազոտությունը:

Հանդիպմանը ներկա էին ուսանողներ և դասախոսներ ԵՊՀ տարբեր ֆակուլտետներից, ինչպես նաև ներկայացուցիչներ մի շարք կազմակերպություններից: Բանախոսը Մյունխենի Լյուդվիգ Մաքսիմիլիան համալսարանի Մերձավոր և Միջին Արևելքի ուսումնասիրությունների ինստիտուտի հետազոտող դասախոս, դոկտոր, պրոֆեսոր Թալին Սուճյանն էր:

(Տե՛ս 19-րդ դարի պատրիարքարանի արխիվների վերծանումը՝ հայոց պատմության և արդարադատության տարբեր ասպեկտները հասկանալու հիմք, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Talin-Suciyan-talks-about-the-Armenians-in-Turkey>, մուտք՝ 23.06.2019)

22 ապրիլի – ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպեց ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների և ուսանողների հետ:

Հանդիպում-քննարկման առանցքում տնտեսական հեղափոխությանն առնչվող հարցերն էին: Ներկա էին ՀՀ ԿԳ նախարար Արայիկ Հարությունյանը, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Տիգրան Խաչատրյանը, ֆինանսների նախարար Ատոմ Ջանջուղազյանը, կառավարության անդամներ, պատգամավորներ, տնտեսագետներ և ուսանողներ:

(Տե՛ս Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպեց տնտեսագետների հետ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Prime-minister-met-economists>, մուտք՝ 23.06.2019)

22-26 ապրիլի ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի ռոմանական բանասիրության ամբիոնն հյուրընկալել էր Մադրիդի Կոմպլուտենսեի համալսարանի պրոֆեսոր, թարգմանիչ, հայտնի առաժաբան Խուլիա Սևիլիա Մունյոսին:

(Տե՛ս ԵՊՀ-ն հյուրընկալել է հայտնի առաժաբան Խուլիա Սևիլիա Մունյոսին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Professor-from-Complutense-University-of-Madrid>, մուտք՝ 07.07.2019)

23 ապրիլի ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի հեռուստալսարանում այսօր Հանրային լրագրության ակումբի (ՀԼԱ) նախաձեռնությամբ տեղի ունեցավ հանդիպում, որի ժամանակ ներկայացվեց «Փաստերի ստուգման ուղեցույցը»:

(Տե՛ս Փաստերի ստուգումն առավել դյուրին և հետաքրքիր. ստեղծվել է մոր ուղեցույց, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Presentation-of-Fact-finding-Guide>, մուտք՝ 07.07.2019)

25 ապրիլի ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնը հյուրընկալել էր Հայաստանում Հնդկաստանի արտակարգ և լիազոր դեսպան Ն. Գ. պարոն Սանգվան Յոգեշվարին: Հանդիպմանը ներկա էին դեսպանատան, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ: Ողջունելով ներկաներին՝ Իրանագիտության ամբիոնի վարիչ Վարդան Ոսկանյանը նշեց, որ օրը նշանակալի է ֆակուլտետի համար, քանի որ նախատեսվում է զարգացնել հնդկագիտությունը՝ որպես արևելագիտության կարևոր ուղղություն:

(Տե՛ս «Մա հետաքրքիր և խորհրդանշական սկիզբ է»․ Հնդկաստանի դեսպանը գրքեր մվիրեց իրանագիտության ամբիոնին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Books-from-Indian-embassy>, մուտք՝ 07.07.2019)

25 ապրիլի – ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը հանդիպեց ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների և ուսանողների հետ: Հանդիպման ավարտին նախարար Մնացականյանը ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտե-

տի 20-ամյակի կապակցությամբ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գեղամ Պետրոսյանին և պատմ. գիտ. քեկնածու, դոցենտ Վահրամ Պետրոսյանին պարգևատրեց ԱԳՆ 2-րդ աստիճանի Պատվո մեդալներով: Այնուհետև հաջորդեց ՀՀ ԱԳՆ և ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջև համագործակցության մասին հուշագրի ստորագրման արարողությունը:

(Տե՛ս Համագործակցության մոր հեռանկարներ ՀՀ ԱԳՆ-ի և ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջև, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Zohrab-Mnatsakanyan-met-representatives-of-faculty-of-International-relations>, մուտք՝ 07.07.2019)

25 ապրիլի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հանդիպումը Ֆրանկֆուրտում գործող «Ցեղասպանության հակառակորդների միության»՝ Հայաստան ժամանաձ պատվիրականության հետ:

(Տե՛ս «Մենք կշարունակենք մեր պայքարն այնքան, մինչև թուրք հասարակությունը գիտակցի և ընդունի իր պատասխանատվությունը». հանդիպում ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Meeting-with-representatives-of-Union-of-Genocide-opponents>, մուտք՝ 07.07.2019)

26-27 ապրիլի – ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի կիրառական սոցիոլոգիայի գիտահետազոտական լաբորատորիան Ծաղկաձորի «Համալսարան» ուսումնասիրտադրական բազայում կազմակերպել էր «Համալսարանական կրթությունը սոցիոլոգիական հեռանկարում. մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով միջազգային գիտաժողով:

Մասնակցում էին ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը, ասպիրանտներ, ուսանողներ, ինչպես նաև մասնագետներ Հայ-ռուսական (Սլավոնական), Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարաններից: Գիտաժողովին ելույթներ ունեցան նաև մասնագետներ

արտասահմանից՝ Չեխիայի Հրադեչ Կրալովե համալսարանից սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի դոկտորներ Սիբրուավ Կապպլը, Կվետենսկա Դանիելան, Բելառուսի համալսարանի պրոֆեսոր Լարիսա Տիտորենկոն, Կուրանի համալսարանի դոկտոր Նատալյա Յուրչենկոն, Սանկտ Պետերբուրգի Լեագաֆտի անվան ֆիզիկական կուլտուրայի համալսարանի դոկտոր Քաջիկ Օհանյանը և այլ մասնագետներ:

(Տե՛ս Համալսարանական կրթության վերաբերյալ միջազգային գիտաժողով՝ մվիրված ԵՊՀ 100-ամյակին,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/>

Sociological-perspective-of-the-university-education, մուտք՝ 06.07.2019)

2 մայիսի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատան ներկայացուցիչ, Ֆրանսիայի համալսարանների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության համագործակցության հարցերի կցորդ Շարլոտ Վենեման ներկայացրեց 2019-2020 թթ. ֆրանսիական կառավարության կողմից տրամադրվող կրթաթոշակները: Բանախոսը նախ ներկայացրեց Ֆրանսիայում բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող «Campus France»-ի ծրագրերը, այնուհետև պարզաբանեց, թե հայ ուսանողները ինչպես կարող են դիմել Ֆրանսիայի տարբեր համալսարաններ՝ ուսումը շարունակելու նպատակով: Դրանից բացի՝ ուսանողներին խորհուրդներ տվեց, թե ինչպես համացանցում գտնել տարբեր կրթաթոշակներ և ստանալ ուսանողական վիզա՝ ֆրանսիական բուհերում սովորելու համար:

(Տե՛ս Ֆրանսախոս ուսանողներին ներկայացվեցին 2019-2020 թթ.

ֆրանսիական կառավարության կողմից տրամադրվող կրթաթոշակները, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝

<http://ysu.am/news/hy/Scholarships-by-French-government>, մուտք՝ 06.07.2019)

3 մայիսի – ԵՊՀ ռեկտորն իր աշխատասենյակում ընդունեց Լյուբլինի (Լեհաստան) կաթոլիկ համալսարանի ռեկտոր Ամտոնի Դեբինսկիին:

Միջոցառման կազմակերպիչը ԵՊՀ միջազգային համագործակցության վարչությունն էր:

(Տե՛ս Հանդիպում Լյուբլինի (Լեհաստան) կաթոլիկ համալսարանի ռեկտորի հետ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Meeting-with-rector-of-Catholic-University-of-Lublin>, մուտք՝ 23.06.2019)

6 մայիսի – Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը հանդիպեց ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ: Մասնավորապես անդրադարձ եղավ դատաիրավական և կրթական համակարգերում իրականացված բարեփոխումներին, ինչպես նաև պետական, այդ թվում՝ դատական համակարգը որակյալ կադրերով համալրելու հարցերին:

(Տե՛ս ՀՀ նախագահը հանդիպել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ներկայացուցիչների հետ, <http://ysu.am/news/hy/Armen-Sarkissian-met-representatives-of-faculty-of-law>, մուտք՝ 06.07.2019)

7 մայիսի – Երևանի պետական համալսարանում անցկացվեց համառոտական «Հաղթանակի թելադրություն» («Диктант Победы») խորագիրը կրող գրավոր մրցույթը, որի նպատակն է ավելի մեծ ուշադրություն հրավիրել Հայրենական պատերազմի պատմության հետազոտության վրա, բարձրացնել պատմական ճանաչողությունը և խթանել հայրենասիրական դաստիարակությունը:

(Տե՛ս ԵՊՀ-ում անցկացվեց միջպետական «Հաղթանակի թելադրություն» մրցույթը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Competition-dedicated-to-Victory-day>, մուտք՝ 04.07.2019)

7 մայիսի – Երևանի պետական համալսարանի եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնում տեղի ունեցավ հանդիպում Ֆրանսիայի Բուրգունդիայի Ֆրանշ-Կոմտե համալսարանի

(UBFC) ներկայացուցիչների հետ:

(Տե՛ս Ուսանողներին ներկայացվեցին Բուրգունդիայի Ֆրանշ-Կոմտե համալսարանում դասավանդվող մագիստրոսական 16 ծրագրերը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք <http://ysu.am/news/hy/Meeting-with-UBFC-representatives>, մուտք՝ 23.06.2019)

8 մայիսի – ԵՊՀ Եգիպտոսի անվան լսարանում դասախոսություն կարդաց Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի (Ռ-Գ-Ա) արևելագիտության ինստիտուտի արաբական և իսլամական հետազոտությունների կենտրոնի տնօրեն, Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի համաշխարհային քաղաքականության ֆակուլտետի դոցենտ, պատմ. գիտ. թեկնածու Վասիլի Կուզնեցովը: Դասախոսությունը կազմակերպել էր Արևելագիտության ֆակուլտետը:

(Տե՛ս Արևելագետ Վասիլի Կուզնեցովը դասախոսություն կարդաց ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Lecture-by-Vasili-Kuznetsov>, մուտք՝ 23.06.2019)

11 մայիսի – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տեղի ունեցավ Հ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով, որը կազմակերպել էր ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնը:

(Տե՛ս Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված գիտաժողով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Conference-at-Ijevan-branch-dedicated-to-Tumanyan-150>, մուտք՝ 23.06.2019)

14 մայիսի – Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում անցկացվեց դասախոսություն՝ «Ռ-Դ-Մեծ Բրիտանիա հարաբերությունները արդի շրջանում» թեմայով:

«Ինտեգրացիա և զարգացում» հետազոտական վերլուծական հասարակական կազմակերպությունը համալսարան էր

հրավիրել Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Եվրոպայի ինստիտուտում բրիտանական հետազոտությունների կենտրոնի ղեկավար, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ելենա Անանիսյան:

(Տե՛ս Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Բրիտանական հետազոտությունների կենտրոնի ղեկավարը դասախոսություն կարդաց ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Lecture-by-Yelena-Ananieva>, մուտք՝ 07.07.2019)

16 մայիսի – ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում մեկնարկեց «PRINTEL» նախագծի շրջանակում իրականացվող «Նորարարական դասավանդումը և ուսումնառությունը» խորագրով միջազգային գիտաժողով-աշխատաժողովը, որը նվիրված է ԵՊՀ 100-ամյակին:

Մասնակցում էր շուրջ 100 ներկայացուցիչ նախագծի գործընկեր Եվրոպական և Արևելյան գործընկերության 15 բուհերից և այլ կրթական հաստատություններից:

(Տե՛ս «Նորարարական դասավանդումը և ուսումնառությունը բուհերում» միջազգային գիտաժողով-աշխատաժողով՝ նվիրված ԵՊՀ 100-ամյակին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/International-conference-workshop-dedicated-to-YSU-100>, մուտք՝ 23.06.2019)

16 մայիսի – ՀՀ կենտրոնական բանկը շրջանառության մեջ դրեց «ԵՊՀ հիմնադրման 100-ամյակ» արծաթե հուշադրամը. թողարկվում է 500 օրինակ:

Հուշադրամի դիմերեսին պատկերված են հայ գիտնականներին նվիրված հուշապան հատվածը, որը գտնվում է Երևանի պետական համալսարանի սրահում, և «SCIENTIA POTENTIA EST» մակագրությունը, իսկ դարձերեսին՝ «Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց» խմբաբանդակից հատված:

«ԵՊՀ հիմնադրման 100-ամյակ» հուշադրամի ֆոնին ԵՊՀ շենքի ուրվագծի և գերբի պատկերներն են:

Հուշադրամի անվանական արժեքը 1000 ՀՀ դրամ է, այն ար-

ծաթյա է, 925 հարգի, քաշը՝ 33.6 գ, տրամագիծը՝ 40 մմ:

Հուշադրամի էսքիզների հեղինակներն են Հարություն Սամուելյանը (ղիմերես) և Վարդան Վարդանյանը (դարձերես): Այն հատվել է Լիտվայի դրամահատարանում:

(Տե՛ս ՀՀ կենտրոնական բանկը շրջանառության մեջ է դրել «ԵՊՀ հիմնադրման 100-ամյակ» հուշադրամը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/YSU-100-commemorative-coin>, մուտք՝ 04.07.2019)

21 մայիսի – ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի չինագիտության կենտրոնում դասախոսություններով հանդես եկան Չինաստանի հասարակական գիտությունների ակադեմիայի գիտաշխատողներ Լի Սյան, Յույ Խունլյանը, Տան Չփի Ցաոն և Խուան Յունգուանը:

(Տե՛ս ԵՊՀ-ի և Չինաստանի հասարակական գիտությունների ակադեմիայի միջև համագործակցությունն ամրապնդվում է, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Cooperation-with-Chinese-Academy-of-Social-Sciences>, մուտք՝ 23.06.2019)

22 մայիսի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում դասախոսություն կարդաց ֆրանսիացի քաղաքագետ, զինված ընդհարումների մասնագետ Ժերար Շալիանը:

Դասախոսությունը կրում էր «Ինչո՞ւ Վիետնամի պատերազմից (1975-2019 թթ.) հետո ոչ կանոնավոր պատերազմներում չեն գրանցվել հաղթանակներ» խորագիրը: Միջոցառումը կազմակերպել էր ԵՊՀ միջազգային համագործակցության վարչությունը: Ներկա էին դասախոսներ և ուսանողներ Արևելագիտության, Պատմության և Միջազգային հարաբերությունների ֆակուլտետներից:

(Տե՛ս Քաղաքագետ Ժերար Շալիանը դասախոսություն կարդաց ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Gerard-Shalian-delivered-a-lecture>, մուտք՝ 23.06.2019)

22 մայիսի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դատական նիստերի դահլիճում Գերմանիայի Սահմանադրական դատարանի նախկին դատավոր, դոկտոր, պրոֆեսոր Միխայել Այխբերգերը հանդես եկավ դասախոսությամբ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) միջև հաստատված համագործակցության շրջանակում տեղի ունեցած դասախոսությունը կազմակերպվել էր Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Հարավային Կովկասում եվրոպական չափորոշիչներին իրավական համապատասխանեցում» ծրագրի նախաձեռնությամբ:

(Տե՛ս Մեփականության իրավունքի դոգմատիկան՝ ըստ Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի. դասախոսություն ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Michael-Eichberger-delivered-a-lecture>, մուտք՝ 04.07.2019)

23 մայիսի – ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը գիտխորհրդի նիստի ավարտին հրաժարական է տալիս ԵՊՀ ռեկտորի պաշտոնից:

(Տե՛ս Արամ Սիմոնյանը հրաժարական է տվել ԵՊՀ ռեկտորի պաշտոնից, տե՛ս Ազատություն ռադիոկայանի պաշտոնական կայք՝ <https://www.azatutyun.am/a/29958554.html>, տե՛ս նաև ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Rector-has-resigned>, մուտք՝ 23.06.2019)

24 մայիսի – ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետում անցկացվեց համալսարանի հիմնադրման 100-ամյակին նվիրված երիտասարդական գիտաժողով, որը կազմակերպել էր ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերությունը: Գիտաժողովին ներկա էին ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները և ուսանողները:

(Տե՛ս Երիտասարդական գիտաժողով՝ նվիրված ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Youth-Conference-at-the-faculty-of-Radiophysics>, մուտք՝ 23.06.2019)

24 մայիսի – ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետը կազմակերպել էր միջոցառում՝ նվիրված ռուս մեծ բանաստեղծ Ալեքսանդր Պուշկինի 220-ամյակին: Ներկա էին ԵՊՀ տարբեր ֆակուլտետների ուսանողներ, պրոֆեսորադասախոսական կազմի ու Երևանում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի ներկայացուցիչներ, ինչպես նաև հյուրեր Ռուսաստանից: Ֆակուլտետի ուսանողները ներկայացրին գրողի կյանքն ու գործունեությունը, սերերը, քաղաքական հավածանքներն ու մահը: Միջոցառումն ուղեկցված էր ոչ միայն ասմունքով, այլև երաժշտական կատարումներով ու տեսապատկերներով:

(Տե՛ս Ռուս բանասիրության ֆակուլտետում տեղի ունեցավ Ա. Պուշկինի 220-ամյակին նվիրված միջոցառում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Event-dedicated-to-Pushkin-220>, մուտք՝ 07.07.2019)

30 մայիսի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նիստը՝ օրակարգային 2 հարցով: Առաջինը վերաբերում էր «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառավարիչ-նեկտոր Արամ Սիմոնյանի՝ իր դիմումի համաձայն լիազորությունների վաղաժամկետ դադարեցմանը: ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը 30 կողմ և 2 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հաստատեց դիմումը: Այնուհետև խորհուրդն անցավ օրակարգի երկրորդ հարցին՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառավարիչ-նեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի ընտրությանը, և ընտրության արդյունքներով ԵՊՀ մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ սակադեմիկոս Գեղամ Գևորգյանը ընտրվեց ԵՊՀ կառավարիչ-նեկտորի ժամանակավոր պաշտոնակատար:

(Տե՛ս ԵՊՀ նեկտորի ժամանակավոր պաշտոնակատար է ընտրվել Գեղամ Գևորգյանը, տեղի ունեցավ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի արտահերթ նիստը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Session-of-Board-of-Trustees-30-05-2019>, մուտք՝ 23.06.2019)

3 հունիսի – ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյանը և փոխնախարար Գրիշա Թամրազյանն այցելեցին համալսարան և ԵՊՀ ղեկավարության հետ քննարկեցին համալսարանի 100-ամյակին նվիրված միջոցառումներին առնչվող հարցեր:

(Տե՛ս Արայիկ Հարությունյանը հանդիպել է ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գեղամ Գևորգյանի հետ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Arayik-Harutyunyan-met-Gegham-Gevorgyan>, մուտք՝ 23.06.2019)

7 հունիսի – ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գեղամ Գևորգյանն իր աշխատասենյակում հանդիպեց Ուդինեի համալսարանի ռեկտոր Ալբերտո Ֆելիչե դե Տոնիի ղեկավարած պատվիրակության հետ: Քննարկվեցին երկու համալսարանների միջև համագործակցություն հաստատելու ուղղություններն ու շրջանակները: Գեղամ Գևորգյանը Ուդինեի համալսարանի պատվիրակությանը հրավիրեց մասնակցելու սեպտեմբերին ԵՊՀ 100-ամյակին նվիրված միջոցառումներին:

(Տե՛ս Գեղամ Գևորգյանը հյուրընկալել է Ուդինեի համալսարանի պատվիրակությանը՝ քննարկելու համագործակցության հեռանկարը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Cooperation-with-university-of-Udine>, մուտք՝ 23.06.2019)

7 հունիսի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի նախաձեռնությամբ դասախոսությամբ հանդես եկավ ԱՄՆ Թավթս համալսարանի Ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտության դպրոցի պրոֆեսոր Մայքլ Գլենոնը:

(Տե՛ս Միջազգային իրավունքի հայտնի պրոֆեսոր Մայքլ Գլենոնը դասախոսություն կարդաց ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Democracy-in-the-Modern-World>, մուտք՝ 07.07.2019)

17 հունիսի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում մեկնարկեց «Nuclear and Radiation Physics and Materials» («Միջուկային և

ռադիացիոն ֆիզիկա և նյութեր») խորագրով միջազգային քառօրյա կոնֆերանսը:

(Տե՛ս Գիտնականները քննարկում են միջուկային և ռադիացիոն ֆիզիկայի ու նյութագիտության հիմնախնդիրները. կոնֆերանս ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Nuclear-and-Radiation-Physics-and-Materials>, մուտք՝ 23.06.2019)

18 հունիսի – ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գեղամ Գևորգյանը հյուրընկալեց Խաղաղության և հանդուրժողականության միջազգային կազմակերպության պատվիրակությանը՝ ի դեմս նախագահ պարոն Ահմադ Ալջարուանի և ՀՀ-ում Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպան Մուհամմադ ալ Ջաաբիին: Գեղամ Գևորգյանը Խաղաղության և հանդուրժողականության միջազգային կազմակերպության պատվիրակությանը հրավիրեց մասնակցելու սեպտեմբերին կայանալիք ԵՊՀ 100-ամյակին նվիրված միջոցառումներին:

(Տե՛ս ԵՊՀ-ն համագործակցելու է Խաղաղության և հանդուրժողականության միջազգային կազմակերպության հետ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Cooperation-with-The-Global-Council-for-Tolerance-and-Peace>, մուտք՝ 23.06.2019)

20 հունիսի – ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գեղամ Գևորգյանն իր աշխատասենյակում հանդիպեց Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի տնօրեն Անի Աբրահամյանի հետ: Քննարկվեցին կողմերի միջև համագործակցություն հաստատելու ուղղությունները:

Հանդիպմանը ներկա էին ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռաֆիկ Հակոբյանը, Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի գիտական քարտուղար Արփինե Փիլոյանը: Գեղամ Գևորգյանը և Անի Աբրահամյանը ստորագրեցին համագործակցության համաձայնագիր, համաձայն որի՝ կողմերը պատրաստվում են կազմակերպելու ուսանողական պրակտիկաներ, մշակելու գիտահետազոտական և կրթական

համատեղ նախագծեր:

(Տե՛ս Ա. Ալիխանյանի ազգային գիտական լաբորատորիայի և ԵՊՀ-ի միջև կնքվեց համագործակցության համաձայնագիր, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Cooperation-with-YerPhi>, մուտք՝ 23.06.2019)

20 հունիսի – ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում տեղի ունեցան «Սովորող ուսուցիչ» առցանց վերապատրաստումների ծրագրի ամփոփումը և «Սովորող ուսուցիչ-1» խորագրով գիտագործնական հանրապետական առաջին կոնֆերանսը:

(Տե՛ս Քննարկումներ՝ կրթության և ուսուցիչների կատարելագործման վերաբերյալ. գիտագործնական կոնֆերանս ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Trainings-for-teachers>, մուտք՝ 07.07.2019)

22 հունիսի – ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գեղամ Գևորգյանն իր աշխատասենյակում հյուրընկալեց Երուսաղեմի եբրայական համալսարանի հայագիտության կենտրոնի հիմնադիր Մայքլ Սթունին և գործող տնօրեն Ռուվեն Ամիտային: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկեցին մասերկու կառույցների միջև հաստատված համագործակցությունն առավել արդյունավետ դարձնելու ուղիները: Գեղամ Գևորգյանը փաստեց, որ պատրաստ է աջակցելու երկկողմ գաղափարների իրականացմանը: Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը Մայքլ Սթունին և Ռուվեն Ամիտային հրավիրեց մասնակցելու ԵՊՀ 100-ամյակին նվիրված միջոցառումներին, որոնք տեղի են ունենալու սեպտեմբերին:

(Տե՛ս Նոր հնարավորություններ հայագիտության ոլորտում. Երուսաղեմի եբրայական համալսարանի հայագիտության կենտրոնի ղեկավարներն այցելել են ԵՊՀ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Cooperation-with-Hebrew-university-of-Jerusalem>, մուտք՝ 23.06.2019)

26 հունիսի – ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Մահթումկուլի Ֆրագին համաշխարհային մշակույթի

պատմության մեջ» խորագրով գիտաժողով: Այն կազմակերպվել է Երևանի պետական համալսարանի ու Հայաստանում Թուրքմենստանի դեսպանատան համատեղ ջանքերով և նվիրված էր թուրքմեն մեծ բանաստեղծ ու մտածող Մահթումկուլի Ֆրագիի ծննդյան 295-ամյակին:

(Տե՛ս Հայ-թուրքմենական հարաբերությունների ամրապնդման գործում Մահթումկուլի Ֆրագիի պոեզիան բացառիկ դեր է խաղում.

գիտաժողով ԵՊՀ-ում՝ նվիրված թուրքմեն պոետի 295-ամյակին,

տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/>

Makhtumkuli-in-the-history-of-world-culture, մուտք՝ 07.07.2019)

27 հունիսի – Երևանի պետական համալսարանում տեղի ունեցավ ԵՊՀ հիմնադրման 100-ամյակի առթիվ թողարկված հոբելյանական մամականիշի մարման արարողությունը: Թողարկումը վավերացրին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյանը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Հակոբ Արշակյանը, ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գեղամ Գևորգյանը, «ՀայՓոստ» ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Հայկ Ավագյանը և ՀՀ Ֆիլատելիստների միության նախագահ Հովիկ Մուսայելյանը: Գեղաթերթիկի վրա պատկերված են ԵՊՀ կենտրոնական մասնաշենքն ու նրա առջև գտնվող «Սահակ Պարթև և Մարտպ Մաշտոց» արձանախումբը: Նամականիշի ստորին աջ անկյունում պատկերված է ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված տարբերանշանը: 220 դրամ անվանական արժեքով մամականիշը տպագրել է Ֆրանսիայի «Cartor» տպագրատունը 30.000 օրինակով: ԵՊՀ 100-ամյակին նվիրված հոբելյանական մամականիշի դիզայնի հեղինակը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի դասախոս Լևոն Լաճիկյանն է, որը պարգևատրվեց ԵՊՀ ոսկե մեդալով:

Գեղամ Գևորգյանը, շնորհավորելով ներկաներին, փաստեց, որ սա ո՛չ առաջին և ո՛չ էլ վերջին միջոցառումն է՝ նվիրված ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին. «Չեմ ուզում այսօր անդրադառնալ համալսարանի անցած 100-ամյա ճանապարհին, քա-

նի որ դրա առիթները դեռ լինելու են: Միայն ուզում եմ նշել, որ անուրանալի են նրա դերն ու նշանակությունը: Ես հույս ունեմ, որ հաջորդ հարյուրամյակի ընթացքում համալսարանը կանի ավելին, քան արել է այս տարիների ընթացքում»:

(Տե՛ս Թողարկվել է հոբոլյանական մամականիշ՝ նվիրված
ԵՊՀ 100-ամյակին, տե՛ս ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնական կայք՝
<http://edu.am/index.php/am/news/view/7614>, տե՛ս մաս
Շրջանառության մեջ է դրվել ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին
նվիրված մամականիշը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝
<http://ysu.am/news/hy/YSU-stamp-cancellation>, մուտք՝ 02.07.2019)

2 հուլիսի – ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ 100-րդ տարեդարձին նվիրված միջոցառումները համա-կարգող հոբոլյանական հանձնաժողովի նիստը: ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գեղամ Գևորգյանը հանձ-նաժողովի անդամներին ներկայացրեց 100-ամյակին նվիրված միջոցառումների ժամանակացույցը և դրանց կազմակերպ-մանն ուղղված աշխատանքները:

(Տե՛ս ԵՊՀ 100-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման
աշխատանքները շարունակվում են, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝
<http://ysu.am/news/hy/Jubilee-commission-session-02-07-2019>,
մուտք՝ 04.07.2019)

4 հուլիսի – ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում մեկնարկեց Ման-կավարժության և կրթության զարգացման կենտրոնի կազմա-կերպած «Կրթության կառավարման հիմնախնդիրները բարձ-րագույն կրթության համակարգում» ամառային դպրոցը:

(Տե՛ս «Ամառային դպրոցը փորձի փոխանակման, մոտեցումների,
գաղափարների ստեղծման հարթակ է». մեկնարկեց
«Կրթության կառավարման հիմնախնդիրները բարձրագույն
կրթության համակարգում» ամառային դպրոցը, տե՛ս ԵՊՀ
պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Problems-of-Educational-Management-in-the-Higher-Education-System>, մուտք՝ 04.07.2019)

5 հուլիսի – Երևան քաղաքի Ծարավ Աղբյուրի 55/27 հասցեում տեղի ունեցավ Մայր բուհի հիմնադրման 100-ամյակին նվիրված «Համալսարանական» պուրակի բացման հանդիսավոր արարողությունը, որը կառուցել է «ԵՊՀ շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպությունը:

Պուրակի բացումն ուղեկցվեց տոնական համերգով: «ԵՊՀ շրջանավարտների միավորում» ՀԿ նախագահ Արսեն Բարամյանը լրագրողների հետ զրույցում նշեց, որ «Համալսարանական» պուրակի կառուցմամբ, ըստ էության, ազդարարվում է 2008 թ. մեկնարկված և Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Ծարավ Աղբյուրի փողոցում իրականացված քաղաքաշինական ծրագրի ավարտը:

ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գեղամ Գևորգյանի խոսքով՝ համալսարանն իր 100-ամյակին արժանի նվեր է ստանում: «Ընդհանրապես դժվար է քաղաքում գտնել մի թաղամաս, որը 10 տարվա ընթացքում այսչափ կերպարանափոխված լինի: Մարդիկ, որոնք 10 տարի առաջ եղել են այստեղ, լավ կհիշեն և կփաստեն, թե ինչ փոփոխություն է եղել: Համալսարանական բնակիչները շատ գոհ են ինչպես իրենց բնակարաններից, այնպես էլ այն միջավայրից, որտեղ ապրում են: Իսկ նման պուրակի բացումն առավել հարմարավետ կդարձնի նրանց կենցաղը», - նշեց Գեղամ Գևորգյանը և հավելեց, որ թաղամասում իդեալական պայմաններ են՝ լավ, հանգիստ և խաղաղ ապրելու համար:

Շուրջ 6000 քմ մակերեսով պուրակում տնկվել են մշտադալար և սաղարթախիտ շուրջ 300 ծառ և բույս: Կառուցվել են ճեմուղիներ, տեղադրվել նստարաններ, աղբամաններ: Երեխաների համար կառուցվել են կահավորված, գեղեցիկ և հարմարավետ խաղահրապարակներ: Անցկացվել են ոռոգման համակարգ և ժամանակակից արտաքին լուսավորություն: Իսկ այս ամենն ամբողջացնում է լուսային շատրվանը:

Այցելուների ժամանցը լիարժեք դարձնելու նպատակով պուրակում գործելու է նաև սրճարան, որի տանիքում տեղադրված է արևային ֆոտովոլտային կայան՝ այգու արտաքին լու-

սավորության կարիքները մասնակիորեն հոգալու համար:

Պուրակի կառուցապատման աշխատանքների համար
ծախսվել էր շուրջ 200 մլն ՀՀ դրամ:

(Տե՛ս Կայացավ « Համալսարանական» պուրակի բացման
հանդիսավոր արարողություն, տե՛ս ԵՊՀ շրջանավարտների
միավորման պաշտոնական կայք՝ <http://ysugu.am/index.php/>
2019/07/05/14437/, մուտք՝ 07.07.2019)

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետությունում համալսարան բացելու մասին քննարկումները սկսվեցին դեռ 1918 թ. աշնանից:

1918 թ. հոկտեմբերին Ս. Տիգրանյանի նախաձեռնությամբ Թիֆլիսում հրավիրվում է խորհրդակցություն Հայաստանի Հանրապետությունում համալսարանական տիպի դպրոց հիմնելու մասին: Խորհրդակցությանը մասնակցում էին Յուրի Դամբարյանը, Դավիթ Չավրիկը (Չավրյան), Թիֆլիսի միջնակարգ դպրոցների հայ ուսուցիչները, ինչպես նաև այլ ուսումնական հաստատությունների մի քանի մանկավարժներ: Երկարատև քննարկումներից հետո խորհրդակցության մասնակիցները ընդունեցին փոխգիշումային որոշում՝ ստեղծել դպրոց կամ դասընթացներ, որոնք կպատրաստեին մասնագետներ վարչական, հանրային և մանկավարժական աշխատանքների համար՝ վերջնական նպատակ ունենալով այն դարձնել համալսարան (տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 13-14): [էջ 7]

2. Նամակը ռուսերեն է, որտեղ տեսուչ-ի փոխարեն նշված է ռեկտոր Բառը (տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 89): [էջ 14]

3. Նախարարների խորհուրդը 1919 թ. սեպտեմբերի 1-ին N 145 նիստում որոշեց Երևանի արական գիմնազիայի շենքի մի թևը հատկացնել համալսարանին և Հանրային կրթության և արվեստի նախարարության ներկայացուցչին ընդգրկել շինարարական հանձնաժողովի կազմում: Այդ աշխատանքը հետագայում հանձնարարվեց Դավիթ Չավրյանին (տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 303): [էջ 16]

4. 1919 թ. դեկտեմբերի 23-ին համալսարանական հանձնաժողովը որոշեց պարապմունքները սկսել 1920 թ. հունվարի 25-ին: Սակայն այդ

օրը Երևանում Հայաստանի Հանրապետության ճանաչման տոնակատարության կապակցությամբ համալսարանի բացումը տեղափոխվեց հունվարի 31-ին (տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 308): [էջ 20]

5. Հանրային կրթության և արվեստի նախարարի՝ նույն թվականի ապրիլի 27-ի N 117 հրամանով Հակոբ Մանանդյանը նշանակվեց Երևանի համալսարանի պատմա-լեզվաբանական ֆակուլտետի հայոց պատմության դոցենտ (տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 314): [էջ 25]

6. 1920 թ. ապրիլի 6-ին Նախարարների խորհուրդը այդ հարցի վերաբերյալ որոշեց հանձնարարել Հանրային կրթության և արվեստի նախարարին այդ առթիվ համաձայնության գալ զինվորական նախարարի հետ (տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 314): [էջ 26]

7. Դեռ 1920 թ. հունիսի 21-ին ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարարը նամակով դիմել էր ՀՀ Նախարարների խորհրդին՝ խնդրելով Երևանի համալսարանի տեսուչ Յուրի Ղամբարյանին նշանակելու խնդրանքով: Նամակում մասնավորապես նշված էր. «Հայաստանի համալսարանի կազմակերպիչ, պրոֆեսոր Յուրի Ղամբարյանը վարած էր Թիֆլիսի պոլիտեխնիկումի ռեկտորի պաշտոնը մինչև սույն թիվ ապրիլի 3-ը, երբ նա հրաժարվեց այդ վերջին պաշտոնից: Այժմ նա հնարավորություն ունի ամբողջովին տրամադրելու իր ուժերը միայն Երևանի համալսարանին, ուստի և պատիվ ունենք խնդրելու նշանակել պրո[ֆեսոր] Ղամբարյանին Երևանի համալսարանի ռեկտորի պաշտոնում, սկսած սույն տարվա ապրիլի 16-ից»:

Համաձայն հունիսի 25-ի օրենքի՝ Յու. Ղամբարյանը հաստատվեց Երևանի համալսարանի ռեկտորի պաշտոնում նույն թվականի ապրիլի 16-ից (տե՛ս Երևանի համալսարանը. 1918-1920 թթ., Վավերագրերի ժողովածու, կազմ.՝ Մամիկոնյան Ֆ. Հ., Միրզոյան Ս. Ս., Երևան, 1995, էջ 214, 319): [էջ 29]

8. 1929 թ. փոխվում է բուհերի ղեկավարման կարգը: Համալսարանում

առարկայական հանձնաժողովների փոխարեն կրկին վերստեղծվեցին ամբիոններ (տե՛ս Ղարիբջանկան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը. 1919-1930 թթ., Երևան, 1994, էջ 121): [էջ 33]

9. Խորհրդային Հայաստանի իշխանությունները պնդում էին, որ Երևանի պետական համալսարանը հիմնադրվել է խորհրդային իշխանության հաստատումից հետո: Մասնավորապես 1926 թ. ՀԽՍՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի հրատարակած ժողովածուում նշված էր հետևյալը. «Յերևանում համալսարան ստեղծելու միտքը Պարսկաստանի և Տաճկաստանի սահմանի վրա գտնվող յերեկվա ռուսական մահանգական հետամնաց քաղաքում շատերին թվում էր անիրագործելի: Դաշնակցականների անհաջող փորձը համալսարան ստեղծելու (Ալեքսանդրապոլում) թեկուզ միայն մեկ ֆակուլտետով, դարձավ իրականում Եջմիածնի նախկին Ճեմարանի որապակաս ժառանգորդը» (տե՛ս Խորհրդային Հայաստան. 1920-1925, Հ.Ս.Խ.Հ. Կենտգործկոմի յեկ Ժողկոմխորհի հրատարակություն, Յերևան, 1926, էջ 21):

Խորհրդային Հայաստանի իշխանությունների պնդմամբ՝ «Համալսարանի կազմակերպումը Հայաստանի Լուսժողկոմատի առաջին խոշոր գործերից ե յեղել. նա հիմնադրվել է 1921 թ. հունվարի 21-ին Յերևանում» (տե՛ս Խորհրդային Հայաստան. 1920-1925, Հ.Ս.Խ.Հ. Կենտգործկոմի յեկ Ժողկոմխորհի հրատարակություն, Յերևան, 1926, էջ 305): Այս պատճառաբանությամբ Խորհրդային Հայաստանում նշվել են համալսարանի տարեդարձները:

Սակայն սխիտոքում շարունակում էին համալսարանի հիմնադրման տարեթիվը համարել 1919 թ. (տե՛ս Նայիրի Ս., Հայաստանի պետական համալսարանի 30-ամեակի առթիւ, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, N 11, Բոստոն, 1949, էջ 80-84):

Միայն տարիներ անց՝ 1989 թ. մայիսի 18-ին, Երևանի պետական համալսարանի կուսակցական կազմակերպության ընդհանուր ժողովում որոշվեց «Երևանի պետական համալսարանի հիմնադրման տարեթիվը համարել 1919 թ. մայիսի 16-ը և 1989 թ. աշնանը լայնորեն տոնել նրա հիմնադրման 70-ամյակը» («Երևանի համալսարան», 3 հունիսի 1989 թ.): [էջ 36]

10. Ինչպես նշում է Հակոբ Հովհաննիսյանը, ըստ հաշվառման թերթիկների՝ 1921-1922 ակադեմիական տարում համալսարանի ուսանողու-

թյան 35.8 տոկոսը կազմում էին խորհրդային հանրապետություններից և արտասահմանից ժամանած ուսանողները (տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XXXI): [էջ 41]

11. Ըստ Հակոբ Հովհաննիսյանի՝ Հայաստանի համալսարանը առաջին ակադեմիական տարիներին Լոռու-Փամբակի, Դարալագյազի և Մեղրու գավառներից ուսանողներ չունեի, չնայած վիճակագրությունը կազմված էր ոչ ըստ ծննդավայրերի: Նշանակում էր, որ այդ գավառներում ոչ միայն միջնակարգ դպրոցներ չեն եղել, այլև տեղական պայմանները թույլ չեն տվել շատերին սովորել և ուրիշ քաղաքների միջնակարգ դպրոցներում (տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XXXI): [էջ 41]

12. Ինչպես նշում է Հակոբ Հովհաննիսյանը, ըստ բնակավայրերի հաշվառման կարևորությունն այն էր, որ դրանով համարավոր էր գոնե մոտավոր հավանականությամբ նախատեսել այդ ուսանողների ապագա աշխատավայրը: Ըստ հաշվառման թերթիկների՝ 1925-1926 ակադեմիական տարվա ուսանողության 28.7 տոկոսը դրսից էր, այսինքն՝ խորհրդային մյուս հանրապետություններից և արտասահմանից (տե՛ս Հովհաննիսյան Հակ., Հ.Ս.Խ.Հ. Պետական համալսարանը. 1921-1926, տե՛ս «Հ.Ս.Խ.Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր», N 2-3, Յերևան, 1927, էջ XXXI): [էջ 69]

13 «Հարվածային ուսանող» թերթը («Որգան պետական համալսարանի Կուսակցակ., ԼԿՅԵՄ Կոլբյուրոնների և Արկոհմի»), հրատարակվում էր «Պրոլետարներ՝ բոլոր յերկրների, միացե՛ք» նշանաբանով: [էջ 85]

14. Այսպես է գրված փաստաթղթում. հավանաբար պետք է լինի 1933 թ.: [էջ 87]

15. Խորհրդային իշխանության հաստատումից հետո համալսարանում տիրող քաղաքական մթնոլորտի մասին հիշատակվում է 1949 թ. Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» ամսագրում տպագրված հոդվածում, որտեղ հեղինակը անդրադարձել է մինչև 1941 թ. համալսարանում տիրող մթնոլորտին՝ մասնավորապես նշելով, որ մի շարք գիտական աշխատանքներ հիմնականում հրատարակվում էին ռուսերեն թարգմա-

նությամբ, իսկ բնագիր հայերեն հրատարակությունը ձգձվում էր ամիսներ շարունակ. խոսքը հատկապես վերաբերում էր Հայաստանի երկրաբանական և բուսաբանական ուսումնասիրություններին: Ըստ հոդվածի հեղինակի՝ Երևանի պետական համալսարանում գործում էր Անաստաս Միկոյանի արտահայտած այն միտքը, թե «Ով չի իմանում ռուսերեն, նա չի կարող կուլտուրական մարդ լինել»:

Կրթության որակը համեմատաբար չէր տուժել բնագիտական մասնագիտությունների ոլորտում՝ մեխանիկա, ֆիզիկա, քիմիա, երկրաչափություն, տիեզերագիտություն-աստղաբաշխություն, ճարտարապետություն, բժշկագիտություն և այլն: Այս բաժիններում պրոֆեսորադասախոսական կազմը ավելի ազատ էր գիտական հետազոտություններում և դասախոսություններում:

Ինչպես նշում է հոդվածագիրը, խորհրդային իշխանությունները ավելի շատ քաղաքական հալածանքների ենթարկեցին հումանիտար գիտությունների (մասնավորապես պատմություն, փիլիսոփայություն, լեզվաբանություն, գրականություն և այլն) ներկայացուցիչներին: Այստեղ ամեն ինչ պետք է ներկայացվեր կոմունիստական գաղափարախոսության դիրքերից, և ամեն կերպ ցույց տրվեր խորհրդային իշխանության ձեռնարկած քայլերի բացարձակ ճշմարտացիությունը:

Հայոց պատմության և հայ գրականության դասախոսները չգիտեին ինչպես բնութագրել հայոց որևէ թագավորի կամ սպարապետի գործունեությունը կամ ինչ-որ պատմաշրջան: Հաճախ էին լինում դեպքեր, երբ դասախոսները հրաժարվում էին ուսանողների հարցերին պատասխանելուց այն պատճառաբանությամբ, որ «այդ հարցի մասին դեռ Կենտկոմից վերջնական սանկցիա կամ թոյլտրություն չկայ»: Երբեմն Ստալինի կամ խորհրդային իշխանության հասցեին ուղղված նույնիսկ գովասանքի խոսքերը վտանգավոր էին այն արտահայտողի համար: Օրինակ՝ 1935 թ. համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության միացյալ ժողովում պատմության դասախոս Տիգրան Վանյանը հայտարարել էր. «Բուրժուազիայի դարեշրջանը տուեց Նապոլեոնին, իսկ պրոլետարիատի դարեշրջանը՝ մեծն Ստալինին»: Նրան անմիջապես հակադարձում են. «Մի՞ Ստալինի մեծությունը կարելի է համեմատել խղճուկ Նապոլեոնի հետ»: Այս միանգամայն անմեղ համեմատության համար Տիգրան Վանյանը տխուր վախճան ունեցավ՝ վտանգի ենթարկելով իր

կյանքը:

Համալսարանի լեզվաբան դասախոսներից մեկը՝ Հ. Կ.-եանը դասի ժամանակ առաջարկել էր ուսանողին վերլուծել «Կարմիր բանակ, արշավիր առաջ» նախադասությունը: Օրեր շարունակ այդ դասախոսը քննադատության է ենթարկվել՝ պատճառաբանությամբ, որ պանծալի բանվորագյուղացիական Կարմիր բանակը կապիտալիստական նվաճողական բանակ չէ, որ առաջ շարժվի, երկրներ գրավի: Դասախոսը ժողովում արդարանում էր՝ նշելով, որ իր նպատակն ընդամենը եղել է նախադասությունը վերլուծել:

Երբ համալսարանի պրոֆեսորներից Վ. Ա.-եանը Հ. Կ.-եանին օգնելու համար դիմելով ուսանողներին, ասել է. «Վերջացնենք և գնանք քնելու: Անիմաստ ժողովները մեզ մաշում են և հենց այդ պատճառով է, որ անգլիացիների մի ոտքի չափ մարմին չունենք»: Այս խոսքերից հետո վերջինիս հարցը նույնպես դրվել է քննարկման՝ մեղադրելով նրան, որ արհամարհում է խորհրդային ժողովները: Այս դեպքերից հետո երկու դասախոսներն այլևս չկարողացան դասավանդել համալսարանում:

Մինչև 1941 թ. համալսարանում հայ մտավորականության շրջանում նկատելի էր երեք խումբ: Առաջին խմբին պատկանում էին նրանք, ովքեր համարձակորեն տարածում էին ազգայինը: Աղասի Խանջյանի, Շիլիշե Չարենցի, Ներսիկ Ստեփանյանի ջանքերով կազմվեցին Հայաստանի պատմական աշխարհագրության քարտեզներ, տարածվեցին ուսանողության շրջանում, և Մոսկվայից գաղտնի Հայաստանի պատմական աշխարհագրությունը ընդունվեց որպես առանձին առարկա՝ Հայաստանի բարձրագույն դպրոցներում դասավանդելու համար:

Հայաստանի Լուսժողկոմ Ներսիկ Ստեփանյանը համալսարանում իր դասախոսությունների ընթացքում երբեմն բարկանալով ասում էր. «Սեղ քարաստան Հայաստանը թողեցին քարերի վրայ»: Հայկազ Ասլանյանը համալսարանի պատմափիլիսոփայական բաժնում փիլիսոփայության պատմության դասախոսություններից մեկում հայ փիլիսոփա Դավիթ Անհադիին խոշոր տեղ է հատկացրել և դրա համար մեղադրվել ազգայնականության մեջ ու անհետ կորստյան մատնվել: Հայոց պատմության դասախոսներից Հ. Ն.-եանի ոչնչացման պատճառն այն էր, որ նա իր դասախոսությունների ժամանակ զարգացրել էր այն միտքը, թե հայ ժողովրդի պատմությունը, ոչ միայն Խորհրդային Միության մյուս ժողովուրդների

պատմությունների համեմատությամբ, այլև ամբողջ աշխարհի համեմատությամբ ամենաաղետալին է:

Երիտասարդ քննադատ Նորայր Դաբադյանը ասել է. «Հայ գրականության եւ մշակույթի պատմության մէջ հայ ժողովուրդը այնպիսի գեղեցկութիւններ եւ գոհարներ է ստեղծել, որոնց հաւասարը չունեն միւս ժողովուրդները»: Այս միտքը որակելով իբրև «թքու ազգայնական»՝ նրան հայ ժողովրդի թշնամիների շարքին դասեցին և անհետացրին:

Համալսարանում մտավորականների երկրորդ խումբը կրավորական դիրք էր գրավել խորհրդային իշխանության նկատմամբ:

Մտավորականության երրորդ խումբը, չունենալով ազգային դիմագիծ, ամբողջովին լծված էր Հայաստանում խորհրդային իշխանության գովաբանության գործին (տե՛ս Նայիրի Ս., Հայաստանի պետական համալսարանի 30-ամեակի առթիւ, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, N 11, Բոստոն, 1949, էջ 80-84): [էջ 105]

16. Փաստաթղթում այդպես է. հավանաբար պետք է լինի 1936-37 ուստարի: [էջ 109]

17. «Սովետական ուսանողություն» թերթը («Օրգան Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետական համալսարանի պարտկոմիտեի, ռեկտորատի, ԼԿԵՄ կոմիտեի, Արհկոմի և տեղկոմի») հրատարակվում էր «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» նշանաբանով: [էջ 139]

18. «Երևանի համալսարան» թերթը («Օրգան Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետական համալսարանի պարտկոմիտեի, ռեկտորատի, ԼԿԵՄ կոմիտեի, Արհկոմի և տեղկոմի») հրատարակվում էր «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» նշանաբանով: [էջ 139]

19. Դեռևս «Երևանի համալսարան» թերթի 1966 թ. փետրվարի 19-ի համարում տպագրվել էր համալսարանի ռեկտոր Հ. Բատիկյանի՝ «Գլխատության օջախը» վերնագրով հոդվածը, որտեղ հեղինակը բերում է մի շարք հետաքրքիր փաստեր, համաձայն որոնց՝ համալսարանը անցած 45 տարիների ընթացքում տվել էր ավելի քան 16.000 շրջանավարտներ: 1966 թ. դրությամբ՝ համալսարանի 500-ից ավելի անդամ ունեցող դասախոսական կոլեկտիվի 400 անդամներ նրա մահիկին սաներն էին, համալսարանի 12 ֆակուլտետներում ուսանում էին շուրջ 9000 ուսանողներ՝ 14 ազգության ներկայացուցիչներ: [էջ 186]

20. Սինչև 1990 թ. հունիսի 30-ը «Երևանի համալսարան» թերթը լույս

էր տեսնում «Պրոլետարներ՝ բոլոր երկրների, միացե՛ք» նշանաբանով և Երևանի Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր պետական համալսարանի ռեկտորատի, կուսակցական, արհմիութենական և ԼԿԵՄ կոմիտեների օրգան էր համարվում: 1990 թ. սեպտեմբերի 8-ի համարում ԵՊՀ-ն այլևս չէր նշվում մաս որպես Կարմիր դրոշի շքանշանակիր: [Էջ 296]

21. Երևանի պետական համալսարանի ֆակուլտետներից մի քանիսն ունենում են իրենց առաջին մագիստրոս շրջանավարտները: [Էջ 348]

22. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում հեռակա ուսուցման ընդունելությունը առաջին անգամ կատարվել է 2006 թ. (տե՛ս Երևանի պետական համալսարան. 2006-2007 ուստարվա գործունեություն, Երևան, 2007, էջ 474): [Էջ 409]

23. Երկու համալսարանների համագործակցությունն սկսվել է դեռևս 1993 թվականին՝ Քոնեքթիկուտի համալսարանի սոցիալական աշխատանքի դպրոցի դեկան Նենսի Հենֆրիի՝ Հայաստան ժամանելուց հետո (տե՛ս Իրական համագործակցության փուլում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/EEhWa6d5STP3bQoYrtEZmzoaz>, մուտք՝ 05.07.2019): [Էջ 410]

24. Առաջին մրցույթն անցկացվել էր դեռևս 2005 թ., իսկ 2-րդը մի շարք պատճառներով հետաձգվել էր (տե՛ս Լրագրողները ազատամարտիկների մասին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/zqEHwsN4owDGfuuwEnyxf6cwL>, մուտք՝ 09.06.2019): [Էջ 473]

25. Դեռևս 2008 թվականին «ԵՊՀ շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպությունը ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանի հովանու ներքո առաջին անգամ նախաձեռնեց «Աջակցություն երիտասարդ համալսարանականների բնակարանաշինությանը» բնակարանային ապահովության սոցիալական ծրագիրը, որի արժեքն էր 6.5 մլրդ ՀՀ դրամ (տե՛ս Համալսարանական բնակարանամուտ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/ofiEMDzq9cdYkrQHJohCiX31Jl>, մուտք՝ 09.06.2019) այս ծրագիրը հետագայում ևս շարունակվեց: [Էջ 480]

26. Խոսե Պինիերան 29 տարեկանում դարձել է Չիլիի աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար՝ շնորհիվ իր ստեղծած և մշակած անհատական կենսաթոշակային համակարգի: Նա այցելել է շուրջ 80 երկիր, ընդ որում՝ իր մոդելը տարածել է ամբողջությամբ անվճար: Նրա այ-

ցելած 80 երկրներից 28-ը ստեղծել են անհատական կենսաթոշակային հաշիվներ՝ ամբողջովին կամ մասնակի հետևելով «Պիմիերայի մոդելին» կամ Պիմիերայի կենսաթոշակային բարեփոխմանը: Ըստ Պիմիերայի ստեղծած համակարգի՝ պետության աշխատող բնակիչը կարող է ազատ ընտրել պետության կողմից ղեկավարվող կենսաթոշակային համակարգը կամ փոխարենը մուտքագրել աշխատավարձերից պահվող 10 տոկոս հարկի չափով գումարը, որը ղեկավարվում է մասնավոր սեկտորի (կենսաթոշակային հիմնադրամների կառավարիչներ) կողմից: Բացի այս համակարգից՝ Պիմիերան մեծ դերակատարում է ունեցել Չիլիի մասնավոր առողջապահության ծառայության ստեղծման գործում (առողջության ապահովագրության ինստիտուտների ստեղծում) (տե՛ս «Աստված մանրուքների մեջ է», տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/x8mqUu3nvaQB5Wuak8AYJg0qay>, մուտք՝ 09.06.2019): [էջ 483]

27. Կարդինալ Ռավազին ծնվել է 1942 թ. Մերատե (Լեկկո) քաղաքում: Նա Աստվածաշնչի ու բիբլիական լեզուների փորձագետ է: Եղել է Միլանի Ամբրոսական գրադարանի պրեֆեկտ: Հյուսիսային Իտալիայի աստվածաբանական համալսարանում ուսուցանել է Հին Կտակարանի էկզեգետիկա: Կարդինալի աջակցությամբ իտալերեն են թարգմանվել և հրատարակվել Դանիել Վարուժանի ստեղծագործությունները (տե՛ս Հռոմեական կարդինալը՝ ԵՊՀ պատվավոր դոկտոր, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.ysu.am/news/hy/i8LcaevvyhiFp3nO13hfOhFkQj>, մուտք՝ 10.06.2019): [էջ 487]

28. «Դիուս»-ը «TEMPUS ECESIS» ծրագրի նախագծերից էր, որը Երևանի պետական համալսարանում գործում էր դեռևս 2010 թվականի հոկտեմբերից: Այն միաված էր ՀՀ բուհերում ինքնագնահատման և ինքնավերլուծության ինստիտուտի զարգացմանը (տե՛ս Ինքնագնահատման փորձ ՀՀ բուհերում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://www.ysu.am/news/hy/VYQD2dBR3jTDvtN112RJ32EXx5>, մուտք՝ 10.06.2019): [էջ 491]

29. Կենտրոնի հիմնական առաքելությունն է Հայաստանում ստեղծել ՏՀՏ մասնագիտական ուսուցման և այդ ոլորտում գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար հատուկ միջավայր, որը մեծապես կնպաստի ՀՀ-ում ՏՀՏ ոլորտի՝ համաշխարհային մակարդակի բարձրակարգ աշխատուժի ձևավորմանը (տե՛ս Հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոնն արդեն գործում է, տե՛ս ԵՊՀ պաշտոնա-

կան կայք՝ <http://ysu.am/news/hy/flWcAln8BZIRnf3kPpHHeJzAta>, մուտք՝ 09.06.2019): [էջ 496]

30. Ինստիտուցիոնալ հավատարմագրումը մի գործընթաց է, որը հաղթահարելու դեպքում կրթական հաստատությունը միջազգային մի շարք չափանիշներին համապատասխան հանրային լայն ճանաչում է ձեռք բերում: Այն երաշխիքն է դառնում մասնաճյուղի, որ տվյալ բուհը հստակ որոշված կրթական ծրագրերով և վերապատրաստված մասնագետների, ինչպես մասնագետություններ և ուսումնասիրություններ իրականացնելու համար համապատասխան լաբորատոր սարքերի օգնությամբ որակյալ կրթություն է ապահովում իր ուսանողների համար: Հավատարմագրման և ընդհանրապես որակի ապահովման գործընթացներին աջակցելու նպատակով Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ առաջին անգամ իրականացվել է Հայաստանի որակի ապահովման տեխնիկական աջակցության «ԱՐՔԱՏԱ» ծրագիրը (Armenia Quality Assurance Technical Assistance project, ARQATA), որն իրագործվել է ՈԱԱԿ-ի և NVAO (Nederlands Vlaamse Accreditatieorganisatie) ֆլանդրիայի անկախ հավատարմագրող կազմակերպության համատեղ ջանքերով: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացն իրականացվում է 3 հաջորդական փուլերով.

1) ուսումնական հաստատության կողմից ենթակառուցվածքային կարողությունների ներքին գնահատում (ինքնավերլուծություն),

2) ինքնավերլուծության արտաքին գնահատում փորձագիտական խմբի կողմից՝ սահմանված չափորոշիչներին և չափանիշներին համապատասխան (փորձաքննություն),

3) ինքնավերլուծության և փորձաքննության արդյունքների հիման վրա Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի կողմից դրական, պայմանական կամ բացասական եզրակացության մասին որոշման ընդունում (տե՛ս «Երևանի համալսարան», հոկտեմբեր 2012): [էջ 501]

31. Այս նախաձեռնությունն իրականացվում էր 2-րդ անգամ: Ըստ ավանդույթի՝ ամեն տարի շրջանավարտներն ավարտական դիպլոմները ստանում են Արևմտյան Հայաստանի մայրաքաղաքներից մեկում (տե՛ս Ուստարին ավարտվեց, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/cTeZUAYlBpBA37J49ginZQzkrb>, մուտք՝ 11.06.2019): [էջ 509]

32. Այս ծրագրի շրջանակներում Հայաստանին կրթաթոշակներ էին հատկացվում արդեն հինգերորդ անգամ: Ընդհանուր առմամբ Բունդես-թագի «Միջազգային խորհրդարանական կրթաթոշակ» ծրագրի շրջանակներում 2006-2012 թթ. Գերմանիայում ուսանելու և աշխատելու հնարավորություն են ստացել 24 հայ ուսանողներ (տե՛ս Եվս մեկ հնարավորություն ուսանողների համար, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/5udr1WwQFkHrDorSc1RICrSgAq>, մուտք՝ 11.06.2019): [Էջ 510]

33. Մադրիդում հիմնադրված Տուրիզմի համաշխարհային ասոցիացիան Թալեբ Ռիֆային ղեկավարում էր 2010 թվականից, իսկ մինչ այդ նա Հորդանանում զբաղեցրել է տուրիզմի, տեղեկատվության, ինչպես նաև պլանավորման և միջազգային համագործակցության մախարարի պաշտոնները: 2011 թ. դրությամբ՝ Տուրիզմի համաշխարհային ասոցիացիային անդամակցում էին 155 պետություններ, որոնց կազմում էր նաև Հայաստանը (տե՛ս Դասախոսություն տուրիզմի մասին, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/ecmqiW00hQAuj4g71Dr1xbwq76>, մուտք՝ 12.06.2019): [Էջ 512]

34. ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմամբ՝ 2012 թ. հռչակվել էր Սայաթ-Նովայի 300-ամյակի տարի (տե՛ս Սայաթ-Նովա, աշուղ, երգահան, բանաստեղծ, փիլիսոփա..., տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/koRyXRT5o7lAT4fo9usF86hZ6V>, մուտք՝ 10.06.2019): [Էջ 512]

35. «Յանուս» ծրագիրը միտված էր բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի, հետազոտողների, ինչպես նաև ակադեմիական ու վարչական աշխատակազմի շրջանում շարժունակության խթանմանը ոչ ԵՄ անդամ երկրներից դեպի ԵՄ անդամ երկրներ (տե՛ս Նոր մախագիծ ուսանողների համար, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/NZv1HXvHQiwtnavsbLF28NbZ9>, մուտք՝ 11.06.2019): [Էջ 516]

36. Գեոդեզիային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի հիմնադրումը «Բարձրագույն կրթությունը զարգացման համար» (ԲԿԶ) ծրագրի շրջանակներում ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության (ՄԶԳ) կողմից ֆինանսավորվող ծրագրի մի մասն էր կազմում: Ծրագիրը նպաստում էր Մայր բուհի և Արիզոնայի պետական համալսարանի միջև հաջող համագործակցությանը, ինչպես նաև դասավանդողների փոխանակմանը և համատեղ այլ գործողությունների իրականացմանը

(տե՛ս Գեոդերային խնդիրները առաջնային են, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1367927211>, մուտք՝ 13.06.2019): [Էջ 522]

37. Հայաստանում այսպիսի կենտրոն բացելու վերաբերյալ համաձայնությունը ձեռք էր բերվել դեռևս 2012 թ. ՀՀ վարչապետի ու կրթության և գիտության նախարարի՝ Իրանի Իսլամական Հանրապետություն կատարած պաշտոնական այցի ժամանակ (տե՛ս Իսլամագիտության ուսումնասիրման նոր աստիճան ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1377600939>, մուտք՝ 13.06.2019): [Էջ 527]

38. Պատգամավոր և «Հայաստանի եվրոպական բարեկամներ» միջազգային ՀԿ անդամ Չարլզ Թեննոքին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու մասին որոշումը ԵՊՀ գիտխորհուրդը կայացրել էր դեռևս 2013 թ. ապրիլի 25-ին: Չարլզ Թեննոքը 1999 թ. Եվրոպական խորհրդարանում ներկայացրել է Մեծ Բրիտանիան: Նա ԵԽ պահպանողականների և ռեֆորմիստների խմբի, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի պահպանողական կուսակցության անդամ է:

Պատգամավորն ամսագրերում ու կոլեկտիվ մենագրություններում բազմիցս հանդես է եկել հայանպաստ հրապարակումներով թե՛ Հայաստան-Եվրամիություն հարաբերությունների, թե՛ Արցախի ինքնորոշման իրավունքի և թե՛ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցերի մասին (տե՛ս ԵԽ պատգամավորը ԵՊՀ պատվավոր դոկտոր, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/1383212731>, մուտք՝ 13.06.2019): [Էջ 530]

39. Թոմաս Լիիրին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչումը շնորհվել էր ԵՊՀ գիտական խորհրդի 2014 թ. հունիսի 25-ի նիստի որոշմամբ՝ գիտության և կրթության ոլորտում ակնառու նվաճումների, Յենայի Ֆրիդրիխ Շիլլերի և Երևանի պետական համալսարանների միջև գիտական կապերի խորացման, Հայաստանում և ԵՊՀ-ում մոլեկուլային բջջագենետիկայի զարգացման գործում ունեցած մեծ ներդրման և ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի զարգացմանը ցուցաբերած զգալի աջակցության համար (տե՛ս Հեռանկարային համագործակցություն բջջագենետիկայի ոլորտում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Prospective-cooperation-in-the-field-of-cytogenetics>, մուտք՝ 14.06.2019): [Էջ 542]

40. Լեոնիդ Ռեշեդնիկովն ավարտել է Խարկովի համալսարանի

պատմության ֆակուլտետը, ստացել գիտությունների թեկնածուի աստիճան: Աշխատել է հիմնականում Արևելյան Եվրոպայում՝ ռազմական հետախուզությունում: 2009 թ. ՌԴ նախագահի հրամանով դեկավարում է Ռազմավարական հետազոտությունների ռուսական ինստիտուտը (տե՛ս Հայ-ռուսական համագործակցությունը՝ նոր ձևաչափով, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Armenian-Russian-cooperation-in-a-new-format>, մուտք՝ 14.06.2019): [Էջ 545]

41. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ ՊՈԱԿ-ը հիմնադրի որոշմամբ կարող է վերակազմակերպվել հիմնադրամի: Առաջնորդվելով այս դրույթով՝ ՀՀ Կառավարության նիստում ԿԳ փոխնախարար Մանուկ Մկրտչյանը ներկայացրեց խնդիրը՝ նշելով, որ կարգավիճակի այս փոփոխությունը կնպաստի համալսարանի միջազգային համագործակցության զարգացմանը, ուսման որակի բարձրացմանը, կառավարման հետագա կատարելագործմանը:

ԵՊՀ իրավակազմակերպական ձևի փոփոխման խնդիրը բազմիցս արծարծվել էր նաև ԵՊՀ գիտական խորհրդի և ռեկտորատի նիստերում: Նշվել էր, որ կարգավիճակի փոփոխությունը հնարավորություն կընձեռի ձեռնարկատիրական ավելի ճկուն գործունեություն ծավալելու, բազմազանեցնելու ֆինանսական մուտքերը, ավելի արդյունավետ կազմակերպելու գնումների գործընթացը և համալսարանի առջև ծառացած մի շարք այլ խնդիրների լուծումը (տե՛ս Մայր բուհը վերակազմակերպվել է հիմնադրամի, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/YSU-was-reorganized-into-foundation>, մուտք՝ 15.06.2019): [Էջ 546]

42. Համակարգում բուհերի վարկանիշավորումը կատարվել է հատուկ սկզբունքով. Հայաստանում գործող առաջատար բուհերը ներկայացված էին 6 տարբեր խմբերով՝

1. Երեք կրթական աստիճաններում և երեք ու ավելի մասնագիտական ոլորտներում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր,
2. Երեք կրթական աստիճաններում և մինչև երեք մասնագիտական ոլորտներում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր,
3. Բակալավրական ու մագիստրոսական և երեք ու ավելի մասնագիտական ոլորտներում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր,
4. Բակալավրական ու մագիստրոսական և մինչև երեք մասնագիտա-

կան ղորտներում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր,

5. Միայն բակալավրական մասնագիտական ղորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր,

6. Արվեստի բուհեր (տե՛ս ԵՊՀ-ն հայաստանյան բուհերի առաջատարների շարքում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք <http://ysu.am/news/hy/YSU-has-got-a-leading-position-among-Armenian-universities>, մուտք՝ 17.06.2019): [էջ 548]

43. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակներում գտնվելով Հայաստանում՝ Ջոյի Կոնստանտապոլոսը ցանկություն էր հայտնել հանդիպում ունենալու Մայր բուհի ներկայացուցիչների հետ: Հանդիպումը տեղի ունեցավ ԵՊՀ հունագիտության կենտրոնում: Ներկա էին ԵՊՀ ռեկտորը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանը, Ռուս բանասիրության ֆակուլտետի դեկան Պավել Բալայանը, ԵՊՀ հունագիտության կենտրոնի տնօրեն Լևոն Հակոբյանն ու հունարեն բաժնում սովորող ուսանողները (տե՛ս Հույն քաղաքական գործիչները այցելեցին ԵՊՀ, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Zoe-Konstantopoulou-and-Ioannis-Tayis-visited-YSU>, մուտք՝ 17.06.2019): [էջ 553]

44. «Յունիկոդ»-ը միջազգային հաղորդակցության համար նախատեսված կոդավորման համակարգ է: Այն ստեղծվել է դեռևս 1990 թ. և ընդունվել «ISO» միջազգային ստանդարտների կազմակերպության կողմից: Հարմար է ինչպես «Windows» այնպես էլ այլ օպերացիոն համակարգերի պարագայում: Այն միջազգային կոդավորման համակարգ է, որն ընդունում է հայկական տառատեսակների կիրառումը: ՀՀ պետական պաշտոնական փաստաթղթաշրջանառությունում պարտադիր միասնական կոդավորման համակարգին անցում է կատարվել դեռևս 2010 թ. սեպտեմբերի 24-ին ՀՀ Կառավարության համապատասխան որոշմամբ:

Որոշումն ընդունվել էր՝ ելնելով Ժամանակակից էլեկտրոնային տեղեկատվական և հաղորդակցման համակարգերում «Յունիկոդ» կոդավորման համակարգին համապատասխան հայկական տառատեսակների ներդրման և կիրառության անհրաժեշտությունից (տե՛ս Կկիրառվի համակարգչային միասնական կոդավորում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Unified-encoding-wil-be-applied>, մուտք՝ 05.07.2019): [էջ 561]

45. 2016 թ. Ապրիլյան պատերազմի ռազմական գործողություններն Ադրբեջանը սկսեց ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը՝ ժամը 03:00-ի սահմաններում: Ապրիլի 2-ի առավոտյան՝ ժամը 08:18-ին, Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի մամուլի ծառայությունը հայտնում է, որ ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերն ադրբեջանական բանակը հարձակողական գործողություններ է ծավալել առաջնագծի ողջ երկայնքով՝ հրետանու, զրահատեխնիկայի և ավիացիայի ներգրավմամբ (մանրամասն տե՛ս Ապրիլյան պատերազմի ժամանակագրությունը, տե՛ս Ռազմ. info կայք՝ <https://razm.info/99426>, մուտք 06.07.2019):

2016 թ. Ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին ԵՊՀ ուսանողները և պրոֆեսորադասախոսական կազմը, ինչպես նաև մյուս աշխատակիցները Արցախի պաշտպանության համար կրկին ոտքի կանգնեցին: ԵՊՀ ռեկտորատի, ֆակուլտետների, ուսանողական կառույցների և արհեստակցական կազմակերպության ներկայացուցիչների նախաձեռնությամբ կազմակերպվել է կամավորագրում, ինչպես նաև առաջին անհրաժեշտության պարագաների և դրամական միջոցների հավաքագրում:

Ապրիլյան պատերազմի օրերին և դրանից հետո ԵՊՀ-ն ֆինանսական և նյութական մեծ աջակցություն է տրամադրել է Արցախին: Մասնավորապես՝ համալսարանականները շուրջ 5 մլն դրամի դրամական օգնություն հավաքեցին, իսկ ԵՊՀ-ն՝ նվիրաբերեց շուրջ 30 մլն դրամ, ինչպես նաև առաջին անհրաժեշտության պարագաներ, սնունդ, վրաններ և այլն: 2016 թ. Ապրիլյան պատերազմի ընթացքում գոհված զինծառայողների ընտանիքների սոցիալական վիճակը բարելավելու նպատակով ԵՊՀ-ն 2016 թ. հունիսի 1-ից 24 գոհված զինծառայողների 56 երեխաներին մինչև նրանց չափահաս դառնալը ամենամսյա դրամական օգնություն տրամադրելու հանձնարարություն ունի: Զոհված զինծառայողի ընտանիքի յուրաքանչյուր անչափահաս երեխայի ամսական փոխանցվում է 40.000 ՀՀ դրամ, իսկ նույն ընտանիքի յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար՝ 20.000 ՀՀ դրամ: Այս օգնությունը տարեկան կազմում է շուրջ 25 մլն դրամ: ՀՀ զինված ուժեր գորակոչված ԵՊՀ ուսանողները իրենց արիությամբ և անձնագոհությամբ աչքի ընկան մարտի դաշտում և արժանացան ՀՀ և Արցախի Հանրապետության պետական բարձր պարգևների (տե՛ս ԵՊՀ ռեկտորի 2015/2016 ուստարվա գործունեության հաշվետու զեկույցը, Երևան, 2016, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://documentation.yysu>).

am/wp-content/uploads/2016/12/Rektori_zekuyts_2016.pdf, մուտք՝ 07.07.2016): [էջ 572]

46. Պրոֆեսոր Շտեֆեն Ռոքի հետազոտությունների մեծ մասը նվիրված է մոդեռնիստական և պոստմոդեռնիստական հասարակություններում ֆունկցիոնալ տարբերական տեսություններին և կիրառություններին (տե՛ս Մասնագիտական դասախոսություն սոցիոլոգների համար, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Lecture-for-sociologists>, մուտք՝ 19.06.2019): [էջ 574]

47. Ազգությամբ հայ Տավիտյանը ծնվել է Բուլղարիայում: 1959 թ. լքել է կոմունիստական Բուլղարիան և 2 տարի Բեյրութում բնակվելուց հետո տեղափոխվել ԱՄՆ, որտեղ սովորել է Կոլումբիայի համալսարանում ու ստացել ատոմային էներգիայի գիտության մագիստրոսի աստիճան: Ասո Տավիտյանը հիմնադրել է նաև «Սինքսթրթ» ընկերությունը, որը մասնագիտացած է ինֆրաստրուկտուրաների ծրագրային ապահովման արտադրանքի զարգացման, մարքեթինգի և սպասարկման մեջ: Իսկ «Տավիտյան» հիմնադրամը զբաղվում է ԱՄՆ-ի լավագույն համալսարաններում ուսանելը խրախուսելու համար հայ և բուլղարացի ուսանողներին լրիվ կրթաթոշակների տրամադրմամբ, ինչպես նաև հատուկ նախագծերի ֆինանսավորմամբ, որոնք ուղղված են ՀՀ զարգացմանն ու արևմտացմանը (տե՛ս Հայագգի բարերար Ասո Տավիտյանին շնորհվեց ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Aso-Tavityan-YSU-honorary-doctor>, մուտք՝ 19.06.2019): [էջ 575]

48. «Ջոլ-ժել» տեխնոլոգիան ժամանակակից սինթետիկ քիմիայի և նյութաբանության ամենախոստումնալից բնագավառներից մեկն է: «Ջոլ-ժել» տեխնոլոգիան նախապես ծրագրված հատկություններով նյութերի ստացման եղանակներից մեկն է: Նանոչափի մասնիկներով նյութերի բաղադրության, հատկությունների և կառուցվածքի ղեկավարման հնարավորությունը «Ջոլ-ժել» տեխնոլոգիան մղում է արդի նյութագիտության առաջատար դիրքեր (տե՛ս Ջոլ-ժել. նոր խոսք ժամանակակից քիմիայի ոլորտում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Sol-Gel-4th-international-conference>, մուտք՝ 20.06.2019): [էջ 580]

49. Դեռ 2015 թ. փետրվարի 19-ի նիստում ԵՊՀ գիտական խորհուրդը Մեքսիկայի ազգային ինքնավար համալսարանի նախկին ռեկտոր, Մեքսիկայի կենսաբազմազանության ազգային հանձնաժողովի համա-

կարգող Խոսե Սարուխանին շնորհել էր ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում՝ գիտության և կրթության ոլորտում պատկառելի ավանդի, հասարակական բեղուն գործունեության, Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ գործադրած մեծ ջանքերի և Մեքսիկայի ազգային ինքնավար համալսարանի ու Երևանի պետական համալսարանի միջև համագործակցություն ծավալելու հանձնառության համար (տե՛ս Խոսե Սարուխանին հանձնվեց ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման դիմումը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Jose-Sarukhan-YSU-honorary-doctor>, մուտք՝ 07.07.2019): [էջ 603]

50. Ծրագիրը նախատեսված էր հակամարտության գոտիներից, հատկապես՝ Սիրիայից և Ուկրաինայից, ինչպես նաև Ջավախքից Հայաստան տեղափոխված այն երիտասարդների համար, որոնք ունեին բարձրագույն կրթություն, սակայն կարիք ունեին անհրաժեշտ մասնագիտացումների՝ հայկական աշխատաշուկայում ավելի մրցունակ դառնալու համար: Ծրագրի ավարտից հետո մասնակիցները կկարողանան աշխատանք գտնեն Հայաստանի բանկային համակարգում, հեռահաղորդակցության ոլորտի ընկերություններում (տե՛ս 40 ներգաղթյալ երիտասարդներ վերապատրաստվելու հնարավորություն կունենան. մոր ծրագիր ԵՊՀ-ում, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/Training-for-immigrants>, մուտք՝ 22.06.2019): [էջ 614]

51. Դեղագետների միջազգային օրը՝ սեպտեմբերի 25-ը, պաշտոնապես ընդունվել է 2009 թ. Դեղագործական միջազգային միավորման կողմից (տե՛ս ԵՊՀ-ում նշվեց Դեղագետի միջազգային օրը, տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք՝ <http://ysu.am/news/hy/International-day-of-pharmacists-at-YSU>, մուտք՝ 22.06.2019): [էջ 622]

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ*

Ա

Աբաջյան Վլադիմիր - 334
 Աբդ ալ-Կատիֆ ալ Բադր - 537
 Աբդուլ Համիդ Սալլում - 439
 Աբեդյան Մանուկ - 9, 12, 17, 53, 66, 96, 288
 Աբեդյան Միեր - 193
 Աբովյան Սարգիս - 47, 51
 Աբրահամյան Անի - 647
 Աբրահամյան Աշոտ - 226
 Աբրահամյան Խորեն - 358
 Աբրահամյան Ռուբեն - 9, 17
 Աբրահամյան Սաթենիկ - 444, 526
 Աբրահամյան Սամվել - 520, 555
 Ադամկուս Վաղդաս - 398
 Ադել Այել - 537
 Ադյան Սերգեյ - 527
 Ազատյան Երվանդ - 337, 338
 Ազատյան Հայկ - 36, 37
 Ազնավուրյան Աստրիկ - 337
 Աթաբեկյան (բժիշկ) - 70
 Աթայան Էդուարդ Ռաֆայելի - 276, 322, 344
 Աթանասով Կրիշո - 446
 Աթանեսյան Արթուր - 505

Աթոյան Կորյուն - 502
 Ալազան Վ. - 105
 Ալաջաջյան Ստեփան - 215
 Ալեքսանդրյան Ռ. - 254, 276
 Ալեքսանդրով Միխայիլ - 515
 Ալեքսանյան Ա. - 85
 Ալեքսանյան Հայկ - 449
 Ալիխանյան Աբրահամ և Արտեմ - 123, 388, 647, 648
 Ալի Մոհամադի Սիրաթի - 578
 Ալիռեզա Բիգդելի - 609
 Ալի Ֆահդ Ալ-Ռաշիդ - 524
 Ալվարես Ռիվերա Դիեգո Էռնեստո - 536
 Ալֆյորով Ժորժես - 494
 Ահարոնյան (ուսանող) - 47
 Ահմադ Ալջարուան - 647
 Ահմադ Ջայեդին - 452
 Ահմադ Նադր ալ Դին Հասսունի - 401
 Ահմադ Մովսիսյանի - 306
 Ահմեդ Ֆուադ Մոհամեդ Ռապալան - 308
 Աղաբաբյան Միհրան - 313
 Աղայան Է. - 209, 224, 235, 261,

* Հոգևորականների անունները ներկայացված են ըստ եկեղեցական ընդունված կարգի:

Արաբերեն, պարսկերեն, հնդկերեն, վիետնամերեն և չինարեն անձնանունները տրված են ըստ տվյալ լեզուներում անուն-ազգանունների ընդունված հաջորդականությամբ:

265, 441	Առաքելյան Կամսար - 110
Աղայան Ծ. - 197, 254	Առաքելյան Ն. - 299, 302, 303, 305, 308, 527
Աղայան Վ. - 287	Առաքելյան Վաղարշակ - 182
Աղանբեկյան Աբել Գեգիի - 292, 459	Ասատուլա խան - 21-22
Աղասյան Ժասմեն - 412	Ասատրյան Մ. - 235
Աղբալյան Գ. - 132	Ասատրյան Ս. - 22
Աղբալյան Ն. - 15-17, 19, 21, 22, 25, 392	Ասատրյան Վարդուհի - 334
Աղուզումցյան Անուշ - 254	Ասլանյան Հայկազ - 658
Աճառյան Հրաչյա - 29, 45, 51, 63, 66, 119, 123, 150, 235, 278, 363	Ասլանյան Հասմիկ - 486
Աճեմյան Շահեն - 520	Ասլանյան Ռաֆիկ - 223-224, 226, 234, 237
Ամատունի Աշոտ - 272	Ասլանյան Վարդգես - 257
Ամիրթաբն Սինգի - 632	Աստվածատրյան Գևորգ (Ասատուր) - 33
Ամիտա Ռուվեն - 648	Ավագյան (1933 թ. համալսարանի վերաբացման հանդիսության մասնակից) - 91
Ամիրբեկյան Լիանա - 568	Ավագյան Աբիգ - 227
Ամիրյան Ա. - 342	Ավագյան Էդուարդ - 513
Այխբերգեր Միխայել - 644	Ավագյան Հայկ - 649
Այտմուրզան Նուրլան - 563	Ավագյան Ռուլանդ - 541, 617
Այբստուդտ Պիտեր - 359	Ավակիմով Վաչագան - 422
Անանիկյան Կ. - 179, 192	Ավանեսյան Արա - 513
Անանիսան Ելենա - 642	Ավդալբեկյան Թադևոս - 34, 52
Անանյան Գառնիկ - 240, 259, 344	Ավետիսյան Աիդա Ավետիսի - 322, 344
Անանյան Լևոն - 465, 512	Ավետիսյան Արևիատ - 119
Անդրեա Մաուրո Դ. - 632	Ավետիսյան Դավիթ - 487
Անդրեն Գ. - 260	Ավետիսյան Սինաս - 236
Անժուր - 35, 61, 79, 97, 164	Ավետիսյան Վահրամ - 592
Աշոտյան Արմեն - 478, 482	Ավետիքյան Հակոբ - 505
Աշրաֆյան Զարմայր - 58, 90-91	Արամյան (Բժիշկ) - 70
Աչալ Մալիոտրա - 482	Արամյան Վարդան - 443
Ապոստոլայե Կոնստանտին Մարիուս - 516	
Առաքելյան Արտաշես - 203	

- Արարատյան Զր. - 73
 Արարքցյան Բաբկեն - 295, 302, 308
 Արզումանյան Անուշավան - 110
 Արզումանյան Մ. - 260
 Արեշև Անդրեյ - 515
 Արեշև (Արեշյան) Գրիգոր
 Հակոբի - 11
 Արիսյան (1933 թ. համալսարանի
 վերաբացման հանդիսության
 մասնակից) - 91
 Արծրունի Վ. Ա. - 42
 Արմենակյան Գոհար - 520
 Աքչամ Թաներ - 620
 Աֆրիկյան Վ. - 23
- Բ**
 Բաբախանյան Առաքել - տե՛ս
 Լեո
 Բաբայան Արաքսյա - 202
 Բաբայան Հրանտ - 259
 Բաբայան Ս. (ուսանող) - 135
 Բաբայան Սամվել - 338
 Բագրատյան Հրանտ - 310
 Բադալյան Սմբատ - 255
 Բագիլ Վազրիկ - 580
 Բագյան Սահակ - 212
 Բալայան Լ. - 268
 Բալայան Պավել - 627, 666
 Բալանդին Ալեքսեյ - 486
 Բալասանյան Սերգեյ - 212, 344
 Բալյան Սողոմոն - 260, 344
 Բալոյան Սամվել - 513
 Բախշյան Վարդան - 327, 474, 498
 Բախշինյան Հենրիկ - 465
 Բախշինյան Ֆելիքս - 465
 Բակլանով Գ. - 221
 Բակլի Բայրամ - 522
 Բակունց Ա. - 105
 Բահաթրյան Բահաթուր - 52
 Բաղդասարյան Ա. - 380
 Բաղդասարյան Արտո - 119
 Բաղդարյան Լիլիթ - 486
 Բաղմանյան Անդրանիկ - 119
 Բաղրամյան Հովհաննես - 206, 237
 Բայբուրդյան Արմեն - 490
 Բայբուրդյան Վահան - 481, 532
 Բայրոն Ջորջ Գորդոն - 504
 Բայրոն Ռոբին - 504
 Բաշինջաղյան Չաքարե
 Գևորգի - 161
 Բասետկու Տրայան - 404-405
 Բատիկյան Թումիկ Ստեփանի - 263
 Բատիկյան Հրանտ - 174, 175, 179, 186, 220, 659
 Բատուցկայա Իրինա - 570
 Բատուրին Յուրի - 413
 Բարդակչյան Գևորգ - 389
 Բարթիկյան Հ. - 135
 Բարխուդարյան Մեղրակ
 Գևորգի - 96
 Բարնաշով Օլեգ - 607
 Բարսեղյան Տ. - 443
 Բարսեղյան Հովհաննես - 208, 212, 235, 257, 273, 344
 Բարցիցկի Յանուշ - 219

Բաում Վիլհելմ - 481
 Բաքեր Աին - 443
 Բեդեյան Հ. - 51, 64, 66
 Բեդիրյան Ջորջ - 311
 Բեզիրգանյան Պետրոս - 155, 157, 177
 Բելման Քրիստինա - 6323
 Բելով Սերգեյ - 585
 Բեկտուրովա Արմանաի - 620
 Բեյլերյան Նորայր - 255, 259
 Բերբերյան Լևոն Գեղամի - 98
 Բերբերյան Մինաս - 70
 Բերդիմովսկի
 Գուրբանգուլի - 514
 Բերեցկի Անրի - 431
 Բերման Կարլ Գյորգ - 492
 Բերնոտ Մարկ - 431
 Բեսամերունիս Ա. Ա. - 292
 Բիերի Ժան Պիեռ - 504
 Բիլգեն Բոել - 490
 Բիոլչև Բոյան - 421
 Բիոնդի Մարինո - 494
 Բիտով Անդրեյ - 332
 Բիրկելանդ Նիլս Կորե - 586, 601
 Բյորնգեն Վոլֆգանգ - 510
 Բյուզանդյան Հայկ - 465
 Բոդո Ալեքս - 141
 Բոժկո Ալեքսանդր - 435
 Բոխյան Կենասաբեր Սիրականի
 - 99
 Բոդոսյան Բրյուս - 590
 Բոցուն Պ. - 237
 Բրեններ Յան - 431
 Բրիլլա Յուզեֆ - 329

Բրյուսով Վ. - 160, 171, 371, 385
 Բրոկ Վալենտինա - 632
 Բրուքեր Մայք - 520-522
 Բրուտյան Գևորգ Աբելի - 261
 Բուդաղյան Արմեն - 625
 Բուդաղյան Գևորգ - 230
 Բումելա Ջիմ - 551-552
 Բունիաթյան Հրաչյա - 124, 132
 Բունիաթյան Մ. - 9
 Բուտրոս-Բուտրոս Ղալի - 314

Գ

Գաբրիելյան Արշալույս
 Համբարձումի - 261
 Գաբրիելյան Հենրի - 76, 109, 191
 Գաբրիելյան Հովման - 69
 Գաբրիելյան Հրաչյա - 192, 208
 Գաբուզյան Արա - 487
 Գագարին Յուրի - 480
 Գալիկյան Հրանտ - 62, 97
 Գալստյան Բոգդան - 62, 66
 Գալստյան Վաչագան - 520
 Գալստայան Վաչագան
 (մինչհամ. վարչ. պետ) - 535
 Գայ (Բժշկյան Հայկ) - 192, 271
 Գարանյան Անդրանիկ
 Կոստանդինի - 98
 Գամբետի Ջակոմո - 347
 Գանդլիով Ս. - 241
 Գանպատի Պարշաթ Շարման -
 205
 Գանուս Իրինա - 621
 Գասիիրովսկի Միլոշ - 215
 Գարեգին Ա Ամենայն հայոց

- կաթողիկոս - 320-323
- Գարեգին Բ Ամենայն հայոց
կաթողիկոս - 347, 381-382, 446
- Գարեգին եպիսկոպոս
Հովսեփյան - 9, 17, 27
- Գարոյան Չարլզ - 311
- Գասպարյան Գոհար - 173, 194,
218
- Գասպարյան Լիլիանա
Ալֆրեդի - 193
- Գասպարյան Նաիրա - 520
- Գասպարյան Նիկողայ - 212
- Գասպարյան Ս. - 206
- Գասպարով Բ. Մ. - 366
- Գեկչյան Սոս - 520
- Գերեմեկ Բրոնիսլավ - 337
- Գերչևա Դաֆինա - 482
- Գերո Սիշել - 344
- Գզգզյան Դ. - 87
- Գիլաշվիլի Պ. - 224
- Գիլմոր Հարի - 309, 311
- Գլենոն Մայքլ - 646
- Գլխոն Գրեգորի - 456
- Գորբատկո Վիկտոր - 466
- Գյորգյան Ֆուրման - 422
- Գյուլբենկյան Ռոբերտ - 312
- Գյուլիքևսյան Հայկ - 58, 84, 96
- Գյուլխանդանյան Ա. - 20
- Գյուլումյան Ալվինա - 526
- Գյուրեր Հայդեմարի - 332
- Գնունի Վ. - 303
- Գոգյան Սմբատ - 631
- Գոգոլ Ն. Վ. - 146
- Գոթեմոլլեր Ռոզ - 608
- Գոլդման Ռիչ - 443
- Գոլց Հերման - 423, 435
- Գոնգազ Ռուբս - 307
- Գոնշիոր Էուգենիուշ - 224
- Գորբաչով Մ. Ս. - 282
- Գորբատկո Վիկտոր - 466
- Գորդին Վալերի - 572
- Գորկի Մ. - 200
- Գրաբենվարտեր Քրիստոֆ - 559
- Գրեչկո Գր. - 245
- Գրիգորյան Ալեքսանդր - 405,
410, 415, 435, 483, 503, 508-
509, 512, 519, 521, 535, 543-
544, 546, 550, 570, 572, 574,
579, 600-601, 607, 611, 617,
621, 625, 630, 666
- Գրիգորյան Ավետիք - 295
- Գրգորյան Արամ (ղեսպան) - 582
- Գրիգորյան Արթուր - 483
- Գրիգորյան Զ. - 132
- Գրիգորյան Մարատ - 560, 573
- Գրիգորյան Վարդան - 312
- Գրիգորյան Վիկտոր - 509
- Գրիո Ժան-Կլոդ - 344
- Գրծելյան Գևորգ - 42
- Գրոսհայմ Ա. - 42, 51
- Գրոսհայմ Ալեքսանդր - 42
- Գրոսսեր Ալֆրեդ - 497
- Գուարչ Գոմասյո - 480, 525, 576
- Գուդինո Ռոբերտո - 308
- Գուգենկովա Թամարա - 546
- Գուլոյան Ա. - 107
- Գուլքանյան Վարդան - 76
- Գուլյումճյան Տիգրան - 377

Գունարիս Իլիաս - 301
 Գուրգաղյան Վահագն - 500
 Գևեր Կոեն - 431
 Գևորգյան Գեղամ - 350, 396, 402,
 418, 435, 452, 462, 473-475,
 484, 490, 494, 497, 503, 512,
 521, 544-546, 555, 560-561,
 563, 565, 570, 572, 574, 594,
 600-603, 611-612, 617, 621,
 625, 627, 630-631, 645-646,
 647-649, 650-651
 Գևորգյան Էմիլ - 436, 603, 617
 Գևորգյան Մ. - 91
 Գևորգյան Պ. - 342

Գ

Գաբաղյան Նորայր - 76, 110, 659
 Գաղության Հարություն - 224
 Գալլաքյան Կառլեն - 260, 269
 Գալմաստրո Խոսե Ֆրանսիսկո
 - 188
 Գալմաստրո Ֆարա - 188
 Գամաղյան Ռայմոնդ - 283
 Գայիան Ժորժ - 231
 Գանգ Կուանգ Սինի - 223
 Գանիելյան Ա. - 81
 Գանիելյան Գարեգին Նիկողայի
 - 263
 Գանիելյան Գևորգ - 562
 Գաշկևիչ Յարոսլավ Ռոմանի -
 419
 Գավիթ Անհաղթ - 658
 Գավթյան Գագիկ - 159, 203
 Գավթյան Միսաք Արշամի - 276,
 322

Գավթյան Ռ. - 240
 Գավթյան Ս. - 85, 96
 Գավթյան Վ. - 145
 Գավթյան Վահագն (գրող) - 215,
 279
 Գավթյան Տիգրան - 437, 501
 Գարրինյան Ա. - 338
 Գարշինյան (Վիկ) Վախթանգ -
 401
 Դ. Գ. Ռ. Ռաջվադեն - 179
 Դերինսկի Անտոնի - 639
 Դեղեյան Ժիրայր - 312
 Դեղեյան Շառլ - 179
 Դե Լազարի Անջեյ - 440
 Դե Լյուցենբերգեր Ռաուլ - 459,
 482, 490, 493
 Դե Մենդոնսա Սանկտոս Ածեմար
 - 612
 Դել Մոնակո Վինչենցո - 635
 Դելյու Ադամ - 141
 Դեմիրճյան Դերենիկ - 240
 Դեմիրճյան Կարեն - 260
 Դելյոմենջյան Արմենուհի - 188
 Դեպենբրոֆ Վուլֆ - 435
 Դե Տոնի Ալբերտո Ֆելիչե - 646
 Դը Բրիշամբո Մարկ Պերեն - 439
 Դը Գրոտ Ժյուլի - 560
 Դը Գոդմար Ժամ-Պոլ - 624
 Դիլբանդյան Սամվել - 592
 Դյու Բյուս դե Վարնաֆ
 Անդրե - 559
 Դոբեր Իլյա - 435
 Դովգովա-Դրեյեր Կատյա - 568
 Դոնդո Պեդրո Խոսե - 319

Դրյուկով Անատոլի - 365, 367, 385
 Դրոզդենկո Վ. Ի. - 195
 Դրոստ-Աբգարյան Արմենուհի - 435
 Դուայեն Էրվե - 560
 Դուբինա Ա. Ա. - 195
 Դուդին Մ. - 232
 Դուդյեն Վալերի - 432
 Դումանյան Վահրամ - 535, 617
 Դուրյան Օհան - 320
 Դևիս Թերի - 420

Ե

Եգորով Բ. - 237
 Եղիշկա Յ. - 163
 Եկավյան Զավեն - 338, 505
 Եղիազարյան Արտավազդ - 76, 96
 Եղյան Մարիամ - 516
 Ենգիբարյան Միքայել - 107
 Ենգիբարյան Ռոբերտ - 254, 260
 Ենգոյան Փայլակ - 222
 Երեմյան Վահան - 36
 Երզնկյան Ար. - 46
 Երզնկյան Ելենա - 465
 Երիցյան Խորեն - 52, 78
 Երիցյան Ներսես - 443, 483
 Երիցյան Ս. - 373, 395
 Եսայան Արամ - 69, 97
 Եսայան Բագրատ - 410
 Եսայան Զ. - 91
 Եսայան Ս. - 135, 286
 Եսայան Վարուժան - 465
 Եվանգոլյան - 70

Զ

Զազանով Ալեքսանդր - 374
 Զախարյան Երվանդ - 432
 Զախարով Վ. Ա. - 398
 Զակչևակա-Դուբասովա
 Միրոսլավա - 224
 Զամիլ Սալմի - 433
 Զարգարյանց Արիստակես
 Հայրապետի - 11
 Զավեն պատրիարք - 14
 Զավրյան (Զավրիկ) Դավիթ - 7, 9,
 12, 14, 37, 653
 Զատուրա Վաղդիս - 457
 Զատրջյան Դոմսիկ Ալեքսանդրի
 - 99
 Զաքարյան Լուսինե - 221
 Զեյնաբ Աբու Սինն - 452
 Զենգ Լիջիան - 598
 Զենկևիչ - 21-22
 Զեքիյան Լևոն - 350
 Զիֆիոդու Վիրջիլիան - 594
 Զոլյան Սուրեն - 295
 Զոհրաբյան Էդիկ - 336
 Զոհրաբյան Սարգիս Շարբաթի
 - 98
 Զոհրապ - 70
 Զոնգեն Գերիարդ - 332, 334
 Զորյան Հակոբ - 65, 79, 584
 Զուբյան Գևորգ - 212
 Զուսկինդ Սիմոն - 560
 Զուրաբյան Ս. - 241

Է

Էդիլյան Գ. - 12, 28, 39, 583

Էբբեստոն Յոնաս - 573

Էլիավա Շ. - 81

Էյտկեն Դուգլաս - 231

Էնայաթոլլա Ռեզա - 530

Էնգելս Ֆրիդրիխ - 210

Էնճինս Այվարս - 559

Էրթեմ Ալի - 366

Թ

Թադևոսյան Գևորգ - 119

Թադևոսյան Թադևոս Շահբազի
- 194

Թաթոյան Արման - 587, 588

Թալալյան Ալեքսանդր - 527

Թալեր Ռիֆա - 512, 663

Թալիամեր Թերեզա - 568

Թախտաջան Լեոն - 527

Թախտաջան Ֆ. - 14

Թամազյան Ալբերտ - 449

Թամամջյան Ս. - 63

Թամանյան Ալեքսանդր - 45, 55,
61, 74

Թամարա (Գայի դուստրը) - 192

Թամրազյան Գրիշա - 646

Թամրազյան Հր. - 196, 199, 212,
240, 255, 276, 322

Թարվերդյան Արշալույս - 483

Թաքեայան Հելեն - 299, 301, 343

Թեհլերյան Սողոմոն - 584

Թեմբեքճյան Ռոբերտ - 311

Թեննոք Չարլզ - 530, 664

Թիան Էրլուն (Էրլոնգ) - 553, 599

Թիանյոնգ Թենգ - 601

Թոթովենց Վ. - 105

Թորեն Լոլիտա - 218

Թովմասյան Անուշավան - 250

Թովմասյան Արշակ

Թովմասի - 191

Թորոսյան Տիգրան - 412

Թորոսյան Քլոդ - 312

Թոքմաջյան Լևոն - 277

Թուզանյան Շաքե - 248

Թութանհամոն - 223

Թութունջյան Հովսեփ - 243, 247,
278, 288

Թուխարելի Դ. - 241

Թուղլույան Գրիգոր - 487

Թումանյան Ա. - 63

Թումանյան Բ. - 165

Թումանյան Հ. - 147, 149, 205-206,
641

Թումանյան Մ. Գ. - 55, 131

Թումանյան Միքայել - 78

Թումանյան Մկրտիչ - 312

Թումասյան Նելլի - 568

Ժ

Ժալեն - 227

Ժամկոչյան Հայկազ - 212

Ժամհարյան Հրանտ - 541

Ժաշկին Գ. - 192

Ժդանով - 102

Ժդանով Գ. Ս. - 194

Ժու Գուանգլեյ - 598

Ժումատայ Գաբիտ - 563

Ի

Իբրահիմով Իլդար - 527

Իբրիկ Ա. - 277
 Իզմիրյան Սարգիս - 330
 Իզմիրյան Տիգրան - 316, 329, 330
 Իլիեսկուի Իոն - 355
 Իմա Կազուրո - 327
 Իմեթս Ռաուլ - 616
 Իշխանյան Ռաֆայել - 295
 Իշխանյան Սիրունիկ - 47
 Իոսիֆյան Անդրանիկ - 193
 Իջիկովսկայա Ի. - 200
 Իսախանյան Դավիթ Պարսիի - 194
 Իսահակյան Ավետիք - 232, 349
 Իսահակյան Ավիկ - 512
 Իվանով Կուզմա - 215
 Իվանով Օլեգ - 563
 Իվերոնովա Վ. Ի. - 194

Լ

Լազարյան Ա. - 46
 Լալայան Անահիտ - 36
 Լալայան Ավագ - 259
 Լահուն Ուիլյամ - 545
 Լաճիկյան Լևոն - 649
 Լանգեր Պետեր - 467
 Լապտև Արի - 527
 Լավրով Սերգեյ - 502
 Լաքշմի Ն. Սենոն - 179
 Լեգրան Սիլվե - 328
 Լեման Մայքլ - 337
 Լենգլին Չարլզ - 237
 Լենին Վ. Ի. - 208-207, 251
 Լեո (Բաբախանյան Առաքել) - 56
 Լեոնով Լևեքսեյ - 205, 466

Լերմոնտով Մ. Յու. - 180
 Լեֆորտ Ֆիլիպ - 507
 Լիիրի Թոմաս - 542, 664
 Լինդներ Ռայներ - 523
 Լիչ Քաթրին - 545
 Լիսիցյան Ստեփան Դանիելի - 129
 Լի Սյան - 643
 Լիստրե Առնոլդ Մանուել - 319
 Լյախով Վլադիմիր - 466
 Լոնսդեյլի Չարլզ - 454, 475
 Լոշակ Վիկտոր - 423
 Լորկիչ Ջրիգն - 219
 Լուկաշին Ս. - 47
 Լունաչարսկի Անատոլի Վասիլևիչ - 57
 Լուն Վոլֆգանգ - 414
 Լևին Իսիդոր Հեյմովիչ - 217

Խ

Խաժակ արքեպիսկոպոս
 Պարսամյան - 339, 342
 Խալաշիսկա-Մացուկով
 Կատարժինա - 430
 Խախամի Լիլի - 330
 Խամբաս Գ. - 582
 Խայան Լուիզ - 188
 Խանամիրյան Միրելի - 608
 Խանգաղյան Ս. - 145, 274
 Խանգաղյան Յուլիա - 49
 Խանջյան Ա. - 91, 104-105, 658
 Խանջյան Գրիգոր - 193
 Խաչատրյան Ա. - 22, 63
 Խաչատրյան Համբարձում - 581

- Խաչատրյան Հենրիկ - 456
 Խաչատրյան Ներսես - 449
 Խաչատրյան Ռ. - 195, 197, 200
 Խաչատրյան Տիգրան - 636
 Խաչատուրյան Կարո - 195, 228, 239
 Խատիսյան Ալ. - 21, 23
 Խարազյան (Խարազով) Գ. - 9-12
 Խոնդկարյան Ա. - 22-23
 Խոնդկարյան Աստղիկ Գրիգորի - 191
 Խոջանեքյան Բենիամին Աղաջանի - 97
 Խոջյան Սարգիս - 513
 Խոսրոս Գարեգին Պողոսի - 10
 Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյան - 12
 Խորտ Ալեքսանդր - 432
 Խրիստենկո Վիկտոր - 531
 Խրլոպյան Գ. - 235
 Խուման Յունգուան - 643
 Խուրուա Գեորգի - 417
 Խուրշուդյան Լ. - 241, 322
- Ծ**
- Ծամհուր Տ. - 22
 Ծառուկյան Գագիկ - 455
 Ծատուրյան Ալ. - 70
 Ծերեթելի Գեորգի - 621
- Կ**
- Կ. Գ. Բիաքիավա - 178
 Կադգար Գդե Արսու - 332
 Կագին Մ. - 197
 Կապինոս Մերգեյ - 432
 Կապիցա Մերգեյ - 443
 Կապալ Սիրոսլավ - 639
 Կապուտիկյան Սիլվա - 221, 231, 232, 256, 263, 341
 Կանայան Ա. - 11
 Կավերին Վ. Ա. - 138
 Կարաասլանյան Ժաքլին - 448
 Կարագյոզյան - 145
 Կարազյան Կարպիս - 212
 Կարագուլյան Դավիթ - 450
 Կարալով - 22
 Կարայան Համլետ - 542
 Կարապենց Հակոբ - 291
 Կարապետյան Արմեն Խաչատուրի - 99
 Կարապետյան Աղասի - 520
 Կարապետյան Կարեն - 480, 590
 Կարապետյան Կարլա - 411
 Կարապետյան Կարո - 301
 Կարապետյան Ս. - 127
 Կարապետյան Սահակ - 486
 Կարլոս Բաբի (ասորի եկեղեցու հոգևոր հայր) - 544
 Կարմիրյան Հարություն և Լուսաբեր - 234
 Կարպով Անատոլի - 232
 Կաֆարելլի Լուիս - 431
 Կաֆտանով Ս. Վ. - 118, 127, 129
 Կեժուն Յան - 325
 Կիեսլեր Էլկե - 596
 Կիեսլեր Մատթիաս - 596
 Կիրակոսյան Ալիսիա - 323, 390
 Կիրակոսյան Արման - 417, 443

- Կիրիլ - 219
 Կիրով - 102
 Կլեմենտե Մարկո - 370
 Կյունի Անրի - 405
 Կնոտե Տոմաշ - 435
 Կնոս Է. Դոմալո - 400
 Կոեյո Պաոլո - 381
 Կոթոյան Արմեն - 532
 Կոժկենով Սերիկ - 546
 Կոժոկին Եվգենի - 563
 Կոլանջելո Ամնառոզա - 631
 Կոլեսնիչենկո Ալեքսանդր - 432
 Կոլոսով Մ. - 232
 Կոլբեյտյանց - 31
 Կոմիտաս - 200, 206, 252
 Կոնյազին Սերգեյ - 527
 Կոնստանտապոլոս Ջոյի - 553, 666
 Կոնստանտինով Ա. - 237
 Կոպրուկովնյակ Ալբին - 219
 Կոջոյան Հակոբ - 62
 Կոստանյան - 70
 Կոստանյան Վռամ - 95-97, 104
 Կոստողևսկի Իգոր - 423
 Կորդերո Ալվարես Սանչես - 581
 Կորդերո Կառլոս Պալմարոլա - 358
 Կորոլյուկ Վլադիմիր Մեյմոնովիչ - 251
 Կորոսեչ Դամյան - 616
 Կովալենկո Վլադեսլավ - 464
 Կոցիաս Նիկոս - 591
 Կվազնևսկի Ալեքսանդր - 355, 356
 Կրասնով Ն. - 269
 Կրիշտապովիչ Լև - 546
 Կրիվոպոլսկով Վիկտոր - 507
 Կրյուչկյան Գագիկ - 535
 Կրպեյան Թաթուլ - 327, 463
 Կրոպաշով Նիկոլայ - 466
 Կրոտով Միխայիլ - 455
 Կուզնեցով Վասիլի - 641
 Կուլիկով Ա. - 192
 Կուլին Կայսին - 262
 Կումջյան Նիկոլաս - 520
 Կունյաս Ս. - 221
 Կուչմա Լեոնիդ - 362
 Կուրտով Աժդար - 515
- Հ**
 Հազարյան Հարություն - 167
 Հալեբիան Լորիդ - 623
 Հալեպոտա Բուշրա - 433
 Հալոնեն Տարյա Կաարինա - 388-389
 Հախվերդով - 21-22
 Հախումյան Սեմյոն Տիգրանի - 346
 Հակոբյան (պրոֆ.) - 70
 Հակոբյան Ա. - 42, 131
 Հակոբյան Ալեքսանդր - 58, 78
 Հակոբյան Արշակ - 43, 45, 63
 Հակոբյան Գրիգոր Հակոբի - 100
 Հակոբյան Թադևոս - 203, 209, 255
 Հակոբյան Կարո - 466
 Հակոբյան Հակոբ - 295
 Հակոբյան Հրանուշ - 410, 495
 Հակոբյան Ռաֆիկ - 647

- Հակոբյան Սիմոն - 78
 Հաճյան Արշակ - 291
 Հաճյան Վահրամ - 291
 Համբարձումյան Ռուբեն
 Վիկտորի - 261
 Համբարձումյան Ս. - 46-47
 Համբարձումյան Մերգել - 202,
 240, 244, 254, 257, 259, 268-
 269, 271-272, 274-275, 283,
 286, 328
 Համբարձումյան Վիկտոր - 57,
 132-133, 152, 154, 165, 167,
 182, 193, 202, 218, 259, 274,
 325, 345, 433, 438
 Համիդ Հասան - 336-337
 Համիդ Ռեզա Նիքար Էսֆահանի
 - 328
 Հայթյան Ա. - 225
 Հայրապետյան Սահակ Սիմոնի
 - 83, 87
 Հայրյան Գևորգ - 176, 187
 Հապեշյան Վ. - 16
 Հասան Հաբիբի - 327
 Հասկել - 21-22
 Հարգան Բիմբերլի - 365
 Հարիդիմ Մոտտի - 608
 Հարտինգ Ֆրանս - 307
 Հարությունյան Ա. - 366
 Հարությունյան Արամ - 255
 Հարությունյան Արայիկ - 646, 649
 Հարությունյան Արմեն - 390, 463
 Հարությունյան Բաբկեն - 402, 478
 Հարությունյան Գագիկ - 370, 487,
 526, 529
 Հարությունյան Գրիգոր - 405
 Հարությունյան Լ. Հ. - 344
 Հարությունյան Կարինե - 473
 Հարությունյան Մ. - 22
 Հարությունյան Մանուշ - 257
 Հարությունյան Նազուշ - 170, 202,
 208
 Հարությունյան Ռ. Մ. - 344
 Հարությունյան Ս. Գ. - 290
 Հարությունյան Սամվել - 384, 396
 Հարությունյան Վ. Մ. - 299, 344
 Հարությունյան Վիլիկ - 259
 Հարությունյան Քնարիկ - 208
 Հարությունով Ալեքսանդր
 Արտեմի - 10
 Հելմ Լյուդվիգ - 263
 Հեմֆերս Նենսի - 355
 Հեֆֆերն Ջոն - 545
 Հյուգո Վ. - 179
 Հոգ Քեյվին - 302
 Հոսֆելդ Ռոլֆ - 596
 Հովակիմյան Մամիկոն
 Կարապետի - 100
 Հովհաննիսյան Աբգար - 76
 Հովհաննիսյան Աշոտ - 31-32,
 36-37
 Հովհաննիսյան Լ. - 63
 Հովհաննիսյան Լևոն - 51, 75
 Հովհաննիսյան Լևոն (ռազմական
 ամբիոնի վարիչ) - 255
 Հովհաննիսյան Հ. (բանաստեղծ)
 - 22-23
 Հովհաննիսյան Հակոբ - 37, 43,
 47, 53, 66, 71

Հովհաննիսյան Հայրապետ - 52,
94

Հովհաննիսյան Հրաչյա - 215

Հովհաննիսյան Մալխաս - 260

Հովհաննիսյան Յուրի - 344

Հովհաննիսյան Նազիկ - 410

Հովհաննիսյան Նելլի - 483

Հովհաննիսյան Ռ. (Ընդհ. ֆիզիկ.
ամբիոնի վարիչ) - 114

Հովհաննիսյան Ռ. (պատմաբան)
- 204

Հովհաննիսյան Ռիչարդ - 313

Հովհաննիսյան Ս. - 291

Հովհաննիսյան Վարդան - 327

Հովսեփյան - 47, 87

Հովսեփյան Ա. - 79

Հովսեփյան Եվգենիա - 192

Հոֆֆման Պիտեր - 331

Ձ

Ձազորեո Ֆրանչեսկա - 635

Ղ

Ղազարյան Ա. - 22-23

Ղազարյան Ա. (պետնախարար)
- 308

Ղազարյան Անահիտ - 613

Ղազարյան Անդրանիկ - 125-126

Ղազարյան Գ. - 344

Ղազարյան Գևորգ - 26, 29

Ղազարյան Էդուարդ Մուշեղի -
322

Ղազարյան Հ. - 244

Ղազարյան Ռ. - 192

Ղազարյան Վ. - 268

Ղազինյան Արթուր - 625

Ղազինյան Գազիկ - 396, 433,
479, 529, 546, 562, 568, 588,
592, 614, 616,

Ղամբարյան Կ. - 260

Ղամբարյան Յուրի - 9-10, 13-14,
18, 20, 22, 25, 28-29, 345, 653-
654

Ղամբարյան Պողոս - 107

Ղամբարյան Ստեփան - 45, 58,
63, 66, 87, 96

Ղարիբյան Արարատ - 76

Ղարիբյան Գ. - 296, 344, 350

Ղարիբյան Ի. - 190

Ղարիբջանյան Գեղամ - 479

Ղարիբջանյան (ուսանող) - 27

Ղարիբջանյան Լյուդվիգ - 192,
222, 242, 260, 287

Ղափանցյան Գ. - 87, 123, 132,
141, 278

Ղևոնդյան Պետրոս - 327

Ս

Սադոյան Ա. - 235

Սաթևոյան Անուշ - 330

Սաթևոյան Հրանտ - 324

Սաթևոյան Ռաֆայել - 305, 344

Սալեզյան Վ. - 107

Սալխասյան Ստեփան - 9, 17

Սալյուժենկո - 33, 70

Սալտորո Ֆրանչեսկա - 516

Սախարաձե Գ. - 22

Սակարենկո Անտոն - 282

- Մակարյան Լևոն - 343
 Մակինցյան Պողոս - 34
 Մահմուդ Ահմադիմեժադ - 420
 Մահմուդ Վալեդի - 328
 Մաղալյան Վ. - 226, 316
 Մաղաբյան Հովհաննես - 192, 194, 203
 Մամբրեն - 47
 Մամբրիովա Ս. - 238
 Մայեր Զեպ - 248
 Մայիլյան - 23
 Մայր Ֆրեդերիկո - 318
 Մանանդյան Հակոբ - 25, 28-29, 35-36, 42, 63, 66, 79, 95, 112, 114, 145, 224, 354, 654
 Մանաս Կ. - 241
 Մանուկյան Ալեք - 313
 Մանուկյան Արամ - 456
 Մանուկյան Արտյոմ - 462
 Մանուկյան Լուիս Սիմոն - 313
 Մանուկյան Միքայել - 212
 Մանուկյան Ս. - 195
 Մանուկյան Վազգեն - 295, 301
 Մանուշյան Պ. - 18
 Մաշալով Մուխամեդնիազ - 585
 Մատիասկիչ Յուրի - 527
 Մատինյան Սերգեյ Հայկի - 261
 Մարգարյան Ա. - 79
 Մարգարյան Ա. (ՀՀ վարչապետ) - 369
 Մարգարյան Աննա - 488, 542, 568
 Մարգարյան Արա Հովհաննեսի - 98
 Մարգարյան Արման - 450
 Մարգարյան Գուրգեն - 384
 Մարգարյան Հրանուշ - 495
 Մարգարյան Մովսես Սկրտչի - 263
 Մարգարով Ալեքսանդր - 436, 452, 505, 512, 541, 543-544, 547, 560, 572-574, 603, 617, 625, 627, 630-631
 Մարկոսյան Էդիկ - 520
 Մարկոսյան Ռուբեն - 563, 611
 Մարկոսյան Սուրեն Սիսակի - 96
 Մարտեն Ժան-Պոլ - 497
 Մարտինով Սերգեյ - 453
 Մարտիրոսյան Անուշ - 450
 Մարտիրոսյան Արմեն - 323, 489
 Մարտիրոսյան Գ. - 260
 Մարտիրոսյան Ժորժ և Շուշանիկ - 331
 Մարտիրոսյան Լ. Ս. - 344
 Մարտիրոսյան Նադաշ - 472
 Մարտիրոսյան Ռադիկ
 Մարտիրոսի - 309, 314, 325-328, 330-331, 333, 336, 338-340, 344, 346, 354, 358, 362-364, 369-370, 375, 379-382, 385, 389-390, 395-396, 455, 494
 Մարտիրոսյան Ս. - 316
 Մարտիրոսյան Վահան - 585
 Մարության Նորայր - 397, 406, 473
 Մարության Շադիկ - 613
 Մարության Լիանա - 633
 Մարքս Կ. - 147, 196, 261, 265

- Մացակյան Անուշ - 520
 Մացուորո Կոյիչիրո - 355
 Մեգալոկոնոմոս Էմանուել - 301
 Մեդվելս Դմիտրի - 467
 Մեթլոկ Ջ. - 291-292
 Մելիք-Ադամյան Արտաշես - 75
 Մելիք-Խաչատրյան Ջուլիետա - 257
 Մելիք-Ղարազյոզյան Գ. - 7-9, 11
 Մելիք-Քալանթար Լոռու - 9, 17, 26, 41
 Մելիք-Օհանջանյան Կարապետ - 35, 79-80, 96
 Մելիքյան Ալ. - 117, 131
 Մելիքյան Գուրգեն - 344, 422, 578, 621
 Մելիքյան Մ. - 208
 Մելիքյան Նատալյա - 193
 Մելիքսեր-Բեկ Լևոն - 168
 Մելիքսերյան Հ. - 244
 Մելքոնյան Ա. - 465
 Մելքոնյան Հ. - 23
 Մելքոնյան Մոնթե - 435, 438
 Մեղրյան Սերգեյ - 592
 Մեյզեր Գերհարդ - 435
 Մենդլինի Սիմոնա Գրանատա - 559
 Մեսիչ Ստյեփան - 446
 Մեսրոբյան - 61
 Մեսրոբյան Մուրեն Հովսեփի - 98
 Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆյան - 341
 Մեսրոպ եպիսկոպոս - 9, 17, 20, 22
 Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյան - 9, 20, 22
 Մերգելյան Ս. - 135, 146, 152, 194, 221
 Մեֆոդի - 219
 Մզարեուով Միքայել Գևորգի - 9-10, 12
 Միքչիներ Ջոն - 333
 Միլս Ռիչարդ - 569, 585-586
 Միխնա Էդուարդ Ադամովիչ - 256
 Միխնիկ Ադամ - 469
 Միկոյան Նամի - 405
 Միհրանյան Անդրանիկ - 310
 Մինախորյան Վ. - 22
 Մյնասյան Ալմաստ Քերոբի - 263
 Մյնասյան Էդիկ - 445, 511, 541
 Միստոնգի Ալֆրեդ - 451
 Միրզոյան Լ. - 85
 Միրզոն Շահին - 590
 Միրոնով Սերգեյ - 379-380
 Մխիթարյան Լևոն Ղարիբի - 263
 Մկրյան Մ. - 192, 196, 240, 260
 Մկրտչյան Լևոն (բան. գիտ. դոկ. պրոֆեսոր) - 259, 267, 278, 286, 322, 339
 Մկրտչյան Լևոն (ՀՀ ԿԳ նախարար) - 366, 594
 Մկրտչյան Հարություն Գաբրիելի - 265
 Մկրտչյան Հովհաննես - 260
 Մկրտչյան Մանուկ - 665
 Մկրտչյան Միք - 232
 Մկրտչյան Սերգեյ - 203
 Մկրտչյան Մուսաննա - 509

- Սկրտումյան Արման - 451
 Սկրտումյան Յու. Ի. - 287, 319
 Մդեբբով Միքայել Լևոնի - 11
 Մյունխ Մարտինա - 596
 Մնացականյան Ջոհրաբ - 490, 637
 Մնջոյան Արմենակ - 194, 203
 Մոհամեդ Կետատան - 584
 Մոհամեդ Սեյֆ Խատիր - 266
 Մոհամմադ Հասան Ախթարի - 565
 Մոհամմադ Համիդ Անսարի - 594
 Մոհամմադ Ռեյխի - 535
 Մողտմունյան Մելիք - 119
 Մոնակո Ֆաբիո Ռովերսի - 283
 Մոնտալտե Անտոնիո - 347
 Մովսեսյան Ռուբեն - 560
 Մովսիսյան Յուրի - 295
 Մովսիսյան Ռաֆիկ - 259
 Մորան Մոր Իգնատիուս Եփրեմ Երկրորդ - 543
 Մորենո Խուան Մանուել - 433
 Մոր Թեոփիլոս Սալիբա (Տրիպոլիի և Լեռնային Լիբանանի արքեպիսկոպոս) - 544
 Մոր Սիլվանոս Բուրբոս ալ Նեհմենի (Հոմսի արքեպիսկոպոս) - 544
 Մոր Տիմոթեոս Մաթթա ալ Խուրի (պատրիարքական քարտուղար) - 544
 Մռավյան Ա. - 136, 181
 Մրոչեկ Վ. - 42
 Մուքաֆյան Աբրահամ - 392
 Մուքաֆյան Քրոդ - 320
 Մուհամմադ ալ Ջաարի - 647
 Մուհամմադ ալ-Մուլեյման - 537
 Մուհամմադ Խաթամի - 379
 Մուհսեն ալ-Մուալլիմ - 537
 Մունդիշի Դանիել - 527
 Մունյոս Խուլիս Սևիլիա - 637
 Մուշեղյան Ա. - 285
 Մուշեղյան Տ. - 33, 50, 79, 90-91
 Մուսայելյան Հովիկ - 649
 Մուրադյան Արամ - 273
 Մուրադյան Արմենակ Հովակիմի - 99
 Մուրադյան Գևորգ (Քեյվիմ Ջորջ) - 291
 Մուրադյան Գևորգ - 630
Յ
 Յագողին Գ. Ա. - 294
 Յաթսենկո Վլադիմիր - 415
 Յակոբսեն Ուենչ - 603
 Յակովլև Վենիամին - 451
 Յան Գուարդոնգ - 598
 Յանգբլոթ Յենս - 431
 Յարայարվի Պեննտի - 388
 Յիրիկյան Ռաֆ - 450
 Յոլանդ Սալեմ - 608
 Յովանովիչ Մարի - 479
 Յուդի Քրիստանդ - 600
 Յուզբաշյան Մ. - 260
 Յույ Խունյան - 643
 Յունենան Հելմուտ - 564
 Յուրչենկո Նատալյա - 639

Ն

Ն. Ս. Սինգհ - 178
 Նագարբան Նորսուլթան - 353
 Նագարբեգյան - 22
 Նագարյան Կարինե - 622
 Նագարուկ Իգոր - 565
 Նաթան արքեպիսկոպոս
 Հովհաննիսյան - 565
 Նալբանդյան Արամ - 194, 202
 Նալբանդյան Գ. - 203
 Նալբանդյան Էդվարդ - 468, 489,
 559, 563, 570
 Նալբանդյան Մ. - 154
 Նահապետյան Ռաֆիկ - 481
 Նամտվեղտ Լեյոլով Ատլե - 603
 Նանսեն Ֆրիտյոֆ - 64, 70, 465
 Նաջարյան Հուսիկ Խոսրովի - 263
 Նավակատիկյան Հ. Ա. - 42, 79,
 87, 91
 Նեչաս Վլադիմիր - 544
 Ներկարարյան Խաչատուր - 600
 Ներսիսյան - 70
 Ներսիսյան Բագրատ - 224
 Ներսիսյան Լևոն - 260
 Ներսիսյան Հրաչյա - 232
 Ներսիսյան Մկրտիչ - 187, 192-
 192, 195, 197, 200, 202-204,
 206, 208, 211, 217, 219-220,
 225, 230, 234-235, 310
 Ներսիսյան Ստեփան Սերգեյի -
 131
 Նիկողոս Անդրիան - 184
 Նոբլ Ռոլանդ Քեննեթ - 388-389
 Նոչելլա Ռոբերտո - 615

Նորիատյան Հ. - 23
 Նուբար Պողոս - 58-59
 Նորբեկյան Արմեն - 450
 Նսակայա Ելենա - 607

Շ

Շադուրսկի Վիկտոր - 563
 Շալիան Ժերար - 643
 Շահգեղյան Արամ - 71
 Շահե արքեպիսկոպոս Աճեմյան -
 313, 323, 325
 Շահինյան Արտաշես - 111, 192,
 202, 221, 239
 Շամխորյան Հակոբ Հովակիմի
 - 99
 Շավարշյան Արշավիր - 38, 39, 92
 Շատալով Վլադիմիր - 217
 Շարաֆյան Ա. - 23
 Շարպանտիե Ժան-Ֆրանսուա
 - 561
 Շաքարյան Մարիա - 241
 Շելկովնիկով Ալեքսանդր - 29, 50
 Շեֆներ Վ. - 221
 Շին Ջեյմի - 586
 Շիպանսկի Թանկրեդ - 552
 Շիրազ Հ. - 146, 232
 Շիրվինդտ Ալեքսանդր - 423
 Շմիդտ Հանս-Յոհան - 519, 614
 Շնիցլեր Քրիստիան - 320, 326
 Շվենկմեզգեր Պետեր - 414
 Շվիդկո Միխայիլ - 364, 432
 Շվիմեր Վալտեր - 361
 Շտյորե Յոնաս Գաիր - 496
 Շրապել Թոմաս - 633

Շրի Ս. Դատ - 179
 Շուբարդին Անատոլի - 432
 Շումախեր Մարի - 331
 Շուստկո Լ. - 260
 Շուբուրյան Սամվել - 322, 488,
 603, 617
 Շփիլման Դին - 526

Ո

Ոսկանյան Աշոտ - 295
 Ոսկանյան Արմենակ - 119
 Ոսկանյան Հ. - 206
 Ոսկանյան Վարդան (իրանագետ) -
 565, 578, 602, 632
 Ոսկանյան Վարդան (ուսանող) -
 449, 637

Չ

Չալդրանյան Վիգեն - 465
 Չալքիկյան Հովհաննես - 76, 95,
 165, 195
 Չալիկյան Տ. - 384
 Չախմախչյան Հայկանդուխտ -
 56
 Չայլախյան Միքայել - 235
 Չաչիկյան Գրիգոր Մովսեսի - 11
 Չարախչյան Կ. - 79
 Չարենց Անահիտ - 193
 Չարենց Եղիշեն - 105, 193, 196,
 243, 658
 Չարիկով Ալեքսանդր
 Կարապետի - 253
 Չժան Յան Յան - 305
 Չժաո Սիդին - 315

Չժու Չժաոշուն - 341
 Չի-Ֆուն Չան - 403
 Չիժկովա Մ. - 200
 Չիլինգարյան Ա. - 21
 Չիլինգարյան Յուրի Սերգեյի -
 322
 Չիմա Ջարինքեր - 350
 Չխիկվիշվիլի Դ. Ի. - 244
 Չուբայս Անատոլի - 370
 Չուբարյան Գ. - 31, 36
 Չուբարյան Էդվարդ Վարդանի -
 322, 395, 397, 402
 Չուխոնցև Օ. - 221

Պ

Պալյան Խորեն - 221
 Պալյան Ռիտա - 320
 Պակասա Ռոլանդաս - 368
 Պանարին Իգոր - 565
 Պանով Ալեքսանդր - 407
 Պապավա Վլադիմիր - 537
 Պապկով Վ. Ի. - 230
 Պապյան Հասմիկ - 405
 Պապորիստո Պոլ - 141
 Պապուլիաս Կարոլոս - 416
 Պաստորեն Անտոնիո - 635
 Պարադիզո Սիվերիո - 360
 Պարոնյան Շուշանիկ - 555
 Պարսամյան Հովսեփ - 25
 Պարսամյան Վարդան Արամի -
 96, 203-204
 Պարսեղյան Ոսկան - 313
 Պարսիմկիչ Պ. Պ. - 195
 Պարտիզունի Վաչեն - 119

- Պետոյան Ստյոպա - 481
 Պետրիկաս Էրիկաս - 531
 Պետրոսյան Աշոտ - 397
 Պետրոսյան Արա - 512
 Պետրոսյան Արտաշես - 331
 Պետրոսյան Գարեգին Բախշիի
 - 151
 Պետրոսյան Գեղամ - 438, 484,
 515, 532, 547, 556, 561, 573,
 611-612, 632, 638
 Պետրոսյան Խաչիկ Իսահակի -
 263
 Պետրոսյան Ռաֆիկ - 295
 Պետրոսյան Ռուբեն - 486
 Պետրոսյան Ստեփան - 461
 Պետրոսյան Վազգեն - 255
 Պետրոսյան Վալերի - 623
 Պետրոսյան Վահրամ - 638
 Պետրոսյան Տիգրան - 205, 233
 Պերկից Ստանիսլավ - 516
 Պիճիկյան - 31
 Պինիերա Խոսե - 483, 660-661
 Պիոտրովսկի Բորիս - 431
 Պիոտրովսկի Միխայիլ
 Բորիսովիչ - 397, 423
 Պիսովիչ Անջեյ - 210
 Պլոտկին Յուրի - 608
 Պլեան Յան - 216
 Պյատախին Անդրեյ - 633
 Պոդգոռնի Յովիտս - 276
 Պոլլովչենկո Ռիմա - 259
 Պոլ Լյուդվիգ - 592
 Պոլան Դենիզ - 312, 319
 Պոդոսյան Հասմիկ - 505
 Պոդոսյան Հովհաննես - 133
 Պոդոսյան Հրանտ - 434
 Պոդոսյան Միքայել - 541
 Պոդոսյան Սերոբ Պոդոսի - 263
 Պոդոսյան Ստեփան - 480-481
 Պոդոսյան Վարուժան - 481
 Պոդոսով - 192
 Պոնդրև Գաբրիել Սարգսի - 10
 Պուստեբար - 21-23
 Պուշկին Ա. Ս. - 227, 645
 Պուտին Վլադիմիր - 354
 Պուտրամենտ Եթի - 231
 Պրյախին Վ. Ֆ. - 375
 Պրոտեսաս Վիորել - 431
 Պրվանով Գեորգի - 379-380
- Ջ**
 Ջահուկյան Գևորգ - 297, 347, 441
 Ջանջուղազյան Աստոմ - 636
 Ջանփոլադյան Հովիպիմեն - 431
 Ջասիմ Մուհիամադ ալ Կասիմ -
 611
 Ջիանինի Ստեֆանիա - 486
 Ջիբլաճե Դ. - 241
 Ջիզարխանյան Արմեն - 423
 Ջոզեֆ Բալի (ասորի եկեղեցու
 հայր) - 544
 Ջոնս Էլիզաբեթ - 384
 Ջոնսթոն Յան - 493
 Ջրբաշյան Էդ. - 212, 232, 261,
 266, 569
 Ջրբաշյան Մ. (ուսանող) - 139
 Ջրբաշյան Մխիթար - 129, 202
 Ջուլեցյան Անի - 623

Ռ-

Ռադիկալիզմի Գեներալ - 481
 Ռազմորդ Ալեքսանդր - 527
 Ռայմոնդ Ֆարիան - 536
 Ռաչինսկի Ջոնաթան - 514
 Ռավադի Ջանֆրանկո - 487, 661
 Ռենո Անրի - 497, 512
 Ռեշեդնիկով Լեոնիդ - 545, 664
 Ռյուլանդ Դորոթեա - 544
 Ռյուտել Առնոլդ - 381
 Ռշտունի Վահան - 62, 87, 180, 204
 Ռոբերտսոն Ջորջ - 351
 Ռոդրիգես Խոսե - 527
 Ռոզենտալ Անդերսեն Յորգեն - 197
 Ռոզենտալ Դ. Է. - 221
 Ռոբ Շտեֆեն - 574, 668
 Ռոմբեաստենսկի Ռ. - 221
 Ռոմանենկո Յու. - 245
 Ռոմի Արի Նախիլ - 608
 Ռոտինյան (Ռոտինյանց) Լևոն - 52, 63, 66, 72, 134
 Ռուստամյան Ա. - 370
 Ռուսթաա Ջորջ - 572

Ս

Ս. Գուպալ - 179
 Սադոյան Արշակ - 295
 Սադովնիչի Վիկտոր - 312, 314
 Սաթյան Ռուբեն - 465
 Սալեհ Ջահրեդդին - 309
 Սահակաշվիլի Միխայիլ - 448
 Սահակյան Ավ. - 21-22

Սահակյան Գ. - 192, 212, 257, 261, 310, 441
 Սահակյան Գալուստ - 541
 Սահակյան Լուսինե - 621
 Սահակյան Մելս - 295
 Սահյան Արսեն - 217
 Սահյան Համո - 215, 263
 Սադաթեյան Վաչե - 212
 Սադիյան Աշոտ - 614
 Սամոյլով Դ. - 221
 Սամվելյան Լուիզա - 232
 Սամվելյան Կարապետ - 119
 Սամուելյան Հարություն - 643
 Սանգվան Յոզեֆվարի - 637
 Սանթրոսյան Էմին - 535
 Սանթրոսյան Մ. - 79-81, 85
 Սանչես Թերեզա - 547, 558, 576
 Սանջայ Սրիվաստավա - 533
 Սաչին Պիլոտ - 496
 Սապի Հ. - 296
 Սարվապալի Ռադիակրիշնա - 179
 Սարգսյան Ա. - 132
 Սարգսյան Արա (Տեխնիկ. ֆակ. դասախոս) - 62
 Սարգսյան Արա (քանդակագործ) - 362
 Սարգսյան Արամ - 340
 Սարգսյան Արմեն - 326, 628, 640
 Սարգսյան Արսեն - 78
 Սարգսյան Դավիթ - 501
 Սարգսյան Խորեն Սարգսի - 96
 Սարգսյան Հակոբ - 291
 Սարգսյան Հայկ - 541

- Սարգսյան Հրանտ - 486
 Սարգսյան Շերվին - 306
 Սարգսյան Սերժ - 381, 395-396,
 399, 407, 412-413, 426, 432,
 440, 446, 448, 467, 475, 478,
 480, 587, 609, 660
 Սարգսյան Սոս - 352
 Սարգսյան Սուրեն - 119
 Սարգսյան Վազգեն - 340
 Սարգսյան (Վոլոդյա) Վլադիմիր
 - 238, 255, 259, 276, 284, 286,
 321, 344
 Սարգսյան Տիգրան
 (ազատամարտիկ) - 327
 Սարգսյան Տիգրան (ՀՀ ԿԲ
 նախագահ, վարչապետ) - 415,
 419, 447-448, 482, 489, 492,
 496, 501, 511
 Սարգսյան Ֆադեյ - 260, 357
 Սարդարյան Կորիճ - 295
 Սարկիսյան Էլեն - 510
 Սարյան Մարտիրոս - 251
 Սարոյան Վիլյամ - 237
 Սարուխան Խոսե - 603, 668
 Սաքայան Դորա - 481
 Սաքապետոյան Ռ. - 240
 Սաֆարյան Ալեքսանդր - 582, 621
 Սաֆարյան Արամ - 556
 Սաֆարյան Նվեր - 230
 Սաֆրաստյան Ա. - 22
 Սեդրակյան Դավիթ Միերի - 261,
 344
 Սեդրակյան Պերճ - 375
 Սեյդեյ Բազեն Սաջադի - 565, 578,
 611-612
 Սեյրանյան Ս. - 445
 Սերանո Ժան-Ժակ - 344
 Սթոուն Մայքլ - 648
 Սթրաքեր Ուոլ - 616
 Սիդիբեն Ֆաթումատա - 560
 Սիմանոն Լիսինիա - 482
 Սիմոնյան Արամ - 359, 376, 396-
 397, 399, 405-406, 417, 433,
 435-436, 473-474, 483-484, 486,
 496-497, 501, 512-513, 519,
 521, 535, 542, 544, 552, 558,
 560, 563, 569-570, 572, 578,
 582, 584, 591-592, 598, 603,
 608-609, 613, 621, 624, 627-
 628, 644-645
 Սիմոնյան Գրետա - 192
 Սիմոնյան Հրաչիկ - 445, 481
 Սինայ Յակով - 527
 Սիսակյան Ալեքսեյ - 320, 324
 Սիրունի Հակոբ - 184
 Սլոբոդյան Սերգեյ - 572
 Սլոմայեր Վիրջիլ - 334
 Սկալա Անդրեա - 605
 Սկակով Ալեքսանդր - 515
 Սկապինի Բրունո - 494
 Սկշիդլ Վադսլավ
 Ստանիսլավովիչ - 256
 Սկորոբոգատովա Գալինա - 556
 Սիեֆեր Յաապ դե Հուուպ - 381
 Սմբատյան Արմեն - 365, 423
 Սմեխով Վենիամին - 423
 Սմեսով Սերժ - 406, 421
 Սոտնիկյան Պ. - 12, 17, 19, 24

- Սորոկին Անդրեյ - 501, 560
 Սորոկինա Ելենա - 607
 Սպեցիոս Յակովոս - 314
 Սալիչակ Իրինա - 570
 Սվետլովա Ռ. - 242
 Ստալին Ի. - 102, 149, 150, 657
 Ստամբուլցյան Վահագն - 221
 Ստանիշև Սերգեյ - 422
 Ստեփանյան Հ. - 87, 112
 Ստեփանյան (Ներսիկ) Ներսես
 Միքայելի - 97, 658
 Ստեֆանոպոլոս
 Կոստանտինոս - 341
 Ստիլլե Ռենատե - 417
 Ստոսիեկ Պիտեր - 360
 Ստուդեն Ինգրիդ - 435
 Ստուպիշին Վ. - 303
 Սովսարենկո Ստեփան - 464
 Սունյան Թալին - 636
 Սունդուկյանց Նիկիտա
 Գաբրիելի - 11
 Սուրգուլաձե Ա. - 197
 Սուրեշ Բաբու - 533
 Սուրկով Ա. - 232
 Սուքիասյան Ալեքսեյ - 212
 Սուքիասյան Աշոտ - 235, 259
 Սևակ Գ. - 192, 224
- Վ**
 Վազգեն Ա Ամենայն հայոց
 կաթողիկոս - 293, 439
 Վալկովիկ Լորենց - 237
 Վահիդ ադ-դին Իսմայիլ Ջալալ -
 421, 438, 440, 452
 Վահյան Վահե - 267
 Վայլեր Ալբերտ - 633
 Վայսֆոլգ Յոհաննես - 214
 Վան Շենգան - 601
 Վան Օվերմեյեր Կարլս - 560
 Վանանդեցի Գուրգեն
 Արշակի - 96
 Վանյան Տիգրան - 657
 Վասիլևան Լ. - 221
 Վավիլով Ի. Վ. - 55
 Վավու Բիլիան - 607
 Վարդազարյան Մարտին - 465
 Վարդանյան Ադվան - 415
 Վարդանյան Արամ - 600
 Վարդանյան Գեորգի - 468
 Վարդանյան Դավիթ - 295
 Վարդանյան Յուրի - 208, 255,
 260, 295, 344, 442
 Վարդանյան Ռաֆիկ - 542
 Վարդանյան Վահագն - 636
 Վարդանյան Վարդան - 643
 Վարդապետյան Ղազար - 113,
 212
 Վարդերեսյան Վարդուհի - 232
 Վեզներ Արմին - 203
 Վելթի Ջոն - 377
 Վելչև Վ. - 200
 Վեն Հորն Նենսի - 555
 Վենման Շարլոտ - 639
 Վիզենին Քրիստիան - 604
 Վիլսոն Վուդրո - 471
 Վիկտորին Անդրեա - 435
 Վիկտուրով Ս. - 221
 Վիմմեր Վիլլի - 327

- Վյուգո - 85
 Վոլ Բուլին - 516
 Վոլինկին Իվան - 565, 585
 Վոլկենշտեյն Մ. Վ. - 170
 Վոլֆ Շելլոն - 236
 Վոյտաշչիկ Պշեմիսլավ - 527
 Վրայլա Նաֆսիկա Նանսի
 Էվա - 630
 Վրացյան Ս. - 21-22
- Տ**
 Տաբուդա Իստիար - 607
 Տայիս Իոաննիս - 540
 Տան Չժի Ցաո - 643
 Տապաշ Չակրաբորտի - 545
 Տավիտյան Ասո - 575, 668
 Տեոկին Ալմատ - 505
 Տեր-Ակոպով Փայլակ Սմբատի
 - 11
 Տեր-Ավագյան Հմայակ Գրիգորի
 - 100
 Տեր-Գաբրիելյան Ս. - 91
 Տեր-Գրիգորյան (երիտասարդ
 գրող) - 145
 Տեր-Գրիգորյանց Նորատ - 511
 Տեր-Գուլանյան Մերուժան - 297
 Տեր-Դավթյան Հ. - 22
 Տեր-Թադևոսյան Արկադի - 423,
 428, 583
 Տեր-Կարապետյան Մ. - 175
 Տեր-Կարապետյան Մկրտիչ - 203
 Տեր-Հակոբյան Գ. - 10-11
 Տեր-Հովհաննիսյան Ալեքսանդր
 Ֆադեյիչ - 100
 Տեր-Մերկերյան Ռոբեր - 372, 418
 Տեր-Սիմասյան Ե. - 9-10, 12, 14,
 17-18, 28, 125
 Տեր-Սիմասյան Ռ. - 22
 Տեր-Սիբալեյան (խնամատ.
 նախարարի օգնակ.) - 22
 Տեր-Սիբալեյան Մ. - 192, 206,
 261
 Տեր-Մկրտչյան Բարլո - 350, 377
 Տեր-Մկրտչյան Զարուհի - 311
 Տեր-Ներսեսով Գ. - 9-10
 Տեր-Պետրոսյան Լևոն - 300, 304,
 308, 330
 Տեր-Պողոսյան Ա. - 12, 78, 96, 123
 Տեր-Պողոսյան Երվ. - 33
 Տեր-Սահակյան Էդուարդ - 465
 Տերեշկովա Վալենտինա - 184
 Տերյան Վ. - 70
 Տերտերյան Ա. - 42, 78, 96, 123,
 132, 151, 264, 569
 Տիգրանյան (իրավաբան) - 70
 Տիգրանյան Էդմոնդ - 149
 Տիգրանյան Ս. - 9, 12-13, 22, 653
 Տիխոմիրով Վ. - 250
 Տինգ Չեն - 509
 Տիտով Գ. Ս. - 223
 Տիտերենկո Լարիսա - 639
 Տիրացյան Գ. - 135
 Տյան Չանչուն - 542
 Տոլստոյ Լև Նիկոլասիչ - 151
 Տոնապետյան Պատրիկ - 249
 Տոնոյան Ռաֆիկ - 216, 255, 344
 Տորկունով Անատոլի - 563
 Տուրլեսկի Քշիշտոֆ - 622
 Տրաբալցա Պաոլո Անդրեա - 360

Տրանդա Էդուարդ - 250

Տրիլոկի Ն. Քառու - 170

Տրոցկի Ն. - 51

Տրուբեցկով Դմիտրի - 354

Տրուշկին Անատոլի - 432

Յ

Յիատուրաշվիլի Սոսո - 239

Յինցաձե - 22

Ու

Ու. Ռաջար - 232

Ութնագյան Հայկարամ - 192

Ուժկալնիս Պետրաս - 214

Ուլինսքոն Հենրի - 175

Ուլյուկաս Ալեքսեյ - 419

Ուլուիոճյան Գաբրիելա - 307

Ումբետոլ Ժենիս - 505

Ուորդրոպ Օ. - 21-22

Ուռնով Անդրեյ - 366

Ուրալցևա Նինա - 431

Ուրբանսկայա Յա. - 200

Ուրրիտլաբեխիա Գոնգալո - 586

Ուրուշաձե Անդրյու - 483

Փ

Փահլևանյան Հովհաննես - 227

Փանոսյան Գ. - 241

Փանոսյան Հակոբ - 495

Փանոսյան Հարություն - 76

Փաշինյան Նիկոլ - 629, 636

Փարվիզ Զեյնալ - 325

Փափերթ Սեյմուր - 400

Փիլոյան Արփինե - 647

Փիրումով Վլադիմիր

Սեմյոնի - 266

Ք

Քալանթարյան Ժ. - 240

Քալանթարյան Պ. - 33, 37, 53,
63, 75

Քանթանյան Աղասի - 212

Քարամյան Արսեն - 403, 413, 418,
426, 431, 651

Քացախյան - 47

Քեյս Ռոջեր - 231

Քեչեկ Համբարձում - 55, 58, 63,
66

Քեռյան Կարեն - 617

Քինգ Լինդլ - 480

Քիսլեր Մաթիաս - 486

Քլարկ Բեն Քոֆեյ - 493

Քոչար Երվանդ - 200

Քոչար Հրաչյա - 472

Քոչարյան Գ. - 195

Քոչարյան Կարեն Նորայրի - 322

Քոչարյան Ն. - 155

Քոչարյան Նորայր Մարգարի -
99, 165

Քոչարյան Շավարշ - 582

Քոչարյան Ռոբերտ - 331, 333,
341, 344, 346, 347, 357, 369,
374, 380, 385, 390, 398, 402,
409, 411, 427

Քոչինյան Ա. - 198, 208, 212

Քոքս Քերոլայն - 312, 315

Քրիստոֆիդես Կոստանտինոս -
574

Օ

Օբամա Բարաք - 493
 Օբեոկովա Վ. - 238
 Օբրազցով Ալեքսեյ - 572
 Օզանյան Անդրանիկ - 358
 Օլիման Խուան Կարլոս - 308
 Օլիվիե Վենսան - 635
 Օլսակի Ալեքսանդր - 527
 Օհանյան Առաքել Կարապետի
 - 11
 Օհանյան Սերյան - 426, 442, 444,
 455, 459, 478, 513, 519, 528
 Օհանյան Քաջիկ - 639
 Օհանջանյան Համազասպ - 30
 Օհանջանյան Ռուզան - 392
 Օշական Վահե - 309
 Օսիպյան Լիա Լևոնի - 259, 276,
 322
 Օսիպով Գեմադի Վասիլևիչ - 222
 Օսկանյան Վ. - 337, 347, 370, 378,
 384, 391
 Օսկոցկի Վալենտին - 322
 Օրբելի Լևոն - 70
 Օրդուեյ Ջոն - 363, 365

Օրիկո Խորխե - 513
 Օրինբաս Կենժաբեկ - 565

Ֆ

Ֆանարջյան Բարդուղիմեոս - 73
 Ֆեդոտով Ալեքսանդր - 421
 Ֆելիչե դե Տոնի Ալբերտո - 646
 Ֆեյսալ ալ Ղաիս - 308
 Ֆիորետտո Նատալե - 533
 Ֆիրյալ Բու Ռաբիան - 537
 Ֆլորեր Գ. - 179
 Ֆյուլինգ Ալեքսանդր - 592
 Ֆոլյանտի-Յուստ Գեզինե - 503
 Ֆոն Բլում Փոլ - 571
 Ֆովինի Ստեֆան - 344
 Ֆրագա Խոսե Մարիա Ռոբլես -
 369
 Ֆրանկ Իլյա Սիլասյուովիչ - 200
 Ֆրեյբերգա Իմանթս - 390
 Ֆրեյբերգա Վայրա-Վիկե - 389-
 390
 Ֆրիեր Մարի Ռաբել - 482
 Ֆրիայոֆ Նանսեն - 64, 70, 465

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
(1919-2019)**

Կազմեց և հրատարակության պատրաստեց
պ. գ. թ., դոց. Ժակ Սամվելի Մանուկյանը

Հրատարակչության տնօրեն՝ Կ. Գրիգորյան
Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Հրատ. սրբագրումը՝ Մ. Կեսոյանի

Տպագրված է «Քոփի փրինթ» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ., 69 տուն

Ստորագրված է տպագրության՝ 07.08.2019:
Չափսը՝ 60x84 $\frac{1}{16}$; Տպ. մամուլը՝ 43.5:
Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.y su.am